



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
V389





Ը Ն Թ Ե Ր Յ Ա Ր Ա Ն

LECTURE

POUR TOUS

PAR

AMBROISE CALFA

Membre de l'Institut Historique, de la Société Asiatique, de la Société
Orientale de France, etc., etc.



784 812
518 1227

491.99-87

491.99-8



Paris — Imprimerie de P.-A. BOURDIEN et Ce, 30, rue Mazarine.

491.99-87



55.

1999

Ն Ո Ր



ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՏԱՅԵԱՆ

Սևրաւ Սեիակաւ Ընկերութեան և Փարիզու,
 Պատնակաւ Ճեմարանի և Գաղղիոյ, և Սրեւելեան
 Ընկերութեան և Փարիզու. և այլ և այլ.

Ազգաց երջանկութեանը պատճառ տղայոց
 լաւ դաստիարակութիւնն ու կրթութիւնն է:
 Տգիտութիւնն ամօթ չէ. տգէտ մեալն է ամօթ.
 Գիրք կարդա ուսիր, և տգէտ չես մնար:



ՓԱՐԻԶ
 ԻՏՊԱՐԱՆԻ Ա. ՊԻՏԵՏԻԿ
 1861



Ա.Ռ.

ՈՐԴԵԳՈՐՈՎՆ ԻՄԱՐՍ

ՍՈՖԻ ՏԻԿՆՈՋ ԳԱԼՖԱՅԵԱՆ

ԱՐՁԱՆ

ՅԱԻԵՐԺԱՅԻՇԱՏԱԿ ՍԻՐՈՅ

ՄԱՅՐԱՍԷՐ ՈՐԴԻՈՅՆ

ԱՄԲՐՈՍԵԱՅ

A LA PLUS TENDRE DES MÈRES

MADAME SOPHIE CALFA


HOMMAGE

De l'amour éternel de son tout dévoué fils

29. 392

9 389-60

AMBROISE



Յ որմէ հետէ սկսաւ Ազգերնիս համոզուիլ
որ առանց դաստիարակութեան, կրթու-
թեան եւ ուսման անհնարին է որ ծաղ-
կած ու քաղաքակիրթ ազգաց եւ ժողովրդոց կարգն
անցնի, նոցա վայելած պատիւն ու բարեկեցու-
թիւնը վայելէ, սկսաւ նաեւ մէջերնիս դաստիարա-
կութեան, կրթութեան եւ ուսման սէրն արծարծիլ,
դպրոցաց եւ վարժարանաց թիւն աւելցաւ, եւ
մեծապէս յոյս ունիմք որ նորահաստատ Ուսումնա-
կան ժողովոյն ազգասիրական ջանիւքն ու ինա-
մօքը՝ ոչ միայն նոցա թիւն օր ըստ օրէ առաւել
պիտի բազմանայ, այլ եւ բարեկարգ ընթացք եւս
պիտի առնուն նոքա :

Ուսումնասիրութեան այս գովելի ախորժակն
հետզհետէ ազգին մէջ աւելի տարածուելովն՝ արդ-
ամէն ժամանակէ աւելի սկսան զգալ ազգայինք,
զգացաք եւ մեք նոցա հետ՝ մանաւանդ շատ անգամ
ազգային դպրոցաց այցելութեան ելանելով աշակեր-
տաց անյառաջադիմութեան պատճառներն մանր
քննեցինք՝ զգացաք ասեմ՝ այնպիսի գրքի միոյ պա-
կասութիւնն ու անհրաժեշտ կարելորութիւնն, որ
տղայք Այբբենարանէն համարձակ կարդալ սովրե-
լուն պէս՝ այն տրուի ձեռքերնին՝ այն իրենց դեռ

անիմանալի եղած գրաբառ լեզուով տրուածներուն տեղ, որպէս զի կարդացածնին հասկանան, եւ կարդալով զուարճանան ու զուարճանալով կարդան. գրքին ամէն մէկ երեսին նիւթն հետաքրքրութիւննին շարժելով՝ յօժարութեամբ կարդան, իրենք իրենցմէ ինքնակամ ինքնայորդոր ուզեն կարդալ առանց ուրիշի յորդորանացն եւ բազում անգամ նաեւ պատժոցը, որպէս այժմեան ցաւալի սովորութիւնն է՝ անյարմար գրոց պատճառաւ: Այն ախորժելի ընթերցմամբ անզգալի կերպով մըտքերնին մշակի, կրթուի, լուսաւորուի, եւ ազգի ազգի կարեւոր տեղեկութեամբք ֆոխանայ, բարքերնին, բնաւորութիւննին ուղղուին, շտկուին, սրտերնին գեղեցիկ գեղեցիկ առաքինութեամբք զարդարուին, եւ ազգասիրութեան եւ հայրենասիրութեան մէյմէկ անշէջ վառարաններ դառնան: — Իրենց այսպէս մեծցուցած զաւակներէն ինչե՛ր չե՛ն կարող յուսալ Ազգն ու Հայրենիք:

Իննդրոյ բազմաց մտադիւր սիրով յանձն առինք այս երկասիրութեան յօրինումն, եւ միանգամայն հասկացանք որ մեր գրքին նուիրական պաշտօնը դպրոցաց եւ վարժարանաց մէջ միայն պէտք չէ ամփոփի՝ թէոր ընդհանուր ազգին օգտակար կուզեմք ընել զայն. այլ նաեւ դուրս ծաւալի, ամէն տեղ ամէն տուն տարածուի. ուստի եւ զայն չափահասից եւս օգտաւէտ, զուարճալի ու ցանկալի ընծայելու համար ամէն փոյթ եւ հոգ ըրինք: Գլխաւոր ջանքերնիս այն եղաւ որ ցորեկն իդպրոցի որդին զուարճացնող, խելքը բացող ու սիրտը կրթող եւ ազնուացնող գիրքը, կարող լինի նաեւ երիկուն տուն բերուելով ուսումնասէր ծնողաց եւ ազգականաց

միտքն եւս զուարճացունէ ու հրահանգէ մէջի բազմաթիւ ու բազմատեսակ զուարճալի, բարոյական, կրթիչ ու հրահանգիչ պատմութիւններովը, առածներովը, առակներովը, խրատներովը, նկարագիրներովն ու դէպքերովը: Սոյն վախճանաւ նա եւ բարձր ու դժուարին երեւցած նիւթերն շատ անգամ այլ եւ այլ տեղ այլ եւ այլ կերպերով ու բացատրութեամբ իսկ երկրորդեցինք, որպէս զի դիւրութեամբ վերահասու լինին ընթերցողք, եւ մտքերնուն մէջ լաւ տպաւորուին նոքա:

Առաջին մասն մասնաւորապէս սեպհականեցինք մանկտւոյն՝ իւր մանկական դեռաբոյս մտաց հասկացողութեանն յարմարցունելով մէջի նախակրթական կոչուած ընթերցուածները. թէպէտ եւ չափահասք եւս կարող են անտիօգուտ քաղել փոքր իշատէ:

Երկրորդ մասն անուանեցինք Մայրենի Գասախօսութիւն անոր համար որ պարունակած նիւթերն ըստ ինքեան մարք պէտք է լաւ գիտնան, եւ իրենց որդւոցը սովրեցունեն նոյն իսկ դպրոց երթալու սկսելէն յառաջ՝ կերպիւ իմն իւրեանց կաթին հետ ծծել տալով նոցա զանոնք:

Երրորդ մասն կոչեցինք Բարոյական եւ զուարճալի ընթերցուածք՝ մէջը բովանդակելով ինչ որ կրնար ընթերցողաց միտքն սփոփել զուարճացունել, առաքինութիւնն իրենց ցանկալի եւ սիրելի առնել, եւ սրտերնին Աստուծոյ, հայրենեաց, ազգին եւ ծնողաց, դաստիարակութեան, կրթութեան, ուսման եւ գիտութեանց սիրովը վառել բորբոքել:

Իսկ չորրորդ մասն յորջորջեցինք Խառն Գիտե-

լիք , յորում պիտի ուսանին վերժանողք թէ ի՞նչ է մարդս, ի՞նչ են իւր մարմինը կազմող մասուէնքն, ինչո՞վ կպահպանուի այն մարմինն, եւ ինչո՞վ կխանգարի կապականի . ի՞նչ է Աստուած որ մարդուս այն մարմինը տուեր է. ի՞նչ է կրօնքն. ի՞նչ են տիեզերք. ի՞նչ է աշխարհս, եւ ի՞նչպէս կբաժանի, մէջն ի՞նչ ազգեր կբնակին եւ ի՞նչ տէրութիւններ կան. ի՞նչ վերաբերութիւններ ունին մարդիկ իրարու հետ. ի՞նչ կպահանջէ իրենցմէ ընկերութիւնը. որո՞նք են քաղաքաժողով ընկերութեան կապերն . ո՞յք են իւրաքանչիւր քաղաքացւոյ իրաւունքն ու պարտքը. ո՞յք են կենցաղավարութեան ու մարդավարութեան գլխաւոր կանոնքն, եւ այլն եւ այլն:

Եթէ մեր այս դուզնաքեայ երկասիրութիւնն եւս սիրով ընդունի սիրելի Ազգերնիս, եւ իգործ ածէ, աներկբայ պիտի լինիմք թէ ուրեմն հասկացաւնա որ նաեւ սորա վախճանն նախընթացից պէս եղեր է, որ է միակ իւր եւ որդւոցն յառաջադիմութիւնը, պայծառութիւնն ու բարօրութիւնը :

ԱՄԲՐՈՍԻՈՍ Վ. ԳԱԼՖԱՅԵԱՆ.

Փարիզ, 22 Մայիս 1861.



Ը Ն Թ Ե Ր Յ Ա Ր Ա Ն

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն

Ն Ա Խ Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ի Ա Ծ Ք

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ա.

Ինչո՞ւ համար տղայք դպրոց կերթան, ուսում
կտո՞ւրին.

1. Հասակակիցքս ու տարեկիցքս տղայ կկոչուին, ուրեմն ես եւս տղայ եմ: Տղայք բան չեն գիտեր. ուստի պէտք է սովորին, կրթուին, ու դաստիարակուին. եւ ուսմամբ, կրթութեամբ ու դաստիարակութեամբ է որ տղայք խելացի ու սիրելի լինին, գովեստ կրնգունին եւ մարդու կարգ կանցնին:

2. Գարատան մէջ ինձ ուսում սովորեցրնողներն ու զիս կրթողներն ու դաստիարակողները վարժապետներն են. ուրեմն պարտական եմ նոցա հնազանդ լինել եւ երախտագէտ: Քանի որ դպրոց կերթամ՝ աշակերտ կասուիմ: — Լաւ աշակերտն մտադիր է,

վարժապետին տուած դասերուն ու խրատներուն ուշ կդնէ, եւ խելքն ու միտքը իւր կարգալուն գրելուն կուտայ :

3. Կաւ աշակերտը սիրով դպրոց կերթայ. փուծաջան եւ ուսումնասէր է, ամենայն ճշդութեամբ իւր պարտքը կկատարէ, կարգաւորեալ է, կոկիկ, մաքուր, հանդարտ, խելօք ու մարդավար : — Գպրոց երթալէն ոչ երբէք կփախչտի, ոչ երբէք ուշ կուգայ դպրոց, ոչ երբէք շշնկոց կհանէ դպրոց մտանելու ելանելու ժամանակ, եւ տուն դառնալու ատեն փողոցներու մէջ ջվազեր, չխաղար, ջուշանար, ջտընտնար, ու աշակերտակցացն հետ ջկոււրտիր : Ուրեմն ես եւս այսպիսի լաւ աշակերտ կուզեմ լինել :

4. Այս կարգացած գիրքս իմ կրթութեանս ու դաստիարակութեանս պիտի նպաստէ : — Ուրեմն ուշադրութեամբ զայն կարդամ, կարգացածս հասկանալու ջանամ, եւ ջհասկացած կտորներս վարժապետիս հարցունեմ եւ աղաջեմ որ ջնորհք ընէ զանոնք ինձ մեկնէ հասկացունէ :

5. Ուշադրութեամբ որ կարդամ՝ կարգացածս ջեմ մոռանար, ամէն տեսակ տեղեկութեամբ միտքս կզարդարուի ու երթալով գիտուն եւ խելացի լինիմ : — Ծոյլ ու անհնազանդ տղայք մտքերնին օգտակար գիտութիւններով ու տեղեկութիւններով ջեն զարդարեր, ուստի եւ կմնան տգէտ ու անխելք : Ուրեմն ջանամ ես որ ծոյլ ու անհնազանդ ջլինիմ, այլ լինիմ ուսումնասէր եւ հլու հնազանդ :

6. Բայց ուշադիր լինելու համար նեղութիւն պէտք է կրեմ. սակայն եթէ իսկզբան նեղուիմ՝ յետոյ սովրելու կվարժիմ եւ ամենայն դիւրութեամբ կուսանիմ : — Ամէն բանի սկիզբը դժուարին է, բայց

ջանքով ամեն բան կդիւրանայ : — Գեռ լաւ ու անսայթաք կարդալ չեմ գիտեր. բայց թէ որ ուշադիր լինիմ ու ջանք ընեմ, քիչ ժամանակէն վարժապետիս պէս կարող եմ լաւ կարդալ, եւ միանգամայն այնպէս լաւ կարդալ սովորելուս վերայ ուրախանալ, վարժապետէս գովեստ լսել եւ ծնողքս ուրախացունել :

7. Այս կարդացած գիրքս կճանաչեմ, անունն ի՛նչ է գիտեմ, որ առաջին երեսին վերայ է : — Նոյն երեսին տակը դրուած է նաեւ թուականն, որ է 1861 :

8. Այն շէնքն ուր գրքերը կտպուին՝ կկոչուի ՏՊԱՐԱՆ : — Գիրք կամ մատեան մի շինողը կասուի ՄԱՏԵՆԱԳԻՐ կամ ՀԵՂԻՆԱԿ : — Սովորաբար գրքին անունէն յետոյ կդրուի նաեւ հեղինակին անունն : — Գիրք մի այլ եւ այլ թերթերէ կձեւանայ, զորս կազմարարը կարգաւ իրարու հետ կկապէ կկազմէ, որպէս զի չկորսուին չպատուտին, եւ դիւրութեամբ գործածուին : — Գրքիս լաւ խնամք պիտի տանիմ. պիտի չաղտոտեմ, պիտի չպատուեմ չբզբտեմ, ինչպէս որ կընեն աղտոտ ու անխնամ ծոյլ աշակերտք :

 ԸՆԹԵՐՅՈՒՄԹԻ.

Տղայն տակի կմեծանայ.

1. Քանի մի տարիէն հիմակուրնէ աւելի մեծ պիտի լինիմ. ուստի աւելի բան պիտի գիտնամ թէ որ խաղալու եւ պարսպ կենալու տեղ՝ այժմէն սկսիմ լաւ աշխատիլ ու լաւ սովորիլ : — Ծոյլը բան չսով-

րիւր, տարիները կանցնին կերթան, հասակը կմեծանայ, տարիքը կառնու, տգէտ ողորմելի կմնայ, եւ մարդ զինքը չսիրեր, երեսը չնայիր :

2. Ոչ միայն պէտք է շիտակ անսայթաք կարդալ սովորիմ, այլ եւ դիւրընթերց կերպով գրել ու լաւ հաշիւ ընել գիտնամ : — Կարդալ գրել ու հաշուել չգիտցողը բանի մի կարող չէ, եւ շատ անգամ կխաբուի : — Ուրեմն ամենայն ջանք պիտի ընեմ որ լաւ կարդալ, լաւ գրել ու լաւ հաշիւ ընել սովորիմ : — Խելացի տղայք բան սովորիլ կսիրեն, եւ ո՛րչափ աւելի բան սովորին՝ այնչափ աւելի կուրախանան, վասն զի այնչափ աւելի սիրելի լինին եւ պատիւ կգտնեն :

3. Մէկ տարեկան եղած ժամանակս՝ ոչ քալել կարող էի եւ ոչ խօսիլ. բան մի եւս չէի հասկանար : — Երկու տարեկան որ եղայ, սկսայ քալել ու խօսիլ, բայց դեռ չէի հասկանար ամէն ասացածնին : — Ամենեւին ինձ միս չէին տար ուտելու, հացն եւս կծծէի, վասն զի տակաւին բոլոր ակռաներս չէին բուսած : Արդ որ ակռաներս բուսած են՝ ամէն բան կարող եմ ուտել :

4. Մնունս է..., ազգատոհմիս անունն է... քանի տարեկան լինելս իսկ գիտեմ, ինչպէս նաեւ ո՛ր ամիսն, եւ ամսոյն ո՛ր օրն ծնանիլս :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Գ.

Բաժանումն ժամանակի եւ եղանակք.

1. Գիտեմ ի՛նչպէս ժամանակը կբաժնուի : — Եօթն

օր՝ եօթնեակ կամ շաբաթ մի կընէ : — Չորս եօթնեակ ու երկու կամ երեք օր՝ ամիս մի կընեն : — Տասնուերկու ամիս կամ 365 օր՝ կընեն մի տարի : — Տասնուերկու ամսոց անուններն են Յուլար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր :

2. Երբոր յիսուներկու եօթնեակք կամ երկուտասան ամիսք կանցնին՝ տարին եւս կլմըննայ, եւ նոր տարի կսկսի : — Հարիւր տարին կընէ մի ԴԱՐ : — Մեր հիմակուան դարն է իննեւտասներորդ դար, վասնզի մեր թուականը կսկսի Քրիստոսի ծննդէնէն. ուստի 1861ը կցուցանէ թէ Քրիստոսի ծննդէնէն մինչեւ արդ 1861 տարի անցեր է : Ուրեմն իննեւտասներորդ դարն սկսած է 1801ին յունուարի 1ին : — Իննեւտասներորդ դարն իւր նախընթաց դարուց մէջ ամենէն լուսաւորեալը կհամարուի, որովհետեւ իւր մէջն ապրած մարդիկը մեծ ջանք ունին գիտութեան լուսով լուսաւորուելու. ուրեմն պէտք է որ ես եւս ուսում սովորիմ կրթուիմ, որպէս զի լուսաւորեալ դարուս արժանաւոր լուսաւորութիւն մտաց ունենամ, եւ նախատական տգէտ ու ռամիկ մականունները վրաս չդրուին :

3. Տարւոյն առաջին երկու ամիսներն ու ետքի վերջին ամիսը սովորաբար շատ ցուրտ կընէ, չորս դին կսառի եւ ձիւն կուգայ : Տարւոյն այս մասը կամ այս եղանակը կկոչուի ՉՄԵՌ : — Փետրուար ամսոյն յաջորդ երեք ամիսներն օդը այնչափ ցուրտ չընէր. սառոյցը կհալի, եւ ձիւն հազիւ երբեք կուգայ. ծառերը կծլին կկանաչանան եւ ծաղկաւէտ կզարդարուին, ծիծուռնք (գըրլանդըճ) կդառնան կու-

գան, մանուշակ (մէնէքշէ), կակաչ (լալէ), յակիւթ (սիւմպիւլ) եւ ուրիշ գեղեցկագոյն ծաղկունք հետ զհետէ պարտէզները կզարդարեն, եւ իրենց քաղցրաբոյր հոտովն ու երփներանգ գոյներովը մարդկան հոտոտելիքն ու աչքը կզմայլեցունեն կպարարեն : — Տարւոյն այս գեղեցիկ մասը կկոչի ԳՅՐՈՒՆ :

4. Յունիս, յուլիս եւ օգոստոս ամիսներն արեւը կայրէ, տաքը սաստիկ է եւ մարդ շատ կքրտնի : Տաքութեամբ է որ պտուղները կհասնին, ինչպէս ելակը (չիլէք), հաղարջը (Ֆրէնքիւզիւմիւ), կեռասը (քիրազ), տանձը (արմուտ), խնձորը (էլմա), ծիրանը (գայսի), դեղձը (շէֆթալի), պարկուկը (զէրտալի), սալորը (էրիք), սերկեւիլը (այվա) խաղողը (իւզիւմ), եւ այլն : — Տարւոյն այս մասը կկոչի ԱՄՍՅ :

5. Սեպտեմբեր, հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսները պարտէզներու եւ արտերու պտուղներն ու բերքը կժողովին : — Ս.բդէնյուլիս եւ օգոստոս ամսոց մէջ երկրագործը ցորենը կտրեր, որայ կապեր եւ կալը (հարման) տարեր կծեծէ : — Ս.յնպէս ծեծելով ցորենը յարդէն որ կզատէ՝ պարկերու (թօրպա) մէջ կլեցունէ, ջաղացք (տէյիրմէն) կտանի աղակուտայ, այս ինքն ալիւր շինել կուտայ : — Հացն ու կերած տեսակ տեսակ խմորեղէննիս այս ալիւրով կշինուին : — Յորենը քաղելէն յետոյ այգեկուծ (պաղպօզումու) լինի, որով այգիներու մէջ եղած խաղողները կքաղուին, եւ հնձաններու մէջ ճզմուէլով՝ իրենցմէ ելած ջուրը գինի լինի : — Երկրակործը կամ գեղացին իւր պարտէզներու պտղէն ու արտերուն բերքէն իրեն հարկաւոր եղածը պահելէն յետոյ մնացածը կտանի քաղաք կվաճառէ : — Տարւոյն այս եղանակն եւս կկոչի ԱՇՈՒՆ :

6. Ուրեմն չորս եղանակ կայ տարւոյն մէջ. անուննին ի՞նչ է : — Ձմեռ, Գարուն, Ամառ, Աշուն :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ Դ.

Առածք եւ կանոնք ուղղութեան.

1. Ողորմած ու գթած մարդը խեղճերուն կողորմի ու կօզնէ :

2. Յամառ ու կամապաշտ մարդը կպահանջէ որ միշտ իւր ուզածը լինի, իւր կամքը կատարուի :

3. Կռուարար մարդը մէկուն հետ չկրնար խաղաղ ապրիլ :

4. Խաղաղասէր մարդը մէկուն հետ չուզեր կռիւ ընել :

5. Մարդասէր չեղողը չուզեր մարդու ծառայութիւն մի, բարիք մի ընել :

6. Բան չգիտցողը պէտք է սովրի, որպէս զի տգէտ չմնայ :

7. Հիւանդ եղողը պէտք է կերակրէ զգուշանայ :

8. Աշխատիլ չուզողը՝ ապրելու արժանի չէ :

9. Իւր ծնողացն ու վարժապետացը չհնազանդողը պէտք է պատժուի :

10. Իրեն տրուած բարի խորհուրդներն ու խրատները բանի տեղ չդնողը յետոյ կզղջայ :

11. Աղտոտը պէտք է լուացուի, վասն զի աղտոտութիւնն առողջութեան վնասակար է եւ մարդկան ատելի :

12. Առողջ մնալ ուզողը պէտք է չափաւոր ուտէ խմէ :

13. Բան մի սովրիլ ուզողը պէտք է ուշադրութեամբ անոր աշխատի :

14. Լաւ քնանալ ուզողը պէտք է ցորեկն աշխատի, եւ չափազանց ջուտէ չխմէ :

15. Իւր ծնողացմէն եւ ուրիշներէն սիրուիլ ուզողը պէտք է լինի քաղցրաբարոյ, խելօք, հնազանդ, կամարար, եւ բերնէն երբէք սուտ չհանէ :

16. Բան մի հասկանալ կամ սովրիլ ուզողը պէտք է անոր ուշադրութիւն ընէ եւ վրան մտածէ :

17. Չկորսուիլ ուզողը պէտք է ուղիղ ճանապարհը հարցունէ, շիտակ ճամբէն դուրս չելլէ :

18. Գովուիլ ուզողը պէտք է լաւ վարք ունենայ, եւ իւր պարտքը կատարէ :

19. Իւր ծնողքն ուրախացունել ուզողը պէտք է որ դպրոցին մէջ ծուլութիւն չընէ, դասերը լաւ սովրի, հնազանդ լինի, եւ ամենուն հետ մարդավար եւ բարեբարոյ :

20. Նա որ իւր հագուստին շատ դիմանալը կուզէ, պէտք է որ վրան հոգ տանի եւ մաքուր պահէ :

21. Շուտով հասնիլ ուզողը պէտք է աճապարէ եւ ժամանակ չկորսնցունէ :

22. Շատ ստակ առնողը կարող է շատ եւս խնայութիւն ընել :

23. Արուեստ մի գիտցողը կարող է իւր պիտոյքն հոգալ միշտ եւ ուրիշին կարօտ չլինել, որ մեծ երջանկութիւն է գիտցողին : Ուրեմն ամէն մարդ պէտք է արուեստ մի ունենայ :

24. Հետաքրքիրը կուզէ ամէն բան տեսնել, ամէն բան գիտնալ, բայց բան սովրելու մտքով չէ. ուստի եւ հետաքրքրութենէն օգուտ չքաղեր, եւ ընդու-

նայն տեղ ամենուն ատելի լինի եւ ժամանակը կկորսնցունէ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ե.

Տուն.

1. Բնակած տունս մէկ կամ բազում դասիկոն ունի, մէկ կամ բազում սենեակներ, շտեմարան (մաղազա), խոհակերոց (մուկազա), ներքնատուն (պօտուրում), եւ այլն :

2. Ընտանիքս կազմողներն են հայրս ու մայրս, եղբայրներս ու քոյրերս, պապս ու մամս :

3. Ընկերակցացս մէկուն հայրը մեռած լինելով մայր միայն ունի, որ է ԱՅՐԻ կամ ՈՐԲԵԻԱՐԻ (տուլ). ուրիշ մի եւս ոչ հայր ունի ոչ մայր, եւ խեղճն այնպէս անհայր ու անմայր ՈՐԲ (էօքսիւզ) մնացած է : Ի՛նչ մեծ դժբաղդուծիւն : Աստուած իմ, ծնողացս երկար կեանք պարգեւէ, որպէս զի ես իսկ այն խեղճ վիճակի մէջ չիյնամ, որք չմնամ :

4. Իրեն սեպհական ստացուածք տուն մի ունեցողը կասուի ՏԱՆՈՒՏԷՐ : Չունեցողը կհարկադրի ուրիշին ամբողջ տունը կամ անոր մէկ մասը վարձելու եւ կկոչի ՎԱՐՉԻՈՐ (քիրաճը). տարուան կամ ամսուան մի համար տանտիրոջ տուած ստակն եւս կկոչուի ՎԱՐՉՔ (քիրա) :

5. Վարձուորը պարտական է տունը մաքուր բերնել, եւ իբրեւ թէ իւրը լինէր՝ այնպէս անոր պահպանութեանը հոգ տանիլ :

6. Բնակարան մի առողջ վնեղու համար պէտք է որ սենեակները ջոր վնին, լաւ հովահրին ու պայծառ լոյս տեսնեն :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Զ.

Մարդու անասնոցմէ ունեցած տարրերու խնդր.

1. Իմ բնութիւնս անասնոց բնութենէն գերազանց է, որովհետեւ կամքիս համեմատ ազատօրէն կգործեմ. կրնամ նաեւ բան մի զգալ, ուզել, մտածել եւ խօսիլ : — Արդէն շատ անգամ զգացեր իմացեր եմ ցաւ, ուրախութիւն, կարեկցութիւն, գուժ, վախ : — Անասունք եւս ցաւ եւ ուրախութիւն կզգան : — Շունն երբոր իւր տէրը կտեսնէ՝ կուրախանայ, պոչը կշարժէ. եւ կհեծէ կոռնայ երբոր ցաւ զգայ, երբոր ուրիշ շուն մի զինքը խաճնէ, երբոր գաւազանով գլխուն զարնեմ : Ես ցաւս կարող եմ խօսքով յայտնել, որովհետեւ խօսելու կարողութիւն ունիմ. իսկ անասունք չեն կարող խօսքով յայտնել իրենց ցաւը, որովհետեւ մեր խօսելու սքանչելի կարողութենէն զրկուած են :

2. Նիտակ կքալեմ ես. կարող եմ գլուխս դէպ երկինք վերցունել եւ ամէն կողմ դարձունել : — Կենդանիք մարմիննին դէպ իգետին ծռած կքալեն, եւ չեն կրնար երկինք նայիլ : — Ես կարող եմ տեսնել, լսել, շօշափել, ճաշակել եւ հոտոտել : — Կենդանիք եւս այս հինգ զգայարանքն ունին. եւ մէջերնէն ոմանք քան զմարդիկ աւելի սուր տեսանելիք ու հոտոտելիք ունին, այսինքն քան զմար-

դիկ աւելի հեռու կտեսնեն եւ սաստիկ հոտ կառնուն : — Որսորդին մօտէն չառած որսին հոտը շունը հեռուէն կառնու եւ կիմացունէ :

3. Ես գիտեմ որ ոտուներովս կրնամ քալել, ասքովս տեսնել, ականջովս լսել, լեզուովս ճաշակել համ առնուլ, քթովս հոտոտել. գայց կենդանին չգիտեր, եւ ամէն բան բնութեան ազդեցութեամբը կրնէ :

4. Ես կարող եմ երկաթին, փայտին, քարին եւ ուրիշ նիւթերու գործածութեանը վերայ մտածել, բայց կենդանին չկրնար մտածել : — Ես կրնամ հասկանալ թէ ինչո՞ւ համար այս կամ այն բանն այսպէս կամ այնպէս եղեր է. օրինակ իմն, ինչո՞ւ համար տուն մի պատուհաններ (փէնճիրէ), դուռ եւ ծխնելոյզ (օճագ) ունի. ինչո՞ւ համար պատուհաններն ապակի (ճամ) ունին. ինչո՞ւ համար բուսոց ջուր կտրուի : — Կհասկանամ ես թէ ինչո՞ւ համար աման մի ունկ (գուլի) պիտի ունենայ, եւ ինչո՞ւ համար կղպանք մի բանալի պիտի ունենայ կղպուելու : — Կհասկանամ թէ ինչո՞ւ համար կօշիկ շինելու համար կաշի (մէշին) կգործածուի եւ ոչ թէ երկաթ կամ լաթ, եւ ինչո՞ւ համար տուն մի այլ եւ այլ սենեակներ (օտա), դստիկոններ (գաթ), այլ եւ այլ դարաններ (տօլապ) պիտի ունենայ :

5. Գիտեմ որ պէտք չէ միշտ ուզածս ընեմ, այլ պարտական եմ ծնողացս ու վարժապետացս հրամանը կատարել, եւ հնազանդ՝ ուշադիր եւ աշխատասէր լինել :

6. Գիտեմ թէ ինչո՞ւ համար գիշերը դռները գոց պիտի մնան, ինչո՞ւ համար տանիքը (տամ) ծուռ պիտի լինի, ինչո՞ւ համար վառարանք ու կրա-

կարանք երկաթէ կամ քարէ պիտի լինին եւ ոչ
թէ փայտէ :

7. Կդիտեմ որ սեղանն ու նստարանը իրարու
նմանութիւն ունին. երկուքն եւս փայտէ շինուած
են, գործածուելով կմաշին, ոտք ունին, եւայլն :
— Կդիտեմ նաեւ որ իրարմէ կտարբերին. մէկուն
ունեցածն միւսը չունի :

8. Վարդն (կիւլ) ու մեխակը (գարանֆիլ) ծաղիկ
են. երկուքն եւս ունին անոյշ հոտ, գեղեցիկ գոյ-
ներ, արմատ, ցօղուն եւ տերեւներ. սակաւ մի ժա-
մանակ կծաղկին եւ յետոյ կթողմին : — Սակայն
վարդը մեխակէն շատ կտարբերի. նոյն հոտը չունի.
փշեր (տիքէն) ունի, եւ մեխակը չունի : — Վարդին
տերեւները լայն են եւ կլորիկ : — Մեխակին տե-
րեւները նեղ են, սրածայր եւ երկայն :

9. Վարդը մեխակին հետ բաղդատեցի, եւ իրարմէ
ունեցած զանազանութիւննին նշանակեցի : — Անա-
սունք չեն կրնար բաղդատել. առարկայից տար-
բերութիւնը չեն կարող կատարեալ կերպով
հասկանալ, որովհետեւ հասկացողութիւն չունին,
բանականութիւն չունին, Աստուած իրենց չէ
տուեր մեր խելքը :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Է.

Տնկարանութիւն մանկանց.

1. Ամէն բան ուշադրութեամբ դիտելովս՝ շատ
բան սովորած եմ : — Բանջարանոցներու (պօսեթան)
մէջ բուսած տնկերը կճանաչեմ, որպիսիք են լու-

բիա (ֆասուլիա), մաշ (պիզիլիա), կաղամբ (լահանա), ստեպղին (հավուճ), աղցան (սալաթա), ազատքեղ (մաղտանոս), որթ (ասմա), շողգամ (շալկամ), կանկար (էնկինար), հազար (մարուլ), եւ այլն : Գիտեմ նաեւ անպիտան խոտերն օգտակար տնկերէն զանազանել :

2. Տորենը (պուղտայ), գարին (արփա), հաճարը (չավտար), վարսակը (եուլաֆ), վուշը (քէթէն), կանեփը (քէնտիր), գետնախնձորը (եէր էլմասը), եգիպտահատը (մըսըր պուղտայը) արտերը կբուսնին : — Ասոնց մէջ ամենէն լաւ ցորենն ու եգիպտահատը կճանաչեմ, մանաւանդ եգիպտահատը, վասն զի թէ՛ բոհրածը եւ թէ՛ խաշածը շատ կերած եմ եւ յոյժ կսիրեմ :

3. Բանջարանոցներու եւ պարտէզներու մէջ կբուսնին տանձ, խնձոր, սալոր, կեռաս, դեղձ, ծիրան, պարկուկ, ընկոյզ (ճէվիզ), կաղին (ֆընտրգ), թուզ (ինճիր), սերկելիլ, նարինջ (փօրթուզալ), լեմոն, եւ այլն :

4. Բոլոր այս պտուղներն օգտակար են թէ որ հասուն ուտուին. տհաս պտուղք վնասակար են եւ զմարդ կհիւանդացունեն. ուրեմն տհաս պտուղերքէք պէտք չէ ուտել, ինչպէս որ շատ անգամ տղայք կուտեն եւ կհիւանդանան, մանաւանդ աղջկունք որ սովորաբար թթու բան շատ կսիրեն :

5. Ծառք ոչ միայն ախորժելի պտուղներ կուտան, այլ եւ գարնան իրենց շքին տակ զմեզ կզուարճացունեն, եւ ամառը արեւուն ճառագայթներէն զմեզ կպաշտպանեն : — Զմեռն եւս ծառք իրենց փայտովը զմեզ կտաքցունեն :

6. Ծառերը գետինը հաստատուած են հաստ ար-

մատով, որ հողին տակ կ'մտնէ եւ անտի սնունդ կառնու կմեծանայ :

7. Արմատին հողէն դուրս ելած կտորը ծառին բունն է, եւ կեղեւով պատած է :

8. Գարնան սկիզբը ծառերն ոչ տերեւ կունենան եւ ոչ պտուղ, այլ միայն գնդակ կամ պտուկ :

9. Երբոր այս գնդակներուն վերայ դրսէն պըլլուած կեղեւներն իյնան, աղուամազով (այվաթիւյիւ) պատած կանաչ մասն մի դուրս կելլէ, որ կմեծանայ ընծիւղ կամ բողբոջ (Ֆիլիզ) լինի, եւ ծայրերէն կարձակուին տերեւիկներ եւ ծաղիկներ :

10. Ծառոց շատերը տերեւնին մեծցունելէն յետոյ ծաղիկ կբանան : — Նշենին (պատէմ աղաճը) եւս տերեւ չտուած ծաղիկ կբանայ : — Պտուղը ծաղիկներէն կելլէ :

11. Տնկոց մեծանալուն համար հարկաւոր եղած սնունդը տերեւներն օդին մէջէն կծծեն, իրենք դարձեալ ծառերը կզարդարեն եւ արեւուն տաքութենէն պտուղները կպաշտպանեն :

12. Երբոր ծառ մի պտուղները չհասած իւր տերեւները կորսնցունէ, պտուղները կչորնան կիյնան :

13. Երբոր ծառէջուն կեղեւը վնասուի, սովորաբար կհիւանդանան, եւ շատ անգամ կչորնան կմեռնին : — Ռերեմն ծառերու կեղեւը կտրող տղայք շատ չար պէտք է լինին եւ շատ յանցաւոր. ուստի եւ սաստիկ պատժոց արժանի են :

14. Ես ոչ երբէք ծառի մի պիտի վնասեմ, ոչ երբէք պիտի կտրեմ ոչ կեղեւն եւ ոչ տերեւները, եւ եթէ ընկերակցացս մէջէն գտնուին չարամիտ ու չարասիրտ տղայք որ այնպիսի չարագործութիւն ուզեն ընել, պիտի արգելում եւ պիտի

չթողում որ այն խեղճ անլեզու եւ անխօս ծառոց
դպչին վնասեն

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ը.

Կենդանաբանութիւն մանկան ց.

1. Կենդանեաց կազմութիւնն ամենեւին իրարու
չմամիր. մեծ տարբերութիւն կայ շան մի եւ
ճնճողուկի (սէրչէ), գլխան ձկան (քէֆալ), գորտի
(գուրպաղը), մամուկի (էօրիւմէք) եւ խխունջի
(սայլանկէօզ) մէջ :

2. Շունը չորս թամբ կամ ոտք ունի, եւ ձագերուն
կամ կուտայ կմեծցունէ :

3. Ճնճողուկը լաւ կհանաչեմ, վասն զի բոլոր օրը
տանեաց վերայ ու պարտիզաց մէջ կթռչտի, ճիւ
ճիւ կճճուէ, կերակուր կփնտռէ, երկու մագիլ կամ
թամբ ունի, բոյն (եուվա) կշինէ, մէջն հաւկիթ կածէ,
եւ ձագ կհանէ. փետրով պատած է ճնճողուկը, եւ
ԹՈՉՆՈՅ կարգէն է :

4. Գլխան ձուկն ոչ թամբ ունի եւ ոչ թեւ, եւ վրան
թեփով (փուլ) պատած է. ոչ շան պէս կարող է
քալել կամ վազել, եւ ոչ ճնճողուկին պէս թռչիւ
այլ կլողայ, այսինքն թեւեակներովն ու պոչովը
ջրին մէջ տեղէ տեղ կփոխադրուի : — Գլխանը
ՉԿԱՆՅ կարգէն է, եւ ջրի մէջ միայն կրնայ ապրիլ :

5. Գորտը չորս թամբ ունի. ետեւիններն առջեւին
ներէն աւելի երկայն են. այս թամբերով գորտը
կլողայ. քալել չկրնար, կցատքըտէ : — Երկակենցաղ
կոչուած կենդանեաց կարգէն է գորտը. որովհետեւ

նոցա պէս թէ՛ ջրի մէջ կապրի եւ թէ ցամաքի վերայ, անոր համար եւ երկակենցաղ կասուի, այսինքն երկու կերպ կեանք ունեցող :

6. Մամուկն ուժը թաթ ունի. մարմինը շատ մը օղակաձեւ (հալգա պիչիմի) մասանցմէ կազմուած է : — Մամուկը ՄԻՋԱՏԱՅ (պէօճէք) կարգէն է :

7. Խխունջն ամենեւին թաթ չունի. խեցիէ պատեան մի վրան կկրէ. երբեմն բոլորովին մէջը կմտնէ կպահուըտի, եւ երբեմն կէս մի դուրս կելլէ : — Այն խեցին Աստուած տուն բնակուածեան եւ պաշտպան տուեր է խեղճին :

8. Շատ կենդանիք իրենց համար սեպհական ձայն ունին : Իսկ ձկներն, որդերն (գուրտ) եւ միջատները կերելի թէ ամենեւին ձայն չունին :

9. Մարդուս ձայնը կենդանեաց ձայնէն, երգէն ու պոռալէն աւելի ախորժելի է :

10. Լսեր եմ սոխակին (պիւլպիւլ) ու դեղձանիկին (գանարիա) դայլայլիկը, արտուտին (չայրը գուշու) երգը, շան հաջիւնը, ոչխարին մայիւնը, ձիոյն խխնջիւնը, գորտին կռկռալը, մեղուին բզզանքն ու տզզանքը եւ ագռաւին կռիչքն ու կվկայեմ որ եւ ո՛չ մէկը քաղցրաձայն մարդու քաղցրանուագ երգին կհաւասարի :

11. Կենդանեաց ոմանք մազով կամ բրդով ծածկուած են, ոմանք փետրով, ոմանք եւս թեփով որպէս ձկունք, կամ խայթոցով որպէս ոզնիք (քիփրի), եւ կամ խեցիով որպէս ոսորէն (սորիտիա), ձկնականջը (միտիա), խեցգետնին (չաղանօզ) :

12. Կենդանիք այլ եւ այլ կերպով կկերակրուին : — Ոմանք ուրիշ կենդանիներ կմեռցունեն կգիշատեն եւ կուտեն, եւ կասուին ԳԻՇԱՏԻՉ, այսինքն

պատուող կենդանիք : — Ուրիշները կկերակրուին խոտով, արմատով, ծառի ճիւղերով, տերեւներով, ծաղկի ու հունտի հոյզով (էօզ) ու ծուծով, եւ կատուին ԽՈՏՍԿԵՐ կենդանիք :

13. Եզը (էօքիւզ), կովը (ինէք), ոչխարը (գօյուն), ձին (աթ) թէ՛ խոտ կուտեն եւ թէ՛ ուրիշ բոյսեր ու տուռներ : — Շունն ու կատուն թէ՛ միս կուտեն եւ թէ՛ ուրիշ ո՛ր եւ իցէ կերակուր : — Հաւերն եւ թռչունները հունտ կուտեն : — Մեղուն կուտէ ծաղկանց հոյզը. իսկ որդերն՝ փայտ եւ տերեւ :

14. Կենդանեաց անդամներն եւս իրարու նման չեն : — Ոմանք թեւ ու ձեռք ունին ինչպէս կապիկը. ուրիշները սրունք (պաճագ) եւ ոտք ունին ինչպէս ձին. կան եւս որ ամենեւին անդամ (ազա) չունին ինչպէս որդերն ու օձերը (երլան) : — Ոմանք չորս թաթ ունին, ոմանք երկու, եւ ոմանք վեց եւ կամ ութը, ինչպէս մամուկները. կան նաեւ որ մինչեւ հարիւր եւ ավելի թաթ ունին ինչպէս օձասանդը (գըրգայագ) կոչուած միջատը :

15. Կենդանեացմէ ոմանք թեւ ունին, ոմանք թեւ՝ ճակ, եւ ոմանք եղջերիկ, որ երկայն մօրուքի պէս միջատաց աչքին երկու կողմը կեցաց զիրենք որոգայթներէ կազատէ :

16. Եղջերիկ ունեցող կենդանեաց մէկքանին գիտեմ. զոր օրինակ մեղուն (արը), թիթեունիկ (քէփէնէք), թեւճակ ունեցողներէն եւս մէկքանին գիտեմ ինչպէս թիւնիկ (իւսկիւմրիւ), անձրուկ (խամսի), թեփուկ (զմարիտ), խարակածուկ (գայա պալըղը), կարմրածուկ (պարպունիա), տափածուկ (փիսի), վահանածուկ (գալգան), թրածուկ (գըլըճ պալըղը) :

17. Կենդանիք երբոր յոգնին՝ կքնանան : — Բուն

ու բուխճակը (պայգուշ) եւ այն կենդանիք որ կերակուրնին գիշերը կփնտռեն, ցորեկը կքնանան եւ գիշերն արթուն կկենան :

18. Կան եւս կենդանիք որ բոլոր ձմեռը կթմրին քուն լինին, եւ գարնան միայն կարթննան երբոր ցուրտն անցնի. ասոնցմէ է առնէտը (կէմէ սըջանը) :

19. Աստուած ամէն կենդանեաց ինքզինքն իւր թշնամեացմէ պաշտպանելու զէնք եւ միջոց տուած է. օրինակի համար, ոմանք ինքզինքնին կպաշտպանեն՝ թշնամինին խածնելով. այլք կից (թէքմէ) տալով. ուրիշները սաստիկ արագուծեամբ վազելով կամ թռչելով : Ջրի մէջ ապրողներէն ոմանք եւս իրենց թշնամուոյն ձեռքէն ազատելու համար ջուրը կաղտորեն ու անտեսանելի լինին :

20. Կենդանեացմէ ոմանք ձագերնին կենդանի կծնանին, ծիծերնուն մէջ գոյացած կաթով զանոնք կանուցանեն, եւ Կեն ԴՄՆԱԾԻՆՔԻ կասուին, ինչպէս կովը, ձին, շունը, կատուն, եւ այլն :

21. Թռչունք բոյներնուն մէջ հաւկիթ կածեն, վրան թուխս կնստին, կտաքցունեն, իրենց այն տաքուծեամբը հաւկիթներուն մէջ ձագեր կգոյանան, եւ ժամանակնին հասնելուն պէս՝ հաւկիթին կճեպը (գապուգ) կկոտորեն դուրս կելլեն, եւ կասուին ՎԱՌԵԿ (փիլիճ) :

22. Ջկունք իրենց բազմաթիւ հաւկիթը ջրի կամ խոտերու վերայ կածեն, ուստի եւ հարիւրաւոր հազարաւոր ձկնիկ կելլեն :

23. Թռչունք օդի մէջ կապրին, եւ փետրով ծածկուած են, որ իրենց զգեստի տեղ է : — Ջկները ջրի մէջ կապրին եւ վրանին թեփով պատած է : — Որդերը, խլուրդները (եէր սըջանը), դաշտամուկն (օվա սը-

չանք) եւ ուրիշները հողի տակ կապրին, ու վրանին կա՛մ մազ ունին եւ կամ բարակ մորթ (տէրի) :

24. Կենդանաճնաց մորթը պատած է մազով, բրդով, խայթոցով եւ կամ թեփով :

25. Կենդանաճինք մարդու շատ օգտակար են : — Ոչխարին միսը կուտեմք եւ բուրդը մանելով՝ տեսակ տեսակ լաթեր եւ հագուստներ կշինեմք : — Եզան միսն եւս կուտեմք որ կերակրեղինաց ամէնէն սննդարարն է. իսկ մորթը կաշի (մէշին) կշինուի, որով կօշկակարք կօշիկ (ճիզմէ) ու մուճակ (գունտուրա) կշինեն :

26. Շատ տեղ եզն է միայն երկիր հերկողը :

27. Կովը գոյացական կաթ կուտայ, զոր կխմեմք, անով տեսակ տեսակ կերակուրներ ու պանիրներ եւ կարագ կշինեմք :

28. Ձին զմեզ տեղէ տեղ կփոխադրէ, բուերնիս կկրէ, կառքերնիս կքաշէ, երկիրնիս կհերկէ, եւայլն : — Կեռնոտ երկիրներուն համար էշն ու ջորին (գաթըր) ամենահարկաւոր են, վասն զի ձին ասոնց պէս չկրնար քարոտ տեղեր քալել ու բարձր տեղեր ելլել :

29. Տաք ու աւազուտ երկիրներ ձիոյն, իշուն ու ջորիին պաշտօնը կկատարէ ուղտը (տէվէ) :

30. Թռչնոց միսն ու հաւկիթը համով կերակուր լինին մեզ, բարակ փետուրնին եւս կակուղ անկողին եւ բարձ (եասթըգ). սագերու (գազ) թեւին խոշոր փետուրներն գրիչ կշինուին : — Թռչունք կուտեն հունտ, ճճիներ եւ ուրիշ վնասակար որդեր :

31. Ձուկերն եւս մարդու կերակուր լինին, եւ վայրենի ժողովուրդներ կան որ ձկէ զստ ուրիշ բան չեն ուտեր :

32. Միջատք շատ անգամ գէշ խոտերը կուտեն

կշնջեն. երբեմն նաեւ ազնիւ տնկեր կկրծեն կփճացունեն : — Մեղուն մեղր կշինէ ու մոմ կուտայ մեզ : — Միջատներ եւս կան որ գեղեցիկ գոյներ կուտան :

33. Խեցիներով եւ մանաւանդ սատափով (սէտէֆ) ու բուստով (մէրճան) շատ գեղեցիկ քաներ կշինուին : Սովորաբար սատափին մէջէն կելլէ մարգարիտը (ինճի) :

34. Տգրուկը (սիւլիւք) կգործածուի մարդու մարմնոյն հարկաւոր եղած տեղէն արիւն հանելու՝ առանց երակը նշտրակով ծակելու :

35. Եզան, կովու, հորթու (տանա), ոչխարի, այծու (քէչի), եղջերուի (կէյիք) եւ իշու մորթով կաշի կշինուի : — Մագաղաթը կշինուի իշու կամ ոչխարի կաշիով :

36. Հին ատենը երբոր թուղթը հնարուած չէր, մագաղաթի վրայ կգրէին. յիսուն տարիէ աւելի կայ որ գրեթէ չգործածուիր մագաղաթը :

37. Մազոտ կենդանեաց մորթը զգուշութեամբ կհանուի, կմաքրուի կկոկուի մուշտակ (քիւրք) լինի, որ ձմեռուան ցրտութենէն զմեզ կպաշտպանէ : Մուշտակի վարժելէն չվարժին աւելի լաւ է, եւ աւելի առողջարար :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Թ.

Երկրարանութիւն մանկանց.

1. Հողն այլ եւ այլ տեսակ է. այսինք կաւային հող, կաւ (քիւ), գաճ (ալչը), կաւիճ (թէպէշիր), եւայլն :

2. Որմնադիրն աւագի հետ կիր (քիրէճ) կամ ու-

ըիշ նիւթ խառնելով ՏԱՂԱԽ (սըվա չամուրը) կշինէ :

3. Բրուան (չօմլէքճի) իւր պոլտուկները (չանագ չօմլէք) շինելու համար կաւ կգործածէ :

4. Կաւիճը կգործածուի դպրոցներու սեւ տախտակին վերայ գրելու. իսկ գաճն ու կիրը կգործածուին տուն շինելու :

5. Շատ տեսակ քարեր կան, ամէնքն եւս գետնէ կհանուին ու շէնք շինուելու կգործածուին. անդրիք եւ արձանք մարմարիոնէ կամ կիճէ (մէրմէր) կշինուին : — Հրացանի (Թիւֆէնք) քարը ԿՍՅԾՔՍԲ (չագմագ Թաշը) կասուի, վասնզի կայծ կհանէ :

6. Սեւաքարն այն քարն է որ դպրոցներուն մէջ վրան հաշիւ ընելու կգործածուի. այս սեւաքարով եւրոպա շատ տեղ տանիքը կծածկեն կղմինտրի տեղ :

7. Սակաւագիւտ քարեր եւս կան որ ԱԿՈՒՆՔ կամ պատուական քարեր կկոչուին, եւ անոնցմով է որ այն գեղեցիկ մատանիներն եւ կանանց ակնախտիղ զարդերը կշինուին :

8. Այս պատուական քարերուն գլխաւորներն են ադամանդ (էլմաս), որով ապակեգործք ապակին կկտրեն, զմուռխա (զիւմրիւտ), մեղեսիկ (ճէպլէլէգում), կարկեհան (գըրմըզը եակութ), նոնաքար (սէյլան), յասպիս (եէշիմ), սարդիոն (ագիգ Թաշը), տպագիոն (Թօփաճ), ակատ (պապա գուրու), եւ այլն :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ժ.

Մարդուս կերակուրն.

1. Այն կենդանիք որոց միսը մարդիկ կուտեն՝ ասոնք են եզ, կով, հորթ, ոչխար, այծ, խոզ (տոմուզ), այծեամն (գարաճէ), եղջերու, նապաստակ (թավշան), հաւ, սագ, բադ (էօրտէք), աղաւնի (կէօվէրճին), կաքաւ (քէքլիք), լորամարգի (պըլտըրճըն), արտոյտ, եւ ուրիշ մանր թռչունք :

2. Կովու, ոչխարի ու այծու կաթը սննդարար կերակուր է մարդուս : — Իշու կաթը կուրծքի հիւանդութեան շատ օգտակար է :

3. Առողջարար կերակուր են մարդուս ծառոց եւ թփոց պտուղը, եւ անկոց տերեւը, հունտն ու արմատը :

4. Այս կերակրեղէնը համովցունելու համար Աստուած այլ եւ այլ համեմիչ տնկեր ու արմատներ եւս ստեղծած է, ինչպէս եղէգէ ու ճակնդեղէ կամ քանճարէ ելած շաքարը, մարեմխոտ (քէքլիք օթու), խնկունի (պիպէրինէ), ազատքեղ (մաղտանօս), սըխտոր (սարմըսագ), սոխ (սօղան), եւ այլն :

5. Ասոնցմէ զատ կան նաեւ չոր համեմներ (պահար), ինչպէս պղպեղ (պիպէր), կինամոմոն (թարչին), հնդիկ ընկոյզ (Հինտիսթան ճէվիզի), մեխակ (գարանֆիլ), կոճապղպեղ (զէնճէֆիլ), եւ այլն : Բայց այս համեմներն որչափ կարելի է քիչ գործածելու է, վասն զի մարդուս արիւնը կտաքցունեն վնաս կհասցունեն :

6. Մարդուս ամենէն սննդարար եւ ամենէն սո-

վորական կերակուրն եւ ամենէն աժանն է հացը, որ ընդհանրապէս ցորենի ալիւրով կշինուի. բայց քարիի ալիւրով եւս հաց լինի: — Շատ սննդարար է նաեւ գետնախնձորը, եւ պէտք եղած ժամանակ հացի տեղ կրնայ բռնել:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԺԱ.

— Մարդուս պիտոյքն եւ զանոնք լցունելու միջոցներն.

1. Մարդս իւր ապրուստը ճարելու համար ըրած աշխատանքը կկոչուի ճԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ, ԱՐՈՒԵՍՏ, եւ ինքը ճԱՐՏԱՐ կամ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ, ԱՐՈՒԵՍՏԱԻՈՐ:

2. Աստուած մարդուս վերայ պարտք դրած է ճակտին քրտինքովն իւր հացը գտնել. այսինքն Աստուած կուզէ որ ամէն մարդ օրինաւոր կերպով իւր աշխատանքովը հոգայ իրեն հարկաւոր եղածը:

3. Գողերը միշտ ծոյլ մարդիկ լինին որ աշխատանքը կատեն եւ կջանան կրօնքի ու բարոյականի հակառակ միջոցներով ճարել իրենց ամենօրեայ հացը:

4. Ինչպէս որ թռչունը թռչելու համար ստեղծուած է, նոյնպէս եւ մարդս աշխատելու: — Երկիրս իւր բերքն ու պտուղը կուտայ՝ աշխատանքով զինքը բանեցնողին: — Աստուած մարդուս երջանկոււթիւնն աշխատանքին վերայ դրած է, ուստի եւ աշխատանք չսիրողն ոչ երբէք երջանիկ պիտի լինի:

5. Ո՞յք են մարդուս պիտոյքը: — Թէ որ քիթս ու

բերանս գոցեմ՝ կխղղուիմ կմեռնիմ, վասն զի մարդքս թէ որ շարունակ քթովն ու բերնովը օդ չծծէ՝ չկրնար ապրիլ, չկրնար կենդանի մնալ, ուստի եւ կմեռնի :

6. Թէ որ մարդ մի դժբախտաբար ամայի անբնակ կղզի նետուի, ու ոչ ուտելու եւ ոչ խմելու բան գտնէ՝ անօթուժենէն ու ծարաւէն կմեռնի :

7. Սաստիկ ցրտէն մարդուս անդամները կթմրին եւ ինքը կմեռնի : Ուրեմն մարդս չկրնար առանց տաքութեան կամ ջերմութեան ապրիլ :

8. Թէ որ նորածին տղայ մի դաշտ ձգուի անխնամ, այսինքն առանց զինքը կերակրելու, մաքուր եւ տաք պահելու՝ կմեռնի :

9. Թէ որ տղայն մինակ ապրի՝ խելացի չլինիր, ոչ խօսիլ կսովրի եւ ոչ շիտակ քալել : — Տղայք խօսիլ ու քալել կսովրին գլխաւորապէս իրենց ծնողաց խօսակցութիւնն ու քալուածքը դիտելով. խելքով եւս կսկսին շարժիլ իրենց ծնողաց բարի օրինակովն, ազդարարութեամբքն ու խրատներովը : — Ապա ուրեմն օդը, տաքութիւնը, կերակուրը, հանդերձք, ընտանիք եւ ընդհանրապէս ընկերութիւնը հարկաւոր են մարդուս կենաց պահպանութեանն համար :

10. Շատ բան, ինչպէս կահ կարասիք (էշիա), անկողինք, կառք, ձիանք եւ այլն, կճառայեն մարդուս կենաց դիւրութեանը :

11. Հարուստ մարդ մի կենաց դիւրութեանն ու զուարճութեանն համար ամէն հարկաւոր եղածն ունի. ուստի կարող է եւ պարտական իսկ խեղճերուն օգնելու, նոցա կարօտութիւնը լցունելու :

12. Աշխատիլ կրցող եւ հարկաւորով հոհ եղող

աղքատք՝ շատ անգամ հարուստներէ աւելի երջանիկ են :

13. Աղքատութիւնը թշուառութիւն չէ երբոր մարդս կրօնասէր, աշխատասէր եւ առողջ լինի, եւ երբ սովրի աւելորդ բաներէ ինք զինքը զրկել :

14. Գոհ պէտք է լինիմք երբոր առողջարար եւ չափաւոր կերակուր ունենամք, կոկիկ հագուստ եւ լաւ բնակարան, թէպէտեւ կերակուրնիս բազմախորտիկ ու բազմածախ, հագուստնիս գեղեցիկ, եւ բնակարաննիս շատ մեծ, գեղեցկակերտ, գեղեցկազարդ ու գեղեցկակահ չլինին :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԲ.

Անկարելի, հարկաւոր եւ դիպուածական բաներ, պատճառք, հնարք, վախճան.

1. Այն բանն որ չկրնար լինել՝ կատարուիլ՝ կկոչուի ԱՆԿԱՐԵԼԻ :

2. Անկարելի է որ աշակերտ մի բան սովրի՝ թէ որ ուսումնասէր, մտադիր ու աշխատասէր չլինի :

3. Անկարելի է որ մարդս առողջ մնայ եթէ չափէ դուրս ուտէ խմէ, եւ անկարգութեանց ետեւէ լինի :

4. Անկարելի է որ կոյրը գոյն տեսնէ, եւ համր (սաղըր) մարդը ներդաշնակ երաժշտութեան համն առնու զուարճանայ :

5. Այն բանն որ պէտք է, առանց անոր մարդ չկրնար լինել, կկոչուի ՀԱՐԿԱԽՈՐ :

6. Հարկաւոր է որ մարդս առողջարար ու սննդարար կերակուր ուտէ. հարկաւոր է որ յոգնած գոր-

ծաւորն հանգչի յոգնութիւն առնու. հարկաւոր է որ հիւանդը դեղ ու հանգիստ առնու : — Ինչո՞ւ : — (Այս հարցման պատասխանն աշակերտը պէտք է տայ զինքը կարդացունողին) :

7. Հարկաւոր է որ ամէն տուն դուռ ունենայ, ամէն խուց մէկ կամ շատ պատուհան ունենայ : — Ինչո՞ւ :

8. Ամէն մարդիկ պիտի մեռնին, ամէն ծաղիկ պիտի թոռմին, ամէն տղայք պէտք է ուսում սովորին. ինչո՞ւ համար :

9. Պէտք չէ՛ որ մարդ ուրիշներուն ամէն ըրածին հետեւի : Եւ ինչո՞ւ համար չպիտի հետեւի :

10. Հարկաւոր է որ կառք մի չորս անիւ (թէքէրլէք) ունենայ, եւ սեղան (սուֆրա) մի չորս ոտք ունենայ :

11. Եթէ կառքն երկու անիւ միայն ունենայ, եւ սեղանը մէկ ոտք միայն, մի՛թէ դարձեալ կառք եւ սեղան չե՞ն կոչուիր : Ուրեմն կառքի համար չորս անիւ եւ սեղանի համար չորս ոտք ունենալը հարկաւոր չէ :

12. Ի՞նչ որ քանի մի վերայ աւելնալովը կամ պակսելովն անոր էութիւնը չփոխեր՝ կասուի ԴԻՊՈՒԱՅԱԿԱՆ, ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ :

13. Սեղանին չորս ոտք, մի ոտք ունենալն, ինչպէս նաեւ կլոր (եռվարլագ) կամ քառակուսի (տէօրթ քէօշէ) լինելն դիպուածական է. վասն զի սեղանը կլոր լինի, քառակուսի լինի, չորս կամ մի ոտք ունենայ՝ դարձեալ սեղան կասուի :

14. Տան մի առջեւ շուն մի կուլայ, քիչ ժամանակէն այն տանը մէջ մարդ կմեռնի : Այս մահը դիպուածական է, վասնզի տանը առջեւ շան լալուն

համար չմեռաւ մարդը, եւ այնպէս կարծելն անխելքութիւն է :

15. Մարդուն մէկը ծովուն կամ գետին եզերքը կուգայ, կհանուի ու ջուր կմտնէ : Պատճառ մի ունի՞ : — Ունի : — Ո՞րն է :

16. Ծնողքս զիս դպրոց կղրկեն. պատճառն ի՞նչ է :

17. Տիգրան խաղալով վազելու ժամանակ կիջնայ ոտքը կկոտրէ : Տիգրան ոտքը կոտրելո՞ւ համար կվազէր. ուրիշ պատճառ մի չունէ՞ր : — Այո ունէր : — Ո՞րն է :

18. Հիւանդին վախճանն ի՞նչ է երբոր բժիշկ կանչել կուտայ եւ անոր տուած դեղերը կխմէ : — Վարժապետն ի՞նչ վախճանաւ ծոյլ ու անհնազանդ աշակերտքը կպատժէ : — Աշակերտ մի ի՞նչ վախճանաւ կարդալ, գրել ու հաշիւ ընել կսովրի :

19. Մարդուս իւր վախճանին հասնելու համար գործածած միջոցները ՀՆՍԲՔ կկոչուին :

20. Խելացի եւ ծնողաց ու վարժապետաց սիրելի լինելուն հնարքն ո՞րն է : — Գլխաւորն այս է, պէտք է խելօք կենալ ծուլութիւն չընել, դասերը լաւ սովորիլ, վրան գլուխը մաքուր պահել եւ հնազանդ լինել :

21. Հիւանդութիւններէ, ձանձրութենէ, պատժէ ազատ մնալու հնարքն ո՞րն է :

22. Թէպէտեւ ներսեսին տարիքը մեծ չէր, վասն զի հազիւ վեց տարեկան կար, բայց կսիրէր ամէն տեսածին պատճառն իմանալ. օր մի մօրը հետ դաշտը գնացեր էր պտըտելու. տեսաւ որ երկրագործ մի գետին կհերկէ, եւ բազմութիւն ագռաւուց (գարկա) ետեւէն կերթան. իւր բնական հետաքրքրութեամբը մօրը պատճառն հարցուց : Ի՞նչ պատասխան տուաւ տիկին մայրը :

23. Որդեակ իմ, պատասխանեց մայրը, ագռաւք սովորաբար որդ ու ճճի կուտեն : Արօրը (սափան) հողը պատռելով ու մէկդի ձգելով՝ մէջի որդերն ու ճճիները դուրս կհանէ : Ագռաւք զայն գիտնալով՝ արօրին ետեւէն կերթան որպէս զի հանած կենդանիքն ուտեն :

24. Ներսեսին պէս հարցասէր պէտք է լինին տղայք՝ թէոր կուզեն սակաւ ժամանակի մէջ շատ բան սովրիլ. բայց ջանալու են որ հարցմունքնին ընդունայն բաներու վերայ չլինին : Միշտ մտքերնին բերելու են որ մեծերը տղայոց խելքն իրենց ըրած հարցմունքէն կչափեն : Խելացի տղայք՝ խելացի հարցմունք կընեն :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՅՐԵՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻԻՆ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ա.

Յորդոր ուսումնասիրութեան մարց եւ աղջկանց.

Տղու մի ապագայն իւր մօրը գործն է միշտ : (ՆԱՓՈԼԷՈՆ.)

Գիտուն բարեկիրթ աղջիկ, գիտուն բարեկիրթ մայր. գիտուն բարեկիրթ մայր, գիտուն բարեկիրթ զաւակ : Ուրեմն գիտութիւն եւ բարեկրթութիւն աղջկանց :

Կրթեցէք, ուսումն եւ գիտութիւն սովրեցուցէք աղջկանց՝ հանդերձեալ մարց ազգին, որպէս զի նորա եւս կարող լիցին օր մի այն առած ուսումնին ու կրթութիւննին իրենց որդւոցը տալ :

Եթէ որդեսէր մայրերը գիտնային որ իրենց դեռածին մանկանց ապագայ բախտն ու երջանկութիւնն իրենց անոնց տալու դաստիարակութենէն ու կրթութենէն կախուած է, ո՛րչափ արդեօք տարբեր կերպով կմտածէին ուսման եւ կրթութեան վրայ, եւ ո՛րչափ աւելի սէր կունենային ուսում սովրելու կրթուելու : Տղայք շատ աւելի քան իրենց մօրմէն կսովրին ու կրթուին՝ քան թէ իրենց հօրմէն, վասն զի գիշեր ցորեկ անոնց հետ են աւելի, անոնց վարժած են ուրախութիւննին, տրամուծիւննին,

կարօտութիւննին, եւ սրտերնուն ամենագաղտնի խորհուրդներն անգամ յայտնելու. եւ այս բաներս բացատրելու լեզուն եւս դարձեալ անոնցմէ կտո՛ւրին թո՛թովել եւ խօսիլ: Ապա ուրեմն պէտք է որ մայրերն ուսմունք սովորին ու կրթուին. եւ այս անանօրինելի պարտք մի է վրանին: Ի՞նչ կասեմ պարտք. ոչ, մանաւանդ թէ երջանկութիւն մի է: եւ յիրաւի. իւր երկանց ծնունդը խնամելէն, դաստիարակելէն ու կրթելէն աւելի ի՞նչ երջանկութիւն, ի՞նչ մեծ ուրախութիւն կրնայ լինել մօր մի համար, մանաւանդ երբօր փափաքի օր մի իւր զաւակը մեծցած, գիտութեամբք զարդարուած, մարդկային ընկերութեան մէջ հռչակուած եւ հայրենեացը պարծանքներէն մէկն եղած տեսնել:

Ո՛հ, թէ որ մայրերը գիտնային մարդկային ընկերութեան մէջ ունեցած փառաւոր պաշտօննին, ի՞նչ մեծ յառաջադիմութիւն կրնէինք իրենց ձեռքովը. քանի մի տարուան մէջ կերպարանափոխ կլինէր Հայոց ազգը, որով եւ իրենց պարծանաց վարդաբոլոր պսակն անթառամ:

Ազգի մի իսկական երջանկութեանը պատճառ՝ բարեկիրթ գերդաստաններն են. բարեկիրթ գերդաստան կազմողներն եւս մայրերն են. երանի՛ այն ազգին որ մայրական դաստիարակութիւնը ծաղկեցնելու փոյթն ու խնամքը օրէ օր աւելցնելու կաշխատի՝ աղջկանց դպրոցներուն թիւը շատցունելով եւ եղածները բարեկարգելով:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Բ.

Դաստիարակութիւն, Ուսումն, Աստուած, Կրօնք,
Բարոյական.

Հ. Դաստիարակութեան վախճանն ի՞նչ է :

Պ. Դաստիարակութեան վախճանն է մարդուս միտքը բանալ, սիրտը կրթել, յախտից եւ իջար սովորութեանց հեռացնել, իմաստութիւնն ու առաքինութիւնը անոր սիրելի ընել, աստուածապաշտանձինք հանել, եւ օգտակար քաղաքացիք պատրաստել՝ որք իրենց կեանքը դնեն հայրենեաց ու ազգին վերայ :

Հ. Ուսումն ի՞նչ է :

Պ. Ամենքնիս տգիտութեան եւ անուսումնութեան մէջ կծնանիմք : Աշխարհ եկած ժամանակնիս ոչ խօսիլ գիտեմք, ոչ կարդալ, ոչ գրել. եւ այնպէս անբանի պէս կմնայինք թէ որ նախ ուրիշները մեզի բան սովրեցնելու չջանային, եւ յետոյ թէ որ մեք ջանք չընեմք սովրելու գէթ ամէն մարդու հարկաւոր եղած բաները. վասն զի ինչպէս որ մարմնոյն ապրելու համար անհրաժեշտ հարկաւոր է կերակուրը, նոյնպէս եւ մեր հոգւոյն կենդանութեանն հարկաւոր են ուսումն եւ գիտութիւնք :

Հ. Իմաստութեան աղբիւրն ի՞նչ է :

Պ. Երկիւղ Աստուծոյ :

Հ. Աստուած ի՞նչ է :

Պ. Աստուած մեր եւ ամէն բանի ստեղծողն է, եւ բոլոր մեր մտածմունքն ու ըրած ամէն գործերնիս կտեսնէ :

Հ. Մեր առ Աստուած ունեցած առաջին պարտքն ո՞րն է :

Պ. Մեր առ Աստուած առաջին պարտքն է զինքը ճանաչել, սիրել եւ իւր պատուիրանացը հնազանդիլ :

Հ. Մեր պարտքերը կատարելէն մեզի ի՞նչ օգուտ կլինի :

Պ. Մեր պարտքերը կատարելով այս աշխարհիս մէջ երջանիկ լինիմք, եւ անդին մեզի յաւիտենական երջանկուծիւն կպատրաստեմք :

Հ. Մեր պարտքն առ Աստուած կատարելը ինչո՞վ կրնամք սովորիլ :

Պ. Կրօնից գիտուծեամք :

Հ. Կրօնքն ի՞նչ է :

Պ. Կրօնքն է գիտուծիւն եւ սէր Աստուծոյ, որ երկինքն ու երկիրս բոլոր մէջիններովը ստեղծեց, եւ մեզի կեանք ու ամէն ունեցած բարիքնիս պարգեւեց. անոր համար պարտական եմք զինքը պաշտել, միշտ սուրբ անունն օրհնել եւ զինքը սիրել. եւ երբ զինքը կսիրեմք՝ իրեն հաճոյ լինելու համար բարիք կընեմք, եւ չարիք ընելէն կզգուշանամք :

Հ. Առ Աստուած ունեցած պարտքերնէս յետոյ մեզի ուրիշ ի՞նչ բան կսովրեցունէ կրօնքը :

Պ. Մեզի կսովրեցունէ թէ ի՞նչ պարտքեր ունիմք մարդկանց, մեր ծնողացն ու մեր անձին :

Հ. Կրօնից այն մասն ի՞նչ կկոչուի :

Պ. Բարոյական :

Հ. Բարոյականին պատուիրաններն ի՞նչ բանի կրնան վերածուիլ.

Պ. Այս երկու առածիս.

ՄՐՆԵՐ ՈՒՐԻՇԻ ԱՅՆ ԲՄՆՆ ՈՐ ՉԵՍ ՈՒՋԵՐ ՈՐ ՔԵՉ

ԸՆԵՆ, ԵԼ ԻՆՉ ՈՐ ԿՈՒՋԵՍ ՈՐ ՔԵՉ ԸՆԵՆ, ԴՈՒՆ ԵՒՍ ՈՒՐԻՇԻ ԸՐԷ :

Ասով կկատարեմք նաեւ մարդկանց ունեցած պարտքերնիս. վասն զի առաջինովը կսովրիմք ուրիշին կեանքը, ստացուածքը, համբաւն ու ազատութիւնը պատուել. իսկ երկրորդովը կմտածեմք թէ իրաւցնէ մարդ չկայ որ ուզէ որ իրեն անիրաւութիւն մի լինի. անկէց կհետեւցունեմք թէ ուրեմն պէտք չէ որիշին անիրաւութիւն ընել : Կուզեմք որ կարօտութիւն մի ունեցած ժամանակնիս ուրիշները մեզ օգնեն. ուրեմն պէտք է որ մեր եւս ուրիշներուն օգնեմք, աղքատին ողորմութիւն տամք, հիւանդները հոգամք մխիթարեմք, եւ այլն :


Հ. Առ ծնողս ունեցած պարտքերնիս որո՞նք են :

Պ. Մեր ծնողացն ունեցած գլխաւոր պարտքերնիս այս երեքս են, մեծարանք, սէր եւ երախտագիտութիւն : ՄԵԾՄ.ՐԱՆՔ, որովհետեւ իրենք մեզի կեանք տալով՝ մեր առաջին մեծերն են, ուստի պէտք է զիրենք պատուեմք ու մեծարեմք : ՍԷՐ, որովհետեւ իրենք մեզի կենդանութիւն տուեր, աշխատեր տղայութիւնիս մեծցուցեր ու բարի դաստիարակութիւն տուեր են, եւ կամ դեռ կուտան : ԵՐԱ.ԽՍՏԱ.ԳԻՏՈՒԹԻՒՆ, որով իրենց մեզի ըրած բարիքը պիտի ճանչնամք, պիտի ջանամք անոնց փոխարէն ընել, նեղութեան ժամանակ զիրենք մխիթարել, պաշտպանել, կարօտութեան մէջ իրենց օգնել, իծերութեան զիրենք խնամել, յիշատակնին պատուել եւ ուրիշին եւս եթէ հարկ լինի՝ պատուել տալ :

Հ. Մեր անձին ունեցած գլխաւոր պարտքերնիս որո՞յք են, եւ ի՞նչպէս կրնամք զանոնք կատարել :

Պ. Մեր անձին ունեցած գլխաւոր պարտքերնիս

այս է. այն ամէն բանն որ կա՛մ մեր հոգւոյն եւ կամ մարմնոյն վնաս մի կբերեն՝ անոնցմէ սաստիկ զգուշանամք. օրինակի համար, պէտք չէ որ մեղք գործեմք, վասն զի անով զԱստուած կբարկացնեմք ու մեռնելէն յետոյ հոգինիս սաստիկ տանջանքներ կբաշէ : Ուրեմն թէ որ հոգինիս կսիրեմք՝ պէտք չէ վայրկենական ՚ զուարճութեան մի համար այն մեղքը գործեմք, որ հոգինիս եւս այնպէս չտանջուի : Դարձեալ գիտեմք որ մէկը եթէ պաղ առնու՛ կհիւանդանայ, եւ մինչեւ ծանր հիւանդութիւններ կրնան վրան՝ գալ. ուրեմն թէ որ մեր անձը կսիրեմք՝ պէտք է ցրտէ զգուշանամք որ հիւանդ չլինիմք : Նոյնպէս պէտք է զգուշանամք նաեւ ուրիշ ամէն նասակար բաներէ :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Գ.

Ա. Աստուծան Աղօթք.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն :

Ամենասուրբ Երրորդութիւն, մի Աստուած յերիս անձինս, կհաւատամ որ հոս ներկայ ես. ամենայն խոնարհութեամբ կպաշտեմ զքեզ եւ բոլորով սքտիւ կփառաւորեմ :

Աստուած իմ, երկիրպագանեմ քեզ իբրեւ Ստեղծողիս եւ միակ Բարերարիս : Շնորհակալ եմ ինձ ըրած ամենայն բարեացդ, եւ մանաւանդ զիս քրիս-

տոնեայ եւ բարի ծնողաց զաւակ ստեղծելուդ, եւ գիշերս ինձ անվտանգ անցունել տալով՝ այս օրուան զիս հասցունելուդ :

Երկրպագելիդ իմ Յիսուս, ջնաշխարհիկ օրինակ կատարելութեան, ամենայն ջանք պիտի ընեմ քեզ նմանելու, եւ պիտի լինիմ քեզի պէս քաղցր, խոնարհ, հլու հնազանդ, առաքինի, աշխատասէր, բարի, ողորմած եւ գթած. եւ մանաւանդ պիտի ջանամ մեղք չգործել եւ ինձ սովորական դարձած պակասութեանցս մէջ չիյնալ : Տուր ուրեմն ինձ քու սուրբ շնորհիդ, Աստուած իմ Յիսուս, եւ զօրացո զիս ընդդէմ ամենայն փորձութեանց սատանայի, որպէս զի իրմէ խաբուելով մեղք չգործեմ եւ զքեզ չբարկացնեմ, եւ ամենայն սրբութեամբ եւ երկիւղածութեամբ անցունեմ այս օրս՝ բարի օրինակ լինելով եղբարցս եւ ընկերացս, հնազանդելով ծնողացս եւ վարժապետացս :

Երեկոյեան Աղօթք.

Երկիրպագանեմ քեզ Աստուած իմ եւ Տէր, եւ բիւր շնորհակալութիւն կմատուցանեմ որ զիս ողջ առողջ այս երեկոյիս հասուցիր՝ ամենայն հոգեւոր ու մարմնաւոր պարգեւօքդ լցունելով :

Աստուած իմ, կհաւատամ քեզի, վասն զի դու ինքն ես ճշմարտութիւն : Քու վրադ յոյսս դրած եմ, վասն զի անհուն բարի ես : Բոլորով սրտիւ կսիրեմ զքեզ, վասն զի ամենասիրելի ես, եւ քու սիրոյդ համար իբրեւ իմ անձս կսիրեմ իմ ընկերս :

Ո՛վ Աստուած իմ, այսօր եւ բոլոր կենացս մէջ ըրած մեղքերուս մեղա՛յ գոչելով թողութիւն կկարն-

դրեմ. ներէ ինձ զանոնք, եւ պահապան հրեշտակս յուղարկէ որ թէ՛ այս գիշեր եւ թէ քովանդակ կենացս մէջ քովս կենալով՝ զգուշացունէ հեռացունէ զիս այն ամէն բաներէն որ անհաճոյ են քեզ. վասն զի քու սուրբ կամքդ ու հաճոյքդ կատարելն է եւ պիտի լինի միշտ իմ միակ ջանքս ու բաղձանքս :

Աստուած իմ, դու որ ինձ այսպիսի բարեգուծ ծնողք տուեր ես, որ քու տեղդ ամէն պիտոյքս ինձ կհոգան առատապէս եւ զիս լաւ դաստիարակելու ամենայն ջանք եւ փոյթ ունին, որպէս զի խելքս բացուի եւ կրթուի եւ քու մեծուծիւնդ եւ ինձ համար ըրած անչափ բարիքդ աւելի լաւ կարող լինիմ ըմբռնել հասկանալ, դուն ուրեմն ամենայն բարեօքդ լցուր սիրելի ծնողքս հայրս ու մայրս, եւ երկար ու երջանիկ կեանք նոցա պարգեւէ, որպէս զի նոցա երկարակեցուծեամբն ու երջանկուծեամբը ես եւս երջանիկ լինիմ, եւ քու սուրբ անունդ ուրախ սրտիւ օրհնեմ եւ բարեբանեմ :

ՀԱՅՐ ՄԵՐ ԿԱՄ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ.

Գրարաւ.

Հայր մեր որ յերկինս,
սուրբ եղիցի անուն քո.
եկեսցէ արքայուծիւն քո.
եղիցին կամք քո որպէս

Աշխարհարաւ.

Ո՛վ Հայր մեր որ երկին-
քն ես, քու անունդ սուրբ
ըլլայ, քու արքայուծիւնդ
գայ. քու կամքդ կատա-
րուի երկրիս վերայ ալ

յերկինս եւ յերկրի : Զհաց
մեր հանապազորդ տուր
մեզ այսօր. եւ թող մեզ
զպարտիս մեր՝ որպէս եւ
մեք թողումք մերոց պար-
տապանաց : եւ մի՛ տանիր
զմեզ ի փորձուծիւն , այլ
փրկեա զմեզ ի չարէ : Զի
քո է արքայութիւն եւ զօ-
րութիւն, եւ փառք յաւի-
տեանս. ամէն :

ինչպէս որ կկատարուին
երկինքը : Ամէն օրուան
հացերնիս այսօր ալ տուր
մեզ. եւ թող մեզի մեր
պարտքերն՝ ինչպէս որ
մեք ալ կթողումք մեզի
պարտք ունեցողներուն
պարտքերը . փորձու-
ծեան մէջ ալ մի՛ ձգեր ըզ-
մեզ. այլ չարէն փրկէ :
Վասն զի քուկդ է կարո-
ղութիւնը, զօրութիւնը եւ
արքայութեան փառքը
յաւիտեանս. ամէն :

Հ. Այս աղօթքն ինչո՞ւ տէրունական կկոչուի :

Պ. Վասն զի Քրիստոս Տէրն մեր իւր առաքելոցը
սովրեցուց. նոքա եւս իւրեանց յաջորդացը :

Հ. Ինչո՞ւ համար այս աղօթքն ամէն աղօթքներէն
գերազանց է :

Պ. Նախ անոր համար որ ինքն Քրիստոս Տէրն մեր
մեզ սովրեցուց. եւ երկրորդ՝ որ Աստուծոյ ի՛նչ
խնդիրք որ կարող եմք ընել, բոլորին եւս սքանչելի
բովանդակութիւնն է :

Տասն Պատուիրանք Աստուծոյ.

Ա. ես եմ՝ Տէր Աստուած քո.

Բ. Մի՛ եղիցին քեզ աստուածք բաց յինէն.

Գ. Մի՛ առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո
ի վերայ սնտեաց.

Դ. Յիշեջիր զօրն շաբաթուց՝ սրբել զնա.

Ե. Պատուեա զհայր քո եւ զմայր քո.

Զ. Մի՛ սպանաներ.

Է. Մի՛ շնար.

Ը. Մի՛ գողանար.

Թ. Մի՛ սուտ վկայեր զընկերէ քու մօտէ.

Ժ. Մի՛ ցանկանար կնոջ ընկերի քո, եւ մի՛ ամե-
նայնի զինչ ընկերի քո իցէ :

Հ. Որո՞ւ ձեռօք Աստուած այս պատուիրաններն
մարդկան տուաւ :

Պ. Մովսէս մարգարէին ձեռօք՝ Սինա լեռան
վերայ :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Դ.

ԱՆՆԻԿ եւ իւր մայրը Սոֆի Տիկին.

ԱՆՆԻԿ. Մայրիկ, Աստուած որ ամենաբարի է,
ինչո՞ւ համար կ'թողու որ ձմեռն ա՛յսպէս ցուրտ,
ա՛յսպէս սաստիկ ցուրտ ընէ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Որդեակ իմ, Աստուած ամէն բան
լաւ եւ իմաստուծեամբ կ'ընէ : Երկիրս չկրնար միշտ
ծաղիկ եւ պտուղ բերել. պէտք է որ նաեւ հանգչի,
եւ ինչպէս որ գիշերն մեր հանգստեան համար հար-
կաւոր է, նոյնպէս եւ ձմեռն երկրիս : Երբոր այն-
չափ մեծնաս որ կարող լինիս կարդացածդ հաս-
կանալ, այն ժամանակ կգիտնաս որ տաքուծեան
պէս ցուրտն եւս հարկաւոր է երկրիս :

ԱՆՆԻԿ. Զմեռն շատ երկայն պիտի լինի՞ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Միտքդ բեր անցած տարին : Հիմա-

կուան պէս նաեւ մէկ սաստիկ ցուրտ ըրաւ, որ ծննդեան օրերն էր. յետոյ ցուրտը քանի գնաց մեղմացաւ, եւ այնչափ քիչցաւ որ կրցար դուն պարտէզ իջնալ եւ ծաղկոցդ մշակել :

ԱՆՆԻԿ. Այո՛, լաւ միտքս կուգայ : Պարտէզ ձիւն չէր մնացեր հալեր էր, եւ կյիշեմ որ դուն զրուցեցիր թէ գարուն էր, եւ յակինթն ու գարնանածաղիկը բացուեր էին : Ըսիր նաեւ որ քիչ ժամանակէն Ջատիկ պիտի գայ, եւ ճերմակ շրջազգեստս (Ֆիստան) պիտի կարենամ հագնիլ եկեղեցի երթալու :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Այս տարի եւս նոյնպէս պիտի լինի, որդեակ իմ. ձմեռէն յետոյ գարուն պիտի գայ, եւ գարնան հետ անուշահոտ ծաղկունք եւ քաղցրերգակ թռչունք :

ԱՆՆԻԿ. Մի՛թէ ձմեռը թռչունք հոս չե՞ն կենար, կերթա՞ն :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Այո, շատերը տաք երկիրներ կերթան. բայց գարնան կդառնան կուգան, եւ երբոր ծիծռունք (գըրլանդըճ) կերեւան՝ նշան է թէ ձմեռը բոլորովին անցեր է :

ԱՆՆԻԿ. Գարունէն յետոյ ի՞նչ պիտի գայ մայրիկ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Գարունէն յետոյ պիտի գայ ամառն՝ իւր տաքութեամբը պտուղները հասունցունելու :

ԱՆՆԻԿ. Մայրիկ, անցեալ տարուան պէս ե՞րբ ցորենի արտերը պիտի տանիս զիս որ փեննա (փէյղամպէր չիչէյի) եւ հարսնուկ (կէլինճիք չիչէյի) ժողովեմ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Մայիս ամսոյն վերջերը պիտի տանիմ զքեզ զաւակս, որ ամառուան սկիզբն է, եւ միանգամայն քու սիրած կեռասիդ ու հաղարջիդ (Ֆրէնկ իւզիւմիւ) ժամանակն է :

ԱՆՆԻԿ. Ո՛հ ո՛րչափ կուզէի, մայր իմ, որ արդ իսկ ամառ լինէր, եւ հետդ երթայի դաշտերը պտըտէի, ժուռ գայի բացուէի :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Հոգ մ՛ըներ դուն, անցեալ տարուան պէս այս տարի եւս ամառը կուգայ, որդեակ իմ, եւ ամառէն ետքը աշունն՝ որ այգեկուծի ժամանակն է : Այսպէս ահա տարւոյն չորս եղանակներն այսինքն ձմեռ, գարուն, ամառ եւ աշուն ետեւէ ետեւ կուգան ամէն տարի անխափան : Զմեռը գիշերուան կնամանի՝ յորում ամէն բան կլուէ կդադարի կհանգչի. գարունը՝ առաւօտեան, որ օրուան այն ժամանակն է, յորում ամենայն արարածք կարթննան ու կսկսին աշխատիլ. ամառը՝ կէսօրուան, որ ցորեկուան կէսն է, եւ արեւուն ամենապայծառ միջոցը. իսկ աշունն՝ կրնամք երեկոյին նմանեցունել, յորում ցորեկը կվերջանայ, մուծը կկոխէ եւ մարդիկ աշխատանքէ կդադարին :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ե.

Մարդավարութիւն.

Որք միանգամ անկողմնասէր հոգևով եւ ճշմարիտ ազգասիրութեամբ — որ է ազգին պակասութիւնները տեսնել եւ կարեկցաբար զանոնք բառնալու ջանալ — մեր ազգին վերայ կնային, բարոյական թերութեանցը մէկը կգտնեն նաեւ մարդավարութեան, այսինքն մարդու հետ պարտուպատշաճ կերպով վարուիլ գիտնալուն պակաս

սուժիւնը, որ եւ անխնամ դաստիարակութենէ յառաջ կուգայ :

Եթէ մարդավարութեան օգտակար ուսումը մեծատան ոսկեձեղուն մետաքսապատ պալատէն՝ աղքատ ու գծուծ տնակը իջնայ, անշուշտ եմք որ ազգերնու վերայ աւելի ընկերսիրութիւն ու միաբանական հոգի կտեսնուի. եւ առանց այս երկու ամենահարկաւոր առաքինութեանց՝ անկարելի է որ ազգ մի ոյժ առնու, շուտով յառաջ երթայ ու մեծամեծ գործեր կատարէ :

Մարդավարութիւնն եւս գիտութեանց պէս, եւ գուցէ աւելի, մարդու ամէն հասակին ու ամէն վիճակին հարկաւոր է. անոր համար մեր դիտողութիւնքն եւս ընդհանուր պակասութեանց վերայ է : Ընթերցողք դիւրաւ պիտի հասկանան որ բոլոր յիշածնիս պակասութիւն լինելով, անոր հակառակը պէտք է գործել եւ ուսուցանել :

Մաքրութեան ու շարժուածքի պակասութիւններ.

1. Առաւօտը ելլելուն պէս երեսը, ակռաները, ականջն ու ձեռքը լուալու եւ գլուխը սանտրելու անփոյժ լինի :

2. Եղունգները կկրծէ, եւ կամ մարդու առջեւ զանոնք կկտրէ կմաքրէ :

3. Ի՛նչ որ ձեռքն ունենայ, գրիչ, թուղթ, ձեռնոց, ծաղիկ, մէկէն բերանը կտանի :

4. Երեսին, հագուստին կամ ձեռքին վերայ ունեցած աղտը թուքովը կհանէ, եւ այն ամենուն առջեւ :

5. Եղունգներովը գլուխը կքերէ, եւ երեսին

վերայ թէ որ ուռեցքներ ունի՝ քերելով արիւն կը-
վազցընէ անոնցմէ ուրիշներուն դիմացը :

6. Եղունգներովը ակռաներն ու ականջը կը-
մաքրէ :

7. Ձայնով քիթը կսրբէ ու յետոյ թաշկինակը
կբանայ կնայի. թէ որ անմարդավարութիւնը քիչ
մըն ալ առաջ տանի, մատուրներովը քիթը կսրբէ
եւ տեսնողներուն սիրտը կխառնէ :

8. Ստէպ մատուրները քիթը կտանի ու կխառնէ,
կմաքրէ :

9. Ամէն տեղ կթքնէ. կարծես թէ թաշկինակին
ի՛նչ բանի գործածուիլը չգիտեր :

10. Վրան գլուխն աղտոտ՝ այցելութեան կեր-
թայ :

11. Բերանը թուղթ կառնու կծամէ ու անդադար
շրթունքներուն վերայ կբերէ, եւ կամ կկլորէ ու
ասդիս անդին կնետէ :

12. Նստած ամոռն անդադար կշարժէ :

13. Խօսելու ժամանակ միշտ ասդիս անդին գը-
լուխը կերերայ :

14. Թեւերը ծնկուրներուն վերայ կիջեցունէ,
եւ կամ ծունկը երկու ծալելով՝ ձեռուրներովը կը
բռնէ :

15. Ծունկ ծնկի վերայ կդնէ, եւ վրայինը անդա-
դար կշարժէ :

16. Ամենուն առջեւ անձնահաճութեամբ հայլին
կնայի եւ իւր վերայ ունեցած համարումն յերեսս
իւր կյայտնէ :

17. Ուրիշի դիմաց անդադար մազերն, գդակը,
գլխարկն եւ կամ փողպատը կշտկըտէ :

18. Մարդու առջեւ խառնափնդոր մազերով կելլէ :

19. Ոչինչ բաներու վերայ անմտաբար բարձր ձայնով կծիծաղի, եւ կամ բերանաբաց զմայլած կնայի :

20. Քովի խօսողին վերայ ձեռուրները կպտըտ-ցունէ, երբեմն անոր կոճակները, երբեմն օձիքը, եւ երբեմն թեզանիքը կբռնէ :

21. Շարունակ ժամացուցին շղթան կամ բանալին կխառնէ. կարծես թէ ժամացոյց ունենալը կուզէ որ ամէնքն իմանան :

22. Երբոր երգի կամ նուագարանի ձայն կառնու, մէկէն կսկսի ինքն եւս երգել, ոտքը եւ կամ ձեռքը զարնել, գլուխն երերցունել :

23. Ոտքովը քովիններուն ամոռը կշարժէ առանց մտածելու որ զանոնք անհանգիստ կընէ :

24. Երբոր բանի մը հաւնի, կսկսի ձեռքերը շփշփել, գլուխը շարժել :

25. Շատ անգամ աչուրները կխփխրփէ ինչպէս թէ արեւուն սաստիկ լոյսը զինքը նեղէր :

26. Արհամարհանօք ուսերը վեր վեր կթօթվէ :

27. Երբոր բանի մը նեղանայ, ոտքը գետինը կզարնէ :

28. Ո՛ր եւ իցէ բանէ որ ձանձրանայ կամ քունը որ գայ, կսկսի երկար երկար յօրանջել այլանդակ ձայներով՝ առանց ձեռքովը բերանը գոցելու. երբեմն եւս ոչ միայն կյօրանջէ, այլ եւ թեւերն ասդիս անդին կերկնցունէ :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Զ.

Հինգ զգայարանք.

Հ. Քանի՞ ՁԳԱՅԱՐԱՆՔ ունիմք, կամ թէ մեր ջորս դին եղած բաները քանի՞ կերպով կզգամք ու կըտեսնեմք :

Պ. Հինգ զգայարանք ունիմք, եւ հինգ կերպով բան կզգամք կտեսնեմք :

Հ. Որո՞նք են հինգ զգայարանքները :

Պ. Ատոնք են տեսանելիք, լսելիք, ճաշակելիք, հոտոտելիք եւ շօշափելիք :

Հ. Ատոնց իւրաքանչիւրին պաշտօնն ի՞նչ է :

Պ. Տեսանելեօք կտեսնեմք, լսելեօք կլսեմք, ճաշակելեօք՝ բանի մը համը կառնուեմք, հոտոտելեօք՝ բանի մը հոտը կառնուեմք, իսկ շօշափելեօք ո՛ր եւ իցէ բանի կդպչիմք ձեռքով ու հաստ կամ բարակ, ողորկ կամ խորտուբորտ լինելը կիմանամք :

Հ. Զգայարանք ըսելով ի՞նչ կհասկցուի ,

Պ. Զգայարանք ըսելով կհասկցուին մարմնոյ այն մասերն որ բան մի զգալու կգործածուին :

Հ. Որո՞նք են այդ գործարաններն :

Պ. Ա.Զ.Ք, որ տեսանելեաց գործարանն է :

Ա.Կ.Ս.Ձ, որ լսելեաց գործարանն է :

ԼեԶՈՒ եւ ՔԻՄՔ (տամաք), որ ճաշակելեաց գործարանն է :

ՔԻԹ, որ հոտոտելեաց գործարանն է :

ՁեՌՔ, որ շօշափելեաց գլխաւոր գործարանն է, թէպէտ եւ մարդուս մարմնոյն ամէն մասունքն եւս շօշափելու կամ բանի մը դպչելու ժամանակ քիչ շատ զգալու կարողութիւն ունին :

Հ. Երբոր բերանդ շաքարի մը կտոր դնես՝ ի՞նչ կիմանաս :

Պ. Բան մը՝ որ հաշակելեացս համ կուտայ, ու համ կառնում :

Հ. Թէոր մատուրներովդ կրակ բռնես, կամ ասեղով մը միսդ ծակես, ի՞նչ կզգաս :

Պ. Բան մը որ մարմինս կցաւցնէ :

Հ. Այն բանն որ մարդ զգայարանաց գործարանին ձեռքովը կիմանայ ի՞նչ կասուի :

Պ. Զգայութիւն :

Հ. Կենդանիք եւս զգայարանք ունի՞ն :

Պ. Ամէն կենդանիք զգայարանք ունին, եւ ոմանցը մեզմէ աւելի կատարեալ է :

Օրինակի համար, շան հոտոտելիքը մերինէն շատ աւելի սուր է, վասն զի մեզմէ շատ աւելի հեռուէն հոտ կառնու : Թռչնոց եւս տեսանելիքը մերինէն շատ աւելի զօրաւոր է : Եւ թէպէտ մարդս զգայարանաց կողմանէ կենդանեաց չհասնիր, ուժի կողմանէ եւս անոնցմէ շատէն վար է, սակայն հոգևով, խելքովն ու խօսելու կարողութեամբն անոնց ամենէն վեր է, եւ երկրիս թագաւորը կսեպուի :

Հ. Հոգին ի՞նչ է :

Պ. Ներսերնիս էակ մի կայ զոր ոչ կրնամք շօշափել, եւ ոչ տեսանել, եւ մարմնոյն բոլոր շարժմունքները նա է որ կկարգաւորէ. այն էակը կըսուի ՀՈԳԻ : Հոգին է որ կզգայ, կմտածէ, կպատճառաբանէ, կհնարէ, անցած գացածը կյիշէ եւ գալիքն առաջուց կգուշակէ : Հոգին է որ բարին եւ չարը կգործէ, եւ վարձուց ու պատժոց արժանի լինի : Հոգին անմահ է : Ուսմամբ կիմտանայ ու կկատարելագործուի : Զգիտցուիր թէ մարմնոյն հետ ի՞նչ-

պէս միացած է հոգին, եւ անկէց կբաժանուի մահուամբ միայն, որ ծանր հիւանդութիւններէ, կարգէ դուրս դիպուածներէ կամ ծերութենէ յառաջ կուգայ:

Հ. Մարդու մարմնոյն գլխաւոր մասունքն՝ որո՞նք են :

Պ. Արտաքինքն են ԱԶՔ, որով կտեսնէ, ԱԿԱՆՁՔ որով կլսէ, ՔԻԹ որով ի՞նչ եւ իցէ բանի հոտը կառնու, ԼԵԶՈՒ՛ որով կերակրեղինաց համը կառնու եւ կխօսի :

Հ. Ներքին մասունքն որո՞նք են :

Պ. ՍԻՐՏ որ երակաց ձեռքով արիւնը բոլոր մարմնոյն մէջ կպտըտցունէ ու անդադար մարմինը շարժման մէջ կպահէ մինչեւ որ մահը գայ այն շարժումը դադարեցունէ : Երկու ԹՈՔԵՐԸ որ շընջառութեան գլխաւոր գործարաններն են. հոն օդը արիւնը մաքրելու համար երկու երեք րոպէ կենալէն յետոյ կապականի, արտաշնչութեամբ դուրս կելլէ, եւ իւր տեղն ուրիշ նոր մաքուր օդ կմտնէ :

Հ. Մարմնոյն ստորին մասին մէջ ի՞նչ գործարաններ կան :

Պ. ՍՏԱՄՈՒՔՍ, որ մարդու կենդանութիւնը պահելու համար կերած կերակուրները կմարսէ. ԼԵՐԴ (Տիյէր), ուսկից կելլէ մաղձը (սաքրա). եւ ՓԱՅԾԱՂ (տալագ), որուն պաշտօնը դեռ չգիտցուիր :

Հ. Ասոնցմէ զատ մարմիննիս ի՞նչ մասունք ունի :

Պ. ՈՍԿՈՐ, մանր ու խոշոր ԵՐԱԿՆԵՐ, ԶՂԵՐ, ՄԻՍ, եւ ասոնք ամէնքը պատած է բարակ մաշկ մը :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Է.

Զմեռուան վերայ խորհրդածութիւն.

Մտածէ, որդեակ, թէ ո՛րչափ խեղճ լինէիր եթէ այս խոր ձմեռուան մէջ զքեզ տաքցունելու համար ոչ հազուատ ունենայիր, ոչ փայտ, ոչ ածուխ (քէօմիւր), եւ ոչ անկողին : Յորեկը տաքնալու համար ամէն հարկաւոր եղածն ունիս. գիշերն եւս պատուական անկողին եւ վերմակներ (եօրկան). ո՛րչափ պարտական ես Աստուծոյ գոհութիւն մատուցանելու երբոր մտածես որ հազարաւոր բիւրաւոր խեղճեր ոչ կրակ ունին տաքնալու, ոչ անկողին պառկելու. վրայի հազուատնին եւս ըսես մաշած պատառատուն, որով ցրտէ չպաշտպանուելով սաստիկ կմսին կդողդողան. տաք կերակուր մըն ալ չունին որ ուտեն ու քիչ մը տաքնան : Ո՛րչափ երջանիկ լինէին նոքա թէ որ քու հազուատներուդ կէսը, քառորդն ունենային, քու կերած կերակուրներէդ մէկն ուտէին :

ԾՆՈՒՆԴ.

Հ. Ծնունդն ի՞նչ է :

Պ. Մեծ տօն մի է, զոր եկեղեցին հաստատած է Քրիստոսի Տեառն մերոյ ծննդեան այսինքն աշխարհի գալուն յիշատակը կատարելու :

Հ. Քրիստոս Տէրն մեր ո՞ւր ծնաւ :

Պ. Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքը ախոռի մի մէջ :

Հ. Յիսուս ինչո՞ւ համար ախոռի մէջ ծնանիւ ուզեց :

Պ. Մեզ սովրեցունելու համար որ աշխարհիս մեծութեանն ու հարստութեանը վերայ համարում չունենամք, եւ աղքատներն չարհամարհեմք, այլ սիրեմք եւ նոցա ողորմիմք :

Ժամանակ եւ իւր բաժանումները.

Հ. Ժամանակն ի՞նչպէս կբաժանուի :

Պ. Ժամանակը կբաժանուի ԴԱՐ, ՏԱՐԻ, ԱՄԻՍ, ՇԱՔԱԹ կամ ԵՕԹՆԵԱԿ, ՕՐ, ԺԱՄ, ՎԱՅՐԿԵԱՆ եւ ԲՈՊէ :

Հ. Դարն ի՞նչ է :

Պ. Դարն է հարիւր տարուան միջոց :

Հ. Տարին ի՞նչ է :

Պ. Տասուերկու ամսուան միջոց :

Հ. Ամիսն ի՞նչ է :

Պ. Չորս շաբաթուան եւ քանի մը օրուան միջոց :

Հ. Տարուան տասուերկու ամսոց անուններն ո՞րք են :

Պ. Յունուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր, Դեկտեմբեր :

Հ. Եօթնեակն ի՞նչ բան է :

Պ. Եօթը օրուան միջոց :

Հ. Տարուան մը մէջ քանի՞ եօթնեակ կայ :

Պ. Յիսուսուերկու :

Հ. Եօթնեկին եօթը օրուան անուններն որո՞նք են :

Պ. Երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Ուրբաթ, Շաբաթ, Կիրակի :

Հ. Ե՞րբ կսկսի տարին :

Պ. Յուճուարի առաջին օրը, որ կկոչուի նոր ՏԱՐԻ կամ ԿԱՂԱՆԴ :

Հ. Տարուան մէջ քանի՞ օր կայ :

Պ. Երեք հարիւր վաթսուներ հինգ օր, եւ վեց ժամու չափ աւելի :

Հ. Այս վեց ժամերն ի՞նչ կլինին :

Պ. Ամէն չորս տարին մէյմը անոնցմով օր մը աւելի կձեւանայ, որով այն չորրորդ տարին կուսնանայ երեք հարիւր վաթսուներվեց օր :

Հ. Երեք հարիւր վաթսուներվեց օր ունեցող տարին ի՞նչ կկոչուի :

Պ. ՆԱՀԱՆՁ ՏԱՐԻ :

Հ. Հապա երեք հարիւր վաթսուներհինգ օր ունեցող տարին ի՞նչ կկոչուի :

Պ. ՀԱՍԱՐԱԿ ՏԱՐԻ :

Մեծ պահք.


Հ. Մեծ պահքն ի՞նչ է :

Պ. Մեծ պահք կկոչուի եկեղեցւոյն դրած քառասնօրեայ ապաշխարութիւնը, յորում հաւատացեալք բարեկենդանին զուարճութեանցմէ ետքը իրենք զիրենք կժողովեն, ըրած մեղքերնուն վերայ կզղջան կապաշխարեն, եւ կպատրաստուին սրբութեամբ կատարելու Ջատկի մեծ տօնը :

Չոր. Թուչնոց.

Սեպտեմբեր ամսոյն վերջերն երբոր ծառոց տերեւները կսկսին թափթփիլ, մեր պարտէզները, դաշտերն ու անտառներն անոյշ անոյշ երգող

Թռչնոց շատերը կապարաստուին զմեզ Թողլու եր-
թալու : Բոլոր ձմեռը մեզմէ շատ հեռու երկիրներ
կերթան կանցունեն տաքուկ : Անշուշտ կզարմա-
նաս Կարապետիկս Թէ ի՛նչպէս այնպիսի հեռաւոր
ճամբորդութիւններ կրնեն այն խեղճ Թռչունք,
մինչդեռ մեք հանդերձ մեր խելքովն ու գործու-
նէութեամբը չեմք կարող ընել մինչեւ ճամբայ
չգիտնամք եւ կամ քաջ առաջնորդներ չունենամք :
Իրաւունք ունիս զարմանալու զաւակս. սակայն
գիտցիր հոգիս որ Աստուած է նոցա առաջնորդը,
Աստուած որ արեւը, լուսինն ու աստղերը կծագէ,
որ ծաղիկ ու պտուղ կբուսցունէ. ինքն Աստուած
այն Թռչնոց Թռչնեկաց իւրաքանչիւրին կցուցանէ
երթալու երկիրն ու բնակելու ծառն ու տանիքը,
եւ կերակուրն ու հատիկը գտնելու տեղը : Աս-
տուած է ուրեմն որ աշնան իրենց կառաջնորդէ
տաք երկիրներ, եւ գարնան զիրենք կառնու մեր
երկիրները կդարձունէ՝ մեր անտառաց ու պարտի-
զաց կենդանութիւն տալու :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ը.

Սեղանի վերայ եղած անպատշաճ կերպեր.

1. Ուտելու ժամանակ բերանը շատ կլեցունէ, եւ
կամ այնպիսի լեցուն բերնով կխօսի՝ որ քովը
կեցողներուն երեսը կերակուրի ցատքտուկներով
կծեփէ :
2. Խմելէն առաջ բերանը շարբեր, անով գաւաթին

եզերքը շրթունքներուն ձեւը կելլէ, եւ կամ լեցուն բերնով կխմէ ու կերակրոյն մէկ մասը գաւաթին մէջ կթափէ :

3. Դգալն այնպէս շատ կլեցունէ՝ որ կարելի չըլլար մէկ անգամով ուտել. որ եթէ այնպէս չլեցունէր, կրնար զայն մէկ անգամով պարպել :

4. Հացի կտորով մատուրները կսրբէ, ու յետոյ բերանը կնետէ զայն :

5. Ի՛նչ որ իրեն ուտելու կուտան, բերանը չտարած մէկ մը կհոտուրտայ :

6. Բերանը մինչեւ ականջները կաղտոտէ, եւ կերած ջրոտ բաները դունչէն վար կվազցունէ :

7. Դանակով ոսկորները կկոտրէ, զանոնք սկաւառակին կզարնէ, եւ կամ մէջերնէն ծուծը հանելու համար բարձրաձայն կծծէ :

8. Հացի պատառ մը կամ մսի կտոր մը բերնէն կհանէ ու կերակրոյն ջրին կթաթխէ :

9. Աղտոտ դանակի ծայրով աղ կառնու, եւ աղամանին աղը կաղտոտէ :

10. ձակատը, աչուրներն ու քիթը անձեռոցովը (փէշկիր) կսրբէ, եւ քրտինքով կամ ճարպով լեցուն՝ սեղանին վերայ կտարածէ զայն :

11. Կարծես թէ սեղանը առջեւէն պիտի յափըշտակեն՝ չկրնար համբերել որ տաք կերակուրները քիչ մը պաղին, եւ ապուրով լեցուն գդալին վերայ փշելով՝ քովիններուն վրան գլուխը կաղտոտէ, եւ կամ սկաւառակը դգալով կխառնէ :

12. Մէկուն գաւաթ մի կամ պտուղ մի տալու ատեն վրան կփչէ, ու չգիտեր առական որ կասէ թէ առանց անձրելի քամի չլինիր :

13. Ուտելու ժամանակ պուկունքը չգոցեր, եւ բերնին մէջ եղածն ամենուն կցուցրնէ :

14. Պտուղը դանակով կտրելու տեղ կխածնէ, ու շատ անգամ առանց ստրկելու կուտէ, եւ այն ամենուն առջեւ :

15. Իւր գործածած գաւաթն ուրիշի կհրամացունէ :

16. Սեղանի վերայ եղած ժամանակը թքնելէն կամ քիթը սրբելէն ամենեւին չզգուշանար :

17. Եթէ յանկարծ բերանն այնպիսի բան մի գայ որ պէտք է դուրս ձգէ, փոխանակ կամացուկ մի մատուրներուն ծայրովն եւ որչափ հնար է ծածուկ՝ սկաւառակին մէջ դնելու եւ սպասաւորաց մէկուն տալու որ տանի, սիրտը ետ գալու պէս զայն բերնէն սկաւառակին մէջ կձգէ, եւ կամ գետինը կնետէ, ու ամենուն սիրտը կխառնէ : Պտղի կուտերն եւս կամացուկ մի սկաւառակին մէջ դնելու տեղ, կարկուտի պէս բերնէն կթափթրփէ :

18. Այնպէս անյագաբար կուտէ որ կարծես թէ քանի մի օր կերակուր չէ կերած :

19. Իբրու թէ ինքը միայն սեղանի վերայ լինէր, ուտելու ժամանակ ձայներ կհանէ, դանակը՝ դգալն ու պատառաքաղը կշարժէ. եւ կամ սեղանի ու սկաւառակին զարնելով անախորժ ձայներ կհանէ :

20. Գետին ընկած պտուղը կամ անոր նման ընկած բանը կվերցունէ եւ ուրիշի կհրամացունէ :

21. Սկաւառակին վերայ դրուած ուտելիքը չորս դին կդարձունէ կնայի, եւ եթէ չհաւնի՝ գանելով մի քովինին կուտայ :

22. Ամէն կերակրոց համը կնայի, եւ կարծես թէ զանոնք ամէնքը պիտի հատցունէ :

23. Սեղանի վերայ ուրիշի սիրտ խառնող խօսքեր կասէ :

24. Զսիրած կերակուրը վար կզարնէ, ուտողները կգանեցընէ եւ ուտել ուզողներն ետ կկեցունէ :

25. Զուր կամ գինի ուզելէն առաջ գաւաթին մէջը կփչէ ու անձեռոցովը կսրբէ առանց մտածելու որ ըրածը տանտիրոջ նախատինք է. նոյնպէս նաեւ ապուր չկերած դգալը կսրբէ :

26. Ապուրին ջուրը դգալով խմելու տեղ, սկաւառակը բերնին կտանի :

27. Հացը խածնելով կուտէ փոխանակ մարդավար կերպով մատուրներովը պատառ պատառ փրցընելու. եւ կամ պատառներն առաջուց քովը բլրակի պէս կդիզէ որ յետոյ ժամանակ չկորսընցունէ :

28. Առանց բնական պատճառի՝ իւր հաճոյիցը համար հացին կա՛մ կեղեւը եւ կամ միջուկը կհանէ կուտէ, ու ջորս դին փշրանքով կլեցունէ :

29. Ոսկորները կկրծէ, եւ գետինը կամ սեղանին տակը կնետէ :

30. Երբոր իրեն պնակով կերակուր հրամցունեն, փոխանակ մէջի պատառաքաղովը առնելու՝ իրենովը կառնու :

31. Քիչ մնացած կամ բոլորովին հատած կերակուրէն նորէն կուզէ :

32. Զսիրած կերակուրն որ առջեւը բերեն, ծուռ աչքով մի վրան կնայի ու տրտմութեամբ ետ կըդարձունէ :

33. Հացին միջուկովը գնդակներ կշինէ ու սեղանակցացը մէջ որոց հետ որ աւելի ընտանի է՝ անոնց կնետէ :

34. Սեղանի վրայէն ջտեսածի պէս պտուղ, շաքարեղէն, խմորեղէն, ի՛նչ ազնիւ բան որ գտնէ գրպանը կլեցունէ, որ առնու տունը տանի :

35. Ապուրը խմած ժամանակ շլուպ շլուպ ձայներ կհանէ :

36. Սեղանը կերակուր մի բերուելուն պէս առանց սպասելու որ կարգն իրեն գայ, մէկէն սկաւառակը կերկնցունէ իբրեւ թէ ինքն լինէր սեղանին մեծը. երբեմն եւս սկաւառակը դըրուած կերակուրը բաւական չհամարելով՝ աւելի դիր, շատ դիր կասէ :

37. Թերխորով (բաժատան) հաւկիթ որ ուտէ՝ կճեպը առանց կոտրտելու ամբողջ կթողու սկաւառակին մէջ :

38. Երբոր հացի, դանակի կամ ուրիշ բանի պէտք ունենայ, պոռալով կուզէ. որ ընդ հակառակն նշանով մի եւս կրնար սպասաւորին հասկըցնել : Առանց սպասելու որ իրեն հրամցունեն, ինքը սկաւառակը կերկնցունէ որ կերակուր տան :

39. Պտուղ, խմորեղէն կամ ո՛ր եւ իցէ ուտելիք որ հրամցունեն, մէջէն խոշորն ու ազնիւը կընտրէ կառնու իբրեւ թէ ամենէն աւելի արժանաւորութիւն ունեցողը ինքն լինէր :

40. Գաւաթը գինիով կամ ջրով մինչեւ բերանը կլեցունէ, որպէս զի ստէպ լեցունելու ժամանակ չանցունէ :

41. Առանց ամաչելու՝ սիրած կերակուրները մէկիկ մէկիկ կհամրէ : Խեղճը կկարծէ որ մարդս ուտելու համար կապրի. չգիտեր որ ապրելու համար միայն պէտք է ուտէ :

42. Կերակրոյ մի պակասութիւնը թէ՛ դէմքով եւ թէ լեզուովը կյայտնէ, թէպէտեւ օտարի տուն լի-

նի. որ ընդ հակառակն եթէ տանուտէրը նոյն պակասութիւնը գտնէր նէ ալ, ինքը պարտըկելու պիտի ջանար, ինձ այնչափ գէշ չերեւար, ինձ շատ համով կուգայ, եւ ասոնց նման խօսքերով :

43. Կերակրոյ վերայ խօսք բացուած ժամանակ բոլոր հարտասանութիւնը կ'ըստիէ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Թ.

Եղանակք.

Հ. Տարւոյն բնական բաժանումն ո՞րն է :

Պ. Բնական կերպով տարին չորս մաս կբաժնուի, որ եղանակք կկոչուին :

Հ. Որո՞նք են չորս եղանակաց անուններն :

Պ. Գարուն, ամառ, աշուն, ձմեռ :

Հ. Այս չորս եղանակներն ի՞նչ մասնաւոր յատկութիւններ ունին :

Պ. Գարունը այն եղանակն է, յորում գրեթէ բնութիւնը նորէն կճնանի, պարտէզներն ու դաշտերը դալարագեղ խոտերով ու գոյնզգոյն քաղցրահոտ ծաղիկներով կզարդարուին : — Ամառը տարութեան եղանակ է. ցորենն այն ժամանակ կհասնի ու կհնձուի : — Աշունը պտղոց, այգեկութի եւ ուրիշ տեսակ քաղոցներու եղանակն է : — Իսկ ձմեռը ցրտի եղանակն է, յորում երկիրը կհանգչի եւ մշակութիւն չլինիր :

Հ. Իւրաքանչիւր եղանակն ո՞րչափ ժամանակ կըտեւէ :

Պ. Ամէն մէկ եղանակն երեք ամիս կտեւէ :

Հ. Չորս եղանակներն ե՞րբ կսկսին ու ե՞րբ կւմրնան :

Պ. Գարուն մարտի վերջերը կսկսի ու յունիսի վերջերը կւմրնայ : — Ամառը կսկսի յունիսի վերջերն, ու սեպտեմբերի վերջերը կւմրնայ : — Աշունը կսկսի սեպտեմբերի վերջերն, ու դեկտեմբերի վերջերը կւմրնայ : — Ձմեռը դեկտեմբերի վերջերը կսկսի, ու մարտի վերջերը կւմրնայ :

Ծաղկազարդ.

Հ. Ծաղկազարդն ի՞նչ է :

Պ. Ծաղկազարդն այն կիրակի օրուան յիշատակն է, յորում Քրիստոս Տէրն մեր Երուսաղէմ մտաւ՝ Չարչարանքէն հինգ օր յառաջ :

Հ. Այն կիրակին ինչո՞ւ ծաղկազարդ կկոչի :

Պ. Վասն զի Քրիստոսի Երուսաղէմ մտած ժամանակ հետը գնացող ժողովուրդք ծառի ճիւղեր փրրցուցին ու անցնելու ճամբուն վերայ տարածեցին իպատիւ :

Ջատիկ.

Հ. Ջատիկն ի՞նչ է :

Պ. Եկեղեցւոյ մեծ տօներուն մէկն է Ջատիկը, եւ կկատարուի իյիշատակ այն օրուան, յորում Քրիստոս Տէրն մեր երեք օր գերեզման կենալէն յետոյ յարեաւ իմեռելոց : Այս մեծ տօնին օրը հա-

ւատացեալք կխոստովանին ու կհաղորդուին Քրիստոսի սուրբ մարմնոյ եւ արեան՝ Քրիստոսի Տեառն մերոյ հետ յարուժիւն առնելու հոգւով :

Ամիս եւ օր.

Հ. Տարուան տասուերկու ամիսներուն ամէն մէկը քանի՞ օր ունի :

Պ. Եօթն ամիսք երեսունը մէկ օր ունին, եւ ասոնք են, Յունուար, Մարտ, Մայիս, Յուլիս, Յոգոստոս, Հոկտեմբեր եւ Դեկտեմբեր : Զորս ամիսք երեսուն օր ունին, այսինքն Ապրիլ, Յունիս, Սեպտեմբեր եւ Նոյեմբեր : Մէկ ամիս եւս կայ այսինքն Փետրուարը որ քսանեւուծ օր կունենայ հասարակ տարիները, եւ քսանեւինն՝ նահանջ տարիներ :

Հ. Յրն ի՞նչ է :

Պ. Յրն է քսանեւջորս ժամուան միջոց. սակայն սովորաբար օր ասելով կհասկանամք արեւուն ելլելէն մինչեւ մտնելն եղած ժամանակը, որով եւ մնացած ժամանակը այսինքն արեւը մտնելէն մինչեւ ելլելը՝ ԳԻՇԵՐ կկոչի :

Հ. Արշալոյսն ի՞նչ է :

Պ. Արեւուն ելլելէն առաջ երեւցած աղօտ լոյսն է :

Հ. Իսկ վերջալոյսն :

Պ. Արեւը մտնելէն յետոյ երեւցած նոյնպէս աղօտ լոյսն է :

Հ. Յրուան ջորս մեծ բաժանմուտքն որո՞նք են :

Պ. ԱՌԱԻՕՏ, ԿԷՍՕՐ, ԵՐԻԿՈՒՆ եւ ԳԻՇԵՐ :

Հ. Առաւօտն ի՞նչ է :

Պ. ԱՌԱԻՕՏ կասի արեւուն ելլելէն մինչեւ կէսօր եղած միջոցն, որ ճիշտ օրուան կէսն է :

Հ. Երիկունն ի՞նչ է :

Պ. Երիկուն կամ երեկոյ կասի արեւը մտնելէն մինչեւ մարդուս պառկելու ժամանակը :

Հ. Գիշերն ի՞նչ է :

Պ. Գիշեր կասի այն ժամանակն որ արեւը մեր հորիզոնին տակը կմտնէ. կամ թէ ասեմք պառկելու ժամանակէն մինչեւ արեւուն ելլելը :

Հ. Օրն ուրիշ ի՞նչ բաժանմունք ունի :

Պ. Քսանեւջորս հաւասար մասն կբաժնուի որ ՃԱՄՔ կկոչին, որով եւ օր մի ասելով քսանեւջորս ժամ կհասկանամք :

Հ. Ժամերն ի՞նչպէս կբաժնուին :

Պ. Վաթսուն հաւասար մասունք կբաժնուին որ ՎԱՅՐԿԵԱՆ կասին :

Հ. Իսկ վայրկեանները :

Պ. Անոնք եւս վաթսուն հաւասար մասն կբաժնուին՝ որ ԲՈՊԷ կկոչին :

Հ. Ուրեմն մէկ ժամուան մէջ քանի՞ րոպէ կայ :

Պ. Երեք հազար վեցհարիւր :

Հ. Իսկ մէկ օրուան մէջ քանի՞ վայրկեան կայ :

Պ. Որովհետեւ մէկ օրուան մէջ 24 ժամ կայ, եւ ամէն մէկ ժամը 60 վայրկեան է, ուրեմն 24 անգամ 60 վայրկեան կայ եւ կամ 1440 վայրկեան :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ժ.

Աստուած ամէն տեղ է.

Ամէն տեղ ներկայ ես դուն Աստուած իմ. ամէն տեղ կգտնուիս՝ լուսոյ, խաւարի, հիւլէի ու աշխարհի մի մէջ : Մի եւ նոյն ժամանակ որ իմ խոնարհ աղօթքս կլսես, կլսես նաեւ յաթու փառաց քոց սերովբէից ու քերովբէից երեքսրբեան սրբասացութիւնները : Գու, ուրեմն, որ Աստուած ես սերովբէից եւ քերովբէից, հրեշտակաց եւ իմ, որ մեր ձայնը կլսես ինչպէս նաեւ դեղձանիկիս անոյշ երգն ու սա ծաղկանց վերայ թռչտող մեղուին բրգզանքը, ընդունէ նաեւ իմ աղօթքս ու պաղատանքս, շնորհք տուր ինձ որ երբէք չմոռանամ որ ամենատես աչքդ վրաս կնայի միշտ, եւ ամէն ժամանակ առջեւդ եղածի պէս շարժիմ, խորհիմ ու գործեմ :

Ընդհանուր ստորագրութիւն տիեզերաց.

Հ. Տիեզերք ասելով ի՞նչ կիմանամք :

Պ. Կիմանամք երկինքը, երկիրս ու անոնց մէջ եղած բաները.

Տիեզերքն անհուն միջոց մի է՝ որուն ընդարձակութեանը մեր խելքը չհասնիր :

Հ. Ի՞նչ կկոչուի այն գիտութիւնն որ երկնային մարմնոց վերայ կխօսի :

Պ. Աստեղաբաշխութիւն :

Հ. Աստեղաբաշխութեան վախճանն ի՞նչ է :

Պ. Աստեղաբաշխութեան վախճանն է ճանչցը-

նել երկինքը տեսնուած մարմինները, եւ անոնց դիրքը, ձեւը, իրարմէ ունեցած հեռաւորութիւնն ու շարժմունքը մեզի սովբեցընել :

Հ. Երկինքն ի՞նչ է :

Պ. Տիեզերաց այն մասն է որ մեր գլխուն վերայ կամարի պէս կեցած ու չորս կողմերնիս պատած է, եւ անոր մէջ են արեւը, լուսինը, աստղերը, եւ բոլոր երկնային մարմինները :

Երկինքը կըսուի նաեւ հաստատութիւն կամ երկնային կամար :

Հ. Երկնային մարմիններն իրարմէ ի՞նչ տարբերութիւն ունին :

Պ. Ոմանք ինքնալոյս կամ իրենք իրենցմէ լուսաւոր մարմիններ են, այսինքն ուրիշէն լոյս չեն առնուր. ոմանք եւս այնպիսի մարմիններ են որ միայն ուրիշէ լոյս առած ժամանակնին լուսաւոր կերեւնան :

Հ. Ինքնալոյս մարմիններն որո՞նք են :

Պ. Արեւը կամ արեգակը, որ երկրիս, լուսնի, եւ իւր չորս կողմը պտըտող աստղերուն լոյս կուտայ. եւ հաստատուն աստղեր, որ մէկմէկ արեգակներ են, եւ իրենց բոլորտիքն եւս ուրիշ աստղեր կպտըտին :

Արեւ..

Հ. Արեւն ի՞նչ ձեւ ունի :

Պ. Արեւը գնտակի պէս կլոր է :

Հ. Արեւն անշա՞րժ է :

Պ. Արեւն իւր տեղը հաստատուն կեցած է, թէ եւ այնպէս երեւի որ երկրիս չորս դին կպտըտի. միայն

ինքն իւր վերայ կդառնայ քսանըփինգ օրուան եւ տասուերկու ժամուան մէջ :

Հ. Հապա ինչո՞ւ կասեմք թէ ԱՐԵԻՆ ԵԼԱԻ, ԱՐԵԻԸ ՄՏԱԻ :

Պ. Արեւն ելաւ կասեմք՝ երբոր արեւը կսկսի երեւիլ. եւ արեւը մտաւ կասեմք՝ երբոր մեր աչքէն աներեւոյթ կլինի. եւ այսպէս ասելնիս պարզ արտաքին երեւոյթը հասկցընելու համար է. բայց իրօք արեւն ոչ կելլէ՝ ոչ կմտնէ, հապա երկիրս է որ քսանըջորս ժամուան մէջ մէկ անգամ ինքն իւր վերայ դառնալով՝ արեւուն այնպիսի երեւոյթներ կուտայ :

Հ. Երկիրս արեգական նայելով միշտ նո՞յն տեղը կկենայ թէ ոչ :

Պ. Ոչ. վասն զի իւր վերայ դառնալէն զատ՝ նաեւ տարուան մի մէջ, (այսինքն 365 օրուան 5 ժամուան 48 վայրկենի եւ 45 րոպէի մէջ), մէկ անգամ արեւուն չորս կողմը կպտըտի, որ է իւր տարեկան շրջանը :

Հ. Երկիրս արեւէն ո՞րչափ հեռու է :

Պ. Տասներփինգ միլիոն հարիւր ինը հազար վեցհարիւր բիւրմեթր :

Հ. Արեւուն լոյսը ո՞րչափ ժամանակի մէջ երկիր կհասնի :

Պ. Գրեթէ ութը վայրկենի մէջ :

Արարչագործութիւն.

Ժամանակ մի եղած է, զաւակս, որ տեսած երկինքդ ու բնակած երկիրդ չկային, ստեղծուած

չէին : Աստուած ուզեց որ լինին, եւ իւր ամենակարող զօրութիւնը զանոնք ոչնչէ ստեղծեց :

Աշխարհիս եւ բոլոր մէջի բաներուն ստեղծումը վեց օրուան մէջ եղաւ, այսինքն մեր ամէն տեսած բաներն մէկէն չեղան, այլ կարգաւ ետեւէ ետեւ վեց օրուան մէջ : Հետզհետէ Աստուած ստեղծեց արեւը, լուսինը, աստղերը, տնկերը, կենդանիքն. ու ամենէն յետոյ զմարդ, որով տուաւ հոգի բանական, այսինքն հոգի մի որ կարող է ճանաչել ու սիրել : Առաջին մարդուն ու մեր նախաօր անունն էր Ադամ, եւ նախաօր անունը եւա :

Ո՛հ, միթէ կրնա՞մք երկինք վերցունել աչքերնիս, տեսնել այն լուսազարդ շքեղ կամարն ու չբարեբանել զայն որ անճառելի զօրութեամբ, իմաստութեամբ եւ բարութեամբ ստեղծեց զամենայն, ու այնպիսի հրաշալի կարգօք եւ օրինօք կպահէ կրպակապանէ : Անհուն անհամար արարածոց մէջ ի՞նչ է տկար, անզօր ու մահկանացու մարդս. հիւլէ մի եմք. միջատաց պէս աւազի հատիկի մի վերայ կզեռամք կսողիմք : Ի՞նչ եմք մեք այն բիւրաւոր աշխարհաց առջեւ որ իրենց Ստեղծողին, իրենց Արարչին փառքը կպատմեն :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԱ.

Ուրիշի անհանգստութիւն պատճառող բաներու մէջ
անգգուշութիւն.

1. Սաստիկ ու բարձրաձայն կիռնգտայ, եւ բերանը թաշկինակովը չգոցելով՝ վրան գլուխն ու բոլոր քովինները թքով ու խլինքով կլեցունէ :

2. Քովը կեցողին երեսն ի վեր կհազայ՝ առանց բերանը ձեռքովը գոցելու : Ցած ձայնով խօսելու տեղ կպռուայ կպռուչբտայ :

3. Բազմութեան մէջ քթին տակէն կերգէ, կսուլէ եւ կամ մատուրներուն ձայն հանել կուտայ, որով ընկերութենէն ձանձրանալն ամենուն կյայտնուի :

4. Երբոր զինքը նստելու հրամցունեն, ամենէն լաւ ակնուր կընտրէ, քաշկըռտելով կբերէ եւ ուրիշներուն արգելք եղող տեղ մի կդնէ :

5. Մէկու մի հետ խօսած ժամանակը կերթայ քիթը կմտնէ ու շնչովը երեսը կլեցունէ : Անդադար ճրագին առջեւէն կանցնի կդառնայ, եւ կամ կերթայ դիմացը կնստի ու ամենուն լոյսը կխափանէ :

6. Ցանկարծակի ճրագը մէկուն աչքին կմօտեցունէ կամ կհեռացունէ :

7. Քովի կեցողին երեսն ի վեր փչելով ճրագը կըմարէ :

8. Ձեռքը քթախոտի տուփ որ անցնի, կբանայ կփչէ ու աչքդ քթախոտով կլեցունէ :

9. Կրակն այնպէս կփչէ որ աչքդ՝ վրադ գլուխդ մոխրով ու ծխով կլեցունէ :

10. Ախոռ կերթայ ու վրան գլուխը հոտեցընելով

վեր կելլէ, բոլոր տունը գարշահոտութեամբ կապականէ :

11. Մազերը քովինին աչքը խոթելու պէս կմօտենայ անոր :

12. Քովիններուն վերայ կկռթընի ու ջմտածեր որ զանոնք կյոգնեցունէ :

13. Քովինները կհրէ կհրմշտըկէ : Տան մէջ քալած ժամանակը սաստիկ ուժով կկոխէ ու ոտքին անախորժ ձայնովը զամէնքն անհանգիստ կընէ :

14. Արանց զգուշութեան կահ կարասեաց վերայ կռթընելով զանոնք կաւրէ կամ կաղտոտէ :

15. Ուրիշի առջեւ անդադար բարձր ձայնով քիթը վեր կքաշէ, ասդին անդին կամ կրակի վերայ կթքնէ ու բնաւ ջմտածեր որ կրնայ դիմացինին սիրտը խառնուիլ :

16. Պատուհանէն վար կթքնէ, ջուր եւ ուրիշ բան կնետէ ու ջմտածեր որ կրնայ անցնողներէն մէկուն գլուխը գալ :

17. Ո՛ւր որ կմտնէ՝ դռները բաց կթողու, եւ միշտ ետեւէն մէկը պէտք է որ զանոնք գոցէ. չգիտեր որ մարդ դռները գտածին պէս պէտք է թողու, բաց գտաւ նէ՛ բաց, գոց գտաւ նէ՛ գոց :

18. Խօսակցութեան մէջ ամենեւին գէշ ու սխալ մխալ խօսելէն չզգուշանար :

19. Շէնքով շնորհքով բարեւ տալ անգամ չգիտեր. բարեւ տամ ասելով շանը թաթին վերայ կըկոխէ, քովի կեցողը կհրէ, աթուռ կշրջէ եւ կամ ետին կեցող տղայն գետին կձգէ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԲ.

Մայիս ամսոյն մէջ շրջագայութիւն Սոփի տիկնոջ եւ իւր
Աննիկ դստերն յարտորայս.

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Ի՞նչպէս քաղցր ու ախորժելի կերելի
ապրիլ ամիսն այն խիստ ձմեռէն ետքը : Սա կաղ-
նւոյն տակը խոտին վերայ փոքր մի նստիմ ես հան-
գիստ առնում, եւ դուն աղջիկս որ ծաղկի վերայ
կխենդենաս, ուզածիդ չափ գնա ժողովէ :

ԱՆՆԻԿ. Ո՛հ, այս ի՞նչ գեղեցիկ երփներանգ ծաղիկ-
ներ են. երկու մեծ փունջեր (տէմէթ) պիտի շինեմ
մայր, մէկը քեզի համար, եւ միւսն ինձ համար :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Տես, սա վայրի վարդերուն տակի
սիրուն մանիշակները (մէնէքշէ) : Անոյշ հոտերնին
մինչեւ հոս կուգայ :

ԱՆՆԻԿ. Այո, ի՞նչպէս անոյշ կհոտին : Կարծէի որ
պարտէզը միայն կբուսնին : Մայրիկ, սա մանիշա-
կաց մէջ եղած ճերմակ ծաղկանց անունն ի՞նչ է :
Իրենք եւս անոյշ հոտ ունին :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Գարնանածաղիկ կկոչուին :

ԱՆՆԻԿ. Հապա ասո՞նք :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Յակինթ եւ ախրիզան կկոչուին :

ԱՆՆԻԿ. Ահա խոտերուն մէջ մարգարտածաղիկ
եւս կան : Ի՞նչպէս գեղեցիկ են : Ոմանք դեռ կէս
բաց են : Ինչո՞ւ կանաչ պատեան մի ունին բոլոր-
տիքնին :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Ծաղիկը պաշապանելու համար է
այն պատեանը, եւ կկոչուի բաժակ : Խիստ քիչ ծա-
ղիկ կայ որ բաժակ չունենայ, որդեակ :

ԱՆՆԻԿ. Հապա ի՞նչ բանի կճառայեն մարգարտա-
ծաղկին այս ծայրակարմիր ճերմակ տերեւիկները :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Արեւուն ճառագայթները բաժակին
վերայ կուղղեն եւ թերթ կկոչուին :

ԱՆՆԻԿ. Մարգարտածաղկին մէջ եղած գնդա-
սեղի գլխոյն նման այս դեղին գնդիկներն ի՞նչ են :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Ծաղիկներ են, որ մեծնալու բացուե-
լու համար տաքութեան կկարօտին : Ահա այս
պատճառաւ է որ ծաղկանց շատերն դէպ արեգակը
կդառնան, ինչպէս արեւածաղիկն (այ չիչէյի) եւ
այլք :

ԱՆՆԻԿ (խնդալով ու վազվազելով). Ո՛հ, խելքս
կթռցունեմ. այս ի՞նչ առատութիւն ծաղկանց է
հոս. ճերմակ, դեղին, կարմիր, կապոյտ, կանաչ,
մանիշակագոյն, ամէն գունէ կայ. ոմանք մեծ,
ոմանք պզտիկ. անուննին ի՞նչ է :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Ձեմ գիտեր : Ամենէն եւս առ ու
երիկունք հօրդ ցուցուր որ անուննին քեզ զրուցէ,
եւ միտքդ պահէ սովրէ որ ինձ եւս սովրեցունես :

ԱՆՆԻԿ. Արդէն շատ ծաղկի անուն գիտեմ, վարդ,
մեխակ, յասմիկ, մարգարիտ, մանիշակ, կակաչ,
յակինթ... եւ եթէ զիրենք տեսնեմ՝ կճանաչեմ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Ուշադրութիւն դնելովդ կարդալու
գրերուդ պէս սոցա անուն եւս միտքդ մնացած են
աղջիկս : Օր պիտի գայ որ այսպէս պիտի ուրա-
խանաս նաեւ միւս սովրած բաներուդ վերայ՝ որ-
չափ եւ սովրելու ժամանակ ներուծիւն ու ձան-
ձրութիւն իմանաս :

ԱՆՆԻԿ. Սա անտառին եզերքն եղած ճերմակ ծա-
ղիկներն կտեսնե՞ս մայրիկ : Մարգարտին կնմանին,
բայց աւելի խոշոր են :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Մի՛ ժողովեր զանոնք. ելակենւոյ ծաղիկներ են, որ ամառը ելակի (չիլէք) պիտի փոխուին, զորս այնչափ կսիրես :

ԱՆՆԻԿ. Ի՛նչ կըսես. ուրեմն այն փայլուն կարմրորակ ելակները նախ այսպիսի գերմակ ծաղի՞կ լինին :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Այո, զաւակս, ինչպէս որ կանայք եւս նախ փոքրիկ աղջկունք լինին : Զիս որ այսպէս մեծ կտեսնես, ժամանակաւ քեզի պէս փոքրիկ աղջիկ մի էի եւ մօրս հետ կպտըտէի, զինքը կսիրէի եւ իւր խօսքէն դուրս չէի ելեր :

ԱՆՆԻԿ. Մարգագետնին միւս ծաղիկներն եւս յետոյ կուտուի՞ն :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Ոչ, չեն ուտուիր :

ԱՆՆԻԿ. Ուրեմն բանի մի օգտակար չե՞ն :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Մէջերնին անօգուտը չկայ, որդեակ իմ. մեղուները (արը) կուգան նոցա մէջէն կծծեն կհաւաքեն իւրեանց քաղցրահամ մեղրը :

ԱՆՆԻԿ. Մեղուն ի՞նչ է :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Զորս փետրով մոխրագոյն գանձ մի է : Ահա մէկ հատ մի. կտեսնե՞ս, սա ախրիզանին վերայ կեցեր կուտէ : Զըլլայ թէ դպչիս, վասն զի կխայթէ ու սաստիկ կցաւցունէ : Թէոր հեռուէն նայիս ու իրեն չդպչիս՝ բան չըներ :

ԱՆՆԻԿ. Ո՛հ, գլուխը ծաղկին մէջ կխոթէ, սրածայր կտուցովը դեղին փոշի մի կժողովէ եւ առջեւի թաթիկներովն կառնու իւր փոքրիկ զիստերուն (գալչա) վերայ կդնէ : Եկ տես մայրիկ, ի՛նչ հետաքրքրական բան է ըրածը : Միայն ինքը չէ եղեր. կնայիս ծաղկանց շատերուն վերայ կան : Բայց ինչո՞ւ համար ծաղկանց տերեւներուն վերայ եւս չկան. տերեւներն ուրեմն օգտակար չե՞ն :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Ի՞նչպէս օգտակար չեն. նայէ տես սա կովերն որպիսի՛ ախորժակով զանոնք կուտեն. անոնցմով ահա կաթ կշինեն, ծիծերնին կլեցունեն, ուսկից կքաշեն կկթեն գեղացիք, եւ մեք կխամք զայն, ու սեր (գայմագ), կաթնապուր (սիւտլաճ), մածուն (եօղուրտ) եւ ուրիշ համեղ կերակուրներ կշինեմք կուտեմք :

ԱՆԻԿ. Չէի գիտեր որ կաթը բոյսերով եւ մեղրն բուսոց ծաղկօքը կշինուին եղեր :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Բոյսերն ու տունկերը ուրիշ շատ օգուտներ եւս ունին. մեղուք անոնցմէ մեղր միայն չեն հաներ, այլ եւ մոմ, որ մեղրամոմ իսկ կկոչի. ոչխարք զանոնք ուտելով կաթ ու բուրդ կուտան, եւ հաւերն նոցա հունտերն ուտելով հաւկիթ կաճեն :

ԱՆՆԻԿ. Բայց այս բոյսերն ու տնկերն ո՞վ ըրաւ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ Աստուած, աղջիկս :

ԱՆՆԻԿ. Ո՞վ զիրենք կբուսցունէ կդարմանէ, որով հետեւ հոս պարտէզպան չկայ, մարդ չկայ : Մեր պարտէզի բոյսերն կտեսնեմ որ պարտէզպանը կըսերմանէ, կտնկէ, կբուսցունէ, եւ այնչափ խրնամօք կդարմանէ մինչեւ որ ծաղիկ բանան : Հոս ո՞վ զիրենք կտնկէ կհոգայ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Արեւը զիրենք կտաքցունէ, որդեակ իմ, անձրեւը կջրէ, ու քամին հունտերնին ասդին անդին ցրուելով զիրենք նորէն կսերմանէ, յաջորդ տարին ինքնիրեն կելեն կբուսնին վերստին :

ԱՆՆԻԿ. Ո՛հ, ի՞նչպէս ճարտար ու բազմագէտ է Աստուած :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Այո, սիրելի զաւակս. ինքն է ստեղծեր արեւը, քամին, անձրեւն ու բոյսը. ինքն ստեղծած է

նաեւ այն ծաղկաժողով ու մեղրագործ մեղուն, խոտերը կաթ դարձունող կովը, ինչպէս նաեւ զմարդիկ որ բոլոր այս բարիքն կվայելեն, եւ շատ անգամ ապերախտ կգտնուին իւրեանց ստեղծողին, փոխանակ միշտ իւր սուրբ անունն օրհնելու եւ սուրբ պատուիրանքը պահելու :

ԱՆՆԻԿ. Ո՛հ, ինչպէս բարի է Աստուած. ամէն օր կուզեմ նմա շնորհակալ լինել : Կտեսնեմ որ ամենեւին անօգուտ բան ըրած չէ : Ոչ, ինքը ստեղծած պիտի չլինի սա անպիտան թրթուրներն որ ծառոց տերեւներն ուտելով զանոնք կմերկացունեն : Ահա անոնցմէ մէկ հատը երեսիս վերայ ընկաւ : Ոհ, այն ի՛նչպէս տգեղ է : Մարմինս փուշ փուշ լինի երբ կտեսնեմ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Աննի՛կ, գիտե՛ս արդեօք որ այն անպիտան տգեղ կանչած թրթուրներէդ կելլեն սիրած երփնագոյն թիթեռնիկներդ (քէփէնէք), որոց ետեւէն զմայլելով կվազվազես, ու մինչեւ որ մէկ հատ մի չբռնես՝ սիրտդ չհանգչիր :

ԱՆՆԻԿ. Ի՞նչ կասես մայրիկ : Մի՛թէ թրթուրին մէջ թիթեռնի՞կ կայ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Այո, զաւակս. ամէն մէկ թրթուրին մէջ մէյմէկ թիթեռնիկ անփոփուած է, ինչպէս որ մկրատդ իւր պահարանին, կամ սուրն իւր պատենին մէջ կամփոփի :

ԱՆՆԻԿ. Ո՛հ, մայրիկ, շատ կաղաչեմ, շուտով ինձ ցուցուր զայն :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Անոյշ զաւակս, ինչպէս որ չեմ կարող ցուցանել քեզ փոքր մի յառաջ տեսած ծաղկանցդ մէջի ելակը, նոյնպէս նաեւ չեմ կարող թրթուրին մէջի թիթեռնիկն քեզ ցուցանել. պէտք

է որ թէ՛ մէկն եւ թէ՛ միւսը արեւն հասցունէ, դուրս հանէ մեզ ցուցանէ :

ԱՆՆԻԿ. Ա՛հ, տես սա թռչունը թրթուր մի առեր կերթայ. ո՛ւր կտանի :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Իւր ձագուցը կերակուր տալու կըտանի զաւակս : Այնպիսի եղանակի մի մէջ որ դեռ հասած հունտ ու պտուղ չկայ՝ թէ՛ որ գետինն որդեր եւ ճճիներ չբուսցունէր՝ խեղճ թռչունք ինչո՞վ պիտի կերակրէին իւրեանց ձագերը : Ուրեմն կտեսնես, սիրելի աղջիկս, որ այն անօգուտ կարծուած կենդանիքն եւս իւրեանց օգտակարութիւնն ունին, եւ Աստուած անօգուտ բան ստեղծած չէ :

ԱՆՆԻԿ. Բայց թռչունք ի՞նչ բանի կուգան : Անօգուտ են, որովհետեւ մարդ չկրնար զիրենք բռնել : Գիտես, ո՛րչափ ետեւնէն վազեր եմ եւ դեռ մէկ հատ մի չեմ կրցեր բռնել :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Իւրեանց քաղցրածայն երգերովն զմարդ կզուարճացունեն : Հիմակուան տեսածդ սոխակ է, որ ճնճղուկի պէս թուխ (էսմէր) է, եւ երկայն կտուց ունի : Սա մացառներու մէջ մտաւ, ուր դրած է իւր բոյնը : Արդ կլսես, ի՞նչ անոյշ կերգէ. քու դեղձանիկէդ շատ աւելի անոյշ :

ԱՆՆԻԿ (դէպի մացառները վազելով). Բունին մէջ ձագեր ունի : Երթամ առնում :

(Լալով կդառնայ).

Ո՛ւֆ, մայրիկ, ո՛ւֆ, ձեռքս վիրաւորեցի, արիւնս կվազէ, ցաւէս պիտի մեռնիմ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Մի՛ վախնար, չես մեռնիր : Թող որ, բարեպաշտ քրիստոնեայն մահուանէ պէտք չէ վախնայ, վասն զի բարի մահուամբ Աստուծոյ հետ

կերթամք կմիանամք՝ մեր առաքինութեանց եւ բարի գործոց վարձքն ընդունելու : Աստի կհասկանաս, սիրելի զաւակս, որ այս աշխարհիս վերայ պէտք է առաքինի լինիմք եւ ձեռքերնէս եկած բարիքն ընեմք ուրիշներուն, որպէս զի արքայութեան մէջ նոցա վառձքն ընդունելով ուրախ եւ երջանիկ լինիմք, եւ սրբոց բնակակից :

ԱՆՆԻԿ. Սիրելի մայր իմ, այն ի՛նչ լաւ բան է եղեր առաքինի ու բարեգործ լինելը. թէ որ մարդ առաքինութեամբ ու բարեգործութեամբ արքայութիւն կերթայ սուրբերը կտեսնէ եւ նոցա հետ իմիասին կբնակի, կուրախանայ, երջանիկ լինի, ես եւս կուզեմ այսուհետեւ առաքինի ու բարեգործ լինել : Ի՛նչ երջանկութիւն. մեր Գրիգոր Լուսաւորիչ սուրբ Հայրը պիտի տեսնեմ հոն եւ իւր օրհնութիւնը պիտի առնում : Մեր ազգին ըրած մեծամեծ բարիքն որ անցեալ օրը պատմեցիր՝ դեռ միտքս են : Իրաւ չէ՞, մայրիկ, որ եթէ Գրիգոր Լուսաւորիչն մեր նախնիքը չդարձունէր իբրիստոնէութիւն, մեք քրիստոնեայ չէինք լիներ ու կուապաշտ կմնայինք :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Շատ հաւանական է, իմ խելացի զաւակս. անոր համար իսկ շատ պէտք է սիրեմք մեր Գրիգոր Լուսաւորիչ սուրբ Հայրն ու իւր բարեխօսութիւնը մեր ու մեր ազգին վերայ միշտ պէտք է խնդրեմք :

ԱՆՆԻԿ. Բայց, մայրիկ, թէ որ Աստուած բարի է, ինչո՞ւ համար ծաղկանց մէջ փուշեր եւս բուսուցե՞ր է :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Որպէս զի թռչնոց ձագերն որ չեն կարող թռչիլ՝ այն փուշերով պաշտպանուին ու իրենց բունին մարդ չդաչի, եւ անխոհեմաբար

դպչողը քեզի պէս վիրաւորուի ու միւսանգամ չդպչի :

ԱՆՆԻԿ. Աստուած ինչո՞ւ չուզեր որ մարդիկ զիրենք առնուն : Ես իրենց վնաս պիտի չընէի, այլ կարմրալանջիս (սագա գուշու) հետ գեղեցիկ վանդակի (գաֆէս) մի մէջ պիտի դնէի :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Կուզէի՞ր որ զքեզ մօրդ ձեռքէն յափշտակէին ու տանէին գեղեցիկ տան մի մէջ դնէին : Տարակոյս չկայ որ չէիր ուզեր. ուրեմն քեզի չուզածդ՝ ինչո՞ւ ուրիշին համար կուզես, որդեակ :

ԱՆՆԻԿ. Ո՛հ, ի՛նչպէս բարի է Աստուած, որ մինչեւ Թռչնոց ձագերը կհոգայ կխնամէ : Բայց Թէ որ Աստուած չլինէ՛ր :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Այն ժամանակ ոչ տունկ, ոչ բոյս, ոչ ծաղիկ, ոչ Թիթեռնիկ, ոչ Թռչուն, ոչ պրտուղ, ոչ պզտիկ աղջիկներ, ոչ հայր ոչ մայր կըլինէին, վասն զի Աստուած ըրած է զանոնք :

ԱՆՆԻԿ. Ո՛րչափ կուզէի զԱստուած տեսնել ու ճանաչել :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Թէ որ կուզես զնա օր մը տեսնել, իւր օրինակին հետեւէ ու բարեգործ եղիր :

ԱՆՆԻԿ. Բայց բարիք ընելու չափ դեռ տարիքս մեծ չէ :

ՍՈՖԻ ՏԻԿԻՆ. Որդեակ իմ, այս տարիքէդ կարող ես բարիք ընել Թէ որ ուզես : Թռչնոց եւ ուրիշ կենդանեաց չարուԹիւն մ'ըներ. վասն զի կենդանեաց չարիք չհասցնելն՝ մարդկանց բարիք ընելու առաջին քայլն է : Դարձեալ, ո՞վ քեզ կարգելու որ ձեռքդ անցած ստակին ու առած շաքարեղենիդ մէկ մասն աղքատաց չտաս : Բայց

Ժամանակ է, անոյշ զաւակս, որ տուն դառնամք.
Երիկուն լինի. հայրդ յոգնած տուն կուգայ ու
զմեզ չգտնելով հոգ կընէ, սիրտը կնեղանայ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԳ.

Համբարձումն.

Հ. Համբարձումն ի՞նչ է :

Պ. Այն օրուան յիշատակն է, յորում Քրիստոս
Տէրն մեր Առաքելոց առջեւն երկինք ելաւ :

Հ. Ինչո՞ւ համար Ջատկէն քառասուն օր յետոյ
կկատարուի այս տօնը :

Պ. Վասն զի Քրիստոս Տէրն մեր յարութենէն քա-
ռասուն օր յետոյ երկինք համբարձաւ :

Հոգեգալուստ.

Հ. Հոգեգալուստն ի՞նչ է :

Պ. Այն տօնն է, որով կկատարեմք Հոգւոյն Սրբոյ
առաքելոց եւ առաջին հաւատացելոց վերայ իջնա-
լուն յիշատակը :

Հ. Հոգին Սուրբ ի՞նչպէս իջաւ :

Պ. Երբոր Առաքելք, Աստուածամայրն Մարիամ
եւ ուրիշ սուրբ կանայք վերնատուն մի ժողովեր
աղօթք կընէին, յանկարծ սաստիկ քամիի պէս
ձայն մի ելաւ, հրեղէն լեզուներ իւրաքանչիւրին
գլխոյն վերայ իջան, եւ ամէնքը Հոգւով Սրբով լե-
ցուելով սկսան մարգարէանալ եւ այլ եւ այլ օտար
լեզուներ խօսիլ :

Աստեղք, Մոլորակք, Գիսաւորք.

Հ. Աստղերն ի՞նչ են :

Պ. Այն լուսաւոր կէտերն են որ երկնքին երեսը կփայլին, եւ զոր կտեսնեմք գիշերը :

Հ. Ինչո՞ւ համար աստղերը մանր կերեւան :

Պ. Երկրէս սաստիկ հեռու լինելնուն համար :

Հ. Աստղերը քանի՞ կարգ կբաժնուին :

Պ. Երկու կարգ, Հաստատուն աստեղք ու Շարժուն աստեղք կամ Մոլորակք :

Հ. Հաստատուն աստղերն ի՞նչ են :

Պ. Ինքնալոյս մարմիններ են, որ երկրէս եւ իրարմէ միշտ նոյն հեռաւորութեան մէջ կկենան : Ասոնք հաստատուն աստղեր կկոչուին, որպէս զի մոլորակ կոչուածներէն զատուին՝ որ շարժուն աստղեր են, եւ արեւուն չորս կողմը դառնալով՝ անդադար դիրքերնին կփոխեն :

Հ. Աստեղաց թիւը գիտե՞մք :

Պ. Ոչ. վասնզի մեզմէ խիստ շատ հեռու լինելով չեմք կրնար ճիշտ համրել :

Հ. Մոլորակներն ի՞նչ են :

Պ. Այնպիսի մարմիններ են որ իրենք իրենցմէ լոյս չունին, եւ կանոնաւոր շարժմամբ արեւուն բոլորտիքը կպտըտին. արեւուն լոյսը վրանին զարնելով իրենք եւս մեզ լուսաւոր կերեւին :

Հ. Գլխաւոր մոլորակները քանի՞ հատ են :

Պ. Ութը հատ, եւ արեւէն ունեցած հեռաւորութեան կարգով սոքա են. Փայլածու, Արուսեակ, Երկիր, Հրատ, Կուսնթագ, Երեւակ, Ուրանոս ու Պոսիդոն կամ Նեպտոն :

Ասոնցմէ զատ շատ մը մանր մոլորակներ եւս վերջի ժամանակներս գտնուեցան հետզհետէ, այնպէս որ հիմա մոլորակաց Թիւը մեծ ու փոքր վաթսուկնէն աւելի է :

Հ. Գիսաւորներն ի՞նչ են :

Պ. Գիսաւորներն եւս մոլորակաց պէս անլոյս մարմիններ են, ու արեւէն կառնուն լոյսերնին. լոյս մի ունին ետեւնին ձգած որ գէս կամ ագի կկոչուի, որով եւ իրենք Գիսաւոր կամ Ագեւոր աստղ կոչուեր են, եւ արեւուն չորս կողմը կը պտըտին :

Հ. Գիսաւորի երեւիլը նշա՞ն է դիպուածի :

Պ. Ժամանակաւ այնպէս կկարծուէր. բայց այժմ ամէն մարդ գիտէ որ նոքա եւս մէկմէկ մոլորակ են, ու արեւուն վերայ դարձած ժամանակնին՝ երկրիս մօտենալով կերեւին մեզ :

Հ. Արբանեակ կոչուածներն ի՞նչ են :

Պ. Այնպիսի մանր մոլորակներ են որ գլխաւոր մոլորակի մը շորս դին կշրջին, ու անոր հետ մէկտեղ արեւուն շորս բոլորը կպտըտին :

Հ. Արբանեակ ունեցող մոլորակք որո՞նք են :

Պ. Լուսնթագը, որ շորս արբանեակ ունի,

Երեւակը՝ ութ արբանեակ,

Ուրանոսը՝ վեց արբանեակ,

Պոսիդոն՝ երկու արբանեակ, ու

Երկիրս մէկ արբանեակ՝ որ է Լուսինը :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԴ.

Մեծութիւն Աստուծոյ իգործս իւր.

Ինչո՞ւ այնչափ շքեղ ու փառաւոր են Աստուծոյ գործքն, որդեակ : Ինչո՞ւ չորս կողմերնիս անթիւ անհամար առարկաներ կգտնեմք որք իրարմէ գեղեցիկ են ու զարմանալի : Անշուշտ անոր համար է որ չդադարիմք երբէք հիանալէն ու պաշտելէն այն Մեծ էակն, որ անհուն առաւելութեամբ գեղեցկագոյն է, շքեղագոյն, փառաւորագոյն եւ վսեմագոյն բոլոր մեր զգայարանաց երեւցած բաներէն . որպէս զի կարող լինիմք միշտ մեզ ասելու . « Թէ որ գործքն այնչափ կատարեալ են, ի՞նչ պիտի լինի հապա զիրենք գործողը : Թէ որ այսպիսի՛ է արարածոց գեղեցկութիւնը, հապա ի՞նչ պիտի լինի Արարչին գեղեցկութիւնը :

Թէ որ արեւուն լոյսն այնչափ պայծառ ու սաստիկ է որում չեմք կարող աչքովնայիլ, միթէ պէ՞տք է զարմանամք որ այն մեծ աստղը վառողն ու լուսաւորողը այնպիսի անմերձանալի լոյս մի ունենայ, զոր ոչ ոք իմահկանացուաց տեսած լինի եւ կարենայ տեսանել : Միթէ ինքն իւր ձեռակերտ արարածոցմէ աւելի սքանչելի պիտի չլինի՞ : Որչափ իւր գործքը զարմանալի է, այնչափ աւելի պէտք է մեր զարմանքն իւր վերայ շարժէ : Թէ որ կարող լինէինք հասկանալ բոլոր իւր մեծութիւնը՝ ոչ եւս Աստուած կլինէր, եւ կամ մեք մարդ չէինք լիներ, այլ մէյմէկ Աստուած կդառնայինք :

Ուրեմն այսուհետեւ աշխարհիս հրաշալեացը

վերայ զարմացած ժամամականիս իւրեանց Արարիչն օրհնեմք զաւակս, վասն զի մեր եւս Արարիչն է, Ստեղծողն եւ Փրկիչը, եւ իւր ողորմութեամբն է որ մինչեւ այս վայրկեանս կապրիմք, եւ այնչափ բարիք վայելեր եմք ու կվայելեմք :

Լուսին.

Հ. Լուսինն ի՞նչ է :

Պ. Լուսինը երկրիս նման գունտ մի է՝ ու ԼՈՒՍԱԻՈՐ ԳԻՇԵՐՈՅ կկոչուի, անոր համար որ արեւուն լուսէն զրկուած ժամանակնիս՝ ինքը զմեզ փոքր մի կլուսաւորէ :

Հ. Ի՞նչպէս կարելի է լուսինը արբանեակ կոչել՝ որ միւս մոլորակներէն մեծ կերելի :

Պ. Լուսինը մոլորակներէն մեծ երեւնալուն պատճառն այն է որ ամենէն աւելի մօտ է մեզ :

Հ. Լուսինն ի՞նչ ընթացք ունի :

Պ. Լուսինը քսանըտօթը օրուան, ետօթը ժամուան ու քառասունեւերեք վայրկեանի մէջ իւր վերայ կը դառնայ՝ եւ երկրիս հետ մէկտեղ արեւուն վերայ կպտըտի :

Հ. Լուսնի շրջանին միջոցը ի՞նչ կկոչուի :

Պ. Լուսնական ամիս :

Հ. Ինչո՞ւ համար երբեմն կլոր կերելի լուսինն եւ երբեմն եղջիւրածեւ :

Պ. Այն այլ եւ այլ ձեւերն, որ ԵՐԵՒՈՅԹԻ ԼՈՒՍՆԻ կկոչուին, լուսնին երկրիս վերայ պտըտելէն առաջ կուգան : Լուսինն ինքիրմէ լոյս չունենալով՝ մեք նորա արեւէն լուսաւորուած կտորը միայն կրնամք տեսնել. երբեմն գիրքերնիս այնպէս կուգայ որ

այն լուսաւորուած կտորին եւս եղջիւրաձեւ մէկ մասը միայն կարող եմք տեսնել, որ ՔՍՌՈՐԴ ԼՈՒՍՆԻ կկոչուի :

Հ. ՆՈՐ ԼՈՒՍԻՆ ԵՆ ԼՐՈՒՄՆ ԼՈՒՍՆԻ Ի՞Նչ է :

Պ. Նոր լուսին կկոչուի՝ երբոր լուսնին մուտ կողմը կտեսնեմք, եւ ոչ զինքը. իսկ լրումն լուսնի կկոչուի՝ երբոր բոլորը լուսաւորուած կտեսնեմք :

Հ. Լուսնի շրջանովը ուրիշ ի՞նչ կհանդիպի :

Պ. Լուսնի ու արեւու խաւարմունքը :

Հ. Խաւարումն ի՞նչ է :

Պ. Խաւարումն է արեւուն կամ լուսնի լուսոյն առ ժամանակ մի չերեւիլը կամ պակսիլը :

Հ. Լուսինն ե՞րբ կխաւարի :

Պ. Երբոր երկիրս լուսնին ու արեւուն մէջտեղը գայ, այնպէս որ թող չտայ որ լուսինը արեւէն լոյս առնու :

Հ. Արեւն ե՞րբ կխաւարի :

Պ. Երբոր լուսինն երկրիս ու արեւուն մէջտեղը կուգայ, ու չթողուր որ արեւէն լոյս առնումք. այն ժամանակ կասեմք թէ արեւը խաւարեցաւ, փոխանակ ասելոյ թէ լուսնին պատճառաւ արեւուն լոյսը չեմք տեսներ :



ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԺԵ.

Վերափոխումն.

Հ. Վերափոխումն ի՞նչ է :

Պ. Վերափոխումն է այն օրը, յորում սուրբ Եկե-

դեցին կտօնախմբէ սուրբ Աստուածածնայ մարմնով երկինք վերանալոյն յիշատակը :

Ակնածուութեան պակասութիւնն ու անզգուշութիւն.

1. Երբոր մէկուն բան մի կհարցանեն՝ գլուխը շարժելով միայն պատասխան կուտայ. եւ ոչ, Ձէ ասելու տեղ՝ ց ը ք կասէ եւ կամ գլուխը վեր կտանի :

2. Այն միջոցին որ ուրիշները հետը կխօսին, ինքը մատուրներովը կխաղայ, անոնցմով քովի սեղանին կամ նստած աթոռին վերայ թմբուկ կզարնէ :

3. Ամենուն դիմացը կյօրանջէ առանց ձեռքը բերնին առջեւը բռնելու :

4. Չկրնար ուրիշներու քովէն փոքր մի զատուիլ՝ առանց զատուելուն պատճառը հասկացնելու անոնց :

5. Պառկելու գնացած ժամանակը չգար ծնողաց ձեռքը համբուրելու կամ սիրոյ եւ յարգանաց ուրիշ նշան մի տալու :

6. Մեկուն դանակ, պատառաքաղ, զմելին, կըտրոց տալու ժամանակ կոթին տեղը բերնին կողմը անոնց կերկնցունէ :

7. Փուճ բան մի ցուցանելու համար ուրիշներուն հարկաւոր խօսակցութիւնը կընդհատէ :

8. Ընկերութեան մէջ անդադար ժամացոյցը կըհանէ կնայի. չմտածեր որ անով տեսնողները կկարծեն որ իրենցմէ ձանձրացեր է, եւ կամ փառաւոր ժամացոյց ունենալը կուզէ անոնց իմացունել :

9. Մէկը թաշկինակ կամ թուղթ մի որ գետինը ձգէ, ամենեւին չփուլթար որ վերցունէ տայ. չգիտեր որ այսպիսի փոքրիկ ծառայութիւններով

տղայք իրենք զիրենք շատ կսիրցունեն ու ազնիւ սիրտ ունենալին կյայտնեն :

10. Յտարին պարտէզն որ մտնէ, առանց հարցանելու ծաղիկ կամ պտուղ կսիրցունէ, չսպասեր որ ուրիշները զինքը յորդորեն : Գիտնալու է որ մարդս եւ ոչ բարեկամին պարտեզէն բան փրցունելու է առանց հրաւիրուելու :

11. Մարմնոյ պակասութիւն ունեցողներուն ձեւերը կընէ :

12. Թէ որ յանկարծ մէկն ոտքին վերայ կոխէ կամ անզգուշութեամբ զինքը սակաւ մի հրէ, դառն յանդիմանութիւններ կուտայ : Աչք չունի՞ս, առջեւդ չնայի՞ս կպռայ. որ ընդհակառակն եթէ այն պակասութեան մէջ գտնուողն իրմէ թողութիւն ուզէր, ինքն անոր սիրտ տալով պէտք էր գրուցեր. Բան չկայ, Պարոն. հոգ մ'ընէք, Տէր, ամենեւին ցաւ չիմացայ, եւ այլն :

13. Ինքը մէկուն մէկալին ոտքին կկոխէ ու փոյթը չլինիր. որ եթէ սխալմամբ եւս կոխելու լինէր, պիտի դառնար թողութիւն ըրէք, Պարոն, պիտի ասէր եւ անոր սիրտը պիտի առնէր :

14. Երբ տեսնէ որ մէկը գինովութեամբ խելքը կորսնցուցեր է, վրան ցաւելու տեղ որ այնպէս ինքզինքն անբանից կարգը իջուցեր է, անոր հետը կիյնայ, եւ այնպիսի անմարդավայել տեսարանով կզուարճանայ :

15. Յուցանել ուզած անձը, կամ որո՛ւն վերայ որ կխօսի՝ մատովը կցուցանէ :

16. Իբր թէ բնակարանին մէջ ինքն միայն լինէր՝ ուրիշի առջեւ յօրանջելով կերգէ, կխօսի ու այլանդակ ձայներ կհանէ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԶ.

ՄԹՆՈՂՈՐԱԽԻՆ ԳՂԽԱԼՈՐ ԵՐԵՆՈՅԹՆԵՐՐ.

Հ. ՄԹՆՈՂՈՐԱՆ Ի՞ՆՆ է :

Պ. ՄԹՆՈՂՈՐԱՐ ԿԱՄՔ ՕՂՈՂՈՐԱՐ ԿԱՐԻԼՐ ԵՄԱՆ ԿԱՂԱՐ ՄԵԹՐ ԹԱՆՃՐՈՒԹԵԱՄՔ ՕՂՆ Է, ՈՐ ՄԵՐ ԵՐԿՐԱՊՆԱԽԻ ՏՈՐԱ ԿՈՂՄՐ ԱՎԱՏԱԾ Է, ՈՒ ՄԵՔ ԱՆՈՎ ՉՈՒՆՆ ԿԱՌՆՈՒՄՔ : ՄԹՆՈՂՈՐԱԽԻՆ ՄԷՉ ԿՃԵԼԱՆԱՆ ԱՄԱԿԵՐՐ, ԱՆՃՐԵԼ, ՃԻԸՆ, ԿԱՐԿՈՒՄ, ԿՈՎԵՐ, ՈՐՈՒՄՈՒՆՔ, ՓԱՅԼԱԿ. ՄԷԿ ԽՕՍՔՈՎ՝ ԱՄԷՆ ՕՂԱՅԻՆ ԵՐԵՆՈՅԹՆԵՐՐ :

Հ. ԱՄԱԿԵՐՆ Ի՞ՆՆ ԵՆ ԵԼ Ի՞ՆՆՅԱԿԷՍ ԿՃԵԼԱՆԱՆ :

Պ. ԱՐԵԼՈՒՆ ԵՄԱՔՈՒԹԵՆԷՆ ԵՐԿՐԻՍ ՎՐԱՅԻ ՉՐԵՐՐ ԳՈՂՈՐՉԻ ԿՂԱՌՆԱՆ, ՕՂՈՒՆ ՄԷՉ ԿՔԱՐՃՐԱՆԱՆ, ԵԼ ՄԱՆՐ ԿԱԹԻՂՆԵՐ ՃԵԼԱՆԱԼՈՎ՝ ԱՄԱԿ ԿԱՍՈՒԽԻՆ : ԻՍԿՆՈՅԱ ՃԵԼԵՐՈՒՆ ՈՒ ԳՈՅՆԵՐՈՒՆ ԳՂԽԱԼՈՐ ԱՎԱՏՃԱՌ Է ՄԷՅՄՐ ԻՐԵՆՑ ԹԱՆՃՐՈՒԹԻԸՆՆ, ՄԷՅՄ՝ԱԼ ՆՈՅԱ ԱՐԵԼԷՆ ԿԱՄՔ ԼՈՒՄՆԷՆ ԼՈՒՍԱԼՈՐՈՒԵԼՈՒՆ ԿԵՐԱՐ :

Հ. ԱՆՃՐԵԸՆ Ի՞ՆՆ է :

Պ. ԱՄԱԿԵՐՈՒՆ ՄԱՆՐ ԿԱԹԻՂՆԵՐՆ ԻՐԱՐՈՒ ԿԵՄ ԿՐՄԻԱՆԱՆ, ԵԼ ԿԵՄՂԿԵՄԷ ՃԱՆՐԱՆԱԼՈՎ ԵՐԿՐԻՍ ՎԵՐԱՅ ԿԹԱՓԹՓԻՆ : ԵՐՔԵՄՆ ԱՍՈՆՔ ՃԱՄՔՈՒՆ ՄԷՉ ԳՈՂՈՐՉԻ ԿՂԱՌՆԱՆ ԿՅՆՂԻՆ, ԵՐՔՐՄՆ ԵԼՍ ՄԻՆՆԵԼ ԳԵՄԻՆ ԿՐԿԱՍՆԻՆ ՈՒ ԱՆՃՐԵԼ ԿԱՍՈՒԽԻՆ :

Հ. ՄԷՂՆ Ի՞ՆՆ է :

Պ. ԱՅՆ ԱՄԱԿՆ Է ՈՐ ԳԵՄՆԻ ԵՐԵՍԻՆ ՄՕՄ ԿՃԵԼԱՆԱՅ. ՎԱՍՆՂԻ ԳԵՄՆԷՆ ԵԼԱԾ ԳՈՂՈՐՉԻՔՐ ԳԻՉԵՐՈՒԱՆ ՕՂԻՆ ԱՎԱՂՈՒԹԵՆԷՆ ՎԵՐ ՆԿԱՐԵՆԱԼՈՎ ՔԱՐՃՐԱՆԱԼ՝ ԵՐԿՐԻՍ ԵՐԵՍՐ ԿՄՆԱՆ, ՎԵՐԻ ԳՈՂՈՐՉԻՆԵՐՆ ԵԼՍ ՎԱՐ ԿԻՉՆԱՆ ՄԻՆՆԵԼ ԻԳԵՄԻՆ, ԱՆՈՎ ԿՃԵԼԱՆԱՅ ԱՅՆ ԳԱԾ

ամպն որում մէգ կամ մառախուղ կասեմք :

Հ. Ձիւնն ի՞նչ է :

Պ. Յուրտ ժամանակ գոլորշիքն՝ փոխանակ հեղուկի պէս կաթիլ կաթիլ երկրիս վերայ թափելու, բամբակի մանր ծիւերուն պէս վար կիջնան, եւ կասուին ձիւն :

Հ. Հովը կամ քամին ի՞նչ է :

Պ. Հովը կամ քամին օդուն տեղէ տեղ շարժիլն է :

Հ. Փայլակն ի՞նչ է :

Պ. Պայծառ եւ փայլուն լոյս մի որ յանկարծ մըթնոլորտին մէջ կերելի, ու մէկէն աներեւոյթ լինի :

Հ. Որոտումն ի՞նչ է :

Պ. Որոտումն է փայլակին երեւելէն յետոյ ելած գոռալու ձայնը :

Հ. Փայլակին, որոտման եւ կայծակին ի՞նչ է պատճառը :

Պ. Օդուն մէջ եղած անտեսանելի հոսանք մի յանկարծակի կշարժի կանցնի, որ ելեքտրական հոսանիւթ կկոչի. յորմէ ելած լոյսը՝ կասուի փայլակ, ձայնը՝ որոտում, իսկ կրակը՝ կայծակ կամ շանթ :

Հ. Ելեկտրական հոսանիւթն օդուն մէջ միայն կգտնուի :

Պ. Ելեքտրական հոսանիւթն ոչ միայն օդի մէջ, հապա նաեւ շատ մարմնոց մէջ կգտնուի, զոր դուրս հանելու համար բաւական է այն մարմինները սակաւ միշփել, որ մէկէն կսկսին կա՛մ կայծեր հանել եւ կամ թեթեւ մարմիններն իրենց քաշել : Օրինակի համար, թէ որ մուտ տեղ մի կատուին կունակը դէպ իհակառակ դին շփեմք՝ կայծեր կելլեն, մանաւանդ ցուրտ ժամանակ. նոյնպէս թէ որ

կնքամոմը չուխայի վերայ քսեմք եւ յետոյ թեթեւ մարմնոյ մի մօտեցընեմք, զոր օրինակ մազի, մէկէն իրեն կքաշէ :

Հ. Կայծակէ ազատ մնալու հնարք կա՞յ :

Պ. Կայծակը՝ տուն, մարդ, ամէն բան կզարնէ մոխիր կդարձունէ : Ֆրանքլին ամերիկացին անկէց ազատելու հնարք գտաւ՝ շէնքերու վերայ տնկելով երկաթէ սրածայր երկայն ձող մի, որոյ վարի ծայրը ուրիշ բարակ երկաթով մի երթայ գետինը մտնէ. այս է ահա շան թարգել կոչուածը. վասն զի իրեն մօտ եղած փոթորկալից ամպերուն մէջէն ելեքտրական հոսանիւթը ցրուելով՝ չթողուր որ կայծակը գայ շէնքին զարնէ :

Հ. Շանթարգելը միշտ ելեքտրականութիւնը կը ցրուէ՞ :

Պ. Ոչ, չկրնար. բայց ելեքտրական հոսանիւթն իրեն քաշելով՝ տակի երկաթէն կսահեցընէ մինչեւ գետին կանցունէ. որով չկրնար կայծակ դառնալով շէնքը կործանել, մէջիններն այրել :

Հ. Փոթորկի ատեն ծառի տակ քաշուիլը լա՞ւ է :

Պ. Փոթորկի ժամանակ՝ ծառի, աշտարակի եւ ընդհանրապէս ամէն տեսակ բարձր ու սրածայր շէնքի տակ մտնելը շատ վտանգաւոր է, որովհետեւ ելեքտրական հոսանիւթը կամ կայծակն աւելի կը սիրէ սրածայր մարմնոց վերայ իջնալ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԷ.

Անհամ կատակներ ու անվայել վարմունք.

1. Կսիրէ մէկուն մէկալին հետ իյնալ, անհամ անժուր կատակներ ընել:
2. Յանկարծական ձայներով, կամ մէկդին մէկալ դին պահուրտելով՝ մէկը մէկալը կվախցունէ ու զուարճուծիւն կզգայ:
3. Մէկուն յօրանջելն որ տեսնէ, մատը բերնին մէջ կխոթէ:
4. Մէկուն քիծը սրբելն որ տեսնէ, յանկարծակի ձեռքէն թաշկինակը կքաշէ:
5. Երբ կտեսնէ որ մէկն ամոռի վրայ պիտի նրստի, կերթայ ետեւէն կքաշէ ու խեղճը վար կձգէ:
6. Քնացած մէկն որ տեսնէ, կերթայ կողը կխըտողրտէ (գըտըգլամագ), եւ կամ քիծին ծակը յարդ կամ փետուր կխոթէ:
7. Սրբազան բաներ, եւ մինչեւ Աստուծոյ սուրբ անունն անդադար բերանը կառնու, անոր վերայ կերդնու:
8. Ստէպ բերնէն անվայել խօսքեր ու յիշոցներ կհանէ ու չմտածեր որ վերջի աստիճանի անկրթութեան, կոպտութեան, Աստուծմէ չվախնալու ու մարդկանցմէ չամաչելու նշան է:
9. « Աչքս կուրնայ, գլուխս կոտրի, ճաղս տեսնես... » եւ ասոր նման անմիտ խօսքերով երդմունքներ կընէ:
10. Ընկերները կկամրթէ, կդրդէ, կճանկրտէ, եւ կարծես թէ զանոնք տանջելով միայն կզուարճանայ:

11. Ձեռքի կատակներ կսիրէ ընել:

12. Խաղի մէջ միշտ իւր կամքը կուզէ յառաջ տանիլ:

13. Միշտ իւր սիրած խաղը կուզէ որ խաղան, եւ ջմտածեր որ երբեմն եւս ուրիշներուն ուզածն պէտք է ընել.

14. Խաղի մէջ անդադար վէճ կուիւ կհանէ:

15. Ամէն տեսակ խարդախուծիւն կբանեցունէ որ խաղի ընկերներուն յաղթէ:

16. Իւրմէ պզտիկներուն հետ գոռոզուծեամբ կվարուի, ու ջմտածեր որ եծէ իւրմէ մեծերն եւս իւր հետն այնպէս վարուէին՝ բանն ո՛ւր կհասնէր:

17. Յանցանքը դուրս ելած ժամանակ ոչ երբէք սխալեցայ կասէ. անմտաբար կկարծէ որ յանցանքը ճանաչելն ու խոստովանելով խոնարհաբար թողուծիւն խնդրելը՝ մարդուս նախատինք ու ցածուծիւն է. որ ընդ հակառակն մեծ պատիւ է, ու տղու մի համար ինքզինքը սիրցընելու մեծ պատճառ:

18. Երբոր ուզածը չտան կամ չընեն կսրդողի, քիծը կկախէ: Իւր ըրած յանցանքին համար անմեղ ընկերոջը պատժուիլը կտեսնէ ու անխիղճ վատուծեամբ ձայն ջհաներ:

19. Ուտելու բան մի որ ունենայ՝ ամենեւին ընկերներուն բաժին ջհաներ, անողորմաբար կնստի նոցա առջեւ կուտէ, ու ջմտածեր որ նոքա եւս իրեն պէս տղայ են, կընայ սրտերնին ուզել:

20. Նոցա բան մի եւս տալու որ լինի, Կայենի պէս անպիտանները կընտրէ:

21. Ընկերներուն վերայ լաւ բան մի տեսնելու ժամանակ փոխանակ ուրախանալու, նախանձէն կտրտմի:

22. Սաստիկ ոխակալ ու վրէժխնդիր լինի :

23. Փուճ բանի համար մէկէն կբռնկի, կբարկանայ ու ի՞նչ կրքի տէր լինելն ամենուն կյայտնէ :

24. Լրբաբար ծուխ (թիւթիւն) կբաշէ, ու հասակէն եւս չամաչեր :

25. Բազմութեան մէջ մտած ժամանակ մէկը մէկալը կհրէ կհրմշտըկէ, որպէս զի առաջ երթայ, բուն հանդեսին տեղը հասնի, ու չմտածեր որ ամենուն եւս փափաքելի է այն :

26. Զգիտեր նաեւ որ ընկերութեան մի մէջ ու ո՛ր եւ իցէ բազմութեան առջեւ ոչ երբէք բարձրաձայն պէտք է խօսիլ :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԸ.

Երկիր.

Հ. Երկիրս ի՞նչ է :

Պ. Երկիրս այն գունդն է, որոյ վերայ մեք կբնակիմք, եւ ձեւացած է ցամաքով ու ջրով :

Հ. Երկրագունտն ի՞նչ է :

Պ. Երկրիս ձեւը ցուցանող գունտը՝ որոյ վերայ նկարուած են ցամաքն ու ջրերը :

Հ. Հապա երկնագունտն ի՞նչ է :

Պ. Երկնքի ձեւն ու աստեղաց դիրքը ցուցանող գունտն է :

Հ. Աշխարհացոյցն ի՞նչ է :

Պ. Երկրիս երեսն ու այլեւայլ բաժանմունքը, լեռներն ու գետերը ցուցանող թղթերը :

Հ. Ըսիր թէ արեգակն անշարժ է, եւ երկիրս անոր ջորս կողմը կդառնայ. երկիրս այս պտոյտն ու թաւալու մը ի՞նչ պէս կընէ արեւուն ջորս կողմը :

Պ. Երկիրս երկու շարժմունք ունի, ու երկուքն եւս մէկտեղ կընէ. այսինքն մի եւ նոյն ժամանակի մէջ թէ՛ ինքն իւր առանցքին վերայ կդառնայ՝ անուոյն լիսուանը վերայ դարձածին պէս, եւ թէ արեւուն ջորս կողմը կպտըտի : Իւր վերայ կդառնայ քսանըջորս ժամուան մէջ. այսպէս դառնալովը՝ կարգաւ մէյմը մէկ կողմը արեւուն կդարձունէ, մէյմը միւսը՝ որով եւ անդադար գիշեր ու ցորեկ կլինի. վասնզի արեւուն դարձուցած կրտորը լոյս տեսնելով՝ ցորեկ կլինի հոն. միւս կտորն եւս լոյս չտեսնելով գիշեր կլինի :

Հ. Երկիրս քանի՞ օրուան մէջ կընէ իւր շրջանը :

Պ. Երկրիս միւս շարժումը, այսինքն արեւուն ջորս կողմը պտըտիլը, երեքհարիւր վաթսունըհինգ օրուան եւ վեց ժամուան մէջ կլինի. այս շարժմունքով տարւոյն երկայնուծիւնը կջափուի ու ջորս եղանակները կփոփոխին, որք են Գարուն, Ամառ, Աշուն եւ Զմեռ :

Հ. Յրինակ մի տուր երկրիս երկու տեսակ շարժմանը :

Պ. Յրինակի համար կառք մի քալած ժամանակն անիւր երկրիս պէս կրկին շարժման մէջ է : Վասնզի թէ՛ լիսուանը վերայ կդառնայ, եւ թէ միանգամայն առաջ կերթայ : Այսպէս է եւ երկիրս ու միւս մոլորակները :

Հ. Մեք երկրիս ո՞ր մասին վերայ կբնակիմք :

Պ. Դրսի երեսին կամ կեղեւին վերայ, որ մակերեւոյթ կասուի :

Հ. Երկրիս դառնալու ժամանակը մեք ի՞նչպէս չեմք իյնար ու շարժիլը չեմք իմանար :

Պ. Ինչպէս որ գնտակի կամ գունտի մի վերայ մրջիւն մի կեցած ժամանակ եթէ գունտը դարձունեմք՝ մրջիւնը չիյնար, եւ ոչ իսկ կզգայ թէ գունտը կդառնայ. այսպէս եւ մեք երկրիս մեծուծեանը նայելով՝ մրջիւնէն եւս պզտիկ եմք, ուստի եւ երկրիս դառնալն ամենեւին չեմք իմանար :

Հ. Երկիրս ի՞նչ տեսակ մարմին է :

Պ. Երկիրս հաստատուն մարմին է. բայց որովհետեւ քանի որ փոքելով երկրիս խորունկը կիջնամք այնչափ ջերմութիւնը կշատանայ, աստի գիտունք հետեւցուցին թէ երկրիս միջուկը հալած մարմին է, եւ երեսը պաղելով՝ կեղեւ կապած է :

Հ. Երկիրս արեւէն մե՞ծ է :

Պ. Երկիրս արեւէն գրեթէ մէկ միլիոն երեքհարիւր երեսուն հազար անգամ փոքր է :

Հ. Երկիրս լուսնէն մե՞ծ է թէ փոքր :

Պ. Յիսուն անգամ աւելի մեծ է :

Հ. Երկրիս չորս բոլորը կարելի՞ է պտըտիլ :

Պ. Կարելի է, եւ ճանապարհորդ մի որ ժամը մէկ մղոն տեղ կտրելով՝ գիշեր ցորեկ քալէ միակերպ, երեքհարիւր եօթանասունըհինգ օրուան մէջ կրնայ անոր չորս կողմը պտըտիլ. վասնզի հարկ է երբեմն ծովով, երբեմն ցամաքով երթալ, ու տեղ տեղ կենալ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԹ.

Ընկերութեան մէջ դիտելու մարդավարութիւնք.

Հ. Ի՞նչպէս կրնայ մէկն ընկերութեան մէջ սիրելի լինել:

Պ. Թէ որ մէկը կուզէ ընկերութեան մէջ բանի տեղ դրուիլ եւ ուրիշներուն սիրելի լինել, նախ ամենայն ջանք պիտի ընէ լաւ կատարելու առայլս ունեցած պարտքը: Բ. Թէ որ երբեմն ընկերութեան մը մէջ փոքրիկ գժտութիւն եւ կամ կարծեաց տարածայնութիւն մը հանդիպի, այնպիսի ժամանակ որչափ որ կարելի է անխռով պիտի լինի եւ ամենեւին թշնամութեան կերպ պիտի չցուցանէ: Գ. Պիտի նայի որ ուրիշներուն բանին չխառնուի եւ կամ ուրիշներուն սխալանացը կամ պակասութեանցը վրէժխնդիր չլինի: Դ. Պիտի զգուշանայ բամբասանքէ եւ խօսք խառնելէն որ ընկերութեան մը մէջ՝ ասկէց աւելի զզուելի բան չկայ. այս բանս չէ թէ միայն մարդավարութեան դէմ է, այլ եւ քրիստոնէական եղբայրսիրութեան դէմ է:

Հ. Ուրիշ ի՞նչ միջոցներով սիրելի կրնայ լինել մարդ:

Պ. Վարուց մաքրութեամբ եւ համեստութեամբ, ուրիշներուն ձեռքերնէս եկածին չափ օգնելով, մեր ընկերաց պակասութեանը վրայներողամիտ լինելով, եւ ամէն բանի մէջ ուրիշներուն բարիքը ուզելով: Տարակոյս չկայ թէ, ո՞վ որ այս քաղցր պարտքերը կկատարէ եւ իւր ընկերները կսիրէ, ամենուն սիրելի լինի. եւ անկարելի է որ ուրիշներն եւս իւր

վրայ նոյն գուծը չունենան : Իսկ ընդհակառակն ո՛վ որ ասոնց դէմ եղած ախտերը իգործ կդնէ, ամենուն ատելի լինի, եւ ընտիր ու մարդավայել ընկերութեան մը չկրնար արժանաւոր անդամ լինել, այլ մանաւանդ թէ նոյն ընկերութենէ վաւրնտուելու արժանի է :

Հ. Ընկերութեան ատելի չլինելու համար ի՞նչ դիտելու է :

Պ. Պէտք է զգոյշ կենալ սնապարծութենէ եւ ուրիշները բանի տեղ չդնելէ, հապա ամենէն խեղճ մարդուն եւս իւր կատարելութեանցն համեմատ վրան սէր եւ համարմունք ցուցնել, հասարակաց լաւ երեւցած բանին հաւնիլ, եւ ընկերութեան յարմարիլ, փափկասիրութենէ հեռու կենալ, որոցմով շատ մարդիկ ատելի լինին ընկերութեան :

Հ. Ընկերութեան մէջ ընկերական սիրոյ կապը վերցնող գործերն որո՞նք են :

Պ. Ս. Սւելորդ հետաքրքրութիւն, որ ընկերութեան մէջ եղած ամէն խօսակցութիւն կուզէ իմանալ : Բ. Կասկածոտութիւն, որ ամէն խօսակցութեան մէջ կարծէ թէ իւր վերայ վատ կխօսին, որ ուրիշ բանէ առաջ չգար բայց եթէ իւր եւ այլոց վերայ համարմունք չունենալէ : Գ. Ցասկոտութիւն, որ ամէն բանէ դիւրաւ կառնուի : Դ. Շատախօսութիւն, ու անոր հակառակը լռակացութիւն, որ խաբէութեան կասկած կուտայ : Ե. Ընկերութեան մէջ առանձնախօսութիւն, եւ անհամ խօսքեր :

Հ. Խօսակցութեան մէջ դիտելու գլխաւոր կանոններն որո՞նք են :

Պ. Լաւ մտածել խօսածն ու նորա հետեւանքը, անմտածութեամբ չասել ո՛ր եւ իցէ ճշմարտութիւն

ամէն տեղ, թէպէտեւ ամէնքը գիտնան. ընկերու-
թեան մէջ խօսելու ժամանակ ամէն անձանց արժա-
նաւոր պատիւը տալ. համբերութիւն ամէն բանի
մէջ, քաղցրաբանութիւն առանց թեթեւամտու-
թեան, կեղծաւորութեան եւ վատութեան:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԻ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ա.

ԲԱՐՈՅԱԿԱՆ.

Այն ժողովուրդը կատարեալ երջանիկ ու կատարեալ քրիստոնեայ կասուի, որ լաւ բարոյական ունի, որոյ բարոյականն աւերած չէ. այսինքն գիտէ թէ՛ ճշմարիտ ու աստուածահաճոյ առաքինութիւնն ո՞րն է, եւ թէ ի՞նչպէս կատարելու է: Դարձեալ ո՞րչափ ժողովուրդ մի քաղաքականութեամբ զարգանայ, բարակնայ, ա՛յնչափ եւս վտանգ կայ բարոյականին աւերելուն: Այս բանս հասկացած են հանապազօրեայ փորձերով նաեւ եւրոպայի քաղաքակիրթ ազգաց իմաստունները, եւ ժողովրդեան մէջ բարոյականին ուսումը ծաղկեցունելու համար ամէն հնարք իգործ կղենեն թէ՛ գրով եւ թէ՛ գործքով:

Մեք եւս կփափաքիմք որ բարոյականը ամէն Հա-

յու պատուական գանձ դառնայ, եւ Քրիստոսի Տեառն մերոյ խօսքը մեր ազգին վերայ կատարուի.
« Ուր գանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղիցին: »

Կատարումն քրիստոնէական առաքինութեանց.

Աստուածալաշտութիւնը բոլոր մարդուս հոգին է: (ՊՈՍԻԻԷ.)

Աստուած զմեզ անոր համար իրեն նման, այսինքն բանական ստեղծեց, որպէս զի կարող լինիմք զինքն նանաչել իբրեւ անհուն նշմարտութեան, եւ սիրել իբրեւ անսահման բարութիւն: (ՖԷՆԸԼՈՆ.)

Ուրախութիւն, հանգստութիւն ու զուարճութիւն կսիրէք. անոնց ամենուն եւս համն առի ու երկար ժամանակ վայելցի: Աստուծոյ ծառայելուն պէս ուրախութիւն, հանգստութիւն եւ զուարճութիւն չկայ: (ՄԷՆԹԸՆՈՆ ՏԻԿԻՆ.)

Թշուառութեան մէջ կրօնքն զմարդ կմխիթարէ, եւ կենաց դառնութեանցը հետ երկնային քաղցրութիւն կխառնէ: (ՊՈՍԻԻԷ.)

Զարմանալի՛ բան. քրիստոնէական կրօնն որ ըստ ինքեան հանդերձեալ կենաց մէջ միայն երջանիկ պիտի ընէր զմարդ, ասոր մէջ եւս երջանիկ կրնէ զմեզ: (ՄՈՆԹԵՍՔԵՕ.)

Յրինակին մարդուս սրտին ու հոգւոյն վերայ ունեցած ազդեցութիւնն ամենուն քաջայայտ լինելով, մեք իսկ օրինակով աւելի ջանամք խօսիլ ու սովորեցունել, որպէս զի ընթերցողք բարոյականին գեղեցիկ պատկերներովը շրջապատեալ իբրեւ իմաքուր իպայծառ օդի անոնց մէջ ապրին, եւ այնպէս տոգորուին անոնցմով՛ որ ամէն գործերնուն ու վարքերնուն վերայ անոնց սիրուն ակնահաճոյ գոյները փայլին. քաղցրանայ իրենց առաքինութեան ձայնը, եւ մոլուտեան ու ախտերու երեւութէն անգամ սոսկալով փախչին: Այս ըն-

տիր օրինակաց գլուխը դնեմք ուրեմն զՄեծն ներսէս, մեր սուրբ եւ առաքելաջան հայրապետը:

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ.

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ, որ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին Յուսիկ թոռանը Աթանազինեսի որդւոյն զաւակն էր, քրիստոնէական առաքինութեանց ամենէն գեղեցիկ եւ ընտիր օրինակներէն մէկն է. ոչ միայն զանոնք զարմանալի եռանդով եւ դիւցազնական անձնանուիրմամբ կկատարէր, հապա նաեւ ուրիշներուն զանոնք սիրելի կընէր, եւ ամենուն սիրտն այն աստուածային բոցով կվառէր, որով ինքն եւս վառեալ էր եւ բորբոքեալ:

Այս մեծանուն հայրապետին կեանքը հանապազօրեայ բարեգործութեանց մարգարտայեռ հիւսուածք մի է: Հայրապետական աթոռը նստելուն պէս ժողովներ ըրաւ, եկեղեցական հարկաւոր ու օգտակար կարգեր կանոններ հաստատեց, ամէն տեղ աղքատանոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ եւ հիւրանոցներ շինեց, դպրոցներ ու վարժատուններ կանգնեց, վանքերուն թիւը շատցուց բարեկարգեց, եւ բոլոր Հայաստանը բարեգործութիւններովն իբրեւ անուշահոտ դրախտ ծաղկեցուց:

Ազգին ու ազգակցացը սիրոյն համար նեղութիւն չկար որ անտանելի երեւար՝ աչքին. գնաց Կոստանդնուպօլիս, որպէս զի վաղէս կայսեր բարկութիւնը իջեցունէ, ու Հայաստանի վերայ ղրկած զօրքը յետս կանչել տայ: Նա արիոսեան լինելով՝ սիրով յանձն կառնու սրբոյն խնդիրքը, բայց կուզէ որ իւր աղանդն ընդունի: Կմերժէ երանելին

անօրէն առաջարկութիւնը, եւ անտի գտնելու օգնութիւնը Աստուծմէ գտնելու հաստատուն յուսով անբնակ կղզի մի կաքսորուի. բայց դոյզն ժամանակէն թէոդոս կայսրն անոր սրբութեանն արժանի պատուով զինքը Հայաստան կդարձունէ: Ներսէսին հետ Հայաստան դարձաւ յաջողութիւն, յաղթութիւն ու հանգստութիւն: Նոր Մովսէսի մի պէս նպատ լերան վերայ ելած՝ անբիծ ձեռուրներն երկինք կվերցունէ, անհաւատից պարտութիւնը կը պաղատի. կյաղթեն Հայք, Պարսիկք միմչեւ Պարսկաստան հալածական կփախչին, եւ Պապ Հոյոց վերայ կթագաւորէ:

Անկարգութիւնը յանդիմանելու համար սուրբ հայրապետին առջեւը թագաւոր, իշխան, ռամիկ չկար. ուստի քանի որ ինքը կենդանի էր, անհնարին էր որ ախտամուլ Պապը կարենար անսանձ համարձակութեամբ իւր ախտերը պաշտել: Մտածեց որ պէտք է անոր ձեռքէն ազատի. իրեն արժանի սոսկալի ոճիր մի գտաւ ու դեղակուր մահուամբ Հայաստանի կենսատու արեգակը խաւարեցոյց, բարեգործ ոգին վերուց:

Հայրապետութեանը քսաներորդ տարին մեռաւ Մեծն Ներսէս (384), այնպիսի անխիղճ, անձնասէր, ազգատեաց իշխանաց եւ առաջնորդաց ձեռքէն Հայոց ազգին վերայ գալու թշուառութիւնները դառնակսկիծ ցաւօք գուշակելով: Իւր մահուան օրն այնպիսի սուգ մտաւ Հայաստան, այնպիսի խոր տխրութեան քօղ մի պայծառ երեսը պատեց, որ յայտնի նշան էր թէ իւր ամենէն պատուական սերելի որդին կորսնցուցեր էր, եւ անոր անգիւտ անդարմանելի կորուստը կողբայր. վասն զի

գիտէր որ Մեծին ներսեսի սքանչելի աստուածա-
հաճոյ առաքինութեանցն, մարդասէր հոգւոյն ու
հայրենասիրութեանն հետեւող յոյժ սակաւամիւ
եկեղեցականներ պիտի գտնուին:

ՎԻՆԿԵՆՏԻՈՍ ՊԱԻԼԱՅԵՅԻ.

Ողորմածութեան եւ բարեգործութեան կողմանէ
Գաղղիացւոց Մեծն ներսէսը կրնայ սեպուիլ Վինկեն-
տիոս Պաւլայեցին (Սէն Վէնսան տը Փօլ). վասն զի
ինքն եւս մեր սուրբ հայրապետին պէս իւր կեանքն ու
ընկերութիւնը, մանաւանդ խեղճերուն բարիք ընելով անցու-
ցած է: Ինքը հաստատած է Քորք գթութեան (սէօր
տը շարիթէ) կոչուած հաւատաւորաց օգտաւէտ
ընկերութիւնը՝ աղքատ հիւանդներ դարմանելու
համար, եւ հիմա այնչափ շատցած են անոնք, որ
Գաղղիոյ ամէն քաղաքներն ու գիւղերը գտնուելէն
յետոյ նաեւ բոլոր աշխարհ կտարածուին: Մինչեւ
իւր ժամանակը չքաւոր ծնողք՝ իրենց որդիքը սը-
նուցանելու կարողութիւն չունենալով՝ զանոնք
փողոցներու մէջ անխնամ կձգէին, ուր շատ ան-
գամ կմեռնէին. ինքը ընկեցիկ մանկանց ապաս-
տանարաններ անունով բնակարաններ հաստատեց
եւ հոն ժողովելով այն անմեղ արարածները կդար-
մանէր հայրաբար. այն ապաստանարաններն եւս
Գաղղիոյ մէջ հետզհետէ բազմացան ու կարգաւո-
րեցան: Ինքն եղաւ նաեւ առաջին որ աղքատ ան-
տերուն ջ ծերերը վերջի օրերնին խեղճութեամբ ու
կարօտութեամբ ջանցունելու համար ծերանոցներ
շինել տուաւ: ՔՄ.ՉԱ.ՆԱՅՔ ՔՄ.ՐՈԶՈՒԹԵԱՆ (փրէ՛մը
տը լա միսիօն) անուամբ միաբանութիւն մի եւս
հաստատեց, որոյ պարտքն էր գեղացւոց ուսմունք

սովրեցուներ, եւ կղերիկոսարաններու մէջ ժողովրդեան ընտիր քահանաներ պատրաստել: Ասոնք են Ղազարոսեանք կամ Ղազարեանք (Ղազարիսթ) կոչուած կրօնաւորներն, որ հիմա Արեւելք եւս շատ տարածուած են:

Երկու հարիւր տարիի չափ է որ մեռաւ Վինկենտիոս, բայց իւր բարեգործութեանց յիշատակաւն անմահ մնաց անունը, եւ ամենուն սիրելի ու յարգելի: Երանի՛ իրեն որ իւր օրինակին բազմաթիւ նախանձաւոր հետեւողներ գտնուեր են իւր ազգին մէջ եւ տակաւին կգտնուին:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Բ.

ՇՈՂՈՔՈՐԹՈՒԹԻՒՆ.

Շողոքորթութիւնն ոստղ (էօքսէ) մի է, ուր անմիտք միայն կբռնուին:

Շողոքորթն յայտնի թշնամիէն աւելի վնասակար է մարդուս:

Շողոքորթութիւնը սուտ ստակ մի է որ մեր ունայնամտութեամբն միայն կանցնի:

Լաւ է յանդիմանութիւն լսել յիմաստնոյն քան թէ յիմարէն գովասանք:

Շողոքորթութիւնը շուքի կնմանի, զբեզ ոչ կմեծցունէ եւ ոչ կփոքրկացունէ:

Թրատ շողոքորթաց.

Տանիմարքացի մեծազօր թագաւորն Քանուկոս՝ որ մեռած է 1036ին, բովանդակ Անգղիոյ տիրապե-

տեր էր, եւ Շուեա եւ նորուէկիա հարկատուք էին նմա. իսկ բոլոր թշնամիքը յաղթուած վիատած եւ կամ իւր կողմն էին անցած: Ժողովուրդն իւր այսչափ մեծագործ քաջութեանը վերայ զարմացած՝ Մեծ պատուանունն տուեր էր իրեն:

Երիկուն մի Քանուկ ծովուն եզերքը մտախոհ նստած, եւ աչքերը հեռուն տանելով կմտածէր, եւ թերեւս մեծութեանց եւ փառաց ունայնութեանը վերայ կխորհէր: Պալատականք չորս կողմն առած՝ շողոքորթութեամբ իրարու կմրցէին՝ իւր ուշադրութիւնն իրենց դարձունելու: Նախ զինքը գերազանց ցուցուցին բոլոր իրմէ առաջ եղած թագաւորաց. եւ իրենց տիրոջ լռութեամբը քաջալերուած տարապայման ներբողնին առաջ տարին եւ զինքը գեր իվերոյ մարդկութեան հռչակեցին: « Քանուկ, ասէին, մարդ չէ, այլ աստուած է: » Իմաստուն թագաւորը լուռ կեցեր մտիկ կընէր:

Սակայն գիշերը կմօտենար, ցուրտ եւ սաստիկ քամի մի կելլէր եւ ծովը կխռովէր. ալիք լեռնաձեւ կդիզուէին, եւ հեռուէն սրընթաց եւ ահեղագոչ կը հասնէին կուգային: Պալատականք սկսան վախնալ: Բայց թագաւորն անխռով կնստէր, ա՛յնպէս գոհ ու զմայլած կերեւցունէր ինքզինքն անոնց իւր անձն Աստուծոյ նմանցնելուն վերայ, որ ոչ ոք կհամարձակէր այն վեհափառ զմայլմունքէն զնա ետ կեցունել: Եւ դարձեալ, իրենք որ մեծ եռանդեամբ գոչեր էին « Այո՛, Քանուկ աստուած մի է », ո՛րպէս կարող էին սակաւ միյետոյ պաղ ու ռամիկ լեզուաւ նմա ասել. « Տէր արքայ, զգուշացիր, ծովն ոտուրներդ կթրջէ:

Այս ներհակակիր տեսարանը քանի մի վայրկեան

տեւեց: Քանուկ կզուարճանար այն մարդեւելուզաց վախէն երեսնուն գոյնը նետելը տեսնելով: Եւ սակայն ալիք մի եկաւ արքային ամոռոյն զարնուեցաւ խորտակեցաւ, եւ փրփուրները պալատականաց վերայ ցատքեցուց, որ սարսափած ետ քաշուեցան: Այլ ժամանակն էր որ տեսարանը բացուէր. Քանուկ իրենց դարձաւ ասաց. « Ի՞նչ կընէք, այն ի՞նչ ընդունայն վախ է որ մտքերնուդ կտիրէ. մի՞թէ ձեզ աստուած մի ընկեր չունի՞ք: » Եւ իսկոյն ձեռքը ծովուն վերայ երկնցնելով գոչեց մեծածայն. « Ալի՛ք, կարգելում ձեզ որ երկրիս չմօտենաք: Գրնացէ՛ք հեռացէք թագաւորուկէնէս: Հնազանդեցէք աստուածասաստ հրամանիս: » Հազիւ թէ խօսքը աւարտեր էր, ուրիշ ալիք մի եկաւ առաջինէն աւելի կատաղի, վրան դիմեց եւ վերէն վար զինքը թրջեց ձգեց: Քանուկ անխռով ելաւ ամոռէն ծով նետեց զայն, եւ իւր ամօթապարտ պալատականացն ասաց. « Պիտի համարձակի՞ք այլ եւս երկրաւոր թագաւորի մի զօրութիւնն համեմատելու այն գերագոյն էակին ամենակարող զօրութեանն որ տարերաց տէր է եւ իշխեցող: Պիտի համարձակի՞ք այլ եւս համեմատելու խեղճ ողորմելի մահկանացուն նմա որ միայն կարող է ասել Ովկիանոսին՝ Մինչեւ հոն պիտի երթաս եւ ոչ աւելի: »

Պատժուած շողոքորթ.

Սիրակուսա՛ Սիկիլիոյ մէջ հարուստ ու զօրաւոր քաղաք էր: Դիոնեսիոս բռնաւորն անոր տիրեց, շատ անգթութիւններ ըրաւ, եւ Քրիստոսէ 363 տարի առաջ մեռաւ: Օր մը Դիոնեսիոսի պալատա-

կանաց մէկը Դամոկղէս՝ մեծամեծ գովեստներով կբարձրացունէր բռնաւորին մեծափարթամ հարստութիւնը, զինուորաց թիւն ու զօրութիւնը, իշխանութեանն ընդարձակութիւնն ու պալատացը հրաշակերտ շքեղութիւնը, եւ կհետեւեցունէր թէ աշխարհիս վերայ իրեն պէս երջանիկ մարդ չէ եղած: « Լաւ է ուրեմն, որովհետեւ այս ամէն բաները քեզ այնչափ գեղեցիկ ու զարմանալի կերեւան, կասէ Դիոնեսիոս, կուզե՞ս փոքր մի անոնց համն առնուլ, իմանալ իմ վիճակս: » Ամենայն ուրախութեամբ կհաւանի Դամոկղէս, եւ շուտ մը ականակուռ ամոռի վերայ զինքը կնստեցունեն, թագաւորավայել պերճութեամբ կզարդարեն, քաղցրանուագ երգեր եւ երաժշտութիւններ առջեւը կանցնին. չորս կողմը ծաղկունք սփռած, ամէն դիէն քաղցրաբոյր հոտեր կծաւալին. առջեւը կդնեն համադամ կերակրօք եւ ազնիւ գինեօք զարդարեալ սեղան. եւ գունդագունդ սպասաւորք ամենայն ակնածութեամբ եւ արքայակերպ պատուով նմա կծառայեն: Այլ Դամոկղէսին ուրախութիւնը տեսնելո՛ւ էր:

Բայց այն բերկրապատար ցնծութեանը մէջ աչքը վեր որ կվերցունէ՝ կտեսնէ որ գլխուն վերայ ոսկեձեղուն յարկէն մազով մի միայն սուսեր պողովատիկ կախուեր է: Մէկէն աչքը կմթննայ, այլ աչքին չերեւնար այն չորս կողմը պատած նշուլագեղ սլայծառութիւնը. քաղցրածայն երգերն ու նուագարաններն իրենց անուշութիւնը կկորսնցունեն. ախորժակը՝ կգոցուի, եւ այն համադամ կերակրոց եւ ազնիւ գինեաց եւ ոչ համն առնուլ կուզէ: Երեսին գոյնը կնետէ, թեփ դեղին կդառնայ,

բոլոր մարմինը կդողայ, եւ անդադար աչքը վեր կվերցունէ կնայի վախէն որ չըլլայ թէ սուրը գլխուն իյնայ: Դիոնեսիոս որ ծածուկ կեցեր կդիտէր, քովը կուգայ եւ տխուր դէմքով մը « Է՛յ ի՛նչպէս, վիճակիս համն առի՞ր. բաւակա՞ն է եթէ աւելի կուզես վայելել » կասէ: — Բաւակա՞ն է բաւակա՞ն է » կկանչէ պալատականը խղդուկ ձայնով մը, եւ հրբաման կխնդրէ որ ելլէ այն նստած փառաւոր՝ բայց եւ վտանգալից ամոռէն:

Տարակոյս չկայ որ անիրաւ ճամբաներով այնպիսի բարձր տեղեր ելլողներն անդադար պէտք է վախի մէջ լինին իրենց արժանաւոր պատուհասին սպասելով. այն պատուհասը գլխուներուն վերայ կախուածի պէս է, եւ կրնայ ամէն վայրկեան իյնալ զիրենք ջախջախել: Երբոր մարդ այսպիսի վախով վրդոված է, զուարճութիւն մի չկայ որուն համը կարողանայ առնուլ. մեծութիւն մի չկայ որ աչքին երեւայ. եւ զայն կուզէր Դիոնեսիոս շողոքորթ Դամոկղեսին հասկացունել՝ գլխուն վերայ թել մի ձիու մազով այն սոսկալի սուրը կախելով:

Մեծն Աղեքսանդր եւ իւրդաստիարակն Արիստոտէլ.

Քանի որ մեծն Աղեքսանդր իւր իմաստուն դաստիարակն Արիստոտէլի խրատներովն կվարուէր, ազատամիտ էր, մեծախորհուրդ եւ վեհանձն. « Ո՛րչափ երջանիկ լինէի ասէր, թէ որ կարէի մահուանէս քանի մի տարի յետոյ յարութիւն առնուլ եւ տեսնել թէ վրաս ի՛նչ կխօսին: Հիմա զարմանք չէ որ ամէնքը զիս գովեն. վասն զի ոմանք կվախնան, եւ ոմանք կյուսան: » Եփրատէն անցնելու ժամանակ

իւր պատմագիրն Արիստոբուլոս սկսաւ կարդալ Հնդկաստան ըրած արշաւանքը . եւ որովհետեւ մէջը սուտ քաներ եւս խառնած էր, Աղեքսանդր քաշեց ձեռքէն առաւ զայն ու պատուելով գետը նետեց եւ ասաց . « Արժանի՛ ես որ գրուածքդ այսպէս պատառուի, որովհետեւ համարձակեցար շինծու քաջութիւններ տալ Աղեքսանդրի : » — Օր մը վիրաւորուելով դարձաւ ասաց իւր պալատականացն որ աստուծոյ պէս հետը կվարուէին . « Տեսէք, երակներէս վազածն արի՛ւն է, անմահից աւիշ չէ : »

ԸՆԹԵՐՑՈՒՄԾ Գ.

Պաշտօնն զմարդ պիտի չփառաւորէ, այլ մարդս զպաշտօնը պիտի փառաւորէ.

Եպամինոնդ Թեբացի զօրավարն, որ իւր քաջութեամբն ու անշահասիրութեամբը հռչակուած էր ընդ ամենայն Յունաստան, մեռաւ Քրիստոսէ 363 տարի յառաջ : Ասոր Թշնամիքն ուզելով զինքը մահացունել, փողոցներու մաքրութեանը վերակացու դնել տուին : Բայց այն չարասէրք իրենց վախճանին չհասան . վասն զի հայրենասէրն եպամինոնդ միտքը դնելով որ հայրենեաց համար եղած ամէն պաշտօն լաւ ու փառաւոր է, ամենայն փութով ու մտադրութեամբ կատարեց զայն . այնպէս որ մինչեւ իւր Թշնամիքն ստիպուեցան ասելու . « Եպամինոնդ ցուցուծ իւր օրինակաւն որ պաշտօնն չէ զմարդ փառաւորողը, այլ մարդն է զպաշտօնը փառաւորողը : »

Արդարասիրութիւն եօթնամեայ մանկան.

Բարսեղ աղբարը Թէպէտ աղքատ գեղացի մի էր, սակայն ազնիւ սիրտ ունէր, եւ չէր ուզեր մէկուն վնաս հասցունել: Իւր դրացւոյն փոքր մի պարտք ունէր. տեսնելով որ պիտի չկարենայ փափաքածին չափ շուտով վճարել զայն, առաջարկեց նմա որ ստակի տեղ՝ իւր հաւերը տայ. եւ դրացին ընդունեցաւ առաջարկութիւնը:

Հաւերը դրացւոյն տունը տարուեցան. քայց որովհետեւ դռները գոցուած չէին, երկրորդ օրն հաւկիթ ածելու ժամանակնին որ եկաւ՝ գնացին Բարսեղին տունն իրենց առաջին հաւնոցին մէջ հաւկիթնին ածեցին:

Բարսեղին եօթնամեայ թովմաս որդին միայն տունն էր: Երբոր իւր սիրելի հաւերուն գոգուալուն ձայնն առաւ, վազեց հաւնոցը գնաց, եւ յարդերուն տակը փնտռեց գտաւ նոր ածուած տաքուկ հաւկիթներն, եւ ուրախութեամբ ձեռքերն իրարու շփելով « Ո՛հ ո՛հ, ասէր ինքնիրեն, ասիաքեզ թովմաս Թարմ հաւկիթներ զոր այնչափ կսիրես. մայրս գայ նէ զանոնք պիտի տեսնէ եւ ո՛վ գիտէ ո՛րչափ պիտի ուրախանայ. կեփէ ու լաւ մը կուտեմք: » Այս խօսքին վերայ փոքր մի կմտածէ թովմաս, եւ կյաւելու. « Բայց կրնա՞մք այս հաւկիթները պահել. միթէ մեր խեղճ հաւերուն պէս իրենք եւս դրացւոյն չե՞ն: Անցեալ օր դպրոցին մէջ սովորեցայ որ երբոր մարդ բան մը գտնէ, զտէրն իմանալուն պէս՝ մէկէն պէտք է անոր դարձունէ զայն: Ուրմեն եւ ոչ ծնողացս գալուն կսպասեմ, եւ հաւ-

կի՞թները կտանիմ տիրոջը կուտամ: » Եւ յիրաւի, իսկոյն գնաց դրացւոյն դուռը զարկաւ. ներս մըտնելով « Ա.հա ձեզ հաւկի՞թներ բերի, ասաց. հաւերնիդ մեր հաւնոցին մէջ ածեր էին: — Եւ ո՞վ զրկեց զանոնք հոս, հարցուց դրացին: — Ոչ ոք: — Ի՛նչ, առանց մէկուն ասելուն դուն քեզմէ՛ կբերես այս հաւկի՞թներն: — Այո՛, առանց մէկուն ասելուն. հայրս ու մայրս տուն չեն. քրի ի՛նչ որ անշուշտ պիտի ասէին որ ընեմ: — Եւ ինչո՞ւ համար անոնց տուն դառնալուն չսպասեցիր: — Վասն զի կէսօրը պիտի դառնան. եւ տեսնելով որ մինչեւ այն ժամանակ հաւկի՞թներն չեն գար, կրնայիր ծնողացս եւ իմ վրաս վատ կարծիք ունենալ: »

Զարմացաւ դրացին այս եօթնամեայ մանկան արդարախոհութեանը վերայ, գրկեց պագաւ զնա, ու ոչ միայն բոլոր այն բերած հաւկի՞թներն նմա ընծայ ըրաւ, այլ եւ երկու գրպանները պըտղով լեցուց: Եւ թովմաս լաւ գործ մի ընելուն եւ անով պտուղ ձեռք ձգելուն վերայ սաստիկ ուրախացած՝ ցատքտելով տուն դարձաւ, մանաւանդ որ պտուղ շատ կսիրէր եւ շատոնց չէր կերած: Ծրնողքն եւս եղածն իմացան, եւ զինքը պագին գովեցին:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Դ.

ԱՌԱԾՔ, ԽՐԱՏՔ, ԱՌԱԿՔ.

Ամէն խելացի բան մարդս պէտք է միտքը պահէ եւ յօգուտ իւր գործածէ զայն. բայց կան նաեւ այնպիսի խելացի՝ բարոյական ու գեղեցիկ առածներ կամ խօսքեր, զորս ոչ միայն պէտք է միտքը լոկ պահէ, այլ եւ մտքին ու սրտին մէջ անջինջ դրոշմէ տպաւորէ, եւ բոլոր կեանքը զանոնք բռնէ իրեն անմոլար առաջնորդ: Մասնաւոր ուշադրութեամբ կարդացէք ուրեմն ամէն անգամ որ այսպիսի առածներ, առակներ ու խրատներ տեսնէք:

1. Սկիզբն իմաստութեան երկիւղ ճեառն:
2. Հանգիստ սիրտ ունենալու համար մաքուր խղճմտանք պէտք է:
3. Աստուծոյ ամէն բան տեսնելուն հաւատացող մարդն ոչ ծածուկ եւ ոչ հրապարակաւ կմեղանչէ:
4. Խեղճերուն օգնէ որպէս զի Աստուած-եւս քեզ օգնէ:
5. Աստուած ասաց մարդուս. Յօգնէ դուն քեզ որպէս զի ես եւս քեզ օգնեմ:
6. Ծոյլը կուզէ նուշն ուտել, բայց կճեպը կոտրելու աշխատանքէն կփախչի:
7. Մի՛ ասէր « Զայս վաղը կընեմ. » վասն զի եղածըն ըլլալիքէն լաւագոյն է:
8. Խարտոցելով (էյէլէմէք) երկաթի գաւազանն ասեղ լինի: Այսպէս նաեւ համբերութեամբ ու երկայնամտութեամբ ամէն դժուարին երեւցած բան:

9. Գժուարին բան չկայ որում կարող չլինի յաղ-
թել յարատել աշխատանքը :

10. Պարտեզդ ջրելու համար անձրեւի մի' սպա-
սեր :

11. Ծուլութիւնն ու անգործութիւնը դուռն են
ել բանալի աղքատութեան :

12. Թէ որ չես ուզեր որ բան մի գիտցուի' մ'ըներ :

13. Թէ որ գինովութեան դէմ դեղ կուզես' գինո-
վի մը նայէ :

14. Ադամանդն ու պատուական քարերը գին ու-
նին, բարի խրատք գին չունին :

15. Մարդս չգիտցածն հարցանելու պէտք չէ
ամաչէ :

16. Նախ հասկացիր ու յետոյ խօսէ :

17. Գէշ վերքը կառողջանայ, գէշ համբաւը չա-
ռողջանար, չշտկուիր :

18. Ամէն տեսակ վէճ եւ կռիւ վաղուան թող եւ
շահով կելլես :

19. Բարկութեանդ ելած ժամանակ ո'չ դատաս-
տան կտրէ եւ ոչ պատիժ տուր. անով շատ անի-
րաւութենէ կազատիս :

20. Ուրիշներուն քաշածը դիտէ քննէ, եւ քոյդ
քեզ թեթեւ կերեւայ :

21. Ոչ աղքատութեամբդ նուաստացիր, եւ ոչ հա-
րստութեամբդ հպարտացիր :

22. Այլոց ամէն բան ներէ, իսկ քեզ' եւ ոչ մի
բան :

23. Լաւ մեռնիլ ուզողը պէտք է լաւ ապրի :

24. Քունն ու կերակուրը կարելի է վաղուան ձգել.
պատեհութիւնն ու ժամանակն ոչ երբէք :

25. Միշտ պատրաստ եղիր :

26. Եթէ փողերդ (փարա) լաւ պահես, ոսկիներդ իրենք իրենցմէ կպահուին :

27. Աշխատանքի համար երբէք մի' տնտրնար. ձեռուրներդ աշխատանքի վարժեցուր. հանգստութիւն սիրող կատուն մուկ չկրնար բռնել :

28. Գոց ձեռքով ճանչ անգամ չբռնուիր :

29. Նաեւ ամենափոքր բաները կրցածիդ չափ լաւ ըրէ :

30. Ախտ կամ մոլուկութիւն մի կշտացնելու աւելի ստակ կերթայ քան թէ երկու զաւակ սնուցանելու :

31. Թեթեւ շահեր քսակը կծանրացունեն. իսկ մեծ շահեր սակաւագիւտ են :

32. Ով որ կուզէ մէկ տարուան մէջ մեծ հարստութիւն դիզել, վեց ամիս չքշած բանտ երթալն աչք առնելու է :

33. Կաթիլ կաթիլ վազող ջուրը քարը կփորէ, եւ կրկնուած թեթեւ հարուածներով քարձրաքերծ կաղնիներ վար կառնուին :

34. Եթէ խանութդ աղէկ պահես, խանութդ եւս զքեզ աղէկ կպահէ :

35. Մարդավար ու անոյշ կերպերը մշտախօս յանձնարարական նամակներ են :

36. Անոյշ խօսքերը վաճառականին բերանը չեն մաշեցներ. եւ հաճոյացած ապրանքը կէս մը վաճառուած է :

37. Սիրելի վաճառականին վաճառքը շուտով կը քշուի :

38. Կամիլն ու կարող լինելն մէկ է. ո'վ որ երկայնմտութիւն ունի, յաջողելուն չտարակուսի :

39. Ուրիշի պնակին սպասողը շատ անգամ անօթի մնալն աչք առնելու է :

40. Մարդիկ ունեցած բաներուն յարգը ամենեւին չեն գիտեր. առողջութիւնն ու ազատութիւնը վայելած ժամանակնին աչքերնուն չերեւար. բայց երբոր զանոնք կկորսնցունեն՝ այն ժամանակ կիմանան անոնց յարգն ու արժէքը, եւ զանոնք նորէն ձեռք բերելու համար շատ անգամ մինչեւ բոլոր ունեցածնին կուզեն տալ, բայց անօգուտ :

ԸՆԹԵՐՑՈՒՍԾ Ե.

Հաւատարմութիւն խոստման.

Գաղղիոյ հռչակաւոր եւ առաքինի զօրավարներէն մէկն է Թիւրէն, որ 1675ին մեռած է : Գիշեր մի Փարիզ դառնու ժամանակ գողեր կառքին վերայ կվազեն կկեցունեն, վրայի ստակն կառնուն, ձեռքի մատանին եւս կուզեն առնուլ. եւ որովհետեւ իրեն սիրելի յիշատակ մի էր այն, կխոստանայ նոցա հարիւր ոսկի տալ եթէ զայն իրեն Թողուն : Երկրորդօրը գողերէն ամենէն աներկիւղը կերթայ տունը, եւ բազմութեան մէջ իրեն մօտենալով ականջէն վար կյիշեցունէ իւր խոստման կատարումը : Մէկէն կհանէ կուտայ Թիւրէն խոստացած հարիւր ոսկին. եւ մէկուն բան չասեր մինչեւ որ գողը բաւական ժամանակ կունենայ աներեւոյթ լինելու : Յայնժամ կպատմէ գլխուն եկած դիպուածն ու կասէ. « Արդարասէր մարդուն խոստումն անլուծանելի է. ոչ երբէք խօսքին դէմ պիտի ընէ՝ եւ գողերու տուած լինի այն խօսքն : »

Ոսկի ժամացոյց.

Մարկոս, որ աղքատ ուսանող մի էր, հանգստեան ժամանակ իւր քաղաքն երթալով հարկ լինի որ գիշերը ջաղացքի մի մէջ անցունէ : Կէս գիշերուն կարթննայ եւ պառկած տեղը դէպի պատը թըք թաք թըք թաք ձայն մի կլսէ : Կելլէ կնստի, չորս կողմը կնայի, եւ լուսնի լուսով կտեսնէ որ պատէն ժամացոյց մի կախուած է :

Սիրտը սաստիկ փափաք կուգայ որ ժամացոյցն առնու, պատուհանէն փախչի երթայ : Բայց անդիէն խղճմտանքն եւս անդադար իրեն կյիշեցունէ Աստուծոյ այս պատուիրանը. — Մի՛ գողանար :

Սակայն այն գեղեցիկ ժամացոյցն առնելու փափաքն եւս երթալով սրտին մէջ կաճէր : Մարկոս մեղաց այս փորձութենէն ազատելու համար յանկարծ կելլէ, պատուհանէն դուրս կցատքէ եւ արտերուն մէջ կզարնէ կհեռանայ :

Հարիւր քայլի չափ որ յառաջ կերթայ, ժամացոյցն չառնելուն վերայ կզղջայ եւ կուզէ ջաղացքը դառնալ առնուլ : Բայց երկրորդ անգամ կպռռայ խղճմտանքը. — Մի՛ գողանար :

Մտիկ կընէ Մարկոս խղճմտանքին երկրորդ ազդարարութեանն, եւ դաշտին մէջէն ճամբան կըշարունակէ :

Նատ ջանցնիր լուսինը կմտնէ, եւ սաստիկ գիշեր կկոխէ : Մարկոս չտեսնելով մացառոտ ճահիճի մի մէջ կմտնէ. անտանելի աշխատնքէն յետոյ հազիւ կրնայ մէջէն ազատիլ ու բարձր տեղ մի ելլել. հոն յոգնած, հոգին բերանն եկած գետին

կիյնայ, եւ շուտով քունը կտանի, խորունկ կքնանայ : Լուսնալու ժամանակ սոսկալի ձայներով կարթննայ, եւ աչքն որ կքանայ՝ կսոսկայ կսարսափի, ահու գողու մէջ կիյնայ :

Եւ յիրաւի, սարսափելու բան էր. վասն զի Մարկոս կախաղանի տակ պառկեր էր, եւ գլխուն վերայ կախուած էր գողի մի մարմինը, եւ չորս կողմը ժողոված ագռաւք սոսկալի կռիչք կարծակէին. անոնց այն ահուելի ձայնէն արթնցեր էր : Նոյն վայրկենին խեղճ ուսանողը սրտին խորէն ձայն մի կլսէ որ իրեն կասէր. — Տեսածէդ խրատուէ՛ : Սա ողորմելոյն թշուառ բաղդին պիտի հանդիպէիր թէ որ գողնալու սկսէիր :

Իսկոյն ծունկ կչոքի Մարկոս, շնորհակալ լինի Աստուծոյ որ զինքն այն փորձութենէն ազատեց, եւ կխոստանայ որ այնուհետեւ ամէն տեսակ գողութեան փորձութիւնն իբրեւ ոխերիմ թշնամի իւր կենացը՝ հալածէ իրմէն հեռացունէ :

Հայաւայել պատասխան.

Եբքոր Պարսից Տուղրիլ Թագաւորն Հայաստան արշաւեց, մեր Հայ նախարարներէն ոմանք կարուց Գագիկ Թագաւորին հետ միաբանեցան եւ անոր դէմ ելան : Ասոնց մէջ էր նաեւ Վանանդացի Թաթուլ քաջ իշխանն, որ նախարարաց շատերուն իյնալէն յետոյ գերի բռնուեցաւ ու Տուղրիլին տարուեցաւ : Պատերազմին մէջ Թաթուլ զարկեր չարաչար վիրաւորեր էր Արսուրան Պարսիկ իշխանին որդին, որ Տուղրիլին սիրելին էր : Ասաց նմա Տուղրիլ. « Եթէ պատանին առողջանայ՝ զքեզ կա-

զատեմ. իսկ եթէ մեռնի՝ գրեզ անոր զոհ կընեմ: —
 Եթէ իմ է հարուածն՝ չէ կենաց, այսինքն եթէ զար-
 նուածքն իմս է՝ չապրիր » պատասխանեց աներ-
 կիւղ Վանանդացին: Շատ ջանցաւ՝ պատանին մե-
 ռաւ. Տուղրիլ փոխանակ այնպիսի քաջ մը քովը
 պահելու՝ վայրենամիտ խոստմունքը վրան կատա-
 րեց, զինքը մեռցունելտուաւ, եւ աջ թեւը կտրեց
 Սրսուրանին դրկեց ասելով « Որդիդ վատ բազկէ
 մեռած չէ: »

ԸՆԹԵՐՅՈՒՄԹ Զ.

Քաղցրութիւն.

Քաղցրութիւնը մեծուծեան զարդն է:

Անոյշ պատասխանը բարկութիւնը կիջեցունէ.
 իսկ խիստը կաստկացունէ:

Իրմէ վարիններուն խստութեամբ հրամայողն՝
 ինքն եւս իրեն խիստ հրամայող մի կգտնէ:

Խոնարհամտութիւն եւ մարդավարութիւն.

Իշխանին մէկը փողոցը կեցեր հարուստ վաճա-
 ռականի մի հետ կխօսէր. սեւ (արապ) մի քւվէն
 անցնելու ժամանակ իրեն բարեւ կուտայ. ինքն եւս
 զայն կբարեւէ: Վաճառականն իշխանին այսչափ
 խոնարհելուն վերայ գայթակղած, « Ս,յս հրամանքդ
 սեւի մի բարեւ կուտաս, կասէ: — Տարակոյս չկայ

Պարոն, կպատասխանէ իշխանը. շատ կցաւէի թէոր սեւ մի քան զիս մարդավար գտնուէր » :

Քաջ պատասխանիք.

Կաղ Սպարտացի մը պատերազմի կերթար. մէկը մէկալն կսկսին ասել թէ այն ձախող վիճակի մէջ երթայ ի՞նչ պիտի ընէ : Քաջ Սպարտացին կդառնայ նոցա « Իմ միտքս փախչիլ չէ, կասէ, այլ կենալ պատերազմիլ է : »

Լեւոնիդաս Պարսից դէմ պատերազմելու պատրաստուած ժամանակ զօրացը մէջէն մէկը կուգայ կասէ իրեն որ թշնամիք այնչափ քազմաթիւ են որ եթէ նետ նետեն՝ արեւը կխաւարի : « Սւելի լաւ, կպատասխանէ աներկիւղն Լեւոնիդաս, շուքի մէջ կպատերազմիմք » :

Արեւ.

Երիկուն մուտ կոխած ժամանակ ժրագլուխ գեղացի կին մի իւր երկու զաւակօքն արտէն կը դառնար, ուր հետերնին բոլոր օրը աշխատեր էր : Երբոր տուն կմտնեն ու սեղանի վերայ վառած կանթեղ մի կտեսնեն՝ շատ կզարմանան :

Անտոն ապշած կկանչէր.

— Այս ի՞նչպէս լինի : Տունը մարդ չկար. այս կանթեղն ո՞վ վառեց :

— Անշուշտ հայրենիս վառած է կկանչէ Մարիամիկ. քաղաքէն դարձած պիտի լինի, ուր մեր արտն աշխատած ժամանակը գնացեր էր :

Եւ իսկոյն քոյր եւ եղբայր կսկսին վեր վար հայրերնին փնտռել. եւ ի՛նչ մեծ կլինի ուրախութիւննին երբոր զինքը վերի սենեակը նստած կգտնեն :

Երկրորդ օրը հայրն, մայրն եւ որդիք կերթան դաշտը հնձած ու չորցած խոտը դիզելու : Գլուխներնուն վերայ արեւը գեղապայծառ կփայլէր, եւ տղայք ուրախ զուարթ կցատքտէին : Յայնժամ

— Որդեակք իմ, ասաց նոցա հայրերնին, երէկ դիւրաւ գուշակեցիք թէ ես էի մեր սենեկին մէջ կանթեղն վառողը : Արդ մեր գլխոյն վերայ վառած այն գեղանշոյլ լոյսն որ կտեսնէք որ է արեւը, չէ՞ք կրնար գուշակել թէ ո՞վ զայն վառած է :

— Ո՛հ այո՛, պատասխանեց Մարիամիկ, Աստուած է զայն վառողը : Նաեւ փոքրիկ կանթեղ մի ինքն իրեն չվառուիր, ո՛ւր մնաց լուսապայծառ արեւը. ուրեմն զինքն եւս վառող մի կայ :

— Ճշմարիտ է, կանչեց Անտոն ուրախութեամբ : Ամէն բանի արարիչ Աստուած է : Արեւ, լուսին, աստեղք, խոտ, ծաղկունք, ծառք, եւ մէկ խօսքով ի՛նչ որ շորս կողմերնիս կտեսնեմք, իւր ձեռաց գործ են :

Հրավառ արեգին լուսագեղ շողիւն

ԶԱրարչին պատմէ զահեղ զօրութիւն :

Քաջասրտութիւն.

Զինուորին մէկը պատերազմի մէջ գնտակով մի ծունկին կզարնուի ու անկելանոցը կտարուի. վիրաբոյժք անդադար վէրքը կխառնեն, որպէս զի մէջէն գնտակն հանեն ու չեն կրնար գտնել :

Խեղճ զինուորն այլ ցաւին չկարելով դիմանալ.

— Ի՞նչ կփնտռէք, կասէ :

— Գնտակը կփնտռեմք, կպատասխանեն :

— Թէ որ այդ էր փնտռածնիդ, ինչո՞ւ մինչեւ ցարդ չասացիք. գրպանս է, կկանչէ քաջասրտութեամբ :

ԸՆԹԵՐՅՈՒՍԹ Է.

ՍԵՐ ՓԱՌԱՅ.

Փառքն ոչ արդիւնք է եւ ոչ առաքինութիւն, այլ վարձք նոցա : Ուրեմն փառաց սէրը կարող է զմեզ յորդորել աշխատանքի ու առաքինութեան, եւ շատ անգամ զմեզ պատուաւոր ընել անդադար պատիւ գտնելու փափաքն սրտերնուս մէջ վառելով : Փառաց սէրն է որ կհրամայէ մեզ արհամարհել զհանդիստ, դիմագրաւ լինել վտանգաց, արգելքներու հետ պատերազմիլ. իրմով է որ կգործուին արուժիւնք քաջութեանց, եւ իրմով է որ կստացուի անուն եւ համբաւ : Ս.մենայն մարդիկ փառք կսիրեն. չսիրել երեւցողներն իսկ չեն կարող եւ ոչ մէկ հոգւոյ անպատուութիւնն անտարբեր աչքով տեսնել : Ս.մէն մարդ պէտք է փառք սիրէ, եւ փառք վաստկելու համար աշխատի. բայց վերը զրուցածնիս եւս պէտք չէ երբէք մտքէն հանէ, որ փափաքած փառքն պիտի լինի իւր արդեանցն ու առաքինութեանը վարձք. ուստի ուրիշին վնասովը ստացուած փառքը փառք չէ մարդուս, այլ նախատինք : Ուրեմն երկու տեսակ է փառասիրութիւնը,

գովելի եւ եպերելի. գովելի փառասիրուծիւնն ամէն մարդ հարկ է ունենայ, վասն զի առանց անոր մեծ ու նշանաւոր բան չէ կարող ընել. իսկ եպերելի փառասիրուծենէն պէտք է փախչի :

Թեմիստոկղէս, անուանի յոյն ճարտասանն ու զօրավարը, երիտասարդուծեան ժամանակ գինի ու անառակուծիւն միայն կսիրէր. բայց երբոր Միլտիադէս զօրագլուխը Մարաթոնի փառաւոր յաղթուծիւնն ըրաւ, եւ նմա տրուած ծափածայն գովուծիւնները լսեց Թեմիստոկղ, սրտին մէջ փառաց այնպիսի սէր մի վառեցաւ, որ բոցածաւալ կրակի պէս զինքը գիշեր ցորեկ կայրէր կմրկէր. եւ շատ անգամ կասէր իւր բարեկամացը. « Յաղթուծիւնք Միլտիադէայ չեն Թողուր որ քնանամ : » եւ ահա այն գովելի փառասիրուծեամբ վառուած աշխատեցաւ ու հասաւ Թեմիստոկղ մեծամեծ փառաց :

Սպարտայի Թագաւորաց մէկն պատերազմի չըսկսած ուզեց ուծսնամեայ ծերմը մահուան վտանգէն ազատել, եւ ասաց նմա որ դառնայ Սպարտա երթայ. « Արքայ, պատասխանեց վսեմախոհ ծերունին, շատ հեռուն կղրկես զիս մեռնելու համար անկողին մի փնտռելու : Այս պատերազմի դաշտէն աւելի պատուաւոր անկողին ո՞ւր կրնամ գտնել : » Թող տուաւ Թագաւորն որ կենայ. քաջ ծերունին բոլոր ոյժը ժողովեց եւ հայրենեացը համար պատերազմելով մեռաւ փառօք :

Պզտիկուց ցուցուց Մեծն Աղեքսանդր Թէ ի՞նչ

մեծ ազդեցութիւն ունէր վրան փառաց սէրը : Անդադար իւր հօրը Փիլիպպոսին յաղթութեանց գովեստները լսելով օր մի խաղալու ժամանակ զրուցեր է իւր հասակակցացն. « Այս ի՞նչ է, հայրս ինձ ընելու բան պիտի չթողու : » եւ երբոր իրեն պատասխան տուեր են. « Ըրած աշխարհակալութիւնները պիտի թողու. » Ինչո՛ւս պէտք է, կրկներ է, ժառանգութեամբ մեծամեծ տէրութիւններ ձեռք ձգել՝ թէ որ կարող չլինիմ ինքզինքս հօրս արժանի պատերազմող ցուցանել : » երբոր յաղթութենէ յաղթութիւն անցանելով հասաւ մինչեւ Ովկիանու ծովափունքը, Անաքսարքոս փիլիսոփայն որ հետը կատրտէր, ասաց նմա որ իւր Դեմոկրիտէս վարժապետն զրուցեր էր թէ տիեզերաց մէջ անթիւ աշխարհք կան. « Բա՛րէ, գոչեց յաղթողն Ասիոյ՝ քանի մի կաթիլ արցունք եւս թափելով, լալու իրաւունք ունիմ, որովհետեւ այն անթիւ անհամար աշխարհաց մէջէն դեռ մէկ հատը միայն նուաճեցի ես : »

Յուլիոս Կեսար Սպանիոյ գանձապետ եղած ժամանակը Քատիչէ քաղաքին մէջ Մեծին Աղեքսանդրի արձանը կտեանէ ու իխորոց սրտէ կհառաչէ՝ մտածելով որ այն դիւցազնը իւր հասակն ունեցած ժամանակն Ասիոյ տիրապետեր էր, մինչդեռ ինքն տակաւին փառաց արժանի բան չէր ըրած :

Կարոլոս ԺԲ, Շուետի թագաւորը, տղակուց կրթարգմանէր Մեծին Աղեքսանդրի վարքն ու անտի կառնուր այն դիւցազնութեան ոգին, զոր յետոյ իգործ դրաւ : Յր մի իւր դաստիարակին յայտնեց Ասիոյ աշխարհակալին նմանելու փափաքն. եւ եր-

բոր պատասխան առաւ թէ նորա կեանքը շատ կարճ եղաւ, պատասխան տուաւ զարմացմամբ. « Մի՛թէ բաւական երկայն չէ՞ք համարիր այն կեանքն որ այնչափ թագաւորութեանց տիրելու իրեն բաւեց : »

Ամենէն գեղեցիկ ծաղկերն եր.

Ծաղկած վարդենւոյ մի առջեւ կեցաւ բարեկիրթ եւ ուշիմ Առաքել, եւ քոյրերուն ասաց.

— Ամենէն գեղեցիկ ծաղիկն վարդն է :

— Սա ածուին մէջ բուսած շուշանն եւս վարդէն վար չմնար գեղեցկութեամբ, պատասխանեց երանուհին : Այս երկուքը ծաղկանց մէջ ամենէն գեղեցիկները կհամարիմ. չկայ ծաղիկ մի որ նոցա կարենայ հաւասարիլ :

Անդիէն նունէն « Զըլլայ թէ զրուցեց, սիրուն մանուշակն վար զարնէք. մտքերնիդ բերէք որ փարնան բերանն ո՛րչափ զմեզ զուարճացուց :

Մայրերնին որ խելացի տիկին մի էր, եւ որդւոցը խօսակցութիւնն մտիկ ըրեր էր, ասաց նոցա.

— Որդեակք իմ, այս ձեր սիրած ու հաւնած երեք տեսակ ծաղիկներն երեք գեղեցիկ առաքինութեանց օրինակ են : Պարկէշտագեղ մանուշակն օրինակ է պարկէշտութեան. ձիւնափայլ շուշանն անմեղութեան օրինակ է. իսկ այս կարմրագեղ վարդը կարծես թէ բերան ունի ու ձեզի կզրուցէ. « Մանկունք, Աստուծոյ, մարդկանց ու ամէն լաւ բանի սիրովը սրտերնիդ վառի բորբոքի. վասն զի այս սէրն է միայն ճշմարիտ բարիք : »

Մանկական տիպոց ծաղկունք հրաշագեղ
Բարք հեզահամբոյր եւ վարք են անմեղ :

Բառականութիւն.

Մենեղեմոսյոյն փիլիսոփայն Քրիստոսէ երեք հարիւր տարի առաջ էր : Յը մը երբոր իրեն ըսին. « Մեծ երջանկութիւն է մարդուս իւր փափաքածն ունենալը : — Մեծագոյն երջանկութիւնն է որ գիտնայ մարդ ունեցածովը գոհ լինել » պատասխանեց, եւ իրաւունք ունէր :

Իւր վիճակէն գոհ եղող տղայ.

Միքայէլ անունով դեռահասակ հովիւը լեռները կտանէր կարածէր իւր հօտը : Յը մի ոչխարներէն մէկը կիրճերու մէջ թաւուտ անտառ մի փախչելով ետեւէն գնաց բռնելու, եւ տեսաւ որ հոն մորենւոյն տակ մարդ մի պառկեր է : Սաստիկ յոգնած կերեւար եւ հազիւ շունչ կառնուր . եւ իրեն դառնալով ,

« Հովուի՛կ, ասաց, անօթութենէ ու ծարաւէ կմեռնիմ : Երէկ այս վայրենի լեռն եկայ որսի, ճամբաս կորսնցուցի, անտառներու մէջ գիշերն անցուցի, եւ արդ անօթութենէս ու ծարաւէս կմեռնիմ : »

Միքայէլ կողովոյն մէջէն թարմ հայ ու պանիր հանեց տուաւ նմա եւ ասաց. « Կե՛ր եւ ետեւէս եկուր. հինաւուրց կաղնւոյ մի տակ տանիմ զքեզ, ուր միշտ բարեհամ ջուր կայ : »

Որսորդն կերաւ, ոչի առաւ, աչուրները բացաւ, ելաւ Յովհաննեսին ետեւէն գնաց, ջրէն խմեց եւ քան զամենայն ըմպելիս քաղցրահամ գտաւ զայն : Յետոյ Միքայէլ զինքը լեռնէն դուրս հանեց :

Յայնժամ որսորդն ասաց Միքայէլին . « Ազնի՛ւ տղայ , դուն կեանքս ազատեցիր : Թէ որ ժամ մի եւս նոյն խեղճ վիճակին մէջ մնայի՛ անտարակոյս կմեռնէի . կուզեմ երախտագիտութիւնս ցուցանել : Հետս քաղաք եկուր , հարուստ եմ ես , եւ զքեզ որդւոյս պէս կնայիմ :

— Ոչ , պատասխանեց տղայն , հետդ քաղաք չեմ գար ես . հայր ու մայր ունիմ , որք թէպէտ աղքատ են , բայց ես զիրենք շատ կսիրեմ . Թէ՛ եւ թագաւոր լինէիր , քեզ համար հայրս չէի թողուր :

— Սակայն , ասաց որսորդն , դուն հոս յարդով (սաման) ծածկած ողորմելի խրճիթի (գուլիպէ) մը մէջ կքնակիս . իսկ ես մարմարիոնով զարդարուած ու սիւներով պատած պալատի մէջ կնստիմ : Բիւրեղէ (պիլօր) գաւաթներով խմել , եւ արծաթէ ամաններով բազմածախ ու քաղցրահամ կերակուրներ քեզ ուտել կոչտամ : »

Պատասխան տուաւ պատանին . « Մեր տնակը կարծածիդ չափ ողորմելի չէ . Թէ որ սիւներով պատած ոչ է , կանաչազարդ պտղատու ծառերով ու դալարագեղ ողկուզաբարձ սարփինաներով (սամալրգ) շրջապատած է : Ականակիտ պայծառ ջուր կխմեմք որմօտակայ աղբիւրէն կվազէ կիջնայ մեր գաւիթը . մեր աշխատանքովը կգտնեմք պարզ կերակուր մը որ մեզ կբաւէ . եւ թէ որ տուներնիս արծաթ՝ բիւրեղ եւ մարմարիոն չունիմք , բայց եւ ծաղիկ առատ ունիմք :

Կրկնեց որսորդն . « Հետս եկ զաւակս . քաղաքն մեք եւս ծառեր ու ծաղիկներ ունիմք : Փառաւոր պարտէզի տէր եմ ես՝ ծառազարդ ճեմելեօք պատած . եւ ծաղկանոցս ամէն տեսակ սակաւագիւտ

բոյսերով ու ծաղիկներով զարդարուած է. պարտեզին մէջ տեղն ունիմ շքեղ շատրուան (Ֆիսքիյէ) մի, որուն նմանը տեսած չես. ջուրը խրձածել երկնացնցուղ վեր կելլէ եւ փրփրալից վար կիջնայ, մարմարիոնեայ աւազանի մի մէջ կթափի :

— Մեք մեր անտառաց մէջ երջանիկ եմք, կպատասխանէ պատանեակը : Մեր անտառաց շուքը ձեր ծառազարդ ճեմելեաց շուքէն վար չմնար : Դալարագեղ մարմանդք մեր եւ մարգագետինք (չայրը չիմէն) հազարումէկ գոյնզգոյն եւ քաղցրահոտ ծաղկօք զարդարուած են : Մեր տնակաց բոլորտիքն եւս լի են ծաղկունք՝ վարդք, մանիշակք, շուշանք, խնդածաղիկք (հէրճայի մէնէքշէ) : Կկարծե՞ս որ առուակք մեր եւ աղբերակունք ձեր շատրուաններէն վա՛ր կմնան : Ի՛նչպէս կսիրեմ զանոնք տեսնել որ ոմանք ժայռերու մէջէն յորձնեռանդն դուրս կպղպջակեն կելլեն, եւ ոմանք բլրակներու ծայրէն փրփրադէզ վար կթափին կարկաջահոս, եւ ծաղկաւէտ մարգերու վրայէն կսողոսկին կերթան հանդարտահետ :

— Չե՛ս գիտեր, տղայս, ի՛նչ բանէ կհրաժարիս, պատասխանեց ազնուական որսորդը : Քաղաքն հոյակապ վարժարաններ ու ճեմարաններ կան, յորս քեզի ամէն տեսակ գիտութիւն եւ ուսումն սովրեցունել կուտամ : Գեղատեսիլ թատրոններ կան, յորս ճարտար երաժիշտք իրենց քաղցրանուագ ներդաշնակութեամբն ականջներդ կդիւթեն : Նքեղազարդ դահլիճներ կան, ուր գեղեցկահանդերձ բազմութեան եւ գեղապայծառ հանդեսներու ներկայ կգտնուիս :

— Ոչ, հետդ քաղաք չեմ գար, կրկնեց սակաւապէտ պատանեակը : Ինձ հարկաւոր եւ օգտակար

եղածն մեր գեղի դպրոցին մէջ եւս կսովրիմ ես :
 Կսովրեցունեն ինձ հոն ամէն բանէ աւելի՛ Աստուծ-
 մէ վախնալ, ծնողքս պատուել, սիրել, եւ նոցա
 առաքինութեանցը հետեւիլ : Ասկէց աւելի բան
 չեմ ուզեր սովրիլ : Մի՛թէ ձեր երաժիշտներն մեր
 քաղցրածայն սոխակներէն լա՛ւ կերգեն : Մեր եւս
 մեզ համար հանդէսներ ունիմք : Այն ի՛նչ երջան-
 կութիւն է կիրակի օրերն երբոր բոլոր ազգականք
 կժողովիմք կնստիմք անտառակի մի շուքին տակ՝
 քաղցրակարկաջ հեզասահ առուակին եզերքը :
 Քոյրս կերգէ, սրնգովս հետը կերգակցեմ ես. եր-
 գերնուս ձայնը հեռու տեղուանք կերթան կհնչեն.
 մեզմէ ետքը անոյշանոյշարձագանգք կկրկնեն զայն,
 հայրերնիս ու մայրերնիս զմայլած մտիկ կընեն
 եւ վրանիս կնային կուրախանան, կգուրգուրան
 ու հազար փառք կուտան Աստուծոյ : Ոչ, հետդ-
 քաղաք չեմ գար ես : »

Այն ժամանակ հասկացաւ որսորդն որ պիտի չը-
 կարենայ տղայն քաղաք տանիլ : « Ուրեմն քեզ ի՛նչ
 տամ ասաց, ինչան երախտագիտութեանս : Ա՛ռ
 գոնէ սա ոսկիով ու արծաթով լի քսակը :

— Ի՛նչ կարօտութիւն ունիմ այս ստակին, պա-
 տասխանեց սիրուն ու իմաստասէր հովուիկը : Աղ-
 քատ եմք, բայց բանի մի կարօտ չեմք. թէոր ստակդ
 ընդունիմ, քեզ ըրած փոքրիկ ծառայութիւնս վա-
 ճառած պիտի լինիմ : Այդ ընելու բան չէ. մայրս
 երեսս վար կառնու, որովհետեւ գրուցած է ինձ
 միշտ որ մարդս պարտական է կարօտելոց օգնելու,
 եւ այն՝ առանց ակնկալութեան շահու :

— Ուրեմն քեզ ի՛նչ տամ ազնիւ տղայ : Պէտք է
 որ յինէն բան մի ընդունիս, ապա թէ ոչ սիրտս

շատ կկոտրես, ասաց որսորդը ճարը հատած :

— Լաւ է ուրեմն, պատասխանեց հովուիկը. սա քովէդ կախուած շիշն (շիշէ) ինձ տուր, կարծեմ վրան շուներ փոշուած են որ այժեամի ետեւէն կվազեն բռնելու :» Որսորդն ամենայն սիրով հանեց տուաւ շիշն, եւ մանուկ հովիւն ուրախութենէն իւր ոչխարացը պէս խայտալով ցատքտելով գնաց իւր հօտին քով :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ը.

Անձնասիրութիւն.

Անձնասիրութիւնն է մարդուս իւր վերայ ունեցած չափազանց սէրն, որով եւ ուրիշ ամէն բան իրեն համար կսիրէ. անձնասիրութեամբ մարդիկ իրենք զիրենք իբրեւ կուռք կպաշտեն եւ ուրիշներուն բռնաւոր լինին եթէ կարեն :

Ճշմարտութեան ամենէն մեծ թշնամին է անձնասիրութիւնը :

Անձնասիրութիւնը մանրացոյց մի է որ մեր կատարելութիւններն եւ ուրիշին պակասութիւնները մեր աչքին կխոշորցունէ :

Գորանուկն եւ Ծղրիդ.

Յըմը կանուխ առաւօտուն

Գորանուկին մէկն արթըննալուն՝

Տեսաւ թուրը լաւ կըկըւէ,

« Այսօր ձայնըս անուշ կելլէ.

« Եկո՛ւր, ըսաւ, ցուցընեմք

« Որ երգել՝ մե՛ք ալ գիտեմք.

« Եւ ի՛նչպէս երգել

« Ո՛վ մեզի հետ կըրնայ մըրցել :

Այս ըսելով հօփ մը ըրաւ

Ու լրճակին եզերքն ելաւ.

Զայնը ձրգէր կըկըրկըռար,

Ու իւր խելքով հրաւէր կուտար

Որ գան թըռչունք ու կենդանիք

Իրեն ձայնին ըն՛են մըտիկ :

Բայց ոչ ոք իւր տեղէն

Նարժեցաւ իձայնէն :

Կէսօր եղաւ նոյն կըրկըռոց,

Գորտն էր եղեր կըրակ ու բոց,

Որչափ կուրծքին մէջ շունչ ունէր՝

Բոլորն ալ դուրսը կըթափէր.

Այլ բաց իրմէն

Մըտիկ ընող չըկար իրեն :

Երիկուն եղաւ

Արեւը մըտաւ,

Գորտնուկ քըրտընած՝

Ու ձայնն ալ մարած,

Տըրտում ու տըխուր

Քաշուեցաւ իջուր,

Եւ ձայնով կերկեր

Այսպէս հեծեծէր.

« Զեզի համար էր իմ մըրմունջ,

« Զե՛զ իմ բոլոր թափեցի շունչ,

« Ու դուք ինձի մըտիկ չըրիք,

« Ա՛յ ապերախտ կենդանիք : »

Մեր գորտնուկին զայս յուսահատ
 Ծրդրիդին մէկ լըսեց գանգատ,
 Կամաց մը ջուրը մօտեցաւ,
 « Պարոն, ըսաւ,
 « Որո՞ւն կրնես այդ գանգատներ,
 « Ո՞վ երգելու քեզ հրաւէր.
 « Ամէնք սիրեն ըզձայն թրուչնոց,
 « Բայց ո՞վ ըզքոյդ կըրկըռոց.
 « Թէ որ գովեսա լըսել կուզես՝
 « Քու հաւնելուդ նայելու չես.
 « Թէ որ ձայն չունիս՝
 « Ի՞նչ մէջ տեղ կիյնիս :

Զրպարտութիւն.

Զրպարտիչն չկարելով բարձրանալ առաքինի մարդոյն հասնիլ, կջանայ զինքն իրեն իջեցնել զրպարտելով, անունն աւրելով:

Զրպարտութիւնը չարախօսութենէ անով կտարբերի որ սա ուրիշին չարիքը կհրատարակէ, իսկ նա իւր քովէն կհնարէ զայն:

Շատ անգամ ամենէն լաւ ու առաքինի մարդիկ են նշաւակ նետից զրպարտութեան, ինչպէս որ լաւագոյն պտուղներն են որ թռչունք կկտցեն ու որդերը կուտեն:

Նայէ որ զրպարտութեան տեղիք չտաս ո՛րչափ եւ սուտ ու անհիմն լինին. վասն զի շատ մարդիկ առանց ճշմարտութիւնը հասկանալ ուզելու՝ դրսի ձայներով կդատեն:

Յիշէ միշտ այս առածը. ձանձր բան մի չէ, բայց սիրտ կխառնէ. նոյնպէս նաեւ զրպարտութիւնն

ո՛րչափ եւ բան չլինի, լսողին սրտին ու մտքին մէջ պղտորութիւն կձգէ:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ք.

Ժուժկալութիւն.

Ո՛ր եւ իցէ բանէ ինքզինքը կամաւոր կերպով զըրկելը՝ ժուժկալութիւն կոչի, եւ առաքինութիւն է: Այս ժուժկալութեան մեծ ջատագով էր Սոկրատ, հռչակաւոր ամենացի իմաստասէրն, որ Քրիստոսէ 400 տարի առաջ մեռած է. անձամբ կկատարէր զայն եւ իւր աշակերտացը կպատուիրէր: « Շատեր կան, կասէր, որ ուտելու խմելու համար կուզեն ապրիլ. բայց ես, ապրելու համար միայն կուզեմ ուտել խմել: »

Զենոն յոյն իմաստասէրն որ Քրիստոսէ 490 տարի առաջ ծնած է, անգամ մի կհիւանդանայ եւ բժիշկն իրեն կպատուիրէ որ աղանաձագ մի ուտէ: Կհարցունէ իրեն. « Ա՛յս կերակուրը կպատուիրես նաեւ ստրկի՛ (եէսիր) մը: — Ոչ: — Ուրեմն առանց զայն ուտելու եւս կրնա՛յ առողջանալ: — Հաւանական է. որովհետեւ այն տեսակ մարդիկ առողջութիւննին գտնելու համար այնպիսի փափուկ կերակուրներ ուտելու կարօտ չեն: » Բժշկին այս պատասխանին վերայ գոչեց Զենոն. « Ո՛վ իմաստասիրութիւն, քու խրատուցդ անո՛ր համար ուրեմն հետեւեցայ որ ստրկէ միոյ աւելի

կնամարդի լինիմ : » Մերժեց բժշկին փափկակեր պատուէրն, եւ հասարակ կերակուր կերաւ աղաւնոյ ձագին տեղ :

Անգամ մի Մակեդոնացւոց Թագաւորը Մեծն Աղեքսանդր անապատ անշրդի տեղէ մի անցնելով Թէ' ինքն եւ Թէ բոլոր իւր զօրքը սաստիկ կծարաւին : Զինուորք ոմանք ջուր փնտռելու կերթան, եւ ժայռի մի մէջ սակաւ մի ջուր գտնելով՝ սաղաւարտնին կլեցունեն ու կառնուն իրենց մշտայաղթ Թագաւորին կբերեն : Աղեքսանդր բոլոր իւր զօրացը կցուցանէ այն ջուրը, կխրախուսէ զանոնք՝ մօտակայ աղբիւր մի իրենց աւետելով, եւ փոխանակ այն ջուրը խմելու՝ բովանդակ բանակին առջեւ գետին կթափէ : Ծափաձայն կգովեն Մակեդոնացիք իրենց Թագաւորին դիւցազնական ժուժկալուծիւնը. եւ ծարաւնին մոռանալով միաբերան կասեն նմա որ կրնայ զիրենք ուզած տեղը տանիլ, պատրա՛ստ են այնպէս ծարաւահիւծ ետեւէն երթալու մինչեւ ցմահ :

Նմանօրինակ ժուժկալուծեան գեղեցիկ օրինակ տուած է նաեւ Դաւիթ մարգարէն : Այրի մի մէջ նստած ժամանակ՝ կյայտնէ իրեններուն Բեթղեհէ մի աղբեր ջրէն խմելու մեծ փափաքը : Որչափ եւ Բեթղեհէմ հեռու էր անտի, իսկոյն իւր քաջերէն երեք հոգի Թշնամի Փղշտացւոց բանակը կպատուեն կանցնին կերթան, եւ փափաքած աղբերէն ուզած ջուրը կքաշեն կբերեն : Բայց Դաւիթ փոխանակ զայն խմելու՝ Աստուծոյ կնուիրէ եւ « Աստուած չընէ, կասէ, որ ես զայն խմեմ : Ո՛րպէս կարեմ այս

քաջերուն արիւնը խմել. կարո՞ղ եմ ես՝ կենաց վրտանգովը գնուած ջիւրը խմել : »

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ Ք.

Արձագանգ.

Միհրանիկ դեռ չէր գիտեր արձագանգին ի՞նչ լինելը : Յր մի դաշտը պտըտած ժամանակ

— Հօ՛ հօ՛ պոռաց. եւ նոյն բառերը քովի անտառին մէջ լսեց :

Կարծելով թէ մէկն հոն պահուրտած է, զարմանքով մի հարցուց.

— Ո՞վ ես :

Անտառին ձայնն իսկոյն կրկնեց մի եւ նոյն հարցումը .

— Ո՞վ ես :

Յայնժամ նեղանալով Խե՛նդ կան չեց Միհրանիկ : Բայց երբոր տեսաւ որ արձագանգն նոյն բառն եւս կրկնեց՝ աւելի նեղացաւ, եւ ետեւէ ետեւ նախատական խօսքեր ասաց անտառին մէջ պահուրտած կարծած անճանօթին : Սակայն արձագանգն ամենայն հաւատարմութեամբ նմա երկրորդեց նաեւ իւր բոլոր նախատալից խօսքերն : Այն ժամանակ բարկութեամբ անտառը գնաց մտաւ որպէս զի պահուրտած պզտիկ տղայն գտնէ ու վրէժը հանէ : Բայց ոչ տղայ գտաւ ոչ մարդ :

Շուտ մը ելաւ տուն գնաց եւ մօրը գանգատեցաւ որ անպիտան տղուն մէկն անտառին մէջ պահուրտեր՝ իրեն նախատական խօսքեր ասեր էր :

Խելացի մայրը Վարդուհի տիկինը բանն հասկանալով նմա ասաց.

— Այս անգամ դուն ինքզինքդ կամբաստանես, որդեակ իմ, վասն զի գրուցածներդ պարզ քու խօսքերուդ արձագանգքն են : Թէոր անտառին մարդավարական խօսք մի ասէիր՝ նոյնպիսի մարդավարական խօսքով քեզ կպատասխանէր : Նոյնպէս է նաեւ աշխարհիս մէջ, որդեակ. ի՞նչպէս որ մեք ուրիշներուն հետ կվարուիմք՝ այնպէս կվարուին նաեւ նոքա ընդ մեզ, այսինքն ուրիշներուն մեզ ցուցուցած վարմունքն մեր անոնց ցուցուցածին արձագանգն կամ անդրադարձութիւնն է : Թէոր հետերնին արդարութեամբ կվարուիմք՝ նոքա եւս հետերնիս արդարութեամբ կվարուին : Եւ թէ որ մեք մեր նմանեաց հետ անմարդասէր՝ խիստ եւ անմարդավար կոպիտ լինիմք՝ ամենեւին իրենցմէ մարդասիրութիւն, քաղցրութիւն ու մարդավարութիւն յուսալու իրաւունք չունիմք :

Ճարտարամիտ պատասխան.

Պարսից Կամբիւս Թագաւորն եգիպտոսի տիրեր ու հրաման տուեր էր զօրացը որ մայրաքաղաքը կողոպտեն : Եգիպտացւոց յաղթուած Թագաւորը Փսամենեսին սիրտը չդիմանալով այն ողբալի տեսարանին, դարձաւ Կամբիւսին « Ասոնք ի՞նչ կընեն, ասաց : — Քաղաքդ ու ստացուածքդ կկողոպտեն : — Կսխալիս, արքայ, պատասխանեց Փսամենէս, ա՛յլ ես հոս բան չունիմ. ամէն բան քոյդ է իրաւամբք պատերազմի. ուստի քու ստացուածքդ կը կողոպտեն : » Այս ճարտար պատասխանին վերայ

զարմացաւ Կամբիւս, եւ իսկոյն կողոպտուամբ դա-
դարեցոյց :

Ճարտարահնար գիտ.

Եգիպտացիք Ամասիս անունով հասարակ մարդն
առեր իրենց Թագաւոր դրեր էին. բայց յետոյ
մտածելով նորա աննշան ցեղէ լինելն՝ սկսան զին-
քը արհամարհել : Հանճարեղ Ամասիս ուզեց վար-
պետութեամբ ինքզինքը պատուել տալ իւր հը-
պատակացը : Ի՞նչ ըրաւ. ոսկի կոնք մի ունէր՝ յո-
րում Թէ՛ ինքն եւ Թէ իւր հիւրերն սեղան ջնստած՝
ոտքերնին կլուային ըստ սովորութեան երկրին. հա-
լեցուց զայն, եգիպտացւոց աստուածներէն մէկուն
արձանն անով Թափել տուաւ, եւ հրամայեց որ այն
նորածոյլ կուռքին փառաւոր մեհեան կանգնեն :
Եգիպտացիք գունդագունդ վազեցին այն նոր աս-
տուածը պաշտելու, նորա ահաւոր պաշտպանու-
թիւնն հայցելու : Երբոր լսեց Ամասիս իւր խորա-
մանկութեան յաջողիլը, իմացաւ որ իւր ժողովըր-
դեանը տալու միտքը դրած խրատին ժամանակը
հասեր է : Ժողովեց զանոնք, եւ Թագաւորական
շքեղ հագուստներ հագած եկաւ ու ահաւոր ձայ-
նով մի ասաց նոցա . « Եգիպտացի՛ք, այս աստուա-
ծըն զոր դուք արդ կպաշտէք, փոքր մի յառաջ
ոտքերս լուալու ամանն էր, պալատիս մէկ անկիւ-
նը նետուած կկենար, եւ ուրիշ բանի օգտակար
չէր : Իւր նիւթն միշտ նոյն է, ձեւը միայն փոխուե-
ցաւ, եւ այն է որ այսօր կյարգէք դուք եւ կպաշ-
տէք : Եգիպտացի՛ք, աչքերնիդ բացէք ու իմ վրաս
եւս տեսէք նոյնպիսի ձեւափոխութիւն : Առաջ հա-

սարակ ժողովրդենէ մէկն էի՝ անծանօթ, եւ հարցս պէս աննշան : Այսօր ձեր տէրն ու Թագաւորն եմ : Մատուցէ՛ք ուրեմն ինձ ձեր Թագաւորին վայելած յարգն ու մեծարանքը : » Հասկացան եգիպտացիք իրենց սխալմունքը, եւ այնուհետեւ որպէս արժան էր պատուեցին մեծարեցին զՍմասիս :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԺԱ.

Չորս տարերք.

Թորոս տասնըջորս տարեկան որ եղաւ, ուզելով իրեն վիճակ մի որոշել կասէր .

— Պարտէզպան լինիմ : Միշտ դալարեաց ու ծաղկանց անոյշ անոյշ հոտերուն մէջ ապրելէն լաւ ի՞նչ բան կայ :

Ուստի պարտեզպանի մի քով դրուեցաւ :

Բայց սակաւ ժամանակէն տուն դարձաւ գանգատեցաւ որ միշտ սախպուած է գետին ծռիւ, եւ երբեմն նաեւ հողի վերայ ծունկ չոքիւ, որով կրօնակն ու ծնկբերները կցաւին. մէկ խօսքով պարտեզպանութենէ ձանձրացեր էր, եւ կուզէր ուրիշ արհեստ սովորիլ :

Մտածեց եւ որսորդութիւնը գտաւ :

— Ի՞նչ ախորժելի կեանք, կասէր. մարդ կանաչազարդ անտառաց շուքին տակ կապրի :

Սկսաւ որսորդութիւնը. բայց շուտով տուն դարձաւ գանգատելով որ չկրնար առաւօտեան օդին դիմանալ, որ երբեմն խոնաւ եւ ամպոտ, եւ երբեմն կծու եւ ցուրտ՝ երեսին կզարնէր :

Այն ժամանակ միտքը դրաւ որ ձկնորս լինի :

— Արժաթափայլ յստակաջուր առուակի մէջ թե-
թեւ նաւակ մի նստած՝ առանց ծնկուրներս յոգնե-
ցնելու թի քաշելէն, եւ ձկնալից ուռկաններս ջրէն
հանելէն զուարճալի ի՞նչ կրնայ լինել ասէր :

Աայց շուտով ձանձրացաւ նաեւ այն զուարճու-
թենէն :

— Վատառողջ արհեստ մի է կասէր. ջուր ամե-
նեւին չեմ սիրեր :

Վերջնապէս ուզեց խոհակեր (աշօք) լինել :

— Մա՛րդ որ կայ՝ խոհակերն է ասէր : Պարտէզ-
պանը, որսորդն ու ձկնորսը ստիպուած են իրենց
աշխատութեան պտուղն նորա ոտքը տանելու. եւ
լաւ պատառներն միշտ իրեն են :

Բայց խոհակերութեան սկսաւ չսկսաւ՝ անտի եւս
ձանձրացաւ ու տուն եկաւ գանգատեցաւ :

— Ամէն բանն լաւ էր թէ որ սա կրակն միայն
չլինէր կասէր : Բոցավառ կրակարանաց առջեւ
մարդ պէտք է կամ խորովի (քէպապ օլմագ) եւ կամ
մոմի պէս հալի ոսկոր կաշի դառնայ : » Սակայն
հայրն չուզեց որ թորոս հինգերորդ արհեստ մի
եւս փորձէ, եւ խստութեամբ նմա ասաց .

— Թէ որ կուզես գոհ ապրիլ, պէտք է որ քաջու-
թեամբ արհեստիդ դժուարութեանցը համբերել
սովրիս : Զորս տարերաց հողոյ, օդոյ, ջրոյ եւ
կրակի նեղութիւններէն ազատիլ ուզելը՝ մարդ-
կութենէ ելլել ու չապրիլ ասել է, որովհետեւ կե-
նաց մէջ ամէն տեղ չորս տարերաց կհանդիպիմք,
եւ նոցա օգուտն ու զուարճութիւնները վայելե-
լով միշտ՝ պէտք է որ երբեմն նեղութեանցն եւս
համբերեմք : Նոյնպէս նաեւ միտքդ բեր միշտ ազա-

տօրէն քեզ ընտրած արհեստիդ օգուտներն, եւ դիւրաւ կհամբերես անոր թեթեւ նեղութեանցը:

Թորոս հօրը խրատը բռնեց եւ երջանիկ եղաւ. եւ յետոյ երբոր կլսէր որ մէկն իւր արհեստին դժուարութեանցը վերայ կգանգատէր, կքաջալերէր զայն ու կասէր.

— Բարեկամ, հաւատա ինձ, ես շատ փորձեցի ու տեսայ որ իւր նեղութիւնն ու դժուարութիւնը չունեցող արհեստ չկայ: Ուստի

Վայելէ Աստուծոյ քեզ տուածն, ու ընկերոջդ վիճակին մի' նախանձիր:

Երջանկութիւն.

Երջանկութեան տանող ամենէն ապահով ճանապարհն է առաքինութիւն:

Թէ որ մարդիկ երջանիկ լինել միայն ուզէին՝ շուտով կլինէին. բայց կուզեն ուրիշներէն աւելի երջանիկ լինել, որ շատ դժուար է. վասն զի ուրիշները եղածէն աւելի երջանիկ կտեսնեմք:

Աղքատութիւն.

Հին Յունաստանի անուանի մարդիկը համոզուած լինելով որ հարստութիւնն արհամարհելու պէս մեծ ու վեհ բան չկայ, վսեմ առաքինութիւն կհամարէին վեհանձնութեամբ աղքատութեան համբերել, եւ աղքատութիւնն աւելի բարիք սեպել քան թէ չարիք: Մեծ առաքինութիւն կհամարէին լաւ գործածել հարստութիւնը. եւ կասէին թէ հարըստութեան ամենէն լաւ գործածութիւնն եւ մարդ-

կան սէրն ու մեծարանքը հարստներու գրաւելու համար մի միայն հնարքն էր՝ հարստութիւնը մարդկային ընկերութեան օգտին գործածելը:

Կիմոն, Աթենացի մեծանուն զօրավարն, որ Քրիստոսէ 449 տարի առաջ մեռած է, իւր մեծափարթամ հարստութեանը վերայ անոր համար գոհ էր, որովհետեւ կարող լինէր իւր քաղաքակցացն օգնել, եւ նոցա տառապանքը թեթեւցունել:

Մեծահամբաւ Աթենացի Փոկէոն զօրավարին անշահասիրութիւնը բոլոր Յունաստան հռչակուած էր. եւ մեռած է Փոկէոն Քրիստոսէ 317 տարի առաջ: Իւր կարծիքն այն էր որ Աթենացիք Մակեդոնիոյ հետ բարեկամ մնան միշտ: Մակեդոնիոյ տիեզերահռչակ Աղեքսանդր թագաւորն ինչան երախտագիտութեան իւրոյ նմա հարիւր տաղանդ (560000 Քրանք) ղրկեց: Այս արքայատուր պարգեւը բերողներուն հարցուց Փոկէոն. « Ինչո՞ւ համար Աղեքսանդր ինձ այս մեծագումար պարգեւը կընէ: — Վասն զի Աթէնքի մէջամենէն արդարասէր մարդ զքեզ ճանչցեր է » ասացին: — Թէ որ Աղեքսանդր զիս այնպէս կհամարի, կրկնեց Փոկիոն, թողու որ միշտ նոյնպէս մնամ: » Եւ ստակը չառաւ: Գիտնալու է որ այս ազնուամիտ մերժումն ըրած ժամանակն ինքը ջրհորէն ջուր կքաշէր, եւ կինը հաց կշինէր: Յետոյ եւ ուրիշ առթից մէջ մերժեց նոյնպիսի վեհանձնական հոգևով թէ՛ Աղեքսանդրի եւ թէ իւր յաջորդաց մեծագանձ ընծաները. եւ անգամ մի երբոր ընծայաբերք զինքը կյորդորէին որ եթէ ոչ իրեն համար, գոնէ իւր որդւոցը համար ընդունի բերած ընծանին. « Թէ որ որդիքս իմաստուն են, պատասխանեց իմաստուն Փոկէոն, ինձ բաւական

եղածն նոցա եւս կբաւէ. եւ թէ որ չեն, ունեցածնին բաւականէն եւս աւելի է:»

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԲ.

ՀԱՆՃԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ.

Ագահին մէկը խօսիլ չէր գիտեր ու խիստ շատ կխօսէր. եւ որովհետեւ քսակը միշտ գոց էր եւ բերանը միշտ քաց, իրեն զրուցեցին «Ոսկիդ բերանդ դիր, եւ լեզուդ քսակդ:»

Մակեդոնացի իշխանին մէկն հայրենեաց դէմ շատ անհաւատարմութիւններ ընելուն համար հայրենասէրք կսկսին զինքը մատնիչ կանչել: Այս նախատական անունն իրեն շատ ծանր գալով՝ կերթայ Արքեղայոս Թագաւորին կգանգատի. եւ նա «Ի՛նչ ուշադրութիւն կընես այն անառակաց կասէ. մի՛թէ չե՛ս գիտեր իրենց կոպտութիւնն. ամէն բան կուզեն իւր յատուկ անունովը կանչել. » եւ տեղը կճամբէ:

Ա.թէնքի երեւելի Արիսպագոս ատեանը խորհուրդ կընէր Մեծին Աղեքսանդրի աստուածութեան պատիւ տալուն վերայ. եւ բոլոր ատենականք հակառակ վճիռ կուզէին տալ: Բայց որովհետեւ Աղեքսանդր միտքը դրեր էր որ եթէ սիրով չտան՝ բռնութեամբ իրենցմէ առնու այն վճիռն, Գեմադէս ատենաբանն զրուցեց ատենականաց. «Զգուշացէք

տեարք, զի մի՛ գուցէ երկինքն պաշտպանել ուզելով՝ երկիրս կորսնցունէք:» Այս հանճարեղ իօսքով ատենակալաց աչքը բացուեցաւ, եւ աստուածական պատիւ ընծայեցին Աղեքսանդրի:

Գինեմոլին մէկը ծառէ կկախուի. անկէց անցնող քանի մը ճամբորդք կհարցունեն. « Ո՞վ է այս կախուողը: — Շիշ (շարապ շիշեսի) մի է » կպատասխանէ՝ ննջեցեալը ճանչցողը:

Հռոմայեցի ասպետ մի կմեռնի, եւ պարտքը ըստացուածքէն աւելիելելով՝ կահկարասիքը կվաճառեն: Սգոստոս կայսրը կհրամայէ որ իրեն համար նորա անկողինն գնեն, ու ծիծաղելով « Պէտք է որ, կասէ, այն անկողինը քնածու զօրուծիւն մի ունենայ, որովհետեւ ստացուածքէն աւելի պարտք ունեցող մարդն նորա վերայ հանգիստ քուն լինէր: Ինձ շատ յարմար պիտի գայ այն անկողինն, որովհետեւ ամենեւին չեմ կաշող քնանալ: »

Կոստանդիանոս կայսրը պարսիկ իշխանի մի կը ցուցանէ Հռոմ քաղաքին շքեղութիւնը, շինուածոց գեղեցկութիւնը, պարսպաց ամրութիւնն ու ընդարձակութիւնը, հասարակաց շէնքերուն մեծութիւնն ու փառաւորութիւնը, եւ կաղաչէ որ իրեն ասէ թէ ո՞ր քանի վերայ ինքն աւելի կզարմանայ: « Ս.մէնքանէն աւելի զիս զարմացնողն այս է, ինքնակալ Տէր, կասէ պարսիկն, թէ ի՛նչպէս այսպիսի լի հրաշալիօք քաղաքին մէջ եւս յետին գեղին մէջին պէս կմեռնին մարդիկ: »

Յոր մի Փրեդերիկոս, Նափոլիի Թագաւորը, հար-

ցուցեր է իւր բժշկացը թէ ի՞նչ բան կրնայ աչքի սրութիւն տալ: Ամէնքը իրենց կարծիքն ասեր ու մէյմէկ նուսխայ (ըէչէթա) տուեր են: Այս խօսակցութեան ներկայ գտնուելով Սաննազար բանաստեղծն, զրուցեր է որ իւր գիտցած դեղը բժշկաց պատուիրածէն շատ աւելի զօրաւոր է. եւ երբոր թագաւորը «Զրուցէ տեսնեմք, ո՞րն է» ասեր է. «Նախանձն, պատասխաներ է Սաննազար, վասն զի ամէն բան եղածէն աւելի մեծ կցուցանէ:»

Ծեր ու ցաւագար Վալպէլ սպայն զօրավարութեան հասնելու մեծ փափաք ունենալով՝ Գաղղիոյ Լուդովիկոս ԺԴ թագաւորին կներկայանայ եւ իրմէ կխնդրէ զայն: «Կմտածեմ» կպատասխանէ թագաւորը: Քաջ Վալպէլ մէկէն կեղծամբ կքաշէ կը հանէ, եւ գլխուն ձիւնափայլ մազերը ցուցանելով «Ձեր վեհափառութիւնը պէտք է փոքր մի փուծայ, կասէ, ճերմակ մազերէս իմանալով որ սպասելու շատ ժամանակ չունիմ:» Լուդովիկոս կհաւնի Վալպէլին քաջ ու հանճարեղ համարձակութեանը, եւ իսկոյն զինքը զօրավար կանուանէ:

Դքսին մէկը գրագետի միոյ վերայ իւր իշխանութեամբն ու ազնուականութեամբը երբոր կուզէր ճոխանալ, ճարտարամիտ գրագէտն նմա կասէ. «Տէր դուքս, ձեր ի՞նչ վիճակէ լինելը քաջ գիտեմ. բայց նաեւ գիտեմ որ ձեզ աւելի դիւրին է ինձմէ վեր լինել քան թէ քովս:»

Ժողովի մը նախագահը տեսնելով որ ժողովականաց ձայնը շատ կբարձրանայ, քովի նուիրակ Խա-

չատուրին կպատուիրէ որ լուսութիւն ընել տայ :
Նուիրակը կսկսի անդադար պոռալ բարձրաձայն
« Լո՛ւր կեցէք, լուսութի՛ւն լուսութի՛ւն . » այնպէս որ
ինքը միայն իւր սոսկալի ձայնովը ժողովը կվրդո-
վէր : Վերջապէս նախագահը կստիպուի իրեն ասե-
լու. « Նուիրա՛կ, Խաչատուրին ձայնը քաշե՛լ տուր : »

Անմտին մէկը հանճարեղ մարդու մը ականջաց
երկայնութիւնը ծաղր կընէր : « Իրաւ է, ասաց նա,
մարդու համար ականջներս քիչ մը խոշեր են . բայց
պէտք է խոստովանիս նաեւ դուն որ քուկիներդ
եւս իշու մի համար շատ պզտիկ են : »

Գեղացւոյն մէկն իշուկի վերայ նստած՝ դպրոցի մի
առջեւէն անցնելու ժամանակ իշուկը կսկսի բո-
լոր ձայնովը զուլ. եւ որովհետեւ տղայք դպրոցէն
դուրս կելլէին, « Ս՛յ աւանակ, կասեն, չէի՞ր կրնար
էշդ կրթել որ փոքր մի աւելի մարդավար լինէր ու
ա՛յսպէս ամենուն առջեւ չզուար : — Ի՞նչ ընեմ, պա-
րոնայք, կպատասխանէ չարահի գեղացին, էշս
յանկարծ իւր առջեւն այնչափ բազմութիւն ընկե-
րաց տեսնելով՝ ուրախութենէն կերգէ. ի՛նչպէս
կարող եմ առանց անիրաւելու արգելուլ նմա այն
իրաւացի խնդութիւնը : »

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԳ.

Ս.դամանդեայ մատանի.

Վաճառականին մէկն Ամերիկա գնացեր էր, եւ անդուլ աշխատանքովն ու հնարիմաց ճարտարութեամբը մեծ հարստութիւն դիզեր էր հոն: Շատ տարի կենալէն յետոյ կուզէ հայրենիքը դառնալ, եւ երբոր իւր ծննդեան քաղաքը կհասնի, կիմանայ որ բոլոր իւր ազգականքն հոն քաղաքին մօտ գեղի տուն մի ժողոված են եւ մէկտեղ երեկոյեան կերակուր պիտի ուտեն զուարճանան:

Ինքն եւս կփափաքի այն հանդիսին երթալ. սրբտին սաստիկ ուրախութենէն եւ ոչ կուզէ վրայի հագուստը փոխելու զարդարուելու ժամանակ անցունել, եւ այն ճամբորդութեան զգեստովը կերթայ որ մաշեր գոյնը նետեր էր:

Ազգականացը ժողոված սրահն փառաւոր զարդարուած էր եւ բազմաթիւ մոմերով լուսափայլ կնշողէր: Ներս որ կմտնէ մեր վաճառականն՝ ազգականքը զինքը տեսնելուն վերայ ամենեւին ուրախութիւն չեն ցուցաներ. վասն զի վրայի մաշած զգեստէն կգուշակեն որ գնացածին պէս աղքատ դարձած պիտի լինի:

Վաճառականն հետը սեւ սպասաւոր մի բերեր էր. սա տիրոջը ազգականաց ցուցուցած պաղութեանը վերայ բարկանալով՝ անոր քովը կերթայ կասէ.

— Տէր, առնք շատ վատ մարդիկ են, որ այնչափ երկար ժամանակ իրենցմէ հեռու մնացած ազգա-

կաննին կտեսնեն, ու եւ ոչ սիրոյ խօսքմի անոր կգրուցեն :

— Ի ուն փոքր մի համբերէ, կասէ, անոր վաճառականը. արդ կտեսնես ի՛նչպէս նոքա կփոխուին:

Այս ասելով ծոցէն աղամանդէ մատանի մի կը հանէ մատը կանցունէ: Իսկոյն ամէնուն դէմքը կզուարթանայ կփոխուի, եւ ամէնքը սիրելի ազգականին քովը կուգան կժողովին. մէկը ձեռքը կսեղմէ, մէկաւր կգրկէ կպագնէ, միւսը բարի՛ եկար, հազա՛ր բարի կասէ, եւ ամէնքը տներնին կհրաւիրեն զինքը: Մնդին սեւը զարմացած,

— Մի՛թէ այս մատանին զմարդիկ կախարդելու փոխելու կարողութի՞ւն ունի, կհարցունէ:

— Ո՛հ ոչ, կպատասխանէ վաճառականն. այլ այս մեծագին աղամանդով հասկացան նոքա հարուստ լինելս. եւ իրենց համար հարստութիւնն ամէն բանէ վեր է:

— Ո՛հ կոյրք, կկանչէ յայնժամ սեւը: Ուրեմն այս աղամանդը չէ զձեզ կախարդողն, այլ ստակի սէրը: Ի՛նչպէս կարելի է որ կտոր մի դեղին մետաղն ու քանի մի թափանցիկ քարի կտորուանք ձեր աչքին աւելի յարգ ունենան քան թէ իմ պատուական տէրս: Ուրեմն ճշմարիտ է այս խօսքն թէ

« Մնմիտը կնախադասէ ականց եւ ոսկւոյ փայլը առաքինութեանց այսինքն հոգւոյ պատուական ականց լուսագեղ պայծառութեանը : »

Ճարտար հնարք.

Հարուստ վաճառականի մը տունը կկողոպտէին. արապին մէկը տոպրակ մի լի ոսկի կգտնէ, եւ

վախնալով որ ուրիշները հոն եւ կամ ճամբան տանելու ժամանակ ձեռքէն չառնուն, խելք կբանեցունէ, խոհակերոցը կիջնայ, խալկինին (գազան) մէջ կդնէ տոպրակը, գլուխը կզարնէ զայն եւ դուրս կելլէ ու կսկսի դէպ իւր տունը երթալ: ճամբան տեսողները վրան կծիծաղէին. « Խենդը, կասէին, ուրիշ բան չէ գտեր առնելու: » Ինքն եւս մտքէն նոցա վերայ ծիծաղելով՝ դրսէն « Ի՛նչ՝ ընեմ, կասէր. ես նայեցայ որ ընտանեացս ամենէն հարկաւոր եղածն առնում: » եւ այնպիսի հնարքով ոսկելից տոպրակն անվտանգ իւր տնակը կհասցունէ:

Կուրին մէկը հինգ հարիւր դահեկան կժողովէ եւ պարտեզին մէկ անկիւնը կթաղէ. բայց դրացին կտեսնէ, եւ կերթայ կհանէ կառնու: Կոյրն իւր ստակը չգտնելով՝ գողը կգուշակէ. բայց ի՛նչպէս ձեռքէն ստակը պիտի առնոյր: Գնաց դրացւոյն տունը խորհուրդ հարցանելու եւ զրուցեց. « Հազար դահեկան ունիմ, որոց կէսը ապահով տեղ մի պահած եմ. չեմ գիտեր թէ պէ՞տք է արդեօք մնացածն եւս մի եւ նոյն տեղը պահեմ: » Դրացին խորհուրդ տուաւ որ մի եւ նոյն տեղը պահէ նաեւ միւս կէսը, եւ շուտ մը գնաց առած հինգ հարիւր դահեկանը բերաւ տեղը դրաւ՝ քիչ ժամանակէն հազար առնելու յուսով. բայց կոյրը ստակը ձեռք որ բերաւ, կանչեց իւր դրացին. « Սա՛նահայր, ասաց, կոյրն երկու աչք ունեցողէն աւելի լաւ տեսաւ: Կոյրն երկու անգամ գաւազանը չկորսնցունէր: »

Չափազանց զարդարկոտութիւն.

Հռոմայեցւոց վեսպասիանոս կայսրն որ մեռած

է Քրիստոսի 79 թուականին, սպայի մը աստիճանը քարձրացուցերէր: Սպայն զարդարուած ու անոյշ հոտերով օծուած կուգայ որ կայսեր շնորհակալ լինի: Վեսպասիանոս այն քաղցրաբոյր հոտերն որ կանոնու' կբարկանայ. «Մի'թէ էրիկ մարդն պէ'տք է որ այսչափ հոտեր քսուի, կասէ: Աւելի' կուզէի որ սխտո'ր հոտէիր:»

Վեսպասիանոսին խօսքը հարկ չէ բառական հասկանալ. ուզեց անով իմացունել քաջ կայսրն որ կանանց տկարամտութեանը նայելով իրենց ներելի եղած զարդարկոտութիւնը' էրիկ մարդոց ներելի չէ. ուստի էրիկ մարդու մի վերայ ոչ երբէք պէտք է եւ ոչ կնկան վայելած զարդասիրութիւնն երեւայ:

Ճարտար յանդիմանութիւն.

Գեմոսթենէս, տիեզերահուշակ ամենացի ատենաբանն, օր մի հրապարակախօս եղած ժամանակն երբոր տեսաւ որ ժողովուրդը մտիկ չընէր, սկսաւ յանկարծ այս պատմութիւնը պատմել. «Սմառուան տաքուն երիտասարդին մէկն էշ մի կվարձէ Աթէնքէն Մեգարա երթալու: Կէս օր որ լինի, երիտասարդը արեւուն հրատապ տաքութենէն ինքզինքը պաշտպանելու համար իշուն տակը կմտնէ. բայց իշապանը ջթողուր, կսկսի հետը կռուիլ ասելով որ ես քեզի էշս վարձու տուի' շուքը չտուի. իսկ երիտասարդը կպնդէր թէ էշը վարձելով' նաեւ շուքը վարձեցի:» Այսչափը պատմեց Գեմոսթենէս եւ բեմէն վար իջաւ. բայց ժողովուրդը բռնեցին զինքն եւ մեծ փուծով ու հետաքրքրութեամբ կը

հարցունէին թէ վէճն ի՞նչպէս վերջացաւ : Յայնժամ վսեմախօս ատենաբանը բարձրացունելով իւր ահաւոր ձայնն որ Մակեդոնիոյ թագաւորը կարսափեցունէր, գոչեց. « Ռ՛վ աստուածք, խնամակալք Ա.Թենայ, տեսէք ձեր ժողովուրդն որպիսի՛ փուժով ու փափաքով կուզէ լսել սնտոի ու տղայական պատմութիւններն, եւ որպիսի՛ եպերելի անտարբերութեամբ կընդունի մեր հայրենեաց համար տրուած ամենակարեւոր խորհուրդները : »

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԺԴ.

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Ամէն բանի հոգին է աշխատութիւն :

Մարդ աշխատելու համար ծնած է :

Աշխատիլ չուզող մարդը վնասակար է ընկերութեան :

Աշխատանքով միայն ձանձրութեան, ախտից ու կարօտութեան առջևը կառնուի :

Առանց աշխատութեան աշխարհիս վերայ եղած բան չկայ :

Քան զամենայն պտուղ քաղցր՝ աշխատանքի պտուղն է :

Աշխատանքը հիւանդութիւններն ու ձանձրութիւնը կհեռացունէ, ախորժակ կբանայ, բուն կուտայ, զմարդ կզուարթացունէ ու գոհ կընէ. աշխատանքի վարժուած եղողին մեծ պատիժ է զինքն անգործ պահելը :

Ժամանակը գանձ է աշխատասէր մարդու, եւ բռն՝ գործատեաց մարդու :

Աշխատասէր մարդուն դռնէն կնայի անօթութիւնն ու ներս չհամարձակիր մտնել :

Մեծն Պետրոս.

Աշխատասիրութեան զարմանալի օրինակ եղած է Մեծն Պետրոս, որ 1698ին մեռած է եւ Ռուսիոյ արդի

մեծութեանեւ փառաց հիմնադիրն է : Իւր Թագաւորութիւնը քաղաքակրթութեան ճամբուն մէջ խոթելու համար՝ չլսուած աշխատանք յանձն առաւ : Թողուց իւր կայսրութիւնը, գնաց Հոլանտա երկուտարի կեցաւ՝ օգտակար արուեստներ սովորելու, եւ մանաւանդ նաւ շինելու արուեստը, որպէս զի յետոյ կարող լինի ինքնին նաւատորմիդ եւ նաւային զօրք պատրաստելու : Գործաւորի հագուստ հագած գնաց Սարտամ գեղին մէջ բնակեցաւ Պետրոս, ուր էին Հոլանտայի Թագաւորութեան գլխաւոր նաւակերտութեան գործարանները : Հոն զարմանալի նոր տեսարան աչքին զարկաւ. այն միշտ իրենց գործոյն զբաղած աշխատասէր մարդկան բազմութիւնը, աշխատանաց բարեկարգութիւնն ու ճրջդութիւնը, նաւ մի շինելու եւ զայն ամենայն սարօքն հանդերձելու հրաշալի արագութիւնը, եւ աշխատանքը դիւրացնող այն շտեմարանաց եւ մեքենայից անհաւատալի բազմութիւնը զինքը կհիացունէին : Կերպարանափոխ կայսրը սկսաւ կացին (պալթա), մուրճ (չէքիչ), ացքան (գըսաճ) եւ կարկին (փերկէլ) գործածել. եւ ատաղձագործաց (տօղրամաճը) ցանկին մէջ իւր՝ անունն եւս գրել տուաւ Պետրոս Միխայիլով : Նախ նաւակ մի գնեց եւ իւր ձեռքովն անոր կայմ շինեց. յետոյ նաւակերտութեան ամէն մասանցը աշխատեցաւ՝ Սարտամի գործաւորաց պէս հագուելով, ուտելով, հանգչելով : Գործաւորք առաջի բերան իրմէ կբաշուէին, հետը չէին համարձակիր, վասն զի գիտէին թէ Պետրոս Միխայիլով գործաւորն՝ կայսր եւ ինքնակալ էր Ռուսիոյ : Բայց յետոյ վարժեցան, եւ ամենայն ընտանութեամբ հետը կվարուէին : Իւր

ձեռքովը շինեց Պետրոս վաթսուհի թնդանօթնոց նաւ մի, եւ Ռուսաստան յուղարկեց : Այսպէս երկու տարի միակերպ աշխատեցաւ, եւ ոչ միայն նաւակերտութիւն սովրեցաւ, այլ եւ զինուորական ճարտարապետութիւն եւ գոծնական բնագիտութիւն : Մինչեւ հիմա կցուցնեն Սարտամի մէջ իւր բնակած տնակը, զոր Տ ու Ն ի շխանի կանուանեն :

Հաւնած գործաւորացը մէջէն շատերը Ռուսաստան յուղարկեց Պետրոս, եւ իւր ընդարձակածաւալ երկիրը դարձած ժամանակն անոնց ձեռքով արւեստներն ու ճարտարութիւնը ծաղկեցուց, եւ անձամբ կերթար գործարաններն ու գործատուները կպտըտէր ու կքաջալերէր : Կուզէր նաեւ դարբնութիւն ու երկաթագործութիւն սովրիլ. ուստի Մոսքուայի մօտ եղած Իսթիայի դարբնոցներուն մէջ գնաց ամիս մի կեցաւ : Այն կարճ ժամանակին մէջ իւր բնական հանճարովը սովրեցաւ փափաքած արհեստը, եւ մեկնելէն մէկ քանի օր առաջ քանի մը հատ երկաթէ ձողեր թափեց եւ վրանին իւր նշանը դրոշմեց. յետոյ դարբնոցաց վերակացուին տարաւ զանոնք որ տեսնէ եւ աշխատութեանը իրաւացի գինն ինչ է նէ տայ : Առաւ ստակն եւ անով կօշիկ գնեց, եւ զանոնք ուրախութեամբ կհագնէր ու կասէր «Այս կօշիկներս ճակտիս քրտինքովը վաստըրկեցայ : »

Մրջիւնն ու ճգին (սողուլճան).

Ծոյլերն իրենց ծուլութենէն

Յոգնելով,

Կըզարմանան իրենց մըտքէն՝

Թէ ինչո՞վ

Աշխատասէր մարդիկներ
Յոգնիլ ի՞նչ է չեն գիտեր.

Անպիսեաց համար
է Առակս յարմար:

Օր մը Յրճին ծակի մը քով
Գանդաղ դանդաղ երկրննալով,
Կրմրաածէր թէ ի՞նչ ընէ
Որ ձանձրուեանը դեղ գրտնէ:

Տեսաւ քովի ծակին դրռնակ
Հասեր մըրջիւն բեռ մ'իկրռնակ,
Գըլտորելով, իյնալով
Հոգին բերանը գալով.

Բայց վերջապէս յաղթանակեց,
Ծակէն աւարը ներս խոթեց:

Քիչ մը անցաւ՝

Մըրջիւնն ելաւ,

Ու երբ Յրճին՝

Ինք իւր պոչին

Ծայրն ալ քրջիկ շարժելու, դեռ

ժամանակ մը չէր գրտեր,

Մըրջիւն նորէն հոն դարձաւ՝

Շալակն ուրիշ աւարաւ,

Այն ալ տարաւ ներս, ելաւ

Ուրիշ մէկ որս մ'ալ բերաւ:

Սյսպէս ահա մեր մըրջուն


Չըդադրեցաւ օրն իբուն:

Երբ նա մըտեր

Իւր պաշարներ

Կը զետեղէր

Բոյնին խորշեր,



ԳՈՒՐԱՐ ՖՐՖԻՆ ՂԱՐՄԱՆԱՂՈՒՆ
 ՁԷՐ ԿԱԼԱՏԱՐ ԱՏՈՒՐՆԵՐՈՒՆ .
 « ԱՆՉՈՒՉՈՒ, ՐՍԱԼ, ՈՒՆԻ ՄԷԿ ՖԱՐ
 « ՈՐ ՋՐՅՈՒԳՆԻՐ ՋՐՃԱՆՃՐԱՆԱՐ .
 « ԵԿՈՒՐ ԻՐՄԷ ԽՈՐԿՈՒՐՈՒ ԴՈՒՂԵՄՔ,
 « ԳՈՒԳԷ ՄԵՂԻ ՂԵՂ ՄՐ ՔԱՆԵՄՔ : »
 Այս ըսելուն չըմբնաց'
 Մըրջիւն ծակէն էր ելած .
 « Պարո՛ն մըրջիւն, կանչեց ՖրՖի,
 « Կաղաչեմ քեզ ասա՛ ինձի,
 « Այս քանի՛ ժամ աշխատեցար,
 « Ջրճանճրացա՛ր . »
 — « Ամենեւին , »
 Կըրկնեց ՖրՖին :
 « Ուրեմն ապա գաղտնիք մ՛ուենիս,
 « Ասա ինձ, մի՛ պահեր, հոգի՛ս . »
 — « Գաղտնի՛ք, այո՛, ես ունիմ .
 « Կաշխատիմ . »
 Ըսաւ մըրջիւն եւ հեռացաւ .
 Ու լաւ ըսաւ :

ԾՈՒԼՈՒԹԵԱՆ ՂԷՄ ԱԽԱՏԻՆ ԱՆԱՐԳ՝
 Լա՛ւ հասկանանք,
 Մէ՛կ հատիկ ՂԵՂ կայ եւ հընարք,
 Աշխատա՛նք :



ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ՎԵ.

Շատախօսութիւն.

Խօսելէն առաջ կրկին մտածէ, եւ կրկին լաւ կխօսիս :

Խօսողը կսերմանէ, մտիկ ընողը կհնձէ, կքաղէ :

Զենոն յոյն փիլիսոփայն տեսնելով որ շատախօսին մէկուն լեզուն չկայնիր, անդադար կխօսի, եւ միջոց չլծողուր որ ուրիշն ալ բան մի զրուցէ, կասէ անոր. « Յիշէ միշտ որ բնութիւնն անոր համար մեզ երկու ականջ եւ մէկ բերան տուեր է, որպէս զի սովբեցունէ մեզ որ աւելի պէտք է մտիկ ընեմք քան թէ խօսիմք: »

Սակաախօս.

Գաղղիոյ Կարոլոս հինգերորդ թագաւորն որ իմաստուն կոչուած է, այնպիսի գեղեցիկ խօսակցութիւն ունէր, որ լսողները զմայլելով մտիկ կընէին: Կարոլոս փոխանակ այս ձիրքովը հպարտանալով շատախօս լինելու՝ յոյժ սակաախօս էր: Յր մի երբոր խօսակցութիւնն մտիկ ընողները ըզմայլած կասէին « Մե՛ծ կատարելութիւն է լաւ խօսիլ գիտնալը. — ձշմարիտ է, պատասխանեց. բայց լռել գիտնալն եւս անկէց վար չմնար: »

Պարծենկոտութիւն.

Սոկրատ տեսնելով որ Ս.ղկիբիադ աշակերտն իւր ստացուածոցն ու գեղեցիկ կալուածներուն վերայ

կհպարտանայ, Յուճաստանի աշխարհացոյց մի բերել տուաւ ու « Ո՛վ պատանի, ասաց, ցուցուր ինձ սա տախտակին վերայ ո՛ւր է Ատտիկէ: — Ահաւասիկ: — Յուցուր արդ թէ ո՛ւր են քու կալուածներդ ու գեղեցկակերտ ամարանոցներդ: — Չեմ տեսներ, չկան: — Ուրեմն ա՛յսպէս քանի մի թիզ գետին, կրկնեց իմաստասէրն, որ յիշատակուեալն անգամ արժանի չեն համարուած, զքեզ ա՛յնչափ կհպարտացունեն: »

Ներկայ եւ. ապագայ.

Կանցնին մարդիկ ծաղկանց պէս որ առաւօտը կբացուին եւ երիկուն կթողմին կիյնան եւ ոտքի տակ կկոխկուտուին: Սրբնեաց գետի մը ալեացը պէս կվազեն կանցնին սերունդք մարդկան. չկայ բան մի որ կարող լինի ժամանակին ընթացքը բռնել կեցունել, որ իւր հետը կքաշէ կտանի նաեւ ամենահաստատուն եւ անշարժ երեւցած բաները: Գու եւս, որդեակ, դու եւս որ արդ գեղածիծաղ եւ զուարճալից մանկուեթիւն մի կվայելես, գիտցիր որ այս զուարթագեղ հասակդ փափուկ ծաղիկ մի է, որ բացուած չբացուած՝ պիտի թողմի թարշամի չորնայ, անզգալի կերպով ինքզինքդ փոխուած պիտի գտնես. գեղատեսիլ շնորհք, քաղցր զուարճութիւնք, հեշտալի բերկրութիւնք, ոյժ, առողջութիւն, ուրախութիւն, ասոնք ամէնքն երազի պէս պիտի ցնդին անհետանան. եւ անոնցմէ տխուր յիշատակ մի միայն քովդ պիտի մնայ. հիւանդոտ ծերութիւնը՝ թշնամի ամենայն զուարճութեանց եւ բերկրութեանց պիտի գայ երեսդ կնճռելու թող-

մեցնելու, մարմինդ ծռելու կորացնելու, անդամներդ տկարացնելու, սրտիդ մէջ ուրախութեան եւ խնդուածեան աղբիւրը ցամքեցունելու, եւ ամէն բանի անզգայ ընելու՝ բաց իցաւոց : Այս ժամանակը շատ հեռու կերեւայ. աւա՛ղ, կիսաբուխ, որդեակ. ահա կփուծայ, կվազէ կհասնի նա. եւ ներկայն որ կփախչի՝ արդէն շատ հեռացաւ, որովհետեւ խօսած ժամանակնիս կանհետանայ, եւ ոչ եւս կարող է դառնալ մօտենալ : Ուրեմն, որդեակ իմ, ներկային վերայ բնաւ մի՛ վստահիր, այլ ապագային ըստ պատելով՝ առաքինութեան խիստ ու դժուարին ճամբուն մէջ յարատեւէ, եւ բարի վարքովդ, բարի գործովքդ ու արդարասիրութեամբդ քեզ տեղ պատրաստէ արքայութեան մէջ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԶ.

Անձրեւ.

Յոր մի վաճառականին մէկը տօնավաճառէն (փանայըր) տունը կդառնար, եւ ձիոյն վերայ բեռնաւորեր էր ստակ լցուն սնտուկ մի : Յորդ անձրեւ կիջնար. խեղճ մարդը խխում՝ դարձաւ, եւ սկսաւ Աստուծոյ դէմ գանգատիլ որ կրնար փոքր մի աւելի լաւ օդ տալ իւր ճանապարհորդութիւնն ընելու :

Ճամբուն վերայ անտառ մի կար ուսկից պէտք էր անցներ. հազիւ մէջը մտեր էր մեր ճանապարհորդներքոր հեռուէն աւազակ մի ծառին ետեւէն զինքը տեսաւ ու ձեռքի հրացանը (թիւֆէնք) վրան

պարպեց: Ողորմելի ճամբորդին բանը բուսած էր
 թէ որ վառօդը թրջած չլինէր. վասն զի կրակ չա-
 ռաւ, եւ ինքը ժամանակ ունեցաւ անտառէն դուրս
 փախչելու: Այն սոսկալի վտանգէն որ ազատեցաւ,
 սկսաւ ասել ինքնիրեն.

— Ի՛նչ անմտութիւն էր իմս որ փոխանակ այն
 գէշ օդն իբրեւ պարգեւ Աստուծոյ ընդունելու
 համբերութեամբ՝ տժգոհացայ: Թէ որ երկինքն
 պարզ ու պայծառ լինէր եւ օդը չոր ու գեղեցիկ,
 արդեւ մեռած ու արեանս մէջ թաթխուած էի,
 եւ որդիքս ընդունայն տեղ իմ դարձիս պիտի ըս-
 պասէին: Անձրեւն որուն դէմ գանգատեցայ, թէ՛
 կեանքս եւ թէ՛ քսակս ազատեց: Այսուհետեւ պիտի
 չմոռանամ առածին ըսածը.

Աստուծոյ ըրածը չպարսաւեմք, վասն զի իւր ա-
 մենագէտ իմաստութիւնն ամէն բանի մէջ ակնե-
 րեւ կփայլի:

Շատ անգամ նզոված ձախորդութեան պտուղը
 կօրհնեմք:

Ազդեցութիւն լաւ ընկերութիւն.

Պարսիկ բանաստեղծին մէկը հետագայ գեղեցիկ
 այլաբանութեամբ կյայտնէ բարի մարդոց ընկե-
 րութեան մարդուս վերայ ըրած լաւ ազդեցու-
 թիւնը:

« Ժուռ կուգայի, կասէ, եւ ոտքիս տակ կէս չոր-
 ցած տերեւ մի տեսայ որ անոյշ հոտ կբուրէր: Ծռե-
 ցայ առի, հոտոտեցի, սիրտս բացուեցաւ եւ իրեն
 զրուցեցի. Դուն որ այսպիսի քաղցր հոտ կբուրես,
 մի՛թէ վա՛րդն ես:

— « Ոչ, պատասխանեց, վարդ չեմ ես, այլ փոքր ժամանակ հետն ապրեցայ, եւ իրմէն էջուրած մի անոյշ հոտս : »

Ս.զդեցութիւն գէշ ընկերութեան.

Յը մի փիլիսոփային մէկը պատանւոյ մի կհանդիպի որուն հետն էր իւր անառակութեամբն անուանի եղած ընկերը: Երբոր պատանին այնպիսի վատահամբաւ ընկեր ունենալուն վերայ կսկսի ամաչել ու կարմրիլ. « Քաջալերուէ, որդեակ, կասէ փիլիսոփայն. վրադ այս ամօթխածութիւնը տեսնելուս ուրախ եմ: Բայց աւելի լաւ կընես այնպիսի մարդոց հետ պտըտիլ, որոց ընկերութեանը վերայ չամաչես, այլ պարծիս : »

Սոկրատայ ախորժակ բանալու դեղը.

Յը մի հարուստ Աթենացի մի Սոկրատայ հետ խօսակցելով զրուցեց որ ամենեւին ախորժակ չունի, եւ կերածէն քնաւ համ չառնոյր : « Հիւանդութեանդ անվրիպելի դեղ մի գիտեմ ես, ասաց նմա Սոկրատ : Քիչ կեր : Կտեսնես որ կերակուրներն քեզի աւելի ախորժելի կուգան, ծախսքդ կքիչնան, եւ աւելի առողջ լինիս : »

Ճպտուն եւ Մրջին.

Ճրպուռը ճրռճրռալով էր ըզբաղած ամառն իբուն. Ջրմեռուան ցուրտն որ կոխեց՝ յիրաւի ձիւն եկաւ գլխուն.

Ուտելու բան մի չունէր, ոչ ճրճի, ոչ ճանճի տոտիկ.
Ելաւ գնաց իւր դըրացւոյն, որ տանտիկինն էր
մըջիւնիկ.

« Մարիկ, ըսաւ, հոգի՛դ սիրես, անճարիս ճա՛ր
մի ըրէ,

« Քիչ մի բան փոխ տուր ինձի, հաշուատետրիդ
մէջը գրէ.

« Առաժս քեզ ատենին շահով հանդերձ կըդար-
ձունեմ.

« Աշունքը չեմ անցուներ, գըլխուս վերայ երդում
կընեմ : »

Եկուր նայէ որ մըրջիւնիկ խաթունն

Ուրիշի փոխ տալ բընաւ չէր գիտեր.

Ի՛նչ քարսիրտ կին է եղեր, ըսէ դուն,

Ի՛նչ կընար ընել, իւր բանին տէրն էր :

Գարձաւ հարցուց ճըպուռին.

— Գա՛, դուն ամառն ի՞նչ ըրիր :

— Ի՞նչ ընէի, հո՛գի, այն տաք ատենին.

Ձայնս ձրգած խաղ կանչեցի, չըլսեցի՛ր :

— Խաղ կանչեցիր հա՞. ատ ալ գէշ բան չէ.

Տէ՛ գընա ուրեմն հիմա ալ պարէ :

Այս մեր ճպուռին նման ո՛րչափ անմիտ մարդիկ
կան որ փոխանակ նախատես զգուշութեամբ ապա-
գայն մտածելու՝ ժամանակնին խաղով կամ խաղի
նման անօգուտ բաներով եւ կամ ծուլութեամբ
կանցունեն, ու կռնակնին բերաննին բաց կմնան :

ԸՆԹԵՐՅՈՒՍԾ ԺԷ.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ԸՆԹԵՐՅԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Սակաւ ժամանակի մէջ եւրոպիոյ այսչափ յառաջ երթալն անժխտելի արգասիք են եւրոպացւոց եւ ռանդուն ուսումնասիրութեանն ու ընթերցասիրութեանը: Մեր Հայոց ազգն եւս նոցա բարի ու գովելի օրինակին պէտք է հետեւի՝ եթէ նոցա պէս կուզէ յառաջադիմել, զարգանալ, ծաղկիլ ու հարստանալ:

Ընթերցասիրութիւնն այնչափ տարածուած ու ծաղկած է եւրոպա, որ փողոցներու մէջ բեռնակրաց (համմալ) ու կառավարաց (արապաճը) ձեռքը գիրք կամ օրագիր տեսնելը շատ սովորական բան է: Մինչդեռ մեր հարուստներուն սրտին մէջ չկայ այս նախանձելի ազգօգուտ եռանդը, ե՛րբ հասարակ ժողովրդեան սիրտը պիտի իջնայ, որ ամէն բանի մէջ մեծերուն օրինակին հետեւիլ կսիրէ: Ուրեմն ո՛րչափ յանցաւոր են մեծերն որ ուսումնասիրութեան եւ ընթերցասիրութեան եռանդը ազգին մէջ իրենց օրինակովը տարածելու փոյթ չեն տանիր:

Թէ որ մեր ազգին մէջ ուսումնասիրութիւնը ծաղկած լինէր, այսօրուան օրս գտնուած հազարումէկ տգիտաց շատերն գիտուն իմաստուն լինէին նաեւ պարզ իրենց ջանքովն ու աշխատանքովը. վասն զի առանց ուսուցչի եւս կարէ ոք ուսումն եւ գիտութիւն սովորիլ՝ թէ որ աշխատանքէ ու նեղութենէ չփախչի, թէ որ հաստատուն կամք ու անյողդողդ

երկայնմտութիւն ունենայ. եւ տարակոյս չկայ որ իւր ջանքովն ու աշխատութեամբք սովրածները շատ աւելի խորունկ կտաւաւորուին մտքին մէջ: Ուսուցիչը հարկաւոր է աւելի տկարամիտ, անհոգ եւ իրենց դիւրութիւնը սիրող մարդկանց: Իւր աշխատանքովը միայն կրնայ մարդս կատարեալ գիտուն լինել: Ամենայն տաղանդաւոր հանճարեղ եւ գիտնական մարդիկ իրենք զիրենք հասուցեր են աւելի կատարելութեան. իրենք իրենց անդուլ աշխատանքովը խելքերնին սրեր, հանճարնին կրթեր բեղնաւորեր, եւ իրենց նմանեացը վերայ ունեցած գերազանցութիւննին ձեռք ձգեր են: Հարցուցէք եւրոպայի ամենէն գիտուն, իմաստուն, բանիբուն, հանճարեղ եւ ճարտար մարդկանցը. հարցուցէք ասեմ Բիւվիէ, Վոլթա, Հոււմպոլտ, Հերշէլ, Ֆր'լիթըն, Արակոյ, Լամարթին, Կիզոյ, Պիոյ, Պապինէ, Վէլփոյ, Պեքլար, Ֆլաշա գիտուններուն եւ ուրիշ իմաստնոց թէ ուստի՞ է իրենց զարմանալի խելքը, գիտութիւնն եւ հանճարը. ամէնքն իսկ միաբան կը պատասխանեն թէ յետ Աստուծոյ պարգեւին՝ մեր անձնական աշխատանքովը, մեր քրտինքովը ձեռք բերեր եմք գիտցածնիս:

Պիւֆոն հռչակաւոր բնապատումն ասաց. « Հանճարն երկարատեւ հանապազորդութիւն մի է, այսինքն երկարատեւ աշխատանք: » Երբոր նեւտոնին հարցուցին թէ ի՞նչ միջոցով աշխարհիս օրէնքները գտաւ, պատասխանեց. « Միշտ անոնց վերայ մտածելով: » Երնկ որ Անգղիոյ առաջին կարգի իմաստնոց մէկն է, որ երկու տարեկան եղած ժամանակը ջրի պէս կկարդար, իննամեայ հասակին մէջ ինը լեզու եւ ամբողջ թուաբանութիւնը գիտէր,

սովորութիւն ըրած էր զրուցելու թէ « Ամէն մարդ կարող է ուրիշ մարդու ըրածն ընել. » ուստի եւ դժուարութիւն մի չկար որ կարենար զինքը մտքին մէջ դրածէն ետ կեցունել, որով եւ ամէն ուզածին կհասնէր՝ թէպէտ եւ շատ անգամ աշխատանօք: Երնկին պէս մեք եւս ասեմք թէ ամէն մարդ կարող է ուրիշ մարդուն ըրածն ընել. եւ այս իսկ կաւելցունեմք թէ ամէն սովրածն եւս գրեթէ կարող է սովրիլ, եւ այն՝ ամէն հասակի, ամէն տարիքի մէջ, բաւական է որ ծերութեամբ մտաւոր կարողութիւնները պակսած կամ տկարացած չլինին: Այս բանիս շատ համոզուած եմք, եւ մտքերնիս եւս դրած եմք որ եթէ կուզեմք մեր ազգին ամբողջ հասարակութիւնը շուտով լուսաւորել, կրթել եւ բարեկիրթ ուսեալ եւ քաղաքակիրթ ազգաց ու ժողովրդոց կարգն անցունել, մի միայն հնարքն է՝ առանց տրդայոց դաստիարակութեան ու կրթութեան վերայ եղած գովելի ջանքէն ետ կենալու, չափահաս ու նաեւ տարեց անձանց սրտին մէջ կրթութեան, ուսման եւ գիտութեանց նուիրական սիրոյն բոցը վառել հասկցնելով նոցա որ եթէ փափաք ու հաստատուն կամք ունենան տգիտութեան եւ ռամկութեան անպատիւ ու անարժան անունները վրաներնէն թօթափելու, եւ ուսումնասիրաց, գիտնոց, ուսումնականաց պատուաւոր խումբը մտնելու, կարող են կրթուիլ, ուսում եւ գիտութիւն սովրիլ, հասկանալ թէ բնակած աշխարհնին ի՞նչպէս ու ինչո՞վ շինուած է, ի՞նչ են կապուտակ երկինքն զարդարող ու լուսաւորող ճառագայթածեւ փայլուն մարմինները, խելք հասցընել իրենց չորս դին պատած գեղածիծաղ բնութեան հրաշալեացը, զորս անդա-

դար կտեսնեն ու պատճառները չգիտնալով՝ անտարբեր աչքով կնային. եւ միով բանիւ՝ անձնուրաց, օգտակար քաղաքացիք, անձնանուէր հայրենասէրք, միաբանասէր ու խաղաղասէր ազգասէրք, եւ ճշմարիտ որդեսէր ծնողք լինել :

Որպէս զի ուսումն եւ գիտութիւն սովորիլ ուզող չափահաս ազգայինք իրենց տարիքին մեծութեանը նայելով չյուսահատին, յիշեն միշտ մեծանուն գերմանացի Պոէրիաւ բժիշկը, եւ իրենց խրախուսիչ օրինակ առնուն զինքը, քաջ գիտելով, որ ոչ եթէ հասակէն, այլ հաստատուն կամքէ, անդուլ ջանքէ ու անխոնջ աշխատանքէ կախուած է մարդու կրթութիւնն ու յառաջադիմութիւնը : Ութ եւտասներորդ դարուն ամենէն անուանի բժիշկն էր Պոէրիաւ, ու բժշկութեան արուեստը բոլորովին կերպարանափոխ ըրաւ, բարեկարգեց : Գիտէ՞ք արդեօք որ բժշկութիւն սովորելու սկսած ժամանակը քանի՞ տարեկան էր. քառասունն անցեր էր. եւ ինչպէս որ ուամիկ ու բան չգիտցող մարդկանց սովորութիւնն է ամէն բան ծաղրել, իւր բարեկամներն եւս վրան ծիծաղելով կասեն եղեր թէ « Պոէրիաւ քառասունէն ետքը բժիշկ պիտի լինի, քայց ափսո՛ս որ զմեզ պիտի չբժշկէ : » եւ սակայն վրան շատ չանցաւ, իրենք եւս իմացան որ տարիքին չնայիր եղեր գիտութիւնը. եւ երջանիկ կհամարէին իրենք զիրենք որ այնպիսի քաջարուեստ բժիշկ բարեկամ ունին, որ զիրենք ծանր ու վտանգաւոր հիւանդութիւններէ կազատէր :

Ուրեմն դարձեալ կասեմք. տարիքը բնաւ արգելք չէ. մարդ ամէն ժամանակ կրնայ ամէն ուզածը սովորիլ, միայն թէ փափաք ու հաստատուն կամք

ունենայ : Տարակոյս ջունիմք որ մեր ազգայինք լաւ հասկացած լինելով որ հիմակուան ժամանակիս մէջ ամենահարկաւոր է գիտութիւնը, եւ առանց անոր գրեթէ անկարելի բարեկեցիկ ու պատուաւոր կեանք ունենալ, թէ՛ փափաք եւ թէ՛ հաստատուն կամք ունին մտքերնին կրթելու ու գիտութիւն սովորելու. կտեսնեն եւս միանգամայն որ անոնցմով միայն ծաղկեր ու յառաջ եկեր են այն ամենայն ազգերն որոց վերայ կզարմանան : Գիտութեանց եւրոպայի մէջ ըրած բազմապատիկ օգուտներուն ու կենցաղօգուտ գիւտերուն վրայէն հարեւանցի մը անցնիմք :

Եւրոպայի մէջ ճարտարութեան ու արուեստից այսչափ յառաջ երթալուն գլխաւոր ու առաջին պատճառ են ուսումնական գիւտերը : Ճարտարութիւնն իւր հիմն անցեալ դարուն վերջերը գիտութեան վերայ հաստատելէն յետոյ այնուհետեւ ըսկսաւ աներկիւղ յառաջադէմ ընթանալ, եւ ամէն մէկ առած քայլին նորանոր հրաշալեօք զամէնքը հիացունել : Նախ շոգիին կամ գոլորշւոյն սոսկալի ոյժն իմացուեցաւ. աչքերնուս առջեւ օդին մէջ ցնդելով աներեւոյթ եղած եւ աննշան բան մի կարծուած շոգին, գիտութեան ձեռքովն իմացուեցաւ որ հազարաւոր ձիերու ոյժն ու թռչուններէն աւելի արագութիւն ունի եղեր. այն հրաշալի ոյժն ու արագութիւնը նախ շոգենաւաց գործածուելով առաջ ամիսներ քշած ճամբորդութիւնները մէկ քանի օրուան մէջ լինել սկսան : Նոյն ոյժն ու զօրութիւնը հետ զհետէ գործատուններու շոգեշարժ գործեաց հաղորդուեցաւ, եւ բիւրաւոր մարդիկ անտանելի ու անբանական աշխատութիւններէ

ազատեցան. իսկ երկաթուղիներով՝ ամբողջ քաղաքներ տեղէ տեղ սկսաւ փոխադրել շոգին, բոլոր անցած երկիրները յաջողութիւն եւ հարստութիւն սփռելով:

Յետոյ ածխաքարէն կազն ելաւ, իւր պայծառափայլ լուսովը մոմեղինաց լոյսը մեծնցուց, ու եւրոպայի քաղաքաց գիշերուան խաւարը փարատեց:

Արեւը մեր ամենէն ճարտար նկարչաց վերայ ունեցած գերազանցութիւնն ուզելով ցուցանել, նոցա փափաքած ու չկրցած ճշդութեամբն ո՛ր եւ իցէ կերպարանք եւ տեսարան մեր արծաթազօծ թիթեղներուն ու թղթերուն վերայ նկարեց, որոց հիացանք, եւ տակերատիպ ու լուսանկար անուանեցինք:

Անդիէն ելեքտրականութիւնն եւս ճարտարութեան ձեռքը նոր զօրութիւն տուաւ. արեւուն պատկերահան լինելուն պէս ինքն եւս արծանագործ լինելը յայտնեց, բաւական է որ իրեն կաղապար մի ցուցանեմք. ո՛րչափ եւ դժուարին ու ճարտարագործ լինի այն, քիչ ժամանակի մէջ ուրիշ մետաղի վերայ ճշգրտատիպ կհանէ արծանը: Արեւուն լուսոյն վերայ եւս կարծես թէ նախանձելով՝ ելեքտրական լոյսը տուաւ մեզի, որ կազի լուսէն շատ աւելի պայծառ է: Ուզելով լուսոյն արագութեանը հետ իսկ մրցիլ, երկրագնտիս մէկ ծայրէն միւսը տարուելու լուրերուն պաշտօնն առաւ վրան, ու հեռագրական թելերուն վերայէն անտեսանելի կերպով մը վազելով, դիմացն եկածը՝ ցամաք երկիր, ովկիանոս, առանց դիտելու կկտրէ ու կանցնի, բաւական է որ սահմանեալ տեղը լուրը հասցունէ. հրաշալի՛ սուրհանդակ: Այս ելեքտրականութեան

ձեռքովն ինչե՛ր կարելի չէ ընել. այնպիսի զօրութիւն մի է, ուսկից յառաջ գալիք օգուտներն անկարելի բան է մէկէն գուշակելը :

Ո՛վ որ Լոնտրայի ու Փարիզու արուեստահանդէսներուն ականատես լինելու բախտն ունեցաւ, այն բիւրազգի հրաշակերտ ձեռագործաց առջեւ զրուցեց անշուշտ մեզի հետ հիացմամբ թէ գիտութեան ձեռքովն ի՛նչ հրաշքներ կգործէ եղեր ճարտարութիւնը :

Այն արուեստահանդէսներուն մէջ պտրտողը թէ եւ ամենեւին մանր դիտողութիւն ընելու կարողութիւն չունենար, ի՛նչ մեծ տարբերութիւն կգտնէր եւրոպայի ձեռագործացն ու Արեւելքէն եկած ձեռագործաց մէջ. երկի՛նք ու երկիր: — Ի՞նչ է ասոր պատճառը. մի՛թէ Արեւելքը չէ՞ եղած եւրոպան բարբարոսութենէ հանողն, եւ ամէն տեսակ արհեստ սովրեցունողը. մի՛թէ ամէն լաւ բանի օրինակն Արեւելքէն չէ՞ առած եւրոպա. ինչէ՞ն է ուրեմն որ այդ վարպետն աշակերտ ու աշակերտը վարպետ եղեր՝ բարձր իգլուխ կպանծայ :

Մի միայն պատճառն այս է որ գիտութեան պայծառ ջահն, որ ժամանակաւ արեւելցւոց միտքը կլուսաւորէր, առջեւնէն ընկած կառաջնորդէր սինէական լուսաւոր սիւնին պէս, եւ իրենց թողած հրաշակերտները շինելու ճամբան կցուցանէրնոցա, արդ մարած ու թանձրամած մոխրոյ տակ թաղուած է:

Որպիսի՛ սրտաբուղիս օրհենքներու եւ յաւերժական յիշատակի արժանի պիտի չլինի, ուրեմն այն ձեռքն որ վրան պատած մոխիրը մէկդի առնելով՝ նորէն, տակի ջահին պայծառութիւնը դուրս հանէ.

այն ժամանակ անտարակոյս վարպետը վերստին կելլէ իւր վարդապետութեան ամուրը կբազմի փառօք: Բայց ո՛վ պիտի լինի այն օրհնեալ ձեռքը . — ո՛վ որ Արեւելքի ժողովրդոց մէջ ուսման սիրոյն հետ գիտութիւնները ծաւալէ:

Արդարեւ դժուարի՛ն գործ. բայց թէ որ Արեւելքի բազմամիւ ժողովրդոցը ձեռնառու լինելը մեզի համար անկարելի է, մեր սեպհական ժողովրդեանը համար, մեր սիրելի Հայոց ազգին համար գոնէ աշխատիմք. անոր սրտին մէջ վառեմք արծարծեմք ուսման եւ գիտութեան դեռաբորբոք սէրը՝ այլ եւ այլ վիճակէ օրինակներ բերելով ուսումնասիրութեան եւ ուսումնականաց վայելելու արժանի եղած պատուոյ եւ մեծարանաց:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԸ.

Նարայարութիւն.

Ստար ազգերէն ուսումնասիրութեան օրինակ բերելէն յառաջ, յիշեմք մեր երանաշնորհ թարգմանիչքը զՍահակ, զՄեսրոպ եւ զուսումնասէր պարաշակերտաց նոցա, որոց երանի՛ թէ անուան յիշատակին հետ կենդանի մնացած լինէր՝ յազգի մերում նաեւ անոնց ուսումնասիրութեան ու գիտութեանց Հայաստանի մէջ ծաղկելուն համար ըրած քրտնաջան վաստակոց օգտաւէտ յիշատակը. վասն զի ազգերնիս այս աստիճան չէր թաղուեր իխաւար տգիտութեան, եւ արդ մէջէն ելանելու հա-

մար մեծամեծ ճգանց եւ անձնանուէր զոյից կարօտ չէր լիներ :

Պոսիւէ , որ Գաղղիոյ մեծանուն եպիսկոպոսաց մէկն է եւ 1704ին վախճանած է , անուանի է նաեւ իւր ուսումնասիրութեամբը : Միշտ գիշերը վառածկանթեղ մի քովը կկենար : Առաջին քունն առնելուն պէս , որ սովորաբար չորս ժամի չափ էր , անկողնէն կելլէր նաեւ սաստիկ ցրտերուն , աղօթքը կընէր , գրասեղանին առջեւը կանցնէր կաշխատէր մինչեւ որ յոգնէր : Այն ժամանակ նորէն կը պառկէր : Այսպէս կընէր նաեւ ճամբորդութեան մէջ :

Եւ ասանկով է որ այս մեծահամբաւ առաջնորդը կարող եղաւ իւր ծանր ծանր պաշտօնները կատարելէն յետոյ՝ նաեւ բազմաթիւ պատուական գրուածներ իւրոյս ընծայել , եւ այնպիսի մեծ հմտութիւն ստանալ . այնպէս որ մարդ կզարմանայ թէ ի՞նչպէս կըրցեր է կարդալ բոլոր գիտցածը , եւ ի՞նչպէս գրել բոլոր իւր շարադրածը :

Պէտք չէ կարծէք թէ եւրոպա էրիկ մարդիկ միայն ուսումնասէր եւ ընթերցասէր են . ուսումնասէր եւ ընթերցասէր են նաեւ կանայք . անոր համար եւս մէջերնին գիրք գրողներ իսկ շատ կան : Ն՛րք Հայոց ազգն եւս իւր մատենագիր տիկնայքը պիտի ունենայ : Առաջին եղողին գլուխն անթառամ բրաբիոններով պսակելու է :

Լսեցէք ուսումնասէր Սոփիային պատմութիւնը : Սոփիա պզտիկուց իվեր մեծ սէր ունեցեր էր կարդալու գրելու , ուստի եւ ամէն գտած գիրքն անյազարար կկարդար : Տասնուչորս տարեկան որ եղաւ , յանկարծ ձեռքն ինկաւ Պատմութիւն

չափագիտութեան կոչուած գիրքն, յորում Արքիմեդէս երկրաչափին վարքը կարդաց, եւ իմացաւ որ ոչ Սիրակուսա քաղաքին առումը, եւ ոչ զինքը մեռցունել ուզող զինուորին գլխուն վերայ թուրը մերկացնելը կրցեր են իւր չափագիտական խորունկ մտածմունքներն շփոթել: Այս զարմանալի ընթերցման վերայ դեռահասակ Սոփիա իւր ընտրութիւնն ըրաւ: Հօրը գրքատան մէջ հին թուաբանութիւն մի գտնելով միտքը դրաւ որ թուաբան չափագէտ լինի. ընտանեացն ըրած ամէն արգելքներուն յաղթեց, որք ոչ իւր հասակին եւ ոչ իւր կանացի սերին պատշաճ գտնելով իւր այս փափաքը, կջանային զինքը անկէց պաղեցունել: Սոփիա գիշերը կեպէր նաեւ այնպիսի ցուրտերուն որ կաղամարին թանաքը կսառէր, եւ մատուրները չէին բռներ. եւ ինքը վերմակին պլլուած՝ աղօտ կանթեղի մի լուսով կաշխատէր. վասն զի զինքը քնանալու ստիպելու համար խուցէն կհանէին կտանէին կրակ հագուստ, մոմ, ամէն բան: Բայց վերջապէս տեսնելով որ ճար չկայ, թողուցին որ իւր բնական յօժարութեանն ազատօրէն հետեւի: Չափագիտական հանձարովն երեւելի եղաւ Սոփիա, եւ շատ անգամ Փարիզու գիտութեանց ձեմարանէն մրցանակ առաւ...:

Սոփիայի նման ուսումնասէր օրիորդք բազմութիւ են ի Գաղղիա: — Քանի՞ հատ կան մեր ազգին մէջ...:

Գաղղիոյ ամենէն հռչակաւոր բնապատումն է Պիլֆոն, եւ 1789ին մեռած է: Միշտ արեւուն հետ մէկտեղ կեպէր, եւ ինքնին կպատմէ թէ ի՞նչպէս այս սովորութիւնը ձեռք ձգեր է: « Երիտասարդու-

Թեան ժամանակս, կասէ, շատ կսիրէի քնանալ, եւ այնպէս ծուլութեամբ կանցունէի ժամանակիս կէսը: Իմ խեղճ Յովսէփս (իւր սպասաւորն, որ վաթսունեւհինգ տարի նմա ծառայեց) ամէն ջանք կրնէր այն ծուլութեանս յաղթելու, եւ բնաւ չէր յաջողեր: Ստակ խոստացայ նմա թէ որ կարող լինի զիս առաւօտը ժամը վեցին անկողնէն հանել: Երկրորդ օրը ճիշդ որոշեալ ժամուն եկաւ զիս արթնցունելու. բայց խստութեամբ պատասխանեցի իրեն: Հետեւեալ օրն դարձեալ եկաւ, եւ այնպիսի սոսկալի սպառնալիք ըրի որ խեղճը վախցաւ գնաց: Բայց կէսօրուրնէ ետքն իրեն գրուցեցի. Յովսէփ, ես ժամանակս կորսնցուցի այսպէս ուշ ելլելովս, եւ դուն բան չշահեցար. կտեսնեմ որ դուն քու շահդ չես գիտեր. այսուհետեւ խոստմունքիս միայն ուշ դիր, եւ սպառնալիքս փոյթդ չլինի: Երկրորդ օրն ինչպէս որ պէտք էր՝ պաշտօնը կատարեց Յովսէփ: Նախ իրեն աղաչեցի պաղատեցի որ թողու քնանամ. յետոյ սրդողեցայ. բայց ամենեւին փոյթ չըրաւ, եւ բռնութեամբ ստիպեց որ ելլեմ: Հարկ եղաւ ելլել, անկողինը թողուլ: Արթննալէս ետքը հազիւ ժամ մի տեւեց սրդողիլս. եւ ոչ միայն իրեն շնորհակալ եղայ, այլ եւ խոստացածս տուի: Խեղճ Յովսէփին պարտական եմ գրուածոցս գոնէ տասը տասուերկու հատորները: »

Ուսումնասիրութեան մէկ քանի օրինակ եւս հիներէն բերեմք:

Դեմոկրիտէս փիլիսոփայն այնչափ սէր ունէր ուսման, որ իւր հայրենիքէն ելաւ Քաղդէաստան գնաց՝ աստեղաբաշխութիւն սովրելու համար. անտի Պարսկաստան անցաւ եւ լաւ երկրաչափութիւն

սովրեցաւ: Աթէնք որ եկաւ, ուսման սէրն աւելի սաստկանալով սրտին մէջ՝ աչուընէրը կուրցուց, որպէս զի դրսի առարկաներն իւր վսեմ խորհրդաճուժեանցն արգելք չլինին: Մինչեւ ցխոր ծերութիւն ապրեցաւ առանց ամենեւին հիւանդանալու:

Միժէ մեր քաղմերախտ թարգմանիչքն եւս Դեմոկրիտեսի պէս գիտութեանց սիրովը վառուած՝ երկրէ երկիր, աշխարհէ աշխարհ չպտըտեցա՞ն, եւ իւրեանց ուշիմութեանն ու հանճարոյն վերայ չըզարմացուցի՞ն զՊարսկաստան, զՀռոմ, զՅունաստան եւ զԲիւզանդիոն, եւ չդարձան գիտութեանց լուսովը չլուսաւորեցի՞ն զՀայաստան աշխարհ:

Սոկրատայ աշակերտացն իրենց վարժապետին դասերն մտիկ ընելու համար ունեցած եռանդուն փափաքն անպատմելի էր: Հայր մայր, զուարճութիւն, հանգստութիւն, ամէն բան կ'ոռոյնին այս իմաստանոյն յարելու համար, որ սրտերնին կկրթէր, մտքերնին կլուսաւորէր, եւ առաքինութեան ճամբան զիրենք կուղղէր:

Աթէնք ու Մեգարա քաղաքներն իրարու հետ անհաշտ թշնամի էին. եւ այնչափ սաստիկ էր այս թշնամութիւնն որ Աթենացիք իրենց զօրավարաց երդում ընել կուտային՝ տարին երկու անգամ Մեգարացուց երկիրն աւերելու. Մեգարացիք եւս մահապարտ կհամարուէին եթէ Աթէնք կամ անոր սահմանն ոտք կոխէին: Սակայն այս սոսկալի արգելքն չկրցաւ եւկղիդեսին ուսումնասիրութիւնը խափանել: Երեկոյեան դէմ Մեգարայէն կելէր կնկան հագուստով՝ գլուխը քողով ծածկած, եւ գիշերը կերթար Սոկրատայ դասախօսութիւնը մրտիկ կընէր. իսկ առաւօտեան դէմ նորէն իւր քա-

ղաքը կդառնար այն կանացի հագուստովը : Ինքն
եւկղիղէս եւս եղաւ անուանի իմաստասէր, եւ Մե-
գարայի մէջ դպրոց բացաւ եւ շատ հռչակեցաւ :

Մեծն Աղեքսանդր սիրէր զարուեստս եւ մեծա-
րէր զգիտունս, եւ համոզուած էր որ Թագաւոր
մը պատուելով մարդկային խելքը պատուողներն
ու մշակողները՝ ինքզինքը կանմահացունէ : Շատ
անգամ կասէր. « Աւելի կուզեմ ուսմամբ եւ գիտու-
թեամբ ուրիշներէն վեր՝ լինել քան Թէ հարստու-
թեամբ կամ իշխանութեամբ : » Հոմերոս կարդալ
այնչափ կսիրէր որ ծայրէ ծայր բերնուց սովրեցաւ.
պառկելու ժամանակ սնարին տակը կդնէր, եւ իւր
սիրելի քերթողը կկոչէր ներբողաբան քաջութեան,
եւ քերթող արքայից : « Աւելի կուզէի, կասէր, Հո-
մերոսի Թերսիտէսն լինել քան Թէ Քերիդոսի Աքիլ-
լէսը : » Քերիդոս իւր քերթողն էր, եւ բանաստեղ-
ծական զարմանալի խանդ չունէր : Կպատմեն Թէ
Աղեքսանդր հետը դաշինք դրած էր իւրաքանչիւր
լաւ տողին ոսկի դրամ մի տալու, եւ իւրաքանչիւր
հետեւակ տողին մէկ ապտակ : Սիգէա (Գուլմ Գալէ)
հրուանդանին վերայ Աքիլլեսին գերեզմանը տես-
նելով « Երանի՛ քեզ, երիտասարդ, կանչեց Աղեք-
սանդր, որ Հոմերոսի պէս մէկը քաջութիւնդ հըռ-
չակեց : » Երբոր Պարսից Դարեհ Թագաւորին բոլո-
րովին յաղթեց եւ անոր գանձին տիրեց, մէջէն մե-
ծագին ականակուռ արկղիկ մի ելաւ. հարցուցին
նմա Թէ ի՞նչ բանի կուզէ զայն գործածել. « Հոմե-
րոսս մէջը կպահեմ » պատասխանեց : Յր մի իմա-
ցուցին նմա որ աւետաբեր եկեր է. ուրախութեամբ
առջեւը վազեց եւ գրկատարած զնա ընդունելով
« Ո՛հ, բարեկամ, զրուցեց, ի՞նչ մեծ աւետիս ինձ

ունիս տալու. արդեօք Հոմերոս յարուժի՛ւն առաւ:» Ամէն ստացած փառքն աչքին ոչինչ կերեւար թէ որ Հոմերոս մի ջունենար զայն երգելու:

Ղուկուղղոս Հռոմայեցի մեծատունն անուանի եղած է իւր ուսումնասիրութեամբը: Մեծափարթամ հարստութեան մէկ մասը գործածեց ընտիր գրքեր գնելու. անոնցմով գեղեցիկ գրքատուն մի կազմեց եւ հասարակաց գործածութեանը նուիրեց զայն: Յոյն եւ Հռովմայեցի գիտնականք իբրեւ մուսայից տաճարը կերթային իւր տունը, եւ ճառարկեալ կխօսէին հոն իմաստասիրութեան եւ գիտութեանց վերայ: Մէջերնին զուարթերես եւ հըրճուալից սրտիւ կճեմէր Ղուկուղղոս, հետերնին կը խօսէր, ամէն պիտոյքնին կհոգար եւ դրամօք եւս կօգնէր նոցա: Մէկ խօսքով, իմաստնոց ապաւէն եւ օթարան դարձուցած էր իւր սիրտն ու մեծակառոյց պալատը: — Ի՛նչ մեծ տարբերութիւն չեմք գտներ Ղուկուղղոսի եւ մեր մեծատանց մէջ, որոց չասեմք ամենուն, գոնէ շատերուն՝ խիստ շատերուն տունը եւ ոչ փոքրիկ գրատուն մի, մատենից դարան մի կգըտնուի...:

Հռոմայեցւոց աշխարհայաղթ կայսրն Յգոստոս, իւր անձին պատիւ կհամարէր գիտնոց եւ ուսումնականաց հետ ընտանութեամբ վարուիլ եւ զանոնք բարեկամ անուանել: Որատիոս բանաստեղծին հետ իբրեւ թէ իւր հաւասարն լինէր՝ այնպէս կատակներ կընէր նամակաւ: Զինքն իւր քարտուղարն էր անուաներ. բայց Որատիոս մերժեր էր այն պաշտօնն՝ իւր ազատութիւնը նախապատուելով: Կայսրը չբարկացաւ նմա. եւ փոքր մի յետոյ գրեց. « Սեպտիմիոս քեզի կպատմէ թէ ի՛նչպէս քու վրադ

խօսեցայ . թէ որ դուն մերժեցիր իմ բարեկամութիւնս , հարկ չէ որ եւ ես հետդ հպարտութեամբ վարուիմ : » Որատիոս իւր քերթուածոց մէջ վրան ամենեւին խօսք չընելուն համար զուարճախօս ոճով մի իրեն կգանգատի . « Գիտցիր , կասէր , որ քեզի սրդողած եմ , վասն զի գրուածոցդ շատերուն մէջ հետս չես խօսակցիր : Մի՛թէ կվախնա՞ս որ մեր ապագայ սերնդոց առջեւ նախատինք համարուի քեզ ինձ բարեկամ լինելդ : »

Ղուկիոս իմաստական Հռոմ կուգայ , Մարկոս Աւրելիոս կայսեր կհանդիպի ճամբան եւ ո՛ւր երթալը կհարցունէ . « Սեքստոս իմաստասիրին դասախօսութիւնը մտիկ ընելու կերթամ » կպատասխանէ : Կզարմանայ Ղուկիոս եւ ձեռքն երկինք կվերցունէ : « Զարմանալու բան չկայ , կկրկնէ կայսրը . ո՛ր եւ իցէ հասակի մէջ պէտք չէ մարդ չգիտցածը սովորին իրեն ամօթ համարի : »

Լուդովիկոս մետասաներորդին կինը Մարգարիտա թագուհին օր մի սրահէն անցնելու ժամանակ տեսնելով որ Ալէն Շարթիէ իմաստուն գիտնականը հոն քուն լինի , կերթայ բերանը կպագնէ :

Քովի տիկնայքը սաստիկ կզարմանան իւր այս ըրածին վերայ , մանաւանդ որ Ալէն Շարթիէ տգեղ մարդ մի էր : Բայց ուսումնասէր թագուհին հետագայ պատասխանովը նոցա զարմանքն կաւելցունէ . « Մարդը չպագի ես , կասէ , այլ այն բերանն ուստի ամէն օր այնչափ գեղեցիկ բաներ կելլեն : »

Գաղղիոյ Ֆրանսուա Ա. թագաւորին գիրկը մեռաւ Լէոնարտօ տա Վինչի հռչակաւոր պատկերահանը : Պալատականք թագաւորին պատկերահանի մի ըրած այս կարգէ դուրս պատուոյն վերայ երբոր

սկսան զարմանալ, ասաց նոցա Ֆրանսուա. « Այս մեծ պատկերահանին ըրած պատուոյս վերայ զարմանալու իրաւունք չունիք: Յրուան մի մէջ կարող եմ ձեզի պէս բազմաթիւ տեարք ընել. բայց Աստուած միայն կարող է այս կորսնցուցած մարդուս պէս մարդ մի ընել:

Ուսումնասիրութեան կողմանէ Մեծին Աղեքսանդրէ, Յգոստոսէ եւ Ֆրանսուայէն վար չէր մնար, մանաւանդ թէ զանոնք կգերազանցէր մեր վաւաճապուհ թագաւորն: Այն ի՛նչ փոյթ ու հոգ էր որ ունեցաւ Հայոց ազգին սեպհական գիր շինել տալու եւ երկրին մէջ գիտութիւնները ծաղկեցնելու համար ամէն տեղ դպրոցներ հեմարաններ կանգնել տալու: Սրբոց Սահակայ եւ Մեսրոպայ ուսումնասէր ջանիցն յամենայնի օգնական, ձեռնտու, պաշտպան, խրախուսիչ եւ գովիչ լինելովն եւս նոցա անուանը հետ արժանապէս անմահացաւ նաեւ իւր անունը:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԹ.

ՆԵՐՈՒՄՆ.

Պօղոս եւ Պետրոս.

Սովի ժամանակ Պետրոս անունով աղքատ տղայն լեռնէն մօտակայ գեղն իջաւ որ հարուստ գեղացիներէն հաց մուրայ: Պօղոս որոյ հայրն գեղին ամենէն հարուստն էր, ձեռքը հացի խոշոր կտոր մի բռներ տանը առջեւ նստեր էր:

Խեղճ Պետրոս որ անօթուծենէ կմեռնէր, այն խոշոր հացն որ տեսաւ՝ Պօղոսին մօտեցաւ ու « Կաղաչեմ, պատառ մի թող լինի հացէդ տուր, վասն զի շատ անօթի եմ, զրուցեց :

Բայց Պօղոս անողորմաբար պատասխան տուաւ. — ձամբադ առաջ տար, քեզի տալու հաց չունիմ :

Վրան հազիւ տարի մի անցաւ, Պօղոս լեռը գնաց հօրը կորսնցուցած այծը փնտռելու : Ժայռերու մէջ երկար ժամանակ շրջեցաւ. արեւուն ճառագայթները կրակի պէս կայրէին : Պօղոս շատ յոգնեցաւ, հոգին բերանն եկաւ, եւ ծարաւէն կպապակէր կմեռնէր. եւ սակայն տեղ մի մէկ կաթիլ ջուր չէր գտներ որ փոքր մի զովանար, այն սոսկալի ծարաւն անցունէր :

Այնպէս ծարաւահատ ասդին անդին իխնդիր ջրոյ պտըտելէն ետեւ տեսաւ որ Պետրոս ծառի մի շուքին տակ նստեր ոչխարի հօտ կարածէ, եւ հետը սափորով ջուր ունի : Քովը գնաց

— Պուտ մի ջուր տուր ինձ, զրուցեց, վասն զի շատ ծարաւի եմ :

Բայց Պետրոս իրեն պատասխանեց.

— ձամբադ առաջ տար, քեզ տալու ջուր չունիմ :

Այն ժամանակ յիշեց Պօղոս որ օր մի անգթաբար չէր ուզած խեղճ Պետրոսին պատառ մի հաց տալ : Մէկէն աչուրներն արցունքով լեցուեցան եւ մանուկ հովուին աղաչեց որ իրեն ներէ : Այս աղաչանաց ու զղջման վերայ իգուծ շարժեցաւ հովուիկն Պետրոս, վեհանձնութեամբ ներեց Պօղոսին եւ սափորը տուաւ որ խմէ :

Երբոր Պօղոս խմեց ծարաւն անցուց, զրուցեց :

— Այս ինձ տուած պուտ մի ջրոյդ համար Աստուած Թէ՛ այս աշխարհիս վերայ եւ Թէ՛ անդին հարիւրապատիկ քեզ վարձատրէ :

Որ կամակար տայ եւ ներէ ընկերին ,
Վարձրս անանց գանձէ անձին իւր յերկին :

ԵՐԿՈՒ ՇՈՒՆ.

Պէտք է ներեմք իրարու
Միշտ պէտս ունիմք մէկմէկու.
Թէ այնչափ խիստ է սրբտերնիս՝
Որ խըղճերնիս
Մեզ բաւական չը համոզեր
Յընկերաց սէր,
Գէթ համոզէ շահ մեր անձանց՝
Որ չը պահեմք ոխ միմեանց.
Մեր Թըշնամին՝ գուցէ մէկ օր
Կըլլայ մեզի հարկաւոր :

Շուն մը՝ հարուստ մարդու մը քով
Լի էր ամէն բարուԹիւնով.
Ոչ կերակուր պակաս իրեն,
Եւ ոչ գըգուանք տիրոջ կողմէն :
ՀանգըստուԹեամբ հը պարտացած՝
Միտքն էր դըրած
Որ ամէն շուն պէտք է իրեն
Երկըրպագեն.
Ուստի դրացի իւր մէկ շունին
Շատ բարկացեր էր իսըրտին,

Որ ըզպատիւն իրեն վայլած՝
 Զէր մատուցած.

Ամէն առիթն որ գար յարմար՝
 Ըզնա նեղել միշտ կըջանար,
 Ու տալ ամէն կերպ զըրկանքներ՝
 Զոր աղքատաց տան հարուստներ :
 Բայց սակայն բաղդ, հարըստութիւն
 Անիրաւաց՝ չեն հաստատուն.

Այսպէս այն շան
 Շուտով հասաւ բաղդին վախճան.
 Քիչ ատենէն տէրը մեռաւ,
 Իրեն պալատը ծախուեցաւ :
 Նոր տանուտէր
 Շուն չէր սիրեր,
 Հրամեց բրունեն
 Ու դուրս ընեն :

Երկար ատեն մնաց անօթի
 Զրկար իրեն մէկն ողորմի.
 Ամէնքն երես կըզարնէին
 Զանգըթութիւն իւր առաջին :

Յուսահատած
 Քաղցէն վարուած
 Եկաւ դրացւոյն՝
 Իւր թըշնամւոյն,
 Դուռը զարկաւ,
 « Տէր իմ, բսաւ.

« Ներէ տըւած քեզ նեղութեանց՝

« Որոց շատոնց եմ զըղջացած,

« Ու քիչ մը ջուր

« Կաղաչեմ տուր,

« Եւ մէկ կըտոր

« Հաց կամ ոսկոր »

— « Հրամէ՛, եղբայր, մըտի՛ր մեր տուն »

« պատասխանեց դըրացին շուն,

« Մոռնա՛նք անցածն ու գընացած,

« ու միշտ ըլլանք սիրով կապուած.

« Ահա քեզի իմ կերակուր,

Կըտոր մը հաց ու մաքուր ջուր. »

Շունը կերաւ,

Ոգի առաւ,

Ու շատ սիրով ալ երկուքնին

Մինչեւ գիշեր հոն անցուցին :

« Եղբա՛յր, ըսաւ, — ողորմած շուն — ,

« Յոգնած ես՝ քի՛չ մը հանգչէ դուն.

« Պէտք է ես դուրս ելանեմ

« Տունը գողէն պահպանեմ » :

Քիչ մը անցաւ՝

Մէյմ՝ ալ մեր հիւր շունն արթընցաւ

Բարեկամին իւր հաչելէն.

Յատքեց, « Երեւո՛ւմ, ըսաւ, օգնեմ,

« Վըտանգ մը կայ, գող է եկեր : »

Վազեց, հասաւ, ու ատե՛նն էր,

Գողը ձեռքին բիր վերուցած

Պիտի մահու տայր շանն հարուած՝

Երբ հիւրն հասաւ

Ու սըրունգէն ըզնա խածաւ.

Գողին մահակը վար ինկաւ

Հազիւ կըրցաւ ինքզինք երկու

Թըշնամիէ ազատելու,

Գոհ ըլլալով սրունգին պատառ

Թողուլ յաղթող շանն իյաւար :

Այսպէս ահա եղբայրասէր մեր այն շունն՝
 Շուտով գրտաւ ըզփոխարէն իւր սիրուն :
 Նոյնպէս ամէնքն ալ կը գրտնան
 Որ ընկերաց ներող լինին եւ գըթած.
 Թէ՛ Սատուծոյ նոքա են միշտ սիրելի
 եւ Թէ՛ մարդկանց զարմանալի :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի.

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ.

Համբերութիւնը ծառ մի է, որոյ արմատը դառն է, եւ պտուղները
 շատ անոյշ :

Համբերութիւնը բանալին է ամենայն դրանց եւ դեղ ամենայն ցաւոց :

Սոկրատայ երեւելի կատարելութիւններէն մէկն
 էր նաեւ հանդարտութիւն հոգւոյն, զոր ոչ պա-
 տահարք եւ դիպուածք, ոչ նախատանք եւ թշնա-
 մանք, եւ ոչ ո՛ր եւիցէ հարստահարութիւն կարող
 էր այլայլել : Սակայն ամէնքը կվկայեն Թէ այս
 իմաստասէրը բնութեամբ աշխոյժ, կրակուբոց ու
 քարկացող էր. եւ այն համբերութիւնը պտուղ էր
 իւր անձին եւ բնութեանը յաղթելու համար ըրած
 անդուլ ջանիցն եւ ճգանց : Սր մի վայրենի մարդուն
 մէկն ուժով ապտակ մի կզարնէ Սոկրատայ. ժպտե-
 լով իրեն կասէ իմաստասէրն. « Յաւալի է որ
 մարդ չգիտեր Թէ ե՛րբ պէտք է գլուխը սաղաւար-
 տով գոցէ : »

Համբերութեան վարժելու համար ընդարձակ

ասպարէզ ունեցաւ Սոկրատ իւր իսկ տունը . վասն զի Քսանտիպպէ կինն այլանդակ, կրքոտ ու բարկասիրտ բնութիւն ունէր : Երիկուն մի Սոկրատ բարեկամներէն մէկն ընծրիքի հրաւիրեր էր. Քսանտիպպէ սկսաւ կռիւ հանել. ըստ սովորութեանը, պոռաց կանչեց, ամէն բան խառնափնդորեց, եւ բռնեց կերակուրները կատաղաբար սեղանին վերայ թափեց, սեղանէն ելաւ : Խեղճ բարեկամը ապշած՝ եւ վախնալով որ այն կատաղութեան ժամանակ իւր գլուխը բան մի չիջեցունէ անճոռնի կինը, ուզեց քաշուիլ երթալ. բայց անխռով Սոկրատ բռնեց կեցուց զինքն ու զրուցեց. « Մ'ե'րթար կեցիր. որ մի տունդ կերակուր կերած ժամանակս մի'թէ հաւ **մի** սեղանին վերայ թռչտելով՝ կերակուրները չթափե'ց : Եւ մեք ի՞նչ ըրինք. խնտացինք միայն : Նոյնպէս ընեմք նաեւ այսօր : »

Օր մի եւս երբոր իմիասին տեղ մի կերթային, ճամբան Քսանտիպպէին կատաղութիւնը նորէն բռնեց, Սոկրատայ վերարկուն քաշեց հանեց եւ տղմին (չամուր) մէջ նետեց : Երկայնամիտ իմաստնոյն բարեկամները խորհուրդ տուին որ իսկոյն պատժէ կնոջն այս անամօթ վարմունքը, եւ գոնէ մի անգամ ցուցանէ նմա որ իւր տէրն է : « Գիտեմ որ այր եւ կնոջ մէջ եղած կռիւը ձեզի զուարճալի տեսարան է, զրուցեց Սոկրատ, բայց չեմ ուզեր ինքզինքս ձեզ կատակերգութեան նիւթ ընել : »

Աղկիբիադ որ Սոկրատին աշակերտն էր եւ հռչակաւոր զօրավար՝ մեռեալ 404 ամօք նախ քան ըզՔրիստոս, կզարմանար թէ ի՞նչպէս այս անպիտան բնութիւն ունեցող կնոջ անդադարելի պոռալ կանչելուն կհամբերէր Սոկրատ : « Այնպէս վարժած

եմ, պատասխանեց իմաստասէրն, որ իւր պոռալ կանչելները վրաս անուոյ մի ձայնէն աւելի ազդեցուծիւն չեն ըներ : » Մինչեւ իւր մահը զարմանալի երկայնմտութեամբ համբերեց Սոկրատ այս կնոջ կռուասէր ու կատաղի բնութեանը, զոր կարծես թէ երկինք ստեղծեր ու հետը միաւորեր էին՝ իւր առաքինութիւնը փորձելու եւ ամենուն յայտնելու համար :

Պատանւոյն մէկն երկար ժամանակ հռչակաւոր փիլիսոփայի մի դասերուն հետեւելէն յետոյ երբոր տուն կդառնայ, հայրը կհարցունէ թէ ի՞նչ սովրեցաւ : « Առիթը գայ նէ քեզ կցուցանեմ, հայր » կը զրուցէ պատանին : Այս պատասխանին վերայ հայրը կբարկանայ ու կբռնէ զինքը լաւ մի կծեծէ : Պատանին առանց ամենեւին ձայն հանելու « Ահա սովրեցայ, կասէ, հօրս բարկութեանը համբերելու նաեւ արժանի չեղած ժամանակս : »

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԻԱ.

Արեւուծիւն մտաց.

Գաղղիացւոց Լուդովիկոս ԺԴ արքայն, իւր մեծագոր թագաւորութեան փառքը բաւական չը համարելով՝ կփափաքէր նաեւ մատենագրական փառաց հասնիլ. ուստի օր մի իւր յօրինած ոտանաւորներէն մէկքանին պալատականացը մէկուն կցուցանէ, որ չգիտնալով թէ նորա գրածն է, « Ո՞ր

տգէտն ասոնք գրեր է » կասէ : « Ես » կպատասխանէ Թագաւորը : Արթուրն պալատականն առանց ամենեւին այլայլելու, « Ուրեմն գէշ գրել ուզեր էք, Տէր արքայ, եւ կատարեալ կերպով յաջողեր էք, կասէ : Կերեւի որ Վեհափառութիւն Ձեր ամէն ուզածն ընելու ձիրքն ունի : » Այս ճարտարագիւտ պատասխանովը Թագաւորին անձնասիրութիւնը կշոյէ, բանաստեղծին բարկութիւնը կիջեցունէ եւ անպատիժ կազատի :

Երիտասարդ դատաւոր մի դատաստանարանի գահերէց կընտրուի, եւ Նափուլէոնի կներկայանայ : Կայսրը զինքը բաւական տարեց չգտնելով « Գահերէց տէր, կասէ, փոքր մի շատ երիտասարդ էք : — Ինքնակալ Տէր, կպատասխանէ նրբամիտ գահերէցը, ճիշդ այն տարիքն ունիմ յորում Ձեր Վեհափառութիւնը Մարենկոյի պատերազմին յաղթեց : » Այս ճարտար պատասխանով Նափուլէոն կբռնուի եւ գահերիցութիւնը կհաստատէ :

Գէշ գործածուած հարստութիւն.

Անտոն փոքրիկ ագարակ մի ունէր. մէջը կաշխատէր եւ իրեններովը երջանիկ կապրէր աստուածպաշտութեամբ եւ խնայութեամբ : Բանի մը կարօտ չէր, եւ ամէն տարի կարող էր իւր որդւոցն համար փոքրիկ գումար մի մէկ կողմը պահեստի դնել :

Օրին մէկը իւր բակին մէջ եղած ջրհորը մաքրելու ժամանակ մէջը աւազին ու տղմին տակ Թաղուած պղնձէ աման մի գտաւ՝ ոսկիով ու արծա-

Թող լի: Պ. Անտոնին խելքը գլխէն թռաւ, կարծեց որ այն գտած գանձին հետ իւր մշմարիտ երջանկութիւնը գտաւ:

Եւ յիրաւի, այն վայրկենէն իւր մշակաց ձեռքը թողուց արտերուն մշակութիւնը. սկսաւ իւր վիճակին չվայելած փառաւոր հագուստներ հագնիլ, փափուկ ու մեծածախ կերակուրներ պատրաստել տալ, ինքզինքը կերուխումի եւ խաղի տուաւ. ա՛յլ ոչ Աստուած կմտածէր եւ ոչ յաւիտենականութիւն. եւ կարճ ասեմ, այնպէս ըրաւ որ շատ ջանցաւ՝ բոլոր գտած գանձը կերաւ վատնեց, եւ հարուստ լինելու տեղ՝ ծանր պարտքերու տակ մտաւ:

Իւր ագարակիկն աճուրդով (մէզատ) վաճառեցաւ: Անցուցած զեղիս կեանքովն առողջութիւնը կորսընցուցեր էր, եւ սրտին մէջ աստուածաշտուածեան ամէն կայծն էր մարեր: Իբրեւ յետին թշուառութիւն՝ գնաց այն գանձը հանած ջրհորին քով, եւ յուսահատութենէն ինքզինքը մէջը նետեց խրդդեցաւ:

Երջանկութեան ոյք գոլպատճառ զոսկի զարծամ
կարծիցեն,

ՅԱնտոնին դառն օրհասէն խրատ ըզգաստու-
ծեան թող առցեն:

Երկու. մրագ.

Յո՛ր մի տղուն մէկը կհարցունէր իւր հօրն որ շատ հարստացեր էր. « Հա՛յր, այսպէս հարստանալու համար ի՞նչ ըրած ես: Ես վաստկածովս հազիւ ամենայն խնայութեամբ երկու ծայրն մէկ մէկու կբերեմ: — Անոր կերպն ամենադիւրին է որդեակ,

կապտասխանէ հայրը՝ դիմացնին վառուած երկու
ճրագին մէկը մարելով, եւ այս է որ մարդ գիտ-
նայ հարկաւորով բաւականանալ, եւ մէկ ճրագ
միայն վառել՝ երբոր երկու հատ վառելու հարկա-
ւորութիւն չլինի : »

Ճարտփկութիւն եւ անվախութիւն.

Մակեդոնիոյ Փիլիպպոս Թագաւորին փառաւոր
ձի մի ընծայ եկեր էր, եւ Յուկեփաղ կամ Յլագլուխ
կկոչուէր, որովհետեւ գլուխը ցլու գլխուն կնմանի
եղեր : Երբոր շատ վարպետ ձիավարժներ չկրցան
այն ամեհի խստերախ ձին սանձել, Փիլիպպոս կու-
ղէր զայն հեռացունել իբրեւ վնասակար կենդանի.
« Մե՛ղք, ասաց դեռահասակ որդին Աղեքսանդր,
որ իրենց անկարողութեամբն ու վախկոտու-
թեամբը այս սքանչելի ձին ձեռքէ պիտի հանեն : »
Փիլիպպոս որդւոյն յանձնապաստանութիւնն ուղ-
ղելու համար հրամայեց որ ինքն հեծնէ վրան :
Ուրախութեամբ վազեց կատաղի ձիոյն քովը գնաց
Աղեքսանդր, շոյեց փայփայեց զայն, հանդարտե-
ցուց, ճարտարութեամբ վրան ցատքեց, փոքր
մի ժամանակ քալցուց, յետոյ մտրակեց, սանձար-
ձակ վազցուց յոգնեցուց, սանձը դարձուց բերաւ
հօրը առջեւը հանդարտ հանդարտ ձիավարեց ու
վար իջաւ : Զարմացաւ Փիլիպպոս. « Որդեակ, զրու-
ցեց, քեզի արժանի Թագաւորութիւն մի փնտռէ,
Մակեդոնիա բաւական չէ. » եւ գրկեց զինքն համ-
բուրեց : Յետոյ այս ամեհի ձին այնչափ վարժեցաւ
կասեն Աղեքսանդրի, որ մինչեւ դիմացի ոտուրները
կճկէր որ Աղեքսանդր վրան հեծնէ :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԻՅ.

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ.

ձշմարիտ բարեկամն իվեր է քան զամենայն
գանձս աշխարհի :

Շատ բարեկամ ունենալ կարծողն եւ ոչ մէկ
հատ ունի :

Ամենուն բարեկամ եղողն՝ մէկուն բարեկամ չէ :

Բարեկամութիւնն ազնիւ գինւոյ կնմանի, ո՛րչափ
հնանայ, այնչափ աւելի կազնուանայ :

Թէ որ առաքինի ու հաւատարիմ բարեկամ մի
գտար՝ գիտցիր որ գանձ ես գտեր. իւր համբաւը
քու համբաւոյդ հովանի լինի, ցաւերդ կմեղմէ,
վշտերդ կսփոփէ, եւ զուարճութիւններդ կկրկնա-
պատկէ :

Բարեկամաց առաջին յօդակապը պիտի լինի նո-
ցա իրարու վերայ ունեցած համարումը :

Ի՞նչ քան կրնայ համեմատիլ բերեկամութեան
քաղցրութեանը : Այն ի՞նչ անզուգական մխիթա-
րութիւն է գտնել երկրորդ ես մի, յորմէ մարդ
ամենեւին ծածուկ քան չունենայ, եւ իւր սիրտն
նորա սրտին մէջ զեղու սիրով եւ վստահութեամբ :

Ապահով բարեկամ քեզ համարէ այն անկեղծ
մարդն որ պակասութիւններդ կիմացունէ, քան
թէ զայն որ ամէն ըրածդ կգովէ :

Ոսկին իբրևս կփորձուի. ձշմարիտ բարեկամն
եւս իթշուառութեան :

Ամէն բարեկամ կարծուածներն բարեկամ չեն,
այլ սեղանակիցք, խրախճանակիցք, ընկերակիցք

կամ կամակիցք : Իրարմէ լաւ զանազանէ զանոնք
 ճշմարիտ բարեկամն իւր բարեկամին ուրախու-
 թեանը ուրախակից լինի, ցաւոցը ցաւակից, եւ
 պակասութեանցը վերայ ներողամիտ աչօք կնայի :

Սակաւութիւն բարեկամաց.

Երիտասարդին մէկուն հարցուց հայրը թէ ուս-
 տի՞ կուգայ. եւ երբոր նա « Բարեկամներս տեսնելէն
 կուգամ » պատասխանեց. « Ուրեմն շատ բարեկամ
 ունիս, կրկնեց հայրը զարմացմամբ : Դուն քան
 զիս շատ աւելի երջանիկ ես, որդեակ, որովհետեւ
 եօթանասուն տարեկան եղայ եւ հազիւ մէկ բարե-
 կամ մի կրցայ գտնել : » Այս պատասխանով ուզեց
 հայրը որդւոյն հասկացունել որ խելացի մարդը
 ճշմարիտ բարեկամ չհամարիր իւր ամէն երեսին
 ծիծաղողն, ամէն իւր հետը խօսողը. վասն զի գի-
 տէ որ նոքա երեսին կծիծաղին, հետը կխօսին,
 ետեւէն առջեւէն կպտըտին այլ եւ այլ շահու յու-
 սով եւ նկատմամբ :

Այս էր նաեւ Սոկրատայ կարծիքը, եւ իւր տունը
 փոքրիկ գտնողներուն կպատասխանէր. « Աս-
 տուա՛՛՛՛՛ տայ որ ճշմարիտ բարեկամօք միշտ լեցուն
 լինի : » Բարեկամութիւնն այնպիսի մեծ բարիք
 է, որ ճշմարիտ բարեկամ մի գանձ է անգին. շատ
 անգամ մարդ բոլոր կեանքը կփնտռէ եւ չկրնար
 գտնել :

Պարսիկ գինուորին մէկը պատերազմի մէջ մե-
 ծամեծ քաջութիւններ ըրեր էր իւր ճարպիկ արա-
 գընթաց ձիոյն ձեռքովը : Կիւրոս թագաւորն իրեն
 աւաջարկեց որ գաւառի մի հետ փոխէ իւր ձին.

« Ոչ, գաւառի մի հետ չեմ փոխեր ձիս, պատասխանեց խելացի զինուորը, այլ ճշմարիտ բարեկամի միոյ հետ՝ թէ որ կարող ես ինձ գտնել : » Կիւրոս չկրցաւ այն սիրած ու հաւնած ձին ձեռք ձգել իւր հաճութեամբը, որովհետեւ անոր փոխարէն ուզած ճշմարիտ բարեկամը թերեւս իրեն համար անգամ կարող չէր եղեր գտնել : Ուրեմն, բարեկամի սրբազան անունն անխտիր ամենուն չտամք, որպէս զի դիւրաւ չխաբուիմք եւ ընդունայն ցաւեր ու վշտեր չքաշեմք :

Դամոն եւ Պիւթիաս.

Ճշմարիտ ու անձնանուէր բարեկամ այն է որ միշտ պատրաստ է ոչ միայն իւր հարստութիւնը նուիրել իւր բարեկամին, այլ մինչեւ իւր անձը, իւր կեանքը : Այսպիսի էին սիրակուսացի Դամոն եւ Պիւթիաս երիտասարդ բարեկամք : Ասոնց բարեկամութեան հիմն եղեր էր իրենց համակամութիւնը, համամիտ բնութիւնը, եւ գործադրութիւն ազնուական առաքինութեանց զանոնք իրարու հետ անլուծանելի միացուցեր էր : Այն միջոցին Սիրակուսայի իշխանն էր Դիոնեսիոս բռնաւորը, որ ամէն տեսակ առաքինութենէ կխրտէր. ուստի եւ սնուտի պատճառաւ մի Դամոնը իմահ դատապարտեց :

Դամոնի մայրն ու քոյրը մօտակայ գեղ մի կբնակէին : Դամոն բռնաւորէն հրաման խնդրեց որ երթայ խեղճ մօրն ու քրոջը վերջի բարեւը տայ, եւ խոստացաւ որ չորս օրէն դառնայ գայ Սիրակուսա՝ իւր մահուան վճիռն ընդունելու :

Այս խնդրուածքն այնչափ կարգէ դուրս երեւ-

ցաւ բռնաւորին, որ ժպտելով մի զրուցեց. « Զիս ա՛յնչափ միամի՛տ կկարծես որ խօսքիդ հաւատամ եւ զքեզ թողում որ երթաս : եւ դարձիդ ո՛վ ինձ երաշխաւոր պիտի լինի :

— Ե՛ս, պատասխանեց Պիւթիաս, որ բարեկամին հետ մէկտեղ գնացեր էր : Թէ որ որոշեալ օրն ու ժամը չկայ, կհաւանիմ իւր տեղը մեռնիլ :

Ուրախութեամբ ընդունեց բռնաւորն այս առաջարկութիւնը, որովհետեւ Պիւթիաս եւս Դամոնին չափ ատելի էր նմա : Ուրիշին սիրտն իւր սրտին պէս դատելով՝ որոշ միտքը դրած էր որ Դամոն միանգամ ձեռքէն որ ազատի՛ ոչ եւս դառնայ, եւ այնպէս այն իրենց առաքինութեամբն ու հայրենասիրութեամբն անուանի եղած երկու երիտասարդներէն մէկը կսպաննուի, միւսը ինքնահալած լինի եւ անուանարկ իբրեւ տուած խօսքը չկատարող վատ :

Զորրորդ օրը կհասնի, մահառիթ ժամը կմօտենայ : Սիրակուսայի բնակիչքը համախումբ ժողոված բարձրաւանդակին պատրաստուած հրապառնակը՝ անձկութեամբ կսպասեն ահաւոր գլխատութեան. եւ սակայն Դամոն չերեւար : Սնդին Պիւթիաս բանտին մէջ աստուածոց կաղաչէր որ բարեկամին դառնալուն արգելք հանեն : Վեջապէս սահմանեալ ժամը կզարնէ, կուգան զինքը բանտէն կհանեն կտանին. եւ մինչդեռ ժողովուրդը կցաւէր կողբար անմեղին մահը, եւ բռնաւորն ուրախութեամբ կլեցուէր, ճշմարիտ եւ անձնանուէր բարեկամն գլխահատ բարձրաւանդակին վերայ կելլէր զուարթադէմ :

Բայց յանկարծ համատարած լուսութեան մէջէն

աղաղակ մի է կփրթի « Ահա՛ կուգա՛յ, Դամոն կուգա՛յ. » եւ բոլոր ժողովուրդն նոյն ձայնը կրկնէ : Դամոն որ ողողած գետէ արգելուելով ջէր կրցեր աւելի շուտով հասնիլ գալ, շնչասպառ՝ խելքը կտրսնցուցած, աչուրները դարձած կնետուի ժողովրդեան մէջ, բարձրաւանդակին վերայ կսրանայ, կթռչի, կելլէ, բարեկամին կպլլուի, համբոյրներովը կծածկէ զայն եւ ջերմաջերմ արտասուօքը կթրջէ :

Յայնժամ երկու երիտասարդաց մէջ վեհանձնական կռիւ մը կբացուի, որ անզգայ սրտից անգամ արցունք թափել կուտար. « Ժամն անցաւ, կգրուցէր Պիւթիաս. այլ ի՛նձ կիյնայ մեռնիլ : — Մահուան դատապարտուողն ե՛ս եմ. ե՛ս պէտք է մեռնիմ եւ դուն ապրի՛ս » կգոչէր Դամոն :

Դիոնեսիոս հանդերձ իւր անգուժ բռնաւորութեամբը չկրնար այսպիսի սրտաշարժ աղիողորմ տեսարանին անկարեկիր կենալ, մանաւանդ որ կտեսնէր կլսէր նաեւ չորս կողմէն գետափետեալ ժողովրդեան զարմանքը, կարեկցուժիւնն ու արգահատանքը : Կիմանայ կհասկանայ որ այնպիսի ջնաշխարհիկ անձինք փոխանակ մահուան՝ երկարատեւ կենաց արժանի են. երկուքին եւս կներէ, եւ հրճուալից ժողովուրդն իձայն ցնծուժեան կառնուն յաղթանակաւ տներնին կտանին այն անձնանուէր բարեկամները :

Դեմետրիոս Փաղերացին կըսէր որ ճշմարիտ բարեկամք կսպասեն որ յաջողուժեան մէջ զիրենք կանչեն. իսկ ձախորդուժեան ժամանակ առանց կանչուելու իրենք իրենցմէ կուգան :

Մարդուն մէկն իւր բարեկամէն յանդիմանուելով կուզէր բարեկամութիւնը թողուլ : Կատոն երէց հռոմայեցին ասաց նմա. « Մտածէ որ իւր խայթոցին համար մեղուն չեմք ատեր, այլ իւր մեղրին համար կպահեմք : »

Դաւթի ու Յովնաթանայ զարմանալի բարեկամութիւնը կրնան կարդալ փափաքողք մեր ընդարձակ Սուրբ Գրոց պատմութեանը մէջ :

Գժտութիւն եւ հաշտութիւն բարեկամաց.

Թէ որ բարեկամք կուզեն որ բարեկամութիւննին գժտութեան տխուր երեսը չտեսնէ, պէտք է որ շատ բան իրարու ներեն : Աւելի առաքինի եղողն աւելի պէտք է սիրէ եւ ներէ :

Արիստիպպոս փիլիսոփայն որ Քրիստոսէ հինգ դար առաջ է, օր մը բարկութեան ժամանակ իւր եսքինէս բարեկամին հետ կաւրուի : Եւ երբոր իրեն կասեն թէ « Զձեզ ա՛յնպէս սերտ միացընող բարեկամութիւննիդ ի՞նչ եղաւ : — Քուն լինի, կպատասխանէ Արիստիպպոս. բայց պիտի արթընցունեմ : » Մէկէն կվազէ եսքինեսին տունը կերթայ, « Զիս ա՛յնչափ խստասի՛րտ կկարծես, կասէ, որ սխալանացս չկարենամ դարման ընել : — Ա՛հ, ամէն բանի մէջ ինձ կյաղթես, կգոչէ եսքինէս՝ սաստիկ սիրտն ելած. իմ ընելիքս դո՛ւն կընես : » Իրարու կպլուին կպագտուին, եւ անցածը մոռանալով՝ բարեկամութիւննին աւելի սերտ կպնդեն :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԻԳ.

Ապերախտ, Ապերախտութիւն, Երախտագէտ, Երախտագիտութիւն.

Ապերախտին սիրտն անապատի կնմանի որ երկնքէն իջած անձրեւն անյագարար կծծէ, կկլլէ ու բան չբուսցուներ :

Ապերախտն ամենայն չարիք կարող է ընել :

Ապերախտին վերջը միշտ խեղճութիւն է :

Ապերախտութիւնը բնութեան դէմ ախտ մի է. վասն զի կենդանիք անգամ երախտագէտ են :

Զարիքը պէտք է մոռանալ, բայց երախտիքն յիշել միշտ :

Երախտագիտութիւնն այնպիսի բեռն մի է, զոր սակաւամիւ մարդիկ կարող են կրել. ուստի եւ շատ ճշմարիտ է Գաղղիացւոց հռչակաւոր Լաֆոնն-Թէն առակախօսին զրուցածն .

Թէ պէտք լինէր դատապարտել
Երկրիս երեսն եղած բոլոր ապերախտներ,
Որո՞ւն ներումն արդեօք շնորհել :

Մարդուս սրտին մէջ բուսնող մոլուկեանց ամենէն ցածն ու անարգն է ապերախտութիւնը. եւ սակայն սակաւաւոր սրտեր կան որ այն գարշելի ախտէն ազատ լինին: Շատ անգամ ապերախտն իւր բարերարին երախտիքը չճանաչելէն զատ՝ չարիք եւս անոնց կփոխարինէ՝ Լաֆոնն-Թէնին առակած այն օձին նման, որ թմրութիւնն անցնելուն պէս մէկէն նախ զինքը տաքցնելով կենդանացնողը կխածնէ :

Մարդիկ կան որ ապերախտութիւննին ծածկելու

համար ոչ երբէք բարեգործութիւն մը ազնուական ու անշահասէր պատճառի կրնճայեն , ինչպէս է օրինակ իմն՝ բարիք ընելու սէրը : Երախտագիտութեան սրբազան պարտքէն ազատելու համար՝ կջանան մարդու խղճմտանքին ամենէն խոր խորշերը մանել թափանցել , որպէս զի շահասիրութեան կամ մոլութեան նշմարանք հոն գտնեն եւ իրենք զիրենք արդարացունեն : Ո՛հ , կասեն , մեզի այս ծառայութիւնն ըրաւ , վասն զի գիտէր թէ... : — Ելլալիք բան ունէր : — Ընդունայն տեղ մարդ մարդու բան չընէր , զգուշանամք իրմէ , հարկաւ շահ մի ունի : — Ասոր տակը որագայթ կայ , խաղալիք մի ունի : — Ի ցոյցս կրնէ , փառասիրութեան համար է ըրածը . կուզէ առատածեռն երեւիլ... :

Այս լեզուն կբանեցունեն ապերախտք :

Բայց դու , ազնի՛ւ ընթերցող , չըլլայ թէ ասով բարիք ընելէն զզուիս . վասն զի սիրտդ մեծ ու քաղցր մխիթարութենէ կզրկես . միայն նայէ որ բարեգործութիւններդ ընտրութեամբ ու խելքով ընես , որ չափ կարելի է արժանաւոր անձինք փնտռես : Գիտցիր որ ամէն մարդիկ առ հասարակ ապերախտ չեն . մէջերնին կգտնուին նաեւ այնպիսիք որ իրենց անմոռանալի երախտագիտութեամբն՝ ապերախտից տուած ցաւը մոռցունել կուտան . դոյզն բարիք անգամ որ մէկէն տեսնեն , յաւիտեան չեն մոռանար , եւ կաշխատին որ կերպով մի անոր փոխարէնն ընեն :

Ուրեմն , որպէս զի զրուցածնիս ընթերցողաց միտքն ամփոփ մնայ՝ գլխաւորեմք :

Ծնողացն ապերախտ եղած տղայն՝ հրէշ է : Հայրենեաց կամ ազգին դէմ ապերախտը՝ գազա՛ն :

Ոչ երբէք պէտք է բարիք ընողներուն սիրտը կամ խղճմտանքը քննել :

Բարեգործութիւնը գեղեցիկ բան է, բայց պէտք է լինի խելքով եւ ընտրութեամբ :

Անբեր երկիր սերմանուած հունտն ո՛րչափ եւ ազնիւ լինի, դարձեալ պտուղ չբերեր :

Մարդկանց ապերախտութիւնը պէտք չէ զմարդ բարիք ընելէն ետ կեցունէ :

Բարիք ընողին զգացած ուրախութիւնը բարիք գտնողին զգացածէն բոլորովին տարբեր է :

Որչափ որ երախտագիտութիւնը սիրելի է ու մարդուս բարիք կբերէ, այնչափ եւ ապերախտութիւնը զզուելի է ու ամէն տեսակ հոգեկան կատարելութիւններէ ու վեհ մտածմունքներէ կմերկացունէ զապերախտն ու ատելի կընէ ամենուն :

Արդեօք մեր մէջը ո՛րչափ տեղիք գտած է այս ցաւալի ախտը, եւ մինչեւ հիմա ո՛րչափ դարման է տարուած... : Արդեօք դեռ միշտ շխտա՞կ կելլէ նարեկացի սուրբ հօր բերնէն ելածը,

« Առ երախտաւորն ապերախտ գտանիմք : »

Աղբիւր.

Ամառուան տաք օր մը արտերու մէջ կբալէր Տիրան . երեսէն կրակ կելլէր ու ծարաւէն կմեռնէր : Յանկարծ արծաթափայլ աղբիւրի մի քով հասաւ որ կաղնի ծառի մի շուքին տակ ծածկուած ժայռէն զովագին կբխէր :

Տիրան շատ անգամ լսեր էր որ տաքցած ժամանակ պաղ ջուր խմելը վնասակար է մարդուս : Բայց առանց մտածելու գլխուն գալու վտանգը,

կուշտ մը այն սառուցեալ ջրէն խմեց . եւ վրան շատ չանցաւ մեռածի պէս ընկաւ գետին : Յետոյ խելքը գլուխը գալով ելաւ եւ կամաց կամաց տուն դարձաւ բոլորովին հիւանդ . վրան ջերմ եկաւ , անկողին ընկաւ ու կեանքը վտանգի մէջ էր :

— Ա՛հ, կասէր հառաչանօք իւր ցաւոց անկողնոյն մէջ . ո՞վ կրնար այն ականակիտ աղբիւրը տեսնելով մտքէն անցունել մեջի եղած վնասակար թոյնը :

Խելացի մայրն որդւոյն այս ցաւագին գանգատը լսելով զրուցեց .

— Աղբիւրին ականակիտ ու առողջարար ջուրը չէ քու հիւանդութեանդ պատճառ , որդեակ իմ , այլ քու անխոհեմութիւնդ ու անժուժկալութիւնդ . վասն զի թէ որ խոհեմութեամբ ու ժուժկալութեամբ փոքր մի համբերէիր որ տաքութիւնդ անցնի , ու յետոյ խմէիր այն ջրէն՝ կտեսնէիր որ թէ՛ ծարաւդ կանցունէր եւ թէ՛ ամենեւին վնաս չէր տար : Ուրեմն , որդեակ , անմեղ աղբիւրը մեղադրելու տեղ՝ ինքզինքդ , քու անհամբերութիւնդ մեղադրէ :

Աստուած ամէն բան բարի ու օկտակար ստեղծած է . միայն պէտք է անոնց գործածութեան տեղը՝ ժամանակն ու չափը գիտնամք :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԻԳ.

Խոնարհամտութիւն Պղատոնի.

Գիտուն եւ իմաստուն լինել ջանա, բայց տգէտ երեւիլ սովրէ. շատ փորձանքներու մէջ կիյնաս՝ թէ որ գիտուն, իմաստուն երեւիլ ուզես, եւ իրօք տգէտ, անուս լինիս :

Աթենացի հռչակաւոր իմաստասէրն Պղատոն որ սքանչելի գրուածներ ունի եւ Քրիստոսէ 347 տարի առաջ մեռած է, այն միջոցին որ բոլոր Յունաստան իւր համբաւովը լցուած էր՝ կելլէ Ողիմպիա քաղաքը կերթայ հասարակաց հանդիսաւոր խաղերը (1) տեսնելու : Հոն զինքը ջճանչցող մարդոց հետ կը բնակի, եւ սիրելի լինի նոցա իւր ազնիւ ու մարդավար կերպերովն եւ քաղցր բնաւորութեամբը : Հետերնին ոչ գիտութեանց վերայ կխօսի եւ ոչ փիլիսոփայութեան, միայն կասէ որ իւր անունը Պղատոն է : Խաղերն աւարտելէն յետոյ ամէն քն իմիասին Աթէնք կուգան, եւ իմաստասէրն զիրենք իւր լտունը կընդունի մեծ սիրով. այն ժամանակ հիւրքն իրեն կասեն. « Կխնդրեմք, շնորհ ընէիր զմեզ քու անուանակից իմաստասիրին տունը տանէիր, որովհետեւ Աթէնք գալերնուս մեծ պատճառըն զինքը տեսնել է : — Ես եմ նա » կպատասխանէ նոցա Պղատոն համեստ ժպիտով մը : Յտարականք այնպիսի մեծահամբաւ ընկեր ունենալնին որ կիմա-

(1) Շքեղ հանդէսներ էին որ չորս տարին մի անգամ կկատարուէին եւ բոլոր Յունաստան հանդիսադիր լինէր :

նան՝ կզարմանան կմնան ու կվկայեն որ Պղատոնին վերայ լսած մեծամեծ գովեստնին դարձեալ ճշմարտութեան չեն հասնիր, եւ թէ իւր խոնարհամիտ պարկեշտութիւնը արդեանցն հաւասար էր :

Երուանդ եւ Վահան .

Երուանդ որ քաղաքին մեծատանց մէկուն որդին էր , գարնան գեղածիծաղ առաւօտ մի գեղ գնաց պտըտելու : Ագարակ մտաւ եւ սկուտեղ (քեասէ) մի կաթ բերել տուաւ . ստակը վճարեց , ծառի մի շուքին տակ խոտի վերայ նստաւ , կաթին մէջ հաց ջարդեց եւ սկսաւ հոմով համով ուտել :

Վահան որ գեղացի աղքատ տղայ մի էր , հոն կեցեր Երուանդին կնայէր եւ բերնին ջրերը կվազէին . դէմքը խեղճութենէն ու անօթութենէն գոյն չէր մնացեր . ո՛րչափ եւ սիրտն ուզեց՝ չկրցաւ երեսը պնդացնել ու Երուանդէն սակաւ մի ուզել :

Մեծատուն Երուանդին մտքէն մէյմը անցաւ որ սկուտեղին տակը քիչ մը քան աղքատ Վահանին թողու . քայց շատակերութիւնը բարեսիրութեանը յաղթելով լաւ մը կերաւ լմնցուց մինչեւ յետին կաթիլը : Եւ ի՞նչ եղաւ զարմանքն երբոր սկուտեղին տակը քանի մի տող ոտանաւոր տեսաւ . եւ երբոր զանոնք կարդաց՝ կաս կարմիր կտրեցաւ : Իսկոյն սկուտեղը նորէն լցունել տուաւ , խոշոր հաց մի ուզեց , իւր ձեռքովն զայն կաթին մէջ բրդեց եւ սիրով Վահանին հրամցուց որ ուտէ փորը կշտացունէ :

— Սկուտեղի մէջի առածն , կասէր Երուանդ , պէտք է բոլոր մեծատանց սկաւառակացն ու պնակաց եւ սկուտեղաց մէջ գրել :

Եւ այս էր այն գեղեցիկ առածը .

« Ձեմ ուզեր որ զիս դնեն

« Կըշտապինդ ուտողին առաջի,

« Թէ ոչ նա յիւր սըրտէն

« Գուժ եւ սէր անցունէ աղքատի : »

Մեծարանք ծերոց.

Ա.Թե՛նքի ծաղկած ժամանակը ծերուն մէկը Թատրոն կերթայ եւ նստելու տեղ չգտներ : Հեռուէն երիտասարդք զինքը կտեսնեն , նշան կրնեն որ քովերնին երթայ, եւ փոխանակ տեղ տալու նըստեցնելու՝ վրան կծիծաղին : Խեղճ ծերը Թատրոնին չորս կողմը կպտըտի եւ նստելու տեղ մի չգտներ : Անդիէն Լակեղեմոնացոց դեսպանները կտեսնեն՝ որ պատուաւոր տեղ նստեր էին, եւ մէկէն կառնուն զինքը մէջերնին կնստեցունեն : Դեսպանաց այս ծերամեծար վարմունքին վերայ կզարմանան բոլոր հանդիսականք եւ ծափաձայն կգովեն :

Լակեղեմոնացիք պզտիկուց կսովրէին ծերերը պատուել ու մեծարել :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԻՆՔ.

Կարմիր Գլխարկիկ.

Ատենով գեղացի աղջիկ մի կար խիստ գեղեցիկ. մայրը վրան կխենդենար, իսկ մամն որ ասես՝ զայն ի՛նչպէս սիրելը չէր գիտեր. եւ իւր սիրելի Թոռանը պզտիկ կարմիր գլխարկ մի շինել տուաւ, որ երեսին շատ վայելեց, եւ ամէնքը սկսան զինքը Կարմիր Գլխարկիկ կանչել:

Յր մի մայրը կարկանդակ կշինէ ու իրեն կասէ. Լսեցի որ մամդ հիւանդ է. գնա նայէ ի՛նչպէս է, եւ իրեն տար տուր այս կարկանդակն ու սա ամանով կարագը: Կարմիր Գլխարկիկն իսկոյն ճամբայ կելլէ իւր մեծ մօրն երթալու՝ որ ուրիշ գեղ կը նստէր: Անտառէ մի անցնելու ժամանակ գայլուն կհանդիպի որ սաստիկ կփափաքի զինքն ուտել. բայց հոն եղած փայտահարներէն վախնալով անոր դպչելու չհամարձակիր, եւ միայն կհարցունէ Թէ ո՞ւր կերթայ: Խեղճ աղջիկն որ չէր գիտեր Թէ վտանգաւոր է կենալ գայլու հետ խօսիլ, կասէ «Մեծ մայրս տեսնելու կերթամ, եւ մօրս կողմանէ իրեն աման մի կարագ եւ կարկանդակ կտանիմ: — Բնակած տեղն շատ հեռո՞ւ է, կհարցունէ Գայլը: — Ո՛հ, այո հեռու է, կպատասխանէ Կարմիր Գլխարկիկը. սա վարը տեսնուած ջաղացքին միւս կողմը գեղին բերանը առաջին տունը կբնակի: — Լաւ է ուրեմն, ես եւս կուզեմ երթալ զինքը տեսնել. ես սա ճամբէն երթամ, դուն այն ճամբէն գնա, եւ տեսնեմք ո՛վ աւելի առաջ կհասնի » կասէ

Գայլն եւ կսկսի կարճ ճամբէն ամենայն ուժով վազել: Իսկ Կարմիր Գլխարկիկն երկայն ճամբէն կերթայ եւ խեղճը գլխուն գալիքը չգիտնալով՝ ժամանակ կանցունէ կաղին ժողովելով, թիթեռնիկներու ետեւէն վազելով եւ հանդիպած գեղեցիկ ծաղիկներով փունջեր շինելով: Շատ չանցնիր Գայլը կը հասնի մամուն տունը. դուռը կզարնէ թաք թաք: — Ո՞վ է, կկանչէ պառաւր: — Թոռնդ եմ, Կարմիր Գլխարկիկը, կպատասխանէ Գայլը ձայնը աղջկան ձայնին նմանցունելով. մօրս կողմանէ քեզի կարկանդակ եւ աման մի կարագ բերի:» Մամն որ փոքր մի հիւանդ լինելով անկողինն էր, չուզելով տեղէն շարժիլ՝ կպոռայ ներսէն. « Սեպը (չիվի) քաշէ եւ դուռը կբացուի: » Գայլը սեպը կքաշէ, դուռը կը բացուի:

Ներս կմտնէ ջմտներ՝ խեղճ պառաւին վերայ կը ցատքէ եւ շատ չքշեր զինքը կլափէ կլմնցունէ: Յետոյ դուռը կգոցէ, եւ կերթայ մամուն անկողինը կմտնէ, անոր ակնոցը քիթը կդնէ, գլխադիրը (Փօթօզ) գլուխը կանցունէ եւ համբերութեամբ Կարմիր Գլխարկիկին հասնելուն կսպասէ, որ քիչ ժամանակէն կուգայ դուռը կզարնէ թաք թաք: — Ո՞վ է, կկանչէ Գայլը: Կարմիր Գլխարկիկն Գայլին խոշոր ձայնն որ կառնու՝ նախ կվախնայ. բայց կարծելով որ մեծ մայրը հարբուխ եղեր ձայնը խռպոտեր է, սիրտ կառնու եւ կպատասխանէ. « Թոռնդ եմ, Կարմիր Գլխարկիկն. մօրս կողմանէ քեզի կարկանդակ եւ աման մի կարագ բերի: » Գայլը փոքր մի ձայնը անուշցունելով կպոռայ. « Սեպը քաշէ, եւ դուռը կբացուի: » Կարմիր Գլխարկիկը սեպը կքաշէ, դուռը կբացուի: Գայլն եր-

բոր կտեսնէ զայն որ ներս կմտնէ, վերմակն վրան կառնու կծածկուի. « Կարկանդակն ու կարագի ամանը դարանին (տօլապ) վրայ դիր ու եկու հետըս պառկէ » կասէ: Կարմիր Գլխարկիկն կհանուի եւ կերթայ որ անկողին մտնէ. բայց հանուած մամն աչքին շատ այլանդակ երեւնալով կասէ. « Մա՛մս, ինչո՞ւ ա՛յսչափ երկայն են թեւերդ: — Որպէս զի զքեզ աւելի լաւ գրկեմ, աղջիկս, կպատասխանէ Գայլը: — Մամ, ինչո՞ւ այսչափ խոշոր են սրունքդ (պահագ): — Որպէս զի աւելի լաւ քալեմ զաւակս: — Մա՛մս, ինչո՞ւ համար ականջներդ այսչափ խոշո՛ր են: — Որպէս զի աւելի լաւ լսեմ զաւակս: — Մամս, ինչո՞ւ այսչափ մեծ են աչքերդ: — Որպէս զի աւելի լաւ տեսնեմ զաւակս: — Մամս, ինչո՞ւ այսպիսի խոշոր բերան ունիս: — Զքեզ դիւրաւ կլլելու համար: » Այս կասէ չար Գայլն ու խեղճ Կարմիր Գլխարկիկին վերայ կնետուի եւ կուտէ:

Սովրեցէք ո՛վ մանկունք Կարմիր Գլխարկէն
 Զասել ամենուն ձեր գործ եւ խորհուրդ,
 Զի բարեսէր չե՛ն չե՛ն յերկրի մարդ ամէն:

ԸՆԹԵՐՅՈՒՄԾ ԻԶ.

Մեծն Աղեքսանդր եւ Գիոգինէս.

Մեծն Աղեքսանդր երբոր Կորնթոս գնաց, քաղաքին բոլոր երեւելի մարդիկն իրեն այցելութեան եկան՝ բացի Գիոգինէս փիլիսոփայէն: Անձամբ անոր գնաց Աղեքսանդր, եւ տեսաւ որ արեւուն

մէջ կեցեր կտաքնար. հարցուց նմա. « Ի՞նչ կուզես, բանի մը կարօտութիւն ունի՞ս : — Այո, զրուցեց Դիոգինէս, սա արեւէս քիչ մը անդին գնա : » Աղեքսանդր այսպէս նորա բանի մը կարօտ չլինելուն վերայ սքանչացած՝ քովիններուն դարձաւ « Թէ որ Աղեքսանդր չլինէի՞ Դիոգինէս կուզէի լինել » ասաց :

ԽՈՐՀՐԴԱՊԱՀՈՒԹԻՒՆ.

Ո՞րպէս կարող եմք ուզել որ ուրիշ մը մեր խորհուրդը՝ մեր գաղտնիքը պահէ երբոր մեք չպահեմք :

Գաղտնիքս իմ գերիս է՝ բանի որ ուրիշի զրուցած չեմ, զրուցելուս պէս կփախչի եւ իմ տէրս լինի :

Իւր գաղտնիքը ասողն ուրիշի գաղտնիքը չպահեր :

Երեք հոգւոյ գիտցածն ամէնքն եւս գիտեն :

Ո՛ւմ որ գաղտնիքդ զրուցես, նմա գերի լինիս :

Աւելի լաւ է մարդ իւր գաղտնիքն ինքը պահէ քան թէ ուրիշին տայ պահելու :

Ամենէն լաւ պահուած գաղտնիքն այն է որ ուրիշին չէ ըսուած :

Ուրիշին գաղտնիքն յայտնելը՝ մեր չեղած բանը մեր ուզածին պէս գործածել է, հաւատարմութեան ու վստահութեան դէմ մեծ յանցանք է, եւ ուրիշի ստացուածքը գողնալէն աւելի ծանր ոճիր է. վասն զի բացի գողութենէ՝ մատնութիւն է միանգամայն :

Խորհրդապահութիւնն խորին քաղաքագիտութեան նշան է :

Անխորհրդապահ մարդ.

Բացքերանին մէկը կուգայ իւր բարեկամին բան մի կպատմէ, զոր խորհրդաբար իրեն ասեր էին, եւ կպատուիրէ որ ուրիշին չզրուցէ: « Հանգիստ կեցիր, կպատասխանէ իւր բարեկամը, յուսամ թէ քեզի չափ խորհրդապահ լինիմ եւ ես: »

Նինջ եւ յարուսիւն բնութեան.

Երբոր այգեկուծքը կլմբննայ ու լիաբուղիս հընձաններէն զուարթարար գինին տակառներու մէջ կամփոփուի, ետեւէն գիշերուան պահապանի պէս ծանր ծանր քալելով կուգայ աշունը, բնութեան կենդանութիւնը կտանի, երկրիս հանգչէ կասէ, եւ այնպիսի տխրութիւն կտիրէ չորս դին, որ կարծես թէ միւսանգամ յաւիտեան ուրախութիւն ու զուարթութիւն պիտի չտեսնուին: Թանձր մշուշ մի մթնոլորտը կպատէ, արեգակն ամպերու մէջէն երբեմն երբեմն կերեւայ ու կպահուրտի աներեւոյթ լինի. տկար ճառագայթները տերեւամերկ ծառոց ծայրերուն զարնելով՝ վերջին ողջոյնը կուտան: Սուգ կմտնէ բնութիւնը, ծաղիկը երերուն ցօղնոյն վերայ կթարշամի, տերեւները կթափթրփին եւ անցաւորաց ոտքին տակ կթաւալին, կպտուտկին: Ագռաւք երեկոյեան դէմ վերջալուսի ժամանակ երամովին բլրակներուն վերայ կթռչըտին, եւ իրենց սրածայն կռիչներովը բնութեան մահը կգուժեն: Իսկ երկինք փոխանակ իւր լուսապայծառ աստղերը մեր գլխուն վերայ շողացնելու, տերեւագուրկ

Ծառոց կմախներուն մէջէն ցուրտ մառախուղ կիջեցընէ, որ ճիւղէ ճիւղ իւր արտասուաց ոլոռնածեւ շիթքը մեռած տերեւներուն կաթեցունելով՝ մեռեալ բնուծեան գերեզմանին վերայ կողբայ :

Այս ընդհանուր տխրութիւնը շատ չտեւեր՝ խոր ձմեռը կուգայ. ձիւնը կիջնայ եւ մինչեւ մարդուս ոտքին ձայնը կխափանէ : Մարդս լռեալ դադարեալ երկրիս երեսը ստուերի մի պէս լռիկ մնջիկ կանցնի. եւ կկարծուի թէ այլ ամէն բանի վերայ նոյն տրտմական քօղը պիտի պատէ, գեղատեսիլ սիրուն վարդն ոչ եւս իւր քաղցր հոտովը մեր սիրտն ու միտքը պիտի զուարճացունէ, եւ չորցած անձեւ որթերն ոչ եւս տերեւազարդ պիտի գեղեցկանան ու ծիրանեփայլ ողկոյզներով տեսողաց զուարթամտութիւն պիտի ազդեն :

Մի՞ փուծար, երկայնամիտ եղիբ փոքր մի. բնութեան այս համատարած համրութիւնն ու անկենդանութիւնը տեսնելով մի՞ յուսահատիր. գիտցիր որ պատրաստութեան հետ է որ նորափետուր կեանքով մը երեւայ : Յոգնած տկարացած ոյժն ու կարողութիւններն անձայն կնորոգէ կսրէ, որպէս զի գարնանային արեգական գեղածիծաղ ճառագայթը վրան զարնելուն պէս, նորէն յերեւան գայ, ինզինքը ցուցանէ ամենաբեր ձեռօք. այն ժամանակ յարութիւն կառնուն կանաչագեղ ծառք եւ ծաղկունք, երփներանգ կզարդարուի երկիրս, եւ մի օրուան մէջ դարձեալ ականատես լինի մարդառոյգ բնութեան բիւրապատիկ սքանչելեացն, եւ բիւր փառք եւ գոհութիւն կմատուցանէ այն հիասքանչ բնութեան բարեխնամ Արարչին :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԻԷ.

ՏԱՆՏԻԿԻՆ.

Առաքինի, պարկեշտասուն, բարեկիրթ եւ ժրագլուխ տանտիկին մի անգին ու դժուարագիւտ գանձ է, վասն զի իրմէ կկախուի տանը յաջողութիւնը, տղոց քաջողջութիւնը, դաստիարակութիւնն ու տանտիրոջ բարօրութիւնը: Բարւոյն ու միանգամայն գեղեցկին կգբաղի, վասն զի բնակարանին կարգաւորութիւնն արուեստահնար ձեռագործի կնամանի, զոր ամէն օր կստեղծէ ու կնորոգէ: Ժրագլուխ տանտիկինը պէտք է որ կանանց ամէն կատարելութիւններն ունենայ. այսինքն կարգաւորութիւն, մաքրասիրութիւն, բարակամրտութիւն, բարեսրտութիւն, աշխոյժ, արթնութիւն եւ քաղցրութիւն: Քայքայած հարստութիւնները կդարմանէ, բարեկեցութիւնը հարստութեան կը դարձունէ, եւ կարօտութիւնը բարեկեցութեան: Բոլոր տանը հոգն ու կառավարութիւնը իւր վերայ է, սիրով կվարէ իշխանութիւնը, զամէնքը գոհ կընէ, եւ սակայն թագաւորէ մը, իշխանէ մը աւելի իրական է իշխանութիւնն եւ դիւրատար: Թագաւոր մը ո՛րչափ եւ ճարտար լինի, կընա՞յ իւր թագաւորութիւնն երկնքի վնասներէն ազատ պահել, արգիլել որ անձրեւը, կարկուտն ու պատերազմը ճամբաներն ու արտերուն հունձքը չապականեն: Ո՞ր թագաւորը հոգւոց վերայ իշխանութիւն ունի, եւ կամ ե՞րբ կընայ իւր հպատակաց հրամայել որ խօսին կամ լռեն: Կենդանի լինին կամ ան-

կենդան, ամէն բան իրմէ կփախչին : Իսկ ընդ հակառակն տանտիկինն կարծես թէ իւր ձեռքին մէջ կբռնէ բոլոր իւր իշխանութեանը տակ եղող բնակիչներն ու զանոնք զարդարողները : Ինքն է բոլոր տանը հոգին ու կենդանութիւնը . այնպէս որ եթէ յանկարծ մէկ քանի օր հիւանդանայ, չկարենայ չորս դին վազելով իւր կենսատու շնչովն ու խրախուսիչ խօսքերովն ամէն բան կենդանացունել, կարծես թէ բոլոր տունն իրեն հետ կհիւանդանայ ու տխուր լռութիւն մը վրան կպատէ : Տանը մէջէն կաքսորէ կոպիտ անվայել խօսքերն ու գործքերը . իւր ծառաներն, ինչպէս նաեւ իւր որդիքը կկրթէ կլաւցունէ, եւ անոնցմէ մէկը չկայ որ նեղութիւն ունենայ եւ ինքն անոր քով չհասնի ջլեթեթեւցունէ կամ չվերցունէ զայն : Իրմով միշտ մաքուր է կահ կարասին, եւ քերմակեղէնը միշտ ձիւնափայլ : Բնակարանին չորս դին իւր խելքը կը փայլի, աշխոյժ ու գործունեայ հոգին ամէն տեղ կտեսնուի, եւ ջլեթողուր որ բան մը փճանայ : Բոլոր տանը մէջ սքանչելի ներդաշնակութիւն մը կտիրէ . ամէն բան կարգաւորեալ, ամէնքն իրարու հետ սիրով, ամէն մարդ իւր պարտքը գիտէ եւ կջանայ զայն լաւ կատարել, որպէս զի տանտիկնոջ գոհ ու զուարթ նայուածքին արժանի լինի : Այսպիսի տան մի մէջ ո՞վ չուզեր բնակիլ, ո՞վ չբաղձար այն երջանակութեան համն առնուլ :

Մեզմէ հազարաւոր տարի առաջ Սողոմոն իմաստունն եւս ժրագլուխ, այսինքն խելացի ու աշխատասէր կնոջ կատարելութիւնները դիտեր, տանը կառավարութեան մէջ ըրած զարմանալեացը վերայ հիացեր, ու իւր հրաշալի գրչովը Առակաց գրը-

քին մէջ զանոնք մանրամասն նկարեր է. տեսնեմք ի՛նչպէս. « ժրագլուխ կին մի որ գտնուի, կասէ, ազնիւ քարերէն եւս աւելի պատուական է: Էրկանը սիրտն անոր վերայ վստահ է: Ամենայն աղեկուծեան մէջ իւր էրկանը միշտ գործակից լինի, ու ոչ երբէք չարիք կգործէ: Բուրդ ու կտաւ կը գըտնէ, իւր ձեռքովը կբանի՛ գեղեցիկ բաներ կը շինէ:

Վաճառականի նաւու մի պէս հեռաւոր տեղերէ գանձեր կժողվէ: Առաւօտանց կանուխ կելլէ, ընտանեացը կերակուր՝ աղախիններուն եւս աշխատանք կբաժնէ: Գեղեցիկ արտ մի որ տեսնէ՛ կգնէ, ու իւր ձեռքին արդիւնքովն այն երկիրը կլեցունէ: Մէջքը գօտի կապած, թեւերը սօթտած կաշխատի, վասն զի աշխատանքին անոյշ համն առեր է. իւր ճրագը բոլոր գիշեր կվառի ու չմարիր: Ձեռքն անդադար աշխատութեան հետ է. մատուրներն եւս առանց ձանձրանալու իլիկ կդարձունեն: Ձեռքը բաց է աղքատաց ողորմութիւն տալու, եւ իրեն արդիւնքէն եւս տնանկին բաժին կհանէ: Էրիկը դուրս տեղ ուշանալու եւս որ լինի՛ տանը վերայ ամենեւին հոգ չըներ: Բոլոր իւր տնեցիքն երկերկու ձեռք հագուստ ունին: Էրկանը համար ազնիւ ու բարակ կտաւ եւ ծիրանի պատրաստեր է. իրեն համար եւս վերարկուներ: Ամէնքը մատով կցուցանեն անոր էրիկը դռներուն մէջ, այսինքն երբոր իւր երկրին ծերերուն եւ ուրիշ պատուաւոր բնակիչներուն հետ ժողովքի նստած լինի: Կտաւներ գործեր ու վերարկուներ շիներ՝ Քանանացւոց կը ծախէ: Բերանը չափով ու խելացի խօսքերով կբանայ, խօսքերուն մէջ եւս գեղեցիկ կարգ մը դրած

է: Ոյժն ու մեծվայելչութիւնն իրեն հագուստի պէս եղած են, ու կենացն ետքի օրերն ուրախ պիտի լինի: Իւր տանը ամէն ճամբաներն եւս գոց ու զգուշաւոր են, եւ ոչ երբէք պարապ կենալով հաց կուտէ: Ըրած ողորմութիւններովը զաւկրներն աղէկ կմեծանան. էրիկն եւս կգովէ զինքն ու կասէ.

« Շատ աղջիկներ հարստութիւն դիզեր ու մեծացեր են, բայց դու ամենէն եւս վեր անցար: Փուճ զարդարանք ու գեղեցկութիւն չկայ վրադ. վասն զի խելացի ու բարեպաշտ կինն օրհնենք կլսէ, ինչպէս որ ինքն եւս երկիւղած մարդիկը կգովէ: Իւր շրթանց պտուղը տուէք իրեն, եւ էրիկը դըռներուն մէջ գովեցէք. վասն զի ամէն բանի մէջ էրիկը կնոջը ճամբայ պիտի ցուցանէ, եւ մինչեւ վերջն յաջողութիւն պիտի գտնեն:»

Այս փառաւոր գովեստից բոլորովին արժանաւոր լինէին մեր ազգին տանտիկին խաթունները թէ որ փոքր մի աւելի դաստիարակութիւն ու գիտութիւն ունենային:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԻԸ.

ԱԳԱՅՈՒԹԻՒՆ.

Աղքատը շատ բանի կարօտ է, իսկ ազահն ամէն բանի:

Ազահութիւնը մեծատան պատիժն է:

Ազահը կկարծէ թէ ոսկին ու արծաթն է երջան-

կուժիւնը . որ ընդ հակառակն՝ միջոց են նորա եր-
ջանկուժիւնը ձեռք բերելու :

Ագահին պատիժ այն կլինէր որ տեսնէր թէ իւր
ժառանգներն ի՛նչ պիտի ընեն այն անչափ խնա-
մօք դիզած հարստուժիւնը :

Ագահն ուրիշի միայն աղեկուժիւն չընէր, իսկ իւր
անձին անգուժ է :

Ոսկւոյ ծարաւը միշտ կմարէ մարդկան սրտին
մէջ մարդկութեան ամէն զգացմունքը :

Ագահք իւր ժառանգներն ուրախացունելու հա-
մար կդիզեն :

Հայր ագահ, որդի անառակ :

—

ՄԵՂՈՒՆ ԵՒ ՄՐՋԻՒՆ.

Յր մը, կըսեն,

Ամառ ատեն

Անխոնջ մըրջիւն, ճարտար մեղու

Հանդիպեցան իրարու .

Բարեւ տըւին բարեւ առին,

Ասկէց անկէց խօսք բացին :

Երբ կարգն իրենց գործոյն եկաւ՝

Մեծ վէճ մըն էր բացուեցաւ .

Ամէն մէկուն այլ ջանքն այն էր՝

Որ իրեն գործ մեծցընէր :

Մըրջիւն կըսէր .

« Նայէ՛ մէյմը, նայէ՛ սայ

« Ի՛նչպէս եմ ես գործունեայ .

« Բոլոր կեանքիս մէջ կաշխատիմ,

« Ոչ յոգնիլ ո՛չ քըրտնիլ ունիմ .

« Կըլեցունեմ ամբարներ
 « Ու սով երբէք չեմ վախեր : » —
 « Գոլ գործունեայ կեանքիդ, մըրջո՛ւն,
 « Ես խօսք ջունիմ, ըսաւ մեղուն .
 « Բայց ամբարներ քոյին առատ
 « Ո՛ւմ ծառայեն քեզմէ ի զատ .
 « Ո՛չ եւ ջանից քոց եռանդնուտ
 « Դո՛ւ վայելես միայն զօգուտ .
 « Բայց մեղր ու մոմ զոր ես շինեմ՝
 « Միայն ինծի ես ոչ պահեմ .
 « Այլ իմ մեղրէս տամ ամենուն՝
 « Ուտեն ու համն անուշ առնուն .
 « Իսկ մոմս՝ ամբո՛ղջ կուտամ մարդկանց
 « Որ լոյս անկէ հանեն իւրեանց : »

Գործոյ մը յարգըն՝ իրմէ՛ միայն չըլլար չափել,
 Այլ թէ ո՛րչափ ունի օգուտ՝ պէտք է դիտել .
 Ով որ միայն յօգուտ անձին իւր աշխատի՛
 է անձնասէր, եւ նորա գործ մեծ յարգ ջունի :
 Նորա՛ միայն գործն է ազնիւ ու պատուարժան՝

Ով որ յօգուտ մարդկուծեան
 Քիրտն աշխատանք չըխնայեր,
 Այլ տայ բոլոր ինրւէր .

Մըրջիւնին պէս շատե՛ր շատեր
 Դիզեն իւրեանց գանձ, ամբարներ .
 Սակայն մատով պէտք է համրես՝
 Մեղուին պէս
 Յօգուտ այլոց աննախանձ
 Բաշխող զիւրեանց
 Միտս եւ ըզգանձ :



Կերպարանքը լուսանկարելու գոյզը զինուոր.

Ձիաւոր զօրաց մէկը հագուած կապուած՝ եօթներորդ դասիկոնը բնակող լուսանկարի մը գործարանը կերթայ որ կերպարանքը հանել տայ:

— Նստէ, կասէ, լուսանկարը. գործիքին ներմակ կետին վերայ նայէ, երեսդ շատ մի՛ կախեր. քիչ մը ժպտելու պէս ըրէ, ծնկուրներդ շատ մ'երկրնցուներ:

Այն միջոցին զինուորին միտքը կուգայ որ ձին եւս իմիասին նկարել տայ:

— Թողու՞ծիւն կընես, Պարոն, կասէ, միտքս փոխեցի, ձիոյս վերայ կուգեմ որ զիս քաշես:

— Այս իսկ գէշ չէ, կասէ ինքն իրեն լուսանկարը. եւ զինուորին դառնալով « Հրամանքդ եւս Պարոն, այն թեւը կտրած զինուորին կնամանիս որ անցեալ օր եկեր ոտք կկոխէր որ երկու թեւն եւս ամբողջ հանեմ: Գիտցիր որ լուսանկարը տեսածը միայն կրնայ հանել:

— Բայց ձիս կրնաս տեսնել, որովհետեւ վարը դուռը կեցած է:

— Պէտք էր վեր բերէիր, կասէ լուսանկարը ժպտելով:

— Հասկացայ, հասկացայ կպատասխանէ զինուորը, որ քու բանդ չէ եղեր. պէտք էր մէկէն ասէիր որ ձի շինել չես գիտեր: Հարիւրապետէս խնդրեմ որ քեզմէ նարտար արուեստաւոր մը ինձ ցուցանէ, կզրուցէ, եւ ուսերը թօթուելով դուրս կելլէ:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԻԹ.

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Հայրենասիրութիւնն այնպիսի վսեմ ու զօրաւոր ջերմ մի է, որ բռնաճ ժամանակը 'բնութեան կյալութէ: Երանի՛ նոցա որ այսպիսի ջերմամբ տանջին, որոյ արգասիքն իրենց յաւերժական պարծանք, եւ ազգին օգուտ, կենդանութիւն, պայծառութիւն եւ փառք: (ԳԱՔՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.)

Ծնողքնիս, զաւակնիս, ազգականնիս ու բարեկամնիս կսիրեմք. բոլոր այս մեր սիրելիքը հայրենիք տուեր է մեզ, եւ իւր ծոցը կբնակեցունէ զանոնք. ուրեմն ո՛րչափ պէտք է սիրեմք այս Հայրենիք կոչուած օրհնեալ երկիրն եւ իրեն համար ամէն զոհ աչքերնիս թեթեւ ու փոքր երեւայ: (Խ. Վ. Գ.)

Ո՛րպէս կարող եմք ջնուիրել հայրենեաց բոլոր մեր ստացուածքը, երբ մտածեմք որ ամէն ունեցածնիս իրմէ առած եմք: (ԿԻԿԵՐՈՆ.)

Միտքդ բեր միշտ որ հայրենիք անտնօրինելի եւ սրբազան իրաւունք ունի հանճարոյդ, առաքինութեանդ, զգացմանդ եւ բոլոր գործոցդ. ի՛նչ վիճակի մէջ որ գտնուիս, պահապան զինուոր մի ես հայրենեաց, եւ պարտքդ է միշտ անոր վրայ հսկել, եւ ո՛ր եւ իցէ վտանգի ժամանակ անոր օգնութեան վազել: (ՊԱՐԹԷԼԸՄԻ.)

Հայրենեաց համար մեռնիլը քաղցր ու փառաւոր բախտ է: (ՈՐԱՏԻՈՍ.)

Որ տարակուսի մեռանել վասն հայրենեաց՝ այր վատանուն է միշտ: (ՍԱՐԳԻՍ Վ. ԹԷՈԴՈՐԵԱՆ.)

Հայրենեաց ծառայելու ժամանակ պէտք է որ բոլոր մեր անձնական թշնամութիւններն՝ կրքերն ու վրէժխնդրութիւնները դադրին, առանձնական սէրն ու գորովը լռեն. մարդս պիտի ոչնչանայ, եւ քաղաքացին միայն պիտի մնայ բոլորանուէր հայրենեաց : (Ս. Վ. Գ.)

Քաղաքական կիրք յայնժամ եւեթ օրինաւորք են, յորժամ հայրենասիրութիւն վառարան է նոցին. բայց բազում անգամ ի վէճս կուսակցութեան դուն ուրեք զօգուտ աշխարհին խորհին մարդիկ : (ՍՍ.Բ. ԳԻՍ Վ. ԹԷՈՒՂՈՐԵԱՆ.)

Հայրենեաց դէմբարկանալը մեծ յանցանք է : (ԿԻ. ԿԵՐՈՆ.)

Ս.մէն անգամ որ մէկը հայրենեացը դէմ կպատերազմի՝ բնութեան դէմ կգործէ : (ՖԵՆԸԼՈՆ.)

Հայրենեաց օգտին համար չկայ անձնական շահ մը որ առաքինի քաղաքացին չկարենայ զոհել : (ԳԱԲՐԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ.)

Որպէս զի հայրենիք երջանիկ լինի, պէտք է որ իշխանք եւ դատաւորք օրինաց հնազանդին, քաղաքացիք եւս իշխանաց եւ դատաւորաց : (ՍՈՂՈՆ.)

Պատմեցէք մանկանցդ զերբեմն փառսն եւ զաժմեան հանգամանս հայրենեաց ձեռոց, զի մատաղ սիրտ նոցա զուարճացեալ եւ զգածեալ միանգամայն գեղեցիկ եւ տխուր յիշատակօք՝ գիտացեն թէ զինչ ունին առնել նմա ի պարտուց իւրեանց եւ յիրաւանց ժառանգութեան : (Ս. Վ. ԹԷՈՒՂՈՐԵԱՆ.)

Մի հարցաներ թէ ի՞նչ է քու պարտքդ առ Հայրենիս : Սիրէ ու կսովրիս : (Ս. Վ. Գ.)

Իշխա՛ն ես, հայրենեացդ իշխել գիտցիր. զինուո՞ր, հայրենեացդ ծառայել մտածէ. արուեստաւո՞ր,

հայրենեացո՞ ճարտարութիւնո՞ բանեցուր. գիտուն հայրենեացո՞ օգուտն մտածէ ու սովրեցուր. տրգէ՛տ, գէթ հայրենիքո՞ սովրէ ու պահէ : (Ա. Վ. Գ.)

Պատերազմը չկրնար փառք բռնել զօրավարին՝ երբ յաղթութիւնը հայրենեացը օգտին համար չէ : Միայն հայրենեաց պարտքն է որ կրնայ արդարացունել արեանց հոսմունքը : (Ա. Վ. Գ.)

Փառք մը՝ զոր հայրենեացո՞ վնասովը կփնտռես՝ ոչ միայն անցաւոր է կորստական, հապա նաեւ դու իսկ անոր հետ կկորսուիս. եւ ուրիշ բանի համար չես յիշուիր. բայց զի հայրենեացո՞ վնասել աշխատեցար : Օրինակ քեզ լինին եւ խրատ զգուշութեան բոլոր հայրենատեաց եւ ազգատեաց մարդոց գարշելի ու նզովելի յիշատակը : (Խ. Վ. Գ.)

Առ հայրենիս պարտքն ոսկի շղթայ մի է, զոր անձնուրաց եւ վսեմախոյ քաղաքացիք միայն կը փափաքին իրենց վիզը անցած տեսնել, եւ իրենք միայն արժանի են. վասն զի այն գերապանծ շրջլծային ամէն մէկ օղակը օր մը անթառամ փառաց մէյմէկ պսակներ պիտի լինին : (Ա. Վ. Գ.)

Արդ օրինակ բերեմք այն անձինքն, որք իրենց հայրենասիրութեամբն ու ազգասիրութեամբն անուննին ու յիշատակնին անմահացուցեր են :

Բնական է մարդուս սիրել այն երկիրն՝ ուր իւր ազգակցացն ու արենակցացը հետ իմիասին կբնակի. հասարակաց մայր եւ դայեակ կհամարի զայն, վրան սէր կկապէ, եւ այն իրեն միութեան կեդրոնաձիգ զօրութիւն լինի :

Եւ յիրաւի, երբոր մարդիկ կմտածեն թէ այն երկիրն որ իրենց կենդանութեանը ժամանակ զիրենք

իւր վերայ կկրէ, կկերակրէ ու կմեծացունէ, նոյնը նաեւ իրենց մահուընէն յետոյ զիրենք իւր ծոցը պիտի առնու ամփոփէ, զօրաւոր կապով մը իրենք զիրենք իրարո՛ւ հետ կապուած կգտնեն: « Ձեր քնակարանը իմս պիտի լինի, ձեր ժողովուրդն իմ ժողովուրդս, կասէր Հռութ իւր նոյեմի սկեսրոջը. այն երկիրն ուր դուք պիտի մեռնիք եւ թաղուիք, ես եւս պիտի մեռնիմ ու հո՛ն պիտի թաղուիմ: »

Յովսէփ նահապետն իսկ իւր վերջին մտածութիւնն ապագայ հայրենեացը վերայ դարձուցած՝ կցաւէր կհոգար որ ինքն անկէ դուրս կմեռնի, եւ սրտառուչ ձայնով մահուան անկողնոյն մէջէն կաղաչէր կպաղատէր իւր եղբարցը. « Աստուած ձեզ այցելուութիւն պիտի ընէ եւ մեր հարցը խոստացած երկիրն պիտի տանի զձեզ հաստատէ. հետերնիդ տարէք իմ ոսկերներս: » եւ այս եղեւ իւր վերջի խօսքը. մեռնելու վայրկեանը քաղցր էր իրեն յուսալ որ եղբարցը հետ պիտի երթայ Աստուծոյ անոնց տուած հայրենի՛քը. եւ ոսկորներն հոն իւր հայրենակցացն մէջ աւելի խաղաղ պիտի հանգչին:

Եւ այս՝ քնական զգացում մի է ամենայն ժողովրդոց, վասն զի ամէնքն եւս առ հասարակ նոյն սիրտը ունին: Թեմիստոկլո ամենացին հայրենիքէն աքսորուելով՝ Պարսից Արտաշէս երկայնածեռն թագաւորէն մեծ ընդունելութիւն գտեր էր, եւ մեծ պատուով քովը կքնակէր. սակայն երբոր տեսաւ որ թագաւորը հայրենեացը դէմ պատերազմ բացաւ եւ իրեն կյանձնէ զօրացը սպարապետութեան պաշտօնը, աւելի ուզեց հայրենեացը սիրոյն համար թոյն առնելով մեռնիլ՝ քան թէ անոր դէմ գէնք

առնուլ փառաւորուիլ : Եւ մեռնելու ժամանակ աղաչելով աղաչեց բարեկամացը որ ոսկորներն առնուն տանին իւր հայրենիքն Ատտիկէ, որպէս զի գոնէ ոսկորները վայելեն այն քաղցր հայրենիքն յորմէ ինքն զրկուեցաւ :

Եւ այս զգացմամբ է դարձեալ որ լաւ ազնուամիտ մարդիկ ո՛ւր եւ լինին, ի՛նչ հանգիստ՝ ուրախ եւ փառաւոր վիճակի մէջ եւ գտնուին՝ դարձեալ իրենց հայրենիքը կմտածեն, անոր կարօտը կքաշեն, անոր կհառաչեն, անոր յաջողութեամբն ու պայծառութեամբը կուրախանան կզուարթանան, եւ անոր ձախորդութեամբն ու թշուառութեամբը կը տխրին ու թշուառ լինին :

Նեեմի հրեայն, Պարսից երկայնաձեռն կոչուած Արտաշէս Թագաւորին մատուակն եղեր ու մեծ պատուոյ մէջ էր. բայց հայրենի երկրէն դուրս լինելն իրեն մեծ վիշտ էր : « Թագաւորին առջեւն էի, կասէ, նմա գինի կուտայի եւ վշտահար կերելայի : Թագաւորն ասաց ինձ. Որովհետեւ հիւանդ չես, ինչո՞ւ երեսդ այդպէս տխուր է : Պատասխանեցի նմա. Եւ ո՞րպէս կարելի է որ երեսս տխուր չլինի, որովհետեւ հարցս Թաղուած քաղաքն աւերակ է եւ դռները այրած մրկած : Թէ որ կուզես ինձ շնորհի մի ընել, զիս Հրէաստան դրկէ ուր հօրս գերեզմանն է, որպէս զի զայն նորէն շինեմ պայծառացունեմ : »

Այնպէս սիրելի եղած էր Նեեմի Թագաւորին որ անկարելի էր խնդրոյն չկատարուիլը : Եւս առաւել՝ որ նոյն իսկ ըրած անշահասէր խնդիրքը՝ Թագաւորին առջեւ աւելի պատկառելի ու սիրելի կը նէր զինքը, որովհետեւ փոխանակ իւր անձը մտա-

ծելու եւ իրեն համար փառք պատիւ խնդրելու ,
— այսպիսի գեղեցիկ առիթ ձեռք ձգած լինելով , —
ինքը իւր հայրենեաց օգուտը եւ շահը կմտածէր ,
ամէն բանէ աւելի վեր դնելով զհայրենիս :

Ուրախութեամբ կվազէ կհասնի Հրէաստան , քա-
ղաքացիքը քովը կկանչէ որք հասարակաց հայրեն-
եաց սիրովը իրարու հետ միաբանած էին , եւ « Գի-
տէ՞ք , կզրուցէ անոնց , որ մեր վշտաց ու թշուա-
ռութեան պատճառն այն է որ երուսաղէմ աւերակ
է եւ դռներն այրած ապականած . եկէք միանամք
ու վերստին շինեմք զայն : »

Յորչափ Հրեայք իրենց հայրենիքէն հեռի՛ օտար
երկրի մէջ կեցան , աչքերնուն արցունքը չչորցաւ ,
եւ իրենց Սիոնը յիշելով թափած արտասուօք՝ իրենց
գերութեան տեղը Բաբելոնի գետերուն ջրերը կու-
ռեցընէին : Ի՞նչ սրտառուչ նկարագիր է զոր սաղ-
մութեան իրենց բռնէն կրնէ . « Իգետս Բաբել-
լացւոց , անդ նստէաք եւ լայաք , ո՛րպէս յիշեցաք
մեր անդ զՍիովն : Իմէջ ուռեաց նոցա կախեցաք
զկտակարանս մեր : Անդ հարցանէին գերիչք մեր
զբանս օրհնութեան , գերելարք մեր ստիպէին
զմեզ եւ ասէին . Յօրհնեցէք մեզ , օրհնեցէք մեզ յօրհ-
նութենէ Սիոնի . իսկ զիա՛րդ օրհնեսցուք զօրհնու-
թիւնս Տեառն յերկիր օտար : » եւ մէջերնէն ամէնքը
առանձին առանձին ուխտ անլուծանելի կրնէին
հայրենեաց հետ ու կասէին . « Եթէ մոռացայց ըզ-
քեզ երուսաղէմ , մոռացի՛ զիս աջ իմ : » Այնու եւս
գոհ չլինելով՝ վրան կաւելցունէին . « Կցեսցի լեզու
իմ իքիմս իմ թէ ոչ յիշեցից զքեզ , թէ ոչ նախ
նուագեցից զքեզ երուսաղէմ , սկի՛զբն ուրախու-
թեան իմոյ : »

Արդեօք մեր Հայաստանն եւս ունի՞ այսպիսի վսեմախոյ որդիք, որ զինքն ոգւով չափ սիրեն ու իրեն զրուցեն ուխտիւք. « Եթէ մոռացայց զքեզ Հայաստան, մոռացի՛ զիս աջ իմ. » եւ նեեմիի մի պէս անոր պայծառութեանը աշխատին: Պայծառութիւն ասելով ի՞նչ կհասկանամք: — Հայրենեաց աչուրները կուրցունելու ջանացող տգիտութեան թանձրամած խաւարը փարատել, որպէս զի կարող լինի բանալ զանոնք իւոյս գիտութեան եւ քաղաքակրթութեան: Եւ ինչո՞վ արդեօք այս մահառիժ խաւարը կրնայ փարատիլ. — Դպրոցներով, Դաստիարակութեամբ, դարձեալ եւ միշտ ԴՊՐՈՅՆԵՐՈՎ, ԴՍՍԵՒՍԲՍԿՈՒԹԵՍՄԻ:

Քաջ հասկացած կերեւան ազգերնուս մէջ այն յաւերժական յիշատակաց արժանի վեհ անձինք, որ հայրենեաց սիրով վառուած են, եւ որոց սկիզբըն ուրախութեան է հայրենիք եւ անոր յառաջադիմութիւնը, թէ ազգերնիս այն ժամանակ սկըսեր է իւր ամէն տեսակ աշխարհափայլ զարդերէն ու պարծանքներէն զրկուիլ կողոպտուիլ, երբ սկըսեր է տգիտութիւն կոչուած ամենավնասակար՛ ապականիչ գազանը իւր մէջը մտնել, ու իւր մահահոտ որջը հաստատել: Եւ որովհետեւ գիտեն փորձով թէ դպրոցներով ու դաստիարակութեամբ միայն կհալածուի այն չար բազմագլխի գազանը, ամէն ջանք կրնեն ազգերնուս մէջ այս ամէնօգտակար շէնքերուն թիւը շատցունելու, եղածները պաշտպանելու, խնամարկելու, քաջալերելու, զօրացունելու, բարեկարգելու, եւ դաստիարակութիւնը ընդհանուր՝ հասարակաց ընելու. վասն զի համոզուած իսկ են թէ ազգերնուս մէջ յաճախ տես-

նուած, աւա՛ղ, ամենավնասակար ախտերէն մէկը
անմիաբանութիւն՝ դառն ու մահաւոյն պտուղ
եւ արգասիք է տգիտութեան :

Եթէ ժամանակէ մը հայ ժողովուրդն եւս եւրո-
պական ժողովրդոց եւ ազգաց պէս գիտութեան,
դաստիարակութեան եւ կրթութեան մշտապայ-
ծառ լուսովը լուսաւորուի, որո՞ւն պիտի երթայ
արդեօք այս մեծ յեղափոխութեան պարծանքը.
որո՞նք համօրէն արդի եւ ապագայ ազգին բերա-
նալիր գովութեանն արժանի պիտի լինին. որո՞ց
վաղանցուկ յիշատակը ամբողջ ազգի միոյ անկեղծ
երախտագիտութեամբն անմահութեան կնիք պի-
տի առնու. որո՞նք բազմաբիւր ազգին անսուտ
բերնէն այս Ազգասէր, Ազգախնամ, Ազգաշէն,
Ազգաշահ, Ազգապատիւ, Ազգակեցոյց, Ազգախը-
րախոյս... նախանձեւի պատուանուններէն մէկուն
արժանի պիտի լինին... Ազգին անսուտ բերնէն
զրուցեցինք, վասն զի շատերը կան, շատերն եւս
տեսեր եմք եւ կճանաչեմք եւ կտեսնեմք տակաւին
որ գործօք եւ մտօք նայիս ազգատեաց են եւ ազ-
գակործան, եւ սակայն շողոքորթ պատառաբոյծ
մարդիկ առանց խղճմտանքի անոնց ԱԶԳԱՍԷՐ սրը-
բազան պատուանունը կուտան, որոց երանի՛ թէ
իդատապարտութիւն կամ յուղղութիւն եւ իզգաս-
տութիւն լինէր այն: Բայց ուրախ եմք, թող ուրա-
խանայ ընդ մեզ նաեւ ազգը, որ օր ըստ օրէ այս-
պիսի սուտ ազգասիրաց թիւը կպակասի, եւ ճըշ-
մարիտ ազգասէրք կշատանան ու կաճին իբազ-
մութիւն, որոց ջանքը, հոգն ու հանապազօրեայ
մտմտութիւն է ազգին միութիւնը, յառաջադիմու-
թիւնը, լուսաւորութիւնն ու փառաւորութիւնը :

Արդարեւ ազնուակա՛ն սրտից եւ վեհ ոգւոց ար-
 ժանի խորհուրդ եւ իղձ. վասն զի մարդուս իւր
 ազգը սիրելէն եւ անոր բարգաւաճանացն աշխա-
 տելէն ու քրտինք թափելէն աւելի ի՛նչ ցանկալի
 եւ փառաւոր բան կարէ լինել թէ՛ իւր կենդանու-
 թեանը ժամանակ եւ թէ՛ մանաւանդ յետ մահուան:
 Այն թափուած բարոյական եւ նիւթական քրտանց
 կաթիլներն օր պիտի գայ որ քաղցրաբոյր հոգե-
 ջուարճ վարդեր ու մշտափթիթ անթառամներ
 պիտի դառնան...: Այսպէս մեզի պէս հասկացած
 են զայս համօրէն հայրենասէրք ճշմարիտք, այ-
 սինքն անոնք որ առաքինի են, ազնուամիտ եւ ազ-
 նուասիրտ, որ իրենց պարտքը կճանաչեն, զանոնք
 կսիրեն, զանոնք կատարելու կաշխատին, ամէն
 տեղ սէր եւ խաղաղութիւն կքարոզեն. գժտու-
 թեան եւ ամիաբանութեան բարեաց խափանա-
 րար կործանիչ ոգին ամէն տեղ կջանան մարել,
 զամէնքը կհաշտեցունեն, իրարու դէմ զայրացեալ
 ու վրէժխնդիր ոգիքը կհանդարտեցնեն՝ անյիշա-
 չարութեան կյորդորեն, եւ մէկ խօսքով՝ հարկը
 պահանջած ժամանակ պատրաստ են իրենց ամէն
 անձնական շահերը, նաեւ կեանքը՝ հայրենեաց
 եւ ազգին սուրբ օգտին եւ փառացը բոլորանուէր
 զոհելու:

ԸՆԹԵՐՅՈՒՍԹ Լ.

Շարայարուրիւն.

ՋԱՐՄԱՆԱԼԻ ԱԶԳԱՍԵՐՔ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՔ.

Թէպէտեւ վերը ճշմարիտ ազգասիրաց եւ հայրենասիրաց մէկ քանի օրինակ տուինք, բայց փափաքելով անոնց օրինեալ թուոյն օր ըստ օրէ ազգերնուս մէջ աճիլն ու բազմանալը տեսնել, ուրիշ օրինակներ եւս իմէջ բերեմք իյորդոր եւ ինմանութիւն:

— Քրիստոսէ 1071 տարիի չափ յառաջ Ա.Թէնացիք Հերակլեանց դէմ պատերազմ բացին որ եկեր Պեղոպոնեսի տիրապետեր էին, եւ իրենց Ա.տտիկէ գաւառին եւս կսպառնային: Իրաւցընէ իսկ օրէ օր աւելի զօրանալով ու յաղթուեցնէ յաղթութիւն եկան մինչեւ Ա.Թէնքի դուռը հասան: Ա.Թէնացւոց կողքոս Թագաւորն յուսահատած՝ պատգամ հարցուց. պատգամախօսը պատասխան տուաւ թէ երկու ժողովրդոց՝ այսինքն Ա.Թէնացւոց ու Հերակլեանց, որո՛ւն որ Թագաւորը մեռնի՝ այն ժողովուրդը պիտի յաղթէ: Հերակլեանք եւս պատգամ հարցուցին, նոյն պատասխանն ընդունեցան:

Մտածեց արիասիրտն կողքոս որ լաւ է ժողովրդեանը սիրոյն համար մեռնի՝ քան թէ կենդանի մնալով անոր յաղթուելուն պատճառ սեպուի: Առանց իւր միտքը մարդու յայտնելու՝ բանակին գլուխն անցաւ, ելաւ Հերակլեանց դիմացը. երբոր տեսաւ որ անոնց նետերն ամենեւին դէպ իւր կող-

մը չեն նետուիր — որովհետեւ Հերակլեանք զինքը
ճանչնալով ամէն զգուշութիւն կրնէին որ պատ-
գամն անոր վերայ չկատարուի, — մէկդի ձգեց
վրայի թագաւորական շքեղ ծիրանին, գեղացի
մուրացկանի հագուստ հագաւ, նետուեցաւ թըշ-
նամեաց մէջ ու « Քո՛ է յաղթութիւն, ո՛վ Ա.Թէնք »
կանչելով, զարնուեցաւ մեռաւ: Իսկ զօրքը իրենց
թագաւորին ազգասիրական անձնանուէր զոհն որ
տեսան, այնպիսի քաջութեամբ սրտերնին վառե-
ցաւ՝ որ մէկէն քշեցին հալածեցին Հերակլեանքը:

— Մեսենացիք ժողովուրդ Յունաստանի, պատե-
րազմէ՛ սովէ ու ժանտախտէն հոգինին բերաննին
եկած, Դեղփիս մարդ յուղարկեցին պատգամ հար-
ցուցին. եւ պատգամ առին թէ աստուածոց բար-
կութիւնն իջեցնելու համար պէտք է որ թագաւո-
րագն կոյս մի զոհեն անոնց: Իշխանագունք Մեսե-
նիոյ ահու զողու մէջ ընկան որ մի՛ գուցէ մահա-
հրաւէր վիճակն իրենց դատերացը վերայ իյնայ:
Իրենց զաւկին արեամբը հասարակաց թշուառու-
թիւնը վերցունելն անտանելի կերեւար աչքերնուն:
Աղէ՛կ որ մէջերնին կար նաեւ մէկն որ իրենց պէս
ցեղով միայն ազնուական չէր. ազնուական էր
նաեւ սրտիւ, ազնուական էր նաեւ ազգասիրու-
թեամբ, Արիստոմենէս: Զքնաղագեղ դուստր մի
ունէր՝ միակ յոյս տան իւրոյ. անձնական երջան-
կութիւնը հայրենակցաց երջանկութեանը նուիրեց,
եւ սիրելի աղջկան մահուամբն աստուածոց բար-
կութիւնը հայրենեացը վրայէն ջանաց հեռացու-
նել:

— Արիստիդէս ու Թեմիստոկղէս ամենացի իշ-
խաններն իրարու սաստիկ թշնամի էին, եւ մէկ-

զմէկ չէին կրնար քաշել՝ մանաւանդ թեմիստոկղէս զԱրիստիդէսը: Անգամ մը երբոր ժողովուրդը զիրենք ընտրեց որ տեղ մի մէկտեղ դեսպան երթան, վեհանձնութեամբ հասարակաց օգուտն ամէն անձնական կրքերէ ու վրէժխնդրութենէն վեր դնելով իրարու հետ միացան, եւ Արիստիդէս Ս.Թէնքի դռնէն դարձաւ թեմիստոկղէսին զրուցեց. « Հոս թողումք մեր թշնամութիւնը. իդարձին՝ թէ որ կուզես, նորէն կրնամք զայն հոս գտնել: »

— Լակեդեմոնացիք երբոր բռնեցին Պարսից Քրսերքսէս թագաւորին դեսպանները սպաննեցին, պատգամ ելաւ որ եթէ շուտով այս եղեռնագործութիւնը չքաւեն, գլուխնին մեծամեծ չարիք պիտի գան: Երկու քաջ Սպարտացիք, Բուրիս եւ Սպարտիս, իրենց անձը հասարակաց փրկութեանը նուիրեցին: Ինքնայօժար սիրով գնացին Քսերքսէսին զրուցեցին որ իրենց մահուամբը դեսպանացը սպանութեան վրէժն առնու: Զարմացաւ թագաւորն անոնց արիւնքութեանը վերայ. եւ ոչ միայն իրենց մազին անգամ չդպաւ, այլ եւ աղաչեց որ քովը իւր արքունիքը կենան: Բայց հայրենասէր Լակեդեմոնացիք պատասխանեցին. « Կրնամք հայրենիքէն դուրս ապրիլ մեք՝ որ անոր համար մեռնիլ կուզէինք: »

Ո՛հ հայրենասէրք, ի՞նչպէս յիշատակնիդ նաեւ օտարաց սիրելի է եւ պաշտելի... եւ տարիներուն հոլովելովք փոխանակ աղօտանալու եւ հնանալու, աւելի պայծառ կփայլին ու կնորոգուին: Ձեր հայրենասիրական վեհ գործերը կարդացողն ու ձեր յիշատակին եւ անուան անոնցմով անմահանալն ու նաեւ օտարազգեաց սիրելի լինելը տեսնող խելացի

մարդը՝ կարելի չէ որ ձեր օրինակին հետեւելու մեծ փափաք մը սրտին մէջ չզգայ : Երանի՛ անոր որ այն փափաքն իգործ կդնէ եւ ներկայ ու ապագայ ճշմարիտ եւ անանց փառաց ինքզինքն արժանի կընէ : Ո՛հ, եթէ այս փափաքն իգործ դնող Հայկազանց փոքրիկ Թիւն աճէր բազմանար, ի՞նչպէս քիչ ժամանակի մէջ հսկայաքայլ առաջ կերթար ազգերնիս, եւ կերպարանափոխ կծաղկէր կփառաւորուէր :

— Տօնի մը օր Թերացիք իրենք զիրենք կերուխումի տուեր կուրախանային. միայն մէջերնէն քաջայաղթ զօրավարն Եպամինոնդաս՝ լռիկ մնջիկ կպըտրտէր : Բարեկամներէն մէկը քովը կմօտենայ, լռութեամբ պտըտելուն պատճառը կհարցունէ : « Կմտածեմ, կասէ, թէ ի՞նչ կրնամ ընել որ միշտ այսպէս զուարճանաք եւ տեղէ մը վախ կամ կասկած չունենաք : » Մինչդեռ իւր քաղաքացիքը զուարճութեանց մէջ ընկղմած՝ իրենց օգուտը մոռցեր, մէկդի դրեր են, Եպամինոնդ իրենց համար կմտածէ, իրենց օգտին կհսկէ : Որպիսի՛ վեհանձնութիւն, որպիսի՛ հայրենասիրութիւն : Այս վեհանձն ու հայրենասէր ոգին կենացը մինչեւ վերջին վայրկեանը վրան կենդանի մնաց : Մանտինէայի քով Սպարտացւոց դէմ քաջութեամբ պատերազմած ժամանակը սաստիկ վէրք մը առաւ Եպամինոնդ կուրծքին. մէկէն զինքը վրանը բերին. սլաքը վէրքին մէջ մնացեր էր. վիրաբոյժք ասացին որ եթէ երկաթը վէրքէն դուրս հանեն՝ մէկէն կը մեռնի : Եպամինոնդ վահանն ուզեց, ու երբոր բերին՝ ուրախութեամբ վրան նայեցաւ որ հետն այնչափ պատերազմներու մէջ մտեր ու այնչափ յաղ-

Թուժիւններ ըրեր էր: Հարցուց պատերազմին համար. եւ երբոր լսեց թէ Թեբացիք յաղթեցին, «Մի՛ կարծէք, զրուցեց իւր բարեկամացը, որ այս իմ կենացս յետին օրն է, մանաւանդ թէ երջանկութեանս սկիզբն է. որովհետեւ Թեբէն յաղթող կը թողու՛մ, Սպարտան խոնարհած եւ Յունաստանն ազատ:» Տեսաւ որ բարեկամներն անորդի մեռնելուն վերայ կուլան. «Մի՛ լայք, ըսաւ, ինձ երկու անմահ զաւկրներ կ'թողու՛մ, Լեւկտրայի ու Մանտինէայի յաղթուժիւնները:» Այս խօսքն ասելէն յետոյ քաշեց երկաթը վերքէն հանեց ու մեռաւ վերջին մտածմունքն եւս իւր Հայրենեացը վերայ տարածելով:

ԿԱՅԾՈՌՈՒԿ (1) ԵՒ ԽԽՈՒՆՋ (2).

Կայծոռիկը կուլար կասէր խըխունջին.

« Թող զիս, հոգիդ կըսիրես.

Ի՞նչ վնաս եմ ըրեր քեզ,

Որ ըսպաննել զիս դու կուզես ռիտրիմ:

Թող, ո՛հ տըկար մէկն եմ ես.

Թէ պըզտի լոյս մ'ալ ունիմ՝

Ինձ համար չէ, այլոց համար կըվառիմ: »

— Ի՞նչ, ինձ վընաս չես ըրա՛ծ.

Սնգուժ խըխունջը պոռաց.

Հապա ինչո՞ւ կըփայլիս.

Ո՞չ ապաքէն որպէս զի զիս

Հասարակաց ցուցընես մութ ու տըգեղ:

Թէ որ դու լոյս ջունենայիր՝

(1) Ս.Թէշ պէօճէյի. (2) սիւմիւքլիս պէօճէք

Ու ինձ պէս մուծ լինէիր,
Յայնժամ աչքիս կերեւայիր դու անմեղ.
Եւ հիմ' ալ ոչ մեռանէիր : »

Բարի՞ք մ'ըրիր .
Նախանձոտին , գիտնաս , վրնաս հասուցիր .
Վասն զի քու բարի գործքով
Կըցուցընես թէ ո՛ւր է ինք քուկին քով .
Քու խօսքդ անուշ'
Սըրտին է փուշ .
Քուկին համբաւ
Իրեն սարսա՛ւ...
Բարիքդ ըրէ , ո՛վ ազգասէր .
Ու լոյս տալէ մի' դադարեր .
Թէ զքեզ նախանձ մարել ջանայ' մի' վախնար .
Քու միշտ ես լոյս , ինքն յաւելո՛ւ զիւր խաւար :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԼԱ.

Շարայարուրիւն.

Գուլիէլմոս Թէլ.

Գերմանիոյ կայսրն Ալբերտոս ուզելով Զուլիցերին նուաճել , տեղացւոց երեւելիներն իւր կողմն որսաց ընծաներով եւ խոստմունքներով , եւ իւր իշխանութիւնը անոնց ընդունելի ըրաւ : Յետոյ Զուլիցերիին այլ եւ այլ նահանգացը մէջ բերդեր ու ամրոցներ շինել տուաւ , կուսակալներ յուղարկեց՝

պատուիրելով որ վերջի խստութեամբ վարուին բնակչաց հետ, որպէս զի անոնք կատողին ոտք ելլեն, եւ ինքն առիթ առնու երթալու բոլոր երկրին զինու զօրութեամբ տիրապետելու:

Այս կուսակալաց մէկը Կեսնէր, որուն յանձնուած էին Շուից եւ Ուրի նահանգները, անտանելի հրապարտութեանը կցորդելով անսահման անգթութիւն մը, միտքը դրաւ որ գեղացիները գերիի պէս գործածէ: Վրանին ունեցած մեծ արհամարհութիւնը ցուցանելու համար՝ ցցի միոյ ծայրն անցուց իւր գլխարկն ու Ալթորֆ քաղաքին հրապարակին մէջ տնկել տուաւ՝ հրաման հանելով որ առջեւէն անցնող դարձողը մեծ պատկառանօք զայն ողջունեն՝ գլխարկնին վար առնելով: Ամէնքը վախէն հնազանդեցան: Միայն արիասիրտ ու հայրենասէր Գուլիէլմոս թէլ չուզեց գլուխ խոնարհեցունել այն անօրէն հրամանին. եւ հրապարակին մէջէն անցաւ չտեսնելու զարնելով այն ծաղրապաշտօն գլխարկը: Կէսլէր կատղած՝ բռնել տուաւ Գուլիէլմոսն, առջեւը կանչեց ու սաստիկ յանդիմանեց իւր անհնազանդութիւնը: Պատասխան չտուաւ Գուլիէլմոս: Իւր անբարբառ լռութեանը վերայ աւելի կատղեցաւ Կէսլէր, եւ անլուր անգթութիւն մտածեց: Գուլիէլմոս դեռահասակ որդի մի ունէր. Կէսլէր դատապարտեց զինքն որ որդւոյն գլխուն վերայ դրուած խնձորն հարիւր քայլ հեռուէն նետով մը զարնէ: Իրաւ անուանի էր Գուլիէլմոս իւր ճարտար նետածգութեամբը, սակայն եւ այնպէս ահագին վտանգին առջեւ սոսկաց. սոսկացին նաեւ բոլոր հանդիսականք:

Հրամանաւ բռնաւորին մանուկը կբերուի. իտե-

սիւլ անմեղ որդեկին թշուառ հօրաղիքը կգալարին , սիրտը կկտրտի , ամէն ջանք կընէ Կեսլերին կատաղութիւնն իջեցունելու . ճար չլինիր : Կերդնու գազանամիտ բռնաւորն անդէն որդւոյն հետ զինքն սպանանելու՝ եթէ իսկոյն կամակատար չհնազանդի : Յայնժամ թէլ սրտէն առ Աստուած կդիմէ կապաւինի հոգեռանդն աղօթիւք , արտասուօք կը գրկէ կհամբուրէ որդեակը , կպատուիրէ որ անշարժ՝ անվախ ու անխուով կենայ . ինքնին նորա գլխոյն վերայ այն մահագուշակ խնձորը կդնէ , կը վազէ կերթայ նետաձգութեան որոշուած տեղը , աղեղը կլարէ , հարուածը կշտկէ... նետը կթռչի... Իւրագորով ընթերցողք , որպիսի՛ յուզմանց եւ այլայլութեանց մէջ չընկա՞ն արդեօք սրտերնիդ : Սոսկումնիդ դադարեցուցէք . խնձորն նետահար ընկաւ եւ անմեղ պատանեակը չվիրաւորուեցաւ...

Վրան շատ չանցաւ , մեռուց թէլ այն Կեսլեր գազանը . եւ իւր հայրենիքը Զուխցերի ազատութեան գեղանշոյլ արեւը տեսաւ :

— Հին ժամանակի ամենէն երեւելի բժիշկն է Հիպպոկրատէս , եւ մեռած է Քրիստոսէ 38 տարի առաջ : Անգամ մը սոսկալի ժանտախտ ընկաւ Պարսկաստան , եւ վախ կար որ անտի Յունաստան անցնի : Պարսից թագաւորը սաստիկ վախնալով որ ինքն եւս չբռնուի չմեռնի , Հիպպոկրատին մարդ յուղարկեց կանչեց՝ մեծամեծ պատիւ եւ գանձ իոստանալով նմա իվարձ . միանգամայն եւ փառաւոր պարգեւներ դրկեց : Հայրենասէր Հիպպոկրատ չընդունեցաւ թագաւորին ոչ առաջարկութիւնն եւ ոչ մեծագին պարգեւները . եւ գրուցեց . « Հայրենա-

կիցքս վտանգի մէջ են. ամենէն առաջ զիրենք պարտական եմ խնամել:»

Եւ արդարեւ սակաւ ժամանակէն երբոր Աթէնք հասաւ ժանտախտը եւ Աթենացիք իւր օգնութիւնը խնդրեցին, սիրով վազեց գնաց, եւ չելաւ անտի մինչեւ իւր անձնանուէր խնամօքը բոլորովին կըտրեցաւ այն մարդախոշոշ սոսկալի ախտը:

Լեւոնիդաս թերմոպիլէ.

Քրիստոսէ 480 տարի առաջ երբոր Պարսից Քսերքսէս Թագաւորն անհամար զօրօք սկսաւ Յունաստանի վերայ արշաւել, երկրին մէջ եղած այլ եւ այլ հասարակապետութիւններն եւս սկսան դէմ դնելու պատրաստուիլ, եւ որոշեցին որ զօրք ղրկեն Թերմոպիլէի կիրճը պահպանելու՝ ուստի թշնամին պիտի մտնէր Յունաստան: Այս կիրճն որ ծովուն ու լեռանց միջավայրն է, տեղ տեղ հազիւ մէկ քանի կանգուն լայնութիւն ունի:

Այն յունական նիզակակցութեան գլուխն էին Լակեդեմոնացիք կամ Սպարտացիք. իրենցմէ երեքհարիւր հոգի հրաման առին որ Լեւոնիդասի առաջնորդութեամբն երթան Թերմոպիլէի կիրճը կամ անցքը պահպանեն. հետերնին գնացին նաեւ Յունաստանի միւս քաղաքներէն չորս հազար հոգի. եւ այսպէս չորս հազար երեք հարիւր անձինք կերթային երեքհարիւր հազար հոգւոյ դէմ այն կիրճը պաշտպանելու:

Երբոր Թերմոպիլէ հասաւ Քսերքսէս իւր ահագին բանակաւը, չէր կրնար հաւատալ որ սակաւածեռն գունդ մի սիրտ ընէ իրեն դէմ դնելու. ուստի եւ

գրեց Լեւոնիդեայ. « Թէ որ ինձ հնազանդիս, բոլոր Յունաստանի վերայ գրեզ տէր կկացուցանեմ : » Չէր գիտեր Թէ որպիսի՛ անձնուրաց հայրենասիրի այսպէս կգրէր. ուստի եւ արժանաւոր պատասխանն առաւ. « Աւելի կուզեմ հայրենեացս համար մեռնիլ քան Թէ անոր վերայ իշխել » գրեց Լեւոնիդաս : Ուրիշ նամակ մի եւս յուղարկեց Թագաւորն, յորում զայս միայն կասէր. « Զէնքերդ տուր : » Նոյն նամակին տակը գրեց Լեւոնիդաս. « Եկուր ա՛ռ : »

Այս խրոխտ պատասխանին վերայ սաստիկ բարկացած Քսերքսէս՝ հրամայեց գունդ մի զօրաց որ իսկոյն այն մարդիկն բռնեն ողջ ողջ իրեն բերեն : Քանի մի զինուորք վազեցին Լեւոնիդասին զրուցեցին. « Պարսիկք մեզ մօտեցան . » պաղ կերպով մը պատասխանեց Լեւոնիդաս. « Զրուցեցէք աւելի Թէ մեք իրենց մօտեցանք : »

Պարսից գնդերն առաջ կբալեն. կվազեն վրանին քաջքն Յունաց եւ զիրենք ետ կքշեն : Երկու օր միակերպ կյարձակին եւ կհալածուին Պարսիկք. եւ մինչդեռ Քսերքսէս յուսահատած չէր գիտեր ընելիքը, մատնիչ Յոյն մի կուգայ իրեն ծածուկ նեղ ճամբայ կցուցանէ, ուստի կարող էր իւր բանակը Յունաց զօրքը պատել, կրճէն անցնիլ :

Այս սոսկալի գոյժն որ առին Յունաց զօրավարներն՝ մէկէն խորհրդի ժողովեցան. « Բարեկամք, ասաց նոցա Լեւոնիդաս, փուժով ելէք գնացէք աստի, եւ կեանքերնիդ ընդունայն տեղ մի՛ կորսընցունէք : Իսկ մեզ մեր հայրենեաց օրէնքը կհրամայէ մեր կենօքն հանդերձ միայն Թողուլ մեզ յանձնուած տեղը. հրաման առինք անցքը պաշտպանել, եւ պիտի

պաշտպանեմք զայն մինչեւ ցմաի : Մի՛ կարծէք որ մեր անձնանուիրութիւնն անօգուտ պիտի լինի : Յունաց քաջութիւնն անով պիտի վառի, եւ սովրեցունելով թշնամեաց թէ ո՛յք են ծառայեցունելու զած ժողովուրդնին՝ զիրենք պիտի սարսափեցունէ : »

Մինակ մնաց ուրեմն Լեւոնիդաս կրճին մէջ իւր երեքհարիւր Սպարտացիներովը : Սակայն գուժը շարժեցաւ մէջերնէն երկու հասակագեղ երիտասարդաց վերայ, որոնք իւր ազգականքն ու մտերիմ բարեկամքն էին, եւ փափաքելով զիրենք մահուանէ ազատել՝ մէկուն նամակ մը տուաւ եւ միւսոյն բան մը յանձնեց Սպարտայի իշխանաց տանելու համար : Բայց անոնք հասկացան իրենց զօրավարին ու բարեկամին թաքուն միտքն, ու քաջութեամբ « Մեք հոս պատգամատար լինելու չեմք եկած, այլ պատերազմելու գոչեցին : » Ստիպուեցաւ Լեւոնիդաս զիրենք ազատ թողլով հայրենեաց համար մեռնելու փառքն իրենցմէ չյափշտակելու :

Շատ չանցաւ, այս վեհանձն զօրականաց վերայ գունդագունդ դիմեցին Պարսիկք : Նախ Լեւոնիդաս ընկաւ՝ անոնցմէ բազմաթիւ անձինք իւր քաջասրտութեանը զոհ ընելով : Ետեւէն ընկան նաեւ իւր քաջ զինուորակիցքը՝ թշնամեաց գունդերը չարաչար հարուածելով :

Արդարեւ փառաւոր յաղթութենէն աւելի մեծ օգուտ գործեց Լեւոնիդասի եւ ընկերաց այս անձնանուիրութիւնը. վասն զի ամենուն զարմանքը շարժելով՝ զիրենք յորդորեց այն դիւցազանց պանծալի օրինակին հետեւելու. անով փառաց եւ հայրենեաց սէրն երկնային ու տենչալի առաքինութիւն

մը դարձաւ իրենց. եւ այնու սիրով վառուած զօրացած՝ հալածեցին հայրենիքէն այն ահաւոր թշնամին :

Թերմոպիլեայ դիւցազանց թաղուած տեղը կոթող մի կանգնեցին այս պարզ արձանագրով. « Անցաւո՛ր, գնա զրուցէ Սպարտայի որ մեք հոս մեռանք իւր օրինաց հնազանդելու համար : »

ԸՆԹԵՐՅՈՒՍԹ ԼԲ.

Շարայարուրիւն.

Հայրենասիրութիւն կանանց.

Պուրկօնեի դուքսը Կարոլոս Յանդուզն 1472ին Դաղղիոյ Լուդովիկոս մետասաներորդ թագաւորին դէմ պատերազմելով՝ եկաւ Պովէ քաղաքը պաշարեց : Կկարծէր որ շուտով պիտի տիրէ անոր եւ Փարիզու վերայ պիտի դիմէ : Քաղաքացիք քաջութեամբ դէմ դրին. բայց սակաւաթիւ լինելով չէին կարող թշնամւոյն բազմութեանը մինչեւ վերջը դիմանալ : Զայն տեսանելով կանայք՝ ուզեցին իրենց հարց, եղբարց եւ ամուսնաց օգնելով մասնակից լինել աշխատութեանց պատերազմին եւ փառաց ազատութեան քաղաքին : Յովհաննա Հաշէթ անուն դիւցազնուհւոյ միոյ առաջնորդութեամբը թռան ելան անպաշտպան մնացած պատնիշաց ու պատուարաց վերայ, եւ անտի վեր ելլող յարձակողներն իրենց սանդուղներովը վար փոսե-

րու խրամներու մէջ Թօթափեցին, եւ ձեռքերնէն դրօշ մը յափշտակեցին առին : Կանանց այս արիասիրտ օրինակը վառեց բորբոքեց էրիկ մարդոց քաջութիւնը. իզուր բազմացուց Կարողոս յարձակմունքները, իզուր հրազէնքը գիշեր ցորեկ հրացայտ կայծակունք կ'Թափէին պարսպաց վերայ. ստիպուեցաւ պաշարումը վերցունել երթալ՝ զօրաց մեծ մասը կորսնցունելով :

Պովէի կանանց եւ քաղաքացւոց անձնանուէր նահատակութեամբն ազատեցաւ Փարիզ, եւ Հաշէթի եւ իւր հայրենասէր դիւցազնուհի ընկերաց քաջութեան յիշատակն անմոռաց մնալու համար՝ տարեդարձին օրը քաղաքական տօն ցնծութեան հաստատեցին Պովեցիք :

— Կիլիկոն մատնիչն Փոքր Ասիոյ Մելիտոս քաղաքէն էր, եւ իւր հայրենիքը Թշնամեաց մատնելուն համար ամենուն ատելի եղեր էր : Յը մի վաճառանոց կերթայ միս գնելու. Թէագենէս մսավաճառն ազնիւ մսի կտոր մի նմա կցուցանէ. եւ երբոր ձեռքը կերկնցունէ Կիլիկոն որ առնու նայի, Թէագենէս դանակը զարնելն ու զայն կտրելը մէկ կընէ ասելով. « Մատնի՛չ, ո՛ւր էր Թէ մարմինդ եւս այսպէս երկու կտոր ընէի : »

— Փոկիոն անիրաւութեամբ հայրենակիցներէն դատապարտուելով յաքսոր, երբոր այն օտարութեան մէջ մեռնելու վերայ էր՝ բարեկամներէն մէկն հարցուց իրեն Թէ որդւոյն տալու պատուէր մի ունի՞ : « Իմ կողմանէս պատուիրէ իրեն, զրուցեց Փոկիոն, որ ինձ պէս հաւատարմութեամբ եւ նախանձայուզութեամբ ծառայէ հայրենեաց, եւ մանաւանդ մոռանայ որ իմ ծառայութեանցս փո-

խարէն՝ անիրաւ մահ ինձ տուաւ հայրենիքս : »

Փոկիոնէն պէտք է սովորիմք՝ վեհանձնութեամբ ներել հայրենեաց, եթէ երբէք իրմէն կամ մեր հայրենակիցներէն զրկանք կամ անիրաւութիւն կըրեմք :

Ազգասիրութիւն սպարտացի կանանց.

Սպարտայի պէս տեղ մը չէ տեսնուած թէ ի՞նչ մեծ ազդեցութիւն ունի հայրենասիրութիւնը վսեմ ու ազնուախոյ մտաց վերայ, ազնիւ ու վեհ հոգւոց վերայ : Հոն առ հասարակ արք եւ կանայք, մանկունք եւ ծերք, աղքատ հարուստ իրարմէ աւելի հայրենեաց զոհեր ընելու կշանային, հայրենասիրութեան փառքն իրարու ձեռքէ յափշտակելու կմրցէին. եւ այն հայրենեաց գեղեցիկ նախանձով վառուած՝ իրենք զիրենք անոր փրկութեանը, երջանկութեանն ու փառացը կնուիրէին բոլորապտուղ, եւ հայրենեաց համար զոհ չկար որ չընէին :

Լակեդեմոնացի մայր մի որդին պատերամի զինելով՝ ձեռքը կուտայ վահանն ու կանէ. « Նայէ՛, կա՛մ դուն պիտի բերես զայս, եւ կամ վրան պիտի բերուիս : »

Ուրիշ մի տեսնելով որ որդին պատերազմէն կը դառնայ՝ իրեն լուր կհարցունէ. « Բոլոր ընկերքս մեռան » որ կպատասխանէ նա, կբարկանայ, գլխուն կղմինտր մի կնետէ կմեռցունէ զինքն ասելով. « Թշուառակա՛ն, ուրեմն գուժաբե՛ր լինելու համար կենդանի մնացիր դուն : »

Ուրիշ մայր մի լսելով որ որդին փառօք մեռեր էր

պատերազմին մէջ. « Ձեմ՝ զարմանար, կասէ, վասն զի զաւակս էր : Լսելով յետոյ որ միւս որդին վատաբար փախեր էր. « Ուրեմն իմ զաւակս չէ՛ եղեր » գոչեր է այն հայրենասէր ու քաջ մայրը :

Ուրիշ մի երբոր կիմանայ որ որդին պատերազմէ փախեր է, կգրէ անոր. « Պատուոյդ վերայ նախատական լուր մի կպտըտի. կա՛մ դադարեցուր զայն, եւ կամ մեռի՛ր : »

Ուրիշ մայր մի լսելով որ որդին եղբօրը պատերազմին մէջ ունեցած փառաւոր մահը կպատմէ, « Թշուառակա՛ն, կկանչէ. ինչո՞ւ հետը չմեռար : »

Ուրիշ մի հինգ զաւակ ունէր քանակին մէջ, եւ պատերազմէն լուրի կսպասէր : Գերի մի կուգայ քանակէն եւ դողդողալով կհարցանէ. « Որդւոցդ հինգն ալ մեռան » կասէ : — Վատախորհուրդ գերի, կկանչէ, մի՛թէ ա՛յդ է քեզ հարցածս : — Յաղթուեցի՛նք մերն է » կկրկնէ գերին, եւ անդէն որդեկորոյս մայրն մեհեան կվազէ աստուածոց գոհուեցան մատուցանելու :

Ուրիշ մայր մի եւս քաղաքի միոյ պաշարման ժամանակ իւր անդրանիկ որդին տեղ մի պահապան կդնէ. եւ երբոր անոր Թշնամեաց նետերէն զարնուիլ ու իւր ոտքին տակ իյնալը կտեսնէ, « Եղբայրը կանչեցէք, կասէ, որ գայ տեղը բռնէ : »

Արքիլէոնիդա անունով Լակեդեմոնացի կին մի լսելով որ որդին պատերազմի մէջ սպաննուեր է, կհարցանէ Թէ քաջութեամբ մեռաւ Թէ վատութեամբ : Օտարականք որ դեռահասակ զօրականին քաջութեանն ականատես եղեր էին, վրան մեծամեծ գովեստներ կխօսին մօրն ու « Ձեմք կարծեր, կասեն, որ Սպարտայի մէջ իրմէն աւելի քաջ մի

գտնուի : — Կսիաալիք, պատասխանէ հայրենասէրն Արքիլէոնիդա. իրաւ է որ քաջ էր որդիս. բայց գոհուծի՛ւն երկնից, հայրենիքս իրմէն աւելի ուրիշ շատ քաջեր ունի : »

Հայրենասիրութիւն Հռովմայեցւոց.

Հռովմայեցւոց համար աստուածներէն ետքը հայրենիքն էր քան զամենայն ինչ ցանկալի եւ սիրելի : Ծնած տեղը սիրելը բնական է մարդուս. բայց Հռովմայեցւոց համար բնականէն աւելի էր այս սիրոյ զգացումը : Պատրաստ էին միշտ հայրենեաց ազատութեանը, փրկութեանն ու երջանկութեանը համար ամէն բանի ձեռք զարնել, ամէն տեսակ նեղութիւն կրել, եւ ամէն բան նուիրել. ուստի եւ հայրենեաց սիրոյն համար հարստութիւն, հանգիստ, կեանք, փառք, բարեկամք, ազգականք, որդիք, եւ ո՛ր եւ իցէ զո՞հ աչքերնուն ծանր չէր երեւար : Ո՛ր եւ իցէ վիշտ կամ հարստահարութիւն չէր կարող Հռովմայեցւոց սրտէն հանել այս սէրը, ուր բնութիւնը կտպաւորէր զայն ծնած ժամանակնին, եւ դաստիարակութիւնը կզօրացունէր կաճեցունէր. վասն զի պզտիկուց իրենց կհասկացունէին մարք եւ դաստիարակք որ քաղաքացիք պարտական են բարիք ընելու հայրենեաց՝ թէ եւ նա ապերախտ գտնուի եւ անիրաւ :

Հռուտիլիոս անուն երեւելի հռովմայեցին անիրաւութեամբ հայրենիքէն աքսորուելով՝ բարեկամներէն մէկը զինքը մխիթարելու համար « Հոգ մըներ, կասէ, քիչ ժամանակէն Հռոմ քաղաքական պատերազմ կելլէ, եւ բոլոր աքսորեալք ետ կկան-

չուին : Քեզի ի՞նչ ըրի, մարդ, կպատասխանէ Հռու-
տիլիոս բարկութեամբ, որ ինձ աքսորանքէս աւելի
տխուր դարձ կմաղթես : »

— Պոմպոնիոս անուն հռովմայեցի զօրականը
դիւցազնաբար պատերազմելէն յետոյ գերի կբռն-
նուի եւ մեր Միհրդատայ առջեւը կտարուի : Քաղց-
րութեամբ կընդունի զինքը թագաւորն ու մեծաւ
խնամօք վէրքերը դարմանել կուտայ . եւ երբոր
կառողջանայ, իրեն կհարցունէ թէ իվարձ խնամոցը
կրնա՞յ իւր բարեկամութեանը վերայ վստահիլ :
« Բարեկամդ եմ, կպատասխանէ Պոմպոնիոս, թէ
որ կուզես Հռովմայեցւոց բարեկամ լինել . բայց թէ
որ հայրենեացս դէմ ունեցած ատելութիւնդ շարու-
նակես, գիտցիր որ անհաշտ թշնամիդ պիտի լինիմ
միշտ : »

ԸՆԹԵՐՅՈՒՍԾ ԼԳ.

Շարայարուրիւն.

Ուռչիւնկերն.

Քաղաքական ու հայրենասիրական պարտուց
անձերի կատարմանը համար Գէորգ Ուռ'չիւնկերնէն
աւելի գեղեցիկ օրինակ չեմք կրնար բերել, որ Ամե-
րիկացւոց ազատութեանը հիմնադիրն եղեւ, եւ
իբրեւ այր սոսկական, պատերազմող եւ պաշտօ-
նեայ պետութեան՝ միշտ անձերի կերպով քաղա-
քացւոյ ամէն առաքինութիւններն իւր վերայ
անաղօտ փայլեցուց :

Ուոշինկերնին ծնած ժամանակը (1832) Միացեալ-
Նահանգաց հասարակապետութիւնը չկար, եւ եր-
կրին մէջ տասուերեք գաղթականներ կային՝
Անգղիոյ հպատակ : Ասոնք Անգղիոյ տէրութեան
բռնութեանցը դէմ չկարենալով համբերել՝ 1774ին
ապստամբութեան դրօշակը կանգնեցին, եւ մտքեր-
նին դրին որ անկախութիւննին ձեռք բերեն :
Իրենց գլուխ մի պէտք էր. զՈւոշինկերն ընտրեցին
եւ իրեն սպարապետութեան պատիւն ու իշխանու-
թիւնը տուին :

Յայնժամ քառասունուերկու տարեկան էր Ուո-
շինկերն : Երիտասարդութեանը ժամանակ իւր
գաւառին զինուորացը գլուխ կեցած՝ վայրենեաց
դէմ ըրած պատերազմին մէջ քաջացեր էր. բայց
յետոյ ինքզինքը բոլորովին իւր արտերը մշակելու
էր տուեր : Սրտին մէջ ամենեւին փառասիրութիւն
չունենալով՝ իրեն տրուած պատուոյն բնաւ չէր
սպասեր. մանաւանդ եւս որ ո՛րչափ արիասիրտ ու
մեծասիրտ էր, այնչափ եւ խաղաղասէր եւ հա-
մեստ : Բայց երբոր առիթն եկաւ, երբոր հայրենիք
իւր հանձարոյն ու ծառայութեանը կարօտ եղաւ,
իմաստուն երկրագործն ինքզինքը մեծանուն պաշ-
տօնեայ պետութեան եւ քաջամարտիկ պատերազ-
մող ցուցուց :

Անգղիացւոց դէմ եղած կռիւն ինը տարի տեւեց,
եւ հարկ եղաւ որ Ուոշինկերն անլուր դժուարու-
թեանց յաղթէ : Խոչընդոտք, ձախորդութիւնք,
թշնամութիւնք, մատնութիւնք եւ անիրաւութիւնք
չորս կողմը կվխտային. արիութեամբ ու վշտակիւր
համբերութեամբ ամենուն եւս յաղթանակեց : Իւր
զօրքն որ միշտ Անգղիացւոցմէ սակաւամիւ էր,

անդադար եւս դասալիքներու պատճառաւ աւելի կտկարանար. ոչ հագուստ ունէր, ոչ կերակուր, ոչ զինուորական կրթութիւն, եւ ոչ իսկ քաջութիւն : Բայց Ուոշինկիթընի հնարագէտ հանճարը շուտով անոնց ամէն բան ճարեց, կրթեց, կարգաւորեց զիրենք, իւր քաջութիւնն անոնց սրտին մէջ վառեց բորբոքեց, եւ նոցա սէրն ու մեծարանքը իւր վերայ դարձուց :

Ուոշինկիթընին զինուորական հանճարէն աւելի զարմանալի էր անյաղթելի հաստատութիւնը, եւ շատ հռչակաւոր է 1777 եւ 1778ին ձմեռն այս հաստատամտութեան տուած օրինակը : Անապատի մի մէջ Փիլադելփիոյ մօտ Ուոլլի-Ֆորճ կոչուած տեղը բանակեր էր, եւ չորս դին ձիւն եւ սառնամանիք պատած էին : Այն սոսկալի տեղը նորածին հասարակապետութեան պաշտպաններուն քաշածն անկարելի է նկարագրել. առանց հագուստի, առանց ոտքի ամանի, առանց զէնքի, առանց հացի, շատերն անօթութենէ, ցրտէ ու խեղճութենէ մեռան. դասալիքներուն թիւը բազմացաւ, եւ սպայք անգամ սկսան թշնամեաց կողմն անցնիլ. եւ թէպէտ սակաւաթիւ անձինք մնացին Ուոշինկիթընին քով, սակայն եւ այնպէս անյողդողդ քաջութեամբ կրդիմանար նա : Ամէն բան կարծես թէ զինքն ոգեսպառ յուսահատեցուցանելու համար միաբաներ էր : Երկրին մէջ ամէն տեղ իրեն դէմ կգանգատէին. դաւաճանութիւնք եւ զրպարտութիւնք կը շատնային եւ ժողովուրդը կսկսէր սպարապետին բռնած ճամբան պարսաւել, անխելքանկարող զինքն անուանել եւ տեղն ուրիշ մի փնտռել : Այս ամէն բան կտեսնէ կլսէ մեր դիւցազնը, քաղաքացին եւ

իմաստունը, եւ անխռով անայլայլակ կմնայ, եւ այն սոսկալի փոթորկին դէմ իւր հայրենասիրութիւնը, առաքինութիւնը, ներողամտութիւնը, մտաց հաստատութիւնն եւ ուղղութիւնը կդնէ. եւ թէպէտ հայրենակցացը ապերախտութեանը վերայ կտագնապի, բայց չսրդողիր նաեւ անմեղ հայրենեաց, եւ անոր կարօտութիւնը չտեսնելու համար վրայէն երեսը չդարձներ, ինչպէս շատերուն սովորութիւնն է մեր ազգին մեջ... Բարեբախտաբար իրաւունքն ու արդարութիւնը շուտով իրենց տեղը կգտնեն. Ուոշինկիթընի դէմ եղած յարձակմունքները կդադարին եւ ճարտար նաւապետին ձեռքը կթողուն բազմավտանգ նաւուն ղեկը, զոր գիտցաւ փառօք եւ պատուով ինաւահանգիստ փրկութեան հասուցանել: Իրեն օգնութեան եկած գաղղիացի զօրաց եւ Լաֆայէթ զօրավարին ձեռնտուութեամբը՝ վերջապէս Սնգղիացիքն երկրէն հալածեց, եւ Սնգղիայէն իւր սիրելի հայրենեաց փափագելի անկախութիւնն առաւ:

Սյսպէս բազում նեղութեամբք եւ հալածանօք հայրենիքն օտար իշխանութենէն ազատելէն յետոյ՝ զօրքը արձակեց Ուոշինկիթըն, սպարապետութեան իշխանութենէն հրաժարեցաւ, գնաց իբրեւ հասարակ քաղաքացի մի իւր կալուածները քաշուեցաւ, եւ հոն հասած օրն այսպէս կգրէր իւր բարեկամաց մէկուն. « Տանս դռները տեսան զիս ինն ամօք աւելի ծերացած: Կյուսամ կենացս մնացած օրերն անցունել բարի մարդոց սէրը վայելելով եւ տնական առաքինութիւնները կատարելով: Երկրագործի մի կեանքն ամենէն աւելի հեշտալի է. վասն զի պատուաւոր է, զուարճալի եւ միան-

գամայն շահաբեր : Առանձնական կեանք անցունելուս վերայ ունեցած ուրախութիւնս չեմ կարող յայտնել քեզ : Բնաւ մէկուն վերայ ջնախանձելով, միտքս դրած եմ ամէն բանով գոյ լինել, եւ այնպէս կամաց կամաց կենաց գետէն վար պիտի իջնամ մենչեւ ննջեցից ընդ հարս իմ իխաղաղութիւն : »

Իւր այս փափաքը չկրցաւ կատարել. վասն զի հնգամեայ խռովութիւններէ եւ մրրկալից վէճերէ ետեւ Միացեալ-Նահանգաց սահմանադրութիւնը հրատարակեցաւ, եւ միաձայն հաւանութեամբ Ուոշինկթըն նախագահի հասարակապետութեան անուանեցաւ :

Մարդ չէ եղած որ աւելի արդար ճանապարհաւ, իրմէն աւելի հասարակաց միակամ բաղձանքովն ու եռանդեամբն իկատար իշխանութեան հասած լինի : Սակայն այս առաջարկութիւնն ընդունելու համար հարկ եղաւ որ ընդ երկար տատանի : Իննամեայ տաժանելի աշխատանքէ ետքը գտած քաղցր հանգստութենէն հրաժարիլ, բարձր ու դժուարին պաշտօն յանձն առնուլ եւ միանգամայն փառասիրութեան կասկած տալ շատերուն, իրեն համար անտանելի բան էր : Հայրենեաց սէրն իւր մեծ դժկամակութեանն յաղթեց եւ ընդունեցաւ այն բազմավիշտ առաջարկութիւնը :

Ծափաձայն եւ ցնծալից աղաղակաւ բազմութեան ժողովրդոց՝ գեղեցկազարդ նաւակով մի մտաւ ի Նիւ-Եօրք, որ հասարակապետութեան առժամանակեայ մայրաքաղաքն էր : Բոլոր այս փառքն ու պատիւը տեսնելով փոխանակ ինքզինքը ուրախութեամբ մոռնալու, այսպէս կգրէր նա իւր օրագրու-

Թեանք մէջ. « Նաւակաց շարժումը, նաւերու գոյնզգոյն դրօշակներով զարդարուիլը, երաժրշտաց քաղցրաձայն երգերն ու նուագները, հրետից սաստկաշառաչ թնդմունքը, եւ գետափունքէն անցած ժամանակս յոգնախուժք ժողովրդեան մինչեւ երկինք բարձրացուցած ուրախութեան աղաղակներն սիրտս տխուր ու քաղցր զգացմամբ լեցուցին. վասն զի կմտածէի որ գուցէ օր պիտի գայ որ բոլորովին ասոր ներհակ տեսարանները պիտի տեսնեմ՝ բարին գործելու համար ձեռքէս եկած ամէն ջանքն ու աշխատանքն ընելէն վերջն եւս: » Յաւալի՛ ճշմարտութիւն...

Մեծաւ ճարտարութեամբ ու անողդողդ արիութեամբ կառավարեց Ուոշինկերն, եւ միշտ հաւատարիմ գործադիր եղել բարեկարգութեան, ազատութեան եւ արդարութեան. բոլոր երկրին մէջ իւր անշահասիրութիւնը առակ դարձած էր, եւ անով իսկ էր որ շատ դժուարութիւններ առջեւը կդիւրանային. վասն զի ամէնքը համոզուած էին թէ ի՛նչ որ կընէ, ի՛նչ որ կմտածէ, ի՛նչ որ կառաջարկէ՝ հասարակաց հայրենեաց օգտին ու պայծառութեանն համար էր. ուստի եւ ամէն բարեսէր մարդիկ ձեռնտու օգնական էին նմա:

Իւր պաշտօնն ամենուն ակնկալութենէն վեր կերպով կատարեց Ուոշինկերն ամենայն յաջողութեամբ ու փառօք: Նուտով հայրենեաց վերքերը գոցուեցան. ամենուն սիրտն ապահովեցաւ, գործերը կարգաւորեցան, երկրագործութիւնն ու վաճառականութիւնը ծաղկեցան, եւ Միացեալ Նահանգն այն յառաջադիմութեան ու բարգաւաճութեան ճամբան մտաւ, որուն վերայ արդ կզար-

մանան տիեզերք: Բայց տարիներն սրացան անցան եւ նախագահութեան համար սահմանուած ժամանակը լրանալու մօտեցաւ. հասկացան ամէնքն որ Ուոշինկիթընի արժանաւոր յաջորդ գրեթէ անկարելի պիտի լինի գտնել. անոր համար եւ միաբերան աղաչեցին զնա որ այս ծանր բեռն իսէր հայրենեաց անգամ մի եւս վրան առնու:

Երկար ժամանակ տարակուսեցաւ մնաց Ուոշինկիթըն եւ չէր գիտեր ընելիքն. առ Աստուած դիմեց որ իւր միակ ապաւենն էր իդժուարինս, որպէս զի լոյս տայ իրեն. եւ իւր բարեկամին գրեց. « Տէրն բոլորից եւ ամենագէտն Աստուած մինչեւ ցայսօր հսկեց վրաս. վստահ եմ որ ընելու առաջադրութեանս ժամանակ այնպէս պիտի լուսաւորէ միտքս, որ բռնած ճամբուս մէջ անկարելի պիտի լինի ինձ մոլորիլ: »

Լիուլի քուէիւք վերստին ընտրուելով՝ նոյնպիսի անշահասիրութեամբ ու քաջութեամբ շալկեց Ուոշինկիթըն իւր ծանրակիր բեռը:

Այս երկրող նախագահութեան օրերն մեծամեծ դիմադրութիւններ պիտի կրէր: Անասանելի արիութեամբ մէկ կողմէն տէրութեան իշխանութիւնը գիտցաւ պատկառելի ընել, եւ միւս կողմէն օտար ազգաց հետ խաղաղութիւն պահել, թէպէտ եւ հզօր ու բազմաթիւ կուսակցութիւն մի ամէն ճիգը կթափէր զինքը գլխի վրայ բերելու: Վերջապէս նախագահութեանը վերջերը դիմադրութիւնը դադրեցաւ, ամենայն սիրտք առ հասարակ իրեն դարձան, եւ աղաչեցին որ երրորդ անգամ եւս տէրութեան կառավարութիւնն յանձն առնու:

Աայց միտքն որոշեր էր Ուոշինկիթըն. բացէ իբաց

մերժեց. եւ քաշուելէն յառաջ վերջին հրաժարական ողջոյնը տուաւ ազգին՝ որուն ազատութեանն ու պայծառութեանը համար արիւն քրտինք թափեր էր, եւ այնչափ տարի իմաստութեամբ եւ անձնանուէր ծառայութեամբ կառավարեր էր : Այս հրաժարականին մէջ ծայր իծայր իմաստուն խրատներ ու վեհ մտածմունքներ լեցուն են : « Տեսչութեանս գործերն աչքէ անցունելով թէպէտեւ բնաւ գիտութեամբ եղած սխալմունք չեմ գրտներ, սակայն այնչափ քաջ կեանաչեմ պակասութիւններս, որ անկարելի է ինձ չմտածել թէ անշուշտ շատ ակամայ եւ անգիտութեամբ թերութիւններ եւս ըրած եմ. ուստի եռանդագին սրտիւ պաղատիմ առ Բարձրեալն որ անոնցմէ գալու չարիքն հայրենեացս վրայէն հեռացունէ : Մեծ յոյս ունիմ որ հայրենիքս քառասուն եւ հինգ տարուան անձնանուէր ծառայութիւնս յիշելով՝ ներողամիտ լինի իմ այն անձնական պակասութեանցս եւ կրմոռանայ զանոնք, ինչպէս որ ես եւս դոյզն ժամանակէն պիտի մոռցուիմ իկայանս հանգըստեան : »

Դեռ երկու տարի ապրեցաւ Ուոշինկերն եւ բոլոր ժամանակն անխոնջ աշխատասիրութեամբ երկիր մշակելով եւ ուսման պարապելով կանցունէր . չէր դադարեր նաեւ բոլոր իւր բարութեանը դիմողներուն ամէն կերպ օգնութիւն ընելէն : Այն երկու տարուան մէջ ոչ ոք բերնէն խօսք մի լսեց զինուորական քաջագործութեանցն եւ կամ ութամեայ փառաւոր ու արդիւնաւոր նախագահութեանը վերայ : Կարծես թէ ինքն այն մեծ ու բազմարդիւն մարդը չէր : Արժանապէս եւ երբոր « եռաւ (1799),

Միացեալ-նահանգաց երախտագէտ ժողովուրդն
երեսուն օր սուգ բռնեց :

ՎԱՐԴ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾ.

Գարնան աղուոր մէկ օրով
Գեղագործին մէկն իւր պարտէզն իջնելով՝
Հոսկէց մէկ խոտ մի կորզէր
Հոնկէ տերեւ մի կըտրէր,
Ու մախաղին մէջ կըշարէր կարգ ըստ կարգ.
Իրեն համար չէր ջոր արմատն ալ անարգ :

Վարդին ալ մօտ որ հասաւ
Աղուոր բացուեր էր տեսաւ.
Ծիւծիւ կարմիր տերեւներ
Յօղապահոյճ տարածեր,
Օրիորդի պէս քընքուշ
Նազէր հոտովն իւր անուշ :
Երբ դանակին շողիւնը խեղճ վարդ տեսաւ
Գլուխը կըքեց, ա՛հ ըսաւ,
« Ի՛մ ալ վախճանըս հասաւ...
Խնայէ՛, պարոն, խնայէ՛ յիս
Գըթա՛ ծաղիկ հասակիս : »
Ու մարգարտէ արտսունքներ
Տերեւներէն կըթափէր :

« Մի՛, մի՛ տըրտմիր, ո՛վ գեղաշուք, ազնիւ վարդ,
Պատասխանեց իրեն մարդ.
Այս է բարեաց ճակատագիր չըգիտե՛ս.
Ամէն լաւ բան քեզի պէս
Ուրիշներուն աղէկուծեանն է համար,
Թէ որ քու կեանք չէ երկար,
Բայց ուրիշին օգտին համար որ զոհես՝

Երկարագոյն զայն կընես.

Մէկուն աչքին դեղ կըլլաս,

Միւսում անոյշ իւղովըդ սիրտ կըբանաս.

Տերեւներովդ ալ փափկիկ

Լինիս դու դեղ ու քաղցրահամ ուտելիք : »

Վարդին բախտէն սովրեցէք

Ով որ ազգին կամ ընկերաց օգուտ կընէք.

Զո՛հ լինելու ծըներ էք...

Բայց ո՞վ չուզեր թողուլ վարդին պէս անուշ

Անուն մը հոս ու յիշատակ քաղցրայուշ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԼԳ.

Բարի խրատներ.

Գովեստէ փախիր, անկեղծուծիւնը փնտռէ, ունեցած սակաւ բանովդ գոհ եղիր, վասն զի հարըստութենէ կճնանին ամէն չարիք :

Հարկաւոր եղածէն աւելի բան մ'առներ, թէ եւ աժան լինի :

Գլուխդ եկածն սիրով ընդունէ. կռիւ ընելու փափաք մ'ունենար, վասն զի շատ անգամ կրնաս յաղթուիլ ու ամօթապարտ մնալ :

Աշխարհս մեր յաւիտենական բնակարանը չէ որ վրան կապուինք. մէջը սակաւակեաց հիւր լինելնիս երբէք չմոռանամք եթէ երջանիկ կուզեմք լինել, վասն զի անով ուրախութիւն ու յաջողութիւն չկայ որ պարտքերնիս մեզ մոռացուցանել տայ, նէ-

դուժիւն ու վիշտ եւս չկան որ զմեզ յուսահատու-
թեան մէջ կարող լինին ձգել :

Առաջ գնա, պանդուխտ, յառաջ. աչքդ վեր վեր-
ցուր ու շնորհակալ եղիր Աստուծոյ որ ամէն մէկ
առած քայլիդ՝ պանդխտութեան օրերուդ թիւը
կպակսեցունէ եւ յերանաւէտ կեանս տեղդ պա-
տրաստել կուտայ :

Պիւծագորաս փիլիսոփայն կասէր թէ հինգ բանի
հետ միայն պէտք է մարդս պատերազմի, այսինքն
մարմնոյ հիւանդութեանց, մտաց տգիտութեան,
մարմնոյ ախտից, քաղաքներու պատրանաց եւ ըն-
տանեաց երկպառակութեանցը հետ :

Ինչպէս թէ մեծ հացկերութի մէջ լինէիր, այն-
պէս նայէ որ կեանքդ անցունես : Կերակուրի պը-
նակ քեզի հրամցուցին՝ ա՛ռ մէջէն չափաւորապէս.
հեռացուցի՛ն քեզմէ՝ մի՛ կեցուներ զայն : Թէոր քու
կողմդ չգայ պնակը՝ փափաքդ հեռուէն մի՛ ցուցա-
ներ, այլ համբերութեամբ սպասէ որ քեզի մօտե-
ցունեն : Նոյն չափաւորութիւնը պահէ կնոջդ, որ-
դւոցդ, փառաց ու պատուոյ եւ հարստութեանց
հետ :

Պէտք է գովեստի արժանի լինել ու գովեստէ
փախչիլ :

Զմարդ երջանիկ ընելու ճշմարիտ գիտութիւնն
այն է որ մէկն իւր պարտքը գիտնայ եւ անոր մէջ
իւր զուարճութիւնը փնտռէ :

Բարի դարձ.

Աշխարհասէր անձին մէկը հեռու նետելով իրմէն
հեշտութեան բաժակն որոյ դիրան են զեղջք եւ

ապաշաւք, եւ մէկդի ձգելով իւր մոլորութիւններն ու մոլորութիւնները՝ հեռացեր էր այն ամէն տեղերէն որ անոնց հանդիսարան էին եղեր :

Համոզուելով որ աւելի կարող է խոհեմութեամբ փորձութիւններէ փախչիլ քան թէ ուժովն անոնց յաղթել, գեղ տեղ մի քաշուած կբնակէր. զուարճութիւններն էին պարզ քայց իրական. միտքը դրբեր էր որ բարեսէր մարդուն մեծ երջանկութիւն է զուրիշները թշուառութենէ ազատել, խեղճերուն օգնել : Աղքատին տնակն այցելութիւն ըրած ժամանակը հետը հոն յոյսը կծագէր, ու թափուած արցունքներոն զորս սրբել կսիրէր՝ խնդութեան ժպիտն իրմով կփոխանակէր. մեծամեծ քաղաքաց մէջ եղած բազմածախ ու ընդունայն զուարճութիւնները՝ քիչ ծախքով գեղ տեղուանք եղածներուն հետ կբաղդատէր, եւ նորընտիր կեանքին վերայ մեծապէս կուրախանար :

Սակայն շատ անգամ դառն մտածմունք մը սրբտին բերկրութիւնը կայլայլէր : « Ափսո՛ս, կգոչէր. աննշան դարձս չեն գիտեր նոքա որ վկայք անառակութեանցս էին. Աստուած միայն կտեսնէ իմ բարի դարձս, եւ ես չեմ կրնար շինութիւն տալ նոցա զորս անցեալ կենօքս գայթակղեցուցեր էի : »

Այսպիսի տրտմահաղորդ խորհրդածութեամբ առաւօտ մի կանուխ ծառախիտ անտառ մի կհասնի, եւ հոն յանկարծ թուփերու մէջ ծածկուած փառաւոր շուշանն աչքին կհանդիպի :

Տերեւներու վրայէն իջած արեւուն ճառագայթը վայելչագեղ ծաղկին ոսկեգոյն փոշին ու ձիւնաթոյր թերթերը գեղանշոյլ կփայլեցընէր. արշալուսոյն հեզաշունչ հովերն անոր լայն տերեւները կը

շարժէին, որոց վերայ գիշերուան ցօղոյն թրթռուն կաթիլները երփներանգ շողշողէին. օդն եւս քաղցրաբոյր հոտերով լեցուած էր :

« Ո՛վ բնուեցին, կանչեց մեր մենաւորը, մտածմունքներուս ամբարտաւան դառնութեանը ծաղիկ մի պատասխան կուտայ: Այս շուշանը սաղարթախիտ ճիւղերու մէջ բուսցընելով՝ զինքը փոթորիկներէ, տաքութենէ ու փոշիէ պահպաներ ես, ինչպէս որ ես եւս աշխարհիս աղտերէն եւ անոր կիզիչ աղմուկներէն ու յուզմունքներէն ազատ եմ հոս :

« Անծանօթ եւ մենաւոր տունկ, քեզի այցելութիւն ընող արեւը մի՛թէ իմ վրաս եղող Աստուծոյ աչքը չէ՞: Քեզմէ ելող անուշահոտութիւնը մի՛թէ ըրած աղօթքներս չէ՞ն որ երկինք կվերանան: Առաւօտեան հովն որ զքեզ կորորայ ու կզովացընէ, մի՛թէ այն աստուածային գեթութիւնը չէ՞ որ զիս շարժեց ու զղջումի բերաւ: Մահկանացուաց զարմացմանն ի՞նչ պէտք ունիս, որոց մերձաւորութեամբը ձիւնափայլմաքրութիւնդ կարատաւորի:»

Այս որ ըսաւ մենաւորը, սիրտն ելաւ, մէկէն հոն շուշանին առջեւ ծունկի վերայ եկաւ, սրտառուջ երախտագիտութեան շնորհակալութիւններն առ Բարձեալն վերառաքեց, եւ իւր բոլոր օրուան մտածմունքներուն մէջ այն բարեպաշտական ոգին կը տիրէր, ինչպէս որ քաղցրաձայն նուագաց յիշատակն մարդուս ականջին մէջ երկար ժամանակ կմնայ, ինչպէս որ ծովուն հողմաշարժ սաստկակոծ ալիքներն հովոյն դադարելէն ետեւ եւս երկար ժամանակ գեղածուփ կուգան ամփունքը կզարնեն կերթան :

Մայրենի սէր.

Սպանիոյ Մատրիտ մայրաքաղաքին մէջ աղքատ գործաւոր մի կար, որ իւր աւուրչէքովը հազիւ տանը հարկաւորն կհոգար: Ժամանակ եկաւ որ այլ չկրցաւ գործ գտնել. այն անգործութեան վրայ հիւանդութիւնն եւս գալով՝ խեղճ տնակը մեծ թշուառութեան մէջ ձգեց. այր եւ կին իրենց դեռահասակ տղոցմովն առանց կրակի ու հացի մնացին: Երբոր այլ տանը մէջ ուտելու բան չմնաց, սոսկալի անօթութիւննին խաբելու համար որ աղիքնին կեղեքէր, սկսան մսրացորենի ցօղունները ծծել: Այն ողորմելի կերակրով տասուերկու օր ապրելէն յետոյ, տարաբախտ մանկիկները կիսամեռ գետին ընկած ողորմագին ձայնիւ քիչ մը հա՛ց, պատառ մը հա՛ց կաղաղակէին: Հայրերնին հիւանդ եւ յուսահատած՝ աղեխարշ սրտով վրանին կնայէր, եւ այն անմեղներուն մահը չտեսած՝ վայրկեան մի յառաջ մեռնելու կփափաքէր: Իսկ մայրերնին անօթութեամբ ու ցաւօք հալած մաշած՝ վրանին ընկեր ու գետի պէս թափած արցունքովն կարծէր թէ անոնց քաղցը կրնայ թեթեւցընել: Եւ ահա յանկարծ ուրախութեան ձայն մի կձգէ, եւ գունամափ դէմքին վերայ քաղցը ժպիտ մը կփայլի:

« Սպասեցէք ինձ փոքր մի, սպասեցէք, կկանչէ, երթամ ձեզ կերակուր բերեմ: »

Այս կըսէ ու խենթի պէս տնէն դուրս կվազէ: Հազիւ վրան տասը վայրկեան անցաւ, դարձաւ եկաւ գիրկը լեցուն ուտելիք, որ սովալլուկ զաւկընները մէկէն կերան լափեցին: Խեղճ մայրը գեղեցիկ

հասակաչափ ունիագի (ապանօզ) պէս սեւ մազերը զաւակացը հաց ճարելու համար ոչինչ գնով կըտրեր վաճառեր էր:

Սյսպիսի անձնանուէր զոհը մօր մի ծնելասէր սիրտն միայն կրնայ զգալ եւ ազդել:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԼԵ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ.

Շէնքի մի զարդերը կամ կատարումը կրնայ ուշացուիլ, բայց տղայոց դաստիարակութիւնը, ուսմունքն ու կրթութիւնը չկրնար ուշացուիլ: Յր մի իրենց որդւոցն ի՞նչ պատասխան պիտի տան այն ծնողք որ նոցա անգին ու անգիւտ ժամանակն անհոգութեամբ կթողուն որ պարապ կամ զուարճութեամբ եւ զքօսանքով անցնի:

Զաւակի մը թողլու քան զամենայն մեծ ու անկորուստ ժառանգութիւն՝ բարի անուն եւ բարի դաստիարակութիւնն է:

Դաստիարակութիւն չունեցող մարդն մարմին է անհոգի:

Ինչպէս որ երկրիս անհրաժեշտ հարկաւոր է մըշակութիւնը, նոյնպէս նաեւ տղայոց դաստիարակութիւնը:

Նորածին մանկանց խանձարուրքէն պէտք է ըսկըսի դաստիարակութեան խնամքը. ապա ուրեմն կինն է, մայրն է մարդուս առաջին դաստիարակը:

Զրուցեցինք թէ դաստիարակութեան վախճանն

է մարդուս միտքը բանալ, սիրտը կրթել, ախտերէ ու վատ սովորութիւններէ հեռացունել, իմաստութիւնն ու առաքինութիւնը անոր սիրելի ընել, աստուածապաշտ անձինք հանել, եւ օգտակար քաղաքացիք պատրաստել՝ որ իրենց կեանքը դնեն հայրենեաց ու ազգին համար :

Այսպիսի նուիրական վախճանի մը իրենց որդիքը հասցունելու համար ի՛նչ ջանք, ի՛նչ փոյթ ու ի՛նչ զոհեր սիրով եւ յօժարութեամբ պէտք չէ՞ յանձն առնուն խելացի ծնողք: Մակեդոնիոյ Փիլիպպոս Թագաւորն Աղեքսանդր որդւոյն ծնանիլը լսելուն պէս, իւր առաջին հոգն եղաւ անոր արժանի դաստիարակ փնտռել գտնել. ընտրեց Յունաստանի ամենէն իմաստուն Արիստոտէլ փիլիսոփայն, եւ նամակ մի գրեց նմա, որ թէ իմաստասիրին եւ թէ Թագաւոր հօր մեծ պատիւ կընէ. «Կիմացունեմ ձեզ որ երկինք որդի պարգեւեցին ինձ: Ոչ այնչափ շնորհակալ եմ աստուածոց որ ինձ այսպիսի պարգեւ մը շնորհեցին, որչափ անոր համար որ Արիստոտէլին օրը շնորհեցին ինձ զայն: Անշուշտ եմ որ զինքը պիտի պատրաստէք արժանի յաջորդ մեզ, եւ արժանաւոր իշխան Մակեդոնացւոց:»

Գժբախտաբար մեր ազգին ծնողաց մէջ Փիլիպպոսի նմանողները դեռ յոյժ սակաւագիւտ են, մատով կցուցուին. իսկ Արիստիպպոս փիլիսոփային հարցունողներուն նմանողները հազարաւոր բերաւոր: Վասն զի օր մի դաստիարակութեան եւ ուսման անհրաժեշտ կարեւորութիւնը չճանչցող մարդիկ կհարցունեն Արիստիպպոսին թէ որդիդ իւր դաստիարակութենէն ի՞նչ օգուտ պիտի քաղէ: — Գոնէ, կպատասխանէ իմաստունը, Թատ-

րոն նստած ժամանակ չեն կարող իրեն համար ասել թէ քար քարի վերայ է: » Որով ուզեց ասել թէ ձեր անկիրթ անուսուժն որդիքը քարի փայտի պէս են, ուր իմս մարդ է ուսեալ եւ բարեկիրթ. ամէն տեսածը կհասկանայ եւ վրան խորհրդածութիւն կընէ:

Եսիողոս անունով մեծատունն Արիստիպպոսին կուզէ յանձնել իւր որդւոյն դաստիարակութիւնը. եւ երբոր նա հարիւր դրամակշիռ վարձք կխնդրէ, կսոսկայ ագաի մեծատունը, եւ պոռալով կասէ «Ես անկէց շատ աւելի սակաւ դրամով գիտուն գերի մի կընամ գնել որդւոյս վարժապետելու: — Յոյժ քարի, գնէ այդ գերին, կպատասխանէ իմաստասէրը, վասն զի սակաւ ժամանակէն որդիդ եւս իրեն կը նմանցունէ սրտովն ու զգացմամբքը, եւ դուն փոխանակ մէկ գերի ունենալու՝ երկու կունենաս. նայէ ի՛նչ մեծ շահ է քեզ: »

Մի՛թէ Եսիողոսի համամիտ եւ համակարծիք չե՞ն նաեւ մեր ազգին այն ծնողքն որ կարգաւորեալ վարժապետի կամ դաստիարակի մը արժանաւոր վարձք չուզելով տալ, տգէտ բայց աժան վարժապետաց ձեռքը կյանձնեն իրենց զաւակաց դաստիարակութեան եւ կրթութեան ամենածանր, ամենադժուարին եւ ամենափափուկ հոգը: Ե՞րբ պիտի սովորին նաեւ մեր ազգայինք ըստ չքնաղ օրինակի եւրոպացւոց՝ իրենց զաւակաց դաստիարակութիւնը սրբազան պարտք համարել եւ անոր համար սիրով վատնել ամէն պէտք եղած դրամը, մինչեւ իրենց բերնէն ու հագուստէն կտրելով զայն. ուր արդ շատերն եւ ոչ իրենց աւելորդ զուարճութիւններէն կյօժարին կտրել. վասն զի վաղանցուկ ա-

նօրեայ զուարճութեանց ու գբօսանաց համար ստակ կգտնեն, եւ իրենց զաւակաց դաստիարակութիւն եւ ուսումն տալու համար, հարկաւոր գրքեր գնելու համար ստակ չեն գտներ խեղճ ծրնողք:

Լաւ իմաստօած ծառք եւ մօր մը զարդարանքը.

Գարնան գեղեցիկ օր մը Պ. Գէորգ իւր դեռահասակ Յարութիւն որդեկին հետ պարտէզ իջաւ ժուռ գալու: Յարութիւն ուշադրութեամբ ծառերն ու տնկերը կդիտէր, եւ հարցուց հօրը.

« Հայրիկ, ինչո՞ւ համար այս ծառն այսպէս գեղեցիկ ու շիտակ է, եւ ինչո՞ւ միւս ծառը ծուռ է եւ տգեղ:

— Վասն զի, պատասխանեց խելացի հայրը, սկզբան փոքր եղած ժամանակ զսա դարմաներ են, շտկեր են, կտրտեր են, ձեւի բերեր են. իսկ ընդ հակառակն զայն անդարման թողեր են որ ինքիւր գլխուն մեծնայ:

— Եւ ինչո՞ւ համար այս ծառիկներն գեղեցիկ բացուած են, մինչդեռ միւսները թէպէտեւ նոյն տեսակէ են՝ բայց տակաւին բացուած չեն: — Վասրն զի անոնցմէ աւելի մշակուած ու դարմանուած են:

— Ուրեմն պարտեզի մի ծառերուն ու տնկերուն աղեկութիւնն ու գէշութիւնը իրենց մշակութենէ կախուած է, զրուցեց Յարութիւն:

— Այո, որդեակ իմ, պատասխանեց Պ. Գէորգ, եւ այս մեզի մեծ խրատ է:

« Դուն եւս այն գեղեցիկ մատաղատունկ ծառոյն

կնամանիս որդեակ իմ: Թէոր չլծողում քեզ որ ուզածը ընես, եւ քեզ ասեմ ընելիքդ ու չընելիքդ, Թէ որ զքեզ օգտակար բաներ սովրելու ստիպեմ, եւ Թէ որ հնազանդիս ու ամէն գրուցածս սիրով կատարես՝ գիտնալով որ քու օգտիդ ու աղեկութեանդ համար է ամէն պատուիրածս, յայնժամ դուն եւս մարդկան մէջ կրնաս բարի ու պտղատու ծառ մի լինել՝ ամենուն սիրելի, եւ ամէնքը վրադ զարմացունել: »

Ուրեմն, մատաղատունկ ծառերու կնամանին տըղայք, ծնողք եւ դաստիարակք ի՛նչ ձեւ, ի՛նչ կըրթուծիւն որ տան՝ նոյն ձեւն ու նոյն կըրթուծիւնը վրանին կմնայ մինչեւ ցմահ: Ապա ուրեմն թող աստի գուշակեն ծնողք եւ դաստիարակք Թէ ի՛նչ մեծ պատասխանատուութիւն ունին Աստուծոյ, ազգին եւ ընդհանուր մարդկութեան առջեւ Թէոր լաւ չդաստիարակեն չկըրթեն իրենց որդիքն ու սաները:

Հռովմայեցւոց մեծանուն Սկիպիոն զօրավարին իմաստուն աղջիկը Կուռնելիա, որ Քրիստոսէ 200 տարի առաջ է, եւ մայր եղաւ հռչակաւոր Գրակքոսեանց, մեծ խնամքով կդաստիարակէր իւր որդիքը, որք Թէպէտեւ բնութեան ձիրքերով զարդարուած էին, բայց եւ այնպէս կխոստովանէին որ աւելի իրենց մօրը բարեխնամ դաստիարակութեան պարտական են իրենց համբաւը քան Թէ բնութեան: Իրենց համար Կուռնելիային տիկնոջ մը տուած պատասխանէն յայտնի կերեւի Թէ ի՛նչպէս լաւ ճանաչեր էր ու կկատարէր նա մայրական պարտքը: Օր մի այս հարուստ տիկինն Կուռնելիային տունը կուգայ, պարծենկոտութեամբ մը բոլոր իւր վե-

րայի գոհարեղէն ականակուռ զարդերը կցուցանէ, եւ կաղաչէ որ ինքն եւս իրենները բերէ ցուցանէ : Իմաստուն Կուռնելիա ճարտարութեամբ մը խօսքն ուրիշ բանի վերայ կդարձունէ մինչեւ որ իւր որդիքն որ հասարակաց դպրոց կերթային՝ դառնան գան : Եւ երբոր կուգան մօրերնուն սենեակը կը մտնեն, Կուռնելիա իրաւացի հպարտութեամբ մը « Ահա գողարեղէնքս, ահա զարդարանքս » կասէ տիկնոջ՝ իւր բարեկիրթ զաւակունքը ցուցանելով : — Ե՞րբ մեր ազգին մայրերն եւս իմաստուն Կուռնելեայ նախանձելի հպարտութիւնը պիտի ունենան՝ անդստին իմանկութենէ իրենց զաւակաց բարի դաստիարակութեանն ու կրթութեանը ամէն հոգ եւ խնամք տանելով :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԼԶ.

Շարայարուրիւն.

Երկու տեսակ դաստիարակութիւն.

Երկու քոյրեր մէյմէկ զաւակ ունէին, եւ զանոնք իրարմէ բոլորովին տարբեր կերպով կդաստիարակէին : Մէկը բնութեամբ թոյլ ու տկարամիտ՝ իւր որդին ընծաներով ու գգուանօք կլեցունէր : Գրիգորիկին շաքարեղէն, խաղալիք, գեղեցիկ ու նորածեւ հագուստներ, բան չէր պակսեր : Անդին իւր մօրաքեռորդին Միհրան դրսէն այնպէս կերեւար թէ խստութեամբ կմեծնար, սակայն մայրենի լու-

սաւորեալ գորով մը վրան մշտարթուն կիսկէր. թէպէտեւ Գրիգորիկին մայրը զայն չէր տեսներ եւ իւր քոյրը կմեղադրէր, անգուժ մայր կանուանէր:

Գրիգորիկ տեսակ տեսակ շաքարեղինաց պաշար մը ունէր, եւ որկրամուլուժեամբ զանոնք միս մինակ կնստէր կուտէր, եւ ցորեկն եւս բաւական չիամարելով՝ մինչեւ գիշերները կելլէր կուտէր: Գրիգորիկ ունեցած խաղալիքովը խանութ մի կրնար բանալ: Այլ խաղալէն համ չառնելով՝ շատ անգամ զանոնք կկոտորտէր կջարդէր կզուարճանար:

Գրիգորիկ ամէն բանի մէջ կցուցանէր աւրուած սրես առած տղայ լինելը. խելքին փչածը պէտք էր ունենար. սաստիկ ցրտին կուզէր մետաքսէ գուլպայ հագնիլ. սեղանի վերայ ամենէն առաջ կերակուր իրեն պիտի տրուէր, ապա թէ ոչ չէր ուտեր: Նոր կօշիկ եւ նոր հագուստ միայն կհագնէր: Առաւօտ երիկուն, գիշեր ցորեկ՝ անխտիր ամէն ժամանակ միտքն գալուն պէս կուզէր կերակուր ուտել: Վա՛յ էր թէնոր ուզածը մէկէն չկատարուէր, եւ պոռալուն կանչելուն ականջ չէր դիմանար:

Վերջն ի՞նչ եղաւ. Գրիգորիկ սաստիկ հարբուխ ունեցաւ, այնպէս որ քիթը կարմրեցաւ, աչուրները բժոտեցան եւ ականջներն ուռեցան: Անդադար շաքար ուտելէն Գրիգորիկին ստամոքսն աւերեցաւ եւ ականները փտեցան ու մեխակի (գարէնֆիլ) պէս սեւցան: Գրիգորիկ ամէն բանէ ձանձրացաւ, լալկան, դեգ (թիթիգ), ճռզած, հիւանդոտ եւ ապուշ եղաւ: Իսկ Միհրան չարքաշ մեծցած, ամէն ուզածը չառնելու վարժած, մարմնոյն ոյժ տալու համար միայն խաղալով, պարզ եւ առողջարար

կերակուրներ որոշեալ ժամանակին ուտելով, քունն առնելուն պէս անկողնէն վար ցատքելով. խելքին եկածն ունենալու եւ ընելու չվարժած, անկեղծ, փուժաջան եւ բարեսիրտ՝ զօրաւոր մարմնոյն պէս զօրաւոր խելք եւ ուղիղ դատումն ունեցաւ: Մօրը ուրախութիւնն ու երջանկութիւնը եղաւ, ընկերացը բարի օրինակ, եւ յետոյ բարեգործ եւ օգտակար քաղաքացի մի դարձաւ:

Մեղկ դաստիարակութեան պտուղը վիժած Գրիգորիկնէ՛ր են. չարքաշ ու խիստ դաստիարակութիւնը միայն Միհրանին պէս մարդիկ կպարգեւէ հայրենեաց: Թող հասկանան մայրեր, որ զաւակաց ամէն կամքը կատարելը՝ զանոնք սիրել չէ, նոցա աղեկութիւն ընել չէ, այլ զանոնք տգիտաբար սիրել ու խեղճերուն մեծ չարիք ընել է: Հօր մը ու մօր ճշմարիտ սէրն՝ զաւակաց ընտիր ու խնամոտ դաստիարակութեանը վերայ պիտի երեւի:

Դաստիարակութիւն Սպարտացոց.

Սպարտացիք պզտիկուց կվարժեցունէին իրենց տղայքը մուժ տեղ քալելու, որպէս զի բանէ մի չըվախնան: Կվարժեցունէին զիրենք նաեւ ամէն գըտածնին անխտիր ուտելու եւ հագնելու, որպէս զի փափկակեր ու փափկասուն չլինին. նոյնպէս կվարժեցունէին չբարկանալու, կիրք չելլելու, չըկանչուրուտելու, չլալու, բոբիկ քալելու, կարծր անկողնոյ կամ պարզ գետնի վերայ պառկելու, եւ մի եւ նոյն հագուստը ամառ ձմեռ հագնելու:

Երբոր տղայք եօթը տարեկան լինէին, ճարտար ու խիստ վարժապետաց ձեռքը զիրենք կյանձնէին:

Գրեթէ բոլոր դաստիարակութիւննին՝ հնազանդութեան վերայ կայացած էր. որովհետեւ իրենց օրէնսդիրն Լիկուրգոս որ Քրիստոսէ 885 տարի առաջ իրենց օրէնք տուաւ, միտքը դրած էր որ օրինաց եւ դատաւորաց հնազանդ քաղաքակիցներ ունենալու համար հարկ անհրաժեշտ էր պլտիկուց տղայոց սովրեցունել կատարեալ կերպով հնազանդիլ իրենց վարժապետացը :

Երբոր տղայք կմեծնային եւ տարեց մարդոց ճաշակից լինելու համար նոցասեղանը կրնդունուէին, ճաշարանին դուռն իրենց կցուցանէին ասելով, « Ամենեւին խօսք մը այն դռնէն պիտի չելլէ : » Այս հանապազօրեայ խրատով երիտասարդք՝ իրենց չարքաշութեանը հետ լինէին նաեւ խորհրդապահ :

Լիկուրգոս ուզելով սգալի օրինակաւ մի եւս հասկացունել իւր քաղաքակցացն թէ ո՛րչափ հարկաւոր եւ օգտակար է տղայոց չարքաշ ու խնամոտ դաստիարակութիւնը, երկու շնիկ առաւ մեծցուց բոլորովին իրարու տարբեր կերպով. երկուքն եւս նոյն մօրէ էին : Մէկն ամենայն խստութեամբ կըրթեց, ամէն ուզածին վարժեցուց ու հնազանդեցուց. միւսին եւս ամէն ազատութիւն եւ ամէն ուզած ու սիրած կերակուրն տուաւ առատապէս : Օր մի ժողովուրդն հրապարակը ժողովեց. բերել տուաւ իւր երկու շները. միանգամայն գետինը պնակով լեցուն ասուր դրաւ, եւ նապաստակ մի արձակեց : Լաւ ու չարքաշ կրթուած շունը մէկէն որսին ետեւէն վազեց. իսկ ընկերն ասուրին : Յայնժամ դարձաւ ասաց Լիկուրգոս առ ժողովուրդն. « Կտեսնէ՞ք դաստիարակութեան արդիւնքը. այս կենդանիք համահայր են եւ համամայր. եւ սակայն մէկն

որկրամով եւ միւսն որսորդ, եւ իրենց այս ներհակ յատկութեանց պատճառն է առած ներհակ դաստիարակութիւննին ու կրթութիւննին : Ձեր որդիքն եւս վատ կամ քաջասիրտ պիտի լինին թէ որ ձեզի դրած օրէնքս չպահէք կամ պահէք :» Պահեց Սպարտա այն օրէնքն, եւ Յունաստանի առաջին հասարակապետութիւնն եղաւ :

Զառակաց դաստիարակութեան համար եղած ծախքը.

Սրդար ու աշխատասէր հիւսն (տիւրկէր) մի որ շատ ստակ կվաստկէր, պարզ կերակրով գոհ կլինէր : Ինքն եւ իրենները պարկեշտ հագուստ մի ունէին, եւ ամէն տեսակ աւելորդ ծախքէ կփախէր :

Յր մի իւր դրացին իրեն հարցուց .

— Վարպետ, ըսէ ի՞նչ կընես այնչափ դիզած ստակդ, որովհետեւ ո՛չ կուտես ոչ կհագնիս :

— Ի՛նչ կընեմ, պատասխանեց հիւսն : Մէկ մասը կգործածեմ պարտքերս տալու, եւ միւսը շահու կդնեմ :

— Ի՛նչ կըսես, կատակը թո՛ղ, կրկնեց դրացին զարմանքով : Ոչ պարտք ունիս դուն, եւ ոչ մէկուն քով շահու ստակ դրած ես :

— Սակայն բանն զրուցածիս պէս է, վրայ բերաւ բարի հիւսն, միայն թող որ քեզ բացատրեմ : Գիտես, հայրս ու մայրս իմ ծնած օրէս իվեր ո՛րչափ ստակ ինձ համար ծախք ըրած են . սրբազան պարտք կը համարիմ ինձ զայն եւ պարտական եմ հատուցանելու : Իսկ այն ստակն որ կվատնեմ տղաքս լաւ կըրթելու ու դաստիարակելու եւ անոնց արուեստ մի

սովրեցնելու համար, շահու դրած դրամագլուխ կհամարիմ, զոր որդիքս ծերուծեանս ժամանակ ինձ պիտի հատուցանեն շահով հանդերձ: Ինչպէս որ ծնողքս զիս լաւ մեծացունելու համար բանի չխնայեցին, նոյնպէս նաեւ ես որդւոցս լաւ դաստիարակութիւն տալու համար բանի չեմ խնայեր. եւ թէոր ես որդիական պարտք կհամարիմ ծնողացս հատուցանել անոնցմէ ընդունած բարեացս փոխարէնը, կյուսամ որ նաեւ որդիքս իրենց կողմանէ կջանան ամենայն ճշդութեամբ ինձ հատուցանելու իրենց պարտքն՝ իբրեւ թէ հրապարակական դաշամբ ստիպուած լինէին:

Երանելի՛ լինէր ազգերնիս եւ շատ աւելի յառաջադէմ եթէ այս աղքատիկ հիւսան բարի օրինակին չասեմ իւր հայազգի վիճակակիցքը, այլ գոնէ մեծատունք ազգիս նմանէին: Տարակոյս չկայ որ իրենց ծախած դրամագլուխն ոչ միայն օր մը որդիք իրենց սիրովն ու երախտագիտութեամբը կհատուցանեն, այլ եւ բոլոր ազգակիցք:

ԸՆԹԵՐՅՈՒՄԸ ԼԷ.

ՆԱԽԱՆՁ.

Չար նախանձը վատութեան նշան է:

Նախանձողն բնաւ հանգիստ չունի:

Նախանձէ ազատ լինելոյ համար ոչ պէտք է ասքի երեւցող բան ընել եւ ոչ հարստութեամբ կամ իշ-

խանութեամբ շատ պերճանալ, այլ իներքուստ
երջանիկ լինել գիտնալ:

Յորեանք եւ չոր Կնձնի.

Արգասաբեր արտի մը քով
Ուր կաշխատէր մըշակ մի մեծ խնամքով,
Կընձնիի ծառ մըն ալ կար,
Որ տարիով չոր հոն թաղուած կըմընար,
Ուրիշ բանի համար չէ
Բայց կարծես թէ
Յորեններուն ոսկեջով
Աղւորութիւնն իմացունել ուզելով.
Այս նրկարչաց հընուց իվեր հընարքն են,
Որ լոյսը լաւ դուրս ցատքեցնել որ ուզեն'
Հետը ըստուեր կըխառնեն,
Ու փափկափայլ օրիորդին քով սիրուն'
Լըխկած թորմած դէմք կըդընեն պառաւուն:
Բայց մեր մըշակն անանկ բաներ
Երազն անգամ չէր մտածեր.
Ինչո՞ւ համար, ըսես, թողեր էր կընձնին,
Որովհետեւ պէտք մը չունէր չոր փայտին.
Իրեն աչքին
Յորենէն դուրս հոն բան մ'ալ չէր երեւար.
Բայց եկ նայէ որ ասանկ չէր մըտմըտար
Այն չոր կընձնին.
Այսչափ տարուան կըսէր արդիւնք ես ունիմ,
Ես եմ իշխան այս արտին,
Յորենն ի՞նչ է
Որուն անխելք մըշակն այսչափ հոգ կընէ.
Վաղն որ կըտըէ՛ խոտէն դուրս ի՞նչ կըմընայ.

Ա՛յն ատեն նա իմ յարգս ալ լա՛ւ կիմանայ :
 Այսպէս կըսէր մեր կընձնին
 Ամէն անգամ որ կընայէր ցորենին ,
 Կամ մըշակին հոգը տեսնար
 Եւ կամ անոնց գլուխ դալար
 Փափուկ տընկուած ու հարըստցած քիստերով ,
 Որ իրեն սեւ փայտին քով
 Կարծես կենաց պատկերն էին
 Մահուանը քով՝ որ ինքն էր չոր չար կընձնին :
 Չարերն երբեմն յաջողուեթիւն հոս ունին
 Ու փափագնուն կըհասնին .
 Ասանկ եղաւ կընձնիին :
 Յոր մը տեսաւ շատ մըշակներ
 Մէկտեղ եկեր՝
 Կըճօճէին արտին մէջ սուր գերանդին
 Ուր ցորենները մահազգեաց կիյնային .
 Ա՛լ կընձնիին ուրախութեան չափ չըկար .
 Ամէն մէկ հասկն որ իյնար
 Վա՛խ, կըկանչէր,
 Խե՛ղճ ցորեններ .
 Ու մտքէն ալ կցաւէր
 Զի մանգաղին կոթին ինք բախտը չունէր ,
 Որ այն աղուոր բայց թըշնամի ցորենից
 Ինք ալ մահուանն ոխով ըլլար գործակից :
 Հընձըւեցան, ծեծուեցան ալ,
 Հասկքն այն ատոր ոսկեփայլ ,
 ձըզմըւեցան ալիւր եղան
 Ու ամբարները լեցուեցան : —
 Ուրախութիւն կընձնիին շատ չըքըշեց .
 Իւր պատիժն ալ շատ չըսպասեց :
 Տեսաւ դարձեալ եկեր մըշակն յանդաստան

Յորենին հունտ բերեր կրնէր վարուցան:

Նորաբողբոջ նորէն անոնք ծրլեցին.

Իսկ մեր կրնանին՝

Գարձեալ մընաց սեւերես.

Մինչեւ օր մ'ալ տապարին տակն ուժգնապէս

Ընկաւ գետին փրուեցաւ,

Ու փրուան մէջ նետուեցաւ,

Որ ցորենէ

Պատրաստըւած խըմորն յազնիւ հաց եփէ.

Հացն իշխանաց սեղանն ելաւ

Կրնանին մոխիր դարձաւ ու դուրս թափուեցաւ:

Նախանձէն վատ բան չկայ.

Ով ընկերոջ ձախորդութեանը վերայ

Կուրախանայ,

Թող կրնանին օրինակէն ուսանի՝

Որ ինքն է չոր կամ անպիտան աւելի:

Թըշնամիդ ա'յսօր կ'իյնայ

Բայց վաղն անով գուցէ եւ եւս բարձր ելայ.

Իսկ դուն արդեօք որ իյնաս՝

Դու մոխիրէն աւելի բան մը կըլլա՞ս:



ԸՆԹԵՐՅՈՒՍԹ ԼԸ.

ԱՆՅԻՇԱԶԱՐՈՒԹԻՒՆ.

Թէ որ թշնամիդ քաղցած է՝ կերակուր տուր որ ուտէ. թէ որ ծարաւի է՝ ջուր տուր որ խմէ : (ԱԻԵՏԱՌԱՆ.)

Անյիշաչարութիւնն այն առաքինութիւնն է, որով կմոռանայ մարդ ուրիշէն ընդունած չարիքը կամ վնասն, եւ ոչ միայն անոր վրէժխնդիր ջլինիր, այլ եւ կջանայ բարիք ընել :

Երբոր Լիկուրգոս ուզեց Լակեդեմոնի մէջ բարեկարգութիւն մտցունել, յառաջադիմութեան թըշնամի բազմաթիւ քաղաքացիք երդում ըրին որ զինքը մահուչափ ատեն. եւ մէջերնէն Աղեքսանդր երիտասարդը գաւազանով մի կզարնէ Լիկուրգոսին մէկ աչքը կհանէ : Ժողովուրդն այս անարժան գործողութեան վերայ կատղած իսկոյն յանցաւորը կբռնէ օրէնսդրին ձեռքը կուտայ որ ուզածին պէս պատժէ : Անյիշաչար Լիկուրգոս կառնուզինքը տունը կտանի, եւ հետն այնչափ սիրով ու քաղցրութեամբ կվարուի, որ երիտասարդը նորա առաքինութեանը վերայ զմայլած՝ միտքը կփոխէ եւ նախանձայոյզ կուսակցաց մին լինի :

— Կերակրի վերայ Պիսիստրատայ սեղանակցաց մէկն փոքր մի գինին շատկեկ փախցունելով կսկսի զինքը նախատել : Բարեկամք նորա խրատ կուտան որ խստիւ այն անմիտը պատժէ. բայց Պիսիստրատ կպատասխանէ. « Թէ որ փողոցէ մի անցած ժամանակս կուրին մէկը գար ինձ զարնուէր՝ խորհուրդ կուտայի՞ք որ զինքը պատժեմ : »

— Անգամ մի եւս մէկ քանի երիտասարդաց գլուխը գինիէ տաքնալով՝ Պիսիստրատայ կնոջ կհանդիպին ու նախատական խօսքեր կասեն : Երկրորդ օրն երբոր կսթափին եւ ըրած մեծ յանցանքնին կիմանան, կուգան իշխանին ոտքը կիյնան ու արտասուօք թողուծին կխնդրեն : Անյիշաչարութեամբ զիրենք վեր կվերցունէ Պիսիստրատ կգրուցէ. « Գնացէք գինիէ զգուշացէք : »

— Եպիրոսի Թագաւորը Պիւռոս կիմանայ որ երկու երիտասարդք իրեն դէմ անվայել խօսքեր զրուցեր են. իսկոյն զիրենք առջեւը բերել կուտայ, եւ ըսպառնալեօք կհարցանէ թէ իրաւցունէ իրենց Թագաւորին դէմ այնպիսի լեզու բանեցուցե՞ր են : « Այո, տէր արքայ, կպատասխանէ երկուքին մէկը. եւ թէոր գինին չալկսէր՝ աւելի եւս կասէինք : » Թագաւորը կծիծաղի այս անկեղծ համարձակախօսութեան վերայ, եւ նոցա կներէ :

— Հռովմայեցւոց Յգոստոս կայսրը սիրով կերթար ամէն զինքը հրաւիրողին տունը կերակուր կուտէր : Օր մը մէկը զինքը կհրաւիրէ ու ամենահասարակ սեղան մի կուտայ : Հարկ եղաւ որ աշխարհիս տիրող կայսրն այն հասարակ կերակրով փորը կշտացունէ. միայն երթալու ժամանակ կգրուցէ իւր ճաշատուին. « Այսչափ բարեկամ լինելնիս չէի գիտեր : »

Անգամ մի մարդուն մէկն իրեն աղերսագիր կը մատուցանէր դողդողալով. երբեմն ձեռքը կերկնցունէր եւ երբեմն ետ կքաշէր : « Բարեկամ, ասաց Յգոստոս, կարծե՛ս թէ փղի մի ստակ կուտաս : »

— Արդիւնաւոր ծեր զինուոր մի դատաստանի

կանչուելով կվախնայ որ չդատապարտուի եւ ճամբան կայսեր հանդիպելով՝ դատաստանը պաշտպանութեանը կյանձնէ: Կայսրը կընդունի աղաչանքն ու քովի իշխանաց մէկուն կյանձնէ եւ կպատուիրէ որ ամէն ջանք ընէ ազատելուն: Զայն որ կտեսնէ զինուորը, կսկսի հրապարակին մէջ պոռալ. « Երբոր Ակտիոնի պատերազմին մէջ կեանքդ ի վտանգի էր՝ ուրիշի չյանձնեցի օգնութեանդ հասնելու հոգը: Անձամբ պատերազմեցայ, վտանգաւ կենացս զքեզ պաշտպանեցի, եւ ահա նշաններս » կասէ, ու կուրծքը կբանայ: Արդարեւ բազմաթիւ փառաւոր սպիներով ծածկուած էր: Կամաչէ Յգոստոս, եւ զինուորին դատաստանը անձամբ կտեսնէ:

— Հռովմայեցւոց կայսրը ներոն պզտիկութեան ժամանակ քանի որ դեռ առաքինութեան ճամբէն չէր խոտորած, օր մի յանցաւորի միոյ մահապարտութեան վճիռն ստորագրելու ստիպուելով կանչեց. « Երանի՛ թէ գրել չգիտնայի: »

— Վեսպասիանոս կայսեր խորհուրդ կուտային որ Մետիոս անունով մարդէն շատ զգուշանայ, որովհետեւ ձայն մի կպտըտէր թէ կայսերութեան պիտի հասնի: Վեսպասիանոս զգուշութեամբ զՄետիոս տէրութենէն հեռացունելու տեղ՝ հիւպատոսութեան հասուց. եւ երբոր բարեկամք իւր սկսան ըրածին վերայ զարմանք ցուցանել, « Թէ որ Մետիոս պիտի թագաւորէ, զրուցեց, կուզեմ իրեն բարիք ընելով սիրտը շահիլ: Կայսր եղած ժամանակը կյիշէ զանոնք եւ ըստ այնմ հետս կը վարուի: »

— Փեթրպուրկի տներէն շատը երկու դուռ ունին, որ վնասակար է իսվոչիքներու (կառավարնե-

րու). վասն զի խեղճ իսվոչիքին դրան մի առջեւ կեցած համբերութեամբ սպասած ժամանակ, միւս դռնէն բերած մարդը կփախչի: Աղեքսանդր Ա կայսրը քաղաքին մէջ ծպտեալ պտըտած ատեն այս կառքերէն կբռնէր. որ մի իսվոչիքին կհրամայէ որ զինքը կայսերական պալատը տանի, եւ վար իջնալով կխնդրէ որ փոքր մի հոն սպասէ մինչեւ որ վերէն մէկը զրկէ իւր վարձքը տալու:

« Ո՛չ ոչ, ասէ իսվոչիք, ես այս վարպետութեանց վարժած եմ. նոյն իսկ այս պալատը շատ ազնուականներ բերեր եմ եւ աներեւոյթ եղեր՝ զիս անվարձ թողեր են: Նայէ, գրպանդ խառնէ, անշուշտ վարձքս տալու չափ ստակ կգտնես: »

— Ամենեւին ստակ չունիմ, կպատասխանէ կայսրը. բայց սպասէ, եւ ահա վերարկուս քովդ գրբաւ կթողում:

— Գոհ եմ, ասէ իսվոչիք. վասն զի կտեսնեմ որ նոր է, եւ ետ առնելու համար շուտով կուգաս վարձքս կհատուցանես: »

Կայսրը բոլոր սրտանց կխնտայ ու ներս կմտնէ: Քանի մի վայրկենէն սենեկապան մի կուգայ, կայսեր վերարկուն կուզէ եւ հարիւր արծաթ ըուպի այսինքն 400 ֆրանք կուտայ՝ իհատուցումն բոլոր ըրած կորուստներուն: Խեղճ իսվոչիք մէկ կողմանէ կուրախանայ, միւս կողմանէ եւս կսոսկայ որ Ռուսիոյ ինքնակալին հետ խաբեբայի ու գողի պէս վարուեր էր:

— Նիկողայոս կայսրն ըստ սովորութեանը միաձի բալխիր (գրգագ) նստած ման եկած ժամանակ, սպայ մի քովէն կանցնի, եւ փոխանակ կանկ առնելու եւ կայսերավայել պատուով զինքը

մեծարելու, միայն բարեւ մի կուտայ ու կձգէ կերթայ : Նիկողայոս սպային այս կուպտութեանը վերայ կնեղանայ, կեցունել կուտայ զինքն ու խստիւ կյանդիմանէ : Սպայն կպատմէ իրեն որ կինը դըժժուարածին տղաբերքի անտանելի ցաւոց մէջ կչարչարուէր, եւ ինքը բժշկի կվագէր : Կգովէ նիկողայոս սպային ընկերսիրութիւնն, հրաման կուտայ որ ճամբան շարունակէ, եւ պալատն հասնելուն պէս իւր բժիշկը կյուզարկէ հիւանդին. եւ երբոր կիմանայ որ կինը սոսկալի երկունքէն յետոյ մանչ մի բերեր է, ինքն անոր կնքահայր լինի : Այսչափս բաւական չհամարելով՝ հրաման կհանէ, որ այնուհետեւ կանայքնին ծանր հիւանդ եղող սպայք ծառայութենէ ազատ լինին :

Մեծն Պետրոս եւ Մենշչիքով.

Մենշչիքով ծաղարարի (պօղաչաճը) մի մանչ էր. Մեծն Պետրոս անոր խելքին հաւնեցաւ եւ մեծամեծ իշխանութեանց հասոյց. Մենշչիքով եւս պատերազմի մէջ իւր բարերարը վտանգէն ազատելու համար կեանքը մեծ վտանգի մէջ դրեր էր :

Այս իշխանը զարմանալի կատարելութեանցը հետունէր նաեւ մեծամեծ թերութիւններ. իւր արծաթսիրութիւնն ու իշխանասիրութիւնը չափ ու սահման չունէին. հասարակաց շինուածոց համար սահմանեալ ստակէն մեծ գումար մի խորեր իրեն սեպհականեր էր : Երբոր կայսեր հետ կերթար Տոն գետին վերայ Ազով քաղաքը պաշարելու, Մենշչիքով ճամբան իմացաւ որ զինքը մատներ են, եւ Մեծն Պետրոս իմացեր է իւր ծանր ծանր յանցանքները :

Կայսեր լռութիւնն ու պաղ կերպը՝ որուն անողոքելի խստութիւնը լաւ գիտէր Մենշչիքով, անոր երեսէն իյնալն իրեն կգուժէին. արդէն ինքզինքը իծագաց փառաց եւ պատուոյ ի վիճ թշուառութեան եւ խայտառակութեան ընկած կործանած կտեսնէր ու կսոսկար. եւ հետ զհետէ միտքը կուգային Սիպերիոյ անապատները, երկարատեւ աքսորանաց միայնութիւնը, գլխուն սպառնացող կացինը (պալթա) : Այսպիսի դառն մտածութեամբ արիւնը կվառի կբորբոքի, վրան վնասակար ջերմ մի կուգայ, ողորմելի հիւղի մի մէջ կանկ կառնու, եւ երեք շաբաթ հոն կկենայ ցնորակոծ եւ սոսկալի մտատանջութեան մէջ ընկղմած : Վերջապէս խելքը գլուխը կուգայ կարթննայ, իւր անհանգիստ աչուրները խեղճ խուցին չորս կողմը կշրջէ. կը տեսնէ որ ամէնքը զինքը թողեր են. մէկ մարդ մի միայն քովը կար, մէկ մարդ մի միայն զինքը կխրնամէր, մէկ ձայն մի միայն իրեն մխիթարական խօսքեր կարտաբերէր. այն ձայնն էր իւր կայսեր ձայնը. այն մարդն էր Մեծն Պետրոս :

Այն անակնկալ տեսութիւնն իրեն կեանք եւ ոյժ կուտայ. ջերմաջերմ արտասուք երեսը կողողեն. « Տէ՛ր արքայ, դո՞ւն ես, կգոչէ : — Այո ես եմ, երեք շաբաթ է որ այս սենեկէն հեռացած չեմ, կսխառասխանէ կայսրը : — Ուրեմն դեռ զիս կսիրե՞ս, կը կրկնէ Մենշչիքով. ուրեմն ինձ ներեցի՞ր, եւ յանցաւորին դատապարտութեան վճիռ չտուի՞ր : — Թշուառական, կասէ Պետրոս զինքը գրկելով, կըրնայի՞ր կարծել որ ես մոռանամ կեանքս ազատելու : Յանցանացդ դարման ըրէ, միւսանգամ անոնց մէջ մ'իյնար, եւ վստահ եղիր միշտ վրաս : »

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԼԹ.

ԵՐԵՒՈՅԹ.

Երեւոյթք շատ անգամ կխաբեն զմարդ :

Արտաքին երեւուծին մի՛ վատահիր. Թմբուկն որ այնպէս ուռած է եւ սաստիկ ձայն կհանէ, քամիով միայն լցուած է :

Երեւուծից վերայ եղած դատաստանը շատ անգամ ծուռ կելլէ, եւ սակայն մարդիկ չեն խրատուիր, միշտ կընեն :

Ծիածան կամ Ծիրանի գօտի.

Այն ահագին սեւ մրրկաց մէկուն ետեւէն որ գարնան ստէպ կպատահին եւ արտերուն պտղաբերութեանն հարկաւոր են, երփնազարդ ծիածանն երկնքի վերայ բոլորածեւ տարածեցաւ : Կարապետիկ որ նոյն միջոցին պատուհանէն կնայէր, տեսաւ զայն եւ սկսաւ ուրախութեամբ կանչել .

— Երբէք կեանքիս մէջ այսպիսի փառաւոր գոյներ չտեսայ : Հոն առուակին եզերքը հինաւուրց ուռենւոյն քով ամպերու վրայէն մինչեւ երկիր կիջնան : Անտարակոյս այս գեղեցիկ գոյներն կաթիլ կաթիլ ծառոյն բոլոր տերեւներուն վերայ կիջնան կնստին : Վազեմ երթամ ուրեմն ու ներկատրփիս մէջի խեցիներն լցունեմ : Զրուցեց եւ իսկոյն վազեց ուռենւոյն քով գնաց, եւ ի՛նչ եղաւ այն անձրեւին մէջ իւր զարմանքն ու ապշուծիւնը երբոր եւ ոչ յետքը գտաւ այն գեղեցիկ գոյներուն՝ որոնք ժողովելու համար այնչափ փափաքով հոն վազեր

էր : Վշտացած ու թրջած տուն դարձաւ Կարապետիկ, եւ գլխուն եկած մեծ դժբախտութիւնը հօրը պատմելով գանգատեցաւ :

Հայրն ժպտելով նմա ասաց .

— Որդեակ իմ, այս գոյները խեցիներու մէջ չեն ժողովիր . վասն զի գոյն չեն, այլ վրանին արեւու ճառագայթներ զարկած անձրեւի պարզ կաթիլներ են : Այն երեւցած գոյները իրօք չկան, այլ երեւոյթ են միայն : Որդեակ իմ, նոյնպիսի է նաեւ աշխարհիս պերճութիւնը . մեզ բան մի կերեւայ, եւ իրօք սոսկ վաղանցուկ փայլ մի է :

Նայէ որ արտաքին ո՛ր եւ իցէ երեւութէ չխաբուիս, թէ որ չես ուզեր աւելորդ վիշտ եւ նեղութիւն ունենալ :

Ֆրանսուա Արակոյին ծանրաջափը.

Ֆրանսուա Արակոյ, անուանի աստեղաբաշխն որ շատ ժամանակ չէ որ մեռաւ, սենեկին մէջ գեղեցիկ ու ծանրագին ծանրաջափ մի ունէր :

Օր մի իւր հինաւուրց սպասաւորը վրայի փոշին թօթվելու ատեն ի՛նչպէս լինի վար կձգէ ու կտոր կտոր կընէ :

Երբոր խեղճը սարսափած ու յուսահատած կեցեր ու ի՛նչընելիքը չէր գիտեր :

— « Բան չկայ . հոգ մըներ, կանչեց Արակոյ . միայն կարծեմ որ անձրեւ պիտի գայ, վասն զի ծանրաջափս ոչ երբէք այսչափ վար իջած տեսեր էի : »

Ա.ժան ձի.

Գեղացւոյն մէկն աշխոյժ ու դեռահասակ ձի մի կգնէ աժանկեկ գնով, եւ սաստիկ ուրախացած

կերթայ բարեկամներէն մէկուն կցուցանէ որ քաջ ձիապան է եղեր, եւ կպատմէ անոր թէ ի՞նչ հնարքներ բանեցուցեր, ու ո՛րչափ լեզու թափեր է այնպէս աժան ձեռք ձգելու համար այն գեղեցիկ կենդանին :

— Քանիո՞վ գնեցիր, կհարցանէ ձիապանը :

— Հինգ հարիւր Փրանքի :

Ձիապանը կզարմանայ, կենդանւոյն չորս դին կդառնայ կդիտէ, կողերը՝ ծնկուրներն ու ոտուրները կզննէ կշօշափէ. « Այս ձին հազար հինգ հարիւր Փրանք կարժէ, կասէ. անշուշտ ասոր տակը բան մը պիտի լինի : Նորէն ձիուն չորս դին կդառնայ կնայի, բան չտեսներ : Նոյն օրը սաստիկ քամի կփչէր. ազնիւ ձին չվնասուելու համար մէջքն ու ականջները ծածկեր են եղեր. ձիապանը « Հանեցէք սա մէջքի ծածկոյթը » կասէ. կհանեն կտեսնէ որ մէջքն եւս բան չունի : « Ականջն եւս բացէք » կասէ. եւ այն ժամանակ դուրս կելլէ խաղբութիւնը որ ականջին մէկը քաուչուլէ շինուած է եղեր :

Խեղճ գեղացւոյն սրտին ցաւն ու խոր տրտմութիւնը անով եւս կաւելնայ որ չէր կրնար ետ տալ ձին, որովհետեւ ստակը վճարեր էր, եւ ամէն բան առաջուց գուշակող Գաղղիոյ օրինագիրքը չէր կրցած գուշակել որ քաուչուլէ ականջով ձի գնողին իշխանութիւն տար ետ դարձնելու զայն :

Ա.ու.ա.ձ.ք.

Բնաւ սուտ պէտք չէ ասել, նաեւ կատակով. վասն զի մի անգամ որ անունդ ստախօս ելլէ՝ այնուհե-

տեւ եթէ ճշմարիտ եւս խօսիս՝ խօսքիդ մարդ չհաւտար :

Կարդալ սովրիլը ձանձրանալի է, բայց կարդալը զուարճալի : Այսպէս է նաեւ ամէն սովրած բանին սկիզբը :

Շնորհակալ պէտք է լինիմք մեր պակասութիւններն իմացունողներուն :

Մարդ իւր պակասութիւններն արդարացունել ուզելով՝ զանոնք կմեծցունէ :

Առանց խղճի մանր յանցանքներ ընողը՝ շատ ջանցնիր՝ մեծ յանցանքներ եւս կգործէ :

Յանցանքն ընելուն վերայ պէտք է ամաչել եւ ոչ թէ զայն խոստովանելուն վերայ :

Երջանկութեան եւ առաքինութեան մեծ թշնամին է անգործութիւնը :

Փոխանակ ուրիշներուն պակասութեանցը վերայ խօսելու՝ նոցա կատարելութիւնը ջանա երեւան հանել :

Ուղղութեան գալու համար ոչ երբէք ժամանակն ուշ է . բայց այսօր աւելի դժուարաւ մարդ ինքզինքը կշտկէ քան թէ երէկ . եւ վաղը աւելի եւս դժուարութեամբ քան թէ այսօր :

Տղայութեան անհրաժեշտ պարտքն են աշխատանք, յարատեւութիւն եւ հլութիւն :

Ամէն բանէ խելք սովրողը՝ ամենէն իմաստուն լինի :

Թէ՛ խրատելն եւ թէ՛ խրատուիլը ճշմարիտ բարեկամութեան նշան է . միայն թէ խրատողը համարձակ պիտի լինի, խրատուողն եւս յօժարամիտ :

Գեղացիին մէկը գետէն անցնիլ ուզելով՝ կսպասէր որ բոլոր գետը անցնի երթայ ցամքի՝ որ կարե-

Նայ ինքը հանգիստ անցնիլ . նոյնպէս կընէ՛ ո՛վ որ գործ մը չսկսիր մինչեւ որ բոլոր դժուարութիւնները չվերնան :

Սկսիլը՝ գործոյն կէսն է :

Արդարասիրութիւն եւ երախտագիտութիւն.

Շատ ժամանակ չէ Փարիզումէջ մարդուն մէկուն գրապանակը (Յըզտան) փողոցի մի մէջ ծոցէն կիյնայ , յորում 100,000 ֆրանք կայ եղեր : Այլ կրնան ընթերցողք մտածել թէ ի՛նչ մեծ եղած է սրտին ցաւն, մանաւանդ որ բոլոր հարստութիւնն այն էր, եւ շահու դնելու կտանի եղեր :

Նոյն օրն եւս իւր բարեկամներն ու ազգականները տունը կերակուրի հրաւիրած է եղեր : Ամէն ջանք կընէ որ անմխիթար տրտմութիւնն անոնց չիմացունէ : Կերակուրի կնստին , եւ մէկուն մըտքէն չանցնելով որ տանտիրոջ գլխուն այնպիսի մեծ դժբախդութիւն եկած է, կասեն կիսնտան : Սեղանէն ելանելու ժամանակնին ծառայն կուգայ Պ. Ս...ին կասէ որ մատաղահասակ գեղացի աղջիկ մի եկեր կաղաչէ որ զինքը վայրկեան մի տեսնէ, եւ ասելիքն չուզեր ամենեւին ուրիշի զրուցել : Պ. Ս. առանց ամենեւին մտքէն բան մը անցընելու, մեքենայաբար կելլէ սեղանէն անդաստակը կերթայ ուր իրեն կսպասէր տասնըհինգ տասնըվեց տարեկան համեստուհի մը, որ զՊ. Ս...ն տեսնելուն պէս քովը կուգայ եւ սիրելի պարզութեամբ մը « Դէմքէդ կերեւայ , կասէ, որ տրտում ես . եկայ որ զքեզ ուրախացունեմ : » Այս կասէ ու գրպանէն կորսուած գրապանակը կհանէ Պ. Ս...ին կուտայ ,

որ ուրախուժենէն խելքը գլխէն կերթայ. մէկէն կքաշէ զինքը կգրկէ, ձեռքէն կբռնէ սրահը կտանի եւ բոլոր հրաւիրելոց զինքը ցուցանելով հրճուալից ձայնիւ « ուրախակի՛ց եղէք ինձ, ուրախակից եղէք, բարեկամք, կկանչէ. տեսէ՛ք սա աղջիկը. կեանքս ու երջանկուժիւնս կորսնցուցեր էի. ահա ինքը նորէն զանոնք ինձ դարձուց: » եւ պատմեց իրենց թէ ի՛նչպէս բոլոր ունեցածը կորսնցուցեր, եւ այսպիսի հրաշքով գտեր էր:

Ծաղկահասակ եւ արդարասէրն Մարիամ, աղքատ այրի կնոջ մի դուստր էր եւ Փարիզու մօտ գեղ մի կքնակէր: Նոյն օրը հարկաւոր բանի համար Փարիզ եկեր էր, եւ փողոցէ մի անցնելու ժամանակ գրապանակը գտեր էր: Բացեր նայեր էր որ մէջը շատ մը թղթադրամ (հարիւր հազար ֆրանքի) եւ մէկ նամակ կայ. այն նամակին վրայ եղած հասցէով իմացեր է Պ. Ա...ին տունը, եւ շիտակ առեր հոն բերեր է որ իրեն յանձնէ:

Պ. Ա. ինչան երախտագիտուժեան իւրոյ՝ Մարիամին տարին 500 ֆրանք եկամուտ կապեց, 500 ֆրանք եւս տարեկան վարձք խոստացաւ թէ որ քովը ծառայուժեան մտնէ: Ափսո՛ս որ խեղճ աղջիկը չկրցաւ երկայն ժամանակ իւր նոր բաղդը վայելել, եւ կարճատեւ հիւանդուժեամբ վախճանեցաւ: Բայց Պ. Ա. իւր երախտագիտուժեան պարտքը Մարիամին մահուամբը հատուցած չհամարելով անոր կապած եկամուտն աղքատ մօրը վերայ դարձուց, որպէս զի մինչեւ մահը հանգիստ ապրի, եւ այնպիսի առաքինի զաւակի մայր լինելուն վերայ ուրախանայ:

Մարիամին նման առաքինի ու արդարախոյ ան-

ձինք ո՛րչափ սակաւամիւ են, որ այսպիսի դիպուածոց մէջ իրեն պէս մտածեն ու գործեն:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ Խ.

ԾՆՈՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ.

Իբրոյ սրտէ պատուէ ձերունի հայրդ, եւ մօրդ գորովալից խնամքը մի՛ մոռանար. նոցա բոլոր բեզ բրածին ե՞րբ պիտի կարենաս փոխարէն ընել:

Հօրն օրհնութիւնը որդւոց տունը կհաստատէ, եւ մօր անէծքը հիմնայատակ կկործանէ զայն:

Ծնողացդ ի՛նչ որ բրիր դուն՝ զայն միայն կրնաս յուսալ բու զաւակներէդ ձերութեանդ ժամանակ:

Զաւակաց իրենց ծնողաց վերայ ունենալու սէրն այնպիսի բնական ու անհրաժեշտ պարտք մի է, որ Աստուած իւր տասնաբանեայ պատուիրանաց հինգերորդն ըրաւ զայն եւ ասաց «Պատուեա զհայրքո եւ զմայր:» Երբոր որդիք մտածեն որ առանց իրենց ծնողաց ոչ աշխարհք կուգային եւ ոչ այն հասակի, տարիքի, վիճակի, պաշտօնի, պատուոյ ու փառաց կհասնէին, զիրենք սիրելու մեծարելու եւ հոգալու խնամելու ի՛նչ սէր ու յորդոր չե՞ն զգար իրենց սրտին ու խղճմտանքին մէջ. ի՛նչ անպատմելի ուրախութիւն եւ քաղցր բերկրութիւն չե՞ն իմանար նաեւ նոցա օգնած, նոցա հանգստութեանն ու երջանկութեանը պատճառ եղած ժամանակնին: Եւ այն բարեաց փոխարէն ի՛նչ օրհնենքներ չե՞ն

ընդունիր իրենց երախտագէտ ծնողքէն, եւ որպիսի՛ գովասանք չե՞ն լսեր բոլոր տեսնող եւ իմացող բարեսէր անձանցմէ. ո՛ւր թողունք երկնքէն վրանին իջած այն առատահոս օրհնութեան զեղմունքն, որով ամէն բռնած գործերնին իրենց ծնողախնամ ձեռքին մէջ մի մի յաջողութիւն, եւ մի մի փառք ու պարծանք կդառնան :

Խօսքերնիս օրինակօք եւս հաստատեմք :

— Հռովմայեցի կին մի յանցանքի համար կդատապարտեն որ բանտի մէջ ծածուկ խղղուի : Եռապետը վրան կցաւի, կհրամայէ որ փոխանակ խըղղելու՝ թողուն որ բանտին մէջ անօթութենէ մեռնի. եւ Տարենտիա աղջկան աղաչանացը զիջանելով հրաման կուտայ որ երթայ մայրը տենսէ ուզած ժամանակը, բայց այն պայմանաւ որ ամէն անգամ վրան փնտռեն, որպէս զի մօրը ուտելիք չտանի :

Շատ օր կանցնի եւ կտեսնեն որ մայրն անօթութենէ ամենեւին չտկարանար : Եռապետը զարմացած՝ կսկսի բանն անձամբ դիտել, եւ կտեսնէ հիացմամբ որ Տարենտիա ծիծ տալով՝ իւր կաթովը մայրը կկերակրէ : Իսկոյն կերթայ տեսածը դատաւորաց կպատմէ, որք այսպիսի որդիական գեղեցիկ ու հանճարեղ սիրոյն վրայ խանդաղատած՝ մօրը կը ներեն. այնչափն եւս բաւական չհամարելով՝ հասարակաց գանձէն մօրն ու դստեր մշտնջենաւոր թոշակ կկապեն, որպէս զի այնուհետեւ կարող լինին մնացած օրերնին հանգիստ ապրիլ : Կասի նաեւ թէ բանտն եւս կործաներ եւ տեղը տաճար կանգներ են նուիրեալ որդիական Սիրոյ :

— Հռովմայեցւոց Յգոստոս Կայսրը, որ Քրիստոսի 14 թուականին մեռած է, Ակտիոնի պատերազ-

մէն յետոյ գերիներն աչքէ կանցունէ, եւ մէջերնին կտեսնէ զՄետիղղոս որ իւր ոխերիմ թշնամիներէն մէկն էր: Թէպէտեւ քաշած թշուառութենէն ու սաստիկ տրտմութենէն երեսն այլանդակեր էր, սակայն կճանաչէ զինքն որդին որ Յօնատոսի յաղթական զօրքէն էր, եւ կերթայ վիզը կալուի. յետոյ արտասուալից աչօք կայսեր դառնալով՝ «Ինքնակալ Տէր, կասէ, հայրս թշնամիդ եղաւ, ուստի եւ մահուան արժանի է. բայց ես հաւատարմութեամբ քեզ ծառայեցի եւ վարձուց արժանի եղայ: Իգին ծառայութեանցս շնորհէ ինձ հայրս, եւ զիս իւր տեղը մեռցունել տուր:» Յօնատոս հայրասէր որդւոյն այս զարմանալի անձնանուիրութեանը վերայ կգորովի, զինքը կսիրէ եւ հօրը կներէ:

— Յի մի Փրեդերիկոս Բ, Բրուսիոյ Թագաւորը իւր սենեկին մէջ սաստիկ զբաղած՝ կրկին եւ կրկին զանգակ կզարնէ եւ մարդ չգար: Գուռը կբանայ դուրս կելլէ կտեսնէ որ սպասաւորն աթոռի մի վերայ ընկեր կքնանայ: Քովը կերթայ որ արթնցունէ եւ կնայի որ նամակի մի կտոր գրպանէն դուրս ելեր է: Հետաքրքրութիւնը կուգայ իմանալու թէ արդեօք մէջն ի՞նչ գրած է. կամացուկ մի կքաշէ կը հանէ զայն ու կկարդայ: Մօրը նամակն էր, յորում շնորհակալ լինէր որդւոյն որ իւր ամսականին կէսն իրեն կղրկէր՝ խեղճութեանն օգնելու: Եւ կվերջացունէր թուղթն ասելով որ իւր այս ծնողասիրութեանը համար Աստուած զինքը պիտի օրհնէ: Թագաւորը նամակը կարդալէն յետոյ սենեակը կմտնէ, ոսկիով լեցուն քսակ մի կառնու, եւ գրոյն հետ երիտասարդին գրպանը կդնէ, կդառնայ սենեակն եւ այնպէս սաստիկ կհնչեցունէ զանգակն որ սպասա-

ւորն կարթննայ ու կվագէ ներս կմտնէ. « Աղէ՛կ քնացար » կասէ նմա Թագաւորը: Սպասաւորն կջանայ ինքզինքն արդարացունել, եւ շփոթուծեանը մէջ ձեռքը յանկարծ գրպանը կտանի եւ մէջը քսակ մի զգալով՝ զարմացմամբ կքաշէ դուրս կիանէ, եւ մէջի լեցուն ոսկիներն որ կտեսնէ՝ գոյնը կնետէ, կը դեղնի, հեղեղի պէս արցունք կթափէ առանց կարող լինելու բռնէն բառ մի հանել: « Ի՞նչ է, ի՞նչ ունիս, կհարցանէ Թագաւորը: — Ո՛հ, Տէր արքայ, կասէ երիտասարդն նորա ոտքն իյնալով, մահս կուզեն, վասն զի չեմ գիտեր ի՞նչ կնշանակէ այս գրպանէս գտած ստակս: — Բարեկամ, կպատասխանէ Փրեդերիկոս, Աստուած շատ անգամ իւր բարիքը քնացած ժամանակնիս մեզ կյուզարկէ: Ա՛ռ մօրդ դրկէ այդ քսակը. ողջունէ զինքն իմ կողմանէս եւ զբուցէ որ հոգ չընէ. այսուհետեւ իրեն եւ քեզ խնամք պիտի տանիմ ես: » Այլ դուն գնագուշակէ ազնուասիրտ մայրասէր զաւկին անպատմելի ուրախութիւնն ու ցնծութիւնը:

— Պարսից Կիւրոս Թագաւորը Լիւդիոյ Սարգիկէ մայրաքաղաքին տիրելով՝ յաղթական զօրքը մէջը ցրուեր կկողոպտէին: Ոմանք Կրեսոս Թագաւորին պալատին վերայ կդիմեն որպէս զի զինքը բռնեն մեռցունեն: Կգտնան եւ մէջերնէն մէկը Թուրն որ կվերցունէ գլխուն զարնելու՝ Կրեսոսին իծնէ համբ որդին Ատիս զայն կտեսնէ, եւ սրտին անհնարին ցաւէն այնպիսի ոյժ մը կուտայ լեզուին որ իսկոյն կապանքը կքակուին ու « Թուրդ վա՛ր առ, կկանչէ, Կրեսոս հայրս կսպաննես: » Այն յանկարծական աղաղակովը հօրը կեանքը կազատէ, եւ հետը Կիւրոսին կտա՛րուի:

— Ազնիւ զաւակ մի ոչ երբէք իւր ծնողաց աղքատութեանը կամ խոնարհ վիճակէ լինելուն վերայ պիտի ամաչէ : Տիւրա անունով քաջ սպայն աղքատ գեղացւոյ մի որդի էր . սակայն իւր գնդին մէջ կը կարծէին թէ երեւելի Տիւրֆօր տը Տիւրա ազնուական ցեղէն է : Յր մի յանկարծ հայրը զինքը տեսնելու կուգայ . ծնողասէր Տիւրա մեծաւ ուրախութեամբ զինքը կընդունի , եւ այնպէս գեղացիի հագուստովն ու ոտքի տռելիներովը կառնու իւր գնդապետին կներկայացունէ : Լուրդովիկոս չորեքտասաներորդ Թագաւորը կիմանայ Տիւրային այնպիսի սիրով զհայրը ճանաչելն , ընդունիլն ու պատուելը , առջեւը յարքունիս կանչել կուտայ զինքը , եւ ձեռքը բռնելով նմա կասէ . « Տիւրա՛ , ուրախ եմ որ զօրացս պատուականագոյն սպայից մէկուն հետ ճանչուորութիւն կընեմ . Թոշակ կապեցի քեզ . կարգուէ , որդիքդ ես կհոգամ . արժանի՛ ես որդիք ունենալու , որպէս զի քեզ նմանին : »

ԱՐԾԻԼՆ ՈՒ ԻՒՐ ԶԱԳԵՐԸ.

Զեր ծընողաց խըրատներ
Մըտիկ ըրէք , տըղաքնե՛ր ,
Ով հօրն ու մօր խօսք պահէ՛
Կազատի շատ վրտանգէ .
Ազատութեան չըխաբուիք
Երազներով՝ սիրելիք :

Արծիւն ունէր
Երկու ձագեր ,

Զոր շատ սիրով կըխընամէր . —

Ո՞ր մայր զորդին իւր չըսիրեր: —

Օր մը ձագերն երբոր տեսան

Որ իրենց ալ թեւն է բուսեր բաւական,

« Եղբայր, ըսին իրարու .

« Մինչեւ ե՞րբ մեք նըման տըղու

« Պիտի բոյնին

« Մընամք խորշին .

« Ինչո՞ւ մեք ալ դուրս չելլամք

« Զըխոյանամք: »

Այս կըսէին՝

Մէյմ՝ալ մըտաւ մայրերնին ,

Բըռնած որսը իրենց տըլաւ .

Ինքը յոգնած էր, նըստեցաւ .

Զագերն ուտած ժամանակնին

Մէկըզմէկու աչք կընէին :

Մայրն որ տեսաւ՝

« Ի՞նչ է, ըսաւ

« Բան մը կուզէ՞ք

« Միրո՛ւն տըղէք: »

« Տըղէ՞ք... կըրկնեց մեծն անդիէն

« Ալ մեք ելա՛նք տըղու կարգէն...

« Մայրի՛կ, կուզեմք յետ կերակրոյն

« Թողու՞մք մեր բոյն ,

« Ա՛լ ազատիմք ,

« Երթամք թըռչիմք: —

« Զէ, տըղաք չէ, պատասխանեց մայրն արծիւ .

« Զէ՞ք մի նայիր ձեր թեւք բուսած են հազի՛ւ .

« Ի՞նչպէս կըրնաք օդը պատուել ,

« Ու թըշնամեաց ձեռքէն փախչել .

« Կեցէք քիչ մ՛ալ ինծի հետ ,

« Ու հետ ըզհետ

« Քանի որ ձեր թեւեր բուսնին՝

« վարժեցրնեմ ձեզ թըռչելու արուեստին :

— « թըռչե՞լ... գիտեմք մեք բաւական , »
 Կանչուըռտեցին մէկ բերան .

Ու դուրս ելան ,

Բացին թեւերն ու թըռչելու ըսկըսան :

Խեղճ մայրերնին չէր գիտեր

Որո՞ւն հասներ :

Մեծը քիչ մը յառաջ անցաւ ,

Բայց շուտով մը յոգնեցաւ

Ու ծով ինկաւ

Խըղդըլեցաւ .

Իսկ միւսն ինկաւ ծովեզերքին

Քովի եղած ապառաժին ,

Ու թեւն ու ոտքը կոտրեցաւ .

Խեղճ մայրն հասաւ ,

Կըռնակն առաւ .

Բոյնը տարաւ :

« Մայրիկ , կըսէր հեծեծելով .

« Ա՛խ , ի՛նչ խելքով

« Քուկին խըրատ մըտիկ չըրինք...

« Թէ որ բոյնէն դուրս չեւէինք՝

« Այս փորձանքը չէր իգար ,

« Ու այսպէս փուճ տեղ չէի լար : »

Տըղա՛ք , կուզե՛ք որ չըլաք .

« Պէտք է հօր մօր հըլու ըլլաք :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԽԱ.

Շարայարարիւն.

ՈՍԿԻ ՔԹԱՏՈՒՓ.

Օր մի հազարապետին մէկը բազմաթիւ սպայից հետ սեղան նստած լինելով, հանեց նոցա ցուցուց նոր գնած գեղեցիկ ոսկի քթատուփը (պուրնուլթու գուլթուսու) : Ամէնքը տեսան, հաւնեցան, գովեցին, եւ հազարապետն ուրախուլթեամբ նորէն ծոցը դրաւ : Փոքր մի յետոյ ուզեց քթախոտ քաշել, եւ տեսաւ որ տուփը գրպանը չէ. բոլոր գրպանները փնտռեց, եւ չգտնալով՝ զարմացմամբ հարցուց. — Քթախոտի տուփս ի՞նչ եղաւ : Տեսրք, կաղաչեմ մէյմը գրպաննիդ նայեցէք, թերեւս մէկերնիդ առանց ուշադրուլթեան գրպաննիդ դրած էք :

Իսկոյն բոլոր սեղանակիցք ոտք ելան եւ գրպաննին դուրս դարձուցին եւ քթատուփը մէկուն մէջէն չելաւ : Մէջերնէն մէկն միայն որ գնդին դրօշակիրն էր, գրպանը չդարձուց, տեղը նստած կեցաւ եւ երեսին վերայ յայտնի այլայլուլթիւն մի կերեւար :

— Գրպաններս չեմ դարձուներ զրուցեց : Իմ պատուոյս վերայ տուած խօսքս բաւական պիտի լինի հաւատացունելու համար որ քթատուփն առած չեմ :

Կերակրէն յետոյ սպայք տեղերնին դարձան գլուխնին շարժելով, վասն զի ամէնքը մտքերնին դրեր էին որ երիտասարդ դրօշակիրն էր գողը :

Երկրորդ առաւօտ գնդապետն զինքը կանչել տուաւ եւ իրեն ասաց .

Քթատուփս գտայ : Գրպանիս ծայրը քակուած լինելով՝ գրատիս աստառին մէջ սահեր ընկեր էր : Բայց արդ դուն ասա ինձ թէ ինչո՞ւ համար չուզեցիր գրպաններդ դարձունել, մինչդեռ միւս բոլոր սպայք սիրով դարձուցին :

Գրօշակիրն պատասխան տուաւ .

— Սիրով հրամանոցդ կասեմ, գնդապետս, բայց հրամանոցդ միայն : Գիտցիր որ ազգականքս աղքատ են . ռոճկիս (իւլէֆէ) կէսն անոնց կուտամ, եւ խնայութեան համար ամենեւին պանդոկ կերակուր չեմ ուտեր : Երէկ երբոր ինձ պատիւ ըրիր ու սեղանդ զիս հրաւիրեցիր, ես արդէն ճաշիկս գներ գրպանս դրեր էի : Ամօթէս կմեռնէի թէ որ գրպանս դարձուցած ժամանակս գետին ձգէի սեւ հացի ու երշիկի (սուճուզ) կտորս :

Այս խօսքերուն վերայ գնդապետին սիրտը խանդադատեցաւ .

— Ազնիւ զաւակ մի ես դուն, զրուցեց դեռահասակ զինուորին . ուստի որպէս զի կարող լինիս ծնողացդ աւելի դիւրութեամբ օգնել, մեծ ուրախութիւն է ինձ եթէ ամէն օր սեղանս գաս :

Այնչափով գոհ չեղաւ : Ծնողասէր դրօշակրին վերայ եղած անիրաւ կասկածանքը փարատելու համար մեծ խնջուքի մի հրաւիրեց բոլոր սպայքը, առջեւնին պատմեց իւր ազնուամիտ զինուորակցին անմեղութիւնն, եւ ինչան իւր մեծ համարմանը անոր յիշատակ տուաւ ոսկի քթատուփը, որ պատճառ եղեր էր նորա ծնողասիրութեան յայտնուելուն :

Սատուածսիրութիւն եւ ծնողասիրութիւն.

Վիրգիլն է եւ Մկրտիչ շատ կսիրէին իրենց ծնողքը. ծնողքն եւս վրանին կգուրգուրային եւ զիրենք իրենց աչքին պէս կսիրէին, որովհետեւ հլու հնազանդ էին, մարդավար, ազնուաբարոյ եւ ուսումնասէր:

Սակայն քանի մի օրէ իվեր սովորութիւն ըրեր էին նախահաշիկնին լմնցունելուն պէս կվագէին պարտէզ կերթային, եւ քառորդէ մի հազիւ կուգային աշխատանքի կնստէին:

Զաւակացն այս նոր վարմունքը Տ. Կարապետ հայրերնուն հետաքրքրութիւնը շարժեց, որովհետեւ Վիրգիլն է եւ Մկրտիչ մինչեւ այն ժամանակ մեծ ուսումնասիրութիւն ցուցուցեր էին, եւ շատ անգամ նախահաշիկնին կիսկատար կթողուին կերթային աշխատելու, դասերնին պատրաստելու: Ուստի օր մի ցաւագին սրտիւ զրուցեց իւր ամուսնոյն. « Ի՞նչ պիտի լինի այս փոփոխութեան պատճառն: Մի անգամ որ զաւակնիս իրենք զիրենք անգործութեան տան՝ կանհետանան կերթան վրանին տեսնուած կատարելութիւնները, կանհետանան նաեւ բոլոր մեր յոյսերը... »

Իսկուհի տիկին մայրերնին իւր հառաչանօքն հաստատեց ամուսնոյն ցաւագին խորհրդածութիւնը, եւ նոյն օրն ըսաւ իւր որդւոցը.

— Այսչափ կանուխ պարտէզ կերթաք ի՞նչ կընէք: Կրնաք փոքր մի սպասել եւ դասերնէդ վերջն երթալ զուարճանալ:

Վիրգիլն է եւ Մկրտիչ լուռ կեցան, պատասխան

չտուին, եւ աւելի եւս սիրով մօրերնուն վիզը պըլ-
լուեցան համբուրեցին :

Երկրորդ առաւօտ նախաճաշկէն յետոյ երբոր
տեսան որ մարդ չկայ, նորէն պարտէզ վազեցին :
Իսկուհի տիկինն որ պահուրտած իրենց երթալուն
կսպասէր՝ կամացուկ ետեւնէն գնաց, եւ ի՛նչ մեծ
խնդուծեամբ լեցուեցաւ մայրական սիրտն երբոր
տեսաւ իւր հրեշտակատիպ մանկունքը սարփի-
նայի (ասմալըգ) մի տակ ձեռնամած ծունկի վերայ
եկած :

Մկրտիչ եւ Վիրգինէ միաբարբառ այս աղօթքը
կրնէին առ Տէր .

« Աստուած իմ, ոտքդ ընկած կաղաչեմք ու խըն-
դբեմք որ ծնողքնիս մեզմէ առաջ չմեռնին : Զիրենք
շատ կսիրեմք, եւ ո՛րչափ պիտի ուրախանամք թէ
որ մեծնամք ու զիրենք երջանիկ ընեմք :

« Շնորհք տուր մեզ, որ բարի, արդար եւ խելօք
լինիմք, որպէս զի ծնողքնիս մեզի հայր ու մայր
լինելուն վերայ ուրախանան միշտ, ու երբէք չը-
զղջան :

« Լսէ՛ մեր աղաչանքն, Աստուած իմ : Կուզեմք
նաեւ կատարել բոլոր քու սուրբ պատուիրանքդ .»

Աղօթքնին աւարտելէն յետոյ գետինն համբուրե-
ցին ոտք ելան, իրարու հետ պագտուեցան, եւ ձեռք
ձեռքի տուին ու ցատքտելով ցատքտելով տուն
դարձան :

Իսկուհի տիկինն ուրախուծեան արտասուք թա-
փելով վազեց գնաց, տեսածն ամուսնոյն պատմեց,
եւ երկուքն եւս աչքերնուն առջեւը նշմարելով
այնպիսի բարի զաւակաց ձեռքով վայելելու ապա-
գայ երջանկուծիւննին՝ բիւր գոհուծիւն մատուցին

Աստուծոյ, որ իրենց այնպիսի ազնիւ ու ճնողասէր որդիք պարգեւեր է:

Հարկ չէ ասեմ որ Վիրգիլեայ ու Մկրտչին վերայ ունեցած սէրերնին եւս կրկնապատկեցաւ, ինչպէս որ արժանի էին:

ԿԱՏՈՒՆ ՈՒ ԵՐԿՈՒ ԶԱԳԵՐԸ.

Խաթուն կատուն ունեցեր էր

Ջուխտ մը ձագեր,

Ջորոնք Թէպէտեւ հաւասար կըսիրէր,

Բայց իրարու բընուծիւննին նըման չէր.

Մէկը կըրակ ու բոց աշխոյժ,

Միւսը հանդարտ ու խոհեմ յոյժ.

Սա իւր մօրը խօսքերէն

Դուրս չէր ելած իւր ծընընդեանը օրէն.

Իսկ միւսն՝ — ինչպէս շատ տըղաքներ —

Հընազանդել մօրը ի՞նչ է չէր գիտեր:

Մայրը կըսէր,

« Տըղա՛ս, տընէն դուրս մի՛ ելար

« Մի՛ մօրմէդ ո՛հ մի՛ հեռանար.

« Նայէ շունը կըսպասէ

« Որ քեզ իրեն որս ընէ: »

Որո՛ւ կըսես: — Անհնազանդ տըղաքներ՝

Կարծես անոր համար ականջնին բացեր

Որ մէկ կողմէն ինչ որ մըտնայ՝

Մէկալ կողմէն դուրս ելնայ:

Այս անհանդարտ ձագին ալ

Այնպէս եղաւ կատարեալ:

Մօրը խըրատը շուտ մոռցաւ,

Յի մը տընէն դուրս ելաւ

Ու բակին մէջ վեր ու վար
Կըցատքըռտէր կըխաղար.

Ու երբ տեսաւ
Որ թըշնամի մը չերեւցաւ,
Մըտքէն իւր մօր համար կըսէր.

« Սա պառաւներ

« Ամէն բանը սեւ կըտեսնեն .

« Մ'ելլար, մ'երթար, նըստէ՛ կըսեն .

« Իրենց նայիս՝ չորս դիդ վըտանգ,

« Ամենայն տեղ լեցուն փորձանք :

« Եւ իբրու թէ չէ բաւական՝

« Իրենք իրենց շուքէ վախնան,

« Կուզեն որ մեք ալ կտրիճներ

« Գամուխմք մընամք մեր ծակիկներ :

« Ա՛յ գարշելի պառաւներ,

« Թէ ձեզի ոյժ չէ մընացեր

« Որ մեզի պէս ցատքէք, թըռչիք,

« Է՛յ, մեզի ի՞նչ կընախանձիք .

« Կարծէք կըրնա՞ք սանձել մեր ոտքն ու ոզի՛

« Ա՛յ գարշելի.....

Խօսքը բերան՝ լըմընցնել չըկըրցաւ,

Շունը յանկարծ յարձակեցաւ,

Բըռնել խըղդել մէկ ըրաւ :

Անհնազանդ թէ այս ձագ՝

Եւ զըղջալո՛ւ իսկ չուներցաւ ժամանակ,

Բայց երբ միւս ձագն եղբօրը մահն իմացաւ՝

Հազար ու մէկ փա՛ռք տըլաւ

Որ մօր խօսքէն դուրս չելաւ :

Այսպէս նաեւ ամէնք որ մօրը խրատին

Ականջ կախեն հնազանդին՝

Ետքէն ուրախ կըլինին .
 Իսկ որոնք որ դէմ կըկենան
 Ետքը ետքը կըզըղջան :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԽԲ.

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՎԱՂԱՍԵՌԻԿ ՏԻՐՈՒՅԻՆ.

Գեղեցիկ- ծաղկոցի մէջ սպիտակափառ շու-
 շան մի կփայլէր : Մանկիկն որ տնկոյն ցօղունէն
 փոքր ինչ աւելի բարձր էր, առաւօտ մի կանուխ
 գիշերուան ցօղովը պատած գեղատեսիլ ծաղկան
 քովը գնացեր հիացմամբ կնայէր , որ նորածին
 արեւուն ճառագայթներուն վրան զարնելովը՝
 ադամանդներով զարդարուածի պէս կշողշողար :
 Այնպէս երկար ժամանակ հիացմամբ նայելէն
 յետոյ , զարմացած ու երախտագիտութեամբ լե-
 ցուած՝ սեւորակ աչուրները երկինք վերուց՝ առ
 այն որ արեւը , ցօղն ու ծաղկունքը ստեղծեր է :
 Երջանիկ ծնողքն որ իրենց ազնիւ զաւկին բարե-
 պաշտ զգացմանցը վկայ եղեր էին , սաստիկ ուրա-
 խացած՝ իրարու ըսին փսփսալով .

— Այս ծաղկին պէս գեղեցիկ ու զարմանալի ,
 մի՞թէ ինքն եւս այս շուշանին պէս անմեղուծեան
 շուշան մի չէ՞ :

Հազիւ թէ վրան տարի մի անցաւ , Տիրուհին
 վաղամեռիկ վախճանեցաւ իսուգ մեծ թողլով տա-
 րաբախտ ծնողքը . նոյն շուշանը ծաղկեցաւ նորէն ,
 տեսաւ անմխիթար մայրը , յիշեց իւր անմոռանալի

շուշանն ու ջերմ արտասուք գետորէն սկսան վերջոտին հալած աշուրներէն վազել :

Կտրտեցաւ նորէն խեղճ հօրը սիրտը, եւ այսպէս քսաւ հառաջանօք.

— Այս շուշանն որ հիմա այսպէս գեղեցիկ կտեսնես, պարտեզին մէկ ծայրը բուսած աննշան փոքրիկ տունկ մի էր երբոր արմատովը հանեցի ու բերի այս ծաղկոցիս մէջ տնկեցի. ըրածիս վրայ շատ ցաւեցաւ Տիրուհին ու շատ անգամ Ափսո՛ս, հայրիկ, կանչեց : Բայց երբոր տեսաւ որ իւր շուշանն աւելի յարմար տեղ տնկելովս՝ պարտեզին գեղեցիկ զարդն եղաւ, ուրախացաւ ու կրկին կրկին ինձ շնորհակալ եղաւ որ իւր սիրելի ծաղկին տեղը փոխեցի : Ուրեմն, դու եւս մի՛ լար, որդեսէր մայր, այլ ուրախացիր. վասն զի մեր քաղցրիկ Տիրուհին իսկ որ երկրէս փոխեցաւ, երկինքը հրեշտակաց լուսերամ դասուն մէջ սպիտակափայլ ծաղկած է իհոտ անուշից :

Մաքրուժեան շուշան հեռի յաշխարհէս
Տարեալ տընկեցաւ աջովն Աստուծոյ,
Յանձնառամ դրախտին երկնից ասպարէզ
Ուր յաւէրժ բուրէ բոյրս անոյշ հոտոյ :

Թէ Աստուծոյ սիրելի կամիս

Լինել, ո՛վ մանուկ,

Քեզ նըշանակ ընտրես ջիր

Շուշան պայծառ՝ կարմիր վարդ.

Սիրտ քո հանգոյն շուշանի

Լիցի մաքուր եւ փափուկ,

Ճակատ քոյին իբր զվարդ

Առցէ վարուք փայլ զըլարթ :

Առածք.

Չախորդուծեան մէջ բնաւ մի՛ յուսահատիր. օր մի չէ նէ օր մի բախտին մէկ ժպիտը կհասնի, տրամուծիւններդ կփարատէ :

Քանի՛ քանի՛ անգամ մահաշունչ բուռն քամիները հեզասիւզ զեփիւռին առջեւը խոնարհեցան :

Քանի՛ քանի՛ անգամ ահագին ամպերը փարատած են առանց կաթիլ մի անձրեւ իջեցունելու :

Քանի՛ քանի՛ անգամ եւ ոչ բոց ելած է այն ծուխէն, ուստի ելանելու կրակը զմեզ կսարսափեցընէր :

Ուրեմն ձախորդուծեան մէջ համբերէ. ժամանակը ծնող է սքանչելեաց :

Աստուծոյ ողորմութենէն այնչափ բարիք սպասէ զորս եւ ոչ կարող ես համբել :

Ամենէն հարուստ իշխանը.

Յր մը Ուորմս քաղաքին կայսերական պալատին մէջ Գերմանիոյ իշխանաց շատերն ժողոված իրենց երկրին մեծուծեանն ու հարստութեանը վրայ կը պարծէին :

— Մեծապանծ է, ըսաւ Սաքսոնիոյ Թագաւորը՝ իմ տէրութիւնս, իւր կորովի բնակչօքն ու լեռներովը, յորս արծաթի հանքերը կճահանչեն :

— Տեսէք, ըսաւ Հռենոսի կայսրընտիրը, տեսէք սա գեղազուարճ երկիրս, ի՞նչպէս հովտացը մէջ ոսկեփունջ հասկերը վէտ իվէտ գեղածուփ կճածանին, եւ բլրակները քաջողկոյզ այգիներ կճածկեն :

— Մեծամեծ քաղաքներովս ու բազմագանձ հանքերովս կպարծիմ, կրկնեց անդիէն Պաւերայի Լուդովիկոս Թագաւորը :

— Իսկ ես, պատասխան տուաւ Վիւրթեմպերկի Էպէրհարտ կոմսը, երկրիս մէջ ոչ արծաթի հանքեր ունիմ եւ ոչ մեծամեծ քաղաքներ : Բայց անգին գանձ մի ունիմ : Երկրիս մէջ ո՛ւր որ եւ լինի, նաեւ ծառախիտ անտառաց խորերը՝ կարող եմ աներկիւղ վստահութեամբ գլուխս հպատակացս կուրծքին վերայ դնել ու հանգիստ քուն լինել :

Այս որ լսեցին միւս երեք իշխանները, միաձայն գոչեցին. Ո՛ կոմսդ Էպէրհարտ, Թագաւորաց մէջ ամենէն հարուստը դուն ես: Երկիրդ ադամանդներ կբուսցընէ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԽԳ.

ԱՄՈՒՍԵՆԱԿԱՆ ՍԷՐ.

Մինչեւ որ Էրիկ կնիկ իրարու վերայ ճշմարիտ սէր ու համարում չունենան՝ ոչ իրենք կրնան երջանիկ լինել, եւ ոչ կարող են զաւակաց բարի օրինակ տալ, անոնց երջանկութիւնն հոգալ : Երբոր այր եւ կնոջ բնութիւնն բոլորովին իրարու յարմարի, եւ զիրար սիրեն ու պատուեն, ամուսնութիւնը նոցա համար արքայութիւն է աշխարհիս վերայ, եւ իրարու սիրոյն համար նեղութիւն ու վիշտ չկայ որ աչքերնուն երեւայ : Բայց թէ որ բնութիւննին իրարու չյարմարի, զիրար չսիրեն, իրա-

րու վերայ համարումն չունենան՝ վասն նոցա ամուսնութիւնը դժոխք է, եւ իրարու համար քաշած թեթեւ նեղութիւննին եւս ծանր ու անտանելի վիշտ եւ տառապանք կերեւան աչքերնուն : Ուրեմն ամուսնութենէ առաջ պէտք է լաւ մտածել, ամէն բան հարցունել քննել, չափել չափչփել, կշռել կշռադատել ու յետոյ իրարու հետ անլուծանելի կերպով կապուիլ. վասն զի միանգամ կապուելէն ետեւ՝ պատուաւոր արձակումն մահն է միայն : Երանելի՛ է այն էրիկ մարդն որ իրեն ընկեր անձնանուէր ու պարկեշտասուն կին մի գտեր է. պէտք է լաւ գիտնայ նորա յարգն եւ իբրեւ դժուարագիւտ գանձ պահպանէ մեծաւ խնամօք, սիրով ու հաւատարմութեամբ :

Մանկամարդ ու չքնադագեղ Հայ տիկնոջ մի հարցունցին մեր առջեւը թէ ինչո՞ւ համար երկրորդ անգամ չկարգուիր, եւ իւր հասակին գեղածիծաղ օրերն այսպէս տխուր այրիութեան մէջ կանցունէ. « Իմ ամուսինս ուրիշներուն համար միայն մեռած է, ինձ համար կենդանի է, եւ միշտ կենդանի պիտի մնայ » պատասխանեց ամուսնասէր Հայուհին :

— Դիոնեսիոս բռնաւորին քոյրը թեսկա, Սիրակուսացի ազատամիտ ազնուականի մի հետ կարգուեր էր, որ մէկ քանի ազատախօսութեանցը համար իւր աներձագին վրէժխնդրութենէն վախնալով կփախչի : Դիոնեսիոս այս բանիս վերայ կբարկանայ եւ զքոյրը իբրեւ կամակից փախստական էրկանը՝ կյանդիմանէ : « Բռնաւոր, կպատասխանէ թեսկա, զիս այնչափ վա՛տ կկարծէիր որ եթէ էրկանս դիտաւորութիւնը գիտնայի՛ ամէն բան ջլծողուի հետը չփախչէի : »

— Պորտիա, դուստր Կատոնն Ուտիկեցւոյն եւ կողակից հռչակաւոր հայրենասէր Բրուտոս Հռովմայեցւոյն, տեսնելով իւր էրիկը մտախոհ եւ մտայոյզ, եւ գիշերները նորա տագնապն ու հեղձամրդձուկ հառաչանքը դիտելով կգուշակէ որ մեծ ու վտանգաւոր բանի մի ձեռք պիտի զարնէ եւ իրմէ կպահէ. եւ յիրաւի, Բրուտոս զԿեսար մեռցունելու դժուարին հնարքը կմտածէր : Կեսարին սպանութեան նախընթաց առաւօտը Բրուտոս խիստ կանուխ սենեկէն դուրս կելլէ. ետեւէն կելլէ նաեւ այրասէր Պորտիա, ածելի մի կառնու, ինքզինքը կվիրաւորէ ու կմարի գետին կիյնայ : Կանանց իրար անցումն ու վայնասունն որ կլսէ Բրուտոս, սարսափած վեր կվազէ եւ կտեսնէ իւր արիւնլուայ կողակիցն որ իրեն կասէր. « Սիրելի՛ ամուսինս, ուզեցի քաջութիւնս փորձել : Թէ որ բախտը միտքդ ունեցած խորհուրդդ չպսակէ՛ բնաւ մի՛ վախնար, վասն զի Պորտիա ետեւէդ պիտի գայ : » Այս ամուսնասէր ու վսեմախոհ կինը Բրուտոսին մեռնելէն յետոյ չափ չդրաւ իւր ցաւոցը . եւ երբոր իրեն կասէին. « Լալէն ե՛րբ պիտի դադրիս : — Երբոր մեռնիմ » կպատասխանէր :

— Յգոստոս կայսեր մահուանէն վերջն երբոր իւր Լիվիա կնոջը կհարցունէին թէ ի՛նչ հնարքով կրցեր էր իւր ամուսնոյն սիրտը բոլորովին իրեն գրաւել, կպատասխանէր. « Ամենապարզ հնարքով. զինքը միայն սիրեցի, բոլոր փափաքները գուշակեցի ու կատարեցի, ամէն բանի մէջ իւր կամքն ըրի, ոչ երբէք հետաքրքրութեամբ ուզեցի իմանալ իւր գործքն, եւ ինձ դէմ ըրած յանցանքներուն բերանս չբացի՛ իբրեւ թէ չգիտցած լինէի : »

— Սենեկա իմաստասիրին կինը Պաւլինէ չուզեց իւր էրկանը մահուանէն յետոյ ապրիլ, եւ անոր պէս ինքն եւս երակները քանալ տուաւ որ մեռնի : Բայց ներոն կայսրն իմանալով մարդ ղրկեց որ ջթողուն . եւ Տակիտոս լատին պատմագիրը կասէ թէ Պաւլինէ չմեռաւ, սակայն այնուհետեւ երեսին վերայ այնպիսի մեռելատիպ դեղնուծիւն մի եկաւ, որ փառաւոր վկայութիւն եղաւ իւր ամուսնոյն վերայ ունեցած ողջախոհ անմոռաց սիրոյն :

— Անգղիոյ Թագաւորը Գուլիէլմոս Աշխարհակալին որդին Հռոբերտոս իրեն հարս առեր էր Սիբիլա իշխանուհին : Պատերազմի մի մէջ Հռոբերտոս Թունաւոր նետով կվիրաւորուի եւ բժիշկք կասեն որ եթէ մարմնոյն մէջ մտած թոյնը ծծել չտայ՝ կմեռնի : « Թո՛ղ մեռնիմ, գրուցեց Հռոբերտոս. ոչ երբէք կրնամ յանձն առնուլ որ ինքզինքս ապրեցունելու համար ուրիշը մեռնի. ո՛չ, այնպիսի անգուժ եւ անիրաւ խորհուրդ եւ ոչ կուզեմ մտածել : » Քնացած ժամանակը Սիբիլա վերքը ծծեց, եւ էրկանը կեանքն ազատելով իւր կեանքը կորսընցուց :

— Գաղղիոյ խռովութեան ժամանակ Լըֆօր անուսով մէկը բանտ կղնեն : Կինը շատ ստակ կերցունելով՝ զինքը տեսնելու հրաման կառնու. մուտը կոխելուն պէս կվազէ կերթայ բանտը՝ կրկին հագուստ հետը տանելով, եւ էրիկը կհամոզէ որ իւր զգեստն հագնի եւ բանտէն ելլէ փախչի : Յանձն կառնու Լըֆօր, կազատի, եւ երկրորդ օրը միայն կիմացուի իւր ծպտեալ փախուստը : Դատաստանի մէջ երբոր կհարցանէ դատաւորն. « Ողորմելի՛, ի՞նչ ըրեր ես. » քաջութեամբ պատասխան կուտայ

Լըֆօրին անձնանուէր կինը. « Իմ պարտքս. դու եւս քոյդ ըրէ: » եւ այս քաջասիրտ պատասխանովը բանտէն կելլէ:

ԸՆԹԵՐՅՈՒՍԹ ԽԳ.

ՊԱՐՏԵՁ.

Պ. Վահանը գեղեցիկ պարտէզ մի ունէր՝ գոյնը գոյն ծաղկօք զարդարեալ. որդին Սմբատ անդադար կերթար զանոնք կղիտէր եւ վրանին կզմայլէր: Դեռահասակ որդւոյն այս փափաքը տեսնելով Պ. Վահան անոր ածու (Թարլա) մի տուաւ, որ ուզածին պէս տնկելով մշակելով զուարճանայ: Մէկէն նոր պարտիզպանն ածուն մաքրեց, շտկրտեց, ու չորս կողմը գարնանաբեր ծաղիկներ տընկեց, որ բացուելու վրայ էին:

Քանի մի օր միակերպ անձրեւ գալէն յետոյ օդը բացուեցաւ, եւ հայրն ու որդին պարտէզ իջան: Զարմացաւ մնաց Սմբատ՝ այն գարնանաբերներուն բացուած կարմիր դեղին ու սկեգոյն ծաղկունքն որ տեսաւ. բայց անպատմելի եղաւ սրտին ուրախութիւնն՝ երբոր այն ծաղկանց մէջ մատղաշ կանաչագեղ տերեւներէ հիւսուած գրերով իւր անունն աչքին զարկաւ:

Սաստիկ ուրախութենէն փոքր մի ժամանակ անբարբառ մնալէն յետոյ, գոչեց.

— Ի՞նչ կտեսնեմ՝ իմ անունս գետնէն բուսերելեր է: Սիրելի հայրիկ, ասա ինձ, թէ ո՞րպէս այս

խոշոր ու գեղեցիկ գրերը գետնէն բուսեր են :

Պ. Վահան ժպտելով պատասխանեց. — Ձե՛ս կարծեր որ ինքնիրեն եղած լինին : Թերեւս հովէն հունտերն այն ձեւով ընկեր ու բուսեր են :

— Ոչ, ոչ, հայրիկ. անկարելի է այդ : Հասկացայ, հասկացայ. այն գրերն ածուխ մէջը փորելով ձեւացուցեր ես, մէջերնին կոտեմի (թէրէ օթու) հունտ ցաներ, յետոյ վրանին հողով ծածկեր ես որ այս քաղցրիկ բոյսերն այսպիսի գեղեցիկ կարգով ծլեր են. ասոր այսպէս լինելուն տարակոյս չունիմ : Ուրեմն շիտակն ասա, հայրիկ. մի՛թէ ինձ յանկարծական ուրախութիւն մի պատճառելու համար չըրի՞ր այս բանս :

— Այո, որդեակ, պատասխանեց Պ. Վահան : Ուրեմն ստոյգ գիտես որ ես ըրեր եմ այն գրերը : Արդ տես սա ածուիդ բոլորտիքը բացուած գունագեղ ծաղկունքը. մի՛թէ այս գրերէն շատ աւելի ճարտարարուեստ կերպով ձեւացած ու հրաշալի կերպով նկարուած չե՞ն : Մի՛թէ չկա՞յ գերագոյն էակ մի, ամենիմաստ զօրութիւն մի որ այս գեղատեսիլ ծաղկունքն այն փոքրիկ հատիկներուն մէջ պահէ ու ժամանակին այսպէս բուսուցանելով մեր աչքին երեւցունէ : Մի՛թէ չկա՞յ սիրալիր ու բարեգուծ սիրտ մի, որ մարդկանց զուարճութեանը համար այս գեղեցիկ ու գոյնագոյն ծաղկունքը կբուսցունէ :

Հագիւ թէ հայրը խօսքն աւարտեց, բռնեց Սմբատ նորա ձեռքն ու կանչեց. — Ո՛հ, սիրելի հայրիկ, արդ որպէս պէտք է հասկացայ. Աստուած ըստեղծած է թէ՛ այս եւ թէ՛ պարտեզին մէջի բոլոր գեղեցիկ ծաղկունքը, որպէս զի ցուցանէ մեզ թէ ո՛րչափ կսիրէ զմեզ :

— ձշմարիտ է, որդեակ, կրկնեց Պ. Վահան. ծաղկօք լի պարտէզնիս մեծ գիրք մի է, եւ անոր ամէն մէկ թերթին վրայ կրնամք կարդալ թէ ո՛րչափ կը սիրէ զմեզ Աստուած, ո՛րչափ բարեգուծ է, հզօր եւ իմաստուն :

Երկինք երկիր եւ արարածք համօրէն

Զիմաստուծիւն Հաստչին եւ զսէր քարոզեն :

—

Աստեղք իյերկինս ու յերկրի ծաղկունք,

Սոքին զուտ բուրմունք, նոքին համակ լոյս :

Քո ձեռաց են Տէր անթիւ ձեռատունկք

Եւ ցանգ ասեն մեզ, « Ի նա դիք ըզլոյս : »

ՀՈԳԻ.

Գեղեցիկ հոգի մի աւելի դիւբազգած է երախտեաց քան թէ նախատանաց :

Մեծ ու վեհ հոգին փոքրիկ առիթ որ գտնէ՝ դէպ առաքինութիւն կ'թռչի. իսկ ցած հոգին առաքինութենէ կ'հեռանայ եւ սողալով զեռալով իւր պարտուցը կ'երթայ :

Հոգւոյն զօրութեանը միակ փորձիչ մեծամեծ ձախորթութիւնքն են :

Հոգւոյն մեծութիւնն այն է որ գիտնայ ինքզինքը յաջող եւ անյաջող դէպքերէն վեր բարձրացընել :

Թէպէտ ջրէն հեռու մեծցած կարապի (թօյ) ձագը ջրին ի՛նչ բան լինելը լաւ չկրնար գիտնալ, բայց բնութիւնը կզգայ անկէց զրկուած լինելը, եւ կը տկարանայ, կ'հալի կմաշի. երբեմն տագնապած պտըտիլը, շատ անգամ վիզն ոլորելով տրտում տխուր թեւերուն մէջ ծածկելը, ու փետուրներուն

դեղնուժիւնը բաւական կցուցանեն թէ վախճանին հասած չէ: Այն վիճակին մէջ հոտած ճահիճ մի եւս որ գտնէ, մէկէն մէջը կնետուի ազնիւ թըռչունը, եւ տղմին մէջ լողալով աղտոտ գարշելի բան կդառնայ: Բայց տուր անոր կենդանի ջրոյ աղբիւր մի, թող յաղթաջուր գետին ալիքը վրան զարնելով ոյժը տեղը բերեն, այն ժամանակ կտեսնես թէ կարապն ի՞նչ է: Քանի մի օրուան մէջ իւր ձիւնափայլ ճերմակուժեամբը, վայելչագեղ ու վսեմ կերպովը, արագ շարժմունքովը կցուցանէ քեզ իւր բնուժիւնը եւ թէ մեծանալուն, զօրանալուն եւ փառաւորուելուն ի՞նչ բան պակսեր էր:

Այսպէս է նաեւ մեր հոգին:

ԱՌԱԿՔ.

— Զար խորհուրդք միշտ դուռը բանալու կջանան: Գլուխնին դեռ ներս չխոթած նայէ որ մէկէն դուռը վրանին գոցես:

— Կինը ծեծողն՝ աջ ձեռքովը ձախ ձեռքը կծեծէ:

— Որուն սրտին մէջ որ ոսկին կբնակի, Հաւատք, Յոյս եւ Սէր դուռը կպտըտին:

— Աղքատին սեղանին վերայ անանաս գտնուելուն պէս սակաւագիւտ են չգլորող ծեր ձին, ամենեւին չխաբող վաճառականը, սուտ ջասող վհուկը (Ֆալճը գարը), եւ մատուրներուն վերայ չզարնող տակառագործը (Փըչըճը):

— Քանի որ գաղտնիքս ուրիշի չեմ յայտներ, բանտարկեալ գերիի մի պէս քովս կկենայ. բայց երբոր ուրիշի զայն յայտնեմ, ես անոր գերին լինիմ:

Ս.Ռ.ԱՄՈՒՆՈՒԹԻՒՆ.

Ս.Ռ.ԱՄՈՒՆՈՒԹԻՒՆՆ արքայավայել առաքինու-
 Թիւն է կասէր Պարսից Կիւրոս Թագաւորը, եւ
 ինքն հարստանալու տեղ՝ իւր հպատակները կնա-
 յէր որ հարստացունէ : Յը մի Լիւդացւոց Կրեսոս
 Թագաւորն իրեն զրուցեց . « Այսպէս ուրիշներուն
 տալով տալով դուն պիտի աղքատնաս, որ եթէ ու-
 զես՝ կրնաս աշխարհիս ամենէն հարուստ Թագա-
 ւորն լինել : » Հարցուց Կիւրոս . « Այն ժամանակ
 ո՞րչափ ստրկի տէր կարէի լինել : » Կրեսոս մտա-
 ծեց, ջափազանց գուժար մի ասաց : Կիւրոս մէկէն
 փոքրիկ տոմսակ մի գրեց իւր իշխաններուն, իմա-
 ցուց որ ստակի կարօտութիւն ունի . իսկոյն Կրեսո-
 սին զրուցածէն աւելի բերին Կիւրոսի . « Ահա իմ
 գանձերս, ասաց Կիւրոս Կրեսոսին . ահա այն սըն-
 տուկներն որոց մէջ իմ հարստութիւններս կպահեմ՝
 որ հպատակացս սիրան ու սէրն են : »

ԸՆԹԵՐՅՈՒՍԹ ԽԵ.

ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ.

Երանի՛ ողորմաց, զի նորա ողորմութիւն գտցեն : ԱԻԵՏԱՐԱՆ.
 Զողորմութիւն կամիմ եւ ոչ զզոյ : ԱՆԴ.

Յորժամ ողորմութիւն առնիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ
 աջ քո, որպէս զի եղիցի ողորմութիւն քո իճաճուկ, եւ հայրն քո որ
 տեսանէ իճաճուկ՝ հատուցէ բեզ յայտնապէս : ԱՆԴ.

Տուք ողորմութիւն, եւ ամենայն սուրբ է ձեր : ԱՆԴ.

Երանի է մանաւանդ տալ բան առնուլ : ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ.

Տուած ժամանակդ յամբ եղիր անլիզու. իսկ առած ժամանակդ լի-
 զուանի : ԱՌԱԿ ՍՊԱՆԻԱՅԻՈՅ.

— Իմաստնոյն մէկը կմեղադրէին անպիտան մար-

դու մի ողորմութիւն տալու համար : « Իւր խեղճութեանը տուի ողորմութիւնս , պատասխանեց , եւ ոչ թէ իւր անձին : »

Իմաստնոյս պէս պէտք է մտածեն ամէն ողորմութիւն տուողները , վասն զի Քրիստոսի է տուածնին եւ ոչ մարդու :

— Գաղղիոյ կայսր մեծին Կարոլոսի կուգան եպիսկոպոսի մի մահը կիմացունեն : Կհարցանէ թէ մեռնելու ժամանակ աղքատաց ի՞նչ ձգեր է , եւ կասեն թէ տասը ֆրանք թողուցեր է : Հոն կեցող կղերիկոսը զայն որ կլսէ , « Այնպիսի երկար ճանապարհի համար այդ ոչինչ պաշար մի է » կզրուցէ : Այս խելացի խորհրդածութեան կհաւանի կայսրն ու վախճանելոյն եպիսկոպոսութիւնն նմա կշնորհէ պատուիրելով « Զրուցածդ երբէք չմոռանաս , եւ աղքատաց նախորդէդ աւելի տուր դուն որ նորավարմունքը պախարակեցիր : »

— Մովիէր , Գաղղիացոց անուանի կատակերգակ քանաստեղծը , օր մի իւր բարեկամին հետ գեղէն կդառնար : ձամբան աղքատ մի կուգայ իրմէն ողորմութիւն կուզէ : Մովիէր ձեռքը գրպանը կխոթէ , ստակ մի կհանէ կուտայ ու ճամբան կշարունակէ : Աղքատը կնայի որ տուածն ոսկի է , շուտ մը ետեւէն կվազէ որ ետ դարձունէ . « Տէր , կասէ , սխալեր ինձ քսան ֆրանքնոց ոսկի մի տուեր էք : »

Աղքատին այս արդարասիրութեանը վերայ սաստիկ կզարմանայ Մովիէր , գրպանէն ուրիշ ոսկի մի եւս կհանէ , եւ նմա տալով կասէ իւր բարեկամին . « Տե՛ս , մինչեւ ո՛ւր տեղուանք կերթայ կծածկուի առաքինութիւնը :

Վարդուհի եւ Տիգրանուհի.

Աղքատ պարտիզպանի մը Վարդուհի անունով աղջիկն հիւանդ պառկած էր. Տիգրանուհին որ գեղի գգիրին դուստրն էր, ամէն օր իրեն գաւաթ մի մսի ջուր կբերէր, որովհետեւ խեղճն ուրիշ բան չէր կարող ուտել:

Երբոր Վարդուհին առողջացաւ, զրուցեց ինքն իրեն.

— Հիւանդութեանս ժամանակ ո՛րչափ վրաս գութ ունեցաւ այն սիրելի օրիորդն. մսի ջուրն միշտ անձամբ կառնուր կբերէր: Ո՛ւր էր թէ կարենայի իրեն մէկ մեծ ծառայութիւն մի ընել, կամ գէթ փոքրիկ զուարճութիւն պատճառել:

Օր մի իմացաւ որ Տիգրանուհին ախրիզան ծաղիկը շատ կսիրէ. մայիս ամսոյն առաջին օրէն սկըսեալ ամէն առաւօտ անտառը կերթար ախրիզան փնտռելու, որպէս զի իւր բարերարին փունջ մի շինէ անկից: Երկար ժամանակ փնտռելէն յետոյ անտառին խորը հինաւուրց կաղամախի քով առատ ախրիզան գտաւ. նստաւ գեղեցիկ փունջ մի շինեց, դալար տերեւներով պատեց, եւ ուրախութեամբ ճամբայ ելանելու որ կպատրաստուէր, յանկարծ երկու աւազակի ձայն առաւ, որ մօտակայ թուփերուն մէջ պահուրտած՝ իրարու հետ կը խօսէին:

— Վերջապէս ժամանակն եկաւ, կասէր անոնցմէ մէկն, որ եղբօրս բանտարկութեան վրէժը գգիրէն առնում. ահա տանը բանալին, աղախինը դուրս ելանելու ժամանակ վրան մոռացեր էր:

— Նատ բարի, պատասխան տուաւ անոր ընկերն,
այս երիկուն կերթամք գգիրը, կինն ու աղջիկը
կսպանանեմք, ստակներն եւս կառնումք կերթամք:

Վարդուհին սարսափած՝ կամացուկ ելաւ փա-
խաւ, տարաւ շինած փունջը Տիգրանուհւոյն տը-
լաւ ու չարագործաց խօսակցութիւնն անոր պատ-
մեց: Իրիկուան դէմ գգիրը ծածուկ բազմաթիւ
զինեալ մարդ բերաւ տանը մէջ պահեց: Կէս գեշեր
լինելուն պէս՝ յիրաւի աւազակներն եկան, դուռը
բացին. բայց երկուքն եւս բռնուեցան, եւ իրենց
յանցանքին համեմատ պատժուեցան:

Այն ժամանակ գգիրն ասաց իւր աղջկանը. — Սի-
րելի որդեակ, ըրած ողորմութեամբդ Աստուծոյ
օրհնութիւնը մեր տանը վերայ իջաւ: Դուն խեղճ
Վարդուհին դոյզն մսի ջրով առողջացուցիր, եւ
նա Աստուծոյ ողորմութեամբն ամէնքնիս ազատեց
մահուանէ:

Մի' թըշուառին հաց զըլասցիս

Յորժամ իքէն հայցիցէ.

Դուցէ վաղիւ նովիմք զերծցիս

Յանձկութենէ ինչ մեծէ:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԽԶ.

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

Որչափ որ մեր երիտասարդութեանը մէջ բարի
գործքեր ընեմք, այնչափ եւ մեր ծերութեան ժա-
մանակ քաղցրութիւն ու մխիթարութիւն կունե-
նամք:

Մարդուս կեանքը օրագիր տետրակ մի է. մէջը բարի գործքեր միայն գրելու է :

Բարի գործ մի սրտանց գովելը՝ անոր մասնակից լինել է :

Մարդուս իւր զաւակացը թողած ժառանգութեանց մէջ ամենէն բազմագանձն ու անկորնչելին է իւր առաքինութեանցն ու բարի գործոցը ժառանգութիւնը :

Այսօր ընել կրցած բարի գործդ վաղուան մի՛ թողուր :

Ամենէն պատուական ու արդիւնաւոր բարի գործերն են ամենէն աւելի ծածուկ եղածները :

Բարեգոծութեան յիշատակին պէս քաղցր բան չկրնար լինել :

Մարդ իւր բարեգործութեանց պտուղը կկորսընցունէ երբօր ինքը կսկսի զանոնք գովել :

ԲԱՐԵԳՈՐԾԲ ԵՒ ԲԱՐԵՐԱՐԲ.

Բարեգործ մահկանացու մի ճշգրիտ պատկեր է Աստուծոյ, որ մարդկան բարիքն ու երջանկութիւնը կուզէ : Սկիւթացիք իՄեծէն Աղեքսանդրէ հալածուելով իխորս անտառաց եւ ժայռից, զրուցեցին իրեն որ ինքզինքն Արամազդ-Ամմոն կանուանէր. « Դուն աստուած չե՛ս, որովհետեւ մարդկան չարիք կրնես : »

— Հռովմայեցւոց Տիտոս կայսրը բարեկամացը հետ սեղան նստած կերակուր ուտելու ժամանակ միտքը կուգայ որ այն օրը մէկուն բարիք չէր ըրած. սաստիկ կտրտմի եւ կասէ սեղանակցացն. « Ա՛հ, բարեկամք, այս օրս ինձ համար կորսուած օր մի է, վասն զի մարդու բարիք չկրցայ ընել : »

— Օր մի Անգղիոյ Կարոլոս ե թագաւորին սիրելի իշխանը Լա Ռիվիէր իւր երջանիկ թագաւորութեան վերայ խօսելով՝ նմա երանի կուտար. « Այո՛, երանելի եմ, ասաց Կարոլոս, որովհետեւ ուրիշի բարիք ընելու կարողութիւն ունիմ : »

— Մէկուն ըրած չարեաց փոխարէն բարիք հատուցանելուն պէս փառաւոր յաղթութիւն չկարէ լինել : Գաղղիոյ Հենրիկոս Դ թագաւորին երբոր կասէին թէ այս ինչ թշնամիդ այնչափ բարիքովայելեց եւ քեզի դէմ թշնամութիւն ընելէն ու զքեզ ատելէն չդադարիր, կպատասխանէր. « Իրեն այնչափ բարիք պիտի ընեմ որ զիս սիրելու պիտի բռնադատեմ : »

ՄՈՆԹԻՈՆ.

Գաղղիոյ եւ աշխարհիս ամենէն մեծ բարերարաց մէկն է Մոնթիոն հարուստ իշխանն ու երեւելի գիտնականը, որ բոլոր կեանքը բարերարութեամբ անցուցած է : Սքանչելի էր իւր խոնարհամտութիւնը, որով եւ իւր անթիւ բարեգործութիւնքն անծանօթ անանուն կմնային. վասն զի լաւ հասկացած էր նաեւ Քրիստոսի Տեառն մերոյ այս սրատուիրանն. « Ողորմութիւն ըրած ժամանակդ՝ եւ ոչ ձախ ձեռքըդ պէտք է գիտնայ աջ ձեռքիդ ըրածը, որպէս զի ողորմութիւնդ ծածուկ լինի, եւ Հայրն (Աստուած) քո որ ծածուկ կտեսնէ՝ քեզ յայտնապէս հատուցանէ : »

Զարմանալի հարստութեանը հետ զարմանալի էր նաեւ Մոնթիոնի պերճութեան վերայ ունեցած արհամարհութիւնը : Զափաւորուած էին ամէն պիտոյ-

քր. կերակուրն էին ընդեղէնք, պտուղք եւ կաթնեղէնք: Այսպիսի ժուժկալուծեամբ կեանքն երկնցաւ հոգւոյն զուարթութիւնն անայլայլակ մնաց, եւ բարեգործութեանց թիւն՝ եւս քան զեւս բազմացան:

Բեռնաւորեալ ամօքեւառաքինութեամբք զուարթամիտ հասաւ Մոնթիոնն այն մահազեկոյծ վայրկենին՝ որ իմաստնոյն համար գեղեցիկ օրուան մի երեկուն է, եւ իմաստուն քրիստոնէի համար արշալոյս աներեկ օրուան: Գերեզմանէն ելան իւր բիւրաւոր բարեգործութեանց գաղտնիքը: Կտակէն իմացուեցաւ ի՛նչ կերպով իւր կեանքն անցունելը, եւ թէ ի՛նչ մեծ զօրութիւն ունի իմաստուն խնայողութիւնը բարիք ընելու: Իւր կենդանութեանը ժամանակ այնքան բարիս գործելէն յետոյ, յետ մահուանը կտակաւ թողուց Փարիզու հիւանդանոցաց երեք միլիոն ֆրանք. մեծ գումարներ շնորհեց նաեւ նոյն քաղաքի գիտութեանց ձեմարանին եւ գաղղիական ձեմարանին, որպէս զի ամէն տարի վարձատրեն մարդկութեան եւ բարոյականի օգտակար գրքերն, ու առաքինական գործքերը:

Մեր ազգին մէջն եւս եթէ ոչ ըստ ամենայնի, գոնէ ըստ բազում գլխոց Մոնթիոնի հաւասարողներ ու բարենախանձ նմանողներ եղեր են, որպէս Պեզնեան Յարութիւն, Սամուէլ Մուրատ, Ռաֆայէլ Դարամեան, Լազարեան իշխանք, եւ մեր օրերը Խալիպեան Յարութիւն իշխանը, որոց բարերարութեանց յիշատակն իրենցմէ բարերարեալ Հայոց ազգին անուանը պէս անմահ պիտի մնայ ազգաց յազգս:

ՍՈՒԱԿ ԵՒ ԱՐԾԻԻ.

Ձեռքէն եկած ընել բարիք'
 Են պարտական ամէն մարդիկ,
 Մեծ ու պրզտիկ
 Հարուստն աղքատ միշտ անխըտիր. —
 Բրած բարիք չըկորսըւիր :

Յր մը բազէն
 Կատղած քաղցէն,

Յարձակեցաւ իբր ըզկայծակ
 Յանպատըսպար իմէկ սոխակ,
 Եւ երբ մագլացը մէջ ճանկեց'
 Սոխակն այնպէս ողբով ճըւեց,
 Որ արծուին մէկ, ոյր հո'ն էր բոյն'
 Շարժեցաւ սիրտ, վազեց իսկոյն,
 Հասաւ զբազէն հալածեց,
 Ու ըզսոխակն ազատեց :

Խեղճ մեր Թըռչնիկ' խոնարհաբար
 Շընորհակալ արծւոյն կըլլար,
 Խոստանալով բոլո'ր կեանքին
 Երախտագէտ լինել նըմին :

« Ձեռքէս, կըսէր, ինչ դուզնաքեայ

« Ծառայութիւն մի որ կուգայ,

« Պատրաստ եմ ես բոլորով

« Քեզ նըւիրել զայն սիրով :

Արծիւ ժըպտեցաւ

Ու բոյնը դարձաւ :

Յր մ'որ երկնից անդ իկամար կապուտակ'
 Ճահանչագեղ փայլատակէր արեգակ,
 Արծւոյն աշխոյժ արծարծեցաւ եռանդուն,

Սլացաւ վրսեմ իմէջ օդուն,
 Ու զայերաց պատառելով ալիքներ'
 Զըւարճանայր երկար ժամեր :
 Բայց վերջապէս թեւերն յոգնած'
 Կամաց կամաց վար իջանէր անկասկած,
 Որսորդին մէկ որ թըփոց մէջ պահուրտեր'

Զայն կըսպասէր,

« Ահա ատե՛նն է, » ըսաւ :

Եւ երբ յարծիւ նըշան առաւ,

Եւ ըզհրացան իւր մահաբեր

Պիտի պարպէր,

Յանկարծակի ձայն մը ելաւ,

Բան մը ճակտին զարնըւեցաւ.

Քրստմընեցաւ

Ու ձեռքերէն

Հրացան մէկէն

Գըլտորեցաւ,

Արծիւ մահէն ազատեցաւ:

Ո՞վ էր նորայն ազատարար յայն աղէտ.

— Մեր սոխակիկն երախտագէտ,

Որ տեսանելով զորսորդ՝ զարնել պատրաստ Լած՝

Մահուան վրտանգ աչք առած,

Վազեց ըզնա շըփոթեց,

Եւ արծւոյն կեա՛նք պարգեւեց :

Ըրէ՛ք բարիք

Նաեւ ուսկից յոյս չունիք.

Յոր մը արծւոյն պէս վրտանգէն կազատիք :

ՄԱՍՆ ԶՈՐՐԱՐԴ

Խ Ա Ռ Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ա.

Մ Ա Ր Դ .

Մարդս անասնոցմէ ոչ միայն իւր խելքովն ու բանականութեամբը կտարբերի, այլ եւ մարմնոյն գեղեցիկ ու գեղապատշաճ կազմութեամբը: Երկու ոտքի վերայ կենալովը՝ ձեռուրներն ազատ կմնան եւ ամէն պիտոյքը կլեցունեն: Մատուրներն երկայն են, բազմաթիւ, դիւրադարձ, դիւրաշարժ, եւ ծայրերնին տափակ ըղունգներով պաշտպանուած. բոյժը կամ բուծամատն որ ամէն կողմ կդառնայ կշարժի, թէպէտ միւս մատերէն կարճ է, բայց անոնց ամենուն առջեւը դրուելով՝ կարող է ամենափափուկ եւ ամենափոքրիկ առարկաները բռնել շօշափել: Զեռաց մարդուս ո՛րչափ օգտակար լինելը չեմ կարող ասել. ձեռքով է որ մարդ իւր մարմինը կհոգայ, գիր կգրէ, կնկարէ, կգծագրէ, կար կկարէ, ձիեր կսանձէ ու կկառավարէ, երկիր կմշակէ, կսերմանէ, կհնձէ, եւ ամէն տեսակ ար-

հետաներ կրնէ : Մարդուս ձեռքով ըրածին ո՞ր մէկն յիշեմ :

Գրեթէ ամենայն կենդանիք ձայն ունին , եւ այն ձայնը մեքենական է եւ միշտ մի եւ նոյն . օրինակի համար շունը կհաջէ , աղուէսը կաղկանձէ , գայլը կոռնայ , առիւծը կմռնչէ , կատուն կմլաւէ , ոչխարը կմայէ , կովը կբառաչէ , ագռաւը կգոգռայ կը կռնչէ , կաքաւը կկրկջէ , ճնճղուկը կճռուողէ , սոխակը կերգէ , դեղձանիկը կդայլայլէ , գորտը կը կարկաչէ . ամէնքն իրենց համար յատուկ ձայն ու հնչիւն ունին , եւ նոյնը միշտ կպահեն անփոփոխ : Մարդս միայն կարող է խօսիլ , այսինքն խաղուն յօդաւոր ձայն ունի . անով ամէն ուզածը կխօսի , ամէն ուզած ձայնն ու եղանակը կհանէ կերգէ : Խօսքով է որ ուրիշներուն կհաղորդեմք մեր խորհուրդները , մեր փափաքներն եւ մեր ախորժելի ու անախորժ զգացմունքները : Թէոր խօսիլ կարող չլինէինք , չէինք կրնար բժշկին հասկացունել ունեցած ցաւերնիս , եւ բժիշկը չէր կարող զմեզ բժշկել :

Մարդս որ Աստուծոյ արարածոցը մէջ ամենէն կատարեալն է , կարող է աւելի եւս կատարելագործուիլ . միտքը կկրթուի , կզարդարուի , կլուսաւորի . գաղափարներն ու մտածմունքը կընդարձակին , բնաւորութիւնը կշտկուի , սիրտը կազնուանայ , գիւտեր կգտնէ , զանոնք նշաններով , խօսքով եւ գրուածքով ուրիշներուն կհաղորդէ , եւ ըստ պարագայից եւ հանգամանաց տեղւոյ եւ ժամանակին՝ սովորութիւններն ու կերակուրը կփոփոխէ : Մարդս ուրիշներուն փորձառութենէն ու գիտութենէն օգուտ կքաղէ . նախնեաց գիւտերուն ու դիտողու-

Թեանց եւ զննութեանց վերայ իրեններն եւս կաւել-
ցունէ եւ յաջորդաց կաւանդէ. եւ այսպէս կը-
զարգանան կկատարելագործուին արուեստք եւ
գիտութիւնք, եւ մարդիկ զիրար կկրթեն կհրահան-
գեն, կուսուցանեն ու կկատարելագործեն :

Աստուծոյ մարդուս ըրած բարիքն անբաւ են.
ուստի պէտք է ճանաչեմք զանոնք եւ իլան գոր-
ծածելով ցուցանեմք թէ արժանի էինք եւ եմք այն
մեծ շնորհաց, եւ երախտագէտ սրտիւ գոհութիւն
մատուցանեմք մեր բազմագուծ Յստղծողին :

ԸՆԹԵՐՅՈՒՄԾ Բ.

ՄԱՐԴՈՒՍ ՄԱՐՄԻՆԸ.

Մարդուս մարմինն, հոգւոյ այն հրաշալի գործի-
քն, կազմուած է հաստատուն եւ հեղուկ մասերով :
Այս այլ եւ այլ մասունքն այնպիսի ճարտարու-
թեամբ իրարու հետ միացած են, եւ այնպիսի ան-
վրէպ ճշդութեամբ իրենց պաշտօնը կկատարեն,
որ եթէ փոքր մի դիտեմք՝ չեմք կարող Արարչին
անզուգական իմաստութեանն ու կարողութեանը
վերայ չհիանալ ու չփառաբանել զայն :

Մարմնոյն հաստատուն մասունքն են ոսկերք,
որ իրարու հետ կապուած են յօդերով (օյնագ) եւ
աճառներով կամ կռճիկներով, եւ ձեւերնին կա՛մ
տափակ է եւ կամ խողովակաձեւ : Այս ոսկերաց
շատին մէջը պարապ է եւ ծուծ (իլիք) լեցուն :

Ակռաներն կամ ատամունք եւս մասն են ոսկե-

րաց : Մարդուս երեսն երկու ծնօտ կամ ծամելի (չէնէ) ունի . իւրաքանչիւր ծնօտն ունի տասնըվեց ակուայ, որով եւ ամբողջ ծամելիքն ունին երեսունուերկու ակուայ :

Մարդուս տղայութեան ժամանակ ոսկորները կակուղ են եւ աճառային . հետզհետէ կայնդանան կկարծրանան, եւ տասնեւհինգերորդ եւ երբեմն քսաներորդ տարին հազիւ իրենց կատարեալ պնդութեանն ու կարծրութեանը կհասնին : Ծերութեան ատեն կարծես թէ կպարպուին կթեթեւան, դիւրաւ կկոտրուին ոսկերք . ուստի ծերք՝ երիտասարդներէն աւելի պէտք է զգուշանան իյնալէն :

Մարմինը ջղերու (սինիր) ձեռքով կընէ իւր ամէն շարժմունքը, որ իւր ուզածին պէս կերկըննան ու կկարճանան :

Թէ՛ մարդուս եւ թէ՛ տաք արիւն ունեցող կենդանեաց սիրտն է՛ ջղոտ մսի կտոր մի . մէջը պարապ է, եւ չորս մեծ խոռոչ կբաժնուի . այս խոռոչներն իրարու հետ կհաղորդուին, եւ շնչերակաց (շահ տամար) ձեռքով արիւնը մարմնոյն ամէն մասունքը կտարածեն, զոր յետոյ երակք (տամար) նորէն իրենց կդարձունեն . ուստի ասել է թէ մարդուս արիւնը շնչերակք սրտէն կառնուն բոլոր մարմինը կտարածեն, եւ երակք զայն կժողովեն նորէն սրտին կդարձունեն . ուր նորոգուելով՝ վերըստին մարմնոյն մասունքը կտարածուի : Սրտի թնդմունքն ու երակի զարկն ուրիշ բան չէ, բայց եթէ սրտին քաշուիլն ու ընդարձակուիլը, այսինքն լեցուիլն ու պարպուիլը, որ առողջ մարդու համար մէկ վայրկեանի մէջ պիտի լինի 60էն մինչեւ 80 : Ահա այս երակի զարնուածքէն (նամզ) կիմանան բժիշկք

մարդուս հիւանդութեան ծանրութիւնը, վասն զի հիւանդութեամբ երակին զարնուածքը կայլայլի, ու աւելի կամ պակաս կզարնէ : Զոր օրինակ հիւանդին ջերմն ո՛րչափ սաստկանայ, երակին զարնուածքըն եւս այնչափ կշատնայ ու հարիւրը կանցնի :

Մարդ երբոր տաքնայ՝ ջրային հեղուկ մը արիւնէն կզատուի եւ մարմնոյն վրայէն դուրս կելլէ, զոր քիրտն կամ քրտինք կկոչեմք : Արիւնէն կզատուին նաեւ մաղձը (սաֆրա), կաթը, արցունքը, լորձունքը, մէզը կամ ջրուածքը :

Շնչառութեան գործարաններն են թոքերը : Յոգը կծծեմք բերնով եւ թոքերով : Ամէն անգամ որ թոքերը կբացուին կընդարձակուին՝ օդը ներս կմտնէ, եւ փոքր մի ժամանակ կենալէն յետոյ դուրս կհանուի՝ արեան կազմութեանը համար հարկաւոր եղած մասունքն որ է թթուածին կազը՝ հոն թողլէն ետեւ : Աստի դիւրաւ կհասկացուի որ շատ մարդ կեցած սենեկին օդն առողջարար չկրնար լինել. ուստի անկարելի է որ մարդս առողջ լինի երբոր օդը սակաւ անգամ փոխուած տաք խուցերու մէջ բնակի :

Մարսողութիւնն է այն գործողութիւնը, որով ստամոքս մտած կերակուրներն իրենց տեսակը կը փոխեն եւ լինին մարդուս սննդեանն ու աճմանը կարեւոր նիւթ : Քաղցն ու ծարաւը կիմացունեն մեզ մարմնոյն միակերպ կենսական շարժմամբ կորսնցուցած ոյժը լցունելու կարօտութիւնը : Այս ստիպողական կարօտութիւնը լցունելու համար կերաց հաստատուն կերակուրնիս նախ կծամուին ու լորձունքով կթրջին, յետոյ կկլուին, այսինքն որկորէն (պօղազ) ստամոքս կիջնան ուր մարսողութիւնը լինի : Հոն ստամոքսին մէջ կերակուրներն

հեղուկ կդառնան, ստամոքային շաքարը զիրենք կլուծէ, եւ յետոյ աղեսաց մէջ իրարմէ կզատուին աննդական մասն աղբային կամ ապաւիժելի մասէն: Մննդական մասն որ խախաց կամ մամաց կկոչուի, արեան կխառնուի եւ անոր հետ մարմնոյն բոլոր մասանցը կտարածուի շնչերակաց եւ երակաց ձեռքով:

Ուղեղն կամ ըղեղը (պէյն) ծածկուած է ոսկրային պատեանով մը, որ գանկ կկոչուի: Մարդուս մարմնոյն ամենէն կարեւոր ու փափուկ մասն է ուղեղը. եթէ սակաւ մի վնասուի կամ վիրաւորուի՝ իսկոյն մահն վրայ կհասնի: Ասացինք թէ ջղերն են մարդոյս մարմնոյն զգացողութեանն ու շարժմանը գործիքը. եւ այս ջղերուն հիմը կամ կայանն է ողնայարն ու գլխի ուղեղը, եւ ամէնքն հոն կժողովին. ուստի եւ ջիղ չունեցող մասունք մարմնոյ որպէս մազերն ու ոսկորները՝ չեն զգար: Երբոր մարդու մը ուղեղը ճզմեն՝ իսկոյն կմարի, բան չզգար. երբոր թեւի կամ ուրիշ ո՛ր եւ իցէ անդամի ջղերը կտրուին՝ անզգայ լինի, եւ եթէ ասեղներով իսկ ծակծկեմք՝ չզգար: Զրուցեցինք որ ջղերն շարժման եւս գործիք են. եւ յիրաւի. վասն զի ջիղ մի կըտրուելուն պէս՝ բոլոր այն անդամներն որոց հետ հաղորդակցութիւն ունէր՝ անշարժ անդամալոյծ լինին:

Դրսի առարկաները մարդս կզգայ, կտեսնէ ու կճանաչէ իձեռն զգայարանաց, որ հինգ հատ են, այսինքն, շօշափելիք, տեսանելիք, լսելիք, հոտոտելիք եւ ճաշակելիք:

Երբոր կուզես իմանալ թէ մարմին մի կա՞րծը է կամ կակուղ, պա՞ղ է կամ տաք, հա՞րթ կամ ան-

հարթ, ձեռքով կշօշափես, եւ աւելի՛ մատուրնե-
րուդ ծայրովը, վասն զի մատանց ծայրերն աւելի
զգայուն են: Բայց շօշափելեաց գործիք միայն մա-
տունք չեն, այլ բոլոր մարմինը, վասն զի բոլոր
մարմնով եւս կզգամք: Զոր օրինակ երբոր ցուրտ
ժամանակ տաք խուցէ մը դուրս ելլես՝ բոլոր մար-
մինդ անախորժ զգացում մի կունենայ, այսինքն
կմսի, վասն զի ցուրտը բոլոր մարմնոյդ վերայ ազ-
դելով՝ այսինքն բոլոր մարմինը շօշափելով՝ բոլոր
մարմինդ զայն կզգայ կմսի:

Տեսանելեաց գործիքն են աչք. մուտ խուցի մի
մէջ չես կարող բան տեսնել, վասն զի տեսնելու հա-
մար լոյս պէտք է: Երբոր տեսնելու զած առարկադ
շատ մօտ է՝ չես կրնար տեսնել. նոյնպէս չես կրը-
նար տեսնել՝ եթէ շատ հեռու լինի: Լաւ տեսնելու
համար առողջ աչք պէտք է ունենալ: Կոյրք չեն
գիտեր գոյնն ի՞նչ է, գունոյ գաղափար չու-
նին. ո՛րչափ եւ աշխատիս կուրին գոյն մի հաս-
կացնել՝ դարձեալ որոշ գաղափար մը չկրնար առ-
նուլ, ուր ընդ հակառակն մեք՝ ամէն գոյն մտքով
կըմբռնեմք կտեսնեմք՝ առանց իսկ իրօք այսինքն
աչքով տեսնելու, որովհետեւ ուրիշ անգամ տեսած
եմք, եւ անոնց գաղափարը կամ պատկերն մտքեր-
նուս մէջ տպաւորուած է:

Գիտէք որ լսելեաց գործիքն են ականջք: Բան սո-
վրելու կրթուելու համար ամենահարկաւոր է այս
զգայարանքը, վասն զի շատ լսելու է: Խուլը (սա-
ղըր) բան չլսեր եւ զրկուած է գիտութեան հասնե-
լու համար Սատուծոյ մարդուս պարգեւած գլխաւոր
գործիքէն: Կուզե՞ս գիտել թէ ի՞նչպէս կլսես. լաւ
ուշադրութիւն ըրէ կարդացածիդ: Երբոր դանա-

կիդ (պըջագ) ծայրովը ապակւոյ կտորի մը զարնես՝ ձայն կլսես եւ միանգամայն կտեսնես որ ապակին կթրթռայ: Ապակւոյն չորս դին պատած օդը կընդունի այն թրթռումը, որ մինչեւ ականջդ կհասնի, ծակէն ներս կմտնէ, ականջին թմբուկ կոչուած մասին վերայ կզարնուի, անով լսելեաց ջղերը կը շարժին եւ դուն կլսես: Այս է ահա լսելութեան գաղտնիքն:

ձաշակելեաց գործին է լեզուն: Երբոր կերակրոյ կամ ըմպելւոյ մը համն առնուլ կուզէք՝ ի՞նչ կընէք. փոքրիկ կտոր մի բերաննիդ կդնէք. այն կերակուրն կամ ըմպելին կազմող մասունքը կերթան լեզուին վերայ պատած ջղերը կգրգռեն, եւ իմացած ախորժ կամ անախորժ զգացմունքդ կյայտնեն քեզ թէ կերածդ աղէ՛կ է թէ գէշ, համո՞վ է թէ անհամ:

Գիտէք որ հոտոտելեաց գործին է քիթը: Մարմնոց վրայէն ելած հոտն ու արտաշնչութիւնը օդը կառնու մինչեւ մեր ռնգունքը այսինքն քթերնուս ծակերը կբերէ. անոնք կերթան ռնգաց վերայի ջղերուն կզարնուին, որոնք գրգռուելով ախորժ կամ անախորժ զգացմունք կպատճառեն, եւ կամ ասեմ՝ ախորժելի կամ անախորժելի հոտ կազդեն քթերնուս: Նոյնպէս լինի հոտառութեան գործողութիւնն երբոր ծաղիկ կամ ո՛ր եւ իցէ բան քթերնուս կտանիմք կհոտոտեմք:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ Գ.

ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ.

Գարոցէն ելած չելած կնայիս որ դիմացդ ընդարձակ տեսարան մի կայ. անոր աշխարհ կասեն : Ահագին ծով մի է այս աշխարհ կոչուածն որ ոտքդ մէջը չդրած՝ կսկսիս վախնալ թէ արդեօք ի՛նչ քարերու, ի՛նչ ժայռերու պիտի հանդիպիս. այնպէս դող մի կուգայ վրադ որ կարծես թէ առաջին անգամ պատերազմի մէջ մտնող զինուոր մի ես : — Իրաւունք ունիս. քու ընելիքդ եւս արդարեւ պատերազմ է. բայց մի՛ վախեր. այն քու աչքդ վախցընող բաներուն՝ դիւրաւ կրնաս յաղթել : Մի՛ գուցէ մարդավար լինիմ ասելով՝ վախկոտ ողորմելոյն մէկը դառնաս. վասն զի խելք մի չսովրելէն զատ, ունեցած խելքդ եւս կկորսնցունես :

Միտքդ դրած ես թերեւս որ դուն տգէտ ես. կարելի է ճշմարիտ եւս է. ուրեմն նայէ որ քիչ խօսիս. ոչ ոք կմեղադրէ զքեզ ճարտասան չլինելուդ համար. բայց երբոր ելլես յանկարծ անկիրթ պատասխան մի տաս, կամ բերանդ գոց պապանձիս մնաս, ամէնքն եւս երեսդ վար կառնուն : Մարդս մարդկանց մէջ մտնելու ժամանակը պիտի նայի որ ոչ ապուշ լինի, եւ ոչ կոպիտ. թէ՛ ապշուեցինն եւ թէ կոպտուեցինն այնպիսի աղտեր են որ շատ դժուար կելլեն մարդուս վրայէն :

Վախկոտ չլինիմ ասելով աներեսութեան մէջ պէտք չէ իյնալ : Խիստ շատ յիմարներ կան որ անդադար ուրիշներուն խօսքը կկտրեն, այնպիսի

բարձր ձայնով կիսօսին որ կարծես թէ իրենց զրուցածն միայն լսելու արժանի նիւթ է. ամէն բանի վերայ անխտիր յաջ եւ յահեակ վճիռներ կուտան, մեծ մեծ կջարդեն: Մարդուն մէկն ելաւ որ մի զրուցեց իմ առջեւ թէ այն ինչ գիրքն որ ամէն մարդ կհաւնի կգովէ՝ անհամ անճոռնի գիրք մի է: Գարձայ հարցուցի իրեն. Այն գիրքը կարդացե՞ր էք, պարոն: — Ոչ, պարոն, ես այնպէս անխելք գրքեր չեմ կարդար ասաց: — Եթէ այնպէս է, ինչէ՞ն գիտէք, ասացի, նոցա անխելք գրքեր լինելը: Քովիներէս մէկը վերայ բերաւ թէ Այդ եւս հարցանելու բա՞ն է. պարոնը կզրուցէ թէ ուրիշներն այնպէս կասեն, ինքն եւս նոյնը կկրկնէ: » Եւ այնպէս ուրիշներուն անմիտ արձագանգ լինելը խայտառակեցաւ:

Ընկերուծեան յարմար լինելու համար բաւական չէ որ մէկը միայն չափազանց աներեսուծենէ զգուշանայ. պէտք է այս եւս գիտնայ թէ ի՞նչպէս հարկ է ըստ տեղւոյն խօսիլ, եւ պէտք եղածէն աւելի բան չասել: Այս շատ դժուար բան է, եւ մարդավարուծեան ծայրը հասած մարդիկ իսկ շատ անգամ այն կողմանէ կտագնապին. բայց հնարք մի կայ որ զայն բանեցնողը շատ փորձանքէ կազատի:

Ամէն մարդ մէկ տկար կողմ մի ունի. բանն այս տկար կողմը գտնելն է. գտնելէդ յետոյ ամենադիւրին բան է՝ դիմացիներուդ աչքը մտնելը: Ուրիշ գեղեցիկ հնարք մի եւս այս է որ դիմացիներուդ խելք ծախելու առիթ տաս. այս ընելու համար նայէ որ իմանաս թէ ի՞նչ վիճակի, ի՞նչ արհեստի տէր մարդիկ են. անդադար այն բաներուն վերայ հարցմունքներ ըրէ, անոնց վերայ խօսէ հետերնին. կը

տեսնես ուր քեզմէ սիրելի, քեզմէ խելացի, քեզմէ կենցաղավար մարդ չլինիր նոցա համար: Թէ որ երթաս երկրագործի մի հետ երաժշտութեան վերայ խօսիս, զինուորականի մի առջեւ Լամարթինի Գաշնակները կարդաս կամ գովես, ձանձրալի մարդ մի կերեւաս: Շատ մարդիկ տեսեր եմ որ մէյմէկ տեսակ բանի վերայ միայն գիտեն խօսիլ. ոմանք առուտուրի վերայ, ոմանք ոսկերչութեան վերայ, ոմանք երկրագործութեան վերայ. իսկզբան հետաքրքրութեամբ մտիկ կրնես, կնայիս որ մի եւ նոյն խաղն է կանչածը. կձանձրանաս ու կսկսիս ձգտիլ ու յօրանջել:

Ընկերութեան մէջ ամենէն ձանձրալի մարդն շատախօսն է. ասոր վաստակն այն է որ ժամ մի խօսելէն յետոյ կդառնայ չորս դին կնայի որ քովը մարդ չէ մնացեր:

Ուրիշ տեսակ ձանձրանալի մարդ մի եւս նա է որ խօսելու ժամանակ կուգայ քիթդ կմտնէ, կոճակներդ կբռնէ, հոգիդ կհանէ, եւ մինչեւ որ քառորդ մի զքեզ չչարչարէ՝ օձիքդ չթողուր: Գոհ եղիր թէ որ անոր ծուռուճուռ ալուաներուն մէջ տեղուանքէն թուքեր եւս չցատքտեն երեսդ, եւ կամ իւր խօսքերուն ոյժ տալու համար ոտքը գետին զարնելով քու ոտուրներուդ վերայ եւս չըկոխէ:

Ուրիշ տեսակ անհամ մարդ մի կուզե՞ս: Փողոցին մէջէն երթալու ժամանակ ձեռքի գալազանը՝ հովանոցը կա՛մ ուսը զարկած կքալէ, կամ թեւին տակը շիտակ տնկած, այնպէս որ ետեւէն եկողին աչքը հանելը բան մի չէ: Թէ որ յանկարծ քովնտի դառնայ ճեմիկին վերայ, ա՛յլ կրնաս նէ անցիր.

ինքը միայն երեք հոգւոյ տեղ կբռնէ: Կնայիս որ մէյմ'ալ այն գաւազանին՝ հովանոցին ծայրովը մարդ մի կամ խաթուն մի կցուցանէ ուրիշի. աչքին ծայրովն եւս ժամանակ ժամանակ պէխերուն ոլորած պոչին կնայի, կկոտրտուի, եւ իբրեւ թէ աչքը ջտեսնէր, վզէն կախած ակնոցովն իսկ երբեմն երբեմն անցնող դարձողներուն կերպարանքը կդիտէ: Ծանծաղամի՛տ որ ա՛յնչափ կարէ լինել: Այնպիսւոյն խօսակցութիւններն եւս գիտե՛ս ի՛նչ բանի վերայ են. Ծառայիս մէկ գեղեցիկ հագուստ մի շինեցի. անցեալ օրն որսի մէջ ձի մի ճաթեցուցի որ... անցած երեկուն մէկը տեսայ այս ինչ տեղն որ... երէկ ձուկ որսալու գնացի... Ի՛նչ եւ իցէ, ետեւէն երթամք: Տունը կմտնես, ու կնստիս չես նստիր՝ քեզ ցուցանելու համար թէ ի՛նչպէս մեծամեծ մարդոց հետ վերաբերութիւն ունի. « Թողութիւն կրնես, սիրելիս, կասէ քեզ. շատ կցաւիմ որ հետդ չեմ կրնար երկար նստիլ, վասն զի այս անուն ամիրայն, իշխանն կամ փաշան ինձ կսպասէ. կհագուի կսգուի, ճերմակ ձեռնոցները կդնէ, կառնու գաւազանն ու կոտրտուելով դուրս կելլէ: Կուզես նէ ետեւէն ելիր. կտեսնես որ կերթայ սրբճանոց մի կմտնէ կնստի :

• Այս եւ ասոր նման ծանծաղամտութիւններէ շատ զգուշանալու է, վասն զի պատիւ գտնելու տեղ՝ ունեցածն եւս կկորսնցուն է մարդ :



ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Դ.

ԱՌՈՂՋՈՒԹԻԻՆ.

Քան զամենայն գանձս պատուական է առողջութիւն, եւ քան զամէնն անխնամ կպահուի:

Առողջութիւն ունեցողը հարուստ է առանց գիտնալու:

Առողջութիւնն աշխարհիս ոսկւոյն պէտք չէ փոխել:

Մտաց առողջութիւնը պահելու համար մարմնոյ առողջութեան նախ խնամք տանելու է:

Կանուխ պառկելն եւ կանուխ ելլելը ամենէն լաւ հնարքն են մարդու առողջութիւնը, հարստութիւնն ու մտաւորական կարողութիւնը պահպանելու:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒՅԻՒՆ.

Առողջապահութիւնն է առողջութիւնը պահելու արուեստը: Ախորժակս տեղն է, ցաւ մի չունիմ՝ ամէն անդամներս կրնամ գործածել, լաւ կքնանամ. ասել է թէ առողջ եմ: Ուրեմն պէտք է ջանամ եւ զգուշանամ որ հիւանդ չլինիմ, վասն զի հիւանդըն ախորժակ չունենար, տկար լինի, չկրնար վազել, խաղալ, աշխատիլ, ուրախանալ, զուարճանալ. բանէ մի համ չառնոյր, բան մի ընելու փափաք ու սիրտ չունենար, եւ տեսակ տեսակ ցաւեր կքաշէ:

Թէ որ կուզեմ առողջութիւնս պահել՝ պէտք է որ

կերակուր ուտեմ, շարժմունք ընեմ եւ հանգիստ առնում: Լաւագոյն շարժմունքն է աշխատանքը. լաւագոյն հանգիստն է քունը: Կրնամ հիւանդանալ երբոր կիրք ելլեմ բարկանամ, երբոր ինքզինքս այլ եւ այլ մտածմունքներով տանջեմ, երբոր շատ խմեմ, շատ ուտեմ, շատ վազեմ, երբոր վազելով տաքնամ եւ այն տաքցած ժամանակս ջուր խմեմ, երբոր չլուացուիմ չմաքրուիմ ու չսանտրուիմ, երբոր իյնալէն չզգուշանամ, երբոր երկու հովի մէջ կենամ, երբոր տաքցած ժամանակս վրայի հագուստըս հանեմ ու պաղ առնում. երբոր երկար ժամանակ փակուած տեղ մի կենամ առանց օդը փոխելու:

ԱՐԾԻԻ ԵՒ ՃՆՃՂՈՒԿ.

ձրնճղուկի մը բոյնին քով
 Արծիւին մէկ բընակելով,
 երբեմ երբեմըն կեպէր
 Որ ձագերուն իւր որս բերէր:
 Այս ահաւոր դըրացին՝
 Յայտնի է որ մեր ճրնճղուկին
 Մեծ վախ էր սրտին.
 Եւ թէպէտ նա իրեն դէմ
 երբէք ցուցած չէր խոժոռ դէմ,
 Վախկոտ թըռչունը սարսափէն
 Սիրտ չէր ըներ ելլել բոյնէն՝
 Մինչեւ զարծիւ չըտեսնար
 Որսի համար որ հեռանար.
 Ուստի եւ շատ անգամներ
 ձրնճղուկն ըզբաղդ իւր անիծէր.
 Եւ դըրացւոյն կորըստեան

Աղօթք կրնէր օր օրուան : —
 Չարաց երբեմն՝ այնպէս կըլլայ
 Որ փափագնին շուտ կըլենայ : —
 Յր մի արծիւ՝ որսորդին
 Անկաւ իմէջ Թակարդին,
 Վազեց ճընճղուկ ըշտապաւ,
 Եւ արծուին քով կայնեցաւ,
 Ա՛լ ապահով,
 Վախ չունելով՝,
 Ըզնա ծաղրէր
 Եւ կըզրուցէր.

« Ի՛նչ աւետիս , տէ՛ր դըրացի ,
 « Ես լքեցի՛
 « Որ նո՛ր գընէր ես քեզի տուն ,
 « Եւ յիրաւի է շատ սիրուն .
 « Մեր բոյներուն
 « Մէք եմք շինողքն ողորմելիք ,
 « Քո տուն շինէր են քեզ մարդիկ ,
 « Այո՛, արժան եւ իրաւ որ՛
 « Դու որ Թըռչնոց ես Թագաւոր ,
 « Այսպէս պալատ բնակիս գէթ՛
 « Ոյր է որսորդ ճարտարապետ .
 Նընորհաւոր ըլլայ , տէ՛ր ,
 « Կեցցէ արծիւ արքայ մեր : »

Այս ու ասոր նըման կծու խօսքերով՝
 Երբ այն ճընճղուկ անգորով
 Իւր Թըռչամուսն ԹշուառուԹեանը վերայ
 Կըծիծաղէր հա՛, հա՛, հա՛...
 Յանկարծ կատուն՝ էր պահուած՝
 Յարձակեցաւ բերան բացած,
 Ու շուտով պապանձեցուց

Զանրզգամին ըզկըտուց :

Ո՛վ պըզտիկներ,
 Ու վարի կարգ մարդիկներ,
 Մ'ուրախանայք երբ ձեր մեծին
 Թըշուառութիւն կուգայ գըլխին .
 Ճընհողուկին պէս ձեզ ալ չըլլայ
 Որ խընտալնիդ բերան մընայ :

ԸՆԹԵՐՅՈՒՍԾ Ե.

ՏԻԵԶԵՐՔ.

Բոլոր աշխարհս մեծ ու շուարճալի գէրք մի է խելք ունեցողին համար. իսկ անխելքը կարդալ չգիտցողի կնամանի. գրքին գեղեցկութիւնն ի՞նչ օգուտ ունի անոր :

Աստուծոյ ստեղծած տիեզերաց մէկ ամենափոքր կտորն է՝ այս մեր քնակած երկիրը, մեր աշխարհը: Ուրիշ անթիւ երկիրներ կամ երկնային մարմիններ կան, որոց շատերը մեր աշխարհէն աւելի մեծ են: Այս գեղեցիկ մարմնոց մէկ մասը կտեսնեմք երկրնքի վերայ, որք իբեց մեծ հեռաւորութեանը պատճառաւ մեզի մէյմէկ լուսաւոր կէտեր կերելին, եւ աստղ կկոչուին: Կկարծուի թէ այս աստեղաց ամենէն մեծն է արեւը կամ արեգակը, որոյ ճառագայթքն երկիրս կլուսաւորեն կտաքցունեն, եւ ամէն տեղ պտղաբերութիւն եւ կեանք կսփռեն. զասն զի առանց արեւու տաքութեան ու լուսոյն՝ տունկք, բոյսք, ծառք, կենդանիք եւ մարդիկ առ

հասարակ կմեռնին : Լուսինն եւս երկիրս կլուսաւորէ, բայց իւր լոյսն արեւու լուսոյն պէս փայլուն ու զօրաւոր չէ, եւ ամենեւին տաքութիւն չունի :

Մեր գլխոյն վերայ տարածուած այն կապուտակ մեծ կամարն զոր երկինք եւ հաստատութիւն կանուանեմք, անհուն տարածութիւն կամ միջոց մի է, յորում կթաւալին կշրջին արեւը, լուսինը, երկիրս կամ մեր աշխարհն ու անթիւ անհամար աստղեր : Բոլոր այս աստղերը մէկ տեղ առնուելով կկազմեն Տիեզերքը : Ուրեմն արեւը, լուսինը, երկիրս եւ բոլոր միւս աստղք տիեզերաց մէյմէկ մասունքն են : Ապա տիեզերաց հետ բաղդատուելով ո՛րչափ պզտիկ է մեր երկիրը : Միայն արեւը երկրէս մէկ միլիոն չորս հարիւր անգամ մեծ է : Արեւն ոչ միայն մեր երկիրը կլուսաւորէ ու կտաքցունէ, այլ եւ իւր չորսդին շարժող բազմաթիւ երկնային մարմինները : Թէ՛ մեր աչքովն եւ թէ՛ հեռադիտակներով (տիւրպիւն) այս մարմնոց մէջէն շատերը կտեսնեմք, եւ աստղաբախշք երկար ժամանակ աշխատելէն ու հաշիւներ ընելէն յետոյ կրցան իմանալ թէ անոնցմէ իւրաքանչիւրն ո՛րչափ հեռու է արեւէն, ի՞նչ մեծութիւն ունի քալած ճամբանին, եւ ո՛րչափ ժամանակի մէջ զայն կընեն : Փայլածուն որ արեւուն ամենէն մօտն է, անոր չորս դին իւր շրջանը կընէ 88 օրուան մէջ : Իսկ մեր երկիրն արեւուն չորսդին կշրջի 365 օրուան եւ 6 ժամուան մէջ. եւ այս 365 օրերն են որ տարի կկոչուին :

Լուսինը միշտ երկրիս հետ է : Բոլոր երկնային մարմնոց մէջ ամենէն մօտն է երկիրս. եւ սակայն 86 հազար մղոն հեռու է անկէց : Արեւէն ամենէն հեռու եղած մոլորակն է Ուրանոս, որ

անոր չորս դին կատրտի 83 տարւոյ մէջ : Գիտէք թէ Թնդանօթի մի ռումբն ի՛նչ արագուժեամբ կերթայ : Կաւ է ուրեմն , ռումբ մի շարունակ նոյն արագուժեամբ երթալով երկրէս՝ քսանըհինգ տարուան մէջ հազիւ կրնայ հասնիլ արեւուն :

Մեր երկրին պէս արեւուն բոլորտիքը դարձող կամ շրջող երկնային մարմինք կկոչուին մոլորակք , վասն զի հաստատուն տեղ մը չեն կենար , ու մոլորածի պէս միշտ կատրտին : Որովհետեւ այս մոլորակներն մեր երկրին նման են , շատ հաւանական է որ իրենք եւս ունենան տարւոյ չորս եղանակներ , օր , գիշեր , ցամաք , ծով եւայլն : Իսկ միւս երկնային մարմինք այսինքն տեսնուած միւս աստղերը կերեւայ թէ մէյմէկ արեգակունք են , այսինքն այնպիսի մարմիններ որ արեւուն պէս իրենք իրենցմէ լոյս ունին , եւ իւրեանց ճառագայթիւքը կլուսաւորեն ու կտաքցունեն ուրիշ երկնային մարմիններ որ դիմահար են , այսինքն լոյսերնին ուրիշէ կառնուն : Այս արեգակունք կոչուեցան հաստատուն աստղք . եւ մեր արեգակը կամ արեւն եւս հաստատուն աստղ է :

Կարո՞ղ է մարդ աստեղազարդ երկինքն նայիլ եւ Արարչին ամենակարող զօրութեանն ու իմաստութեանը վերայ չզարմանալ եւ զինքը չսիրել , չօրհնել , չփառաբանել :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ 2.

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ, ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Այցելութիւնները տեսակ տեսակ են. գլխաւորները կրնայ սեպուիլ՝ այցելութիւն պարտաւորութեան, ուրախակցութեան, ցաւակցութեան եւ հրաւիրանաց: Այս հրաւիրանաց այցելութիւններն, այսինքն երբոր կերթաս մէկը սեղանի կամ պարի հրաւիրելու, խիստ կարճ պիտի լինին եւ կէսօրուրնէ ետքը: Ցաւակցութեան գնացողին հագուստը զարդարկոտ պիտի չլինի: Պարզ բարեկամական այցելութիւնները կէսօրէն առաջ եւս կարեն լինել՝ պարզ ու վայելուչ հագուստով:

Կէսօրէն առաջ խաթունի մի այցելութեան երթալ ամենեւին չվայելեր. կէսօրուրնէ յետոյ եւս որ երթաս՝ շատ պէտք չէ կենաս. թէ որ ուրիշ մի վերայ հասնի, շուտով մնաք բարով զրուցէ ու ելիր գնա. ուրիշ բան է՝ թէ որ տանուտէրը կամ նոր եկողը շատ ընտանի են հետդ, կամ թէ կիսնդրեն որ կենաս:

Պարահանդեսէ կամ երեկոյեան խրախճանէ մը ետեւ ընելու այցելութիւնը, ինչպէս նաեւ տարեգըլուխ շնորհիւ պարելու համար ընելիքը մէկ շաբաթէն աւելի պիտի չուշանայ: Տարեգլխու այցելութեան տեղը կբռնէ այցելաբարտն. այս թղթեակը պահարանի մի մէջ կդնես, վրան հասցէն կգրես ու կղրկես բարեկամիդ. հեռու է նէ՝ թղթատարով, մօտ է նէ՝ ծառայի ձեռքով. երբոր անձամբ տանիս, պահարանի մէջ դնել հարկ չլինիր, եւ այցելաբարտին մէկ ծայրը պիտի կոտրես:

Դուռը կամ սանդուխին վերայ մէկու մի որ հանդիպիս՝ պէտք է բարեւ տաս, ո՛վ կուզէ լինի. նոյնպէս պիտի բարեւես զքեզ ներս հրամցընողը:

Ձեռքդ գաւազան ունիս նէ՛ ձեռքդ չպիտի պահես. պիտի նայիս որ ոտքի ամաններդ եւս շատ ձայն չհանեն, ուստի կրունկներուդ վերայ ամուր կոխելէն պիտի զգուշանաս:

Դահլճէն նոր այցելու մի մտածին պէս, թէ որ էրիկ մարդ է՛ խաթունները թեթեւ կերպով կծուին. իսկ թէ որ խաթուն է, ամէնքն եւս ոտք կելլեն:

Զգուշացիր որ այցելութեան ժամանակ ժամացոյց չնայիս կամ ժամը քանի լինելը չհարցունես. չըլլայ թէ գետինը թքնես, թաշկինակդ գործածէ:

Ներս որ մտար՝ գլխարկդ ամոռի կամ սեղանի մի վերայ դնելը ամօթ է, անկողնի վերայ դնելը աւելի եւս ամօթ. կա՛մ պէտք է քովի սենեակը թողուս վրայի հագուստիդ հետ, կամ ձեռքդ բռնած պահես. թէ որ խնդրեն որ գլխարկդ մէկ դի դնես՝ կրնաս դնել: Ոտք ոտքի վերայ դրած նստելը մարդավարութիւն չէ, ոտքդ երկնցընելն աւելի եւս անմարդավարութիւն է:

Տիկնայք բնաւ պարտական չեն ոտք ելլելով ընդունելու՝ այցելութեան եկող էրիկ մարդը, եւ ոչ մինչեւ դուռը տանիլ զինքը համբելու ժամանակ:

Դահլճի միոյ մէջ թէ որ տիկնայք կան, երիտասարդին չվայելեր թիկնամոռի վերայ նստիլ. նմանապէս վառարանին քովի ամոռն եւս տարիքով կամ աստիճանով վեր մարդկանց պիտի թողու:

Տան մէջի տղայքը պիտի նային որ իրենց ծնողացը օգնեն՝ այցելուներն ընդունելու, տիկնանց շալերն առնելու, նոցա ամոռ հրամցընելու. նոյն-

պէս պէտք է օգնեն նաեւ ճամբելու ժամանակ :

Ի՞նչ ընկերութեան մէջ որ գտնուիս՝ տիկնոջ միոյ առջեւ գլուխդ գոց կենալը մեծ ամօթ է՝ թէ որ գլուխդ գլխարկ ունիս :

Այցելուն երթալու որ լինի՝ մինչեւ դուռը հետը պիտի երթաս ու դուռը դուն պիտի բանաս. իսկ թէ որ եկողը կին կամ ծերունի է՝ մինչեւ սանդուխին գլուխը հետը գնալն աւելի լաւ է :

Մէկը մէկուն ներկայացնելու սովորական կերպը շատ դիւրին է. կտանիս երիտասարդը (օրինակի համար) տանտիրոջ առջեւ կհանես ու կասես. « Ինձ պատիւ կհամարիմ ներկայացունել ձեզ այս անուն պարոնն որ շատ տաղանդաւոր անձ մի է » կամ թէ « որ իմ մեծ բարեկամս է » եւայլն : ներկայացողն կծուի տանտիրոջ. նա եւս ուրիշներուն հազար անգամ զրուցած խօսքն նմա իսկ կկրկնէ թէ « ճատ ուրախ եմ որ հրամանոցդ հետ ճանչուորութիւն կընեմ : » թէ որ ներկայացողին բերանը խելացի խօսք մի գտնուի՝ կասէ, եւ հանդէսը կը լմրնայ :

Դունէն դուրս եղած քերոցին կամ խսրին վերայ ոտքի ամաններդ շփելով մաքրելը ջմուռանաս. չըլլայ թէ ցեխոտ ոտուրներով դահլիճը մտնես :

Դահլիճին մէջի կահ կարասին դիտելով մը նայելէն զգուշացիր. չէ նէ ստըկով գնելու դիտաւորութիւն ունեցողի պէս կերեւաս :

Այցելութեան ժամանակ ձեռնոցներդ պիտի չըհանես. իսկ ձեռքով գլխարկին մազերը շտկելն ու մաքրելը անմարդավար անձանց պիտի թողուս :

Երբոր մէկը դահլիճ մտնէ, պէտք է որ տանուտէրը ոտք ելլէ. միայն գրասեղանի առջեւ նստած

մարդը երբոր իւր աշխատութեան հետ զբաղած է՝
ազատ է այս պարտքէն :

Կանայք իրենց այցելաքարտին վերայ իրենց բնա-
կութեան փողոցն ու թուահամարը չեն դնէր,
եւ էրիկ մարդոց ոչ այցելաքարտ կուտան եւ ոչ
կղրկեն :

Յայց առ իրեարս յահախել հարկ եւ սփոփումն է
մարդկան ,
եթէ իսոնս իցէ դէպ եւ թէ յօրէն հանրական :

Իգլուխ տարւոյ նախ ծընողք, աւագք ապա յար-
գեցին ,
Կարգ ըստ կարգէ բարեկամք, եւ բարերարք յետ
նոցին :

Միով աւուրք կամ երկու կանխել քան զօր կա-
ղանդի
Գործ է մարդոյ որ պատիւ յոյժ տալ ումեք կամիցի.
Ինմին յաւուր յայց գընալ եւ մեծարանք են եւ սէր.
Բայց յո՛վ երթալ եւ կամիս՝ մի՛ քան զեօթնեակն յա-
պաղէր :

Յայցելութեան զգեստ մաքուր եւ նոր զգեցիր ըստ
կարի :

Մի՛ շատ կացցես ուր եւ գնաս, մի՛ քան զբառորդ
աւելի :

Թէ այլոք գայ իվերայ՝ հրաժեշտ տաջիր վաղագոյն,
Զի մի՛ տաղտուկ եղիցես եւ տանուտեառն եւ հիւ-
րոյն :

Այց ազգակիցք իմիմեանց ոչ պահանջեն փոխա-
արձ,

Սակայն չէ պարտ մինչ իսպառ ըզպատշաճիւքն
առնել զանց :

Այցելուութեանց յերոպէ այս ընդհանուր է օրէն .

Ոչ անագան այցելուին ելանել յայց փոխարէն ,

Միայն իդէպ է դիտել թէ ե՛րբ առ քեզ միւսըն գայ,

Զի զայն առցես իկանոն այցելութեան քում առ նա :

Թէ տկար իցես եւ կամ խօթ, յայց ելանել ոչ է հարկ .

Եւ մի՛ գնայցես տարաժամ, գիտեա զմիւսոյն ժա-

մանակ :

Իկայս իկոյս եւրոպայ զանազանեալ է կանոն,

Բայց միջօրէն միշտ իդէպ, ոչ այգն եւ ոչ երիկուն :

Եթէ ծառայն ասիցէ թէ չէ իտան տանուտէր ,

Դու թէ տեսեր իսկ ըզնա՛ մի՛ զհակառակըն պըն-

դեր .

Այլ թող անդէն ըզթըղթեակն յորում դըրոշմի քոյդ

անուն

Ծալեալ ըզմին իծայրից ինչան անձամբ երթալոյն :

Թէ չիք իտանն ըսպասեակ որ ազդ ըզքեզ առնիցէ,

Մի՛ հապճեպով մըտաներ, բախեա զի ոք ձայն տացէ :

Մի՛ կանխեսցես դու բազմել՝ իբազմական հրաւիր-

եալ .

Փուլթա զաթոռ դուն առնուլ՝ չեւ տանուտեառնըն

բերեալ .

Քան զտանուտէր միշտ իվայր եւ մի՛ իվեր նըստի-

ցիս .

Մի՛ կուռն յաթոռըն թաղեր , եւ մի՛ նովիմբ երերիս :

Թէ տանուտէրն ելանել կամի եւ զայն դու զգացեր,

Թէ եւ նա կալ ըստիպէ՛ մի՛ եւս այլ շատ յապաղեր .

Եթէ բանից թել հատաւ, եւ նա ինչ նոր յաւել ոչ,

Դարձեալ քեզ ոչ է օրէն շատ յամել յայնքմ տեղուց :

Այլք անծանօթք քեզ իտան անդ թէ կայցեն եւ խօսին,

Տուր տանուտեառն ողջոյն սուղ եւ նիստ հանդարտ եւ լըռին.

Զբանիւք նոքա թող անկցին. յետ սակաւուց թէ կամիս

Ողջոյն բնաւիցըն տըւեալ կամ լուծեամբ մեկնեսցիս :

Առ տանուտեառըն մինչ կաս, թէ թուղթ առ նա հասանէ,

Բայց նա անբաց զայն թողու կամ զառաջեաւըն դընէ,

Խընդրեա բանալ ընթեռնուլ՝ զի մի՛ լիցիս դու խափան.

Եւ թէ չեբաց՝ գիտասջիր զի գնալ իբաց է արժան :

Թէյընտանեաց ոք եմուտ յայցելուեան քո պահուն,
Դու մի՛ մեկնիր առ ժամայն, այլ յոտըն կաց՝ տուր զողջոյն :

Այնպէս ընկալ զայցելուս քո պատուասէր հըրճուանօք,

Զի գոհուեամբ երթիցեն՝ անդրէն դարձի տենչանօք.

Իմուտն եւ յելըս նոցին յոտըն կացջիր մըտադիւր,

Թէ ոչ սանդղոց մինչ իգլուխ, գէթ մինչ իդուռն երթիջիր :



ԸՆԹԵՐՅՈՒԱԾ Է.

ԵՐԿԻՐ ԵՒ ԻՒՐ ԲՆԱԿԻՉՔԸ.

Երկրիս ձեւը կլոր է : Մարմնոյ մի ձեւն իւր շուքէն կամ ստուերէն կիմացուի. Թէ որ մարմնոյ մի շուքը կլոր լինի, տարակոյս չկայ որ իւր ձեւն եւս կլոր է : Կլոր շուք կձգէ մեր երկիրն, ուրեմն նշան է Թէ ձեւը կլոր է : Բայց երկրիս շուքն ո՞ւր կտեսնեմք : Լուսնի խաւարումը լսեր էք անշուշտ : Ամէն անգամ որ լուսնի խաւարումն լինի, այսինքն լուսինը կխաւարի, կմթննայ, լոյս չտար, իւր սկաւառակին կամ մեզ երեւցած երեսին վերայ կլոր շուք մի կտեսնուի, եւ տարակոյս չկայ որ այս շուքը ձրգողն է մեր երկիրն՝ ամէն անգամ որ իւր արեւուն բոլորտիքն ըրած շրջանին մէջ ուղիղ գծով արեւուն ու լուսնի մէջտեղը կիյնայ :

Երկրիս կլոր ձեւ ունենալուն ուրիշ շատ ապացոյցներ եւս կան, որք ձեր հասկացողութենէն վեր լինելով չէք կարող առ այժմ հասկանալ, անոր համար չեմ զրուցեր ձեզ :

Երկրիս երեսը պատած է ջուր եւ ցամաք. բայց մեծագոյն մասը ջուրը բռնած է. եւ այս բանս դիւրաւ կրնամք իմանալ եթէ աշխարհացուցի մի վերայ ուշադրութեամբ նայիմք :

Աշխարհացոյց կկոչուին այն գծագրած տախտակները կամ թղթերն որ ամբողջ երկրիս երեսը կամ անոր մէկ մասը մեզ կներկայացունեն : Այս աշխարհացոյցներն տեղ տեղ ներկած են, եւ տեղ տեղ ճերմակ. ներկած գունաւորած տեղերը՝ երկիր կցուցանեն. իսկ ճերմակ տեղերը՝ ծով :

Երկիրս կամ մեր աշխարհն հինգ մասն կբաժնուի, եւ այս մասունքը կկոչուին Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա ու Ովկիանիա կամ Աւստրալիա :

Աշխարհացոյցներու վերայ կգտնուին ոչ միայն աշխարհիս այս հինգ մասունքն, ու անոնց սահմանները, այլ եւ իւրաքանչիւրին մէջ եղած այլ եւ այլ երկիրներուն ու քաղաքներուն անուանքը : Վրայի սեւ ծուռ գծերը գետեր կցուցանեն. կլոր կամ երկարածեւ սեւ նշանները քաղաք, լիճ կնշանակեն :

Համատարած աշխարհացոյց կասուի այն տախտակն որոյ վերայ գծագրուած է բոլոր ցամաքային աշխարհը. եւ եթէ ուշադրութեամբ վրան նայիմք դիտեմք՝ կտեսնեմք որ ցամաք երկիրն ու բոլոր մեծ ու փոքր կղզիք իմիասին՝ հազիւ երկրիս չորրորդ մասը կկազմեն. ասել է թէ երկրիս չորս մասին երեքը ծով է, եւ մէկը ցամաք :

Այս ցամաքին կտորներն են նաեւ լեռները, որոց մէջէն կելլեն տեսակ տեսակ քարեր, մետաղներ, հանքեր ինչպէս ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, եւ այլն :

Աշխարհիս ամենէն բարձր լեռն է Ամերիկայի մէջ Չիմպորաօ կոչուածն, որ ծովուն երեսէն 6,400 մեթր բարձր է : Մեր հայրենիք Հայաստանի ամենէն բարձր ու հռչակաւոր լեռն է Մասիս կամ Արարատ, որոյ բարձրութիւնն է 5,350 մեթր :

Լեռներ կան որ հրաբուխ կկոչուին, վասն զի անդադար դուրս կուտան հուր կամ կրակ, բոց, մոխիր, քար եւ հրայրեաց հեղուկ մի որ խանձող կամ լավա կասուի : Եւրոպայի մէջ երեք անուանի հրաբուխք կան. Հեքլա՝ Իսլանտայի մէջ, Ետնա՝ Սիկիլիոյ մէջ, եւ Վեսուվ՝ Նափոլիի մէջ :

Գիտէք որ ծովուն ջուրն աղի է. բայց երկրիս մէջէն վազած ջրերը ըստ մեծի մասին անոյշ լինին, եւ երբեմն լեղի : Վազուկ ջուրն երբոր շատ խոր ու լայն չէ՛ առու, առուակ կամ վտակ կկոչուի. իսկ երբոր խոր ու լայն լինի՛ գետ կկոչուի. եւ երբոր այնչափ խոր լինի որ վրան նաւ ու նաւակ կարող լինի քալել՝ նաւարկելի կկոչուի : Թէ՛ առուակին եւ թէ գետին տակը յատակ կասուի. եւ ծով կերթան կթափին թէ՛ գետն եւ թէ առուակը. բայց երբեմն իրարու մէջ եւս կթափին, եւ այն իրարու հետ միացած տեղերնին խառնուրդք կկոչուին :

Աշխարհիս ամէն կողմը բնակող մարդիկ իրարու չեն նմանիր ոչ լեզուով, ոչ բնաւորութեամբ ու սովորութեամբ, եւ ոչ մորթի գունով : Մի եւ նոյն երկիր բնակողներն որ մի եւ նոյն լեզուն կխօսին եւ մի եւ նոյն սովորութիւններ ունին՝ ժողովուրդ կամ ազգ կկազմեն :

Թէպէտեւ մարդկային ազգը մի է, սակայն կազմութեանը վերայ երեւցած այլ եւ այլ տարբերութիւններէն երեք գլխաւոր ցեղի բաժանած են զայն իմաստունք, եւ են

Ա. ճերմակ կամ Կովկասային.

Բ. Պղնձագոյն կամ Մողոլ.

Գ. Սեւ կամ Եթովպական.

Կովկասային ցեղէն եմք մեք Հայքս, որպէս նաեւ բոլոր քաղաքակիրթ ժողովուրդք :

Մողոլի ցեղը կճանչցուի տափակ դէմքէն, նեղ ու խոտոր աչուրներէն, ցանցառ մօրուքէն, եւ տժգոյն երեսէն : Զինաստանի ու ձափոնի մեծամեծ կայսերութիւններն այս ցեղէն են, բայց քաղաքակրթութիւնը մէջերնին շատ ծաղկած չէ : Եթով-

պական ցեղն Ափրիկէ մնացած է. երեսին գոյնը սեւ է, մազերը գուռզ, գլխուն գանկն ու քիթը տափակ : Այս ցեղին մէջ գտնուած ժողովուրդք ցարդ բարբարոս մնացած են :

Գրէթէ աշխարհիս ամէն կողմը մարդկանց սովորական հասակն է մէկ մեթր վաթսուներուծը հարիւրամեթր : Իսկ քանի մի տեղ ինչպէս է Լափոնիա ուր գրէթէ միշտ ձմեռ է, մարդկանց հասակը մէկ մեթր երեսուն հարիւրամեթրէն աւելի չլինիր. ուստի եւ Լափոնացիք կարճահասակ կասուին : Սակայն կարգէ դուրս կերպով կգտնուին երբեմն մարդիկ որ երկու մեթրէն աւելի հասակ կունենան, եւ հսկայ կկոչուին : Քայց կան նաեւ որ մէկ մեթր կամ քան զայն եւս կարճ հասակ ունին եւ կասուին թզուկ (ճիւճէ) :

Վայրենի կկոչուին այն ժողովուրդք որ որսով կամ իրենց կենդանիքն արածելով կապրին :

Քաղաքակիրթ կասուին այն ժողովուրդք որ երկրագործութեան, անասնադարմանութեան եւ արուեստից ու գիտութեանց կպարապին, եւ զանոնք կծաղկեցունեն : Քաղաքներու ու գեղերու մէջ ժողոված կբնակին եւ օրինօք կկառավարուին. ո՛վ որ կուզէ հետերնին ապրիլ՝ պէտք է որ այն օրինաց հնազանդի, նոցա համեմատ շարժի, եւ բոլոր իւր գործողութիւնքը տնօրինէ : Այս օրինաց կատարմանը հսկելու համար դատաւորներ ու իշխաններ դրուած են, որք անոնց դէմ գործողները կպատժեն : Այսպէս կարգադրուած ամէն ընկերութիւն կկոչուի քաղաքական ժողով, Տէրութիւն, Պետութիւն, Կայսերութիւն : Շատ տէրութեանց մէջ մէկ հոգի միայն իրաւունք ունի

օրէնքներ դնելու եւ դատաւորներ ու իշխաններ անուանելու. ինքը կկոչուի միապետ, եւ է կա՛մ կայսր, կամ Թագաւոր, կամ իշխան, կամ դուքս, եւ իւր ձեռքին տակ եղած երկիրը կանուանի կայսերութիւն, Թագաւորութիւն, իշխանութիւն եւ կամ դքսութիւն : Օրինակի համար, Տաճկաստան, Ռուսաստան եւ Գաղղիա՝ կայսերութիւն է, եւ մէջի միապետները կկոչուին կայսր կամ ինքնակալ :

Երկիրս հինգ մասն կբաժանի գրուցեցինք : Իւրաքանչիւր մասին անունն ի՞նչ է :

Հապա եւրոպա քանի՞ մասն կբաժանի :

ԵՒՐՈՊԱ.

Եւրոպա որ հինգ մասանց մէջ ամենէն քաղաքակիրթն, ամենէն ծաղկածն ու ամենէն բազմամարդն է, տասնեւհինգ մեծամեծ մասունք կբաժանի, որոց չորսը հիւսիսակողմն են, այսինքն

Ա. Անգղիա, որոյ մայրաքաղաքն է Լոնտրա. եւ գլխաւոր քաղաքները Լի՛վրփուլ, Մէնչըսթըր, Պը՛րմինկէմ, Տուպլին, Էտիմպուր.

Բ. Տանիմարքա, որոյ մայրաքաղաքն է Քոփէնհակ.

Գ. Շուետ, որոյ մայրաքաղաքն է Սթոքհոլմ.

Դ. Ռուսաստան, որոյ մայրաքաղաքն է Փեթըրպուրկ. եւ երկրորդ մեծ քաղաքն՝ Մոսկուա.

Վեցը մէջտեղուանքը, այսինքն

Ա. Գաղղիա, որոյ մայրաքաղաքն է Փարիզ. եւ գլխաւոր քաղաքները Լիօն, Մարսէյլ կամ Մարսիլիա, Պորտոյ.

Բ. Պելճիա, որոյ մայրաքաղաքն է Պրիւքսէլ.

Գ. Հոլանտա, որոյ մայրաքաղաքն է Լա-Հէ.

Դ. Զուիցերի, որ քսանուերկու նահանգ բաժանուած է, որոց գլխաւոր քաղաքներն են Պալ, ձինելրա, Յուերիխ եւ Պեռնա.

Ե. Գերմանիա որ քառասուն Տէրութիւն բաժանուած է, որք գերմանական Դաշնակցութիւնը կկազմեն : Այս Դաշնակցութեան գլխաւոր Տէրութիւնքն են,

Զ. Աւստրիա, որոյ մայրաքաղաքն է Վեննա.

Բրուսիա, որոյ մայրաքաղաքն է Պեռլին.

Պաւերա, որոյ մայրաքաղաքն է Միւնիխ.

Վիւրթեմպերկ, որոյ մայրաքաղաքն է Սթուտկարտ.

Սաքսոնիա, որոյ մայրաքաղաքն է Տրէզտն կամ Տրէզտա :

Հինգ հարաւակողմը, այսինքն

Ա. Փորթուկալ, մայրաքաղաքը Լիզպոնա.

Բ. Սպանիա, մայրաքաղաքը Մատրիտ.

Գ. Իտալիա, ուր առաջ տասնի չափ տէրութիւնք կային, եւ գլխաւորներն էին Սարտենիոյ Թագաւորութիւնը, մայրաքաղաքը Թուրին.

Նափոլիի Թագաւորութիւնը, մայրաքաղաքը Նափոլի.

Թոսքանայի մեծ դքսութիւնը, մայրաքաղաքը Ֆիորենցա.

Պապի տէրութիւնը, մայրաքաղաքը Հռոմ :

Հիմա Նափոլիի Թագաւորութիւնն ու Թոսքանայի դքսութիւնը վերցուեցան ու Սարտենիոյ Թագաւորութեանը հետ միացան. Պապի տէրութիւնն եւս միանալու վերայ է : Լոմպարտիոյ եւ Վենետկի Թագաւորութիւնն եւս Իտալիոյ մասն է եւ Աւս-

տրիոյ ձեռքն էր : Լոմպարտիա իւր Միլան մայրաքաղաքովն անցեալ տարի Սարտենիոյ Թագաւորութեանը հետ միացաւ. եւ հիմա վենետիկ միայն մնաց Աւստրիոյ ձեռքը :

Գ. Եւրոպայի Տաճկաստան, մայրաքաղաքը Կոստանդնուպօլիս.

Ե. Յունաստան, մայրաքաղաքը Աթէնք :

ԱՍԻԱ.

Ասիա քանի՞ մասն կբաժանի :

Ասիա գլխաւոր երեքտասան մասն կբաժանի. մէկը հիւսիսակողմը, Ասիոյ Ռուսաստան, որ երկու մասն է, Սիպերիա եւ Կովկասու երկիրները. Սիպերիոյ մայրաքաղաքն է Թոպուսք, եւ Կովկասու՝ Տիփլիս կամ Թիֆլիզ, որուն մօտ է Սուրբ Էջմիածին :

Երկուքը արեւելակողմը՝ Զինաստան, մայրաքաղաքը Փէքին, եւ ձափոն :

Հինգ հարաւակողմը՝ Քոչինչին, մայրաքաղաքը Հուէ. Թագաւորութիւն Սիամի եւ Թագաւորութիւն Պիրմանի, Հնդկաստան որ Անգղիացւոց ձեռքն է, եւ մայրաքաղաքը Կալկաթա. Արաբիա, գլխաւոր քաղաքը Մէքքէ :

Հինգ արեւմտակողմը՝ Ասիոյ Տաճկաստան, գլխաւոր քաղաքները Զմիւռնիա, Պուրսա, Գամասկոս, Պաղտատ եւ Երուսաղէմ :

Պարսկաստան, մայրաքաղաքը Դեհրան, եւ գլխաւոր քաղաքներն Ասպահան, Շիրազ եւ Համատան.

Աֆղանիստան, մայրաքաղաքը Բապուլ.

Պելուճիստան, Թաթարստան, գլխաւոր քաղաքները Սմըրղանատ եւ Պուխարա :

ԱՓՐԻԿԷ.

Ափրիկէ քանի՞ մասն կբաժանի :

Ափրիկէ գլխաւոր տասնեւուեւթ մասն բաժանուած է :

Հինգ հիւսիսակողմը՝ եգիպտոս, մայրաքաղաքը Գահիրէ կամ Մըսըր, եւ գլխաւոր քաղաքն Աղեքսանդրիա.

Թրիփոլիի ու Թունուզի խնամակալուածիւնները՝ համանուն մայրաքաղաքներով.

Ալճէրի կամ ձէզայիր որ Գաղղիացւոց ձեռքն է, եւ մայրաքաղաքը Ալժէ.

Մարոքի կայսերուածիւնը, մայրաքաղաքը Մարոք : Երեք արեւմտակողմը, Սենեկալ՝ Գաղղիացւոց ձեռքը, մայրաքաղաքը Մուրբ Լուդովիկոս. Կուլինէա, Քոնկո :

Երկու հարաւակողմը՝ Յիթենթացւոց երկիրը, Գլուխ Բարեյուսոյ գաղթականուածիւնը :

Հինգ արեւելակողմը՝ Մոզանպիքի, Ջանկեպարի, եւ Այանի ծովեզերքը, եթովպիա, նուպիա :

Երեք մէջտեղուանքը Սահրա կամ Մեծ Անապատ, Սուտան կամ Նիկրիտիա, Քաֆրաստան :

ԱՄԵՐԻԿԱ.

Ամերիկա քանի՞ մասն կբաժանի :

Ամերիկայն երկու մասն կբաժանի, հիւսիսային եւ հարաւային : Հիւսիսային Ամերիկայն վեց գլխաւոր մասուէնք բաժանուած է, որոց երեքը հիւսիսակողմը, եւ եւն Կրոէնլանտիա, նոր Բրիտա-

նիա, մայրաքաղաքը Բեպէք, եւ Ռուսիոյ Ամերիկա :

Մէկ հատ մէջտեղուանքը՝ որ է Միացեալ Նահանգաց հասարակապետութիւնը, որոյ գլխաւոր քաղաքներն են Վոշինկերն, Նիւ-Եօրք կամ Նոր-Եօրք, Փիլադելփիա, Նոր Թրլէան, Պոսթըն, Պալթիմոր :

Երկու հարաւակողմը՝ հասարակապետութիւնք Մեքսիկոյի եւ Կուլաթեմալայ :

Հարաւային Ամերիկայն տասնըջորս մասն կբաժանի : Վեցը հիւսիսակողմը՝ հասարակապետութիւն Նոր Կրանատայ, մայրաքաղաքը Սանթա-Ֆէ-տէ Պոկոթա. հասարակապետութիւն Հասարակածի, մայրաքաղաքը Բուիթօ. հասարակապետութիւն Վենեցուելայ, մայրաքաղաքը Բարաքաս. այս երեք հասարակապետութիւնք միով անուամբ կոչին Քոլումպիա. Անգղիացւոց՝ Հոլանտացւոց եւ Գաղղիացւոց Կուլյանայք :

Չորս արեւելակողմը՝ Պրագիլ, մայրաքաղաքը Ռիօ-ժանէյրօ. Փարակուայի եւ Ուրակուայի հասարակապետութիւններն ու Փլաթայի հասարակապետութիւնը, մայրաքաղաքը Պուէնոս-Սյրէս :

Մէկ հատ հարաւակողմը՝ Փաթակոնիա :

Երեք արեւմտակողմը Չիլի, Պոլիվիա եւ Փերու, մայրաքաղաքը Լիմա :

Ամերիկայի այս երկու մասերուն մէջն է Անթիլէան կղզեաց արշիպելագոսը կամ Արեւմտեան Հնդկաստան, յորում են Հայիթիի հասարակապետութիւնն եւ ուրիշ շատ մի մեծ գաղթականութիւններ, զոր օրինակ Մարթինիկէ եւ Կուատալուփա որ Գաղղիոյ ձեռքն են :

Ովկիանիա քանի՞ մասն կբաժանի :

Ովկիանիայն երեք մեծամեծ մասունք կբաժանի

որք են Մալեգիա, Աւստրալիա եւ Փոլինեզիա կամ Բազմակղզիք :

Մալեգիոյ մէջն է Սոււնտ կղզին, մայրաքաղաքը Պաթաւիա. եւ Մոլուքեան եւ Փիլիպպեան կղզիք. Աւստրալիոյ մէջ են նոր Հոլանտա, մայրաքաղաքը Սիտնէ. Վանտիէմենի երկիրը, նոր Կուլինէա, եւ շատ մի արշիպելագոսներ :

Բոլինեզիոյ մէջ կան բազմաթիւ կղզիք, որք վեց գլխաւոր արշիպելագոսներ կկազմեն, եւ մեծ ցամաք մի որ նոր Զելանտա կկոչուի : Արշիպելագոսներն են Մարիանեան եւ Քարոլինեան կղզիք, Թագաւորուծիւն Հավա կամ Սէնտուիչ կղզեաց, Մարգիզեան կղզիք, Փոմոթու կղզիք, ու Ընկերութեան կղզիք, որոց գլխաւորն է Թայիթի :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ Ը.

ՄԱՔՐՈՒԹԻԻՆ.

Մէկ զարդ միայն կայ աշխարհիս վերայ որ ամէն մարդու եւ ամէն հասակի սպառչան ու անհրաժեշտ հարկաւոր է. այս զարդն է մաքրութիւնը :

Ոչ մարմնոյդ, ոչ հագուստիդ եւ ոչ տանդ աղտոտութեանը համբերես :

Մարդուս մարմնոյն ու հագուստին մաքրութիւնը շատ անգամ հոգւոյն մաքրութեանը նշան է :

Մարդուս ձեռուրները բոլոր մարմնոյն մաքրութեանը ցուցակն ու նշանը պիտի լինի. ուստի նայէ

որ միշտ մաքուր պահես ձեռուրներդ : Ամէն առա-
ւօտ սապոնով լուացուէ, յետոյ ըղունգներդ վրձի-
նով շփէ, կտրէ, շտկէ, ու նայէ որ մատուրներուդ
ծայրերը մէյմէկ դեղին բակլայ կապածի պէս չե-
րեւաս, որ շատ զգուելի բան է :

Մաքուր լինի երեսդ, վիզդ, մանաւանդ ականջ-
ներդ :

Բերանդ շատ անգամ ցօղէ ու լուա. առաւօտը՝
որպէս զի գիշերուան ծանր հոտը երթայ. կերակ-
րէն յետոյ, որ կերածներուդ հոտերը դիմացինիդ
երեսին չքուրեն. եւ անգամ մի պառկելէդ առաջ՝
որ աւելի հանգիստ քնանաս :

Շատ անգամ բաղնիք գնա. անկէց իզատ ստէպ
ստէպ եւս ոտքդ ջուրը դիր. վասն զի ցորեկուան
փոշին երկու երեք օրուան մէջ ցեխ կդառնայ, եւ
Թէ որ այցելութեան երթաս՝ կրնայ իմացուիլ Թէ
շատոնց է ջուր չտեսնելդ :

Հագուստիդ եւ գլխարկիդ փոշին միշտ վրձինով
մաքրուած լինի :

Շատ տգեղ բան է էրիկ մարդ կամ տիկին մի տեսնել
որոյ ոտքի ամաններուն վերայ չորցած ցեխ լինի.
ասել է Թէ այն անձը կա՛մ անհոգ է եւ կամ աղ-
տեղի :

Պատուած կամ ծակ հագուստ հագնելն իսկ նոյն-
չափ ամօթալի բան է :

Մաքուր թաշկինակ գործածելն եւս շատ լաւ
բան է Թէ՛ ուրիշներուն զգուելի չլինելուդ, եւ Թէ
առողջութեանդ համար :

Մաքրութիւնն այս աղէկութիւնս եւս ունի որ
մաքուր մարդը վախ չունենար ուրիշներուն առջեւ
ելլելու, տեսնողներէն ծաղր լինելու : Մաքրասէր

եղիր. շատ պակասութիւններուդ ուրիշները աչք կգոցեն :

Աղտոտութիւնը շատ հիւանդութեանց պատճառ է, մանաւանդ մորթի հիւանդութեանց : Անոնք որ կուզեն այս հիւանդութիւններէ ազատ մնալ, պէտք է ստէպ լուան ոչ միայն երեսնին, ձեռքերնին ու ոտքերնին, այլ եւ բոլոր մարմիննին շաբաթը մի անգամ, կամ գոնէ ամիսը մի անգամ : Բաղանեօք երբոր մարմիննիս կլուացուի կմաքրուի, արտաշընջութիւնը կդիւրանայ, եւ անով շատ հիւանդութիւններէ ազատ կմնամք : Բայց որպէս զի արեւելեան բաղանիք առողջարար լինին, պէտք չէ մէկ կամ մէկուկէս ժամէն աւելի մէջերնին կենալ. եւ ելանելէն յետոյ պաղ առնելէն զգուշանալու է : Կերակրէն անմիջապէս ետեւ բաղնիք մտնելը շատ վնասակար է. պէտք է որ գոնէ վրան երկուքուկէս երեք ժամ անցնի :

Ամառը գետ կամ ծով մտնելն եւս ոչ միայն մաքրութիւն է, այլ եւ օգտակար. միայն այնպիսի ապահով տեղ մի փնտռելու է ուր խղղուելու վրտանգ չլինի : Տաքցած քրտնած ժամանակ պէտք չէ ջուր մտնել : Ջուր մտնելուն պէս մէկէն պէտք է բոլոր մարմնով մէջն ընկղմիլ. անշարժ եւս պէտք չէ կենալ, այլ կա՛մ լողալու եւ կամ ուրիշ շարժում ընելու է : Քառորդի մի ջափ կենալէն յետոյ ելլելու է. եւ փոխանակ իսկոյն հանգիստ նստելու՝ կամաց կամաց քալելով թեթեւ շարժում մի տալու է մարմնոյն :

Մէջերնէդ ո՛վ լսած չէ խղղուած տղայոց պատմութիւնները : Թէ որ պատճառը փնտռեմք՝ կիմանամք որ կա՛մ տաքցած քրտնած եղած ժամանակնին, եւ

կամ կերակուր ուտելէն անմիջապէս յետոյ ջուր մտած են, եւ կամ անխոհեմութեամբ վտանգաւոր տեղեր լուացուիլ ու լողալ ուզած են :

Պէտք է միշտ մաքուր պահել սենեակները, կահ կարասին, ամանները, միով բանիւ՝ բոլոր տունը :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Թ.

ԲԵՐՔ ԵՐԿՐԻ.

Աստուած իւր անհուն իմաստութեամբն ու բարութեամբը այնպէս տնօրինել է, որ ամէն երկիր ո՛ր կլիմայի տակ եւ բարեխառնութեան մէջ եւ լինի, իրեն հարկաւոր, օգտակար ու անհրաժեշտ եղած բերքն ունենայ : Տաք երկիրներն որ բնաւ ձմեռ չունին, ամենէն աւելի քաղցրահամ, զովացուցիչ եւ առողջարար ստուղներ կբուսցունեն, որպիսիք են անանաս, նարինջ, լեմոն, արմաւ եւ այլն : Այն տեղուանք կգտնուին նաեւ ամենէն մեծ կենդանիք որ տաքութեան լաւ կդիմանան, ինչպէս փիղն եւ ուղար : Փիղը չորս հինգ մեծր բարձրութիւն եւ վեց մեծրէն աւելի երկայնութիւն ունի, եւ 2,500 հազարկրամէն աւելի կկշռէ. եւ թէպէտ այսչափ մեծ ու ծանր է, սակայն օրը տասը տասուերկու բիւրմեծր ճամբայ կընէ : Ուղտին հետ կարող է մարդ տասը տասնեւհինգ օր հրատոչոր անապատներու մէջ ճամբորդութիւն ընել՝ առանց կաթիլ մի ջուր տալու : Օրը կընայ հարիւր հազար կրամ բեռն վերցունել : Ուղտի ձագերուն միսը կուտեն տեղացիք, կաթովը կարագ ու պանիր կշինեն.

վրայի մազերնին եւս խծուծ (իւսթիւփիւ) եւ Թաղիք (քէչէ) կգործեն :

Յուրտ երկիրներ մարդիկ աւելի ձուկ եւ կենդանեաց միս կուտեն քան Թէ խոտեղէն ու ընդեղէն, որ սաստիկ ցրտի պատճառաւ լաւ չեն հասնիր : Այս ցուրտ երկիրներու բնակչաց մեծ ապաւէնն է վերջասպետ կոչուած կենդանին, որ եղջերուի կրնմանի, բոլոր հիւսիսային կողմը կգտնուի, եւ Լափոնիոյ մէջ շատ ընտանեցած է : Այս սառուցեալ կլիմայից բնակչաց մեծամեծ ծառայութիւններ կրնէ վերջասպետը. բալխրի (գըզագ) կլծուի ու ձիւնի եւ սառուցի վրայէն զայն քաշելով ամէն բեռ կկրէ. ախորժելի կաթ մը ունի, եւ միսն համով կուտուի. մորթովը հագուստ կշինեն, տանիք կը պատեն եւ նաւերու առագաստ կկազմեն : Վերջասպետը չոր տերեւ եւ մամուռ կուտէ, եւ ձիւներու տակէն կփնտռէ կգտնէ իւր կերակուրը : Մի'Թէ զարմանալի բան չէ՞ որ այն երկիրներու մէջ մի միայն կենդանի մի այսպէս մարդուս ամէն պիտոյքը կլցունէ :

Մեր կլիմայն կամ երկիրն՝ ոչ շատ տաք է եւ ոչ շատ ցուրտ, այսինքն բարեխառն է : Բազմատեսակ պտուղներ, խոտեր, տնկեր եւ կենդանիներ կբուսցունէ կբերէ. եւ բնակչացը մեծ զբաղմունքն է երկրագործութիւն, անասնադարմանութիւն, ճարտարութիւն եւ վաճառաշահութիւն : Այգին բարեխառն կլիմաներու մէջ, այսինքն տաք երկիրներ միայն առաջ կուգայ. ուստի եւ ցուրտ երկիրներ խաղող չհասնիր, անոր համար եւ գինի չեն ունենար, եւ շատերը գինիի տեղ՝ գարեջուր (պիրա) կխմեն :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ժ.

ԿԵՐԱԿՈՒՐ.

Ինչո՞ւ համար կերակուր կուտէք. մի՞թէ անօթու-
թիւննիդ անցունելու եւ անձերնիդ սնուցանելու
համար չէ՞ : Ախորժակով կուզէ՞ք ուտել. ջանացէք
որ աշխատելով անօթենաք : Ծոյլք, դատար-
կակեացք անգործք եւ փափկասունք անօթի չլինին :
Բայց ոչ երբէք պէտք է շատ ուտել. վասն զի երբոր
մարդ շատ կուտէ, ստամոքսը կճանրաբեռնի, եւ
կերած կերակուրը փոխանակ օգուտ ընելու՝ վնաս
կընէ :

Մեր գլխաւոր կերակուրքն են հաց, խոտեղէնք,
պտղեղէնք, կաթնեղէնք, մսեղէնք ու ձկնեղէնք :

Խոտեղէնքն եփելէն կամ գործածելէն առաջ
զգուշութեամբ նայելու է որ մէջերնին թունաւոր
խոտ չգտնուի : Սունկը (մանթար) դժուարաւ կմար-
սուի. մէջերնին թունաւոր եւս շատ կայ. անոր
համար մեծ զգուշութեան պէտք ունին : Հոտած
աւրուած միսն ուտելը շատ վնասակար է, ոչ միայն
հիւանդութեանց պատճառ կարէ լինել, այլ եւ սուն-
կին պէս մինչեւ թունաւորել զմարդ :

Կանաչ կամ տհաս պտուղ ուտելն, որպէս նաեւ
յաճախ աղի միս՝ ձուկ ու պանիր ուտելը շատ վնա-
սակար են. նոյնպէս նաեւ շատ եղոտ կերակուրներ :

Նայեցէք որ կերած կերակուրնիդ շատ տաք չը-
լինին. վասն զի շատ տաք կերակուր ուտելը մար-
դուս ակռաները կաւրէ եւ ստամոքսը կտկարա-
ցունէ :

Խոհակերոցի (աշխանա) պղնձէ ամանները պէտք է որ լաւ անագած (գալայլամագ) լինին, վասն զի մէջերնին եփուած կերակուրն ուտողները կրնան փորացաւ ունենալ, եւ մինչեւ կարեն թունաւորիլ մեռնիլ : Պղնձէ ու անագէ ամանի մէջ ամենեւին պէտք չէ թթու կերակուր եփել. վասն զի թթու կերակուրներն կլուծեն պղինձն ու անագին հետ բաղադրուած կապարը (գուրշուն) եւ թոյն կը դարձունեն : Այս կարեւոր զգուշութիւնը չընելով կամ չգիտնալով՝ շատ անգամ մարդիկ կ'ընաւորին :

Թունաւոր բան մի ուտելով երբոր մարդ թունաւորի, իսկոյն պէտք է շատ մը տաք կաթ խմէ, կամ կարագով եւ կամ ձեթով խառնած տաք ջուր : Թունաւորութեւն դէմ ամենէն զօրաւոր ու ազդու դեղերն են փսխողականք (գուսմա) :

Թէ՛ տաք հաց եւ թէ՛ ո՛ր եւ իցէ տաք խմորեղէն ուտելն շատ վնասակար է, եւ դժուարաւ կ'մարսուին :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԺԱ.

ՍԵՂԱՆ ԵՒ ԽՆՋՈՅՔ.

Երբոր մէկը սեղանի կհրաւիրես՝ հարկաւ ամէն ջանք պիտի ընես որ իրեն ըրած պատիւդ հաճոյ անցնի : Այս բանիս համար ամենահարկաւոր է հրաւիրած մարդուդ ախորժակը ճանաչել :

Երկու թշնամի մեծ սեղանի հրաւիրելն անպատշաճ բան է. իսկ չորս հինգ հոգւոյ տրուած կե-

քակրոյ հրաւիրելը մեծ անխոհեմութիւն է : Շատ շատ՝ հաստատուն յոյս պիտի ունենաս այն երկուքն իրարու հետ հաշտեցունելու. բայց այն եւս անհամբան է, վասն զի միւս սեղանակցաց նեղութիւն կուտաս առանց պատճառի :

Սեղանի վերայ թէ որ յանկարծ այնպիսի խօսք բացուի որ հոն գտնուողներէն մէկուն կամ երկուքին ծանր գայ, պէտք է որ տանուտէրն արթուն լինի ու խօսքն ուրիշ բանի վերայ դարձունէ :

Կերակրոյ հրաւիրելն գոնէ երկու օր առաջ պիտի լինի՝ թէ որ կարգէ դուրս դիպուած չպատահի : Մէկը թէ որ աստիճանով իրմէ մեծին հրաւիրանք պիտի ընէ՝ անձամբ պիտի երթայ հրաւիրելու :

Մեծ սեղաններու վերայ ամէն մարդուն նստելու տեղն առաջուց որոշուած պիտի լինի. այնպիսի ժամանակ կնայուի որ շատ տիկնայք իրարու քով չլինին, այլ արք եւ կանայք խառն նստին :

Տանուտէրն տիկնայց մէջ ամենէն պատուաւորին թեւ կուտայ ու այնպէս կհրամցունէ սեղանին. երիտասարդներն եւս նային որ միշտ իրենցմէ աւելի տարիք ունեցողներն առաջ անցնին :

Պիտի ջանաս որ ոչ խիստ ուշ հասնիս սեղանին եւ ոչ խիստ կանուխ. երկուքն եւս նեղութիւն տալ է մէկը հրաւիրելոց, եւ միւսը տանտիրոջ :

Միսն առաջուց կտոր կտոր պիտի չջարդես, հապաքանի որ կտրես՝ բերանդ պիտի տանիս. նոյնպէս նաեւ հացն առաջուց պիտի չջարդես, ու բլրակի պէս քովդ պիտի չդիզես :

Ապուրէն ետեւ դգալդ պնակին մէջ պիտի ձգես :

Սեղանի վերայ սովորութիւն է երեք երեք գաւաթ դնելը. մէկը հասարակ գինւոյ ու ջրոյ, մէկը պրզ

տիկ կամ ազնիւ գինւոյ, երրորդն եւս վերջին գինւոյ համար որ սովորաբար շամփայն լինի :

Թէ որ առնել ուզած կերակուրդ քովինէդ շատ հեռու է՝ ուրիշէն մի՛ ուզեր որ քեզ տայ. ծառային զրուցէ :

Սեղանի վերայ ծառայուծիւն ընողը պիտի նայի որ դանակներու եւ սկաւառակներու դղրդում շատ չելլէ :

Հացդ որ հատնի՛ ինքիրմէդ պիտի չառնուս. կամացուկ մը ծառայէն ուզէ :

Ծնողք պիտի նային որ զաւակնին սեղանի վերայ խառնափնդոր բաներ չընեն, վրանին գլուխնին չաղտոտեն, մատուրներնին բերաննին չխոթեն, եւ կերակուր չուզեն, այս այն կտորը տուր չասեն, որ մեծ անկրթութեան եւ որկրամոլութեան նշան է :

Զըլլայ թէ գրպանէդ ի՛նչ եւ իցէ բան հանես ու սեղանին վերայ դնես :

Անձեռոցը ծնկուրներուդ վերայ ձգուած պիտի լինի՛ կէս ծալլուած :

Պատառաքաղը ոչ երբէք կռնըկին վերայ կդրուի: Կերակուր բաշխողն ինքը կբաժնէ ապուրը՝ մէյմը աջ դին եւ մէյմը ձախ դին անցունելով սկաւառակները : Միսը ջարդել եւս պիտի գիտնայ՝ որպէս զի հրաւիրելոց աշխատանք չտայ : Շատ զգուշութիւն պէտք է ընէ որ քովիններուն վերայ մսի ջուր չցատքեցունէ :

Մեծ կոպտութիւն է երկար ժամանակ քեզի երկնցուած սկաւառակը չառնուլ՝ չեմ ուզեր ասելով :

Բարեմաղթութիւններ ընելու շատ փոյթ եւ ջանք պէտք չէ ունենալ :

Սեղանէն ելլելու նշանը տանուտէրը պիտի տայ. եւ հրաւիրեալք անձեռոցները ծալելու պիտի ջաշխատին՝ տան մարդու պէս, այլ կլորելով մը՝ իրենց սկաւառակին քովը պէտք է դնեն :

Երբոր առջեւդ սկաւառակով միս կամ ուրիշ կերակուր կբերեն՝ նայէ որ կտորները չընտրես :

Շատ անմարդավարութիւն է հրաւիրելոց առջեւ ծառաներուն ջեխելն ու հետերնին կռիւ ընելը : Թէ որ պակասութիւն մի եւս ընեն, պէտք է նոյն միջոցին լռել ու յետոյ խրատել :

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԺԲ.

ԸՄՊԵԼԻՔ.

Մարդս ծարաւն անցունելու համար միայն պէտք է խմէ : Ամենէն լաւ ըմպելին կամ խմելիքն է մաքուր ջուրն, որ շատ պաղ պէտք չէ լինի : Այն ջուրն որ օճառը (սապուն) լաւ չլուծեր եւ խոտեղէնն ու ընդեղէնը դժուարաւ կեփէ, ինչպէս նաեւ մեռեալ եւ ապականած հոտած ջրերն՝ վտանգաւոր են : Երբոր մարդ ստիպուի մեռեալ ու ապականեալ ջրեր խմել՝ պէտք է նախ կրակով եռացունէ (գայնաթմագ), յետոյ ածուխի վրայէն անցունէ եւ օդին մէջ դնէ որ օդ առնուն հովահրին. վասն զի եռացմամբ մէջի օդը կորսնցուցած ջուրն ծանր լինի եւ անմարս :

Սովորական տաք խմուած ըմպելիքն են սուրճ (գահվէ) եւ չայ : Ասոնք երբոր ստէպ խմուին՝ վնա-

սակար են, մանաւանդ կանանց որոց կեանքն էրիկ մարդոց չափ գործունեայ չէ : Թէ՛ սուրճն եւ Թէ՛ չայը ջղերու կդաչին եւ քուն կկտրեն, եւ աւելի՛ վարժած չեղողներուն : Տղայք երկուքէն եւս պէտք է զգուշանան :

ԳԻՆԻ ԵՒ ՕՂԻ.

Զափաւոր ու ջրախառն գինի խմելը առողջարար է, վասն զի տկար մարդոց մարսողութիւնը կը դիւրացունէ եւ մարմնոյն ոյժ կուտայ. բայց որպէս զի գինին այս օգտակարութիւնն ունենայ՝ պէտք է որ անխարդախ զուտ լինի :

Ամենէն վնասակար ըմպելին է օղին (րագը), որ մարսողութիւնը կարգելու, արիւնը կյուզէ եւ կը տաքցունէ, եւ ուղեղին վերայ այնպէս սաստիկ կներգործէ, որ չափազանց խմողը խելքը կկորսընցունէ, եւ այնպէս կտկարանայ ու կծանրանայ, որ այլ չկրնար ծնկուրներուն վերայ կենալ եւ ասդին անդին պատէ պատ զարնուելով կիյնայ, եւ կկոչուի գինով : Գինով մարդու պէս սոսկալի եւ պժգալի բան կա՞յ : Երբոր գինովութիւնն անցնի՛ վրան տկարութիւն կզգայ, անով կյորդորուի նորէն խմելու, եւ այնպէս գինեմոլութեան կվարժի ու լինի գինեմոլ : Գինեմոլութեան հետեւանքն սարսափելի են : Գինեմոլք չեն կրնար կերածնին մարսել, ախորժակնին կկորսնցունեն, եւ սովորաբար կը ծախտ (վերէմի) ու ջրգող (սըսգա) լինին : Այս վտանգաւոր հիւանդութիւններէ զատ՝ մտաւոր կարողութիւննին եւս կպակասի եւ բանի չեն գար :

Զափազանց գինի խմելէն յառաջ եկած գինովութեան արգասիքն եւս մի եւ նոյն են, այսինքն վը-

տանգաւոր հիւանդութիւններ եւ մտաց տկարութիւն, մանաւանդ՝ թէ որ գինովութիւնը ստէպ կկրկնուի :

Դժբախտաբար սովորական դարձած ախտերուն մէկն է գիներմուլութիւնը : Մէջերնէդ մէկը չկայ որ քանի մի գիներմուլ չճանաչէ. դիտեցէք ի՛նչպէս իրենց առողջութեանն հետ նաեւ հարստութիւննին կվատնեն, իրենց կանայքն ու որդիքը թշուառ կրնեն, եւ հասարակաց ծաղր եւ ծանակ լինելէն յետոյ՝ աղետալի վախճան կունենան : Ոմանք ջուր կիյնան՝ գինովութենէն հաւասարակշռութիւննին կորսնցունելով. այլք ըրածնին ու զրուցածնին չգիտելով՝ դիմացինին դանակ կքաշեն կվիրաւորեն կմեռցունեն, եւ կամ իրենք կվիրաւորուին կմեռնին :

Յոյն մեծերէն աւելի վնասակար է տղայոց. զիրենք հիւանդ, ծոյլ, ապուշ եւ ախտաւոր կրնէ :

Սաստիկ ցուրտին ճամբորդութիւն ըրած ժամանակ մարդ բնաւ պէտք չէ օղի խմէ, վասն զի դիւրաւ կրնայ մեռնիլ :

ՇԱՐԺՈՒՄՆ.

Ամենէն լաւ շարժումն է մարմնական աշխատանքը. վասն զի անով մարդ առողջ լինի, երկարակեաց, ուրախ, զուարթ, բարեկեցիկ, եւ շատ հիւանդութիւններէ ազատ : Անկարելի է որ մարդ առողջ լինի առանց շատ շարժումն ընելու եւ աշխատելու :

Շարժումն ու աշխատանքը այն ժամանակ միայն վնասակար են՝ երբոր չափազանց լինին, եւ մարմինը ժամանակէն առաջ կմաշեցունեն :

Նա որ սաստիկ աշխատելով կամ վազելով եւ կամ պարելով քրտնած է, նայելու է որ մէկէն ջնաստի ջիանգչի, եւ մանաւանդ՝ հոգի բերան չկենայ, ջուր եւ ուրիշ պաղ բան չխմէ. վասն զի առողջութիւնը կկորսունցունէ, եւ մինչեւ կրնայ մեռնիլ ծանր հիւանդութեամբ մը պառկելով:

Շարժումն ամենահարկաւոր է նստողական եւ ուսումնական կեանք անցունողներուն. ասոնք եթէ օրը մէկ երկու ժամ չշարժին չքալեն՝ ախորժակնին կգոցուի եւ հիւանդութեանց ենթակայ լինին:

ԸՆԹԵՐՅՈՒՍԹ ԺԳ.

ՔՈՒՆ.

Հանգիստ քուն լինել ուզողը պէտք չէ որ լեցուն ստամոքսով անկողին մտնէ, եւ ոչ իսկ տաքցուցիչ ըմպելիք խմելէն յետոյ. հարկ է որ ցորեկն աշխատանքով՝ յոգնած լինի, եւ հանդարտ խղճմտանք ունենայ: Հանգիստ քուն մը հարկաւոր է մարդուս, վասն զի մարմինը կհանգչեցունէ կզօրացունէ, եւ հոգին կզուարթացունէ:

Ննջարանը կամ ննջելու սենեակը պէտք է ոչ ցած եւ ոչ տաք լինի. այլ բարձր, պաղ եւ հովահրած, ուստի պէտք է որ ցորեկը պատուհանները բաց մնան ամառ ժամանակ, եւ ձմեռը՝ պառկելէն յառաջ բացուին ու նորէն գոցուին լաւ մը օդը փոխուելէն ետքը:

Անկողինը վարագուերով գոցելը վնասակար է,

վասնզի շնչառուութեամբդ ապականած օդը վարագոյրներէն կարգելուի չփոխուիր, եւ դուն այն վնասակար օդն անդադար կծծես ու գիտցիր որ կվնասիս :

Փետրալից անկողինք վնասակար են առողջութեան : Թէոր անկողինդ պինդ է, կարծր է, ուրախացիր, վասն զի երիտասարդաց համար լաւագոյն ու օգտակար անկողինն է ձարէ (գըլ) կամ յարդէ (սաման) ու խոտէ շինուածն, որ փետրալից անկողնոյն պէս ոչ իջուածք (էմփէ) կպատճառէ, ոչ ակռայի ցաւ, ոչ գլխացաւ, եւ ոչ ուրիշ ցաւեր : Երբոր մէկը փետրէ անկողինի վերայ պառկելու վարժած լինի, պէտք է որ ամառը գէթ շաբաթն մի անգամ ծեծել ու արելը փռել տայ, եւ ձմեռը տասն եւ հինգ օրն միանգամ, եւ ստէպ մաքուր սաւան (չարշաֆ) դնել տայ :

Վտանգաւոր է հիւանդի անկողնոյն մէջ պառկիլը Թէոր լաւ մը ծեծուած ու հովահրած չէ : Երբոր հիւանդութիւնը տարափոխիկ է, պէտք է անկողինը լուալ, բոլորովին մաքրել :

Զբաղմանցդ ու հասակիդ համեմատ պիտի լինի բունդ. քաջառողջ մարդու՝ եօթը ութը ժամ բուն հարկաւոր է. տկար մարդոց եւ տղոց ութը տասը ժամ : Անխոհեմ գործունէութեամբ մը նայեցէք որ բնութեան պահանջած հանգիստը մարմնոյն չտալով՝ զայն չտկարացունէք, չհիւանդացունէք. այն կերպով շահուած քանի մը ժամը առողջութեան կորուստը չեն արժեր : Պէտք չէ նաեւ կարծել որ գիշերուան կտրած բունին տեղը կրնայ մարդ ցորեկը լեցունել. փորձով իմացուած է որ ցորեկուան բունը չկրնար գիշերուան բնոյն տեղը բռնել, եւ

գիշերային քնով չհանգչած մարմինը կարող չէ
ցորեկուան քնով բուրրովին հանգչիլ:

ժրաջան աշխատասէր անձանց հարկ չէ հասկա-
ցնել չափէ դուրս քնանալուն չար հետեւանքը. ուս-
տի ծոյլերուն, քնասէր մարդոց ասեմ. գիտնան
որ չափազանց քունը միտքը կբթացունէ եւ մարմ-
նոյն ոյժը կկոտրէ, եւ թէ՛ քնասէրք չեն ծերանար,
եւ երբեմն այնպիսի թմրուածեան մը մէջ կիյնան՝
որուն ծայրը կաթուածի կերթայ: Լաւ գիտնան:

ՃՊՈՒՌՆ ՈՒ ԾԻԾԱՌ.

ձրպուռ ծառի մի վերայ կեցած՝
Զայնը ձրգած
Առտըւընէ մինչեւ կէսօր
Կրճըռճըռար հոգևով բուր.

Աշխատասէր
Մէկ ծիծառնիկ
Որ հոն մօտեր
Ունէր բունիկ,
Ամէն անգամ
Անցանելուն
Որս մ'իբերան
Տանելյիւր տուն,
Յաւով նայէր
ձրպուռան վերան
Մըտքէն կըսէր
Մեղք չէ՞ նորան.

Վերջապէս սիրտ ըրաւ
Ու ճրպուռան մօտեցաւ
« Քոյր, ըսաւ, բաւակա՞ն

« Երգեցիր այս օրուան
 « Ես կարծեմ անսրխալ
 « Լաւ կընես որ քիչ մ'ալ
 « Աշխատիս ճար ընես,
 « Վաղուան կեր պատրաստես : »

Մեր ծոյլ ճրպուանը ծանր եկաւ այս խըրատ,
 Զուգեց Թողուլ հանգիստն ու երգ անաշխատ,

« Վաղուան բան լա՛ւ է որ
 « Մըտածեմք վաղուան օր »

Ըսաւ ու երգն իւր ըսկսաւ.

Ծիծառն անյոյս՝ յիւր գործ դարձաւ :

Վաղուան օրը շատ չէ հեռու,

Կը հասնի շատ աչքըդ շատ բանալ գոցելու,

Պատրաստ եղողն՝ ուրախ սրբտով դէմ կենայ

Ծոյլն անպատրաստ՝ բերանը բաց կըմընայ :

Սյսպէս եւ ծոյլ ճրպուան եղաւ՝

Երբ վաղուան օրն եկաւ հասաւ,

Խելքը տըլած ճըռճըռալուն՝

Բան պատրաստած չունէր իտուն.

Բերան բացել՝

Բայց ոչ յերգել

Սյլ իհեծել

Եւ յանիծել

ԸզծուլուԹիւն իւր անըզգուշ,

Բայց մեղք, շա՛տ ուշ :

Անդին ծիծառն՝ ուրախ սրբտով

Ելեր առտուան վայելէր զով,

Երգեց, ըրաւ նախաճաշիկ

Զոր պատրաստեցն երեկուրնէ յիւր բունիկ.

Ու կուշտ փորով նորէն դարձաւ

Ու աշխատիլ ըսկըսաւ,

Որ վաղուան օրն ալ իրեն
Ունենայ հացը նորէն :

Ով կաշխատի
Նա չըմբնար անօթի,
Ով կըմբտածէ զօր վաղուան'
Նա չըլինիր մուրացկան :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԳ.

ԲՆԱԿԱՐԱՆ.

Բնակարանաց վերայ խօսելով՝ գեղի բնակուածիւնը քաղաքի բնակուածենէն շատ աւելի օգտակար է մարդուս : Որպէս զի քաղաքի բնակուածիւնն եւս առողջարար լինի, պէտք է որ լայն ու մաքուր փողոցի մէջ բնակի մարդ, տունը ցուրտ եւ խոնաւ հովերէ պաշտպանուած լինի, եւ գերեզմաննոցէ ու լճացեալ ջրերէ հեռու : Պէտք չէ որ բոլորտիքը բարձր ծառեր կամ պատերով գոցուի, որ օդոյն փոխուելուն արգելք լինին եւ խոնաւութիւն կը պատճառեն : Սենեակներն պիտի լինին ընդարձակ, ձեղուննին բարձր, պատուհաններն լայն ու երկայն, եւ տան վարի դասիկոնը գետնէն բարձրացած :

Հարկ է ամէն օր սենեակներն աւել մաքրել . չափաւոր կերպով զանոնք տաքցունելու է . կրակարանին պէտք չէ շատ մօտենալ, եւս առաւել՝ պէտք չէ քովը պառկիլ, վասն զի մարդ կհիւանդանայ : Զգուշանալու է նաեւ պառկելու խուցերը շատ տաքցունելէն : Թէոր մարդ ձեռքը կրակի վերայ

բռնէ տաքցունէ՝ կճաթուտին , մանաւանդ թէ որ
 թաց թաց տաքցունելու լինի : Ոտքերը կրակով տաք-
 ցունելն եւս լաւ չէ , դիւրաւ ձմեռնակ լինին :

Գեղի բնակուածիւնն որչափ եւ բնական կերպով
 առողջարար է օդոյն մաքրութեամբը , գեղացիք
 շատ անգամ զայն քաղաքի օդէն աւելի վնասակար
 կընեն . վասն զի տներնուն քով ճահիճներ ու ան-
 շարժ մեռեալ ջրեր կգործեն , կենդանեաց աղբ կը
 դիզեն կպահեն պարարտութեան համար , որոնք
 ծծած օդերնին կապականեն , եւ փտեալ ջերմերու
 եւ ուրիշ հիւանդութեանց ենթակայ կընեն զիրենք :
 Գեղացիք սովորաբար աղտոտ եւս լինին եւ հետեր-
 նին կենդանիք կբնակեցունեն , եւ կամ ախոռն
 առգելի մէջ կպառկին : Բոլոր այս բաներս առող-
 ջութեան վնասակար են :

Աշխատութեան սենեկիդ մէջ միայն մտերիմ բա-
 րեկամներդ պիտի ընդունիս . բայց շատը կան որ
 առաջին անգամ եւս մէկուն հետ ճանչուորութիւն
 ըրած ժամանակ՝ իրենց աշխատութեան սենեկին
 մէջ կընդունին զինքն , եւ չեն կարծեր թէ ըրածնին
 անմարդավարութիւն է :

Սենեկի մի մէջ խիստ շատ կահ կարասի խռկած
 պիտի չլինի : Իսկ աշխատութեան սենեկին զար-
 դերն աւելի եւս սակաւ պիտի լինին :

ՅԱՅԳԱԽՈՒՄԲ, ՊԱՐԱՀԱՆԳԵՍ.

Մեծ ցայգախումբ կամ պարահանդէս մի որ ու-
 նենաս , գոնէ ութ օր առաջ պիտի ընես հրաւի-
 րանքդ :

Թէ որ այնպիսի տեղ հետդ բարեկամ մի պիտի

տանիս, նայէ որ հոն գտնուող անձանց անուաները առաջուց ճանչցունես իրեն. անով շատ փորձանքներէ ազատ կպահես բարեկամդ. վասն զի շատ կհանդիպի որ անփորձ երիտասարդք իրենց բերնէն այնպիսի խօսքեր կփախցունեն, որ հոն գրտնուողներուն պատուոյն կդպչին, թելեր կկոտրեն, կացինին բերանը քարի կուգայ: Խօսողն եւս լեզուն պիտի բռնէ ու առաջին անգամ տեսած մարդկանց հետ բերնին եկածը պիտի չխօսի:

Պարահանդեսի գնացողը ճերմակ ձեռնոց պիտի դնէ: Մի եւ նոյն պարաւորը ստէպ պիտի չհրաւիրէ պարելու, ապա թէ ոչ՝ թեթեւամտութիւն ցուցուցած լինի: Մարդավարութիւն կհամարուի պարի հրաւիրել այն անձինքն՝ որ շատ երեսնին նայողներ չունին, ու կարծես թէ դահլճին զարդ ընող մէյմէկ կարասիներ են իրենց տեղը մնացած:

Ցայգախամբէն ետքը տանտիրոջ հետ տեսնուելու մի՛ պտըտիր. մնաք բարով ընելու պարտքէն ազատես. առանց ուրիշի նեղութիւն տալու եւ առանց աչքի երեւնալու ելիր գնա տունդ:

Փարիզու մէջ երբոր մեկ անգամ ցայգախամբի հրաւիրուիս թղթով, սովորաբար ասել է թէ բոլոր ձմեռն եւս հրաւիրուած ես. ընդունայն տեղ երկրորդ թղթի կսպասես:

Պարի մէջ խաղի սեղան մի եւս ունենալու է. վասն զի ամենայն հրաւիրեալք պար պարող չեն լինիր. եւ տանտիրոջ պարտքն է այնպէս կարգաւորել բաներն, որ ամէն մարդ կարենայ զուարճութիւն մի գտնել իրեն:

Սովորութիւն է որ դիմացը խաղի նստող անձին թեթեւ կերպով մը ծռելով բարեւ կտրուի. խա-

զը լմրննալէն ետեւ Թղթերը պիտի շտկես կաթգա-
ւորես ու խաթունին պիտի տաս որ բաժնէ :

Խաղի վերայ վիճաբանութիւն ընելը մեծ ան-
մարդավարութիւն է :

Տանտիրոջ համար բաւական դժուար բան է իւր
խրախճանին յարմար մարդիկ ընտրելը :

Ցայգախմբի մէջ վայելուչ բան չէ որ մէկը ար-
ձակ համարձակ դուրս հանէ իւր կարծիքները, եւ
կամ երկար ժամանակ խաղի նստի :

Մեծ մտադրութեան նշան կսեպուի՝ դաշնակ
զարնողին ետեւը կենալ ու երաժշտութեան Թեր-
թերը դարձունելը :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԵ.

ՏԱՔՆԱԼՈՒ ՈՒ ՊԱՂԵԼՈՒ ՎԵՐԱՅ.

Երբոր մարդս աշխատելով վազելով կամ խաղա-
լով տաքցած է, քրտնած է, պէտք չէ ամենեւին
ըմպելիք խմէ. վնասակար են նաեւ ոգելից ըմպե-
լիք, ինչպիսի են օղի, գինի, եւայլն : Տաքցած ժա-
մանակնիդ չըլլայ Թէ վրայի հագուստնիդ հանէք,
քամի բերան կենաք, խոտի կամ հողի վերայ պառ-
կիք, եւ ջուր մտնէք :

Ընդհակառակն այնպիսի ժամանակ պէտք է մարդ
ջանայ ինք զինքը զովացունել կամաց կամաց քալե-
լով, եթէ շատ քրտնած է՝ շապիկը փոխելով, եւ
փոքր մի յետոյ պուտ պուտ խմելով ծարաւն ան-
ցունել : Բայց պիտի ասէք, սաստիկ տաքերուն եր-

բոր մարդ կաշխատի՝ սաստիկ կծարաւի, պէտք չէ՞ ջուր խմէ: Տարակոյս չկայ, պէտք է խմէ, բայց առ սակաւ սակաւ, եւ խմելէն յետոյ աշխատանքը շարունակելու եւ կամ շարժման մէջ մնալու է. վասն զի կենալուն պէս՝ կպաղի ու կհիւանդանայ: Ասել է թէ տաքցած ժամանակ կրնայ ջուր կամ ուրիշ ըմպելիք չափաւոր կերպով խմուիլ թէոր խըմելէն անմիջապէս յետոյ պիտի շարունակուի այն տաքութիւնը պատճառած աշխատանքը կամ շարժումը. իսկ թէ որ պիտի չշարունակուի՝ պէտք չէ խմել, այլ սպասելու է որ քրտինքն անցնի, տաքութիւնն երթայ:

Զէ՞ք դիտած, ձիապանք եւ կառավարք ի՞նչ կրնեն. ճամբան ձիոյն ջուր կուտան, որովհետեւ դեռ տեղը հասած չէ, եւ ջուրը խմելուն պէս շուտ մը ճամբայ կհանեն զայն. բայց երբոր երթալիք տեղը կհասնի, ջուր չեն խմցուներ մինչեւ որ քրտինքն ու տաքութիւնը բոլորովին չանցնին. վասն զի գիտեն փորձով որ եթէ այն տաքութեան ժամանակ ջուր տան եւ ախոռը քաշեն կամ տեղ մի կապեն՝ ոչ միայն հազ լինի ձին եւ կհիւանդանայ, այլ եւ կըրնայ ճաթիլ: Երբոր զօրաւոր կազմուածք ունեցող կենդանիք այսչափ կվնասուին, ո՛րչափ ուրեմն փափկամարմին մարդս:

Պաղ առած ժամանակ պէտք չէ տաքցուցիչ ըմպելիքներ խմել. այլ լաւագոյն կերպն է տաքուկ հազնիլ, սաստիկ շարժմամբ մը քալելով կամ ուրիշ կրթութեամբ արիւնը դէպի մորթը մղել, եւ յետոյ անկողին մտնել, տաք կենալ: Երբոր մարմինն ու ոտքերը թրջին՝ պէտք է իսկոյն շապիկն ու գուլպան փոխել:

Զգուշացէք նաեւ գարնան գեղեցիկ օրերը տեսնելուն պէս ամառուան հագուստ հագնելէն. վասն զի որչափ եւ ցորեկը տաք ընէ, երիկունները շատ ցուրտ կընէ: Յուրտը մեծ թըշնամին է ամէն կեանք ունեցողին. ընդհակառակն տաքութիւնը կեանք ու շարժում կուտայ բոլոր բնութեան: Ռուսաց այս առածն շատ հշմարիտ է. « Տաքութիւնը մարդուս ոսկորներուն մէջ չթափանցեր, բայց ցուրտը կը թափանցէ: » եւ այն թափանցելովն է որ կվնասէ:

ԻՇՈՒԿՆ ՈՒ ՁԻՆ.

Իշուկին մէկ ազատութեան սիրով վառուած,

Յը մը յանկարծ

Թողել ախոռն էր ու փախեր,

Քաղաքն եկեր կըպըտըտէր:

Մեծ հրապարակ մը որ հասաւ՝

Շատ մը մարդիկ ժողված տեսաւ,

Ու փառաւոր ձի մը սազած զարդարած

Որ ոսկեքաշ գըլուխ տընկած՝

Կրակոտ աչքով կըխըրխընչէր,

Ոտուրներէն կայծ կըցատքէր.

Ամէնք վազող վազողի հոն կըփուծային,

« Տեսէք, տեսէ՛ք, կըկանչէին,

« Ի՛նչպէս վըսեմ ունի նայուածք,

« Ի՛նչ քաջարշաւ ունի վազուածք.

« Զին իւր ցեղին մէջ՝ իրա՛ւ որ

« է արժանի թագաւոր: »

Այս որ լըսեց պարոն իշուկը՝ կեցաւ,

Ու արհամարհ աչքով ձիուն նայեցաւ.

« Ա՛յս է եղեր ա՛յս մի, — ըսաւ քովինին —

- « Զարմանալի գոված ձեր ձին.
 « Աղբա՛ր, քիչ մ՛ալ ինձ չընայի՞ք,
 « Ինչո՞վ պակաս եմ ես ... հը՛մ ..խօսք մը ունի՞ք.
 « Մանաւանդ թէ լաւ նայեցէք,
 « Իմ ականջներըս չափեցէք,
 « Անկէց մեծ չե՞ն, շիտակն ըսէք :
 « Զի ուն խըրխունջ՝ մե՞ծ բան է ձեզ.
 « Կեցէ՛ք, մէյմ՛ալ ձայն հանեմ ես՝
 « Ա՛յն ատեն այն՝ լաւ կիմանաք անխելքներ՝
 « Թէ ձին՝ իմ քով եւ ոչ ըստա՛կ մը չարժեր : »
 Ըսաւ, ու ձայն հանեց բա՛րձըր
 Ու օդ թընդաց յայն ահեղ զը՛ռու...
 Մարդիկներուն ալ խընտալու պէտք էր բան,
 Ամէնքը քա՛հ քահ ծիծաղել ըսկըսան :
 Մեր էջը՝ շա՛տ լաւ դիտող էր, զայն տեսաւ
 Ուրախացաւ եւ ուռեցաւ.
 « Նայէ՛, նայէ՛ ի՛նչպէս ինձի կը հաւնին,
 « Զրտե՛ս խեղճեր, գէթ բա՛ն տեսան կեանքերնին.
 « Եկո՛ւր ատենն է վրէժ առնո՛ւմք մեր հիմակ,
 « Ու ձին թողու՛մք խաղք խայտառակ. »
 Ըսաւ, տընկեց իւր ականջներ,
 Ու շարժեց պո՛չը վար ու վեր.
 Մէյմ՛ալ փողէն ուժով յանկարծ
 Իհօ՛ ի՛հօ գըռգըռաց :
- Բայց փառաւոր այս գըռգըռոց մեր իշուկին՝
 Շա՛տ սուղ նըստաւ այս անգամին.
 Զայնն անդիէն չիտեմ ի՛նչպէս առեր իշպանն՝
 Իրեն ճանչցաւ փախըստականն.
 Ու ձեռքն առած հաստ գաւազան՝
 Կայծակի՛ պէս հասաւ վըրան,
 Ու հազիւ մէկ աչք բանալուն

Թըմբեցուց տա՛սն անգամ գըլխուն,
 Երբ նա նորէն բերան բացեր՝
 Վերջի անգամ մ'ալ զըռալու ոգի կառնէր.
 Իրաւ՝ զըռա՛ց խեղճը շուտով՝
 Բայց այս անգամ ծեծի՛ն ուժով.
 Այսպէս ահա հեծկըլտալէն զըռզըռալէն
 Մըտաւ իրեն ախոռ նորէն :

Երբ մեք ձիուն հաւնիմք սիրեմք,
 Ու միաբան ծափ կըզարնեմք,
 Ո՛վ նախանձոտ իշուկներ,
 Ձեզ մէջ նետուիլ ի՞նչ պէտք էր.
 Ոչ ձեզ բանի տեղ կար դըրնող,
 Ոչ վըրանիդ կար մըտածող.
 Բայց չափերնիդ թէ ոչ ճանչնաք՝
 Ու կըզըռաք,
 Իշուկին չա՛փը լաւ կուտան
 Ծաղր ու Գաւազան :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ժ. 2.

ZUFAHUS.

Խիստ շատ մարդիկ կան որ դիմացինին ո՛վ եւ ի՞նչ լինելը դրսի երեւուածքէն կդատեն, եւ հազիւ երբէք կսխալին: Մաքուր, վայելուչ, սովորական հագուստով մարդը իսկոյն կճանչցուի, եւ կիմացուի որ կարգաւորեալ ու ողջամիտ անձ է, թէ՛ ուրիշներուն պատիւ ընել գիտէ եւ թէ իւր պատիւը պահել: Ուրեմն պիտի նայիս որ մօրուքդ,

մազերդ խառնափնդոր կամ շատ երկնցած չլինին :
Փարիզու մէջ շատ կպահանջուի որ առաջին ան-
գամ այցելութեան գնացողը, մեծ սեղանի հրաւի-
րուողը, պարի մէջ գտնուողը վերէն վար սեւ հա-
գած լինի, միայն բաճկոնը կրնայ ճերմակ լինել :
Չեռքդ միշտ ձեռնոց պիտի ունենաս . շապիկդ բա-
րակ ու մաքուր, ոտքի ամաններդ կոկիկ, գլխարկդ
նոր . ձեռուքներդ մէկը կրնայ բաց մնալ, որ
անով բարեւ տաս թէ որ ճանչուորի մի հանդիպիս :

Մատնիներ ու խոշոր խոշոր ոսկի շղթաներ գոր-
ծածելը կոպտութիւն կսեպուի . շապկին օձիքն եւս
վզնոցէն մէկ կամ երկու մատ միայն դուրս պիտի
ելլէ :

Կանանց հագուստներուն ու զարդարանքին վե-
րայ խօսիլը թէ՛ դժուար բան է եւ թէ կերպով մի
աւելորդ . վասն զի անդադար փոփոխութեան մէջ
լինելէն զատ, իրենց բնական բան ու գործն է դի-
տել տեսնել ուրիշներուն ըրածն, ու ըստ այնմ
դատել, եւ իրենց լաւ երեւցածին հետեւիլ՝ ըստ
նորելուկ ախորժակաց :

Միայն քանի մի բան յիշեմք որ յայտնի ու սովո-
րական նիւթեր դարձած են :

Հագուստներուն գոյներն իրարու հետյարմարու-
թիւն պիտի ունենան . անկէց իզատ ամէն անձին
կերպարանացն եւս յարմար պիտի լինի հագուստը,
մանաւանդ գլխադիրն ամուսնացեալ կանանց աւե-
լի վայելուչ է շատ զարդարունը՝ քան թէ օրիոր-
դաց : Ամէն խաթուն ձեռնոցով պիտի երեւայ դուր-
սը, եւ զարդարանաց վերայ շատ խօսելէն պիտի
զգուշանայ :

Պարկեշտ եւ անպահոյճ հագուստը ամենէն աւե-

ի մեծ զարդարանք է իւր պատիւը ճանչցող խա-
թունի մի համար:

Մարդս պէտք է իւր հագուստն եղանակաց եւ
մանաւանդ իւր առողջութեան վիճակին յարմար-
ցունէ:

Պզտիկուց շատ տաք հագուստ հագնելու սովբելը
լաւ բան չէ, վասն զի մանկութիւնը չարքաշութեան
հասակ է: Շատ տաք հագուստ հագնիլն ամենուն
վնասակար է. վասն զի շատ տաքցունող հագուստ-
ներն թեթեւ շարժամբ իսկ մարմինը կքրտնցու-
նեն, արտաշնչութիւնը կդժուարացունեն եւ պաղ
առնելու վտանգին մէջ զմարդ կձգեն:

Ամառն երբեմն ձմեռուան պէս ցուրտ կընէ,
պէտք է ձմեռուան հագուստ հագնիլ ու մսելէն
զգուշանալ. վասն զի այն կարգէ դուրս ցուրտը
ձմեռուան մէջի սովորական ցրտէն աւելի կվնասէ
մարդուս, վասն զի մարմինը ցրտին վարժած չը-
լինիր: Զգուշանալու է նաեւ պաղ առնուլէն այն-
երկիրներ, ուր օդը փոփոխական է, այսինքն տաք
ըրած օրն իսկ յանկարծ կցրտէ, մանաւանդ երե-
կոյեան դէմ: Այնպիսի ժամանակ իսկոյն պէտք է
հաստկեկ հագուստ հագնիլ:

Որ եւ իցէ սաստիկ նեղ հագուստ վնասակար է,
վասն զի մարմնոյն զարգացումն ու մարսողութիւ-
նը կարգելու: Ամենավնասակար է զանգապանը (չօ-
րապ պաղը) սաստիկ սեղմելը, որովհետեւ կրնայ
արեան շրջանը արգելուլ եւ ծանր հետեւանքներ
մէջ բերել:

Շատ մազ ունեցողը հարկ չէ որ գլուխը ծածկէ,
բայց եթէ արեւուն ճառագայթներէն պաշտպա-
նելու համար: Փոքր տղայք եւս կարող են գլուխ-

նին բաց ելլել անվտանգ, եւ ամենավնասակար է նոցա գլուխը բրդէ կամ մուշտակէ գտակներով գոցելը. վասն զի կհիւանդանան, կոջլոտին, ակուայի՛ գլխի ու մանաւանդ աչքի ցաւ կունենան: Երբոր տղայք առողջ են մարմնով, ոչ գդակ (Ֆէս) պէտք է դնեն գլուխնին, ոչ գլխարկ (շափգա):

Փողպատն (պոյուն պաղը) եւս շատ սեղմելը վնասակար է, վասն զի արիւնը չկրնար ազատ կերպով իւր շրջանն ընել: Տղայոց ամենեւին փողպատ չըդնելն աւելի օգտակար է:

Մարդս պէտք է փորը միշտ տաք պահէ, վասն զի խոստուկն (սանճը) ու փորհարուծիւնը (խալ) միշտ փոքուն մտելէն առաջ կուգան: Նոյնպէս տաք պէտք է պահել ոտքն եւ Թացուծենէ զգուշանալ, որովհետեւ երբոր մարդուս ոտքը պաղ է, արիւնը դէպի գլուխը կվազէ կզարնէ:

Շատ նեղ ու կարճ կօշիկներն (ճիզմէ), կիսակօշիկներն (պօթին) ու մուճակները (գունտուրա) ոտքին վերայ կոճանք, տեռն ու բլիթէն (նասըր) կքուսցունեն:

Զգուշանալու է նաեւ հիւանդաց հագուստը հագնելէն, վասն զի անով երբեմն կրնամք տարափոխիկ հիւանդութիւններ վաստկիլ:

ՀԱՆԴԵՐՁ ԵՒ ՄԱԲՐՈՒԹԻՒՆ.

Հանդերձք իցեն քո մաքուր՝ Թէ եւ կայցես իքու՛մ տան.

Գիշերազգեստ տարազու մի՛ գար երբէք յերեւան: Յայց Թէ ումեք ելանես, զգեցիր հանդերձ մաքրագոյն.

Մի՛ բնաւ կարի պրճնազարդ, մի՛ գրրգլեկօք կար-
կատուն:

Այր հասակեայ չըպարտի զգենուլ պայծառս նո-
րածել,
Բայց եւ ըզգօն պատանին խորշի ըզգենուլ յոյժ թե-
թել:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՃԷ.

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ.

Ջուարճախօս անձինք սակաւաթիւ են. իսկ շա-
տախօսք՝ բազմաթիւ: Որք իւր գլխէն անցածները,
մինչեւ պզտիկութեան ժամանակ ըրած անխելքու-
թիւններն եւս կառնէ ու կանցնի, պատմելէն չը-
կշտանար. որք կերակուրներու վերայ խօսք բա-
ցուելուն պէս՝ բոլոր իւր իմաստութիւնը կթափէ
թէ տեսակ տեսակ կերակուրներն ի՛նչպէս շինելու
է, աղէկն ո՛ւր կշինուի, համեղն ո՛րն է, անկէց
համեղ ի՛նչ կայ, եւ այլն. որք իւր բամբասասէր
լեզուն կարծակէ ու բզզացող ճանճի պէս ամենուն
վերայ կխօսի ու կխնտայ, մինչեւ արեւուն վերայ
եւս քիծերը միայն կտեսնէ. որք կարծես թէ ցանկ
մի շիներ է այս կամ այն ընտանեաց մէջ պատա-
հած անհամոլութիւններուն. զանոնք կպատմէ ու կը
պատմէ. այլ ո՛ր մէկն ասեմ:

Թէոր շէնքով շնորհքով բան մի կուզես խօսիլ,
դիմացիներուդ խօսքերուն աղէկ ուշ դիր որ հաս-
կանաս թէ իրենց համար ո՛ր նիւթն աւելի ախոր-

ժելի կերեւայ, եւ ըստ այնմ չափէ ու յարմարցուր խօսքերդ :

Խօսակցութեան մէջ զգուշանալու բան է այսպիսի ձայներ հանելը . Ի՞նչ ըսիր, ո՛ւր, վը՛շ, վա՛յ վա՛յ վա՛յ... : Դիմացինիդ ազգականաց մէկուն անունը յիշելու ժամանակ աղէկ բան է անկէց առաջ պարոն, տէր կամ տիկին բառերը գործածել՝ թէոր յարմարի . Պարոն հայրդ ի՞նչ ըսաւ . տիկին մայրդ ո՛ւր է հիմա :

Դիմացինին խօսքը կտրելը մեծ կոպտութիւն կը համարուի, այնպէս որ չեմ կարծեր թէ ամէն անգամ արդարանան նորա եւս որ սովորութիւնը ըրած են անդադար « Խօսքդ մեղրով կտրեմ, » կամ « խօսքդ չմոռնաս » ասելով ուրիշներուն բերանը գոցելը :

Վէ՛ճ մի որ բացուի, պէտք չէ առնուլ անցնիլ, ու մինչեւ վերջը մի եւ նոյն նիւթին վերայ հակահառել, վասն զի ծայրէն կռիւ կրնայ ելլել :

Իմաստակութիւն եւ անհամութիւն կսեպուի անոնց ըրածն որ ստէպ ստէպ՝ յարմար եւ անյարմար վկայութիւններ կբերեն խօսակցութեան մէջ :

Թէ որ քեզի հետ խօսողէն աւելի խելացի կտեսնես ինքզինքդ, զայն յաղթահարելու մի՛ աշխատիր . վասն զի այնպիսի յաղթութիւն մի ըրած լինիս որ փառք չբերեր, եւ կոպիտ լինելդ ուրիշին կհասկացնէ :

Զգուշացիր թեթեւութեամբ խօսելէն նաեւ սրբազան բաներու վերայ . ապա թէ ոչ՝ իրաւամբ պժգալի լինիս ծանր ու բարեպաշտ անձանց :

Մարդիկ կան որ բնական յաջողութիւն մը ունին ընկերութիւնը շէն պահելու իրենց անակնկալ ու

սուր սուր կատակներովը . բայց շատ պիտի զգուշանան անոնք անհամ անհամ ու պաղուկ կատակներէն որ կրնան երբեմն բերաններէն փախցունել:

Ասոնք մասնաւոր կերպով պիտի զգուշանան բառի խաղերը ընելէն, որ շատ անգամ լինի խօսքերը ծումուկելով, աննշան խօսքերը քաշկուտելով, անտարբեր խօսք մի ուրիշ մտքի տանելով, եւ այլն:

ԶՐՈՅՑՔ ԵՒ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ.



Ոչ անդադարըն զըրոյց է կենցաղել ընդ մարդկան,
Այլ գործ է կալ ունկընդիր, իդէպ խօսել միշտ
զարժան:

Թէ որ առ քեզ ինչ ասէ, հայեաց իդէմսըն զուարթ,
Եւ իխօսելն ընդ ումեք՝ այլ ինչ գործել ոչ է պարտ:

Եթէ զխօսողըն վարանք կամ մոռացօնք ունիցին,
Յանգէտըս լեր կամ ցածուն բանիւ օգնեա ծանօթին.

Թել զըրուցաց ընկերին եթէ յանկարծ հատանի,
Իդադարել պատճառին քեզ յուշ առնել անկանի,
Բայց ողորով՝ զի յառաջ ըզբանն հատեալ վարեացէ.
Իսկ հատանել զայլոց խօսս երբէք ումեք անկ ոչ է:

Միանգամայն թէ խօսիք իջերմաջերմըն զըրոյց,
Հարկ է լըռել փուլթապէս միումդ իձէնջ յերկոցունց,

Ներումն հայցել իմիւսմէն եւ խօսելոյ տալ հրաւեր
Մինչեւ ըսկիզբն արասցէ այն որ կարգաւն է իվեր:

Թէ պատմութիւն որ պատմեալ եւ զուարճալի զայն
կարծէ,

Կամ գորովի յիւրն իբանս եւ ըզքո սիրտ ոչ շարժէ,
 թէպէտ եւ յոյժ ձանձրասցիս՝ ցոյց խուն իդէմարդ
 ժըպիտ,
 Զի մի՛ լըքցի սըրտաբեկ քոյդ վիպասան պարզամիտ.

Թէ բանս իբանս աղխաղխեալ գնայ յոյժ հեռի յի-
 մաստէն,
 Համբեր ժուժեա լըռուժեամբ մինչեւ դարձցի նա
 անդրէն.

Եթէ անծայր անաւարտ այն պատմութիւն երեւի,
 եւ վիպասանն է աւագ ոք կամ տիօք ծերունի,
 Դարձեալ ժուժեա մըտադիւր. իսկ թէ իցէ դիւրըն-
 տել,
 Կարես ճարտար դարձուածով զնախկինն բան
 յուշ առնել:

Գործ է փափուկ դըժպըհի զբանից հայցել կըրկ-
 նութիւն.
 Բայց թէ իցեն եւ բազումք որ չիմացան քեզ հան-
 գոյն,
 եւ հարկ իցէ խօսողին կըշուել իդէպ պատասխան,
 նախ ըզներումըն խնդրեալ եւ ապա հարց ըզնոյն
 բան:

Եթէ ոք սուտ ինչ եւ կեղծ վիպասանել ախորժէ,
 Գիտեմ զի զգօն ունկընդրին ոչ սակաւ վիշտըս բերէ.
 Թէ հաւատաս՝ այսպանիս իբր այր տըխմար եւ ա-
 պուշ,
 եւ թէ հերքես՝ տըմարդի կոչիս կամ խրոխտ անըզ
 գոյշ.
 Յայսգոյն իդէպս անկորուստ պահես զանձին ըզ-
 պատիւ

Թէ ցուրտ դիմօք իլուր կաս եւ ցըրտագոյնըս սըր-
տիւ :

Մինչ ջերմաջերմըն պատմէ որ իբր անլուր ինչ եւ
նոր

Որում իցես դու տեղեակ գէթ ըստ մասին կարեւոր,
Մի' առնէր յայտ թէ գիտես, զի մի' կրեսցէ նա զամօթ
Թէ եւ բանիւք անալի խանգարիցէ ըզհամն եւ զհոտ :

Մի' շուժափեր իխօսելդ եւ մի' լինիր ծանր եւ ձիգ .
Զյըստակ հընչումըն սիրեա եւ զառոգանս գեղեցիկ :

Վա՛շ իմ քաջին որ հըմուտ է բարբառոյն հայրենի,
եւ որ իհայ ճոխ լեզու բան չըխառնէ վայրենի :

Ըստէպ ոգեա իզըրոյց ըզխօսակցիդ պատուանուն
Տէր ասելով կամ տիկին, կամ վարդապետ կամ
պարոն :

Պատասխանի թէ հարցմանց ունիս կըշուել օտարին,
Մի' շատ գըրեր ասել լոկ այո կամ ոչ ցըրտագին :

Գործ թէ պատմես յորում լեալ իցեն եւ այլք քեզ
կըցորդ ,

Նախ զայլոց դէմս ած իյուշ , յետոյ իմէջ բեր ըզքոյդ :

Թէ ընդհարար ընդ ումեք, ներումն հայցեա դու իս-
կոյն .

Ասել թէ չիք ինչ վընաս' այն վայելուչ է միւսոյն :

Թէ ախորժես դու իբնէ պատմող լինելդ իպուլաճոց,
Տես թէ կայցէ' յունկընդ իրսըդ եւս ախորժից տա-
րացոյց :

Որ ցանգ զիւր բանըս պընդէ' ընդ այնպիսում մի'
կագեր,

Խոտեա մըտօք զիմաստակ, ըզծաղրածուն մի՛ յար-
գեր.

Գովեա ըզբարին, այլ չափով. մի՛ յոյժ գըրգուիս ընդ
չարի.

Ընդդէմ ազգի կամ տեղւոյ կըքրել է գործ յիմարի:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԸ.

ՄԱՆՐԱՎԵՊՔ.

*
**

Անխելքին մէկն յետագայ տոմսակս գրեր է իւր
բարեկամին. « Սիրելիդ իմ թորոս, ոսկի քթա-
տուփս տունդ մոռացեր եմ. շնորհ ընէիր յանձնէիր
զայն գրաբերիս: » Տոմսակը կնքելու ժամանակ
քթատուփը գտեր ու յետագիւր մի աւելցուցեր է.
— « Գտայ զայն, ուստի ընդունայն տեղ մի՛ փնտը-
ռեր: » եւ գոցեր դրկեր է:

*
**

Տգեղ փաստաբանին մէկն որ գրեթէ քիթ չու-
նէր, դատաստանի մէջ թուղթ մի այնպէս քիթն
կկարդար որ մարդ բան չէր հասկանար: Գատա-
ւորաց մէկն որոյ քիթն շատ խոշոր էր, « Ակնոց
մի չունի՞ք որ սըւոր տաք » կասէ: Փաստաբանին
շատ ծանր գալով այս խօսքը, « Պէտք է որ, կպա-
տասխանէ, քիթդ եւս տաս, որպէս զի կարենամ
զայն գործածել: »

*
**

Պ. Բ..., որ թէպէտ պարտքի տակ կփտէր, սա-

կայն մեծ հարստութեան տէր կկարծուէր: Կարգուելուն նախընթաց երիկունը զոքանչին տունը սրահին մէջ վեր վար տրտում տխուր կպտըտէր: Զոքանչը շատ անգամ քովը կերթայ կհարցանէ, ի՞նչ ունիս պարոն: — Բան մը չունիմ տիկին » կը պատասխանէ: Հարսնիքէն ութ օր յետոյ զոքանչը տեսնելով որ պարտատեարց մին կերթայ միւսը կուգայ, կերթայ նմա « Պարոն, կասէ, զիս խաբեցիր: — Ոչ, չխաբեցի. յիշէ տիկին, կկրկնէ փեսայն, որ հարսանեացս նախընթաց երիկունն մինչդեռ տակաւին ժամանակ կար, սրահիդ մէջ տասն անգամէն աւելի զրուցի քեզ որ բան չունիմ: »

*
*
*

Ս. զքատ նաւավարին մէկը բոլոր օրը բան մի չըվաստկելով երբոր տխրութեամբ տունը կդառնար, մարդ մի կուգայ եւ կուզէ որ զինքը դիմացն անցունէ: Ուրախութեամբ կանցունէ խեղճ նաւավարն. ու երբոր վարձքը կուզէ, « Ամենեւին ստակ չունիմ, կասէ ճամբորդն, բայց քեզի խրատ մի տամ որ ստակ կարժէ: — Լաւ է, կպատասխանէ նաւավարը, բայց կինս ու տղաքս խրատով միայն չեն կրնար ապրիլ: » Սակայն տեսնելով որ իրաւցնէ ստակ չունի տալու, « Ասա տեսնեմք ուրեմն, կզրուցէ, ի՞նչ է տալու խրատդ: — Այս է, կասէ, որ մէյմըն ալ մարդ չանցունես առանց վարձքդ առաջուց առնելու: »

*
*
*

Դատաւորին մէկը դատաստանի ժամանակ քնացեր է. նախագահն իւրաքանչիւրին կարծիքը հարցանելով երբոր կարգն իրեն եկեր է, աչքերը շփելով « Թող կախեն, Թող կախեն » զրուցեր է:

— Բայց ցորենի արտի վերայ է դատաստանն » որ ասեր են , « Լաւ է ուրեմն , Թող հնձեն » պատասխաներ է աչուքները բանալով :

*
**

Պարտապանին մէկը ճամբան տրտմութեամբ գլուխը կախած քալելու ժամանակն անցաւորին մէկն իրեն կհարցանէ այն տրտմութեանը պատճառը . « Շատ պարտք ունիմ , կասէ , եւ չեմ կարող վճարել : — Դուն ի՞նչ կմտածես , մա՛րդ Աստուծոյ , կպատասխանէ բարեսէր անցաւորն . Թող զայն պարտատէրդ մտածէ : »

*
**

Անգամ մի Գաղղիոյ Թագաւորը Տաճկի դեսպանը կրնդունի պալատի տիկնանց առջեւը , եւ ոմանք կհարցանեն դեսպանին այն տիկնանց գեղեցկութեանը վերայ ունեցած կարծիքը . « Ամենեւին կարծիք մի չեմ կրնար ունենալ , կպատասխանէ որովհետեւ նկարչութիւն չեմ գիտեր . » վասն զի ամէնքն եւս երեսնին գունով ծեփեր են եղեր :

*
**

1740ին համար գուշակուած արեւու խաւարումն այնպիսի սարսափի մէջ ձգեր է բոլոր գեղացիքն , որ կարծելով Թէ պիտի մեռնին՝ խոստովանանքի վազող վազողի լինին եղեր : Խեղճ գեղջերէցը չկարենալով նոցա հասնիլ՝ ճարը կհատնի ու կելլէ ամպիոնը կասէ . « Որդիք , այնչափ շատ մի՛ աճապարէք , որովհետեւ խաւարումն տասնըհինգ օր ետ ձգուեր է : »

*
**

Մայր մի իւր որդին ամէն կողմանէ կատարեալ ու սքանչելի կգտնէր , Թէպէտեւ սաստիկ երես

առած էր ու անտանելի : Ուստի եւ օր մի Պ. Ս... նմա կասէ . « Տիկին, ի՛նչ սիրուն զաւակ ունիս. ե՛րբ պառկելու կերթայ : »

*
**

Գեղացւոյն մէկն որ դրացւոյն ոչխարը գողցեր է եղեր, կերթայ գեղջերիցոյն կխոստովանի : « Զաւակս, պէտք է որ ոչխարը տիրոջը դարձունես կասէ, ապա թէ ոչ չեմ կարող քեզ արձակում տալ : — Ի՞նչպէս կրնամ դարձունել, կպատասխանէ գեղացին, որ շատոնց կերեր լմնցուցեր եմ : — Շատ կցաւիմ, կկրկնէ խոստովանահայրը . գիտցիր որ բանդ շատ վատ է, որովհետեւ բաժին սատանայի պիտի լինիս, եւ վերջի դատաստանին օրն ամէն բան քեզի դէմ պիտի ելլէ խօսի . նաեւ այն ոչխարը : — Ի՞նչ, ոչխարն եւս հո՛ն պիտի գտնուի . այլ ի՛նչ կուզեմ ես : — Ինչո՞ւ կհարցանէ քահանայն : — Վասն զի ոչխարը բռնելուս պէս դրացւոյս կտանիմ, Ահա ոչխարդ կասեմ : »

*
**

Օր մի Տիւրա դուքսը տեսնելով որ Կարդեսիոս (Տէքարթ) իմաստասէրն ազնիւ կերակուրներ կուտէ, հեգնելով կասէ . « Իմաստասէրք եւս համեղ ուտելիք կսիրե՛ն եղեր : — Ինչո՞ւ չպիտի սիրեն, կը պատասխանէ Կարդեսիոս . մի՛թէ կկարծես որ Աստուած լաւ բաները տգիտաց համա՛ր միայն ըրած է : »

*
**

Պ. Ս... կասեր թէ գեղեցկութիւնն յանձնարարական թուղթ մի է, զոր բնութիւնն իւր սիրելեացը միայն կուտայ :

*
* *

Երբոր մարդուն մէկուն առանձնասիրութիւնը կմեղադրէին, « Վասն զի, զրուցեց, աւելի վարժած եմ իմ պակասութեանցս քան թէ ուրիշներուն: »

*
* *

Երբոր Անգղիացւոց Փոփ բանաստեղծին հարցուցին թէ ի՞նչ հնարքով կրցեր էր այնչափ բարեկամ ունենալ, պատասխանեց. « Այս երկու արածովս, Ամէն բան կարելի է. ամէնքն իրաւունք ունին: »

*
* *

Թաղէս փիլիսոփային հարցուցեր են թէ աշխարհիս վերայ ամենէն դժուար ու դիւրին բանն ի՞նչ է: « Այս երկուքն է, պատասխաներ է. ինքզինքը ճանաչել, եւ ուրիշի խրատ տալ: »

*
* *

Թր մի Գաղղիացւոց անուանի ողբերգակ Քրէպիյոն բանաստեղծին կհարցանեն թէ ի՞նչ զուարճութիւն կզգայ շուներու ընկերութենէն, քանզի իւր հետը միշտ գունդ մի շուն կպտըտցունէ եղեր: « Շիտակը, կպատասխանէ, քանի որ սկսայ զմարդիկ ճանաչել, շանց ընկերութիւնը նախադաս համարեցի, որովհետեւ նոցա մէջ աւելի հաւատարմութիւն գտայ: »

*
* *

Նափովէոն Աւստրիացի պատերազմէն որ կը դառնայ, թանգարանաց վերատեսուչը Տընոն կուզայ նմա կներկայացնէ իյիշատակ այն փառաւոր յաղթութեան դրոշմուած գեղեցիկ մետալն, որոյ մի կողմն տպուած էր կայսեր գլուխը, եւ միւս կողմը գաղղիական արծիւն՝ մագլացը մէջ անգ-

ղիական ընձառիւծն ունելով: « Այս ի՞նչ է, հարցուցեր է նափուէոն: — Ինքնակալ Տէր, պատասխաներ է ճընոն, գաղղիական արծիւն է որ իւր մագլացը մէջ բռներ կխողէ անգղիական ընձառիւծը: — Յա՛՛ծ շողոքորթ, գոչեր է այրն մեծ. ո՛րպէս կհամարձակիս ասելու որ գաղղիական արծիւն անգղիական ընձառիւծը կխողէ՝ մինչդեռ ես եւ ոչ մէկ նաւակ մի կարող եմ ծով իջեցունել որում Անգղիացիք չտիրեն: Իսկոյն տար այս մետալը հալեցուր, եւ աչքս միւսանգամ նոյնպիսի բան չտեսնէ: » Այսպէս ատելի է շողոքորթուծիւնն ամէն իւր արժանաւորուծիւնը ճանաչող մարդու:

*
* *

Ռոժաքլէն զօրավարն երկարածիգ ատենաբանութեան տեղ այս միայն զրուցած է իւր զօրացը պատերազմը չսկսած. « Թէոր յառաջ երթամ՝ ետեւես եկէք. Թէոր ետ քաշուիմ՝ մեռուցէք զիս. իսկ Թէոր մեռնիմ՝ մահուանս վրէժը խնդրեցէք: »

*
* *

Գինովի մի կասէին « նայէ ի՛նչ վատ բան է խեղը. գինիէն ոտքդ չեն բռներ, ու անդադար այսպէս կիյնաս կելլես: — Ատոր յանցանքը գինիին չէ, պատասխանեց գինովը, այլ իմս է որ արբած ժամանակս տեղ մի չեմ շնդրկիր կքալեմ: »

*
* *

Գինովին մէկը հոգեվարքին մէջ չէր ուզեր խոստովանիլ. « Ինչո՞ւ խոստովանիմ, կասէր, բոլոր յանցանքս այն է որ փոխանակ լաւ գինի խմելու՝ միշտ անպիտանը խմեր եմ: — Վրան գղջա, կասէր խոստովանահայրը, եւ խօսք տուր որ մէյմըն ալ չխմես Թէ որ Աստուած քեզ կեանք տայ: — Անպի-

տա՞ն գինի, կգոչէ հոգեվարն. Աստուած չընէ որ խմեմ: »

*
* *

Իշխանին մէկը կասէր իւր հացկատակին . « Թշուառական, գիտեմ որ զիս կշողոքորթես, սակայն հոգ չէ, խօսքդ առաջ տար. ախորժելի է միշտ շողոքորթուծիւնը: »

*
* *

Մարդուն մէկը հռչակաւոր փաստաբանի մի կուգայ ու կխնդրէ որ իւր դատը վրան առնու. եւ համառօտիւ կպատմէ նմա զայն: Իրաւունքը քուկդ է, կասէ փաստաբանը, սակայն կցաւիմ որ շատ ուշ հասար, վասն զի այս առաւօտ քու հակառակորդիդ դատը պաշտպանելու խօսք տուի: — Բայց թէ որ իրաւունքն իմս է, ուրեմն նա իրաւունք չունի, կասէ մարդը: — Զայն դատաստանարանին մէջ կտեսնեմք, կպատասխանէ փաստաբանը: Աստուած փաստաբանի ձեռք զմարդ չմատնէ:

*
* *

Դերձակ Կիրակոսը գեղեցկահանդերձ Պ. Տ...ին տարեկան հաշիւը կբերէ եւ զինքը անկողին կգլ տնէ: « Ո՛հ, դուն ես, կասէ դերձակին. անշուշտ հաշուեցուցակս կբերես: — Այո, պարոն, եւ քիչ մը ստակ կուզէի: — Գրասեղանս բաց. քաշէ սա դուրճը (տէրէք): » Դերձակն ուրախուծեամբ կքաշէ. « Այն չէ. միւսը: » Դերձակն երկրորդ դուրճը կբանայ: « Այն եւս չէ. վրայինը քաշէ, կասէ Պ. Տ... հա՛, այն է. մէջն ի՞նչ կտեսնես: — Շատ մի թուղթ կտեսնեմ, կասէ դերձակը: — Վճարելիք հաշուեցուցակներ են. քուկինդ ալ անոնց հետ դիր » կասէ եւ միւս կողմը կդառնայ: Այն փառաւոր հագուած

կապուած երիտասարդաց քանի՛ք քանիք Պ. Տ...ին չե՞ն նմանիր: Ընթերցող, նայէ՛ որ դուն եւս չընմանիս:

*
*
*

Ագահին մէկը պանդոկ կմտնէ. « Ինձ թերխորով (բաժատան) հաւկիթ մի խաշեցէք կասէ, եւ ջրովը հացաթան (թիրիթ) ըրէք ծառայիս: — Լաւ, կասէ պանդոկապետը, բայց գիտնալու ես որ մէջը մէկ հաւկիթ խաշած ջրով եփուած թանը չկրնար շատ համով բան լինել: — Լաւ լաւ, կկրկնէ ագահը. երկու հաւկիդ դիր, ախորժակ ունիմ, երկուքն եւս կարող եմ ուտել:

*
*
*

Զարագործին մէկը գիշեր ժամանակ փողոցին անկիւնը մարդու մի կհանդիպի ու « Կա՛մ քսակըդ կամ կեանքդ » կըսէ: Ես ալ նոյնը քեզմէ պիտի ուզէի » կպատասխանէ մարդը:

*
*
*

Մատենագրին մէկը քերթուած մի կյօրինէր ու միանգամայն իւր դատը կվարէր, ուստի կախուած էր ապագայ հարստութիւնը: Եւ որովհետեւ այս դատին պատճառաւ իւր քերթուածին այնչափ հոգ չէր տաներ. բարեկամք իւր մեղադրեցին զինքը որ փառքը հարստութեան կզոհէ: «Փառք ստանալը շատ լաւ բան է, պատասխանեց, սակայն անմահանալէն յառաջ պէտք է ապրելուն միջոցները հոգալ:

*
*
*

Օր մի Արակոնի թագաւոր Մեծին Ալփոնսոսի գանձապետը տասը հազար ոսկի կբերէ: Հոն կեցող պալատականաց մէկն այն փայլուն ոսկիները տես-

Նեղով՝ ցած ձայնով մի կըսէ « եթէ սա գումարն ունենայի, բոլոր կեանքս երջանիկ կլինէի : — եղիբ » կըսէ վեհանձն թագաւորը ու իրեն կշնորհէ այն տասն հազար ոսկին :

*
*
*

Սոկրատ իմաստասէրն շնորհակալ կլինէր Աստուծոյ որ զինքը բանաւոր կենդանի ստեղծեր է եւ ոչ անբան, էրիկ մարդ եւ ոչ կին, քաղաքակիրթ Յոյն եւ ոչ անկիրթ Բարբարոս, Աթենացի եւ ոչ Թեբացի :

*
*
*

Եսովպոսին հարցուցեր են թէ ի՞նչպէս կրցեր է այնպիսի արդարասէր մարդ լինել : « Ուրիշներուն ըրածին հակառակն ընելով » պատասխաներ է :

*
*
*

Մարդիկ կան որ անմտաբար ամէն բանի վերայ պարծենալ կսիրեն : Յտարական մի Սպարտա կերթայ, եւ մէկ ոտքի վերայ կենալով քաղաքը դիտած ժամանակը կտեսնէ որ անդին Սպարտացի մի եւս իւր այնպէս կենալը կեցեր կդիտէ : Կդառնայ իրեն « Ձեռ կրնար ինծի չափ երկար ժամանակ այսպէս կենալ կըսէ : — Իրաւ է, կպատասխանէ ուշիմ Սպարտացին. բայց սագի ձագ չկայ որ նոյնպէս չկարենայ կենալ. » եւ ճարտար պատասխանով կիմացունէ այն պարծենկոտին սագի ձագին չափ խելք ունենալը :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԺԹ.

ՕԴ.

Մաքուր օդը մարդու կերակուրի պէս հարկաւոր է. երբոր այնպիսի սենեակ մի գտնուիմք ուր շատ մարդ լինի՝ նեղութիւն կզգամք, կուզեմք դուրս ելլել, մաքուր օդ ծծել: Երբոր շատ մարդիկ տեղ մի կամ խուց մի ժողոված կենան կամ պառկին, պէտք է առաւօտ երիկուն պատուհաններն բանալ եւ օդը փոխել: Բայց շատերն այս զգուշութիւնը չեն քներ. աշունն ու ձմեռը կասեն. « Մեզ չէ՞ որ այս տաքուկ խուցերնիս պաղեցունեմք: » Ամառն եւս ուրիշ պատճառ կգտնեն: Բայց աւելի լաւ չէ՞ որ մարդ փոքր մի մրսի քան թէ հիւանդանայ:

Օդը շուտով կապականեն կանթեղաց ու ճրագի ծուխը, վառած ածուխի ու գզած բրդի հոտն եւ չորցուցած կամ արդկաց (իւթիւլէմէք) լաթի գոլորշին. եւ այսպէս ապականած օդին մէջ երկար ժամանակ կենալով ոչ միայն կարելի է մարդու հիւանդանալ, այլ եւ անշնչանալ մեռնիլ: Արուեստական հնարքներով կրնայ օդը մաքրուիլ, բայց լաւագոյն ու բնական կերպն է՝ ստէպ խուցին պատուհանը բանալով օդը նորոգել, ածուխը մինչեւ որ բոլորովին չկարմրանայ կրակ չկտրի՝ խուցը չբերել, բուրդը բացօթեայ տեղ գզել, եւ լաթ արդրկած տեղը պատուհան մի բաց թողուլ: Ամենեւին պէտք չէ պառկիլ չորցունելու համար լաթ փռուած տեղը. վասն զի կրնայ մարդ սաստիկ գլխի

ցաւ ունենալ եւ մինչեւ կաթուածէ զարնուիլ :

Առողջութեան վնասակար են նաեւ ծաղկանց, պտղոց, նոր պատերու եւ ներկի հոտը. ուստի պէտք չէ մարդ գիշերը պառկած խուցը ծաղիկ, տունկ կամ պտուղ ունենայ, եւ պատերը նոր շինուած կամ ներկուած տուն պառկի :

Մաքուր սենեկի մի մէջ ոչ սարդի ոստայն կամ մամուկի բոյն (էօրիւմնէք) պիտի տեսնուի, ոչ փոշի, ոչ շիւղ, եւ ոչ ո՛ր եւ իցէ աղտոտութիւն կամ գէշ հոտ : Պատուհանաց ապակիք եւս հայլիի պէս ջինջ պայծառ պէտք է լինին :

ԳՆԱՅՔ ԻՃԱՆԱՊԱՐԶԻ.

Թէ որ ծանօթ կամ աւագ եւ քեզ յուղւոջ ընդ առաջ, Զորմոյն ըզկողմրն նրմա տուր եւ կացջիր դու ընդ աջ :

Եթէ խափան ինչ կայցէ յանցրս տեղւոյն յոր հասեր, Սպասեա մինչեւ այլք անցցեն, եւ դու մի՛ ընաւ զոք մըղեր :

Մինչ իտըղմուտ ընթանաս, մի՛ ցայտեսցի ցեխ ըզքեւ,
Հանդարտաքայլ գընասջիր, լեր յոտընփոխըս թեթեւ :

Մի՛ ընդ ումեք հարկանիս իմարդաշատ ինչ փողոց. եւ մի՛ յախուռն արշաւեր՝ զի մի՛ բաղխիս դուն յայլոց.

Եթէ չիցես մըտադիր այսըմ անհրաժեշտ խըրատու, Ոչ բիրտ միայն վըկայիս, այլ եւ պատճառք վընասու :

Զգուշեալ քայլել չէ դիւրին մինչ ունիցիս հովանեալ .

Բստ դէպս ի վեր զայն ձրգեա կամ ունիջիր վայրահալ .

Թէ որ առ քեւ պատահեալ՝ անհովանեալ հետեւի ,
եւ ընդ քոյովըդ խնդրէ պատրասարան յանձրելի ,
Ընկալ ըզնա քաղցրութեամբ , հարց եթէ ո՛ւր գընայցես ,

եւ մինչեւ հուպ իտեղին լեր ուղեկից թէ կարես :

Եթէ չըզիտես դու զուղին որ տանիցի յայն ինչ վայր ,
Ողջոյն ումեք տուր եւ հարց , եւ շնորհ կալջիր կամակար :

Մի՛ ունկընդիր լինիցիս երբէք այլոց թէ խօսին ,
եւ մի՛ ուրուք ի հետոց գնայցես իբրեւ անմեկին :

Ձէ պարտ ի դէմս անցորդաց պըշնուլ յառել գռեհկաբար ,

եւս առաւել թէ տիկին որգայ՝ նդ քոյին ճանապարհ :

Ողջոյն պատուոյ տուր եւ անց քում ծանօթին եթէ գայ .

Թէ սերտագոյն քեզ իցէ , մատիր եւ հարց զիա՛րդ կայ :

Մեծըն տիօք կամ բարձիւ նախ մեկնեսցի գնալ յուղին ,

Բայց կըրտսերոյն է օրէն կանխել յողջոյն հրաժեշտին :

Հակիբն լիցի որ յուղուջ ընդ բարեկամքս զըրոյց ,
Կըրտսեր կացցէ յորմըն կոյս , թիկնադարձ միւսն ի փողոց :

Բան կարեւոր թէ ունիս ասել քոյում ծանօթին,
 Հայցեա հրաման ինմանէ, երթ խուն ինչ վայր ընդ
 նրմին .

Եթէ իցէ առ նովլաւ այլ ոք այր քեզ անծանօթ,
 Մի՛ յամեսցես իխօսել, անց ողջունիլ համառօտ :

Մինչ ընդ ումեք գընայցես, եւ նա ողջոյն այլում ետ,
 Պարտիս եւ դու տալ ողջոյն թէ եւ իցես առնն ան-
 գէտ :

Իպատուհանս ինչ յանկարծ եթէ ծանօթ զոք տեսեր,
 եւ զի եւ նա զքեզ ետես՝ զայն ճշմարտիւ գիտացեր,
 Ողջոյն եւեթ պարտիս տալ եւ գնալ լըռիկ ընդ ուղի .
 Իսկ բարբառել երբէք ոչ, եւ ոչ առնել ակնարկի :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ Ի.

ՆԱՄԱԿ, ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻԿՆ.

Մեծ մարդու մի յուղարկուած նամակը քառա-
 կուսի պատրուակի կամ պահարանի մէջ պիտի
 դրուի. ուրիշ ո՛ր եւ իցէ նամակի համար հասարակ
 պատրուակը բաւական է :

Եզերքը զարդարած կամ ծաղկներով զարդարուն
 գլխատառ ունեցող թղթերն արդ անկիրթ ախոր-
 ժակի բաներ կհամարուին : Լաւագոյնն անզարդ
 թուղթ գործածելն է. բայց վերի ծայրը պարզ կեր-
 պով անուանդ սկըզբնական գրերը կոխուած կըր-
 նան լինել :

Ծնողաց եւ ազգականացդ անուան կամ ծնընդեան տարեդարձին եւ կաղանդին իրենց նամակ գրելը պարտքդ է:

Քեզմէ մեծին նամակ որ գրես՝ մեծկակ Թուղթ քանեցուր: Անոր վիճակին կամ պաշտօնին յարմար ածական մի դիր վերը, ու քանի մի տող պարապ ձգելէդ ետեւ սկսէ նամակդ: Մէջը համառօտագրութիւններ մի՛ ըներ, չորցունելու համար վրան աւագ մի՛ ցաներ, որ աչքի ու ձեռքի գէշ կուգայ:

Տարւոյն ու ամսոյն Թուականը պէտք է նամակէն վերջը դնել՝ ձախ կողմէն սկսելով:

Ծանուցագիրը կամ հրաւիրագիրը փրկանաւորելու է, այսինքն Թղթատարի ծախքը վճարելու է. եւ թէ որ տեղը հեռու չէ՝ սպասաւորի ձեռքով դրկելն աւելի լաւ է:

Ուրիշի մը համար մէկուն ձեռքը տրուած յանձնարարականը պէտք չէ կնքել:

Կէս թերթի վերայ նամակ գրելը մարդավարութիւն չէ: Որչափ եւ փոքր լինի նամակը՝ թերթն ամբողջ, այսինքն կրկնածալ պիտի լինի:

Մեծերու դրկուած նամակը կնքամոմով կնքելու է. կնքամոմին եւս կարմիրն ուրիշ գոյներէն աւելի յարգի է:

Խիստ քիչ մարդ կայ որ նամակ գրելու ոճն ինչպէս որ պէտք է գիտնայ:

Նամակին ոճն ընդհանրապէս պիտի լինի բնական. ուստի հասարակ բաներու, մանր մունր դիպուածներու վերայ խօսած ժամանակդ սրտաշարժ ու վառ վռուն բաներ գրելու աշխատին անտեղի է: Երբոր նամակդ ծերու պիտի գրես, նայէ որ ոճոյն մէջ միշտ պատկառանք ցուցանես ու խելացի խօսքեր դնես.

Ծերերը շատ կսիրեն դիմացինէն խելացի բաներ լսել: Կուզե՛ս որ նամակներդ սիրով կարդացուին. նայէ որ զանոնք ընդունողներուն բնաւորութեանը յարմարցնես, անոնց տկար կողմերուն չդպչիս, իրենց գիտցած ու սիրած բաներուն վերայ խօսիս: Բերաններ կան որ միշտ կապասեն մեղր քսելուդ, սրտեր կան որ միշտ պատրաստ են խնկարկուծիւններդ ընդունելու: Մարդավարութիւնը կալահանջէ որ ամէն մարդ գոհ ընես քեզմէ. նայէ այնպիսի նամակներ գրես որ կարդալէն ետեւ ամէն մարդ գոհ լինի ինքիրմէ. վախճանիդ կհասնիս:

Երբոր թուղթ մի ընդունիս որ մէջը խելացի խօսք մի կայ, որչափ եւ փոքր բան լինի՝ նայէ որ չմոռանաս, պատասխանիդ մէջ յիշէ ու գովելով դուրս ցատքեցուր, դիմացինիդ համար քեզմէ խելացի մարդ չլինիր:

Թէ որ մէկը քեզի անվայել բաներ գրէ, մարդավար՝ բայց սուր խօսքով մի տուր պատասխանդ. անով երկու վերք տուած լինիս թշնամույդ. մէկովը կհասկացունես որ դուն խելացի մարդ ես. միւսովըն եւս կիմացունես որ նա անխելքին մէկն է:

Աղէկ նայէ, չըլլայ թէ բարակամիտ մարդու մի չափազանց գովեստներ տաս. ապա թէ ոչ՝ վրադ ամենեւին համարում չունենար, մանաւանդ թէ թշնամի կդառնայ քեզ: Միայն անմիտ մարդիկն են որ ո՛րչափ եւ գովեստ լսեն՝ սակաւ կուգայ իրենց. եթէ անոնց մէկուն ասես թէ դուն աստուած մի ես, կսկսի չորս դին նայիլ ու մտածել որ արդեօք երկի՞նքն է թէ երկրիս վերայ:

Քու ձեռքիդ տակն եղած մարդուն թուղթ որ գրես, նայէ որ իրեն քեզմէ վար լինելն ամենեւին

երեսին չտաս . մարդավար եղիր հետն առանց շատ
ընտանութեան :

Քեզմէ մեծին թուղթ գրած ժամանակդ զգուշա-
ցիր որ գրած ու աւբած կամ տողերուն վերայ բան
աւելցուցած տեղուանք չլինին մէջը :

Քարեկամի թուղթը պարզ խօսակցութիւն մի
պիտի լինի, եւ գործողութեան թղթոյն ոճը պարզ,
յստակ ու բարեկարգ : Ուրախակցութեան թղթին
մէջ գեղեցիկ գովեստներ դնելու է, բայց ջնջոց
դարձած հասարակ խօսքեր պիտի չգտնուին մէջը :
Իսկ տղայ մի ինչ ոճ որ պիտի բռնէ ծնողացը գիր
գրած ժամանակը, զայն սովբեցունել չլինիր . սըր-
տին մէջ գրուած սեպելու է :

Նամակ սիրուն է հակիրճ եւ քաղցր ոճով դիւրիմաց,
ի՞թուղթ ազնիւ սուրբ յաղտոյ, ոչ ունելով ըզքերած :
Անպատասխան ընդ երկար ծանր է թողուլ ըզքար-
տէս .

Մի' գրեր առանց փրկանաց' յորժամ շնորհ ինչ խըն-
դրես :

Իպատրուակ ամփոփել ըզթուղթ նըշան է պատուոյ,
Քան նըշխարաւ զայն փակել' լաւ է վարել մոմ' կըն-
քոյ :

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԻԱ.

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ ՄԱՐԴՈՒՍ ԸՆԵԼԻՔԸ.

Մարդս հիւանդանալուն պէս պէտք է հանդարտ կենայ, կերակուր չուտէ, եւ բժիշկ կանչել տայ : Գժբաղդաբար այս ճամբան բռնող սակաւ հիւանդ կան . շատերը չեն ուզեր հանդարտ հանգիստ կենալ, աշխատանքնին գործերնին առաջ կտաննին, եւ այն ժամանակ միայն ինքզինքնին կըսկըսին հոգալ երբոր հիւանդուծիւնը վրանին տիրելով զիրենք անկողին կձգէ : Սյլք չեն ուզեր բժըշկին տուած պատուէրներն ու դեղերը կատարել . կուզեն շուտով առողջանալ, շուտով անկողնէն ելլել, եւ անով հիւանդուծեան երկարելուն պատճառ լինին :

Որպէս զի բժիշկը կարողանայ մէկն առողջացունել՝ պէտք է որ հիւանդուծեան պատճառն ու տեսակն իմանայ, ուրեմն հարկ է նմա ճիշդ պատմել հիւանդուծեան ամէն պարագաները : Եւ ամենէն աւելի՝ պէտք է հիշկին հասկացունել հիւանդին անցուցած կեանքը : Հիւանդը պարտական է բժըշկին ամէն տուած պատուէրն ընել, ամէն տուած դեղերը խմել՝ թէ եւ լեղի լինին՝ մինչեւ իւր կատարեալ առողջուծիւնը :

Ցորչափ հիւանդը ծանր է, պէտք է որ հիւանդապահք հետը շատ չխօսին, ուրիշներուն եւս արգելուն, քովը լուծիւն պահել տան, եւ նային որ սենեկին օդը միշտ մաքուր մնայ . ասոր համար օրուան մէջ քանի մի անգամ հիւանդը լաւ մի ծած-

կելէն յետոյ պատուհանները բանալու եւ մէկ երկու վայրկենէն գոցելու են: Հիւանդին հետ պարտական են նաեւ ամենայն քաղցրութեամբ եւ ներողամտութեամբ վարուելու, յիշելով միշտ որ իրենք եւս կրնան օր մի նոյնպիսի հիւանդութեամբ պառկիլ եւ ուրիշի ծառայութեան, խնամոց եւ ներողամտութեանը կարօտիլ: Ո՞վ կարող է իւր առողջութեանը վերայ վստահիլ. այսօրուան տեսած քաջառողջ անձդ կրնայ վաղը ծանր հիւանդ պառկիլ, եւ մինչեւ մեռնիլ իսկ: Ուրեմն քանի որ առողջ եմք, մեր առողջութեան յարգը գիտնամք, փառք տամք Աստուծոյ, եւ զայն մեզ կորսնցունել տուող ամէն առիթներէ զգուշանամք:

—

Այցդ առ հիւանդն իրցէ սուղ եւ սըրտառուչ խորնամով.

Քաջալերեա ժուժկալել՝ զդեղն եւ զբրժիշկ գովելով:
Փոլեթա թաղման իհանդէս բարեկամաց ծանօթից,
եւ թէ իցես բացական՝ գըրեա նամակ կարեկից:

ԽԱՂ.

Անմեղ խաղեր գիտնալն ու առանց ստրկի խաղալը՝ ինչպէս որ շատ տեղ սովորութիւն կայ, գովելի բան է: Տեղ տեղ սակաւ մի ստակ կղնեն խաղի, ու վաստկուած ստակն աղքատներու կուտան, որ վատ սովորութիւն չէ: Խաղի մէջ եղած պարտքին հատուցումը քսանըջորս ժամէն աւելի ուշացընել չվայելեր:

Ոմանք սաստիկ զգուշութիւն կրնեն որ իրենց

քով կեցողները չըլլայ թէ խաղերնին տեսնեն . այս համով բան չէ : Խաղալդ սիրով տեսնողները թող ի՛նչ խաղ ունենալդ եւս տեսնեն . ի՛նչ զէն ունի :

Խաղ խաղացողներուն մէջ շատ անգամ կալատահի որ մէկը մէկալին աղէկ չխաղալը ծանր կերպով մը երեսին կուտայ, իբր թէ մեծ պակասութիւն մի լինէր նորա ըրածն . բայց այնպիսին պիտի գիտնայ որ իւր ըրածը աւելի մեծ պակասութիւն է :

Երբոր մէկը խաղը կորսնցունելուն համար կը կանչուըռտէ ու կտրտնջայ, կամ վաստկելուն համար կարգէ դուրս ուրախութիւն կցուցանէ, կամ թէ ո՛ր եւ իցէ պատճառաւ ձայնը կբարձրացունէ, բարեկիրթ ընկերութեան մէջ նստելու արժանի իսկ չէ :

—

Ուսիր յաղթիլ իխաղի եւ կալ մնալ անտըրտում,
եւ մի՛ կարի հըրճուեսցիս իվաղանցիկ բաղդին քում :

Նենգ եւ խաբկանք իբացէ, զըւարճ իցեն ըզբօսանք .
Քանզի կըռուով եւ կագիւ ոչ խաղ 'նիւթի' այլ
տանջանք :

ՔԱՂԱՔԱՅԻ ԻՇՈՒԿՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻ ԷՇԵՐ.

Մեծ վարժապետ մի էջ մ'ունէր
Որուն վերայ միշտ կըհեծնէր,
Ու դաս տալու երբոր ըլլար՝
Ուսումնարանն անով կերթար,

Ու դըրբան քով

Կապէր սանձով :

Սյապէս կըռնակն իւր իմաստուն

Մարդ մի տանել ու բերելուն
 ու վարժատան
 ուսմանց դըրան
 Ամենայն օր ալ կապուելուն՝
 Պարոն իշուկ միտքը դըրաւ
 Որ իմաստուն մ'ալ ինքն եղաւ :
 Մեր վարժապետն աղուոր օդով
 Օր մի իջաւ գեղ իւր իշով,
 ու տեսնելով իմէջ դաշտին
 Որ շատ մ'էշեր կեցեր կարծին,
 Իրենին ալ սանձն հանեց
 ու անոնց մէջ արձակեց :
 Այն գեղացի էշերուն
 Կըրնա՞ր հաւնիլ էշն իմաստուն :
 Մէկդի կեցեր,
 « Հը՛մ, հը՛մ, կըսէր .
 « Նայէ ի՛նչպէս երեսներէն
 « Կերեւայ որ գեղացի են .
 « Ի՛նչ անշընորիք կեցուածքներ ,
 « Ի՛նչպէս կոպիտ շարժուածքներ : »
 Այսպէս կըսէր ,
 Ի՛ամօթ սեպէր
 Որ անոնց քով մօտենար ,
 Եւ ուտէր խոտ հաւասար :
 Բայց տեսնելով որ էշքն անարգ
 Չէին ճանչնար իրեն մեծ յարգ ,
 Յանկարծ միտքը խորհուրդ մ'ինկաւ
 ու կատարել փուլածալ .
 Մանր ու վրսեմ քալելով
 Այն էշերուն գնաց քով ,
 « Եկէ՛ք ո՛վ խեղճ գեղացիներ ,

« Մըտիկ ըրէք ճառ մը » կըսէր :

Գեղացիները գըլուխնին

Այս խրոխտ ձայնին դարձուցին,

Ու ականջնին տընկեցին

Մըտիկ ըրին ականածուծեամբ,

Ուշադրուծեամբ .

Տեսան որ այն քաղքըցին ալ

Իրենց պէս լա՛ւ գիտէ զըռալ,

Եւ ո՛չ ինչ այլ :

Իրենք ալ ձայն վերուցին

Ու զըռզըռոց մի փըրցուցին .

Տեսաւ իշուկն որ իրեն

Նոքա մըտիկ ընել չուզէն ,

Կատաղուծեամբ բըռնադատ՝

Այսպէս գոչեց յուսահատ .

« Է՛յ դուք , մարդ չէ՛ք

« Դուք է՛շ էք : »

Գեղացւոց մէկը չըդիմացաւ

« Աղա՛, ըսաւ

« Այն չէ՛ բայց ի՞նչ ըսել կուզես

« Ի՛նչ . ականջներդ մոռցե՛ր ես : »

Ո՛րչափ տեսեր եմ այսպիսի անխելք մարդիկ՝

Որ ինքզինքնին մեծ բանի մի տեղ դընելով ,

Գիմացիներն կարհամարհեն իբրեւ ուամիկ ,

Ու իշուկին պէս կըլմննան՝ ծաղր լինելով :

ԸՆԹԵՐՑՈՒՍԾ ԻԲ.

ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐՄՆՈՅ ԵՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ.

Աստուծոյ մեզ տուած զգայարանաց պահպանութեանը պէտք է մեծ խնամք տանիմք. վասն զի այն խեղճն որ տեսանելիքը, լսելիքն ու հոտոտելիքը կորսնցուցած է՝ ստիպուած է շատ զուարճալի ու հարկաւոր բաներէ ինքզինքը զրկել, եւ ցաւ իսկ քաշել: Այս զգայարանաց ամենավնասակար է գլուխը շատ տաք բռնելը. վասն զի տաքութեամբ արիւնը հոն կվազէ կժողվի, իջուածք եւ պալար կը պատճառէ, եւ մինչեւ կուրուծիւն եւ խլուծիւն:

Աչքի կամ տեսութեան շատ վնաս կուտայ սաստիկ ու անհաւասար լոյսը. նայեցէք որ վրան արեւ զարկած դէպի ճերմակ պատի դարձած չկարդաք չաշխատիք. եւ կամ կարդալու ժամանակ այնպէս չկենաք որ արեւը գրքին վերայ զարնէ: Շատ վնասակար է նաեւ այնպէս դնել անկողինն որ արեւը ուղղակի վրան զարնէ: Փոշիով, ու ծուխով եւ կամ խոնաւ գոլորշեօք լցուած միջնուրտի մը մէջ երկար ժամանակ կենալէն զգուշացէք:

Սաստկաշառաչ եւ յանկարծական ճայթմունք, ապականեալ օդ, փետրալից անկողինք, քթի ու ականջի աղտոտութիւնը վնասակար են լսելեաց: Շատ վնասակար է նաեւ ականջը գլխադրով սեղմելն ու կապերով կապկպելը:

Համեմալից (պէհարլը) կերակուրք, ծուխ քաշելու եւ չափազանց օդի եւ գինի խմելու սովորութիւնը մարդու ճաշակելիքը կաւրեն:

Զրուցեցինք թէ ցրտէն ընդարմացած ձեռքերը կրակի վերայ բռնել տաքցունելէն՝ իրարու քսելով շփելով տաքցունելն աւելի լաւ է, վասն զի զանոնք ուռեցունելէն ու ձմեռնակէն ազատ կպահեմք :

Որովհետեւ հոգինիս շատ գաղափարներ զգայարանաց ձեռօք կընդունի, անոր համար հարկաւոր է զանոնք կրթել, որպէս զի զմեզ ամէն տեսակ սնապաշտական խորհուրդներէ հեռու պահեն, ու ոգիներու՝ ուրուականներու, խաբրիկներու ջհաւատան : Թէոր տեսանելիքն ու լսելիքը չկրթուին, կրնան բազմաթիւ մոլորեթեանց պատճառ լինել մեզ, մանաւանդ գիշերը : Թէոր այնպէս կարծես թէ գիշերը սոսկալի կերպարաններ քեզ կերեւան եւ ահուելի ձայներ կլսես, մի՛ վախնար, քաջուեթամբ ել ու դէպի տեսնել կամ լսել կարծած բանդ առաջ գնա, ձեռքովդ՝ բռնէ. եւ կհասկանաս որ ուրուականք (ճին, փէրի, խօրթլագ) կոչուած ու կարծուած քաները՝ կամ մեր զգայարանաց եւ կամ ուրիշներու խաբէութիւնն է, ինչպէս որ հետագայ պատմութենէս յայտնի կիմանաս :

Իսկուհի անուն ազնիւ, լուսաւորեալ ու որդեսէր մայր մի մեծ խնամօք զաւակացը դաստիարակութեանը կհսկէր, գիտելով որ անտի կախուած է նոցա ապագայ երջանկութիւնը : Փորձով իմացեր էր որ ուրուականաց վախը մեծամեծ աղետից պատճառ եղեր էր, եւ կջանար իւր որդիքն այն անտեղի վախէն ազատ պահել : Պզտիկուց զիբենք վարժեցուցեր էր առանց լուսի պառկելու, երիկունք մուծին մէջ մինակ կենալու, եւ երբեմն առանց ճրագի տանը վերի դաստիկոնք կղրկէր զանոնք բան բերել կուտար : Շատ անգամ նոցա ուրուականներու

պատմութիւններ կպատմէր, եւ վերայ կբերէր միշտ
 թէ ուրուականք ոչ երբէք իրօք եղած են, եւ վախ-
 կոտ մարդիկ զանոնք հնարած են իրենց տաքցած
 երեւակայութեամբը: Երիկուն մի իրենց նորէն այս-
 պիսի պատմութիւններ պատմելէն յետոյ, զրուցեց
 իւր սիրելի Մաքրուհի աղջկանը, որ հազիւ տասը
 տարեկան կար. « Կրնա՞ս առանց ձրագի երթալ
 վերնայարկէն (Թավան իջի) նազուգը (էլէմիա) բե-
 րել: — Տարակոյս չկա՛յ, կրնամ մայրիկ, պատաս-
 խանեց արիասիրտ Մաքրիկ: — Կաւ է, տեսնեմք.
 միայն շատ մ'աճապարեր եւ նայէ որ չիյնաս: » Իս-
 կոյն ցատքեց գնաց Մաքրիկ, եւ ձեռքով դրածի
 պէս նազուգը գտաւ: Մինչեւ այն ժամանակ ամե-
 նեւին վախ չէր ունեցեր. բայց սանդուխէն վար
 իջնալու ատեն ետեւէն փթրթոց մի լսեց եւ սկսաւ
 վախնալ. սակայն սիրտ ըրաւ, չորսդին նայեցաւ,
 եւ որովհետեւ մութ էր՝ բան մի չտեսնելով՝ սկսաւ
 նորէն իջնալ, եւ նորէն ետեւէն փթրթոց լսեց:
 Բոլոր քաջութիւնը մէկտեղ ժողովելով հարցուց.
 « Այդ ո՞վ է. » բայց ամենեւին պատասխան չառաւ:
 նորէն քալելու որ սկսաւ՝ փթրթոցն եւս ետեւէն
 շարունակեց. ա՛յլ վախը աղջկան վերայ տիրեց. սկը-
 սաւ պոռալ ու լոյս ուզել, եւ շունչը բռնուած մը-
 տաւ սենեակը՝ նազուգը ձեռքը: Սիրտ առաւ, չորս
 դին իւր հալածիչը փնտռեց. բայց նա յանկարծ
 աներեւոյթ էր եղեր: Այն ժամանակ դողդողալով
 մօրը պատմեց գլխուն եկածը. եւ հազիւ մայրն սկը-
 սեր էր բանը քննել՝ եւ անդէն գտաւ իւր խեղճ
 աղջիկը հալածող ուրուականը: Լուքիայի (Փասու-
 լիա) չորցած ձիւղ մի շրջազգեստին ետեւի ծայրը
 կպեր է եղեր. այնպէս որ երբոր նորէն կպաւ եւ

սկսաւ քալել, նոյն ուրուականը կամ փթըթոցը վերստին դուրս ելաւ :

Վրան քանի մի չորցած լուբիա կախուած չոր ցիւղէ մի այնչափ վախնալուն վերայ ամաչեց Մաքրիկ, եւ միտքը դրաւ որ այնուհետեւ աւելի քաջասիրտ լինի, ինչպէս որ այլ եւ այլ հանճարեղ խորհրդածուծիւններով խելացի մայրն եւս զինքը կը յորդորէր :

Ակռաներն եւս մասնաւոր խնամոց կարօտ են, վասն զի յստակ խօսելու եւ կերակուր ծամելու համար ամենահարկաւոր են: Կուզէ՞ք ակռանիդ լաւ պահպանել. տաք ըմպելիք խմելէն ու խիստ տաք կերակուր ուտելէն զգուշացէք. առաւօտները ակռանիդ ու բերաննիդ ատամնավրձինով (տիշֆրըջասը) շփեցէք մաքրեցէք, ծուխ մի՛ քաշէք, կարծր կորիզներ ու կուտեր (չէյիրտէք) եւ ընկոյզ կաղին մի՛ կոտրէք, ակռանիդ պատառաքաղով (չաթալ) կամ գնդասեղով (թօփլու) մի՛ խառնէք, այլ ոսկիէ՛ փայտէ կամ փետուրէ շինուած ատամնաքորով (տիշ հիլալը): Ակռանիդ չըլլայ թէ սապունով կամ աղով ուզէք մաքրել. եթէ մասնաւոր շինուած փոշի չունիք, փայտի ածուխը (քէօմիւր) ամենամանր փոշի ըրէք, եւ անով շաքաթը մի անգամ ակռանիդ մաքրեցէք: Ակռայ մաքրելու համար ամէն ծախուած փոշին եւս գործածելէն զգուշացէք, վասն զի նոցա մէջ շատը կան որ ակռաներուն վնաս տալով զանոնք կմաքրեն. ուստի գործածած փոշինիդ կամ ջրերնիդ վկայեալ պիտի լինի օգտակարութեամբն ու անվնասութեամբը :

Մարդուս լորձուկնքը (սալիա) հարկաւոր է մարսողութեան. ուստի զայն կորսնցունել տուող բաներէ

պէտք է զգուշանալ, զօր օրինակ ծուխ քաշելու սովորութենէն, դերձանը բերնով թրջելէն կամ ակռայով կտրելէն, եւ այլն: Տղայք կան որ սովորութիւն ըրած են առանց հարկաւորութեան թքնելու. այս սովորութիւնն ոչ միայն մաքրասիրութեան ու մարդավարութեան դէմ է, այլ եւ առողջութեան:

Ս.մէն հասակի մէջ թէ արանց եւ թէ կանանց գեղեցկութիւնը մարմնոյ առողջութեանն ու կատարելութեանը վերայ կայացած է. ասկէ դուրս ունայնամտութեամբ ուրիշ ո՛ր եւ իցէ հնարուած գեղեցկութիւնը խաբէական է, եւ ցաւալի հետքեր կ'ընդուն:

Ուրիշներուն սիրելի ու հաճոյ լինելու համար մարդուս մարմնոյ արտաքին գեղեցկութիւնն միայն բաւական չէ. պէտք է որ բնաւորութիւնն եւս գեղեցիկ լինի, խելքը տեղը եւ ազնիւ զգացմունք ունենայ: Ուստի ո՛րչափ եւ առողջ գեղեցիկ լինիք, թէ որ բարկացող էք, վրէժխնդիր էք, ռխակալ, կռուարար, յամառ, պնդագլուխ, ջարասիրտ, անհնազանդ եւ ծոյլ էք, կարելի չէ որ խելացի մարդիկ զձեզ սիրեն: Ուրեմն պէտք է որ նոյնպիսի խնամօք ջանաք նաեւ հոգիինիդ կատարելագործել, վասն զի նորա կատարելութիւնն ու ազնուութիւնը մարմնոյն վերայ եւս կ'փայլին, եւ ամենուն զայն սիրելի կ'ընեն:



ԸՆԹԵՐՑՈՒՄԾ ԻԳ.

ԱՌԱՄՔ.

Գիպուածներուն գալն ու չգալը մեր ձեռքը չեն, բայց մեր կամքը մեր ձեռքն է. կրնամք այնպէս պատրաստիլ որ բնաւ դիպուած մը զմեզ չխռովէ ու մեր երջանկութիւնը չվերցունէ :

Հազար ու մէկ աւելորդ բաներն մեզ հարկաւոր կրնեմք. անով նեղութիւննիս կշատցունեմք, ժամանակնիս կկորսնցունեմք, եւ կեանքերնիս աւելի դժուար ու ձանձրանալի կրնեմք :

Երջանիկ լինելու երեք բան հարկաւոր է, առողջ մարմին, ազատ միտք ու մաքուր սիրտ :

Գովեստն ո՛րչափ եւ սուտ, ծաղրական, անհամ ու անհաւատալի լինի՝ դարձեալ կսիրուի, վասն զի տուողին կողմանէ հպատակութիւն, գերութիւն, եւ կամ բարեսիրութիւն կցուցանէ :

Երբոր մարդս ճշմարտութեան մէջ է՝ փորելէն պէտք չէ վախնայ, վասն զի միշտ լաւ հիմ ու օգնութիւն կգտնէ : Բայց ընդունայն եւ անստոյգ բաներու մէջ վտանգաւոր է խոր փորելը :

Փոքր մխիթարութիւն չէ մարդուս այս աշխարհէս ելած ժամանակ մտածել որ կազատի այն ամբոխէն՝ որուն մեծագոյն մասն անմիտ ու չարասիրտ անձինք են :

Մարդս ինքզինքը երջանիկ ու գոհ ընելու համար երկու ճամբայ ունի. մէկը՝ բոլոր փափաքները կատարել, եւ միւսը՝ զանոնք չափաւորել : Առաջինը անկարելի է այս աշխարհիս մէջ. ուստի այն ճամբ-

բով ինքզինքը գոհ ընելու աշխատիլը մեծ անմտու-
թիւն է :

Նայէ որ դուն գործքերն մղես, եւ ոչ թէ նորա
զքեզ :

Մարդս պէտք է իւր գործքերն իւր ձեռքովը տես-
նէ եւ ուրիշներուն շատ չհաւատայ :

Թէ որ կուզես որ գործդ կատարուի՝ դուն անձամբ
գնա. իսկ թէ որ կուզես որ չկատարուի՝ ուրիշը
դրկէ :

Քանի որ կրնամք գործել գործեմք. վասն զի ժա-
մանակ կուգայ որ եթէ ուզեմք իսկ՝ չեմք կարող
գործել :

Գնացած ժամանակն ու կորսուած առիթն չեն
դառնար, չեն գտնուիր :

ԷՇ ՈՒ ՍՐԻՆԳ.

Նատ անգամներ

Էշն էր տեսեր՝

Որ հովուին մէկ իւր ոչխարներ

Ծառի մի տակ կը ժողովէր ,

Ու ձեռքը սրինգ մի առնելով

Կըզմայլեցնէր նորա ձայնով :

Էշն՝ ուրիշին

Հանած ձայնին՝

Այնպէս շուտով հաւնող մի չէ,

Այս յայտնի է.

Բայց անուշ ձայն սրբընգին՝

Նաեւ իշուն ականջին

Բաւական քաղցր էր եկած .

Հըպարտութիւն մէկդի դրած՝

Կըսէր մըտքէն. « Իրա՛ւ որ
 « Անո՛ւշ է ձայնս ու զօրաւո՛ր.
 « Սակայն նաեւ այս սըրընգին
 « Խաղուն ձայնին
 « Խօսք մի չունիմ.
 « Բայց սա մարդուն տեղն ըլլայի
 ու իւր սըրինգն ունենայի,
 Ձայնն իմ անուշ՝ անով մէկտեղ
 ո՛րչափ էլել կըլար համեղ:
 Յը մի տեսաւ որ նոյն ծառին
 Վարի ճիւղին՝
 Հովիւ կախեր էր իւր սըրինգ,
 ու հոն չէր ինք:
 « Այս ի՞նչ մեծ բաղդ,» էշը կանչեց,
 ու քով վազեց,
 Դըրաւ բերան
 Սըրնգին վերան,
 Բոլոր ուժովը կըպռուար
 Կուզեմ ասել՝ կըզլուա՛ր,
 ու կըկարծէր՝
 Թէ շատ անուշ ձայն կըհանէր:
 Կապիկին մէկ դիպուածով
 Այն կողմերէն անցնելով,
 Լըսեց ահեղ զայն զըռզըռոց,
 Կարծեց էշ մի կընեն տապկոց.
 Բանը Թողուց վազեց հոն ժիր,
 (Կապիկն է միշտ հետաքրքիր)
 Մէյ մ՛աւ ի՛նչպէս զարմացաւ՝
 Երբոր մեր էշը տեսաւ
 ոք ոչ միայն ծեծ չէր ուտեր՝
 Հապա նաեւ կերելէր

Որ ըզմայլման մը մէջ էր:

Դարձաւ, Պարոն, ըսաւ կապկին,

« Ի՞նչ կըսես այս իմ նըլագին. »

— « Թէ որ զըռաւ կուզէիր՝

« Ի՞նչ պէտք է սրինգ փընտռէիր. »

Կապկին ասաց

Ու կուշտ խընտաց.

« Թող, պարոն, Թող որ հովիւ

« Երգէ իրեն սըրընգիւ.

« Դուն նայէ որ տաս կըռնակ

« Իքար, իփայտ, պայուսակ:

« Գիտնաս որ մայր բընուԹիւն

« Տուաւ մէյմէկ գործ ամենուն

« Քուկին պաշտօն՝

« Իշո՛ւկ պարոն,

« Մարդկանց բեռները կըրել,

« Խոտ՝ երբեմն ալ ծե՛ծ ուտել.

« Շա՛տ շատ՝ քիչ մ՛ալ

« Նաեւ զըռաւ:

ԸՆԹԵՐՅՈՒՍԾ ԻԴ.

ԿՐՕՆՔ, ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ.

Զիք ինչ լաւագոյն քան զկրօնս պահպանիչ եւ
խնամակալ բարուց:

Ի՞նչ խըտրի մարդ յանբանից՝ Թէ ոչ բանիւն եւ կրօ-
նիւ.

Ի՞նչ այր քան զայր գերազանց՝ բայց զգացմամբ իւր
ազնիւ .

Ազնուագոյն արդարեւ աստուածապաշտն է իմաստ,
Որով միայն է յաստիս գոլ եւ յանտիս բարեբաստ :

(ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.)

Կրօնքն է միայն կարող զվիշտս իբերկրուծիւն
փոխելոյ :

Անցեալն մեզ ցաւ կպատճառէ, ներկայն տրտմու-
ծիւն եւ ապագայն վախ . կրօնքն միայն ամէն բան
կմեղմացունէ եւ ամէն բանի մխիթարանք կուտայ :

Կրօնքի յաղթանակն է մխիթարել զմարդ ի թշուա-
ռուծեան , եւ կենաց դառնուծեանց խառնել երկ-
նային քաղցրուծիւն :

Անկրօն մարդն անասնոցմէ տարբերուծիւն չունի,
վասն զի կրօնքով միայն մարդկային երկրաբարշ
միտքն իվեր յերկինս կբարձրանայ :

Մի՛ զԱստուծոյ սուրբ անուն ստէպ ընդ բերան ածի-
ցես ,
Բայց եւ լինել բարեպաշտ երբէք դու մի՛ ամաչես :

Որչափ եւ մարմիննիս անասնոց մարմնէն գերա-
զանց է, չէր կրնար զմեզ երջանիկ ընել թէ որ միա-
ցած չլինէր հոգւոյ հետ որ զմեզ կարող կրնէր
բարին ու չարն իրարմէ զատելու, արդարն անի-
րաւէն որոշելու, սիրել զբարին եւ իչարէն փախ-
չիլ, շիտակ ճամբան փնտռել ու ծուռէն հեռանալ :
Հոգւով միայն եմք մարդ, այսինքն բանաւոր, խօ-
սուն, զգայուն եւ ազատ էակներ :

Տեսանք որ կենդանիք բնական ազդումն միայն
ունին . եւ թէպէտ ամէն գործողուծիւննին զար-

մանալի են, սակայն առանց խելք բանեցունելու ընելնին յայտնի կերեւայ. վասնզի միշտ միակերպ կգործեն եւ ամենեւին չեն կատարելագործուիր. իրենց բնական ազդեցութեանցը չեն կրնար դէմ դնել. եւ ոչ իսկ զանոնք կառավարել: Կենդանիք չեն գիտեր թէ ի՞նչ է իրենց էութեան պատճառը, եւ ի՞նչ անոր վախճանը. բարւոյն ու չարին, արդարոյն ու անիրաւին վերայ ամենեւին գաղափար մի չունին:

Մարդս կխորհի կմտածէ, վասն զի իմացողութեան պարգեւն ունի, այսինքն այն կարողութիւնն որով տեսած իմացած՝ լսած՝ շօշափած եւ զգացած բաներն աչքին առջեւը կբերէ, զանոնք իրարու կը բաղդատէ եւ խօսքով կամ գրով անոնց վերայ ըրած խորհրդածութիւնը կամ ունեցած կարծիքն ուրիշներուն եւս կհաղորդէ:

Մարդս կրնայ բոլոր իւր յօժարութիւնները սանձել, անոնց տիրել եւ ուզածին պէս զանոնք կառավարել. կենդանին ստիպուած է կուրաբար անոնց ետեւէն երթալու: Մարդ իւր ներսէն կզգայ բանին կամ բանականութեան հրամայածն ընելու պարտականութիւնը: Անկարելի է որ հաւնիմք ու սիրեմք զայն զոր անիրաւ մեզ ցուցանէ բանը. եւ երբոր չարիք կգործեմք՝ ներսերնէս ցաւ մի կզգամք, եւ աներեւոյթ վախով յուզեալ կտագնապիմք: Երբոր ծնողացս կամքին դէմ կընեմ անհնազանդութեամբ՝ ամենեւին զուարճութիւն չեմ զգար. ընդ հակառակն վրաս տրտմութիւն մի, այլայլութիւն մի, անհանգստութիւն մի կուզայ, եւ կհասկանամ որ պէտք է բարի ու արդար ջանջցածս ջընեմ: Երբոր բարիք կգործեմ՝ գոհ եմ, երջանիկ

եմ, եւ վախով տակնու վերայ չեմ լինիր. բայց երբոր անհոգութեամբ բարւոյն տեղ չարիք ընեմ՝ տըխուր, անհանգիստ եւ թշուառ լինիմ, ինքզինքս կամբաստանեմ ու ինքզինքս յանցաւոր կգտնեմ: Այս տխրութիւնը կզգամ, այս վախն ու անձկութիւնը կիմանամ նաեւ այն ժամանակ որ ստոյգ եմ թէ ըրած չարիքս մարդ մի տեսած չէ որ զիս պատժէ. այս վախը կիմանամ նոյն իսկ ընելու չարիքս մտածած ժամանակս. թէպէտ եւ անոր համար չեմ կրնար վախնալ որ մարդ մի մտքիս մէջինը կարող լինի կարդալ եւ ընելու չարութիւնս իմանալ ու պատժել: Ուստի՞ կուգայ ուրեմն այս փրկաւէտ վախն որ այնչափ հոգիս կվրդովէ. ուստի՞ կուգայ այս անհանգստութիւնն, այս մտատանջութիւնն որ աներեւոյթ էակ մի զիս պիտի տեսնէ, պիտի լսէ եւ պիտի պատժէ՝ երբոր չարիք կմտածեմ, եւ երբոր կգործեմ: Ամէն մարդ այս վախն ու անհանգստութիւնը կիմանայ կզգայ. վասն զի ամէնքը կը հաւատան որ կայ ամենազօր էակ մի որ ամէն բան գիտէ, ամէն բան կտեսնէ, եւ անդիի աշխարհի իւրաքանչիւրին գործոցը խիստ համար պիտի պահանջէ:

Ամէն անգամ որ երկինք կնայիմ եւ այն անթիւ անհամար նշուլագեղ աստղերը կդիտեմ. ամէն անգամ որ երփնազարդ ծիրանի գօտւոյն կնայիմ կամ արեւուն փառաւոր ելլելն ու մտնելը կտեսնեմ. ամէն անգամ որ որոտմունք կլսեմ եւ կամ ամպերու մէջէն սողոսկած փայլատականց լոյսը աչքիս կզարնուի՝ անտեսանելի եւ ամենակարող էակի միոյ գոյութեան մտածմունքը մտքիս ու սրտիս կը տիրէ. վասն զի խելքս, բանականութիւնս կասեն ինձ որ այս ամէն հրաշակերտք մարդու գործք չեն

Եւ հարկաւ պէտք է լինի քան զամենայն զօրաւոր, իմաստուն եւ լաւ մարդիկ զօրաւորագոյն, իմաստնագոյն եւ լաւագոյն էակ մի: Ինչպէս որ ծնողքս կսիրեմ, նոյնպէս այն աներեւոյթ էակն եւս սիրելու ու պաշտելու բնական յօժարութիւն մի կիմանամ, վասն զի կզգամ որ այն աներեւոյթ էակն իմ հայրս է, հայր է բոլոր մարդկան, զիս կճանաչէ, զիս կսիրէ ու զիս կիմանայ: Ամենայն մարդիկ կհաւատան գոյութեան այս էակին, զոր Աստուած՝ ստեղծիչ եւ տէր աշխարհի կանուանեն: Ամէն տեղ՝ նմա տաճարներ, եկեղեցիներ կանգնած են, յորս կժողովին իրեն աղօթք ընելու ու զինքը պաշտելու:

Ուրեմն սիրելիք, ամէն անգամ որ եկեղեցի մըտնէք՝ մտքերնիդ բերէք որ աշխարհիս ու ձեր ստեղծող Աստուածը պաշտելու, եւ սրտեռանդն աղօթիւք շնորհք՝ ձեր մեղաց թողութիւնն ու հոգւոյ եւ մարմնոյ պիտոյքն իրմէ խնդրելու համար հոն կը մտնէք: Այս է ահա կիրակի եւ տօն օրերն սուրբ եկեղեցի երթալուն միակ նպատակն ու վախճանը: Այսպիսի բարի ու օգտաւէտ վախճանի մի հասնելու համար որպիսի՝ սիրով ու փափաքանօք պիտի երթաք եկեղեցի, եւ իբրեւ տուն եւ բնակարան Աստուծոյ՝ որպիսի՝ երկիւղածութեամբ ու պատկառանօք պէտք է կենաք հոն ու աղօթէք:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԻԵ.

ՄԱՐԴՈՑ ԻՐԱՐՈՒ ՇԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ.

Մարդիկ իրարու համար ստեղծուած են. ուրեմն իրարու ունեցած պարտքերնին պէտք է լաւ նանչնան :

Յորչափ տղայք իրենց ծնողաց տուէն են' նոցա պարտական են հնազանդելու, այսինքն թոյլ տրուած չէ ուզածնին ընելու, այլ պարտական են ծնողաց հրամայածը կատարելու : Տղայք արուեստ կամ գիտութիւն մի սովորելուն պէս' որով իրենք զիրենք կարող լինին հոգալ, ապրուստնին նարել, մասն լինին քաղաքական ընկերութեան, եւ պարտական են հայրենեաց օրինաց հնազանդելու : Այս օրէնքը քաղաքական օրէնք կկոչուին, վասն զի քաղաքացւոց համար շինուած են որք պարտական են զանոնք պահելու, որպէս զի երկրին մէջ բարեկարգութիւնը, հանգստութիւնն եւ ապահովութիւնը տիրեն :

Ինչպէս որ վարժապետք հոգ կտանին որ դպրոցին կարգ կանոնը տեղն լինի, նոյնպէս նաեւ իշխանք եւ դատաւորք կհսկեն հոգ կտանին, որպէս զի երկրին կարգ կանոնը, խաղաղութիւնը, հանդարտութիւնն ու ապահովութիւնը չվրդովին. ուստի եւ կպատժեն օրինաց չհպատակողներն, եւ իրենց չարութեամբն ու անկարգութեամբը հասարակաց բարեկարգութիւնն ու հանգստութիւնը աւրողները :

Լսած էք այն սոսկալի տներն որ բանտ կկոչուին :

Հոն ահա կղնեն այն չար ու անպիտան մարդիկն որ իրենց գողութեամբը, մարդասպանութեամբն եւ անկարգութիւններովը ընկերութիւնը վրդոված են եւ կամ իշխանութեանց հրամանին դէմ դրած են: Այն բանտերու ու արգելաններու մէջ բռնադատուած են նոքա ամբողջ կեանքերնին կամ անոր մէկ մասն ապրելով քաւել ըրած յանցանքնին:

Թէոր հետագայ ասելիքս ուշադրութեամբ կարդայք ու լսէք եւ մտքերնուդ մէջ անջինջ տպաւորէք, պարտքերնիդ լաւ ճանաչել կսովրիք, եւ մինչեւ որ մարդ իւր պարտքը չճանաչէ՝ չկրնար զայն կատարել:

Ի՛նչ որ մարդուս թոյլ տրուած է, եւ ի՛նչ որ իրեն արգելուած չէ՝ կկոչուի իւր իրաւունքը: Ուստի ամէն մարդ իրաւունք ունի իւր պիտոյիցը գործածելու ամէն իրեն սեպհական եղածը, իւր ստակը, իւր տունը, իւր արտերը, իւր զգեստը, եւ այլն: Թէոր մէկն ուզէ բռնութեամբ ստակս կամ ուրիշ ո՛ր եւ իցէ ստացուածս առնուլ, իրաւունք ունիմ իրեն դէմ ինքզինքս պաշտպանելու եւ ինձմէ յափշտակածը ձեռքէն առնլու:

Ամէն մարդ իրաւունք ունի Աստուծոյ իրեն տուած ձիրքն ու կարողութիւնքը զարգացունել ազատօրէն. եւ ոչ ոք իրաւունք ունի ուրիշին արգելելու որ իւր կարողութիւնքը չկատարելագործէ: Ուստի երբոր տէր մի կամաւ իւր ծառային, կամ վարժապետ մի իւր աշակերտին ձեռքէն կհանէ կրթուելու միջոցները, եւ կամ զինքը կմոլորեցունէ որպէս զի ուզածին պէս զինքը գործածէ՝ մարդկութեան իրաւանց դէմ կընէ:

Ամէն մարդ ոչ միայն իրաւունք ունի իւր կեանքը

պաշտպանելու եւ պահպանելու, այլ եւ իրաւունք ունի իւր բախտն ու վիճակը լաւցունելու: Այն մարդը՝ որ ուրիշը կչարչարէ կնեղէ այնչափ որ նորակեանքը կամ առողջութիւնը վտանգի մէջ կիյնայ, արժանի է ամենախիստ կերպով պատժուելու:

Ամէն մարդ իրաւունք ունի գնելու, ստանալու եւ գործածելու ի՛նչ որ օգտակար է իւր կենաց պահպանութեանն ու բարեկեցութեանը: Եւ ահա ասոր վերայ կայացած է ստացուածոց իրաւունքը: Ինչ որ իմ աշխատանքովս կգնեմ կստանամ, ի՛նչ որ ուրիշներն ինձ կվաճառեն՝ կուտան ու կամաւորապէս կթողուն կտակաւ՝ իմ ստացուածքս են:

Իշխանութիւնք այս իրաւանց վայելումը կապահովցունեն իւրաքանչիւր քաղաքացւոյ:

Իւրաքանչիւր մարդ իրաւունք ունի իւր կեանքը պահելու եւ պաշտպանելու. ուրեմն ամենեւին թոյլ տրուած չէ մարդու մի կեանքը վերցունել՝ բայց եթէ այնպիսի պարագայի մէջ յորում մէկն անիրաւաբար վրադ յարձակի, ուզէ զքեզ մեռցունել, եւ դուն իրմէ քաջ ու ճարպիկ գտնուելով զինքը կզարնես կմեռցունես: Նա որ մարդ մի կըսպաննէ՝ սոսկալի ոճիր կգործէ որ սպանութիւն, մարդասպանութիւն կասուի. մարդասպանաց պատիժն է մահ:

Ամէն մարդ իրաւունք ունի առողջութիւնը պահելու. ուրեմն բնաւ օրէնք չէ ուրիշի առողջութեան վնասել: Օրէնքն խստիւ կպատժէ այն մարդն որ ուրիշը կվիրաւորէ. կդատաւարտէ զինքը բանտի, ծանր տուգանքի եւ բժշկութեան ծախքը վըճարելու, եւ վէրքին պատճառաւ անգործ անցուցած ժամանակն ըրած կորուստը տուժելու: Անա-

ուակ մարդիկ որ գինետուները կյանախեն եւ կը գինովնան, եւ գինովութեան մէջ մէկուն մէկալին հետ կկռուին ու կծեծկուին, սովորաբար կեանքերնին այն սարսափելի տեղուանք կվերջացունեն, որ բանտ եւ թի (քիւրէք) կկոչուին, որոց անունն անգամ պէտք է արհաւիրք ու սարսափ բերէ բարեկիրթ բարեզգաց մարդկան:

ԸՆԹԵՐՅՈՒՍԹ ԻԶ.

Շարայարուրիւն.

Ամէն մարդ իրաւունք ունի իւր ազատութիւնը պահելու. ուրեմն օրէն չէ մէկն իւր ազատութենէն զրկել: Նա որ ուրիշին կարգելու իրեն օրինապէս թոյլ տրուած բանն ընելու, եւ կամ զինքն այնպէս կփակէ որ չկրնար ուզած եւ իրեն թոյլ տրուած տեղերն երթալու, զինքն իւր ազատութենէն կզրկէ: Այն մարդն որ ազատութիւն չունի, չկրնար Աստուծոյ իրեն կատարելութեան ու երջանկութեան հասնելու համար տուած կարողութիւնները գործածել: Ուրեմն ամէն մարդ իրաւունք ունի իւր ազատութիւնը պահելու, եւ այն ժամանակ կկորսնցունէ այն իրաւունքն՝ երբոր ազատութեամբը կզեղծանի եւ ուրիշին վնասուն կբանեցունէ զայն: Այնպիսի պարագայի մէջ իշխանութիւնն միայն իրաւունք ունի զինքն ազատութենէն զրկելու. իշխանութենէ զատ ուրիշ մէկն իրաւունք չունի զմարդ փակելու բանտարկելու. եւ այս իրաւունքն յափշտակողը խստիւ կպատժուի:

Ամէն մարդ իրաւունք ունի լաւ համբաւ՝ բարի անուն ունենալու, ուրեմն թոյլ տրուած չէ ուրիշին համբաւոյն ու անուանք վնաս հասցունել. թէ որ կհասցունես, թէ որ զոք կնախատես, կզրպարտես, յանցաւոր ես եւ կպատուիս :

Ամէն մարդ իրաւունք ունի իւր ստացուածքն, իւր ունեցածը պահպանելու. ուրեմն թոյլ տրուած չէ գողնալ, ուրիշին ստածուածքին վնասել, մանաւանդ երբ որ քեզ յանձնուած է նոցա պահպանութիւնը : Օրէնքն ամենախիստ պատիժներ կուտայ գողոց, ըստ ծանրութեան գողութեան զիրենք կդատապարտէ բանտի, ծառայութեան թիոյ եւ կամ մահուան : Օրէնք ոչ միայն գողերն այսպէս խստիւ կպատժեն, այլ եւ նոցա գողակիցքն որ կա՛մ գողութեան մասնակից լինին, եւ կամ գողցուած բաները կծածկեն :

Օրէնք խստիւ կպատժեն նաեւ զանոնք որ չարութեամբ կամ վրէժխնդրութեամբ ուրիշի ստացուածոցը կվնասեն :

Հրդեհարկուք կամ կրակ ձգողները, դրամակոփք կամ սուտ ստակ կոխողները, քսակահատուք (եանքէսիճի) եւ նմանիք, ամէնքն եւս ուրիշի ստացուածքը կջնջեն, անոր համար իսկ խստութեամբ կպատժուին :

Իշխանութիւնն իրաւունք ունի պահանջելու որ ամէն քաղաքացի երկրին սովորութեանը հպատակի. վասն զի թէ որ քաղաքացիք օրինաց չհնազանդին՝ տէրութիւնը չկրնար զիրենք պաշտպանել, եւ ոչ հասարակաց բարեկարգութիւնը, հանգստութիւնն ու ապահովութիւնը պահպանել : Իշխանապետին կամ թագաւորին փոխանորդ դրուած

իշխանք իրաւունք ունին պահանջելու որ ամէն քաղաքացիք օրինաց համաձայնին, տուրքերն ու հարկերը վճարեն, զինուոր գրուին, եւ այլն :

Ամենայն քաղաքացիք պարտք ունին իրենց կարողութեանը համեմատ աշխատելու հասարակաց բարւոյն, եւ չթողլու որ անոր վնաս հասնի : Նոքա որ օրինաց եւ իշխանութեանց դէմ կապտամբին, եւ կամ նոքա որ իրենց հայրենեաց թշնամեացը հետ խօսք մէկ կընեն, շատ յանցաւոր են, խստիւ կպատժուին, եւ վերջինները մատն ի չք հայրենեաց կկոչուին, որ ամենամեծ նախատինք է, եւ մահուանէն յետոյ եւս մարդուս վերայ անջինջ կըմնայ : Նայեցէք դուք որ Բարերար ու Հայր հայրենեաց եւ ազգին կոչուիք՝ հայրենեաց ու ազգին ըրած ձեր բարի բարի գործերովը :

Թէ որ մէկը զձեզ անիրաւ տեղ նախատէ կամ ձեր իրաւանցը վնասէ, դուք իրաւունք չունիք վրէժխնդրութիւն ընելու. պարտքերնիդ է օրինաց եւ իշխանութեանց պաշտպանութիւնը խնդրել, եւ միշտ պէտք է յիշէք որ դուք ձեզմէ վրէժխնդիր լինելով՝ ընկերութեան հիմանցը դէմ կգործէք, որովհետեւ ընկերութիւնը, օրէնք եւ իշխանութիւնք հաստատուած են իւրաքանչիւրոց իրաւունքը պաշտպանելու : Նա որ մէկը նախատեց, կամ անոր իրաւանցը վնաս հասոյց՝ պարտական է հպատակելու իշխանութեանց վճռոյն, եւ ըրած յանցանքին համար օրինաց տուած պատժոյն :

Չափահասք միայն, այսինքն նոքա որ քսանըմէկ տարին լմնցած են, կարող են իրենց իրաւունքը բանեցունել : Անչափահասք, այսինքն նոքա որ դեռ քսանըմէկ տարեկան չեն, իրաւունքնին իրենց

ճնողաց կամ անոնց տեղը դրուած խնամակալին ձեռօք կրնան բանեցունել :

Ծառայք եւ սպասաւորք պարտական են խղճմրտանքով ու խնամքով կատարել իրենց յանձնուած գործն ու պաշտօնը : Պարտական են իրենց տէրերուն հնազանդել բաց յայն բաներէ որ արգելուած են, այսինքն աստուածային ու մարդկային օրինաց դէմ են : Պէտք է որ ծառայք հաւատարիմ լինին, այսինքն իրենց չեղած բանն իրենց չսեպհականեն, եւ իբրեւ թէ բուն իրենցը լինէր՝ այնպէս խնամք տանին իրենց յանձնուած բաներուն : Որովհետեւ աշխատելու համար վճարուած են՝ թէ որ լաւ չաշխատին կամ միակերպ չաշխատին՝ իրենց պարտքէն կպակսին :

Տեարք պարտական են անվրէպ վճարել ծառայից վարձքը, քաղցրութեամբ հետերնին վարուիլ, եւ հիւանդութեան ժամանակնին զիրենք խնամել : Թէ որ անոնց չար օրինակ տան՝ կմեղանչեն, վասն զի կրնան անոնց աւրուելուն պատճառ լինել : Տեարք պարտական են իբրեւ իրենց որդւոցը բարի խրատներ տալ ծառայից հարկ եղած ժամանակը, եւ զիրենք յուղղութիւն եւ իզգաստութիւն բերել :

ԸՆԹԵՐՅՈՒՄԸ ԻՒ

ԻԻՐ ՎԻՃԱԿԵՆ ԳՈՅ ԼԻՆԵԼ.

Յովհաննէս Թուլէր, անուանի դոմինիկեան կրօնաւորն որ 1379ին վախճանած է, կպատմէ թէ

օր մը եկեղեցւոյ մէկուն դրան առջեւը մուրացկան մի տեսեր է ոտքերն աղտոտ ցեխոտ եւ հագուստը պատուած : Մօտեցեր անոր ու — Աստուած քեզ բարի լոյս պարգեւէ, ասեր է : — Բարի լոյս, կանչեր է մուրացկանը. չար լոյս երբէք չեմ ունեցեր որ Աստուած այսօր բարին տայ ինձ : — Ինչո՞ւ այսպէս պատասխան կուտաս, կրկներ է թուլէր. լաւ է ուրեմն, Աստուած զքեզ երջանիկ ընէ : — Այս խօսքերդ ի՞նչ կնշանակեն. ես ոչ երբէք դժբախտ ապերջանիկ եղեր եմ :

Թուլէր աղքատին այս խօսքերուն վերայ զարմացած կաղաչէ որ միտքն աւելի լաւ բացատրէ :

— Գլխուս վերայ կասէ նա : Ինձ բարի լոյս մաղթեցիր, եւ ես հրամանոցդ զրուցեցի որ ոչ երբէք չար լոյս ունեցեր եմ : Երբոր անօթի կմնամ՝ ես զԱստուած կօրհնեմ. երբոր կմբսիմ, երբոր անձրեւ կուգայ, ձիւն կիջնայ, գլխուս վերայ կարկուտ կթափթրփի, երբոր օդը բաց կամ գոց է՝ զԱստուած կօրհնեմ. երբոր խեղճ արհամարհուած, անօգնական ու անխնամ երեսի վերայ կմնամ՝ դարձեալ զԱստուած կօրհնեմ : Ասոր համար երբոր ինձ երջանկուլթիւն մաղթեցիր, պատասխան տուի թէ ոչ երբէք դժբախտ եղեր եմ, վասն զի միշտ ջանացեր եմ Աստուծոյն իմոյ կամքը կատարել, եւ բոլոր իմ կամքերս նորա կամացն համաձայնել, որպէս զի ի՞նչ որ ինքն ուզէ՝ ես ալ նոյնն ուզեմ :

— Բայց ի՞նչ կընես թէ որ Աստուած զքեզ դժոխք իջեցունէ :

— Զիս դժոխք իջեցունէ, կպատասխանէ մուրացկանը. թէ որ այնպիսի բան մի ընէ, երկու թեւ ունիմ, անոնցմով զինքը կգրկեմ, որոց մէկը խո-

Նարհուլթիւնն է եւ միւսը սէր. եւ այսպէս՝ զինքը
 պինդ գրկելովս պէտք է որ ինքն ալ հետս դժոխք
 իջնայ, ուր աւելի երջանիկ լինիմ իրեն հետ՝ քան
 թէ առանց իրեն արքայուլթեան մէջ :

ԿԵՆԴԱՆԻՔ ԵՒ ՍՈՒԱԿ.

Մէկքանի կենդանիներ
 Պատահմամբ մէկտեղ եկեր,
 Իրարու գովեստ տալով,
 Ինքզինքնին անարգելով՝
 Ո՛չ ոք գոհ իւր վիճակին,
 Տըխրուլթեամբ գանգատէին :

Փիղը կըսէր.

« Է՛յ պարոններ,

« Ի՛նչ փուճ գովեստ տայք իմ ուժին,

« Ու կըհանէք մինչեւ յերկին.

« Իրաւ՝ պատիճ մ՛ունիմ ուժեղ,

« Բայց ի՛նչ օգուտ որ եմ տրգեղ : » —

— Զին անդիէն, « Մե՛ղք պարո՞ն փիղ,

« Որ քեզի պէս չե՛մ հաստաջիղ.

« Իրաւ՝ մարմինս է չափակից,

« Բայց ի՞նչ օգուտ ինձ կայ անկից : » —

— « Հա՛, պարոն ձի, լինէի՛ր գոհ՝

(Արջուկն ասէր) « որ ինձ պէս ո՛հ,

« Էիր մարմնով կոշտ ու դանդաղ,

« Երեւէիր յաւէտ ճիւղա՛ղ : » —

— « Բայց գոնէ դու մարդկան անգամ

« Զարհուրելի ես, բարեկա՛մ.

« Հապա խեղճ էջն ի՞նչ ընէ, ի՞նչ,

« Որ չունի այլ բայց թէ զըռի՛նչ : » —
 — « Պարո՛ն իշուկ, (կըրկնեց կով),
 « Դու երջանի՛կ ես իմին քով,
 « Որ գըլուխ պինդ, եւ կամքդ՝ անդարձ.
 « Իսկ ես գերի՛ մարդուն կամաց : » —
 — « Խե՛լքըդ սիրեմ (կանչեց հոն շուն),
 « Ձե՛ս գոհ մարդուն տըլած խոտուն.
 « Քեզ ամէն խնամ, իսկ ինձ՝ շատ շատ
 « Կըտոր մ՛ոսկոր ու ցորեկ՝ բա՛նտ : »

Վըրայ եկան խոզն ու կապիկ, ուղտն եւ ոչխար,
 Ըսին նոքա ալ իրենց ճառ.

Մէ՛կն ալ չըկար որ գոհ լինէր ունեցածին,
 Ամէնք զիրար կերանէին :

Երբ սըրտերնին ինչ գանգատներ որ ունէին
 Բոլոր ամէնքն ալ թափեցին,

Ու երեսնին թիզ մը կախած տըրտում տըխուր
 Կընայէին գետին լուռ լուռ,

Մօտի ծառէն սոխակին ձայնը լըսեցին՝
 Ու ականջնին հոն տընկեցին.

Սոխակ կըսէր,

« Լըսեցի պարոններ

« Ձեր բոլոր գանգատներ.

« Բայց շիտակն ես ասեմ՝

« Ոչ ըզձեզ ոչ գովեմ :

« Իրարու վրայ՝ տեսաք՝

« Լաւ բաներ կըգըտնաք.

« Իսկ ամէն մէկըդ զան

« Չըյիշեր իւր վըրան.

« Ու իրեն ձիրքն յարմար

« Աչքին բան չերեւար :

- « Բարեկամներ, ե՛ս ալ գիտեմ
 « Որ շատ քան է եւ ես զուրկ եմ.
 « Սիրամարգին չունիմ գոյներ,
 « Ոչ սէգ արծուին ոյժ անվեհեր,
 « Ոչ բազէին սուր մագիլներ,
 « Եւ կամ այլոց բիւր շընորհքներ.
 « Ինծի բնութիւն տըւած է ձայն,
 « Ես գո՛հ եմ յայն,
 « Անով լինիմ զըւարթ ես միշտ :
 « Գուք ալ ինձ պէս լինիք անվիշտ՝
 « Թէ ոչ տանջէք ինքը զինքնիդ
 « Գանգատներով,
 « Փուճ ողբերով,
 « Որով լըցուած է սըրտերնիդ :
 « Կուզէ՞ք լինել երջանիք,
 « Երջանկութեան այս է գաղտնիք
 « Ի՛նչ վիճակի մէջ ալ լինիք՝
 « Գո՛հ եղիք : »

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ԻԸ.

ՄԱՆՐԱՎԵՊՔ.

Խելացիին մէկը կասէ իւր ծառային որ երթայ արեւաժամացուցին նայի թէ ժամը քանի՛ է : « Բայց, տէր, գիշեր է, ի՞նչպէս նայիմ » որ կպատասխանէ ծառայն. « Գիշեր լինելէն ի՛նչ վնաս, կկրկնէ հանձարեղ տէրը. հետդ ճրագ առ որ տեսնես : » Խեղճն

իւր ծառային չափ իսկ չգիտեր եղեր որ արեւա-
ժամացոյցն ցորեկը արեւու ճառագայթից իւր վերայ
զարնելովն միայն կրնար ժամերը ցուցանել : Ո՛ր-
չափ այսպիսի տգէտ տեարք կան , որոց տգիտու-
թիւնն իրենց սպասաւորներէն իսկ կյանդիմա-
նուի :

*
**

Ուրիշ մի եւս իւր սպասաւորը քովը կպառկեցնէր
եւ անդադար կկանչէր. « Մարկո՛ս, քնացա՛յ թէ ոչ : »
եւ երբոր նա « Այո , քնացար » կպատասխանէր ,
յայնժամ միայն անմիտն ինքզինքը քնացած կհա-
մարէր, ու « Լաւ է ուրեմն, կասէր եւ աչքը կգոցէր
քուն կմտնէր : »

*
**

Բիաս իմաստասիրին երբոր հարցուցեր են թէ
կենդանեաց մէջ ամենէն վտանգաւորն ու չարա-
գոյնն ո՞րն է. « Վայրենի կենդանեաց մէջ՝ բռնա-
ւորն է, պատասխաներ է. իսկ ընտանի կենդանեաց
մէջ՝ շողոքորթն : »

*
**

Սուլդան Պայագիտ յաղթուելով երբոր գերի կը-
բռնուի, զինքը Լէնկ-թիմուրին , այսինքն Կաղ թի-
մուրին առջեւը կտանին, որ զնա միականի տեսնե-
լով կսկսի ծիծաղիլ : Պայագիտ այս ծաղրածուութեան
չկրնար համբերել. « Թիմո՛ւր , կասէ , թշուառու-
թեանս վերայ կծիծաղիս, եւ չե՛ս մտածեր որ իմ
բաղդիս դու եւս կարես հանդիպիլ. Աստուծոյ
ձեռքն են ամենայն տէրութիւնք , իշխանութիւնք
եւ յաղթութիւնք, եւ ուզածին պէս զանոնք կտնօ-
րինէ : — Ատոր վերայ չեմ տարակուսիր , կկրնէ
Թիմուր , ուստի եւ քու թշուառութեանդ չէ իմ

ծիծաղս. չկրցայ չծիծաղիլ երբոր մտածեցի որ Աստուծոյ առջեւ մեծ յարգ պիտի չունենան տէրութիւնք, որովհետեւ թողուց որ միականւոյ միոյ տուած տէրութիւնը կաղ մի գայ առնու: »

*
**

Երկու մարդիկ որ երկայն սեղանի միոյ մէկ մէկ ծայրը կեցեր կխօսէին, մէջերնին կռիւ մի կբացուի եւ այնչափ կսաստկանայ, որ աւելի կիրք ելլողը կասէ. « Թէ որ ձեռքս հասնէր՝ երեսդ ապտակներովս կծածկէի. բայց զանոնք կերածի տեղ սեպէ: — Պարոն, կպատասխանէ միւսը պաղ արիւնով մը. Թէ որ քովդ լինէի՝ թրովս զարնելս ու զքեզ գետին փռելս մէկ կընէի. ուրեմն կրնաս ինքզինքդ մեռած սեպել: » — Թէ որ բարկուծեան կըքով աչքերնին կուրցած երկու մարդոց մէջ միշտ այսպիսի երկայն սեղան մի խտրոց գտնուէր, ո՛րչափ կպակսէր մարդասպանութեանց թիւը:

*
**

Ջաղացպանին մէկն իւր էշովը ճամբայ ըրած ժամանակն իմաստակ մի զինքը կտեսնէ ու կսկսի կանչել. « Երկուքնիդ այսպէս ո՛ւր կերթաք. ո՛ւր բարով պարոնայք. » Չարածձի ջաղացպանը կպատասխանէ. « Մեզ երեցունցս խոտ փնտռելու կերթամք: »

*
**

Չինաց կայսրը ձի մի ունի եղեր որ վրան կխենդենայ եղեր. օր մը յանկարծ այս ձին կսատկի, եւ կայսրն այնչափ վրան կցաւի որ թուրը կբաշէ ու կուզէ ձիապանը զարնել մեռցունել՝ կարծելով որ իւր անհոգութեամբն էր ձին սատկեր: Բայց սիրելի իշխանը քովը գտնուելով ձեռքը կբռնէ կկեցունէ,

« Տէր արքայ, կասէ, այս մարդն դեռ իւր յանցանքը չգիտեր : — Շուտով իմացո՛ւր ուրեմն, կատասխանէ թագաւորը զայրագին : « Եկուր յանցանքդ լսէ, թշուառակա՛ն, կասէ ոստիկանը : Նախ քու տիրոջդ քեզ յանձնած սիրելի ձին թողուցիր որ մեռնի. երկրորդ՝ պատճառ եղար մեր տիրոջն այնպիսի կիրք ելելուն որ մինչեւ իւր ձեռքովն զքեզ ուզեց մեռցունել. վերջապէս պատճառ եղար որ քիչ մնաց արքայ ձիոյ միոյ համար մարդ մի մեռուցանելով՝ բոլոր աշխարհիս առջեւ իւր պատիւը պիտի կորսնցունէր : Ահա ասոնք են քու յանցանքդ թշուառակա՛ն : — Ազատ թողուն երթայ, յանցանքն իրեն կներեմ, վերայ բերաւ կայսրը » իւր իշխանին ճարտարաբանութենէն խրատուելով :

* *

Տղուն մէկը կուլար ու կանչուրուտէր. եկան հարցուցին նմա թէ ի՞նչ ունի. « Մայրս դահեկան մի տուեր էր, կորսնցուցի ու անոր համար կուլամ » պատասխանեց : Մի՛ լար, կորսնցուցածիդ տեղը կուգայ. ա՛ռ սա դահեկանը ու ձայնդ քաշէ » զրուցեցին : Տղայն ստակն առնելուն պէս սկսաւ առաջինէն ալ աւելի լալ ու կանչուրուտել : Վերստին քովը եկան, « Ինչո՛ւ նորէն կուլաս » որ ասացին. « Անոր համար կուլամ, պատասխանեց իւր բանը գիտցող տղայն, որ եթէ մօրս տուածը չկորսնցունէի, արդ երկու դահեկան կունենայի : »

* *

Երկու պզտիկ մանչ ու աղջիկ տղոց արգելեր էին որ սեղանի վերայ բան չուզեն : Ինչպէս կըլլայ, մանչուն կերակուր տալու կմոռանան, եւ խեղճը

վախնալով որ անհնազանդ չգտնուի կերակուր ուզելովը՝ խելք կբանեցունէ ու կտոր մի աղ կառնու սկաւառակին մէջ կդնէ : Կտեսնեն զայն ու երբոր կհարցանեն թէ ի՞նչ պիտի ընէ. այդ աղը. « Եթէ ինձ միս տան՝ հետը պիտի ուտեմ » կպատասխանէ : Իսկ անդին աղջիկն ամէն կերակրէն կերեր էր բաց իմիոյն՝ զոր ամենէն աւելի կսիրէր : Առանց անհնազանդութեան զայն ձեռք բերելու համար ի՞նչ կընէ. կսկսի կերածները մէկիկ մէկիկ մատովը ցուցանել ու ասել. « Ասկէց կերայ, ասկէց կերայ : » Բանը կիմանան, եւ իւր հնազանդութեանը փոխարէն՝ սիրածէն խոշոր կտոր մի կուտան որ ուզածին չափ ուտէ :

*
* *

Տղուն մէկուն ուշ ելլելու սովորութիւնը կոտրելու համար՝ հայրը կուզէ իրեն հասկացունել կանուխ ելլելուն օգուտն, ու կպատմէ թէ մարդուն մէկն առաւօտը կանուխ ելեր՝ համբան քալած ժամանակը մէջը ստակով լի քսակ մի գտեր է : Նրբամիտ տղայն. « Հա՛յր, պատասխաներ է. ասել է թէ քսակը կորսնցունողն աւելի կանուխ ելեր է եղեր : » — Պէտք չէ կարծել որ մարդ ամէն տղու կրնայ ուզածը կլեցունել. մէջերնէն շատը ըրածիդ ու զրուցածիդ վերայ չկարծած խորհրդածութիւնդ կընեն. ուրեմն նայէ որ նոցա ամէն զրուցածդ հշմարիտ լինի եւ խելքով :

Վ Ե Ր Զ

Յ Ա Ն Կ

Յառաջարան.	Ա	Մարդավարութիւն.	40
ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.		Մաքրութեան ու շարժուածքի պակասութիւններ.	41
Ինչո՞ւ համար տղայք դպրոց կեր- թան, ուսում կտո՞ւրին.	1	Հինգ զգայարանք.	44
Տղայն աւելի կմեծանայ.	3	Զմեռուան վերայ խորհրդածու- թիւն.	47
Բաժանումն ժամանակի եւ եղա- նակք.	4	Ծնունդ.	47
Առաձք եւ կանոնք ուղղութեան.	7	Ժամանակ եւ իւր բաժանմունքը.	48
Տուն.	9	Մեծ պահք.	49
Մարդուս անասնոցմէ ունեցած տարբերութիւնը.	10	Զու թռչնոց.	49
Տնկաբանութիւն մանկանց.	12	Սեղանի վերայ եղած անպատ- շանկերպեր.	50
Կենդանաբանութիւն մանկանց.	15	Եղանակք.	55
Երկրաբանութիւն մանկանց.	20	Ծաղկազարդ.	56
Մարդուս կերակուրն.	22	Զատիկ.	56
Մարդուս պիտոյքն եւ զանոնք լցունելու միջոցներն.	23	Ամիս եւ օր.	57
Անկարելի, հարկաւոր եւ դի- պուածական բաներ, պատ- հառք, հնարք, վախճան.	25	Աստուած ամէն տեղ է.	59
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ.		Ընդհանուր ստորագրութիւն տիեզերաց.	59
Յորդոր ուսումնասիրութեան մարց եւ աղջկանց.	29	Արեւ.	60
Դաստիարակութիւն, Ուսումն, Աստուած, Կրօնք, Բարոյա- կան.	31	Արարչագործութիւն.	61
Առաւօտեան Աղօթք.	34	Ուրիշի անհանգստութիւն պատ- հառող բաներու մէջ անզգու- շութիւն.	63
Երեկոյեան Աղօթք.	35	Մայիս ամսոյն մէջ շրջագայու- թիւն Սոֆի տիկնոջ եւ իւր Աննիկ դստերն յարտորայս.	65
Հայր մեր կամ Տէրունական Աղօթք.	36	Համբարձումն.	73
Տասն Պատուիրանք Աստուծոյ.	37	Հոգեգալուստ.	73
Աննիկ եւ իւր մայրը Սոֆի Տիկին.	38	Աստեղք, Մոլորակք, Գիսաւորք.	74
		Մեծութիւն Աստուծոյ իգործս իւր.	76
		Լուսին.	77

Վերափոխումն.	78	Սէր փառաց.	114
Ակնածութեան պակասութիւնն ու անզգուշութիւն.	79	Ամենէն գեղեցիկ ծաղկերն.	117
Մթնոլորտին գլխաւոր երեւոյթ- ներն.	81	Բաւականութիւն.	118
Անհամ կատակներ ու անվայել վարմունք.	84	Իւր վիճակէն գոհ եղող տղայ.	118
Երկիր.	86	Անձնասիրութիւն.	122
Ընկերութեան մէջ դիտելու մար- դավարութիւնք.	89	Գորտնուկն եւ Ծղրիդ.	122
ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ.		Ջրպարտութիւն.	124
Բարոյական.	92	Ժուժկալութիւն.	125
Կատարումն քրիստոնէական ա- ռաքինութեանց.	93	Արձագանգ.	127
Մեծն Ներսէս.	94	Ճարտարամիտ պատասխան.	128
Վինկենտիոս Պաւլայեցի.	96	Ճարտարահնար գիւտ.	129
Շողոքորթութիւն.	97	Չորս տարերք.	130
Խրատ շողոքորթաց.	97	Երջանկութիւն.	132
Պատժուած շողոքորթ.	99	Աղքատութիւն.	132
Մեծն Աղեքսանդր եւ իւր դաս- տիարակն Արիստոտէլ.	101	Հանճարարանութիւնք.	134
Պաշտօնն զմարդ պիտի չփա- ռաւորէ, այլ մարդս զպաշ- տօնը պիտի փառաւորէ.	102	Աղամանդեայ մատանի.	138
Արդարասիրութիւն եօթնամեայ մանկան.	103	Ճարտար հնարք.	139
Արածք, Խրատք, Առակք.	105	Չափազանց զարդարկոտու թիւն.	140
Հաւատարմութիւն իսստման.	108	Ճարտար յանդիմանութիւն.	141
Ոսկի ժամացոյց.	109	Աշխատութիւն, Աշխատասի- րութիւն.	142
Հայավայել պատասխան.	110	Մեծն Պետրոս.	142
Քաղցրութիւն.	111	Մրջիւնն ու Ճնին.	144
Խոնարհամտութիւն եւ մարդա- վարութիւն.	111	Շատախօսութիւն.	147
Քաջ պատասխանիք.	112	Սակաւախօս.	147
Արեւ.	112	Պարծենկոտութիւն.	147
Քաջասրտութիւն.	113	Ներկայ եւ ապագայ.	148
		Անձրեւ.	149
		Ազդեցութիւն լաւ ընկերու թեան.	150
		Ազդեցութիւն գէշ ընկերու թեան.	151
		Սոկրատայ ախորժակ բանալու դեղը.	151
		Ճպուռն եւ Մրջիւն.	151

Ուսումնասիրութիւն, ընթերցասիրութիւն.	153	Զարմանալի ազգասէրք եւ հայրենասէրք.	214
Ներումն, Պողոս եւ Պետրոս.	168	Կայծողիկ եւ Խխունջ.	218
Երկու շուն.	170	Գուլիէլմոս. Թէլ.	219
Համբերութիւն.	173	Լեւոնիդաս ի Թերմոսիլէ.	222
Արթնութիւն մտաց.	175	Հայրենասիրութիւն կանանց.	225
Գէշ գործածուած հարստութիւն.	176	Ազգասիրութիւն սպարտացի կանանց.	227
Երկու ճրագ.	177	Հայրենասիրութիւն Շրովմայնցուոց.	229
Ճարպիկութիւն եւ անվախութիւն.	178	Ուոշինկերն.	230
Բարեկամութիւն.	179	Վարդ եւ Դեղագործ.	238
Սակաւութիւն բարեկամաց.	180	Բարի խրատներ.	239
Դամոն եւ Պիւթիաս.	181	Բարի դարձ.	240
Գժտութիւն եւ հաշտութիւն բարեկամաց.	184	Մայրենի սէր.	243
Ապերախտ, Ապերախտութիւն, Երախտագէտ, Երախտագիտութիւն.	185	Դաստիարակութիւն.	244
Աղբիւր.	187	Լաւ խնամուած ծառք եւ մօր մը զարդարանքք.	247
Խոնարհամտութիւն Պղատոնի.	189	Երկու տեսակ դաստիարակութիւն.	249
Երուանդ եւ Վահան.	190	Դաստիարակութիւն Սպարտացուոց.	251
Մեծարանք ճերոց.	191	Զաւակաց դաստիարակութեան համար եղած ծախքք.	253
Կարմիր Գլխարկիկ.	192	Նախանձ.	254
Մեծն Աղեքսանդր եւ Դիոգի նէս.	194	Ցորեանք եւ չոր Կնձնի.	255
Խորհրդապահութիւն.	195	Անյիշաչարութիւն.	258
Անխորհրդապահ մարդ.	196	Մեծն Պետրոս եւ Մենշչիբով.	262
Նինջ եւ յարութիւն բնութեան.	196	Երեւոյթ.	264
Տանտիկին.	198	Ծիածան կամ Ծիրանի գօտի	264
Ազահութիւն.	201	Ֆրանսուա Արակոյին ծանրաչափք.	265
Մեղուն եւ Մրջիւն.	202	Աժան ձի.	265
Կերպարանքը լուսանկարել ուզող զինուոր.	204	Առածք.	266
Հայրենասիրութիւն եւ ազգասիրութիւն.	205	Արդարասիրութիւն եւ երախտագիտութիւն.	268

Ծնողասիրութիւն.	270	Մաքրութիւն.	336
Արծիւն ու իւր Ձագերը.	274	Բերք երկրի.	339
Ոսկի քթատուփ.	277	Կերակուր.	341
Աստուածսիրութիւն եւ ծնողա- սիրութիւն.	279	Սեղան եւ խնջոյք.	342
Կատուն ու երկու Ձագերը.	281	Ըմպելիք.	345
Շուշան եւ Վաղամեռիկ Տիրու- հին.	283	Գինի եւ օղի.	346
Առածք.	285	Շարժումն.	347
Ամենէն հարուստ իշխանը.	285	Քուն.	348
Ամուսնական սէր.	286	Հպուռն ու Ծիծառ.	350
Պարտէզ.	290	Բնակարան.	352
Հոգի	292	Ցայգախումբ, Պարահանդէս.	353
Առակք.	293	Տաքնալու ու պաղելու վերայ.	355
Առատաձեռնութիւն.	294	Իշուկն ու Ջին.	359
Ողորմութիւն.	294	Հագուստ.	359
Վարդուհի եւ Տիգրանուհի.	296	Հանդերձ եւ մաքրութիւն.	362
Բարեգործութիւն.	297	Խօսակցութիւն.	363
Բարեգործք եւ բարերաբք.	298	Ջրոյցք եւ ունկնդրութիւն.	365
Մոնթիոն.	299	Մանրավէպք.	368
Սոխակ եւ Արծիւ.	301	Օղ.	377
		Գնացք իմանապարհի.	378
		Նամակ, Նամակագրութիւն.	380
		Հիւանդութեանց մէջ մարդուս ընելիքը.	384
		Խաղ.	385
		Քաղաքացի իշուկն ու քաղա- քաց իէշեր.	386
		Պահպանութիւն մարմնոյ եւ գեղեցկութեան.	389
		Առածք.	394
		Էշ ու սրինգ.	395
		Կրօնք, Աստուածապաշտութիւն.	397
		Մարդոց իրարու հետ ունեցած վերաբերութիւնը.	402
		Իւր վիճակէն գոհ լինել.	408
		Կենդանիք եւ սոխակ.	410
		Մանրավէպք.	412

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ.

Մարդ.	303	Խաղ.	385
Մարդուս մարմինը.	305	Քաղաքացի իշուկն ու քաղա- քաց իէշեր.	386
Կենցաղավարութիւն.	311	Պահպանութիւն մարմնոյ եւ գեղեցկութեան.	389
Առողջութիւն.	315	Առածք.	394
Առողջապահութիւն.	315	Էշ ու սրինգ.	395
Արծիւ եւ Ճնճղուկ.	316	Կրօնք, Աստուածապաշտութիւն.	397
Տիեզերք.	318	Մարդոց իրարու հետ ունեցած վերաբերութիւնը.	402
Այցելութիւն, Տեսութիւն.	321	Իւր վիճակէն գոհ լինել.	408
Երկիր եւ իւր բնակիչքը.	327	Կենդանիք եւ սոխակ.	410
Եւրոպա.	331	Մանրավէպք.	412
Ասիա.	333		
Ափրիկէ.	334		
Ամերիկա.	334		



